ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2025Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2026

Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական բաժինը՝ ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական կազմակերպությունների և սփորաբաժանումների ներկայացրած նյութերի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ 5
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 7
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 8
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 29
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 49

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ 54
Մաթեմատիկայի ինստիտուտ 55
Մեխանիկայի ինստիտուտ 61
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ 68
«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ 80

ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ 82
Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան 84
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ 90
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ 98
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ 108
ԻԿՐԱՆԵՏ Կենտրոն ՄԿ 113

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ 117
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն 118
Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ 124
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն 135
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն 144
Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ 158
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ 161
Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ 168
Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ 176

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ 182
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ 183
Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ 198
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն 203
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ 218
Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ 225

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ 231
Պատմության ինստիտուտ 232
Արևելագիտության ինստիտուտ..... 250
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ 256
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն..... 273
Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ 279
Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ..... 286
Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ 294
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ 303
Արվեստի ինստիտուտ..... 308
«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն 313
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ 314
ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ 318
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 328
Ընդհանուր ժողովներ 329
Նախագահություն..... 329
Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանց (ASNET-AM) 329
Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով 331
Միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչություն 332
ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ 337
Գիտության հանրամատչելիացման և զարգացման վարչություն 343
«Գիտություն» հրատարակչություն..... 345
Հիմնարար գիտական գրադարան 346
ԳԱԱ և այլ գիտական կազմակերպությունների, բուհերի համատեղ կենտրոններ, լաբորատորիաներ, ամբիոններ..... 349
Գիտության և կրթության ոլորտում ԳԱԱ գիտական կազմակերպությունների համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ..... 351
Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում 354
ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ..... 358
ԳԱԱ հիմնարկների արտոնագրային ցուցանիշներ..... 359
ԳԱԱ գիտաշխատողների հրապարակումների ընդհանուր քանակը 360
ԳԱԱ ինստիտուտների և գիտական (գիտակրթական) գիտաօժանդակ կազմակերպությունների անցկացրած հանրապետական և միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և գիտական այլ միջոցառումներ 362
ԳԱԱ գիտական կադրերի 2025թ. ատեստավորման արդյունքներ 371
Կադրեր..... 372

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

1943թ. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի երևանյան մասնաճյուղի հենքի վրա ստեղծվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, որը Հայաստանի անկախացման առաջին տարիներին վերանվանվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա (այսուհետ՝ ԳԱԱ): Մեկ տարի անց ԳԱԱ ստանում է ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուի կարգավիճակ, իսկ 2011թ. ՀՀ ազգային ժողովն ընդունում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը:

Որպես հայոց բարձրագույն գիտական օջախ՝ ակադեմիան ավելի քան ութ տասնամյակների ընթացքում անցել է դժվարին, միաժամանակ բովանդակալից ուղի, ունեցել է գիտական մեծ նվաճումներ, արժանացել համաշխարհային ճանաչման: Գիտությունների ազգային ակադեմիան, լինելով հանրապետությունում գիտական հետազոտությունները համակարգող մարմին, իրականացնում է միջազգային չափանիշներին համապատասխան հիմնարար և կիրառական հետազոտություններ գիտության գրեթե բոլոր բնագավառներում: Հայկական ակադեմիան իր ուրույն տեղն է ունեցել երկրի պաշտպանունակության ամրապնդման, տնտեսության և առողջապահության համակարգի զարգացման, էներգիայի նոր աղբյուրների հայտնաբերման, գիտության ու կրթության վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձրացման գործում:

2025թ. ԳԱԱ շարունակել է հաջողությամբ զարգացնել գիտության և տեխնիկայի բազմաթիվ ոլորտներ, արդյունավետ համագործակցել է տարբեր երկրների ակադեմիաների, համալսարանների, գիտատեխնոլոգիական ու գիտանորարարական կենտրոնների, պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ: Ակադեմիայի համակարգի կազմակերպություններն ու գիտական խմբերն ակտիվ մասնակցել են միջազգային դրամաշնորհային ծրագրերի և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած գիտական ծրագրերի մրցույթներին, շահել են 244 տարաբնույթ դրամաշնորհային ծրագրեր: 2025թ. ԳԱԱ համակարգի գիտնականների՝ ՄԳԾ-ում տպագրված գիտական հոդվածների թիվը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշները մոտ 26%-ով: ԳԱԱ բաժանմունքներն իրենց կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել են 59 միջազգային գիտաժողով, ԳԱԱ նախագահության անմիջական ֆինանսավորմամբ իրականացվել է համակարգի գիտնականների 581 գիտական գործուղում: Ակտիվ գործել են ԳԱԱ մասնագիտական պրոբլեմային խորհուրդները, կազմակերպվել են մի շարք արդյունավետ քննարկումներ կենսաբազմազանության, սննդի անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտներում: Քննարկումներին մասնակցել են գիտնականներ, պետական գերատեսչությունների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

2025թ. իրականացվել է ԳԱԱ մրցանակի երկրորդ մրցանակաբաշխությունը: Հիմնարար և կիրառական հետազոտությունների անվանակարգերով մրցանակներ են շնորհվել ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների, հայագիտության և հասարակական գիտությունների, բժշկագիտության բնագավառների 6 գիտական խմբերի (ֆինանսավորողներ՝ «Մարտին Սթար» ՍՊԸ և «Լիկվոր» ՓԲԸ):

2025թ. հոկտեմբերի 9-ին ՀՀ նախագահը ստորագրել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին նոր օրենքը, համաձայն որի ԳԱԱ գլխավոր առաքելությունը ՀՀ կառավարության կողմից բազային ֆինանսավորվող ենթակառուցվածքների պահպանման և որոշ այլ գիտական ծրագրերի ու դրանց կատարման ընթացքի/հաշվետվությունների

փորձաքննությունը, գիտության հանրամատչելիացումը, գիտական կադրերի պատրաստմանը մասնակցությունը, հրատարակչային, գրադարանային և այլ գործառույթներն են: Ակադեմիայի գործունեության հիմնական օղակներն են լինելու մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներն ու պրոբլեմային խորհուրդները:

ԳԱԱ ղեկավարությունը լիազոր մարմնի հետ համատեղ մշակել է ԳԱԱ նոր կանոնադրությունը, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Համաձայն օրենքի՝ կանոնադրության հաստատումից հետո նախատեսվում է անցկացնել ԳԱԱ ասոցացված/թղթակից և արտասահմանյան անդամների ընտրություն: Ակադեմիայի ղեկավարությունը մշակել և լիազոր մարմնի հաստատմանն է ներկայացրել ընտրությունների կարգն ու թեկնածուներին առաջադրվող չափանիշները: Ընտրություններից հետո ձևավորվելու է ակադեմիայի ընդհանուր ժողովը, որն էլ ընտրելու է ակադեմիայի նախագահությունը ու գիտական խորհուրդը: Հաջորդիվ նախատեսվում է ԳԱԱ ղեկավար կազմի ընտրությունը, ակադեմիայի նոր կառուցվածքի, հաստիքացուցակի ու ֆինանսական նախահաշվի հաստատումը:

ԳԱԱ ղեկավարությունը, հաշվի առնելով գիտության կարևորությունը Հայաստանի զարգացման ու առաջընթացի համար և ակադեմիայի առանցքային դերն ու նշանակությունը հանրապետության գիտական և գիտակրթական ընդհանուր համակարգում՝ պատրաստակամություն է հայտնում նոր կարգավիճակով շարունակել իր առաքելությունն ի փառս երկրի գիտական մտքի առաջընթացի, տնտեսության զարգացման ու պաշտպանունակության ամրապնդման:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Ս.Սաղյան

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկա: Ընդլայնելով Գիբսյան պատահական դաշտերի դասի հայեցակարգը՝ դրվել են Գիբսյան պատահական դաշտերի ընդհանուր տեսության հիմքերը: Դա հնարավոր է դարձել Գիբսյան պատահական դաշտի առաջարկված զուտ հավանականային սահմանման շնորհիվ՝ առանց որևէ ֆիզիկական հասկացության հղման: Դասական (Դոբրուշինի, Լանֆորդի և Ռուելի) սահմանումն առաջարկվող տեսության մեջ չի օգտագործվել: Միաժամանակ հարակից գոյության թեորեմը դիտարկվել է որպես Գիբսյան պատահական դաշտերի կառուցման հիմնական միջոց: Մաթեմատիկական վիճակագրական ֆիզիկայի արդյունքները ներդրվել են մշակվող Գիբսյան պատահական դաշտերի տեսության մեջ որպես կարևոր (եթե ոչ ամենակարևոր) մաս: Պետք է նշել, որ համապատասխան տեսությունն ունի պատահական պրոցեսների տեսության մեջ ընդունված կառուցվածք: Առաջարկվել է նաև պատահական դաշտի ոչ Գիբսյան լինելու արդյունավետ չափանիշը՝ հիմնված ներմուծված պատահական դաշտի պայմանական բաշխումների ֆիլտրացիայի նկատմամբ համակարգի վրա (ղեկ.՝ թղթ. անդ. Բ.Նահապետյան):

Հայտնի է, որ Ֆունկի ձևափոխությունը (ՖՁ) շրջելի է 2-չափանի գնդաձև մակերևույթի վրա սահմանված զույգ (սիմետրիկ) անընդհատ ֆունկցիաների դասում: Կամայական ֆունկցիայի (կարող է լինել ոչ զույգ) վերակառուցման համար գտնվել է լրացուցիչ պայման, որը կշռված Ֆունկի ձևափոխությունն է (կենտ ֆունկցիա վերակառուցելու համար) և դիտարկվել է այսպես կոչված 2 տվյալների ՖՁ-ի շրջելիությունը: Ձևափոխությունը բաղկացած է դասական ՖՁ-ից և կշռված ՖՁ-ից: Ներկայացվել է ձևափոխության իտերատիվ շրջման բանաձևը: Զույգ (սիմետրիկ) անընդհատ ֆունկցիաների դասում այս շրջման բանաձևը դասական խնդրի նոր լուծում է, որն ավելի կայուն է, քան դասական լուծումը: Դա նշանակալի ներդրում է ինտեգրալ երկրաչափությունում: Նման շրջման բանաձևերը տեսական նշանակություն ունեն ուռուցիկության տեսության, ինտեգրալ երկրաչափության և գնդաձև տոմոգրաֆիայի մեջ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Մեխանիկա: Առածգականության սիմետրիայի հարթություն ունեցող սալի համար (առածգականության 13 գործակից) լուծվել են նոր դասի տարածական խառը եզրային խնդիրներ, որոնց համար կիրառելի չեն սալերի դասական և ճշգրտված տեսությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Աղալովյան):

Մշակվել է սկզբունքորեն նոր՝ հեղուկի և գազի ճնշման և ծախսի տատանումների կայունացուցիչ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ: Դիտարկվել է մասնակի կարգավորված $(P(n,3),\preceq)$ բազմությունը, որտեղ $P(n,3)$-ը բաղկացած է $[n]$-ի աճող տարրերից կազմված եռյակներից, իսկ $\preceq$-ը կոմպոնենտ-առ-կոմպոնենտ համեմատման մասնակի կարգ է $P(n,3)$-ի վրա: Մշակվել է ալգորիթմ, որը տրոհում է $P(n,3)$-ը նվազագույն քանակով չհատվող սիմետրիկ շղթաների, որոնք կարող են օգտագործվել $P(n,3)$-ում որոշված մոնոտոն բինար ֆունկցիաների՝ հարցումների միջոցով ճանաչման համար այնպես, ինչպես Հանսելի շղթաները բինար խորանարդի դեպքում: Այս ֆունկցիաները կարևոր են նրանով, որ կարող են գեներացնել 3-համասեռ հիպերգրաֆների աստիճանային հաջորդականությունները (հայտնի է որպես NP-բարդ խնդիր): Հետազոտվել է նաև ամրապնդված ուսուցման (reinforcement learning) կիրառման հնարավորությունը մոնոտոն

բույլան ֆունկցիայի ճանաչման համար: Նախագծվել են ամրապնդված ուսուցման բոլոր տարրերը՝ միջավայր, ագենտ, քաղաքականություն և այլն, մշակվել են ալգորիթմներ՝ անհրաժեշտ կառուցվածքային տվյալների փոխակերպումները կատարելու, ինչպես նաև պարգևատրման, արժեքի և ալգորիթմի այլ պարամետրերի հաշվարկման համար (ղեկ.՝ թղթ. անդ. Լ.Ասլանյան):

Աստղաֆիզիկա: Կատարվել են ռենտգենյան ճառագայթում ունեցող բլազարների մանրակրկիտ հետազոտություններ, նույնականացում հայտնի բլազարների կատալոգի (BZCAT) և ռենտգենյան տարբեր արբանյակներից ստացված տվյալների միջև (ROSAT, Chandra, XMM-Newton, SWIFT, INTEGRAL): Արդյունքում ունեցել ենք 1535 նույնականացված աղբյուր: Հաշվվել են բոլորի օպտիկական և ռենտգենյան հոսքերը, լուսատվությունները, բացարձակ աստղային մեծությունները, սպեկտրային ինդեքսները: Օգտագործելով ռենտգեն-օպտիկա լուսատվությունների հարաբերությունները, գույն-գույն դիագրամները, ինչպես նաև մյուս ստացված տվյալները՝ փորձ է արվել ստանալ դրանց առանձնահատկությունները, գտնել դրանց միջև տարբերություններ (ղեկ.՝ ֆ-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

DFBS շրջահայությունից հայտնաբերվել են մեծ քանակությամբ նոր C-CH, C-N, ածխածնային աստղեր Գալակտիկայի հալոյում, հարթությունից 8 կպս և ավելի մեծ բարձրությունների վրա: Սպեկտրալ դասերի հաստատումը կատարվել է՝ օգտագործելով Gaia DR3 տվյալների շտեմարանը: Որոշ նոր CH աստղեր ունեն ավելի քան 500 կմ/վ տեսագծային արագություններ: Հայտնաբերվել են նաև մեծ թվով կապույտ աստղանման օբյեկտներ (մոտ 1200) գերմանուշակ ավելցուկով, էմիսիոն օբյեկտներ (մոտ 250, աստղեր և գալակտիկաներ): Պարզվել է, որ աստղերի դեպքում մեծ թիվ են կազմում կրկնակի համակարգերը (ղեկ.՝ ֆ-մ.գ.թ. Ա. Միքայելյան):

Բոլցմանի կինետիկ տեսության մեթոդներով ուսումնասիրվել են մագնիսացված նեյտոնային աստղի ներքին պատյանի էլեկտրահաղորդականության, ջերմահաղորդականության և ջերմաէլեկտրաշարժ ուժի գործակիցները պլազմայի հեղուկ վիճակում, հաշվի է առնվել էլեկտրոնների ցրումն իոնների և ազատ նեյտրոնների վրա: Ուսումնասիրվել է նաև աստղի արտաքին պատյանի էլեկտրահաղորդականությունը, որի մեջ առաջին անգամ հաշվառվել է պլազմայի պոզիտրոնային բաղադրիչի ներդրումը: Ցույց է տրվել, որ պոզիտրոնների դերը կարևոր է 1 ՄէՎ և ավելի բարձր ջերմաստիճանների դեպքում: Հաշվվել է տաք քվարկային նյութի ջերմաէլեկտրաշարժ ուժի գործակիցն ուժեղ կապված ռեժիմում, օգտագործվել է Կուբոյի բանաձևերի մեթոդը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սեդրակյան):

Շարունակվել են մի մեծ ծրագրի շրջանակում էներգիայի անկայուն աղբյուրների ազդեցության ներքո գտնվող կլանող և ցրող միջավայրերում գծային սպեկտրների փոփոխությունների հետազոտությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվել նշված օպտիկապես ակտիվ միջավայրերում տարբեր տիպի ֆոտոնների գտնվելու միջին ժամանակների մեծություններին: Առաջին անգամ այդ մեծությունների համար արտածվել են պարզ բանաձևեր, օգտագործվել է միջավայրում ցրումների միջին թվի համար Համբարձումյանի ստացած հայտնի արդյունքը, ինչպես նաև 1986թ. ստացած արդյունքը՝ անընդհատ սպեկտրում կլանման ազդեցությանը միջավայրում ֆոտոնների վերապրելու միջին ժամանակի վրա: Կառուցվել են նշված մեծությունների Նեյմանի շարքերը, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հետազոտվող մեծությունների վարքի մասին ոչ միայն ճառագայթային հավասարակշռության պարագայում, այլև այն դեպքում, երբ այն բացակայում է: Բացի նշված ժամանակային միջին մեծություններից՝ հաշվարկվել ու ուսումնասիրվել են միջավայրում կատարվող ցրումների միջին թվերն անդրադարձած ու անցած հոսքերի, միջավայրում թերմալիզացված ֆոտոնների համար: Հաշվարկվել են

նրանց քրոնոմետրիան բնորոշող PDF (Probability Density Function) և CDF (Cumulative Distribution Function) հավանականային բաշխումները, նկարագրվել են նրանց առանձնահատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Մշակվել և տպագրվել է «$\widetilde{MSp}$-Տելեպարալել ՍուպերԳրավիտացիայի» տեսությունը ($\widetilde{MSp}$-TSG), ինչը գլոբալ «MSp-SUSY» տեսության լոկալ ընդլայնումն է: Լոկալ $\widetilde{MSp}$-TSG տեսության շրջանակում ուսումնասիրվել է «արագացումով շարժման և իներցիայի էֆեկտների» ֆիզիկան: Այս մեծածավալ աշխատությունը ներառել է հետևյալ 3 տեսությունները՝ «MS-գեր-գրավիտացիա», «MS-հեռազգացմունքային գեր-գրավիտացիա», «Ընդհանուր MS դեֆորմացիա և իներցիոն էֆեկտներ» (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Մշակվել է նեյրոնային ցանցերի վրա հիմնված նոր մոդելավորման մեթոդ, որը հնարավորություն է տալիս իրականացնել բլազարների ճառագայթման մոդելավորումը հադրոնային և հիբրիդ մոդելների շրջանակում: Այս մեթոդը ժամանակատար թվային սիմուլյացիաները փոխարինում է նախապես ուսուցված նեյրոնային ցանցով, որը ճշգրիտ վերարտադրում է թե՛ էլեկտրամագնիսական, թե՛ նեյտրինոների ճառագայթումը՝ թույլ տալով արագ և արդյունավետ գնահատել մոդելի ազատ պարամետրերը: Սա բացում է նոր հնարավորություններ բլազարների շիթերում տեղի ունեցող հադրոնային պրոցեսների համակարգված ուսումնասիրության համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան):

Ֆիզիկա: Առաջին անգամ հետազոտվել է օպտիկական նանոբջջի ատոմական գոլորշու շերտերում 456 նմ երկարությամբ Cs-ի $6S1/2 \rightarrow 7P3/2$ անցումը ենթադոպլերյան ռեզոնանսների առկայությամբ: Ատոմական գոլորշու շերտի $\ell = \lambda/2 \simeq 230$ նմ հաստության դեպքում գրանցվել է սպեկտրալ գծերի Դիկեի նեղացում, որն ուղեկցվում է ատոմական անցումների կարմիր հաճախային շեղմամբ, ինչը վերագրվում է ատոմ-նանոբջջի մակերևույթ փոխազդեցություններին: $\ell \simeq 460$ նմ հաստության համար ստացված ռեզոնանսներն ունեն <20 ՄՀց գծի լայնություն, որոնք տեղակայված են ատոմական անցումների հաճախությունների վրա: Այս նեղ ռեզոնանսները հետաքրքրություն են ներկայացնում բարձր լուծաչափությամբ սպեկտրասկոպիայի և գործիքաշինության համար և կարող են ծառայել որպես հարմար հաճախային նշիչ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Հետազոտվել է ուժեղ ցրող օբյեկտների օպտիկական պատկերման տարածական սկանավորման տեխնիկան՝ հիմնված մոդուլացված (իմպուլսային) լազերային ճառագայթումից առաջացող բալիստիկ ֆոտոնների տարածականորեն ընտրողական գրանցման վրա: Գրանցման համակարգը հաշվում է փոխանցված իմպուլսների քանակը ցանկացած պիքսելի վրա՝ ձևավորելով մոխրագույն երանգի պատկեր: Մոդուլյացիայի ռեժիմ ընտրելով՝ հնարավոր է գրանցել իրական անալոգային պատկեր կամ ուրվագծել պատկերի հատկանիշների ուրվագծերը՝ առանց ծրագրային պատկերի մշակման անհրաժեշտության: Մշակված համակարգը փորձարկվել է մոդելային ցրող օբյեկտի (թղթի կույտ) և կենսաբանական օբյեկտի (մարդու ձեռք) վրա (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Պապոյան):

Ներկայացվել է նոր ժամանակային երկվիճակ քվանտային մոդել, որը նկարագրում է մակարդակների հատում հաստատուն ամպլիտուդով լազերային դաշտի ազդեցության տակ գտնվող համակարգում: Այս կոնֆիգուրացիայում, որը Դեմկով–Կունիկեի՝ մակարդակների հատմամբ երկրորդ եռապարամետր մոդելի քառապարամետր ընդհանրացումն է, հաճախության ապալարքը փոփոխվում է սահմանափակ տիրույթում, ռեզոնանսի հատումը տեղի է ունենում հատման կետի նկատմամբ ասիմետրիկ ձևով: Խնդրի ընդհանուր լուծումը կարող է գրվել որպես երկու անկախ Կլաուզենի ընդհանրացված հիպերերկրաչափական ֆունկցիաների կամայական հաստատուն գործակիցներով գծային կոմբինացիա, որոնցից յուրաքանչյուրը կարող է ներկայացվել որպես երկու սովորական հիպերերկրաչափական ֆունկցիաների չկրճատվող գծային կոմբինացիա: Վերլուծվել են լուծման ասիմպտոտներն

ըստ քվազիէներգիաների և հաշվվել է վերջնական անցման հավանականությունն այն դեպքում, երբ համակարգը մեկնարկում է առաջին քվազիէներգիական վիճակից (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Իշխանյան):

DESY գիտական կենտրոնի TB21 ճառագայթային գծում հետազոտվել է 800-2500 ՄէՎ էներգիայով էլեկտրոնների ռեզոնանսային անցումային ճառագայթումը 10-200 կէՎ էներգիաների տիրույթում 10 մկմ հաստությամբ 20 ալյումինե նրբաթիթեղներից բաղկացած 2 թիրախներից, որոնք տարանջատված են 100 մկմ հաստությամբ շերտերով (մի դեպքում օդի, մյուսի դեպքում տեֆլոնի): Ցույց է տրվել, որ օդով թիրախի դեպքում փորձնական արդյունքները բավարար ճշտությամբ համընկնում են տեսական գնահատականների հետ, իսկ տեֆլոնով թիրախի դեպքում ռեզոնանսային անցումային ճառագայթման էներգետիկ պիկը շեղվում է դեպի բարձր էներգիաների տիրույթ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Տեսականորեն հետազոտվել է դիսպերսիվ դիէլեկտրիկ նյութից պատրաստված գնդի հասարակածային հարթության մեջ պտտվող էլեկտրոնի ճառագայթումը: Ցույց է տրվել, որ կարելի է ընտրել այնպիսի դիսպերսիայի օրենք, որի դեպքում «ռեզոնանսային» ճառագայթում դիտվում է ոչ թե մեկ (ինչպես դիտվում է ոչ դիսպերսիվ դիէլեկտրիկ գնդի դեպքում), այլ մի քանի հարևան հարմոնիկների վրա միաժամանակ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Հետազոտվել են CdSe նանոթիթեղների գծային, ոչ գծային և էքսիտոնային կլանումներն աքսիալ և պլանար էլեկտրական դաշտերի առկայությամբ: Հաշվարկվել են գծային, ոչ գծային և էքսիտոնային կլանման գործակիցները, որոշվել են համապատասխան անցումների ռեզոնանսային հաճախությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սարգսյան):

Մշակվել և հետազոտվել է ԳԲՀ տիրույթի ռադիալ բևեռացմամբ էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման գերլայնաշերտ (2-40) ԳՀց անտենա: Չափվել են անտենայի անդրադարձման գործակիցը (1-40) ԳՀց հաճախությունների տիրույթում, ինչպես նաև բևեռացման բաշխումը ճառագայթվող փնջում և անտենայի ուղղվածության դիագրամը (9-11) ԳՀց հաճախությունների տիրույթում: Անդրադարձման գործակցի առավելագույն արժեքը հաճախությունների (2-40) ԳՀց տիրույթում չի գերազանցել 0.1 արժեքը, իսկ ուղղվածության դիագրամի լայնությունը 10 ԳՀց շրջակայքում կազմել է մոտ 15 % (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Պարբերական ֆոտոնային բյուրեղների որոշակի տեսակի դեպքում Բրյուստերի անկյան ուղղությամբ հայտնաբերվել է դրանց հատող ռելյատիվիստական մասնիկների անցումային ճառագայթման ուժեղ էներգետիկ կախվածություն, ինչը հիմք է տալիս առաջարկել այդպիսի բյուրեղների կիրառումը որպես ռելյատիվիստական մասնիկների դետեկտորներ: Առաջարկվել է նոր տեսական մոտեցում հակաանդրադարձման երևույթի ուսումնասիրման համար, ինչը կարող է էական նշանակություն ունենալ արևային տարրերի էֆեկտիվության բարձրացման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Ուսումնասիրվել է Cd S բարակ թաղանթների ստեխիոմետրիկ կազմը սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի միջոցով: Ցույց է տվել, որ, կախված աճի ռեժիմներից, թաղանթներում Cd/S հարաբերությունը կարող է փոփոխվել 0.39 -ից մինչև 0.7, և որ այդ թաղանթները բաղկացած են նանոմետրական չափերի սֆերիկ հատիկներից, որոնց տրամագիծն ընկած է 124-132 նմ տիրույթում: Թաղանթների օպտիկական հատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք հեռանկարային են տարբեր օպտո-էլեկտրոնային սարքերում, մասնավորապես արեգակնային փոխակերպիչներում օգտագործելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսաելյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանություն: Դիլիջան ազգային պարկում հայտնաբերվել է բրածո օրգանիզմների Օլիգոցենի դարաշրջանի 1 նոր տեղավայր՝ Dilijan-4, Մուշականի շրջակայքում՝ Միոցենի դարաշրջանի 1 նոր տեղավայր՝ Mushakan-3: Սևանի տորֆերից հավաքված նմուշներում առաջին անգամ հայտնաբերվել են *Botryococcus, Pediastrum, Spirogyra, Cosmarium, Mougeotia, Cymbella, Eunotia, Epithemia, Ulnaria, Gomphonema, Neidium, Pinnularia, Cocconeis* ցեղերի բրածո ջրիմուռներ և *Gloeotrichia* ցեղի ցիանոբակտերիա: Վայոց Ձորի մարզի Դևոնի ժամանակաշրջանի՝ մոտ 370 մլն տարվա շերտերից առաջին անգամ հայտնաբերվել և ուսումնասիրվել են բրածո բարձրակարգ բույսերի սպորներ (ղեկ.՝ կ.գ.դ. Ի.Գաբրիելյան):

Առաջին անգամ Հայաստանի համար ընդունվել են Թանձրատերևազգիների (*Crassulaceae*) ընտանիքի ցեղերի և տեսակների առաջնակարգ անվանումները՝ հիմնվելով վերջին դասակարգման վրա: Ընդունվել են *Hylotelephium, Phedimus, Prometheum, Petrosedum և Chaloupkaea* ցեղերի անվանումները: Բացահայտվել է, որ Հայաստանում *Crassulaceae* ընտանիքը ներկայացված է 8 ցեղով: Կազմվել է տեսակների որոշման նոր բանալի (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Սարգսյան):

Վերսկսվել են Հայաստանում աճող մամուռների կարգաբանական հետազոտությունները, որոնց արդյունքում Արագած լեռնազանգվածի համար հայտնաբերվել է 13 նոր տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Աչոյան):

Հայաստանի համար առաջին անգամ իրականացվել է *Iris* ցեղի *Hermodactyloides* ենթացեղին պատկանող նոր էնդեմիկ հանդիսացող *I. sisianica* Zubov & Bondarenko տեսակի պալինոմորֆոլոգիական հետազոտություն: Հաստատվել է ծաղկափոշու ապերտուրային տիպի (օղակաձև ակոս) և էքսինի քանդակի տիպի (անկանոն-ցանցաձև) նմանություն այս և Հայաստանում աճող նույն ենթացեղին պատկանող մեկ այլ՝ *I. reticulata* M.Bieb. տեսակների միջև: Տեսակների միջև առկա հիմնական տարբերությունները փոշեհատիկների, ցանցաձև քանդակի խորշերի չափսերն են, որոնք *I. sisianica* տեսակի մոտ ավելի մեծ են (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Հայրապետյան):

Հայաստանի ֆլորայի *Zingeria* ցեղի (*Poaceae*) ներկայացուցիչների կարիոլոգիական և մոլեկուլային-գենետիկական հետազոտության արդյունքում հայտնաբերվել են տարբեր պլոիդայնության մակարդակներ՝ դիպլոիդ *Z. biebersteiniana* (2n=2x=4), տետրապլոիդ *Z. trichopoda, Z. pisidica* (2n=4x=8) և հեքսապլոիդ *Z. kochii* (2n=6x=12): *Z. lebersteiniana* տեսակն ունի 1 մաժոր ռիբոտիպ, որը համընկնում է *Z. kochii*-ի մինոր ֆրակցիայի հետ: *Z. trichopoda*-ն ունի 2 մաժոր ռիբոտիպ. մեկը կապված է *Z. biebersteiniana*-ի հետ, իսկ մյուսն ընդհանուր է *Poa diaphora*-ի հետ (ենթատեսակ *Poinae*): *Z.trichopoda*-ի և *Z.biebersteiniana*-ի նույնանման ռիբոտիպերի առկայությունը կարելի է բացատրել հեռավոր հիբրիդիզացիայի երևույթով: *Z. kochii*-ի մոտ առկա են 2 մաժոր ռիբոտիպեր. մեկը համընկնում է *Z. pisidica*-ի գլխավոր ռիբոտիպի հետ, իսկ մյուսը մոտ է *Colpodium versicolor*-ին: Ստացված արդյունքները թույլ են տալիս վերանայել ռեդուկցված քրոմոսոմային թվով հացազգիների այս խմբի ներսում առկա ազգակցական կապերը (ղեկ.՝ կ.գ.թ.Ա.Ղուկասյան):

Իրականացվել է Հայաստանի ֆլորայի *Pyrus* L. (*Rosaceae*) ցեղի *Pyrus* սեկցիայի տաքսոնոմիական ուսումնասիրություն, որը ներառում է տեսակների կոնսպեկտը և նույնականացման բանալին, նաև տվյալներ աշխարհագրական տարածման, բնակավայրերի, ֆենոլոգիայի, էնդեմիզմի, հոմանիշների վերաբերյալ: Հաստատվել է, որ տվյալ սեկցիան ներառում է հետևյալ 10 տեսակներն ու 1 տարատեսակ՝ *P. caucasica* Fed., *P. communis* L., *P. demetrii* Heideman, *P. grossheimii* Fed., *P. hyrcana* Fed., *P. hyrcana var.*

yeghegisi Akopian, *P. ketzkhovelii* Kuth., *P. sosnovskyi* Fed., *P. tamamschianae* Fed., *P. turcomanica* Maleev և *P. Vsevolodii* Heideman (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Պարզվել է, որ Հայաստանի ֆլորան ներկայացված է անոթավոր բույսերի 27 ընտանիքի և 69 ցեղի պատկանող 139 էնդեմիկ բուսատեսակներով և ենթատեսակներով: Էնդեմիկներով առավել հարուստ ընտանիքներն են *Rosaceae, Asteraceae, Poaceae* և *Fabaceae,* իսկ ցեղերից՝ *Pyrus* և *Astragalus*: Էնդեմիկների մեծամասնությունը նեոէնդեմիկներ են և հարմարված են Հին միջերկրածովյան ենթաթագավորությանը պատկանող ֆլորիստիկ շրջաններին: Հիմնականում աճում են արիդային խոտաբուսային էկոհամակարգերում: Ավելի խոնավ էկոհամակարգերի էնդեմիկները հիմնականում պալեոէնդեմիկներ են և հարմարված են Բորեալ ենթաթագավորությանը: Հայաստանի տարածքում առանձնացվել են էնդեմիկ տեսակների կուտակման կենտրոններ, որոնք կենսաբազմազանության պահպանության տեսանկյունից մեծ ուշադրության կարիք ունեն (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Միջազգային JACQ առցանց հերբարիումային տվյալների հարթակում տեղադրվել են քարաքոսերի 600 և սնկերի 60 տեսակների վերաբերյալ տվյալներ: Բացահայտվել է Հայաստանի համար սնկերի 3 նոր տեսակ՝ *Onygena equina, Panaeolus plantaginiformis, Tuber* aff. *Iranicum*, վերագտնվել է *Battarrea phalloides* հազվագյուտ տեսակը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գասպարյան):

Առաջին անգամ Հայաստանի մի շարք փոքր ալպյան լճերի համար իրականացվել են CH_4-ի արտանետումների, ջրի կայուն իզոտոպների և CDOM-ի չափումներ: Բոլոր տվյալները թվայնացվել, վերլուծվել և ինտեգրվել են NextGIS հարթակի վրա հիմնված գեոպորտալ, վերջինս տրամադրում է տեղեկատվական 8 շերտ՝ ներառյալ հիդրոքիմիա, իզոտոպային կազմ, մեթանի արտանետումներ, սննդանյութեր և եղանակաբանական փոփոխականներ: Համապարփակ տվյալների բազայի և ինտերակտիվ գեոպորտալի ստեղծումն ապահովում է պատմական և նոր տվյալների լայն հասանելիություն (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Ֆեդորովա):

Արագած լեռնազանգվածում իրականացված ռադիոէկոլոգիական բազմամյա հետազոտությունների արդյունքների ամփոփումը վկայում է, որ հողերը բնական ռադիոնուկլիդների (Ra–226, Th–232, K-40) առումով ֆոնային են՝ հաշվի առնելով ռադիոնուկլիդների ակտիվության համաչափ աճը հողի վերին շերտից խորքային շերտեր, բոլոր ռադիոնուկլիդների երկրակուտակման գործակցի ցածր արժեքները (Igeo<0), Th/Ra գերակայող բնական տարրային հարաբերությունը (3,89): Արագած լեռնազանգվածի հողերից մարդու՝ ռադիոնուկլիդներով պայմանավորված դոզայի և քաղցկեղածին ռիսկի ձևավորման մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի Th-232–ը, իսկ բիոտայի համար՝ Ra-226–ը: Այստեղից սկիզբ առնող գետերի հատակային նստվածքներում բնական ռադիոնուկլիդների բարձր ակտիվություն է արձանագրվել գետերի բարձրադիր՝ արագահոս հատվածներում և համեմատաբար ցածր ակտիվություն է գրանցվել ցածրադիր տարածքներում (<2000 մ ծ.մ.)՝ կախված հիդրոդինամիկ պայմանների փոփոխությունից (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյաևա):

Ամփոփվել են Սևանա լճի էկոլոգիական որոշ ձևաբանական, ֆիզիկական և կենսաբանական առանձնահատկությունների (ջրի մակարդակ, ջերմաստիճան, սառցածածկում, ծաղկում) գնահատման մեթոդական մոտեցումների մշակման աշխատանքները՝ հիմնված արբանյակային հեռազննման օպտիկական ցուցիչների (ափագիծ, ջրի մակերևութային ջերմաստիճան, սառցածածկ, սառցածածկի ռեժիմ, ջրում քլորոֆիլ-ա քանակ, վնասակար ջրիմուռների երևակումներ) վրա: Մշակված մեթոդական մոտեցումների շնորհիվ արբանյակային հեռազննումը ներառվել է Սևանա լճի նոր համապարփակ մշտադիտարկման պետական համակարգում որպես պարտադիր բաղադրիչ (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

Հայտնաբերվել է գիտության համար 14 նոր տեսակ՝ բզեզների (Coleoptera) 11, աղոթարարների (Mantodea) 1, թեփուկաթևերի 2 (Lepidoptera), ինչպես նաև Հայաստանի ֆաունայի 93 նոր տեսակ՝ բզեզների 6, երկթևերի (Diptera) 40, տրիպսների (Thysanoptera) 4, թեփուկաթևերի 2, ցամաքային թարդիգրադաների (Tardigrada) 8, սարդերի (Aranei) 30 ու կեղծ կարիճների (Pseudoscorpiones) 3 (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Գանգաբանական հետազոտության արդյունքները վկայում են սուբֆոսիլ շների և սուբֆոսիլ ու ժամանակակից գայլերի միջև առկա գանգաբանական հստակ տարբերությունների, ինչպես նաև Մեծ Սեպասար սրբավայրից հայտնաբերված սուբֆոսիլ գայլերի զգալիորեն ավելի մեծ չափերի մասին (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գյոնջյան):

Հայկական որորի մոտ հայտնաբերվել է Diplostomatidae ընտանիքին պատկանող մակաբույծների մեծ քանակություն, որոնք ձկների մոտ առաջացնում են կուրություն ու զգալի վնաս հասցնում ձկնային պոպուլյացիաներին (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Վարդանյան):

Առաջին անգամ Հայաստանում մոլեկուլային-գենետիկական մեթոդների կիրառմամբ թափառող շների մոտ բացահայտվել է զոոնոզ նշանակություն ունեցող *Echinococcus multilocularis* տեսակի ցեստոդը, ինչպես նաև *Hippobosca longipennis* նոր տեսակի արյունածուծ ճանճ: Բացի այդ, առաջին անգամ գեղգեղիկների մոտ հայտնաբերվել է *Haemoproteus* արյան մակաբույծի նոր հապլոտիպ (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Աղայան):

Առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրվել են թռչունների մեյոզի առանձնահատկությունները՝ *Phylloscopus* ցեղի 3 տեսակների մոտ գենոմի մի մասի էլիմինացիայի գործընթացը: Հետազոտվել են սաղմնային գծով սահմանափակ քրոմոսոմների (germline-restricted chromosomes) բնութագրերը, որոնք հեռացվում են սոմատիկ բջիջներից, սակայն պահպանվում են սաղմնային բջիջներում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Սպանգենբերգ):

Որոշվել է Հայաստանի լանդշաֆտների կողմից ջրային կարգավորող ու աջակցող մի շարք էկոհամակարգային ծառայությունների արժեքը: Թավաթևերի ֆաունայում գրանցվել է գիտության համար 1 նոր տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ասատրյան):

Ջրլող թռչունների համար բացահայտվել է 4 կարևոր ագրեգացման վայր (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Հակոբյան):

Սևանա լճի ջրհավաք ավազանի գետաէկոհամակարգերում սնդիկի նկատելիորեն բարձր աղտոտվածություն է դիտվել Սոթք գետի գետաբերանային հատվածում՝ գերազանցելով ավազանի նվազագույն կոնցենտրացիան 9,4 (ջուր) ու 3,6 (հատակային նստվածք) անգամ, իսկ միջին արժեքը համապատասխանաբար 3,6 ու 2,6 անգամ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գևորգյան):

2025թ. հոկտեմբերի սկզբի դրությամբ Սևանա լճում սիգի ընդհանուր պաշարը կազմել է 3592 տ, արծաթափայլ կարասինը՝ 21 տ, իսկ Սևանի իշխանինը՝ 138 տ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բարսեղյան):

Նորածնի մեկոնիումից անջատվել է *Bifidobacterium longum* ssp. *longum* պրոբիոտիկ շտամ, որը բնորոշ է մարդու աղիքային միկրոբիոտային: Շտամի գենոմը սեքվենավորվել է, որից հետո մանրէն ավանդադրվել է MDC 11247 համարով: Այս շտամի հիման վրա մշակվել է բիֆիդո- և կաթնաթթվային բակտերիաների կոնսորցիում, որը նախատեսված է «Bifinarin» կենսաբանորեն ակտիվ հավելանյութի ստեղծման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Վ. Բագիյան):

Bacillus amyloliquefaciens MDC 1974 շտամի α-ամիլազի գենը amy1974_pBE-S_NdeI_sig_F GCCGGTGCACATATGgtaaatggcacgctgatgcagta և amy1974_pBE-S_XbaI_R ATGGTGATGTCTAGAttatttctgaacataaatggagacggacc փրայմերային զույգի կիրառմամբ ՊՇՌ մեթոդով ամպլիֆիկացվել է այդ շտամի գենոմային ԴՆԹ-ից, որից հետո Գիբսոնի հավաքման մեթոդով կլոնավորվել է pBE-S մաքոքային վեկտորի կազմում: Ստացվել է

B. amyloliquefaciens MDC1974 շտամի α-ամիլազն էքսպրեսող *B. subtilis* RIK1285_*amy*1974 ռեկոմբինանտ շտամը: Շտամն օպտիմալացված պայմաններում, ֆերմենտման միջավայրում արտադրում է ~2000 միավոր/մլ ակտիվությամբ α-ամիլազ: Մշակվել են ֆերմենտի մաքրման և պահպանման արդյունավետ մեթոդներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

Ցույց է տրվել, որ կենսառեակտորում *Phaffia rhodozyma* MAS8 շտամ արտադրիչն աստաքսանտինի առավել բարձր ելքը (4,5 գ/լ) ապահովել է ֆերմենտման օպտիմալացված պարամետրերի դեպքում՝ որպես սննդամիջավայր օգտագործելով գարեջրի արտադրության ֆիլտրված թափոն և 28°C ջերմաստիճանի, pH 4.5, 1 ծավալ միջավայրին 0.8 ծավալ օդ րոպեում օդի տրման և 120 ժ գործընթացի տևողության պայմաններում: Մշակվել են աստաքսանտինի անջատման և իդենտիֆիկացման մեթոդներ, իրականացվել են դրա քրոմատոգրաֆիկ և սպեկտրալ բնութագրերը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Pseudomonas aeruginosa 80 կլինիկական շտամի գենոմում բացահայտվել է LasB, lasI, lasR և aprA վիրուլենտության գործոնի գեները, որոնք բացակայում են հավաքածուի *P. aeruginosa* MDC5249 շտամի գենոմում: Նույնականացվել են *Clostridium histolyticum* կոլագենազի նոր արգելակիչներ՝ F-moc-լեյցիլ-ալիլգլիցին (IC_{50} = 2.38 մՄ), F-moc-իզոլեյցիլ-ալիլգլիցին (IC_{50} = 2.68 մՄ) և (S)-ալիլգլիցին: Ցույց է տրվել, որ այս միացություններն ազդում են սերինային պրոտեազների (տրիպսին, պրոտեինազ K) ակտիվության վրա, ինչպես նաև չեն փոխում *P. aeruginosa*-ի արտաբջջային պրոտեազների գումարային ակտիվությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Ուսումնասիրվել է տարբեր պայմաններում L-տրիպտոֆանի սինթեզը՝ օգտագործելով նախկինում գենետիկասելեկցիոն եղանակով ստացված, m-ֆտորֆենիլալանին, 5-ֆտորտրիպտոֆան և 5-մեթիլտրիպտոֆան կառուցվածքային նմանակների նկատմամբ կայուն *Brevibacterium flavum* C18 (m-FP-r, 5-FT-r, 5-MT-r) շտամը: L-տրիպտոֆանի սինթեզի լավագույն ցուցանիշը (մինչև 8,0 գ/լ) գրանցվել է գործընթացի ավարտին՝ 15% սախարոզ և 5% $(NH_4)_2SO_4$ պարունակող ֆերմենտման միջավայրում, 96 ժամվա ընթացքում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Բացահայտվել են մինչև 40 մկգ/մլ մոլեկուլային ազոտ ֆիքսող և մինչև 20 մկգ/մլ աուքսին սինթեզող օսմոկայուն բակտերիալ շտամներ, որոնք անբարենպաստ պայմաններում, 6 ամսվա ընթացքում պահպանում են բջիջների բարձր տիտր (1×10^8–10^{10} ԳԱՄ/մլ) (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Մշակվել և վալիդացվել է կայուն օրգանական աղտոտիչների, մասնավորապես քլորօրգանական պեստիցիդների որակական և քանակական նույնականացման գազային քրոմատոգրման մեթոդ, որը կիրառելի է տարբեր մատրիցներում α-BHC, β-BHC, γ-BHC, Aldrin, 2,4-DDE, 4,4-DDE, 2,4-DDD, 4,4-DDD, 2,4-DDT, 4,4-DDT, Dieldrin, Endosulfan-ի որակական և քանակական վերլուծության համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Ծատուրյան):

Կատարվել է հոնի կորիզների ճարպաթթվային բաղադրության համեմատական հետազոտում: Մշակվել է արտահայտված հակաթութքային ակտիվությամբ էքստրակտներ ստանալու տեխնոլոգիա: Պատրաստվել են ռեկտալ մոմիկների նմուշներ, որոնց ֆիզիկաքիմիական հատկությունները համապատասխանում են տվյալ տեսակի դեղամիջոցի համար սահմանված պահանջներին (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

ԿԹԲ-ների *Lactobacillus* և *Enterococcus* ցեղերի պրոբիոտիկ շտամների համատեղ կուլտիվացման ընթացքում ցույց է տրվել սինթեզվող մետաբիոտիկների (էկզոբազմաշաքարների (ԷԲՇ) և բակտերիոցինների (ԲՑՆ)) փոխազդեցությունը: *Enterococcus* ցեղի շտամները ցուցաբերել են ԷԲՇ-ների և ԲՑՆ-ների սինթեզի ավելի բարձր մակարդակ՝ համեմատած *Lactobacillus* ցեղի շտամների հետ: Մաքրված մետաբիոտիկների

համատեղ կիրառումը հանգեցրել է հակամանրէային ակտիվության 30-90%-ով նվազման, ինչը կախված է ԷԲՇ-ների տեսակից և կոնցենտրացիայից: Ստացված արդյունքներն ընդգծում են, որ բազմաբաղադրիչ ֆունկցիոնալ պատրաստուկներ մշակելու նպատակով համատեղ կուլտիվացման համար շտամներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մետաբիոտիկների փոխազդեցությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

47 մեկուսացված ԿԹԲ-ից 6-ը նույնականացվել են որպես բարձր պրոտեոլիտիկ ակտիվությամբ օժտված կուլտուրաներ: Մորֆոֆիզիոլոգիական հատկությունների և API թեստերի վերլուծությունների հիման վրա շտամները դասակարգվել են որպես *Lactobacillus delbrueckii, L. plantarum, L. salivarius, Lacticaseibacillus rhamnosus, Lactococcus lactis* և *Streptococcus thermophilus*: Այս շտամների հիման վրա ֆերմենտացված կաթնամթերքները տարբերվել են բարձր ֆիզիկաքիմիական և օրգանոլեպտիկ հատկություններով: Դրանց համակեցությունները կարող են առաջարկվել որպես մեկնարկային կուլտուրաներ նոր ֆերմենտացված կաթնամթերքների արտադրության համար (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ուսումնասիրվել է Cu^{2+} և Ni^{2+}-ի նկատմամբ *Nostoc* PCC 7413 և 8109 ցիանոբակտերիաների սորբցիոն վարքագիծը: *Nostoc* PCC 7413-ը ցուցաբերել է Ni^{2+}-ի նկատմամբ բարձր կայունություն և երկարատև սորբցիա, մինչդեռ Cu^{2+}-ն արագորեն առաջացրել է դեսորբցիա և բջիջների թունավոր քայքայում: *Nostoc* PCC 8109-ը Ni^{2+}-ը կլանել է միայն սկզբնական փուլերում և ցածր կոնցենտրացիաների դեպքում, որին հաջորդել է դեսորբցիան: Համեմատությունը ցույց է տվել, որ Ni^{2+}-ը բջիջների կողմից պահպանվում է ավելի կայուն ձևով, քան Cu^{2+}-ը, իսկ շտամների սորբցիոն արդյունավետությունը և տոլերանտությունը տարբերվում են. *Nostoc* PCC 7413-ն ունի առավելություն (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Բացահայտվել է կենսապատրաստուկների կազմի մեջ մտնող ակտիվ սիմբիոտիկ ազոտֆիքսող մանրէների գենետիկական պատկանելիությունը, որը հաստատվել է ստերիլ վեգետացիոն փորձերում (ղեկ.՝ Ս.Հարությունյան):

Ուսումնասիրվել են տարրալվացող բակտերիաների հանդուրժողականությունը և հարմարվողականությունը NaCl-ի նկատմամբ, որոշվել են արգելակող նվազագույն կոնցենտրացիաները: Ցույց է տրվել, որ կուլտիվացման դեպքում աստիճանաբար ավելացվող աղի պարունակությունը զգալիորեն բարձրացնում է բակտերիաների կայունությունը: NaCl-ի բարձր քանակությունների նկատմամբ *Sulfobacillus thermosulfidooxidans* 41-ի ադապտացումը 5-8 անգամ բարձրացրել է խալկոպիրիտից Cu-ի կորզումը: Պղնձի առավելագույն, գրեթե ամբողջական կորզում դիտվել է 0.4 Մ NaCl-ի դեպքում, որը մոտ է ծովի ջրի աղայնությանը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Վարդանյան):

Կարմիր երեքնուկի և քամերեոն նեղատերևի ջրասպիրտային ոգեթուրմեր ստանալու համար մշակվել են ուլտրաձայնային հոմոգենիզացիայի մեթոդներ, որոնք զգալիորեն կրճատում են էքստրակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ թույլ տալով ստանալ կենսաբանորեն ակտիվ միացությունների բարձր կոնցենտրացիայով ոգեթուրմեր (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Իրականացվել են ոչ սպիտակուցային նոր ամինաթթուների սինթեզի հետազոտություններ Մաննիխի ռեակցիայում տեղակալված պրոպարգիլգլիցինային կոմպլեքսների կիրառմամբ: Ստացված ամինաթթուների հիման վրա սինթեզվել են նոր պեպտիդներ: Նախնական համակարգչային մոդելավորման արդյունքում ընտրվել են պեպտիդներ կենսաբանական ակտիվության պոտենցիալ ունեցող միացություններ ստանալու համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Սուզուկիի քրոս համակցման ռեակցիայի կիրառմամբ իրականացվել է նոր, ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզ: Դրանցից մի քանիսը ներմուծվել են

պեպտիդային շղթա, ինչի արդյունքում ստացվել են նոր կենսաբանորեն և դեղաբանորեն պոտենցիալ ակտիվ պեպտիդներ (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Առաջին անգամ հիդրոպոնիկ և հողային մշակույթ ու ակվապոնիկա է ներմուծվել վայրի ուտելի բույս ալիքաձև ավելուկը (*Rumex crispus* L.): Պարզվել է, որ հիդրոպոնիկայում 1մ^2-ից կարելի է ստանալ թարմ ավելուկի մինչև 27.4 կգ բերք, որը գերազանցել է հողային մշակույթին 6.0, իսկ ակվապոնիկային 3.8 անգամ, ակվապոնիկ բույսերը թարմ բերքով գերազանցել են հողայիններին 1.6 անգամ: Մեկ վեգետացիայի ընթացքում յուրաքանչյուր հիդրոպոնիկ բույս ձևավորել է 410 տերև, որը գերազանցել է հողային և ակվապոնիկ բույսերին համապատասխանաբար 3.4 և 1.8 անգամ: Պարզվել է, որ վեգետացիայի ընթացքում C վիտամինի առավելագույն պարունակությամբ աչքի են ընկել ակվապոնիկայի բույսերը, որոնք գերազանցել են հիդրոպոնիկներին և հողայիններին համապատասխանաբար 1.3 և 1.2 անգամ: Մինչդեռ β-կարոտինի պարունակության տեսանկյունից աճեցման պայմաններն էական ազդեցություն չեն ունեցել: Հիդրոպոնիկ բույսերն էքստրակտիվ նյութերի, ընդհանուր ֆենոլների և հում պրոտեինի պարունակությամբ գերազանցել են հողային և ակվապոնիկ բույսերին համապատասխանաբար 1.1, 1.1 և 1.1-1.3 անգամ, սակայն ֆլավոնոիդների և դաբաղանյութերի պարունակությամբ զիջել են վերջիններիս համապատասխանաբար 1.3 և 1.3-1.4 անգամ: Բացահայտվել է նաև աճեցման միջավայրի ազդեցությունը տերևներում ֆոտոսինթետիկ գունանյութերի պարունակության վրա. քլորոֆիլի (*a*+*b*) և կարոտինոիդների նվազագույն պարունակություն դիտվել է հողային բույսերում, իսկ հիդրոպոնիկան և աերոպոնիկան ապահովել են ֆոտոսինթետիկ գունանյութերի առավելագույն պարունակություն:

In vitro մշակույթում 0.5ՄՍ սննդամիջավայրում 1 մգ/լ ԲԱՊ-ի խտությունը նպաստել է յուղատու մորինգայի (*Moringa oleifera* Lam.) մերիսթեմային էքսպլանտներում 5-6 միկրոընձյուղների ձևավորմանը, իսկ մշակովի զաֆրանի (*Crocus sativus* L.) դեպքում՝ 40 գ/լ սախարոզի և 3 մգ/լ ԲԱՊ-ի խտությունը միջինում 389 մգ քաշով միկրոպալարասոխուկների զարգացմանը: Ֆիտոտրոնային կլիմայական խցիկի պայմաններում մշակովի զաֆրանի աճեցման համար փորձարկվել են Ebb&Flow, Deep Water և կաթիլային հիդրոպոնիկ համակարգեր, որտեղ ծաղիկների առավելագույն քանակ՝ 3-4 ծաղիկ/բույս և վարսանդների օդաչոր բերք՝ 8-9.5 մգ/բույս, ստացվել է հիբբերելինաթթվի 60 մլ/լ խտությամբ մշակված պալարասոխուկներից:

Պարզվել է, որ Արարատյան դաշտում՝ ՀՊԻ-ի տարածքում (ՀԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավղով գոտի), հիդրոպոնիկայի և հողի պայմաններում մշակված մի շարք ուտելի բույսերի (ավելուկ, հավակատար (*Amaranthus*), սովորական լոբի (*Phaseolus vulgaris* L.), մայորան (*Origanum majorana* L.), տաքդեղ (*Capsicum annuum* L.), լյուպին (*Lupinus albus* L.)) և դեղաբույսերի (սովորական եղերդակ (*Cichorium intybus* L.), թփային լեսերթիա (*Lessertia frutescens* L.), փշոտ էլեուտերոկոկկ (*Eleutherococcus senticosus* (Rupr.and Maxim)), մեծ կռատուկ (*Arctium lappa* L.), նրբաճաղիկ ռեհան (*Ocimum tenuiflorum* L.)) բուսահումքը ռադիոէկոլոգիական առումով անվտանգ է, քանի որ դրանց գումարային β-ռադիոակտիվությունը համապատասխանում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանած ռադիոէկոլոգիական անվտանգության չափանիշներին (<1000 Բք/կգ): Ընդ որում, հիդրոպոնիկայում ուտելի բույսերի գումարային β-ռադիոակտիվությունը տատանվում է 60-360 Բք/կգ, իսկ դեղաբույսերինը՝ 100-550 Բք/կգ սահմաններում (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Բժշկական կենսաբանություն: Ստրեպտոզոտոցինով հարուցված առնետների փորձարարական շաքարախտի մոդելի արյան պլազմայում, ուղեղում, լյարդում,

երիկամներում, ենթաստամոքսային գեղձում գնահատվել են գլուտամինազ, ԴՊՊIV, ԱԼՏ, ԱՍՏ ֆերմենտների ակտիվությունները և կրեատինինը: ՕԴՔԳՏԿ-ում սինթեզված ԳԱԿԹ-ի 7 ածանցյալից առավել հիպոգլիկեմիկ ազդեցություն ցուցաբերած $C_{20}H_{20}N_2O_4$ միացությունը արյան գլյուկոզի մակարդակն իջեցրել է 3,8 անգամ: ՕԴՔԳՏԿ-ում սինթեզված քիմիական նյութերի շարքում հայտնաբերվել է ԱԴԱ1-ն ընկճող բարձր խնամակցությամբ 2 միացություն: Բնութագրվել են դրանց փոխազդեցությունները նշված ֆերմենտի հետ օպտիկական, ֆլուորեսցենտային և դոկինգ մեթոդներով:

Դյուպուիտրեն կոնտրակտուրա (ԴԿ) ունեցող հիվանդների ապոնևրոզ հյուսվածքում նորմայի համեմատությամբ ԱԴԱ1 և ԱԴԱ2 ակտիվությունները բարձր են ավելի քան 7 անգամ: Բացահայտվել են ԴՊՊIV և ԴՊՊII ֆերմենտների բարձր ակտիվություններ, որոնք չեն դրսևորվել առողջ հյուսվածքում: ԱԴԱ1-ի ակտիվությունն ամենաբարձրն է ԴԿ-ի ծանր վիճակում, իսկ ԴՊՊIV-ի և ԴՊՊII-ի ակտիվությունները՝ միջին ծանրության դեպքում:

Anthriscus cerefolium (կնձմնձուկ) բույսի ջրային և էթանոլային թուրմերում ԱԴԱ ակտիվության արգելակման IC_{50} արժեքները համապատասխանաբար կազմել են 0.5 և 0.4 մգ/մլ: ԱԴԱ-ի ակտիվության վրա բույսի ցուցաբերած արգելակող ազդեցությունը հնարավորություն է տալիս այն կիրառել որպես հակաբորբոքային միջոց (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Cd-ով քրոնիկ թունավորման պայմաններում շարունակվել են արյան մակարդման համակարգում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունները և այդ ֆոնին ամինաթթվային խառնուրդի (ԳԱԿԹ, գլուտամին, β-ալանին և էթանոլամին – O – սուլֆատ) ունեցած ազդեցությունը: Այդ թունավորումը մեծացնում է արյան մակարդելիությունը 30%-ով, որի մեծ մասը բաժին է ընկնում արտաքին մակարդման ուղուն, քանի որ արյան մակարդման ներքին ուղին ակտիվացնող FXII-ը թունավորումից հետո շատ թույլ է ակտիվանում՝ 6.2%: Ամինաթթվային խառնուրդի 2 և 3 անգամ ներորովայնային ներարկման դեպքում արյան մեջ տեղի ունեցող կենսաքիմիական և մորֆոլոգիական փոփոխությունները համընկնում են նախկինում կատարված մեկանգամյա ներերակային ներարկումից ստացած տվյալների հետ: Ամինաթթվային խառնուրդի 5 անգամյա ներարկման դեպքում առնետների մոտ սկսվում է ներքին արյունահոսություն, ինչը վկայում է դրա չափաբաժնից կախված հակամակարդիչ ակտիվության մասին (ղեկ.՝ կ.գ.թ. Զ.Պարոնյան):

Մշակվել է շիճուկային ալբումինի (ՇԱ) և կատիոնային ու անիոնային պորֆիրինների հետ ոչ կովալենտային կոմպլեքսագոյացման մեթոդ: Կատիոնային պորֆիրինները ՇԱ-ի հետ առաջացնում են թույլ կոմպլեքսներ, որոնց առաջացման ժամանակը մթության մեջ, 6-8°C ջերմաստիճանում տատանվում է 24-ից մինչև 72 ժամ: ՇԱ մոլեկուլն անիոնային ֆոտոսենսիբիլիզատորի հետ զգալիորեն ավելի լավ կոմպլեքս է առաջացնում, քան կատիոնայինը: Կոմպլեքսի առաջացման ժամանակը մթության մեջ 48 ժամ է 6-8°C ջերմաստիճանում: Մշակվել է չկապված բաղադրիչներից կոմպլեքսն առանձնացնելու մեթոդ ալյումինի օքսիդի (Al_2O_3) աշտարակի վրա (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանդանյան):

Ատոմային-ուժային մանրադիտման մեթոդով հետազոտվել են մարդու արյան 4 տարբեր խմբերի էրիթրոցիտների թաղանթի պլաստիկ վերափոխումները գյուրզայի թույնի ազդեցության ժամանակ, հաշվարկվել են ուժային չափորոշիչները: Առաջին անգամ ցույց է տրվել, որ արյան երրորդ խմբի B հակագենը նպաստում է էրիթրոցիտար թաղանթի ավելի ծանր ախտահարմանը հեմոլիտիկ թույնի ազդեցության պայմաններում: Իրականացվել է ինստիտուտում ստացված հակաթույնի նախատիպի փորձարկումը շների՝ 17 գյուրզայի խայթոցի դեպքի համար նախակլինիկական հետազոտությունների շրջանակում, որոնցից 15-ի դեպքում կենդանիների առողջական վիճակը լիովին վերականգնվել է (ղեկ՝ կ.գ.դ. Ն.Այվազյան): Մշակվել է հիպերսպեկտրալ պատկերավորման մեթոդ, որը թույլ կտա

սրտամկանի ռադիոհաճախականային աբլյացիան տեսանելի դարձնել անմիջապես վիրաբուժական միջամտության ընթացքում՝ նվազեցնելով ֆիբրիլյացիայի աբլյացիայի անհաջող դեպքերը: Շարունակվում է մաշկի փոխարինիչների մշակումը՝ օպտիմացնելով I տիպի կոլագենի ստացման գործընթացը և սկաֆոլդների հատկությունների գնահատումը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Սարվազյան):

Իրականացվել են մարդու տարբեր հուզական վիճակների ֆիզիոլոգիական կորելյատների բացահայտման ուսումնասիրություններ՝ հիմնված բազմամոդալ ֆիզիոլոգիական ցուցանիշների վերլուծության վրա: Մշակվել է ԷՈՒԳ բարձր հաճախականության օսցիլյացիաների հայտնաբերման նոր ալգորիթմ, որը կարևոր է էպիլեպտիկ օջախների տեղայնացման հայտնաբերման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ա. Խաչունց): Ալկոհոլը, ուղիղ ազդելով նյարդային բջիջների վրա, ունի նեյրոտոքսիկ ազդեցություն և առաջացնում է կոգնիտիվ և վարքագծային խանգարումներով ուղեկցվող նեյրոդեգեներացիա: Որպես դեղաբանական շտկման միջոցներ օգտագործվել են պեպտիդային բաղադրիչով լյարդապաշտպան մոլիքսանը և որպես ստուգիչ՝ սեմաքսը: Իրականացվել են հյուսվածքաբանական և մորֆոմետրիկ հետազոտություններ մոլիքսանի ազդեցության արդյունավետության՝ կենդանիների գլխուղեղի և լյարդի մորֆոֆունկցիանալ վիճակի վրա էթանոլով սուր, ծանր թունավորման ժամանակ: Մոլիքսանը բարձր նյարդապաշտպան ազդեցություն է ցուցաբերել կենտրոնական նյարդային համակարգի խանգարման ժամանակ՝ կանխարգելելով կամ դանդաղեցնելով գլխուղեղի հյուսվածքների վնասումը (ղեկ՝ կ.գ.թ. Մ.Դանիելյան):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա: Ջրածնի ատոմի փոխանցմամբ ակտիվացումն (HAT) ընձեռում է այլընտրանքային հնարավորություն ընտրողաբար ակտիվացնել կապի դիսոցման ամենացածր էներգիայով (BDE) օժտված ալիֆատիկ C–H կապերը: Ֆոտոկատալիզի՝ «տեսանելի լույսով հարուցված անցումային մետաղներով (ԱՄ) կատալիզ» ենթադասը, որպես եզակի սինթետիկ գործիք, հնարավորություն է տալիս ԱՄ-ներին կատարել երկակի դեր՝ կլանել լույսի էներգիան ու իրականացնել կատալիտիկ փոխարկումներ (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Հակոբյան):

Համատեղելով մեքենայական ուսուցման և վերջավոր տարրերի մեթոդները՝ առաջին անգամ հիբրիդային մոտեցմամբ ստացվել է GaAs/AlGaAs տետրոպոդային քվանտային կետերում ջերմաստիճանից կախված ոչ գծային օպտիկական ուղղման գործակիցը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Հայրապետյան):

Դիբենզոֆենանտրոլինում, հեղուկ միջավայրում և թաղանթում ՈՒՄ կլանման հետևանքով գրանցվել է անսովոր հզոր ճառագայթում 600 նմ ալիքի երկարության դեպքում, որն առաջանում է բենզոլի էքսիմերից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Գուրզադյան):

Մշակվել են բարելավված հատկություններով ռադիացիոն-կայուն և ճառագայթապաշտպանիչ ապակեկերպ, ապակեբյուրեղային ու կոմպոզիտային նոր նյութեր խտության բարձր արժեքներով՝ 4.8 - 6,2գ/սմ^3: Իրականացվել են մշակված նյութերի (γ- 0,5-1,25 ՄէՎ և արագընթաց նետրոնների 15-50 ՄէՎ) ճառագայթման և կլանման հետազոտություններ: Ճառագայթման ինտենսիվության գծային նվազման գործակցի տվյալներով սինթեզված նյութերն առանձնանում են գամմա ճառագայթների թուլացման մեծ ունակությամբ և կայուն են արագընթաց նեյտրոնների ճառագայթման նկատմամբ (որպես

ճառագայթման աղբյուրներ կիրառվել են 137Cs, էներգիան 661,7 ԿէՎ և 60Co - էներգիան 661,7 1173 и 1333 ԿէՎ) (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Երկաթ-մագնեզիումային դունիտային սերպենտիններից $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$ ստացված հիդրոսիլիկաժելի առանձնահատկությունների և ամորֆ ZnO-ի բարձր ակտիվության հիման վրա ուսումնասիրվել է SiO_2(ժել)–NaOH–ZnO–$CoCl_2$–H_2O համակարգը և մեղմ պայմաններում սինթեզվել դոպացված կոբալտով տարբեր գունային երանգներով վիլեմիտ: Ցույց է տրվել, որ ցինկի աղերի փոխարինումը դրա օքսիդով զգալիորեն նվազեցնում է NaOH-ի ծախսը (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Մշակվել է պարարտանյութերի ստացման անթափոն եղանակ տեղական ոչ ավանդական հումքերից՝ Սիսիանի դիատոմային հանքերից և Հայաստանում առկա սերպենտինիտներից: Ուսումնասիրվել են ստացված պարարտանյութերի ֆիզիկա-քիմիական հատկությունները, ստուգվել է դրանց արդյունավետությունը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Երկրի մասին գիտություններ: ԵԳԻ սեյսմիկ ժամանակակից ցանցից ստացված տվյալների հիման վրա ցույց է տրվել, որ Արևելյան Աֆրիկայից և Կարմիր ծովի հարավային հատվածից ձգվող Աֆարի պլյումը (խորքային մանթիական հոսք) շարժվում է դեպի հյուսիս՝ տարածվելով ոչ միայն դեպի Արաբական թերակղզի և Արևմտյան Անատոլիա, որտեղ այն արտահայտվում է OIB տիպի հրաբխականությամբ, այլև հասնում է Հայկական Լեռնաշխարհ: Այստեղ այն տաքացնում և հալեցնում է նախկին սուբդուկցիաներով հարստացված լիթոսֆերային մանթիան՝ առաջացնելով տարածաշրջանի հետկոլիզիոն հրաբխականությունը (ղեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Հիմնադրվել է տարածաշրջանում միակ տեխնիկական զինվածության և գործիքային գրանցումների մեթոդաբանության առումով միջազգային հստակ չափորոշիչներին բավարարող համալիր սեյսմաերկրադինամիկական ցանց և տվյալների հավաքագրման ու մշակման կենտրոն (ղեկ.՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան):

Հայ-չինական համագործակցության շրջանակում գործող ավտոմատացված սեյսմաերկրադինամիկական կայանների գրանցումների հիման վրա ուսումնասիրվել է 2025թ. փետրվարին Էգեյան հրաբխային գոտու կենտրոնական մասում սեյսմաբանական պրակտիկայում առանձնակի և հազվադեպ հանդիպող, թույլ և միջին ուժգնության երկրաշարժերի անոմալ բռնկման պրոցեսը: Գործիքային գրանցումների և ֆոկալ մեխանիզմների վերլուծության հիման վրա բացահայտվել է Աֆրիկյան մակրոսալի և Էգեյան մեզոսալի սուբդուկցիոն գոտու բարդ հրաբխատեկտոնական կառուցվածքը: Հիմնավորվել է, որ վերջինս միաժամանակ արտացոլում է ստորջրյա, ակտիվ, ներկայում նիրհող համարվող Կոլումբո հրաբխի մագմատիկ օջախի կարճաժամկետ բաբախման և Սանտորինի-Ամարգոս ստորջրյա հրաբխա-տեկտոնական լինեամենտի ամբողջ երկայնքով արտահայտվող գրգռման երևույթը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Է.Գյոդակյան):

Մշակվել է նորմատիվ սպեկտրալ կորերի վրա հիմնված սինթետիկ աքսելերոգրամների հաշվարկման նոր մեթոդաբանություն, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքների համար մոտարկել ուժեղ երկրաշարժերի սինթետիկ աքսելերոգրամները: Այս մոտեցումը բարձրացնում է ուժեղ շարժումների գնահատման ճշտությունը նորմատիվ փաստաթղթերում կիրառվող ավանդական դինամիկ կորերի համեմատ, որոնք չունեն ուղղակի էմպիրիկ հիմք: Մշակված աքսելերոգրամները կարող են օգտագործվել սեյսմիկ ազդեցությունների ճարտարագիտական վերլուծության, սեյսմիկ վտանգի ադեկվատ գնահատման և սեյսմիկ նախագծման նորմերի կատարելագործման խնդիրներում: Առաջարկվող մեթոդաբանությունը մշակվել է

Հայաստանի սեյսմիկ նորմերի համար, որը ճկուն է և կարող է կիրառվել այլ միջազգային ստանդարտների համար (ղեկ.՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն: «Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918թ.» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ակ. Ա.Մելքոնյան) պատմաաղբյուրագիտական լայն բազայի վրա լուսաբանվել է Անդրկովկասյան Սեյմի կազմավորման և գործունեության պատմությունը, Անդրկովկասի անկախ հանրապետություն հռչակումը և Անդրկովկասի Ռուսաստանից անջատման գործընթացը, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունների ձևավորումը:

Արևելագիտության ինստիտուտի իրականացրած գիտական ծրագրերը ձևավորել են համապարփակ գիտական պատկեր, որը նոր որակ և վերլուծական խորություն է հաղորդել տարածաշրջանի պատմական, մշակութային, քաղաքական և սոցիալական գործընթացների ուսումնասիրությանը: Աշխատակիցներն ունեցել են մեծ առաջընթաց հայագիտական և արևելագիտական մի շարք հարցերի միջազգայնացման գործում՝ հրատարակելով գիտական հոդվածներ բարձր ազդեցության գործակից ունեցող հեղինակավոր հանդեսներում: Կարևոր ձեռքբերում է *Small Wars & Insurgencies* (Scopus, Q1) հանդեսում տպագրված «Պահպանելով հակամարտությունը. ինքնությունը, օնթոլոգիական անվտանգությունը և Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը 2020թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո» (“Sustaining conflict: identity, ontological (in)security, and Azerbaijan’s policy toward Armenia after the 2020 Nagorno-Karabakh War”) հոդվածը, որում ուսումնասիրվել են Ադրբեջանի կողմից 2020թ. պատերազմից հետո հակահայ և իռեդենտիստական նարատիվների շարունակականության հիմնավորումները գոյաբանական անվտանգության տեսության շրջանակում: Փաստարկվել է, որ խաղաղության հեռանկարը խորացնում է ադրբեջանական իշխող էլիտայի գոյաբանական անհանգստությունները, քանի որ հայերի «թշնամու կերպարի» շարունակականությունը մնում է ադրբեջանական ինքնության և ազգակերտման առանցքային տարրերից մեկը: Հոդվածը տպագրվել է բաց հասանելիությամբ, ունեցել է ավելի քան 4000 դիտում–ներբեռնում:

«Եվրասիական տարածաշրջանը ռուս–թուրքական մրցակցության առանցքում» հոդվածը տպագրվել է *TRAMES, A Journal of the Humanities and Social Sciences* ամսագրում (Q3), որում խորությամբ վերլուծվել է ռուս–թուրքական մրցակցության դինամիկան Խորհրդային Միության փլուզումից հետո, ներկայացվել են տարածաշրջանային հակասությունների հիմնարար բնույթը և դրանց ազդեցությունը Հարավային Կովկասի և Միջին Արևելքի ռազմաքաղաքական գործընթացների վրա:

Ինստիտուտն ունեցել է նաև միջազգային գիտական համագործակցության նշանակալի ակտիվացում: Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի հետ համատեղ կազմակերպվել է միջազգային գիտաժողով, դրան հաջորդած հանդիպումներում որոշվել է 2026թ. արդեն Չինաստանում անցկացնել Կովկասում տեղի ունեցող փոփոխություններին նվիրված միջազգային գիտաժողով: Անցկացվել է «Հարավային Կովկաս-2025» միջազգային աշխատաժողովը, որը կազմակերպվել է Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի համատեղ նախաձեռնությամբ, վերլուծվել են ուկրաինական ճգնաժամով պայմանավորված միջազգային հարաբերությունների փոփոխությունները և դրանց ազդեցությունը

Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական գործընթացների վրա՝ ընդգծելով տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխությունը և Ադրբեջանի դիրքերի ակտիվացումը: Կարևոր եզրահանգում է համարվել նաև Հայաստանի արտաքին քաղաքականության բալանսավորման և դիվերսիֆիկացման միտումը ասիական գործընկերների հետ համագործակցության խորացման համատեքստում:

Շարունակական հրատարակվել է «Բանբեր Արևելագիտության ինստիտուտի» հանդեսը, անգլերեն հրատարակված հոդվածները (ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա հեղինակներ) կնպաստեն արևելագիտական մտքի միջազգային հանրայնացմանը և միջազգայնացմանը: Իրականացվում են նաև պարբերականի միջազգային ճանաչելիությունը բարձրացնելու և այն առաջատար գիտական շտեմարաններում ընդգրկելու համակարգային քայլեր:

«Հնագույն և հին Հայաստանի հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն» ենթածրագրի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.դ. Ա.Բոբոխյան) կատարված դաշտային հետազոտությունների և լաբորատոր վերլուծությունների արդյունքները տեղ են գտել ազդեցության բարձր գործակից ունեցող միջազգային պարբերականներում և ժողովածուներում: Կարևոր արդյունքներ են արձանագրվել հատկապես ուրարտական շրջանի Հայաստանի քաղաքաշինական լանդշաֆտի ուսումնասիրության բնագավառում: Մասնավորապես Շամիրամի քաղաքատեղիի պեղումներով բացվել են ուրարտական շրջանի պարսպապատ և ճարտարապետական այլ մանրամասներ, որոնք տարածաշրջանում Վանի արքաների քաղաքականության վերհանման համար բացառիկ նշանակություն ունեն (ղեկ.՝ Վ.Մելիքյան):

Զգալի ձեռքբերումներ են գրանցվել միջնադարյան Հայաստանի հետազոտման ոլորտում: Հայտնաբերվել է 2 նոր վաղմիջնադարյան եկեղեցի (Կեչառիսի վանքի տարածքում և Կապանի միջնաբերդում), բացահայտվել են նոր տեղեկություններ վանական տնտեսության մասին (Լանջանիստի Սպիտակ վանք, Շատիվանք): Հատկապես ուշագրավ է կենցաղային և ծիսական հագվագյուտ սպասքի թաքնված հավաքածուի հայտնաբերումը Շատիվանքում (100-ից ավելի նմուշ), ինչը վերականգնում է տարածաշրջանի նյութական մշակույթի և արտաքին կապերի մասին բազմաթիվ մանրամասներ (ղեկ.՝ պ.գ.թ. Դ.Միրիջանյան):

Կարևոր նվաճումներ են արձանագրվել ցեղասպանագիտության բնագավառում: “Commemorating the Armenian Genocide” / «Ոգեկոչելով Հայոց ցեղասպանությունը» երկլեզվյա մենագրության մեջ ցեղասպանության հիշողության մեկդարյա գործընթացի մարդաբանական վերլուծությունը կարևոր կամուրջ է ստեղծում ակադեմիական ու հանրային հիշողության դիսկուրսում: Գրքի անգլերեն տարբերակը լույս է տեսել ՄԳՇ հրատարակչությունում, ինչն անպայմանորեն կնպաստի խնդրի վերաբերյալ հայկական պատկերացումների միջազգայնացմանը:

Էական ձեռքբերումներ են առկա Արցախի խնդրի պատմամշակութային հետազոտման գործում, մասնավորապես մշակութային ժառանգության («Արցախի Տիգրանակերտ» մենագրության հրապարակումը), երկրորդ արցախյան պատերազմի վերլուծության (“Conflict, Space and Transnationalism: An Ethnography of the Second Nagorno-Karabakh War” ՄԳՇ-ում տեղ գտած մենագրությունը) և դրան առնչվող հիմնախնդիրների (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան, պ.գ.դ. Մ.Գալստյան) ուսումնասիրման և միջազգայնացման բնագավառներում: «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան) շարունակվել են պեղումները Ջրաձորի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակավայրի տարածքում: Հայտնաբերված նյութը փաստում է ամրոցի պաշտպանական համակարգի բազմակի

վերակառուցման մասին: Զարգացած միջնադարում այն միանշանակ վերաօգտագործվել է. պատաշարերում հայտնաբերվել են բյուզանդական անանուն ֆոլիս խաչապատկերավոր քարեր, միջնադարյան ջնարակված խեցեղեն, թոնիրների մնացորդներ և այլն: Ուրարտական տաճարի գոյությունը և միջնադարյան վերաօգտագործման հստակ հետքերը ցույց են տալիս, որ այստեղ սերտորեն միահյուսված են եղել պաշտամունքային, վարչական և ռազմական գործառույթները: Այդ պատճառով Ջրաձորը կարելի է բնութագրել որպես տարածաշրջանային իշխանության վերահսկման հիմնակետ, որտեղ ռազմական և տնտեսական համակարգերը համադրվում են Արարատյան դաշտից հյուսիս ձգվող հաղորդակցական ուղիների վրա:

Շիրակի մարզի Ջրաձոր գյուղի հարավային հատվածում՝ Ախուրյան գետի աջ ափին, հետազոտվել են Կապսի ջրամբարի կառուցման ընթացքում հայտնաբերված նորահայտ N 1 և N 2 քարայրները: Քարայր N 1-ում հնագիտական մշակութային շերտ չի հայտնաբերվել: Քարայր N 2-ի ներսում դրվել է 3×3 մ քառակուսիներով բաժանված պեղավայր և իրականացվել է շերտ առ շերտ պեղում՝ շերտագրության մանրամասն փաստմամբ, գտածոների in situ փաստաթղթավորմամբ և լուսանկարահանումով: Հայտնաբերվել է 101 խեցաբեկոր, այդ թվում՝ գետնաթաղ կարասի բեկորներ, ալիքազարդ և ջնարակված անոթների մասեր, կարասի մեջ պահպանված կենդանական ոսկորների մնացորդներ: Պեղված նյութը փաստում է կառույցի բնակեցման և տնտեսական օգտագործման ուղիները և հնարավորություն է տալիս այն դիտարկել Ջրաձորի ամրոցի միջնադարյան վերաօգտագործման փուլերի համատեքստում:

Կատարվել է Հերոդոտոսի աշխատության մեջ հիշատակվող Արևելքի Պակտյուիկե-Բակտրիա-Արևմուտքի Պակտյուիկե երկրանունների համեմատական վերլուծություն: Հատուկ անունների ստուգաբանությամբ պարզվել է, որ Արևելքի Պակտյուիկե անունը ծագում է սանսկրիտի paktha՝ «հինգ» բառից, իսկ Բակտրիայի անունը՝ իր կրկնորդ zari-aspa-ի նման «ձիական» բնույթ ունի: Ինչ վերաբերում է Արևմուտքի կամ Հայկական Պակտյուիկեին, ապա սա տեղական՝ հայկական տեղանուն չէ: Նրա հիմքում ծագումով հնդեվրոպական *pakt-՝ «համաձայնություն, դաշինք» բառն է և Urartu դաշնային պետության անվան համարժեքն է:

Բանասիրություն: «Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Կատվալյան) կարևորվել է հատկապես «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս»-ի կազմման աշխատանքների սկսումը և Գեղարքունիքի մարզին նվիրված Ա. պրակի պատրաստումն ու հրապարակումը: Հայ իրականության մեջ առաջին անգամ լույս է տեսել տարածաշրջանային բարբառագիտական ատլաս՝ շուրջ 7 տասնյակ զուգաբանությունների ներառումով, 2 ընդհանուր բնույթի և 65 զուգաբանական քարտեզներով, մոտ ինը տասնյակ բնակավայրերի ընդգրկումով: Յուրաքանչյուր քարտեզ ունի մեկնաբանություններ, որոնք վերաբերում են զուգաբանությունների արտահայտությանը ինչպես ընդհանուր բարբառային հայերենում, այնպես էլ մարզի խոսվածքներում: Աշխատանքը երկլեզվյան է՝ հայերեն և անգլերեն, որը թույլ կտա նաև այլալեզու հետազոտողներին՝ ծանոթանալու ներկայացված նյութին և օգտվելու դրանից:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) ավարտվել է ««Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններ (ԺԳ-ԺԸ դարեր)» աշխատանքը: Քննվել են Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Հանդէս բանաստեղծաց» խորագրով միջնադարյան ձեռագիր բառարանների 63 գրչագիր տարբերակներ: Այդ բառարաններն իրենց ստեղծման ժամանակի լեզվական վիճակը, մասնավորապես բառապաշարային իրողությունները հարազատորեն ներկայացնող արժեքավոր հավաքածուներ են, որոնց պարունակած նյութն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել և բազմակողմանի (և՛

բանասիրական, և՛ լեզվաբանական հայեցակետերով) քննության ենթարկվել: Հայ մատենագրության բնագրային օրինակների համեմատությամբ մանրամասնորեն դիտարկվել են գրչագրերում առկա բառիմաստների փոփոխությունները, նորակազմությունները, առանձնացվում և քննվել են բարբառային իրողությունները, փոխառյալ բառերը, օտարաբառ կազմությունները:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Համբարձումյան) ավարտվել է «Ակնարկներ գրական հայերենի պատմության» մենագրությունը: Այն ընդգրկում է գրական հայերենի պատմության առանցքային հարցեր, որոնց լուծումն ունի կարևոր նշանակության ընդհանրապես մեր լեզվի և այն կրող հանրության պատմամշակութային ինքնատիպ առաջընթացի վերաբերյալ նոր և ավելի առարկայական պատկերացում ունենալու տեսանկյունից: Աշխատանքը բնագրագիտական-լեզվաբանական քննություն է, որն առնչվում է գրավոր ժամանակաշրջանի հին, միջին և նոր շրջանների լեզվական ընտրված, մինչև օրս չուսումնասիրված նյութերին:

«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Հ.Որսկանյան) հրատարակվել է *«Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն» 2-րդ գիրքը,* որն ընդգրկում է բանաստեղծի կյանքի և ստեղծագործության կարևոր հատվածը՝ 20-րդ դարասկզբի առաջին տասնամյակը: Գիրքը խարսխված է փաստագրական և մատենագիտական բնույթի նյութերի վրա՝ նամակներ, օրագրեր, հուշեր, հոդվածներ, ընտանեկան արխիվ, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Հրատարակվել է *«Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և գործը կամ «Միշտ ճամբան փնտռող մարդը պիտի ըլլամ»* մենագրությունը, որը գրողի կյանքի և ստեղծագործության ամբողջական վերլուծության գնահատության առաջին փորձն է: Աշխատության մեջ ներկայացվում են Ե. Տեմիրճիպաշյանի ապրած ժամանակը, ազգային-հասարակական զարգացման տվյալ փուլի հրատապ հիմնախնդիրները, գրողի տեսական ու գործնական արձագանքն այդ ամենին:

Հրատարակվել է «*Հենրիկ Էդոյան. «Խոսքն իմ հենարանն է»»* մենագրությունը, որի ուսումնասիրության նյութը մեծանուն բանաստեղծի կեսդարյա գրական ժառանգությունն է: Հեղինակն արժևորել և մեկնաբանել է Էդոյանի պոեզիայի գեղարվեստական համակարգը, գեղագիտական հայեցությունը ձևավորման ընթացքի և ամբողջացման պարբերաշրջանների վերլուծությամբ, տեղորոշել բանաստեղծի տեղը և դերը արդի հայ և համաշխարհային պոեզիայի գրապատմական համատեքստում:

Հրատարակվել է «Հակոբ Մովսես. բանաստեղծը և գեղագետը» մենագրությունը, որի քննության նյութն արդի հայ պոեզիայի նշանակալից անուններից մեկի ժառանգությունն է, արժևորումը: Բանաստեղծի պոեզիան առաջին անգամ է ամբողջական քննության նյութ դառնում հայ գրականագիտության մեջ:

Հրատարակվել են հետևյալ գրքերը՝ «Նիկոլ Աղբալեան, Երկերի ժողովածու եօթը հատորով, հատոր առաջին, Պատմութիւն հայոց գրականութեան», «Ե.Չարենց, Երկերի ժողովածու 13 հատորով, հատոր 2, Պոեմներ և բալլադներ.1915-1931», որտեղ վերականգնվել են նախորդ հրատարակության ժամանակ կատարված անհարկի միջամտությունները, ընդարձակվել են ծանոթագրությունների, տեքստային տարբերությունների մասերը, «Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6 (վերախմբագրված հրատարակություն)», որը ներառում է նրա հրապարակախոսական և քննադատական հոդվածները (1887-1912թթ.):

Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներում տպագրվել է 20 հոդված, որոնք նպաստում են ինստիտուտում կատարվող հետազոտությունների արդյունքների միջազգայնացմանը:

Տնտեսագիտություն: «Շրջանաձև տնտեսության մոդելի հայեցակարգի ներդրումը որպես ՀՀ պարենային անվտանգության բարձրացման անհրաժեշտություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Մանուչարյան) հիմնավորվել են շրջանաձև տնտեսության, ի հակադրություն գծային տնտեսության, մի շարք առավելություններ, որոնք գործառնական նշանակություն ունեն ինչպես ռազմավարական, այնպես էլ միկրո և մակրոտնտեսական մակարդակներում, որն էլ պայմանավորում է գյուղատնտեսության ոլորտում շրջանաձև տնտեսության մոդելի ներդրման անհրաժեշտությունը: Վերլուծվել են շրջանաձև տնտեսության և գծային տնտեսության խնդիրները, շրջանաձև տնտեսության բիզնես մոդելների տնտեսական հնարավորությունները, թափոնների կառավարումը, հիմնավորվել են շրջանաձև տնտեսության հայեցակարգի ներդրման առավելությունները պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

«Գիտության զարգացման ռազմավարությունը որպես ՀՀ տնտեսության կայուն զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն նախապայման» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Ե.Հակոբյան) վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացման նախադրյալները (ստացած ժառանգությունը և արդի վիճակը), ուսումնասիրվել են միջազգային փորձի կիրառությունը գիտության պետական ռազմավարության մշակման գործում, որի հիման վրա ձևակերպվել են գիտության ռազմավարության մշակման համար առաջարկություններ և գիտության արդյունավետությունը նկարագրող ցուցանիշները ՀՀ–ում և տարածաշրջանի երկրներում:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա և իրավագիտություն: «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» թեմայի շրջանակում (ղեկ.՝ քաղ.գ.թ. Է.Օրդուխանյան) իրականացվել են հետազոտություններ գիտական 4 ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն):

Շարունակվել է հայ փիլիսոփայության տեսության և պատմության, իրավունքի պատմատեսական արդի հիմնախնդիրների, Հայաստանի Հանրապետությունում և հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների և քաղաքակրթական հիմնախնդիրների, հայ հասարակությունում սոցիալական և քաղաքական նոր իրողությունների ու մարտահրավերների ուսումնասիրությունը: Առանձնակի կարևոր ձեռքբերումներից են Ներսես Շնորհալու հոգևոր գործունեության, Ներսես Լամբրոնացու քաղաքական հայեցակարգի ուսումնասիրությունը (փ.գ.դ. Ռ.Միրումյան, փ.գ.թ. Լ.Սարվազյան), պատմական հիշողության և պատմական ինքնության առանձնահատկությունների ուսումնասիրությունը (ղեկ.՝ ակ. Գ.Պողոսյան), իրավական հայեցակարգերի էվոլյուցիոն զարգացման պատմական և արդիական հիմնախնդիրների, իրավունքի և իրավահասկացության տեսական-հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիոն զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը (ղեկ.՝ ի.գ.դ. Գ.Սաֆարյան, ի.գ.թ. Ա.Շուքուրյան), Հարավային Կովկասում ուժերի նոր հաշվեկշռի ձևավորման, հայ–ֆրանսիական ռազմական կապերի ուսումնասիրությունը (ղեկ.՝ քաղ.գ.թ. Է.Օրդուխանյան, Հ.Սուքիասյան, քաղ.գ.դ. Լ.Շիրինյան, պ.գ.թ. Հ.Նազարյան):

Ինստիտուտում ստացված կարևորագույն գիտական արդյունքները տպագրվել են մենագրությունների և միջազգային հեղինակավոր WoS և Scopus գիտաչափական շտեմարաններում ընդգրկված հանդեսներում:

Արդյունավետ աշխատանքներ են տարվել նաև միջազգային կապերի ամրապնդման ուղղությամբ:

Արվեստագիտություն: «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) շարունակվել են ժամանակակից արվեստի ուսումնասիրման աշխատանքները: Առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել է Հայաստանի առաջին սիմֆոնիկ նվագախմբի՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գործունեությունը 21-րդ դարում: Արխիվային վավերագրերի, ՀԱՖՆ արխիվում պահպանվող փաստաթղթերի հետազոտության հիման վրա ներկայացվել է 2000-25թթ. ընթացքում նվագախմբի համերգային գործունեությունը Հայաստանում և արտասահմանում, բացահայտվել է նվագախմբի ծանրակշիռ ներդրումը Հայաստանի երաժշտական կյանքում, հայ դասական ու ժամանակակից սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտության հանրահռչակման գործում: Ուսումնասիրության արդյունքները հրատարակվել են ՀԱՖՆ գործունեության «Տարեգրության» առաջաբանում, զեկուցվել է միջազգային գիտաժողովում (Մինսկ):

Առաջին անգամ համակողմանի ուսումնասիրվել է կոմպոզիտոր Ռ.Սարգսյանի ստեղծագործությունը (ղեկ.՝ արվ.դ. Լ.Երնջակյան): Լուսաբանվել է կոմպոզիտորի երաժշտական աշխարհը և արվեստագիտական ինքնությունը, ժամանակակից երաժշտարվեստի բազմազան գեղարվեստական ուղղությունների լույսի ներքո քննության են առնվել նրա բազմաժանր ստեղծագործությունների ոճական-գեղագիտական հիմքերը: Ուսումնասիրության արդյունքները հրատարակվել են «Ռուբեն Սարգսյանի աշխարհը. կոմպոզիտորը և ժամանակը» մենագրության մեջ:

Նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրության շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան) առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել են հայկական մամուլի պատմության մեջ գրական-գեղարվեստական պատկերազարդ առաջին՝ «Արաքս» հանդեսում 19-րդ դարի հայ արվեստագետների ստեղծագործությանը նվիրված տարատեսակ նյութերը՝ հոդվածները, հրապարակումներն ու հաղորդումները, «Արաքսի» գեղարվեստական բաժնում ընդգրկված պատկերները, բացահայտվել է «Արաքսի»-ի դերը 19-րդ դարի հայ կերպարվեստի հանրահռչակման գործում: Հետազոտության արդյունքները հրատարակվել են «Հայ կերպարվեստը Սանկտ Պետերբուրգի «Արաքս» հանդեսում (1887-1898թթ.)» մենագրության մեջ:

Հայ հնագույն արվեստի ուսումնասիրության շրջանակում (ղեկ.՝ արվ.թ. Գ.Պողոսյան) հետազոտվել են Վանի թագավորության (Ուրարտու, մ.թ.ա. 9-6դդ.) կերպարվեստի, դեկորատիվ-կիրառական արվեստի պատկերագրությունը, ուրարտական կնիքների գեղարվեստական հարդարանքը, ուրարտական կերպարվեստում տարածական խնդիրները: Հետազոտության արդյունքները հրատարակվել են “Journal of Ancient History and Archaeology” (Q1, Ռումինիա) և «История, археология и этнография Кавказа» (Q1, Ռուսաստան) գիտական պարբերականներում տպագրված 2 հոդվածներում, զեկուցվել միջազգային գիտաժողովներում:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել են ԳԿՄԿ միջազգայնացմանն ուղղված գործընթացները: Ընդլայնվել են գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցային կապերը, ներդրվել են միջազգային շարժունության նոր ծրագրեր. կնքվել է 11 միջազգային և արտաքին համագործակցության համաձայնագիր, հուշագիր և պայմանագիր տարբեր բուհերի, գիտական և այլ կազմակերպությունների հետ:

Էրազմուս+ կարողությունների զարգացմանն ուղղված մրցույթների արդյունքում ԳԿՄԿ ստացել է ֆինանսավորում՝ Եվրոպական հանձնաժողովի Էրազմուս + «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» (CBHE) գործողության շրջանակում իրականացնելու «EUBridge» ծրագիրը, առաջին անգամ հանդես է գալու որպես դրա համակարգող: «EUBridge» ծրագրի նպատակն է զարգացնել Հայաստանի համալսարանների կարողությունները եվրոպական ծրագրերի մշակման և կառավարման ոլորտում, միտված է լրացնելու կառուցվածքային ուսուցման և գործնական հմտությունների պակասը՝ ստեղծելով նորարարական ուսումնական ծրագիր, Եվրոպական ծրագրերի կառավարման պիլոտային ակադեմիա և սիմուլյացիոն ուսուցման մոդուլներ: Հայաստան–Իսպանիա–Իտալիա գործընկերության շրջանակում ծրագրի նպատակն է եվրոպական լավագույն փորձը ներառել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում: Նախատեսվում է մշակել բարձրորակ ուսումնական նյութեր և ինտերակտիվ թվային հարթակ, որը կաջակցի ինչպես առկա, այնպես էլ հեռավար ուսուցմանը: Սա հնարավորություն կտա համալսարանների աշխատակիցներին, հետազոտողներին և ուսանողներին ձեռք բերել գործնական գիտելիքներ եվրոպական ծրագրերի նախագծման, կառավարման և իրագործման համար:

Համաշխարհային համալսարանների վարկանիշային աղյուսակում ԳԿՄԿ զբաղեցրել է 305-րդ տեղը 422 մասնակից համալսարանների շարքում՝ հավաքելով 5241 միավոր, ինչը նրան դասում է միջինից բարձր վարկանիշ ունեցող բուհերի շարքում: Վարկանիշը հաստատում է Կենտրոնի կայուն և զարգացման միտում ունեցող դիրքը՝ ընդգծելով ուժեղ կողմերը, մատնանշելով այն ոլորտները, որոնցում անհրաժեշտ է ռազմավարական բարելավում: ԳԿՄԿ վարկանիշային աղյուսակը հասանելի է https://ranking.heranking.com/2025/isec.am հղումով, իսկ շնորհված վարկանիշային վկայականը և գործունեության հաշվետվությունը՝ *https://drive.google.com/file/d/1FI6c11CVCds7XVqSgiN6FsF-ILRYFZrU/view?usp=drive_link* հղումով*:*

Կարևորելով բուհի միջազգայնացումը և համագործակցությունը՝ Կենտրոնում մշակվել են կրկնակի դիպլոմի շնորհմամբ մասնագիտական կրթական ծրագրեր: Մասնավորապես «Տնտեսագիտության և կառավարման» ամբիոնի հետ համատեղ մշակվել և փաստաթղթավորվել է «Մարքեթինգ» կրթական ծրագիրը, որն իրականացվում է Տուշայի (Իտալիա) համալսարանի հետ: «Երկրաբանության» ամբիոնի հետ համատեղ մշակման փուլում է «Երկրաբանություն» կրթական ծրագիրը, որն իրականացվելու է Լիլի (Ֆրանսիա) համալսարանի հետ:

Մշակվել է «Զբոսավարների դպրոց» լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը, որը գործում է նոյեմբերից:

Շարունակվել են հրատարակվել «Կաճառ» գիտական պարբերականը, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը: «Կաճառ»-ը վերանվանվել է՝ «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, իրականացվել է պարբերականի կայքէջի լիարժեք վերաձևակերպումը:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Կազմակերպությունը 2019թ. դատափորձագիտական ոլորտում սկիզբ է դրել և հրատարակում է «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականը, հրատարակվել են 13-րդ և 14-րդ համարները:

Առաջին անգամ Հայաստանում տեղի է ունեցել Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) ընդլայնված եռօրյա համատեղ նիստը:

Եվրոպական Միության առաջատար դատափորձագիտական կազմակերպությունները միավորող հեղինակավոր կառույցի 30-րդ հոբելյանական համատեղ նիստին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել ոլորտի ներկայացուցիչներ Ֆրանսիայից, Գերմանիայից, Շվեյցարիայից, Նիդեռլանդներից, Մեծ Բրիտանիայից, Ավստրիայից, Խորվաթիայից, Հունաստանից, Լեհաստանից և եվրոպական այլ երկրներից:

Հոկտեմբերին անցկացվել է «Դատափորձագիտական ոլորտի արդի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով գիտաժողովը, որը նվիրված էր Փորձաքննությունների ազգային բյուրոյի հիմնադրման 21-ամյակին: Գիտաժողովի ընթացքում քննարկվել և ամփոփվել են կատարված գիտական աշխատանքները, ներկայացվել են իրականացված հետազոտությունների արդյունքում ստացված գիտական նորույթները, մշակված նոր մեթոդական մոտեցումները: Գիտաժողովի ընթացքում փորձագետները կիսվել են ձեռք բերված առաջադեմ արդյունքներով, ինչը շատ կարևոր է երկրի դատափորձագիտական ոլորտի գիտելիքահեն զարգացման համար:

Կազմակերպությունում իրականացվել է շուրջ 14.000-ից ավել փորձագիտական հետազոտություն, 7 փորձագետ մասնակցել է դատափորձագիտական ոլորտում մասնագիտական գիտելիքների և հմտությունների գնահատման միջազգային պրոֆեսիոնալ թեստավորմանը (Professional test) և ստացել դրական արդյունքներ, շարունակվել են նաև համապատասխան հետազոտական ուղղություններով տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները:

Կազմակերպությունը եղել է 2 միջազգային գիտաժողովի համակազմակերպիչ, որոնցից մեկն անցկացվել է Քիշնևում (Մոլդովայի Հանրապետություն), մյուսը՝ Սամարղանդում (Ուզբեկստանի Հարապետություն):

2025թ. վերսկսվել է կազմակերպության փորձագետների մասնակցությունը Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) փորձի փոխանակման ծրագրին:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հիպերհարթությունը գնդային ռադոնի ձևափոխության (SRT) համար ոչ շրջելության բազմություն է R^d-ում: Սակայն հնարավոր է վերականգնել կոմպակտ կրիչով ֆունկցիան, որի կրիչն ընկած է հիպերհարթության մի կողմում՝ օգտագործելով SRT-ի արժեքները հիպերհարթության վրա կենտրոնացված գնդերի վրա: Այլ աշխատանքում հարթության վրա կենտրոնացված գնդերի վրա SRT-ի միջոցով կամայական ֆունկցիայի վերակառուցման համար (կրիչը կարող է լինել ոչ կոմպակտ) գտնվել է լրացուցիչ պայման, որը կշռված SRT է (հիպերհարթության նկատմամբ կենտ ֆունկցիան վերակառուցելու համար) և դիտարկվում է այսպես կոչված 2 տվյալների գնդային ռադոնի ձևափոխության շրջումը: Ձևափոխությունը բաղկացած է դասական SRT-ից և կշռված SRT-ից: Ներկայացվել է ձևափոխության շրջման բանաձև, որն օգտագործում է գնդային ինտեգրալների տեղային տվյալներն անհայտ ֆունկցիան վերակառուցելու համար: Ինվերսիայի բանաձևն ընդհանրացնում է SRT-ի ինվերսիայի բանաձևը հարթության մի կողմում կրիչ ունեցող ֆունկցիաների համար: Նման ինվերսիաները տեսական նշանակություն ունեն մաթեմատիկայի բազմաթիվ ոլորտներում և պատկերման ժամանակակից մեթոդների մաթեմատիկական հիմք են (ջերմա- և ֆոտոակուստիկ տոմոգրաֆիա, ռադարային պատկերում, երկրաֆիզիկա և մի քանի այլ մեթոդներ): Ստացված շրջման բանաձևը կարող է ընդլայնել տոմոգրաֆիայի կիրառության շրջանակները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Առաջարկվել է մեքենայական ուսուցման մեթոդներով լոգ-տվյալների միջոցով ամպային ենթակառուցվածքներում աշխատող ծրագրերի հայտնաբերման և իրարից առանձնացման եղանակ: Առաջարկվել է ամպային ծրագրերի խափանումների հայտնաբերման և բացատրման եղանակ, որը հիմնված է ծրագրերի հետքերի մշակման վրա:

Ուսումնասիրվել է բարձր մակարդակի բացատրելիություն ունեցող մեքենայական ուսուցման մեթոդների կիրառությունը խափանումների հայտնաբերման և բացատրման նպատակով:

Առաջարկվել է եղանակ, որի օգնությամբ հնարավոր է մաքրել ամպային ենթակառուցվածքներում չաշխատող, բայց ռեսուրսներ ծախսող կոմպոնենտները:

Ուսումնասիրվել են մեծ լեզվական մոդելների կիրառությունները տիպական խափանումների թրենդերի բացահայտման և պրոակտիվ վերացման նպատակով:

Ուսումնասիրվել են մոնոլիտիկ ծրագրերի դիագնոստիկայի հնարավորությունները մեքենայական ուսուցման մեթոդներով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նախագծվել է անօդաչու թռչող սարքի (ԱԹՍ) թևի՝ նույն զանգվածի պահպանմամբ ավելի բարձր և կառավարելի մեխանիկական հատկություններով օժտված հիմնակմախքի նոր կառուցվածք, որն արտոնագիր ստանալու նպատակով ներկայցվել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալությանը, ճանաչվել նորարություն, գրանցվել է որպես գյուտ (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Կարապետյան):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Զգալիորեն կատարելագործվել է մշակվող ԱԹՍ-ների երամի կառավարման ծրագրային հարթակը՝ դառնալով բազմահարթակ համակարգ իրական ժամանակում մոդելավորման և տեսապատկերավորման հնարավորություններով: Ներդրվել է ինտերակտիվ մոդելավորման միջավայր, որը թույլ է տալիս փորձարկել և վավերացնել բազմաԱԹՍ համակարգերի վարքագիծը: Ինտեգրվել է նաև ինտերակտիվ առցանց քարտեզ, որի միջոցով հնարավոր է աշխատել իրական աշխարհագրական տվյալների հետ, սահմանել առաքելության հանգույցներ, դերեր և նպատակներ՝ պլանավորումը մոտեցնելով իրական կիրառմանը: Բարելավվել է տելեմետրիայի ընդունումը՝ հրաժարվելով արտաքին անտենայից և օգտագործելով ներկառուցված կապի մոդուլը: Մշակվել է նաև տեսողական մեթոդների վրա հիմնված նավիգացիոն համակարգի նախատիպ, որը թույլ է տալիս ԱԹՍ-ն կայուն պահել արբանյակային նավիգացիայի բացակայության պայմաններում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Պողոսյան):

Ստեղծվել է փորձարարական սարք՝ տարածության մեջ ընկղմված փոփոխվող էնտրոպիա ունեցող ֆիզիկական օբյեկտների շուրջ առաջացող քվանտային լուսապսակի հատկություններն ուսումնասիրելու համար: Սարքի միջոցով անցկացվել են մեծ թվով փորձեր, որոնք գտնվում են մշակման փուլում: Ապացուցվել է, որ այս մեթոդը թույլ է տալիս իրական ժամանակում ստանալ տեղեկատվություն վերը նշված հատկություններով օժտված ֆիզիկական մարմիններից, ինչը շատ խոստումնալից է նոր նուրբ քվանտային տեխնոլոգիաների զարգացման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

ՄՈՒ-ի միջոցով արդյունավետորեն վերլուծվել է արևային վահանակների համար կիրառելի հիբրիդ պերովսկիտների բարդ կառուցվածքը և կանխատեսվել է էներգիան (band gap energy): Random Forest և Gradient Boosting մեթոդները ցույց են տվել լավագույն արդյունքները՝ հնարավորություն տալով առանձնացնել խոստումնալից կազմեր (1.2–2.0 eV), որոնք հետագայում հաստատվել են DFT-ի և փորձարարական սինթեզի միջոցով: Հետազոտության շրջանակում կիրառված ML-DFT-փորձարարական համակցված մոտեցումն օրգանական-անկառուցվածքային հալոգենիդ պերովսկիտների ամենախորը վերլուծություններից է՝ ընդգրկելով դրանց կառուցվածքը, կայունությունը և էլեկտրոնային հատկությունները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Ավետիսյան)

Մշակվել է խոսակիցների տարբերակման համակարգ, որը, օգտագործելով խոսքի հատվածների վեկտորային ներկայացումների միջև նմանության հեռավորության ցուցանիշները, իտերատիվ սկզբունքով ճշգրտում է խոսակիցների սահմանները, հայտնաբերում է նոր խոսակիցների և դինամիկ թարմացնում է հիփոթեզը: Հիմնական նորարարությունը համընկնող հատվածների տարբերակման մոդուլի ինտեգրումն է, որը նույն ժամանակային հատվածի պիտակներ է վերագրում բազմաթիվ խոսակիցների: Համակարգի սխալանքի ցուցանիշը հասցնում է մինչև 8.03%-ի VoxConverse հավաքածուի վրա (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ց.Ղուկասյան):

Հետազոտվել և մշակվել է երկրաշարժի նախորդող պրոցեսների վիճակագրական մոդել՝ համեմատելով սեյսմիկ տվյալների և Երկրի պտույտի պարբերականությունն Արեգակի շուրջ և Երկրի ու Լուսնի պտույտներն ընդհանուր բարիկենտրոնի շուրջը: Իրականացվել է Իտալիայի, Հունաստանի, Թուրքիայի, Հայաստանի և Իրանի տարածքների սեյսմիկության հիմնական ցուցանիշների համար վերլուծություն: Ուսումնասիրությունը բացահայտել է սեյսմիկ ակտիվության օրական և կեսօրյա պարբերությունների և տարածաշրջաններում խոշոր երկրաշարժերի գերիշխող մեխանիզմի միջև կապը (ղեկ.՝ երկ.գ.թ. Ա.Ղազարյան)

Հետազոտվել և ցանցային միջավայրում տեղադրվել է ցանցային թրաֆիկի վերլուծիչ (ntopng): Բարձր արտադրողականության հաշվողական համակարգի համար մշակվել և տեղադրվել են Zabbix և Grafana մշտադիտարկման և կառավարման համակարգեր, որոնք կարգավորում են մի շարք ծրագրային փաթեթների աշխատանքը, այդ թվում՝ Chessify, ACF, SLURM (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

Ստեղծվել է AICon փորձարարական հարթակը՝ ապահովելով diffusion, embedding և ավատարների գեներացիայի փորձարկումներ տեղային հաշվարկային ռեսուրսներով: Մշակվել են BERT հիմքով chatbot-եր, որոնք կարող են կիրառվել գիտական հարցումների ավտոմատ մշակման համար: Ստեղծվել է փորձնական հայալեզու չատ-ասիստենտ OpenAI Assistants API-ի հիման վրա: Կատարվել է OpenAI մոդելների fine-tuning մեթոդների ուսումնասիրություն՝ հայերենին հատուկ խնդիրների համար: «Ազնավուր» բարձր արտադրողականության հաշվողական համակարգում ներդրվել և փորձարկվել է DMTCP checkpointing համակարգը՝ ինտեգրելով SLURM պլանավորիչի հետ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Գյուրջյան):

Մշակվել և փորձնական կիրառվել է էլ. փոստի ծառայության և ինքնության տվյալների պահպանման նոր կենտրոնացված համակարգ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Պետրոսյան):

«ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Նախագծվել, արտադրվել և տեղակայվել է 20 Կվտ հզորությամբ ուղղահայաց առանցքով հողմաշարժիչով հողմաէլեկտրակայան, որը միացվել է «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ղեկ.՝ Ա.Սիմոնյան):

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Շարունակվել են նոր ծրագրային փաթեթի ու դիտողական նյութի մշակման նոր մեթոդների ստեղծման աշխատանքները: Կատարելագործվել է նաև ավտոմատ կարգով (pipe line) մշակման փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում մշակել ամբողջ գիշերվա ընթացքում ստացված գիտական պատկերները՝ օգտագործելով բազմաթիվ լրացուցիչ պատկերներ (bias, flat-field, dark, etc.) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Հայ-ռուսական համատեղ կայանում 230 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել է 493.400 չափում և վերականգնվել է 430 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ. Հարությունյան):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հետադարձ լազերային ճառագայթման կոնֆիգուրացիայում գրանցվել է հայելազուրկ լազերային գեներացիա, երբ նոսր ռուբիդիումի գոլորշին գրգռվում է գծային բևեռացված անընդհատ լազերային ճառագայթմամբ, որը սկանավորվում է Rb-ի D_2 գծի գերնուրբ անցումների ռեզոնանսների հաճախային տիրույթում: Հետազոտվել են հետադարձ լազերային ազդանշանի կախվածությունը մուտքային ճառագայթման հաճախությունից և հզորությունից, ինչպես նաև մուտքային լույսի գծային բևեռացման երկայնքով կիրառվող B-դաշտից: Քննարկվել են ստացված արդյունքների հնարավոր կիրառումները մագնիսական դաշտի հեռակա մոնիթորինգի համար (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Պապոյան):

«Փի Էս Այ» հայկական տեխնոլոգիական ընկերության աջակցությամբ, սերտ համագործակցելով Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի և ԵՊՀ Ֆիզիկայի ԳՀ ինստիտուտների հետ, իրականացվել է միաշերտ հարթ կոճով ինքնագեներատորի (a Single-layer Flat-Coil-Oscillator) հիման վրա գործող «հիդրոֆոնի» (SFCO-հիդրոֆոնի) նախագծում, պատրաստում, գործարկում ու դրա պարամետրերի օպտիմալացում: Նոր «հիդրոֆոնը» օգտագործելով՝ ուսումնասիրվել է «Danio rerio» ձկան (Zebrafish) տեղաշարժը ու դրա միջոցով այդ ձկան շարժումների վարքագիծը բացահայտելու և վերլուծելու հնարավորությունը: Այս ու նման ձկները ներկայում լայնորեն օգտագործվում են ֆիզիոլոգիայում, դեղաբանության ու նաև «տրանսլյացիոն բժշկության» (“translational medicine”) մեջ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Գևորգյան):

Մշակվել է ցինկի օքսիդի կիսահաղորդչի վրա հիմնված դաշտային տրանզիստոր n-տիպի ֆեռոէլեկտրական հոսարանով: Որպես հոսարան օգտագործվել է ZnO:Li թաղանթ, որը ցուցաբերում է ցածր հաղորդունակությամբ ֆեռոէլեկտրական կիսահաղորդչի հատկություններ: Կատարվել են տրանզիստորների ստատիկ բնութագրերի և ինֆորմացիայի գրառման ու ընթերցման գործընթացների չափումներ: Այս արդյունքները կարող են կիրառվել մանիպուլյացիոն դաշտային տրանզիստոր ստեղծելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Իրականացվել են ամոնիումի պերքլորատի գնդաձև բյուրեղների ստացման տեխնոլոգիային նպաստող հետազոտական աշխատանքներ, մասնավորապես ուսումնասիրվել է ռեակտորում ամոնիումի պերքլորատի լուծույթից համապատասխան չափերի գնդաձև բյուրեղների ստացման կախվածությունը խառնման արագությունից և այլ պարամետրերից: Մշակվել է օպտիմալ տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս ստանալ ամոնիումի պերքլորատի միջին (50-160մկմ) և խոշոր (160-315մկմ) չափերի գնդաձև բյուրեղներ: Վերջիններս կարող են կիրառվել որպես հիմնական բաղադրամաս խառնուրդային պինդ հրթիռային վառելիքի արտադրության համար (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Իրականացվել են հիմնարար հետազոտություններ նոր տիպի բազմակոմպոնենտ միջավայրերի սինթեզի ոլորտում, որոնք կարող են կիրառելի լինել գիտության և տեխնոլոգիայի տարբեր ճյուղերում: Մասնավորապես ուսումնասիրվել է ամոնիումի պերքլորատի լուծելիության կախվածությունը ջերմաստիճանից: Առաջին անգամ գնդաձև բյուրեղների ստացման տեխնոլոգիայում կիրառվել է հաստատուն մագնիսական դաշտ, ինչը զգալիորեն կրճատել է դրանց ձևավորման ժամանակահատվածը (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Բարսեղյան):

Մշակվել և պատրաստվել է սարք, որը հնարավորություն է տալիս իրականացնել ռենտգենյան դիֆրակցիոն պատկերի գծային (միաչափ) խոշորացում (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Դրմեյան):

Մշակվել է ռենտգենյան սպեկտրամետրի նոր տիպ, որն ունի բարձր լուծաչափ և կարող է օգտագործվել ռենտգենյան սպեկտրաչափական հետազոտություններում, մասնավորապես իրականացնել նյութերի բնութագրական ռենտգենյան սպեկտրների հստակ տարալուծում և բացահայտում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Մշակվել և պատրաստվել է ԳՀց-ՏՀց հաճախային տիրույթի ինտերֆերոմետր, որը հնարավորություն է տալիս իրականացնել այդ տիրույթի ճառագայթման սպեկտրալ վերլուծություն: Մշակվել և հավաքվել է ռենտգենյան նոր միկրոտոմոգրաֆ, որը

հնարավորություն է տալիս ստանալ նյութերի եռաչափ անհամասեռությունները մինչև 4-5մկմ լուծողությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Մարգարյան):

Կատարվել է կորունդի մի շարք նոր բյուրեղների օպտիկական, ժամանակային, ջերմային, ճառագայթային և այլ հատկությունների հետազոտում ոչ միայն ՈՒՄ տիրույթում, այլև ՎՈՒՄ ու ԻԿ օպտիկական տիրույթներում: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ կորունդի բյուրեղները կարող են կիրառվել որպես լուսափոխարկիչներ ոչ միայն ՈՒՄ, այլև ՎՈՒՄ և ԻԿ ալիքի երկարությունների տիրույթներում զգայուն դետեկտորների ստեղծման համար (ղեկ.՝ Ջ. Վարդանյան):

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ուսումնասիրվել են ազդանշանների հաճախականության բազմապատկիչների, մասնավորապես վարիկապների և ԳԲՀ դիոդների օգտագործմամբ հաճախականության հինգանգամյա կրկնապատկման (մինչև 3 ԳՀց) սխեմաները, մշակվել և իրականացվել են դրանց համալրման աշխատանքները (ղեկ.՝ Կ.Դադալյան):

Սկանավորող էլեկտրոնային և ատոմային ուժային մանրադիտակների կիրառմամբ ուսումնասիրվել է լազերի հզորության, ալիքի երկարության, տակդիրի ջերմաստիճանի և թիրախ-ենթաշերտ հեռավորության ազդեցությունը լազերային նստեցման մեթոդով ստացվող CdTe բարակ թաղանթների ձևավորման վրա: Այս թաղանթները նախատեսված են որպես պատուհանային շերտեր InSb/CdTe հետերաանցումային ինֆրակարմիր ֆոտոդետեկտորների համար: Ռենտգենյան դիֆրակցիոն վերլուծությունը ցույց է տվել, որ 600 և 1200 նմ լազերային ճառագայթման ալիքի երկարությունների, ինչպես նաև 100-300^{0}C տակդիրի ջերմաստիճանների պայմաններում նստեցված CdTe բարակ թաղանթներն ունեն խորանարդային բյուրեղային կառուցվածք տեսական արժեքին մոտ տարրական բջջի պարամետրերով: Պարզվել է, որ բազմաբյուրեղային CdTe թաղանթների հաստությունը տատանվում է 248–421նմ միջակայքում՝ կախված լազերի հզորությունից և թիրախ-տակդիր հեռավորությանից (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Մշակվել և հետազոտվել է ինչպես ներքին այրման, այնպես էլ էլեկտրական շարժիչների աշխատանքի վերահսկման էլեկտրոնային համակարգ: Վերահսկումն իրականացվել է շարժիչը սնող հաղորդալարին հպված, բայց նրանից մեկուսացված, լարի կամ ֆոլգայի տեսք ունեցող ունակային տվիչում մակածված ինֆորմացիոն ազդանշանի մշակմամբ (օպերացիոն ուժեղարարի և վերծանող սարքի միջոցով) և կարող է ցուցադրվել մոնիտորի կամ այլ ցուցիչ սարքի վրա, այդ թվում՝ նաև հեռադիտման տարբերակով (ռադիոկապի միջոցով): Ստացվել է ՀՀ մտավոր սեփականության գրասենյակի արտոնագիր:

Մշակվել է փոքր հեռավորությունների վրա աշխատող (0.2մ-4.0մ) արագագործ հեռաչափ, որն աշխատում է հետևյալ սկզբունքով. հեռաչափից դեպի թիրախ արձակվում է ամպլիտուդամոդուլված ինֆրակարմիր ճառագայթման նեղ փունջ, որի միջոցով թիրախը հայտնաբերվում է գործնականում ակնթարթորեն, երբ այն հայտնվում է հեռաչափի ընդունիչի տեսադաշտում:Հեռաչափը նախատեսվում է որոշակի արագությունից մեծ արագությամբ շարժվող սարքերի վրա տեղադրման համար (ղեկ.՝ Կ.Միրզոյան):

Մշակվել է թորած ջրում 20-70նմ չափերի արծաթի նանոմասնիկների ստացման մեթոդ: Լազերային աբլյացիան կատարվել է YAG:Nd լազերի ալիքի երկարության հիմնական հարմոնիկի (λ=1,06μ) և երկրորդ հարմոնիկի (λ=0,53μ) կիրառմամբ: Լազերի հիմնական հարմոնիկի օգնությամբ արծաթե թիրախից պոկվել են 200-1000նմ չափերի մասնիկներ, որոնք հետագայում լազերի երկրորդ հարմոնիկի ազդեցության տակ տրոհվել են մինչև

20-70նմ: Նաև մշակվել է ջրային լուծույթներում օրգանական նյութերի նանոմասնիկների ստացման մեթոդ կենսաբանական հետազոտությունների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Կատարվել են լրիվ անօրգանական CsPbBr3 բազմաբյուրեղական պերովսկիտային բարակ թաղանթների ռենտգենակառուցվածքային և մանրադիտակային հետազոտություններ: Ուսումնասիրվել է ջերմային թրծման ազդեցությունը նրանց փուլային կազմի, միկրոկառուցվածքի և մորֆոլոգիայի վրա: Վերլուծվել է թաղանթներում միջին հատիկների և բյուրեղիկների (ենթահատիկների) չափերի և բյուրեղային հյուսվածքավորման աստիճանի միջև կապի բնույթը տարբեր թրծման պայմաններում (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գյուղատնտեսական հողերի բազմամյա ռադիոէկոլոգիական հետազոտությունների վերլուծության ու ամփոփման հիման վրա գնահատվել են որոշ տարածքների հողերում բնական ռադիոնուկլիդների հիմնագծային ակտիվությունները: Ստացված տվյալները կարող են օգտագործվել շրջակա միջավայրի ռադիոէկոլոգիական հետագա հետազոտություններում, այդ թվում՝ նոր միջուկային օբյեկտների կառուցման տարածքներում զրոյական ֆոնի գնահատման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյաևա):

ՀՀ-ում արտադրված կենդանական ծագում ունեցող մթերքների (տավարի, գառան, խոզի և հավի միս, կաթ, մեղր) որոշ նմուշներում հայտնաբերված տետրացիկլինի մնացորդային պարունակությունների՝ սննդակարգային ներգործությամբ պայմանավորված հանրային առողջապահական ռիսկեր չեն բացահայտվել: ՀՀ չափահաս բնակչության կողմից հայկական բազմածաղկային մեղրի սպառման դեպքում պոտենցիալ թունավոր տարրերի (Cu, Mo, Pb, As) ռիսկի գնահատման արդյունքում բացահայտվել է, որ դրանց օրական ընդունման հաշվարկված չափաքանակները զգալիորեն փոքր են: Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմնի կողմից հաստատված առողջապահական ուղեցուցային արժեքներից և քրոնիկ ներգործությամբ պայմանավորված հավանական առողջական ռիսկ առկա չէ: Երևանի չափահաս բնակչության կողմից կերակրի աղի օգտագործման սննդային սովորույթների և աղի բարձր պարունակությամբ թիրախային մթերքների (պանիր, բաստուրմա, սուջուխ, ջերկի, ապխտած և աղի ձուկ, լահմաջո, թթուներ, աղի սիսեռ, աղի պիստակ, գետնանուշ, աղի արևածաղիկ, լոլիկի հյութ) սպառման վերաբերյալ սննդակարգային հարցումների արդյունքները ցույց են տվել, որ պատրաստի սննդին աղ ավելացնելու սովորություն ունի հարցման մասնակիցների 27,4%-ը, իսկ սննդին աղ ավելացնում է առանց համտեսի 13,1%-ը: Աղի բարձր պարունակություն ունեցող մթերքների (կաթնամթերք, մսամթերք, ալրային հիմքով արտադրանք, բանջարեղենային պահածոներ, վերամշակված հատիկեղեն, սոուսներ) լաբորատոր հետազոտությամբ պարզվել է, որ աղի ամենաբարձր պարունակություն ունեն բաստուրման և սուջուխը: Համեմատաբար մեծ քանակությամբ աղ են պարունակում պանիրն ու պանրային արտադրանքը, այնուհետ բոված աղի արևածաղիկը, նրբերշիկով և կարտոֆիլով կարկանդակները, աղի ձողիկը և կրեկերը, եփած և ապխտած երշիկեղենը, պիցցան, լավաշը, հացը, վարունգի թթուն և բանջարեղենային մարինադը: Արդյունքները հիմք են հանդիսանալու բնակչության սննդակարգում կերակրի աղի օրական ընդունումը

գնահատելու համար: Գնահատվել է Երևանի չափահաս բնակչության սննդակարգում շաքարի բարձր պարունակություն ունեցող մթերքների սպառման արդյունքում շաքարի օրական ընդունումը: Արդյունքները ցույց են տվել, որ շաքարի միջին օրական ընդունման ամենամեծ մասնաբաժինն ապահովում են շոկոլադը և շոկոլադ պարունակող քաղցրավենիքները, այնուհետ հրուշակեղենը, գազավորված ըմպելիքները: Շաքարի բարձր պարունակություն ունեցող մթերքների սպառման արդյունքում սպառողների 25,3%-ի սննդակարգում շաքարի միջին օրական ընդունումը գերազանցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մակարդակը (50 գ/օր) (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Օդատիեզերական տվյալների կիրառմամբ մակերևութային ծածկի դասակարգման մշակված մեթոդական մոտեցումների հիման վրա Երևանի արևելյան 275հա ընդհանուր մակերեսով հատվածում ԱԹՍ օպտիկական պատկերների՝ մեքենայական ուսուցման մոդելներով (MLP, SVM) վերծանմամբ իրականացվել է տարածքում առկա շինությունների և չտարբերակված, անվերահսկելի աղբի քարտեզագրում, ռելիեֆի և մակերևույթի թվային 3D մոդելների կառուցում: Դրանց հիման վրա իրականացվել է նաև տարածքում առկա չտարբերակված անվերահսկելի շինարարական աղբի և շինությունների մակերեսների ծավալների հաշվարկ (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ՇՄՆ հետ կնքված պայմանագրերի շրջանակում շարունակվել են կենսառեսուրսների գնահատման աշխատանքները: Գնահատվել է հիմնական որսատեսակ հանդիսացող կենդանատեսակների պոպուլյացիաների վիճակը, և ՇՄ նախարարությանն են տրամադրվել 2025–26թթ. որսաշրջանի ընթացքում որսատեսակների օգտագործման թույլատրելի քանակներն ու որսի ժամկետները (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Ղասաբյան): Գնահատվել է ֆիտոպլանկտոնային ու զոոպլանկտոնային համակեցությունների քանակական ու որակական ցուցանիշների տարածաժամանակային ու ուղղահայաց բաշխվածությունը, հատակային մակրոանողնաշարների և մակրոֆիտների տեսակային կազմն ու տարածվածությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գևորգյան):

2025թ. հոկտեմբերի սկզբի դրությամբ սիգի արդյունագործական պաշարը գնահատվել է 1373,9 տ: Հաշվի առնելով պոպուլյացիայի համալրման առկա խնդիրներն ու արդյունագործական էական ճնշումը՝ 2026թ. սիգի որսի քվոտան առաջարկվել է սահմանել արդյունագործական պաշարի 40 %-ի չափով՝ մոտ 550 տ, իսկ որսը թույլատրել փետրվարի 1-ից: Սևանա լիճ թափվող գետերում ձկնատեսակների սակավությունը պայմանավորված է գետերի ներկայիս անբարենպաստ կենսապայմաններով, մասնավորապես սեզոնային ջրառով, կոմունալ-կենցաղային աղտոտմամբ, գետի հունի փոփոխություններով ու այլ գործոններով (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բարսեղյան):

Կովկասի բնության հիմնադրամի (CNF) հետ կնքված պայմանագրի շրջանակում իրականացվել են Հայաստանի ԲՀՊՏ-ների միջատների մոնիթորինգային աշխատանքներ, հավաքվել է նյութ 9 պահպանվող տարածքներից (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Մշակվել է գետային էկոհամակարգերի մասնակցային մշտադիտարկման համար նախատեսված քաղաքացու գիտության հավելված (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ասատրյան):

Իրականացվել են Toxoplasma gondii-ի բազմաէպիտոպային քիմերային սպիտակուցի լաբորատոր սինթեզ, դրա իմունոգենության գնահատում BALB/c մկներում, ինչպես նաև տեղական բույսերի էքստրակտների հակատոքսոպլազմային ակտիվության in vitro

ուսումնասիրություններ: Ստացված արդյունքները ձևավորում են կիրառական հիմք նոր կանխարգելիչ ու բուժական մոտեցումների մշակման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Աղայան):

Մշակվել է կենդանիների վերարտադրողական բջիջների՝ սպերմատոցիտների ու ձվաբջիջների սառեցման մեթոդ՝ առանց գերցածր ջերմաստիճանների կիրառման: Նոր տեխնոլոգիան թույլ է տալիս բջջային սուսպենզիաները երկար ժամանակ պահպանել -18°C ջերմաստիճանում՝ ապահովելով հետագա հալեցման ու բարձրորակ նմուշների պատրաստման հնարավորություն: Մեթոդը կարևոր նշանակություն ունի հազվագյուտ ու վտանգված կենդանիների պահպանության, բազմափուլ փորձարկումներով կլինիկական հետազոտությունների համար (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Սպանգենբերգ):

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մշակվել են Տեխնիկական պայմաններ, և գրանցվել է ԵԱՏՄ համապատասխանության հայտարարագիրը կաթնաթթվային բակտերիաների շտամների հիման վրա «Բիոարգին» փոշենման կաթնաթթվային մթերքի արտադրության համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գրանցվել են «Յուղատու մորինգայի տերևներ (Moringa oleifera Lam.), կենսաբանական ակտիվ հավելում» տեխնիկական պայմանները (ղեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Առաջին անգամ հիդրոպոնիկ մշակույթ են ներմուծվել վայրի ուտելի բույսեր գանգուր ավելուկը և արևելյան մանդակը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Իրականացվել է ալիքաձև խավրծիլի փոքրամասշտաբ փորձարկում բացօթյա հիդրոպոնիկայում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Իրականացվել են գիտափորձերի արդյունքում արտադրված 600 հատից ավել տարբեր ծառաթփերի (սոսի, կաղնի, սոֆորա, գիհի, կենսածառ, սրնգենի, կատալպա, մետաքսածառ, հուդայածառ, հացենի և այլն) տնկիներ մոտ 1.1 մլն դրամ գումարով: Բարեգործական նպատակներով 2 հիմնանորոգված դպրոցների տրամադրվել է սոֆորայի շուրջ 40 տնկի (ղեկ.՝ Ա.Ղահրամանյան):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել է PocketMaster ճկուն, ավտոմատացված և բազմաֆունկցիոնալ գործիք, որը նախատեսված է սպիտակուցի փոխազդող հատվածների համեմատման, վերլուծության, կլաստերիզացման և կառուցվածքային մեկնաբանման համար: Իր հնարավորությունների շնորհիվ PocketMaster-ը կարող է ծառայել որպես արժեքավոր գործիք դեղերի մշակման վաղ փուլերում, որտեղ պահանջվում է սպիտակուցային կառուցվածքների մանրակրկիտ և ճշգրիտ գնահատում (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Նազարյան):

Մշակվել է միկրոբիոմների մետավերլուծության tsantsR ծրագրային փաթեթ, որը տրված մետագենոմիկական տվյալների բազայի հիման վրա կառուցում է բակտերիալ կազմն արտահայտող ցանց: Ծրագրային փաթեթը կլաստերավորում է ցանցի հանգույցները և կանխատեսում դրանց ֆունկցիոնալ ներուժը՝ օգտագործելով KEGG անոտացիաներ և հիվանդությունների հետ կապը (ղեկ.՝ Ն.Վարդազարյան):

Լ.ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

MP 200 բազմալիք ֆիզիոլոգիական գրանցման համակարգը և AcqKnowledge 6.0 ծրագիրն օգտագործվել է առնետների մոտ ցավի հետ կապված պոտենցիալների գրանցման համար՝ էլեկտրական խթանման և թույների կամ եթերայուղերի ներմուծման պայմաններում (տեղային թաթի շրջանում, ներորովայնային): Ազդանշանները ֆիլտրվել են, միջինացվել և վերլուծվել՝ գնահատելով N և P պիկերի ամպլիտուդներն ու լատենտ ժամանակները նախապես սահմանված նմուշառման հաճախականությամբ, ինչը հնարավորություն է տվել օբյեկտիվորեն գնահատել փորձարկվող նյութերի հակացավային արդյունավետությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ոսկանյան):

«Լաբորատոր ենթակառուցվածքի արդիականացում՝ ավտոկլավի, լաբորատոր փոքր սարքավորումների և պարագաների ձեռքբերում» դրամաշնորհի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Կիրակոսյան) աշխատանքներ են տարվել լաբորատոր սարքավորումներ՝ ավտոկլավ և փոքր լաբորատոր պարագաներ ձեռք բերելու ուղղությամբ:

«Կրելի բազմաչափ կենսաբժշկական տվյալների հավաքագրման համակարգ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սարգսյան) նախագծվել և հավաքվել է կրելի սարքի նախատիպ, որը ներառում է սրտի բաբախումների, մաշկի ջերմաստիճանի, մաշկի դիմադրության և շարժման սենսորներ, որոնք կառավարվում են ESP32 միկրոկառավարիչով, իսկ տվյալները փոխանցվում են սմարթֆոնի նորամշակ հավելվածին հետագա մշակման համար:

«Կենսաբանական օբյեկտների 4D և 5D հիպերսպեկտրալ բնութագրում՝ բժշկական նշանակության կիրառությունների շեշտադրմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Ն.Չիլինգարյան) հետազոտվել է բազմաչափ հիպերսպեկտրալ տվյալների արդյունավետությունը սովորական՝ եռաչափ տվյալների նկատմամբ: Նախագիծը 4-րդ չափողականության ավելացման փուլում է:

«Մաշկի նորարարական փոխարինիչներ՝ տեղական, կայուն, արդյունավետ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Ա.Ավետիսյան) հետազոտությունները կենտրոնացվել են այրվածքների բուժման համար կոլագենի մաշկային փոխարինիչների մշակման վրա: Փորձեր են անցկացվել խոշոր եղջերավոր կենդանիների ջլերից I տիպի կոլագենի մեկուսացումն օպտիմալացնելու համար՝ օգտագործելով թթվային և ֆերմենտատիվ արդյունահանման մեթոդներ, որոնց հաջորդել է համապարփակ կենսաքիմիական բնութագրում՝ մաքրությունը գնահատելու համար: Միաժամանակ ավարտվել են հետազոտության հաջորդ փուլի նախապատրաստական աշխատանքները՝ ներառյալ բջջային կուլտուրայի համար անհրաժեշտ ռեակտիվների և սպառվող նյութերի ձեռքբերումը:

Ծրագրավորվող «Իմպուլսային դաշտով աբլացիոն (PFA (Pulsed Field Ablation)) սարքի նախագծում և ստեղծում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Սարվազյան) մշակվել է ավտոենկոդերի վրա հիմնված մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս ME-HSI հիպերսպեկտրալ պատկերավորման տվյալներում հայտնաբերել ամենատեղեկատվական գրգռում-լուսարձակում շերտերը՝ ապահովելով չափայնության էական նվազում, պահպանելով վերլուծության բարձր ճշգրտությունը: Մշակվող մեթոդը թույլ կտա սրտամկանի ռադիոհաճախականային աբլյացիան տեսանելի դարձնել անմիջապես վիրաբուժական միջամտության ընթացքում՝ նվազեցնելով ֆիբրիլյացիայի աբլյացիայի անհաջող դեպքերը: ME-HSI-ի կիրառմամբ հայտնաբերվել են կոլագենի կապերի ամրացման նյութից պայմանավորված սպեկտրալ փոփոխությունները, միաժամանակ օգտագործվել են մեքենայական ուսուցման մեթոդներ սկաֆոլդի օպտիմալ պարամետրերը սահմանելու համար: Մշակվել է կոնվոլյուցիոն ավտոենկոդերի ճարտարապետություն, որը թույլ կտա վերլուծել 4D բազմագրգռում հիպերսպեկտրալ տվյալները՝ ամբողջությամբ

պահպանելով տարածական-սպեկտրալ կառուցվածքը: Մոդելն ապահովում է կայուն և իմաստալից չուղղորդված կլաստերացում և ներկայացնում է հիմք ME-HSI տվյալների ավտոմատացված մեկնաբանման համար: 4D հիպերսպեկտրալ պատկերավորումը փորձարկվել է նյարդ-կապան տարբերակման համար (կովի մոդելով), ինչպես նաև քարաքոսերի տեսակների նույնականացման համար՝ ուլտրամանուշակագույն գրգռումով և տեսանելի տիրույթի լուսարձակումով:

Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ադենոզին դեամինազը և ԴՊՊIV-ը կարելի է դիտարկել որպես թիրախ-ֆերմենտներ դյուպուիտրենով հիվանդների վիրաբուժական մոտեցումից խուսափելու համար՝ օգտագործելով բժշկության մեջ այդ ֆերմենտների արգելակիչները:

Anthriscus cerefolium-ի՝ կնձմնձուկի թարմ զանգվածը խթանել է L. rhamnosus բակտերիաների աճը 5-10 անգամ միջավայրում ավելացրած պրոբիոտիկի համեմատությամբ: Այն ցուցաբերել է հակամանրէային ակտիվություն E. coli-ի և Staphylococcus aureus-ի նկատմամբ դիֆուզիոն մեթոդի կիրառմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Հետազոտություններ են իրականացվել ցանկացած բակտերիալ վարակի հայտնաբերման համար թղթե սենսորներ ստեղծելու համար: Ոսկու հետ կունյուգացված լեկտիններն օգտագործվել են որպես ունիվերսալ սպիտակուցներ, որոնք բակտերիաների առկայության դեպքում գունավոր օղակ են առաջացրել: Մեթոդի զգայունությունը զգալիորեն գերազանցել է կենսաբանական հեղուկներում հայտնաբերված վարակների համար բնորոշ արժեքները: Ուռուցքի զարգացումը կանխելու պոտենցիալ պրոֆիլակտիկ միջոցներ են մարդու արյան պլազմայի ածխաջրերի նկատմամբ բնական հակամարմինները, որոնք կարող են ներարկվել մարդկանց ռիսկային խմբերին: Իրականացվել է այս հակամարմինների աֆինային մաքրման ոչ ավանդական մեթոդ կաթի գլիկոպրոտեինների կիրառմամբ, որոնք կապվում են կրիչի հետ սպիտակուցային հատվածով՝ ազատ թողնելով ածխաջրային բաղադրիչները: Այս մոտեցումը, ի տարբերություն շաքարների կովալենտային կցման դասական մեթոդների, պահպանում է ածխաջրերի նատիվ կառուցվածքը և չի խաթարում հակածնային դետերմինանտների կառուցվածքը (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

Ուսումնասիրվել են 5 պրոբիոտիկների՝ Lactobacillus acidophilus, L.rhamnosus, L.bulgaricus, Streptococcus thermophiles, Bifidobacterium bifidum սինթեզած ցածրամոլեկուլային պեպտիդների (բակտերիոցինների) հակամանրէային հատկություն-ները տարբեր հիվանդությունների հարուցիչներ Escherichia coli, Staphylococcus aureus և Klebsiella pneumoniae, Candida albicans նկատմամբ: ԲԱՀՔ եղանակով առանձնացվել են այդ պեպտիդները, որը հնարավորություն է տալիս դրանք առաջարկել որպես հակաբիոտիկներին փոխարինողներ և սննդարդյունաբերության մեջ օրգանական կոնսերվանտներ: Ուսումնասիրվել են ՕԴՔԳԿ սինթեզած օրգանական մի շարք միացությունների հակաբակտերիալ և հակասնկային հատկությունները: Ընտրվել են միացություններ, որոնք ունեցել են խիստ արտահայտված հակամանրէային հատկություններ տարբեր ախտածին մանրէների նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ռ.Մադոյան):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բացահայտվել է գերբարձրջերմաստիճանային կարբիդների (TaC, HfC) պոտենցիալը բարձր արդյունավետությամբ էներգետիկ նյութերի մշակման համար: Ցույց է տրվել, որ դրանց օքսիդացման ընթացքում անջատվող ջերմության քանակը համադրելի է հայտնի թերմիտային համակարգերի հետ (ղեկ.՝ թղթ. անդամ Ս.Խառատյան):

Արագ տաքացման պայմաններում, արագագործ ջերմաստիճանային սկաներ սարքավորման միջոցով, միափուլ ճանապարհով ստացվել է լայն կիրառություն ունեցող Nd2Fe14B հաստատուն մագնիսական նյութը, որն այլ եղանակներով ստացվում է բազմափուլ գործընթացների արդյունքում, բարդ սարքավորումների օգտագործմամբ:

ԼԱՍ եղանակով ստացվել է բարձր էնտրոպիական FeNiMnAlCu համաձուլվածքը, որը պարունակել է բարձր էնտրոպիական օքսիդի որոշակի քանակ: Ստացված արգասիքը ենթարկելով էլեկտրակայծային եռակալման՝ հնարավոր է եղել ազատվել օքսիդից և ստանալ գրեթե մաքուր, նիստակենտրոն խորանարդային բյուրեղացանցով FeNiMnAlCu համաձուլվածքը՝ կիրառելի որպես փափուկ մագնիսական նյութ (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Օգտագործելով եռաչափ տպագրության տեխնոլոգիան՝ պատրաստվել է լամինատային կառուցվածքով հիդրօքսիապատիտ - տիտան անհատականացված գանգուղեղային իմպլանտ: Հետազոտությունները ցույց են տվել, որ լամինատային կառուցվածքով իմպլանտը ցուցաբերում է անհրաժեշտ կենսաակտիվություն, ոսկորի համար բնութագրական ջերմահաղորդականություն և կայուն մեխանիկական հատկություններ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ֆտոր պարունակող ֆոսֆատային նոր համակարգերի՝ P_2O_5-Al_2O_3-0.8MeO/0.2MeF_2(Me-Mg,Ca) հիման վրա սինթեզվել են դյուրահալ ապակիներ և ապակեբյուրեղային նյութեր: Մշակվել են բարձր (480-540 կգ/մմ^2) միկրոկարծրության արժեքներով ապակիներ՝ կիրառելի բժշկության մեջ որպես ոսկրային իմպլանտներ (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Մշակվել է իտրիում ալյումասիլիկատային ապակու կոմպլեքս հումքի ստացման միկրոալիքային եղանակ (ՄԱ) $Y(NO_3)_3$ - $Al_2(SO_4)_3$ - $Na_2O{\cdot}nSiO_2$ աղերի լուծույթներից էներգետիկ ծախսերը նվազեցնելու և հատկությունները բարելավելու նպատակով: Ավանդական և ՄԱ սինթեզների և ապակեեփման պրոցեսի համեմատությունը հաստատել է ՄԱ եղանակի առավելությունը՝ սինթեզի տևողության կրճատում 2-3 անգամ, եփման ջերմաստիճանի իջեցում 100-150°C աստիճանով և ապակու եփման տևողության կրճատում 5-6 անգամ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Բաղրամյան):

Մշակվել են պղնձի, կապարի և ցինկի օքսիդացած միներալներից ստացված սուլֆիդների փրփրաֆլոտացման ռեժիմներ: Որոշվել է ֆլոտացիոն հարստացման գործընթացում պահանջվող ռեագենտների ծախսը: Մշակված տեխնոլոգիայով ստացված Cu, Pb, Mo, Zn տարրերի սուլֆիդային խտանյութերի քանակությունները բավարարում են Պետական ստանդարտների գործող պահանջներին (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Դավիթյան):

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ակտիվ համագործակցություն է սկսվել Մ.Սարյանի տուն-թանգարանի հետ. Ռաման սպեկտրասկոպիայի եղանակով առաջին անգամ ուսումնասիրվել են հայ գեղանկարչի նկարների պիգմենտները, 1909-48թթ. տարբեր ստեղծագործություններ՝ «Առավոտը Ստավրինոյում», «Արաբ պարուհի», «Քարավան», «Զանգվի ափերը Երևանի մոտ» և «Կիրովականը»: Ստացված արդյունքների հիման վրա պարզվել է, որ Սարյանի ներկապնակը բավականին հարուստ է տարբեր գունանյութերով, այդ թվում՝ ուլտրամարին կապույտ, կոբալտ կապույտ, զմրուխտ կանաչ, կոբալտ կանաչ, ցելադոնիտ կանաչ, կադմիում դեղին, քրոմ դեղին, վենետիկյան կարմիր, դեղին ու կարմիր օխրա, կապարի սպիտակ, ցինկ սպիտակ, կալցիումի կարբոնատ, նաև մետաղական կարբոքսիլատների և օքսալատների առկայություն, որոնք ներկանյութերի շերտերի քայքայման արդյունք են: Նմանատիպ հետազոտությունները նպաստում են Սարյանի նկարչական տեխնիկայի խորքային ընկալմանը և արժեքավոր են նրա ստեղծագործությունների պահպանման և վերականգնման գործում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բացահայտվել են ուժեղ երկրաշարժի ժամանակ անհամասեռ (բազմաշերտ) հիմնատակի, Երկրի մակերևույթի վրա առաջացող տեղափոխությունների և արագացումների մեծությունների կանխագուշակման խնդրի առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ անհամասեռ հիմնատակի դեպքում, համեմատած նրա համարժեք համասեռին, տեղի է ունենում արագացումների զգալի աճ՝ կախված անհամասեռության աստիճանից. շերտերի տարբեր գրունտների ամրությունների (կամ սահքի դեֆորմացիաների տարածման արագությունների v_s) և շերտերի հզորությունների մեծություններից: Անհամասեռ հիմնատակը համասեռով փոխարինելիս Երկրի մակերևույթի վրա 1.3÷1.6 անգամ մեծ արագացումներ են առաջանում: 18 երկշերտանի հիմնատակերի համար Երկրի մակերևույթի վրա ստացված (կանխագուշակված) արագացումների մեծությունների համադրությունը ցույց է տվել, որ այս երևույթը կապված է անհամասեռ հիմնատակի սեփական ֆունկցիաների և նրանց տատանման ձևերի ու հաճախականության սպեկտորների զգալի տարբերության հետ՝ համասեռ հիմնատակի նույն ֆունկցիաների հետ համեմատած (ղեկ.՝ ակ. Է.Խաչիյան):

Ապարանի և Ազատի ջրամբարների ֆիլտրացիոն ռիսկային գոտիների ճշգրիտ նույնականացման, դրանց բնույթի և ինտենսիվության գնահատման և նպատակային հակաֆիլտրացիոն լուծումների մշակման համար իրականացվել և շարունակվում են իրականացվել մանրամասն երկրաֆիզիկական ուսումնասիրություններ: Կիրառվել են էլեկտրական դիմադրությունների տոմոգրաֆիայի (ERT) մեթոդը, գեոռադարային երկչափ հանույթը (2D GPR), իրականացվել են սեյսմոհետախուզական աշխատանքներ մակերևութային սեյսմիկ ալիքների բազմակապուղի վերլուծության երկչափ (2D MASW) և սեյսմիկ բեկման տոմոգրաֆիայի երկչափ (2D SRT-UԲS) մեթոդների կիրառմամբ: Նախնական տվյալներով հնարավոր է եղել հայտնաբերել ֆիլտրացիոն ռիսկային գոտիները (ղեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նախագծվել և պատրաստվել է հորիզոնական ճոճանակային տվիչ, որն ապահովում է սեփական տատանումների 5 վրկ. (0,2 հց) պարբերություն (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

Նախագծվել և պատրաստվել է ցածր հաճախականության գեներատոր տատանողական հարթակների համար: Գեներատորը հավաքվել է ժամանակակից էլեկտրոնային էլեմենտներով, որը հնարավորություն է տալիս ապահովել բարձր հուսալիություն: Աշխատանքային տիրույթը բաժանվել է 52 բաժանարարի և ղեկավարվել առաջնային ցուցանակի վրա նշված բաժանմունքներով (ղեկ.՝ Մ.Միրանյան):

Կատարվել են չափաբերական աշխատանքներ ուղղաձիգ տատանողական հարթակի վրա: Կազմվել են աղյուսակներ չափումների ճշտությունը բարձրացնելու համար: Հարթակի վրա տեղակայված արագության տվիչը հնարավորություն ունի չափելու սեղանի տատանման ամպլիտուդը 0,08÷1,6 մմ աշխատանքային տիրույթում, 0,01 մ/վ արագության ժամանակ: Ըստ տվիչի ցուցմունքների և հաճախականության կապի՝ կազմվել են աղյուսակներ հետագա հաշվարկները հեշտացնելու նպատակով (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի հրատարակած աշխատությունները բացի գիտական և տեսական նշանակությունից, ունեն նաև զգալի կիրառական ու գործնական նշանակություն, կարող են հիմք հանդիսանալ պատմագիտական նոր հետազոտությունների համար, օգտագործվել այլ թեմաների վերամշակման ժամանակ, կիրառվել նաև «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հարակից երկրների պատմություն» և հարակից այլ դասագրքերի վերամշակման և դասավանդման ժամանակ: Աշխատություններում առկա փաստական հարուստ նյութը կարևոր է նաև պատմագիտության հակագիտական ու հորինված տեսակետները մերկացնելու համար:

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ստորագրվել է համատեղ համագործակցության պայմանագիր ՀՀ վարչապետի աշխատակազմի Հանրային կապերի կենտրոնի հետ, որի շրջանակում իրականացվել են համատեղ միջոցառումներ, պանելային քննարկումներ, մասնակցություն «Օրբելի ֆորում-2025» միջազգային համաժողովին, կառույցների ղեկավարների պարբերական հանդիպումները նպաստել են հանրապետական մակարդակով գիտահանրայացնող նախաձեռնությունների և տեղեկատվական քաղաքականության համակարգմանը:

Շարունակվել է համագործակցությունը Կովկասյան ինստիտուտի հետ. նրա փոխտնօրենը դարձել է ԱԻ խորհրդի անդամ և 2 հայցորդի գիտական ղեկավար: Մի շարք գիտաշխատողներ հանդես են եկել զեկույցներով Կովկասյան ինստիտուտի կազմակերպած տարածաշրջանային անվտանգությանը նվիրված գիտաժողովներում:

Ընդլայնվել է համագործակցությունը Հայաստանի մարզային բուհերի հետ. Շիրակի,Վանաձորի, Գորիսի պետհամալսարանների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ կնքվել են համագործակցության հուշագրեր, որոնք նպատակ ունեն ապահովել մարզերում

գիտության համաչափ զարգացումը: Մարզային բուհերին և գիտական կենտրոններին գիտական բազայի հզորացման նպատակով նվիրվել է շուրջ 500 գիտական գիրք:

Կնքվել են համագործակցության պայմանագրեր Վրաստանի Իլիա համալսարանի Գ.Ծերեթելիի անվ. արևելագիտության ինստիտուտի, Հունաստանի Պանդեոնի համալսարանի, Հնդկաստանի Observer Research Foundation-ի, Ռուսաստանի ԳԱ արևելագիտության և արևելյան ձեռագրերի ինստիտուտների հետ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ համատեղ գիտաժողովների, հետազոտական ծրագրերի, երիտասարդ գիտնականների փոխայցելությունների շուրջ: Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների ինստիտուտի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Պեկինում կազմակերպելու միջազգային գիտաժողով՝ նվիրված Հարավային Կովկասում տեղի ունեցող զարգացումներին:

Հին Արևելքի բաժնի աշխատակիցները մասնակցել են 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների «Համաշխարհային պատմության» հանրակրթական դասագրքերի պատրաստմանը: Այս կերպ ինստիտուտի գիտաշխատողները ոչ միայն իրականացնում են գիտահետազոտական աշխատանքներ, այլև ներգրավված են հանրակրթական և բուհական դասագրքերի ստեղծման գործընթացում:

Կարևորվել է երիտասարդ գիտնականների պատրաստման և վերապատրաստման հարցը. ատեստավորվել են 20 ասպիրանտ և հայցորդ, ընդունվել են 3 նոր ասպիրանտ և 8 հայցորդ, 5 հետազոտող հանձնել է որակավորման քննություններ, պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ինստիտուտն իրականացրել է նաև նյութատեխնիկական բարելավում. ձեռք են բերվել տեխնիկական սարքավորումներ (մոնիտորներ, համակարգիչներ, տպիչ, սքաներ, կահույք, գրասենյակային գույք), վերանորոգվել է ինստիտուտի 55մ^2 տարածք, թարմացվել են էլեկտրահաղորդման և ջրամատակարարման համակարգերը: Սարքավորումների վերազինման ծրագրի շրջանակում ձեռք են բերվել հզոր օդորակիչ ընթերցասրահի համար, պրոֆեսիոնալ սքաներ և համակարգիչ գրադարանի գրքերի թվայնացման նպատակով, խելացի տախտակ (smart board):

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Կիրառական մարդաբանության» խումբն իրականացրել է տարատեսակ հետազոտական և վերլուծական ծրագրեր՝ էթնիկ, կրոնական, լեզվական, հասարակական խմբերի ինքնությունների պահպանության, ձևափոխման, դրանց հասարակական, քաղաքական, մշակութային, գաղափարական պատճառների, ինչպես նաև անհատական, հասարակական, կոլեկտիվ հիշողության ձևավորման մարդաբանական օրինաչափությունների և քաղաքականության շուրջ: «Ոչ նյութական մշակության ժառանգության զարգացումները Հայաստանի Հանրապետության փոփոխվող հասարակությունում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան) ՀՀ ազգային արխիվում և դաշտային հետազոտությամբ նյութեր են հավաքել Արցախի փախստականների վերաբերյալ: Ավարտական փուլում են ԽՍՀՄ քաղաքական բռնությունների զոհերի մասին «Հիշատակի գիրք» 5 հատորների կազմումը և «Խորհրդային Ադրբեջանի հուշարձանային քաղաքականությունը» վերլուծություն-գիրքը: Աշխատանքներ են տարվում հիշողության քաղաքականության ընթացիկ փոփոխությունների, մասնավորապես նոր քաղաքականությունների, փաստաթղթերի և տեքստերի վերլուծության ուղղությամբ:

Կապեր են ստեղծվել ու մշտական համատեղ աշխատանքներ են կազմակերպվել ԱԱԽ, Բարձր տեխնոլոգիաների, Էկոնոմիկայի, ԿԳՄՍ նախարարությունների, Կառավարության առընթեր Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի հետ: Իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ կլոր սեղաններ, սեմինար-քննարկումներ, անհատական հանդիպումներ, որոնց նպատակը տվյալ գերատեսչություններին Սփյուռքի ստույգ համայնքներում ընթացող գործընթացների մասին տեղեկացնելը և համայնքների հետ աշխատանքների բարելավման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելն է (ղեկ.՝ պ.գ.դ. Ռ.Կարապետյան):

Արցախի մշակութային ժառանգությունը ներկայացնող կայքը (https://monumentwatch.org/) շարունակում է հետևել նրա արդի վիճակին, արձագանքում է ադրբեջանական վանդալիզմի դեպքերին: Կայքի բաժիններում հավելվել են ավելի քան 150 հոդված և քննություն, որոնք ըստ բաժինների բաշխվել են հետևյալ կերպ՝ հուշարձաններ 50, ահազանգեր 60, մանրամասներ 15, նորություններ 20, թանգարաններ և հավաքածուներ 5 (ղեկ.՝ պ.գ.դ. Հ.Պետրոսյան):

Քարտեզագրվել են մոտ մեկ տասնյակ հուշարձանների լանդշաֆտային գոտիներ: Ստեղծվում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի հնագիտական հուշարձանների աշխարհագրական տեղեկատվական համակարգը, հաջող աշխատանքների դեպքում աշխարհագրական տարածքը կմեծացվի: Չափագրվել են տասնյակից ավել պեղվող հուշարձաններ, նախկին չափագրված հնավայրերում լրացվել են նոր բացված մշակութային շերտեր:

Հուշարձանապահպանության կարևոր նախադեպ է Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տարածքում բացված, իր կառուցման ձևով եզակի երկաթեդարյան դամբարանի ամբողջական տեղափոխումը Կապանի երկրագիտական թանգարան, որը պայմանավորված է տեղում պահպանելու անհնարինությամբ: Չափագրվել և գծագրվել է 1000 և ավել միավոր հնագիտական գտածո (ղեկ.՝ Ա.Հախվերդյան):

Վերականգնվել, հետազոտության ու թանգարանացման համար նախապատրաստվել են 22 հուշարձաններից հայտնաբերված տարբեր դարաշրջանների գտածոներ՝ ամբողջացող 93 և մասնակի 97 անոթ, այդ թվում՝ 3 կարաս: Մաքրվել և վերականգնվել են ոսկրից 17 մանր իր, քարից 14, վանակատից 33 գործիք և միջուկ, բրոնզից 6 առարկա: Հաշվետու տարում Հայաստանի պատմության պետական թանգարան է հանձնվել Քարաշամբ հնավայրի՝ տարբեր տարիներին պեղված (80-ից ավել դամբարան) և վերականգնված ավելի քան 360 խեցեղեն անոթ, ինչպես նաև Մաստարա և Սիսիան հնագիտական համալիրներից հայտնաբերված և վերականգնված կարասներ, կճուճներ (ղեկ.՝ Լ.Մանուկյան):

Վեդի, Մասիս բլուր հուշարձանների պեղումներին վերապատրաստվել են 25 ուսանող արտերկրի տարբեր համալսարաններից:

Հնագիտական գտածոների ցուցադրությամբ Ինստիտուտը ներկայացել է Երևանում անցկացվող գինու փառատոնին, ԳԱԱ կազմակերպած «Գիտության շաբաթ» միջոցառումներին:

Ինստիտուտն ակտիվորեն մասնակցում է գիտության հանրայնացմանը նպաստող տարբեր միջոցառումների՝ բաց դասախոսություններ տարբեր հաստատություններում, «Եվրոպական հնագիտության օրեր», Հանրային ռադիոյի և Հանրային հեռուստատեսության հաղորդաշարեր, պատրաստում և խմբագրում է ՀՀ պատմամշակութային հուշարձանների (Տիրինկատարի, Գառնիի, Արենիի, Արտաշատի, Էրեբունիի և ՀՀ այլ հնավայրեր)՝ UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության նախնական և հիմնական ցանկերում ընդգրկելու դիմում-հայտեր:

Ինստիտուտը տարաբնույթ մասնագիտական կարծիքներ է տրամադրել ՀՀ կառավարությանը, ԿԳՄՍ նախարարությանը: ԿԳՄՍՆ հանձնարարականների, իրավաբանական անձանց դիմումներով դաշտային հետազոտություններով ու տեղազննությամբ 18 հնագիտական փորձաքննություն է իրականացվել ՀՀ տարբեր մարզերում տնտեսվարող սուբյեկտներին հատկացված հողամասերում: Հուշարձանների բացահայտման պարագայում փաստագրված տվյալները փոխանցվել են լիազոր մարմնին վերջիններիս պահպանությունը կազմակերպելու համար: ԿԳՄՍՆ նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերի մասնագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացվել 2 հայտ՝ ՀՀ Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող և կենսունակ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում ընդգրկելու համար («Ատամհատիկ»-ը և «Խաբ ու խազ»-ը) (հեղ.՝ Հ. Գալստյան):

Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվել են տարբեր թեմաներով սեմինարների շարքեր, որոնց մասնակցել են Հայաստանի այլ գիտական հաստատությունների և արտասահմանյան հրավիրյալ մասնագետներ:

Ինստիտուտի աշխատակիցները մասնագիտական կարծիքներ, գրախոսություններ են տրամադրել Հայաստանի և արտերկրի վարկանիշային ամսագրերում տպագրվող հոդվածների համար:

Ինստիտուտը հրատարակում է «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» պարբերականը:

Ինստիտուտի գրադարանային ֆոնդում առկա է 45832 միավոր գրականություն: 2025թ. ընթացքում Koha համացանցային էլեկտրոնային քարտարանում մուտքագրվել է 371 միավոր գիրք, ընդհանուր՝ 5606 միավոր:

Հաշվետու տարում արխիվը ստացել է մեծ քանակությամբ հնագիտական, ազգագրական և բանահյուսական նյութեր, այդ թվում՝ հեղինակային ամբողջական արխիվներ, 20-21-րդ դարերին վերաբերող տարբեր տարիների դաշտային հետազոտությունների և պեղումների հաշվետվություններ, փաստաթղթեր, գծագրեր, լուսանկարներ, նեգատիվներ, սլայդներ, ազգագրական և բանահյուսական բաժինների հավաքական նյութեր: Շարունակվել է նաև կատալոգի համալրման աշխատանքը:

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ.Ասոյան) հրապարակվել է «Նոր բառեր»-ի Թ պրակը, որում արձանագրված են բացատրական և նորաբանությունների բառարաններում չվկայված բառեր:

Հրատարակվել է «Ընդհանուր լեզվաբանություն. գործնական աշխատանքների ձեռնարկ»-ը, որը միտված է նպաստելու ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելուն, նրանց գործնական հմտությունների զարգացմանը: Ձեռնարկը կարող է օգտակար լինել ընդհանուր և հայ լեզվաբանությամբ հետաքրքրվողների համար:

Հրատարակվել է «Արդի հայերենի բառագիտության, քերականության և ոճագիտության հարցեր» աշխատանքը՝ նվիրված արդի հայերենի կանոնարկման խնդիրներին, ոճական առանձնահատկություններին:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Համբարձումյան) մշակվել և կազմակերպվել է «Ենթագիտակցությունից լեզվագիտակցություն և հաղորդակցում. եռափուլ լաբիրինթոս» գիտագործնական մոդելը, որը ներկայացվել է «Հոգեբանական վերնիսաժ. Expo-25»

միջոցառմանը: Մոդելը հնարավորություն է ընձեռել ստանալու բազմաբնույթ դիտարկումներ լեզվամտածողության, ներքին հաղորդակցական դինամիկայի և ընկալողական գործընթացների իրազեկման առնչությամբ:

Ինստիտուտի և ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գործակցությամբ հրատարակվել է «Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառությունը» գիրքը, որում ներկայացված են հեքիաթաթերապիայի վերաբերյալ հոգելեզվաբանական և ստեղծագործական հոգեբանության մոտեցումները, հեքիաթի միջոցով իրականացվող հոգեբանական աշխատանքի բնույթն ու առանցքային կողմերը:

Հրատարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2024» գիրքը, որը ներկայացնում է 2025թ. ինստիտուտի աշխատակիցների հրապարակած գիտական աշխատանքների մատենագիտական ցանկերը և հրապարակումների համառոտ բովանդակությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հրատարակվել է «Հայ գրականություն 12» ավագ դպրոցի 12-րդ դասարանի դպրոցական դասագիրքը, որը բաղկացած է թեմատիկ 2 բաժիններից՝ «Մարդ, բնություն, տեխնոլոգիա», «Ժամանակակից և սփյուռքահայ գրականություն»: Դասագրքում ընդգրկված նյութը վերաբերում է 20-րդ դարի 2-րդ կեսի և անկախության շրջանի հայ գրականությանը: Թեմատիկ բաժիններում ընդգրկված են հայ դասականների և ժամանակակից ու սփյուռքահայ գրողների լավագույն երկերը, հեղինակների կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը ներկայացնող նյութերը հասանելի են QR ծածկագրերով:

Հրատարակվել է «Գրականություն 9» հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրքը, որում ներկայացված են 5-րդ դարի հայ գրականությանը, Մ.Մաշտոցին և գրերի գյուտին, «Սասնա Ծռեր» էպոսին և հայրեններին նվիրված գլուխներ, Մ.Խորենացու, Փ.Բուզանդի, Կորյունի, Գր.Նարեկացու, Ն.Շնորհալու, Ֆրիկի, Սայաթ-Նովայի, Մ.Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի, Դ.Դեմիրճյանի կենսագրություններն ու մի քանի ստեղծագործություններ, որոնց հենքով ընդլայնվում են աշակերտների պատկերացումներն ու գրականագիտական գիտելիքները:

Մ.ՔՈԹԱՆՋԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Շրջանաձև տնտեսության մոդելի հայեցակարգի ներդրումը որպես ՀՀ պարենային անվտանգության բարձրացման անհարժեշտություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) առանձնացվել է հետևյալ առաջնայնությունը՝ օրգանական թափոնների մեծացող մասշտաբները հանգեցնում են սոցիալ–տնտեսական և բնապահպանական լուրջ խնդիրների.

- Եթե ընդունենք, որ ՀՀ–ում 2024թ. կոշտ կենցաղային թափոնների շուրջ 55-60%–ը կազմել են օրգանական թափոնները (350.3-380.1 հազ. տ), ապա չկառավարվող աղբավայրերի դեպքում մեթանի արտանետումները կկազմեն 11,9-12,9 հազ. տ, որը համարժեք է 321.3-374.1Գգ CO_2 (մեթանի գլոբալ տաքացման ներուժը 100 տարվա կտրվածքով 27,0-29,8 անգամ բարձր է ածխաթթու գազից): Թափոնների կառավարման դեպքում (կոմպոստավորում, անաէրոբ քայքայում) կարելի է նվազեցնել արտանետումները:

- Սննդի կորուստներն ու վատնումները ներառում են նաև ջրի, հողի, պարարտանյութերի, էներգիայի, աշխատանքային ռեսուրսների ծախս: Օրինակ՝ 2023թ. ցորենի ընդհանուր կորուստները կազմել են 45,6 հազ.տոննա, որը միջին փաստացի բերքատվության (19,6g/հա) պայմաններում կարելի էր ստանալ 23,3 հազ.հա-ից: Հացահատիկ մշակող շրջաններում 1հա ցորենի ոռոգման համար պահանջվում է 2500-2700 խոր.մ ջուր: Այսինքն՝ 2023թ. ցորենի 45,6 հազ.տոննա կորուստը հանգեցրել է 58250-62910 հազ. խոր.մ ջրի կորստի:

Որքան էլ տարբեր են աշխարհի երկրները, բոլորո էլ կանգնած են շրջակա միջավայրի պահպանության խնդրի առաջ, ըստ իրենց տնտեսական մակարդակի՝ ունեն թափոնների կառուցվածքի նմանություն: Այս ընդհանրությունը և առանձնահատկությունը հնարավորություն կտա արդեն փորձարկված և տնտեսապես հիմնավորված լուծումները կիրառել նաև մյուս երկրներում: Շրջանաձև տնտեսության արտասահմանյան հարուստ և հիմնավորված փորձի կիրառությունը մեր հանրապետությունում հնարավորություն կտա կրճատել արագ աճող թափոնների ավազանները, ընկերություններին ապահովել լրացուցիչ շահույթով և էական նշանակություն ունենալ համայնքի սոցիալական զարգացման գործում:

«Գիտության զարգացման ռազմավարությունը որպես ՀՀ տնտեսության կայուն զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն նախապայման» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ Ե.Հակոբյան) առանձնացվել է, որ գիտության ֆինանսավորման արդյունավետության գնահատման համար միջազգային պրակտիկայում լայնորեն ընդունված ցուցանիշ է GERD ցուցանիշը (Gross domestic expenditure on R&D), որն արտահայտում է տվյալ երկրի տարեկան R&D ծախսերի հարաբերակցությունը երկրի համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ) տոկոսային արտահայտությամբ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բարձր GERD ցուցանիշները (4-5% և ավելի), համակցված բիզնես սեկտորի ակտիվ մասնակցության հետ, հանգեցնում են բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման և տնտեսական բարգավաճման, իսկ ՀՀ-ում մասնավոր հատվածի ցածր ներգրավվածությունը R&D գործունեության մեջ խոչընդոտում է նորարարությունների առևտրայնացմանն ու արդյունաբերության արդիականացմանը: Գիտությունը պետք է սերտորեն կապվի տնտեսության հետ, աշխատեն համատեղ գիտական հետազոտությունների արդյունքներն արագորեն կիրառելու և նորարարություններ պտղաբերելու համար, ինչը երիտասարդների համար ոլորտը կդարձնի գրավիչ:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի տնօրենն ու խմբի ղեկավարներից մեկը որպես փորձագետներ շարունակել են աշխատանքները Եվրոպայի Խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության կոնվենցիայի շրջանակի խորհրդակցական կոմիտեի և ՄԱԿ-ի Գյուղացիների և գյուղական վայրերում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության խմբի կազմում:

Գիտահետազոտական խմբերի որոշ գիտաշխատողներ պետության իրավաքաղաքական կյանքի կազմակերպման վերաբերյալ վերլուծություններով և առաջարկներով պարբերաբար հանդես են եկել հանրային փորձագիտական-վերլուծական դաշտում:

Ինստիտուտի և նրա հիմնարար գիտական ուղղությունների հանրահռչակման նպատակով տեսանկարահանվել է գիտական բանախոսությունների նոր շարք podcast-ի ձևաչափով, որն ինստիտուտի ֆեյսբուքյան էջում և յություբյան ալիքով ունեցել է լայն տարածում:

«Ինդոնեզիայի արտաքին քաղաքականության համայնք» (Foreign Policy Community of Indonesia) կազմակերպության հետ ստորագրված հուշագրի շրջանակում որպես համակազմակերպիչ ինստիտուտը մասնակցել է «Ապագան, որի կարիքն ունենք» խորագրով *Global Town Hall 2025* միջազգային ֆորումին:

"The POLITNOMOS. Journal of Political and Legal Studies" անգլալեզու գիտական հանդեսը Google Scholar, Semantic Scholar, Crossref, Scispace, Yubetsu Shibata միջազգային գիտաչափական շտեմարաններում ներառվելուց հետո ներկայացվել է Scopus միջազգային գիտաչափական շտեմարանում ընդգրկվելու համար, անցել է «վալիդացման» փուլը:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) հայ դասականների հոգևոր ժառանգության հրատարակության շրջանակում հրատարակվել է Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի 2-րդ հրատարակության 2-րդ հատորը, որն ընդգրկում է Կոմիտասի խմբերգերի մի մասը:

Հրատարակվել են հանրակրթական դպրոցների 4-րդ և 11-րդ դասարանների համար «Երաժշտություն» առարկայի դասագրքերը (ղեկ.՝ արվ.թ. Տ.Շախկուլյան):

Հրատարակվել է գիտահանրամատչելի «Ռոսլին» արվեստի պատկերազարդ հանդեսի 4 համար, հոդվածների հեղինակների մեծ մասն ինստիտուտի մասնագետներն են:

Արվեստագիտական արդյունքի հանրայնացմանն են միտված Հանրային ռադիոյում ՀԱՍԵ Արարատյան Հայրապետական թեմի «Ինքնություն» հաղորդաշարի հաղորդումները, որոնցում հանդես են եկել ինստիտուտի մասնագետները:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Իրականացվել են ԳԿՄԿ լսարանային համակարգիչների ծրագրային փաթեթների, հակավիրուսային ծրագրերի թարմացումներ և ստուգումներ: Կազմակերպվել է առցանց ձևաչափով ընդունելության դիմումների ընդունման էլեկտրոնային միջավայրի գործարկում: Թարմացվել են ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակին կից տեսակոնֆերանսները, հեռավար ուսուցման հարթակը, վերաբացվել է հեռավար դահլիճը՝ վերազինված անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

ԳԿՄԿ վարչակազմը և պրոֆեսորադասախոսական կազմը գործուղումների են մեկնել Իսպանիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Իտալիա, Խորվաթիա, Բելգիա, Գերմանիա, Մոնտենեգրո, Նիդերլանդներ, Վրաստան, ԱՄՆ, ԱՄԷ, Սերբիա, մասնակցել են հայաստանյան և արտերկրի վերապատրաստման ծրագրերի, համաժողովների, երիտասարդական ֆորումների, գիտաժողովների: Կենտրոնը էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացրել է ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի փոխանակման ծրագրեր եվրոպական 10 համալսարանների հետ:

ԳԿՄԿ-ում ընթացիկ տարում դասախոսություններ են կարդացել Բուլղարիայի Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տառնովոյի համալսարանի, Կրակովի ազգային կրթական հանձնաժողովի համալսարանի, Լիլի համալսարանի, ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի, Վաշինգտոնի համալսարանի դասախոսները:

ԳԿՄԿ ուսանողներն էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում ուսումնառել են Բուլղարիայի Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարանում, Ֆրանսիայի Լիլի համալսարանում, Իտալիայի Միջազգային Տելեմատիկ, Տուշայի, Բոլոնիայի և Նեապոլի Ֆեդերիկո II–ի անվան համալսարաններում:

Վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակմանն ու ներդրմանը համահունչ՝ Կենտրոնի բոլոր ամբիոնները վերանայել և բարելավել են համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերը:

Շարունակելով նախորդ տարիների փորձը և հիմնվելով համապատասխան կանոնակարգի վրա՝ իրականացվել են շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի, ԳԿՄԿ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի, դասավանդման որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված հետազոտություններ, բոլոր ամբիոններում՝ ներքին մոնիթորինգային աշխատանքներ: Ներքին աուդիտ է անցել ԳԿՄԿ մասնագիտական կրթական ծրագրերի 95%-ը:

Աշխատանքի որակի բարձրացմանը նվիրված դասընթացներ, սեմինարներ, վարպետաց դասեր են կազմակերպվել ԳԿՄԿ անձնակազմի և ուսանողների համար: Բաց դասախոսությունների շարք է իրականացվել թիրախային գործատուների ներկայացուցիչների և ոլորտում հաջողած մասնագետների հետ: Աշխատանքային կողմնորոշման այցելություններ են կազմակերպվել ուսանողների և շրջանավարտների համար պոտենցիալ աշխատավայր հանդիսացող կազմակերպություններում:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի շրջանակում իրականացվել է 13254 դատական փորձաքննություն (ընդհանուր 783189.0 հազար ՀՀ դրամ արժեքով):

Քրեադատավարական օրենսդրության շրջանակում փորձաքննություններն իրականացվել են 28 փորձագիտական տեսակներով՝ շուրջ 114 փորձագիտական ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով:

Դատարանների կողմից կայացված որոշումների հիման վրա իրականացվել են 149 (հետազոտված օբյեկտների քանակը 414), քաղաքացիական դատավարության շրջանակում 41 (հետազոտված օբյեկտների քանակը 82), վարչական դատավարության շրջանակում 2, սնանկության դատարանի որոշումների հիման վրա 83 (հետազոտված օբյեկտների քանակը 610), քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա 1120 (հետազոտված օբյեկտների քանակը 1262) փորձաքննություններ:

Բոլոր փորձաքննություններն իրականացվել են արդի գիտամեթոդական մոտեցումների և հետազոտությունների ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխանող մեթոդների կիրառմամբ, հիմնավորված և պատճառաբանված արդյունքների ապահովումով:

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Բաց գիտության ազգային ամպային ենթակառուցվածք

Համակարգող՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների
ինստիտուտ

Ծրագիրը նպատակաուղղված է բնագիտական (հիդրոօդերևութաբանության, բնապահպանության, սեյսմաբանության, կենսաբանության և բժշկական գենետիկայի) ոլորտներում առկա հիմնարար և կիրառական խնդիրների լուծմանը, ամպային և հաշվողական ենթակառուցվածքի զարգացմանը՝ օգտագործելով ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի տեխնիկական հնարավորությունները: Ծրագրին մասնակցել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների և Շրջակա միջավայրի նախարարության առաջատար մասնագետները: Կատարվել են հետազոտություններ հետևյալ բնագիտական խնդիրների լուծման համար՝

Օդերևութաբանություն: Հայաստանի տարածքում իրականացվել է երաշտային պայմանների ինտենսիվության համապարփակ գնահատում և վերլուծություն՝ հաշվի առնելով վերջին տասնամյակների ընթացքում արձանագրված կլիմայի տաքացման միտումները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային հիդրոմետեորոլոգիական պայմանների վրա, վերջին տասնամյակներում էքստրեմալ կլիմայական ինդեքսների կրկնելիության և դրանց փոփոխության միտումների և ապագա փոփոխությունների գնահատում կլիմայական մոդելներով: Իրականացվել է Հայաստանի տարածքի համար երաշտային պայմանների գնահատում՝ օգտագործելով արբանյակային մուլտիսպեկտրալ նկարներ և տվյալներ (CMORPH և IMERG):

Բնապահպանություն: Կատարվել են մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի ուսումնասիրություններ ժամանակակից մոդելների օգնությամբ:

Սեյսմաբանություն: Կատարվել է երկրադինամիկական մոդելավորում, իրականացվել են ակտիվ տեկտոնական խզվածքների ակտիվացման կանխահաշվարկային համակարգի ստեղծման և շենքերի խոցելիության աստիճանի որոշման գործիքային դիտարկումների էքսպրես համակարգի մշակման աշխատանքներ:

Կենսաբանություն: Իրականացվել է նախկինում կառուցված լիպիդային երկշերտ/տրանսմեմբրանային ինտեգրին համալիր համակարգի մոդելավորման շարունակությունը՝ արդեն ներդրված օբտուստատին սպիտակուցով և ավելի լայն ժամանակային միջակայքում: Մոդելավորումն իրականացնելու նպատակով օգտագործվել են «Ազնավուր» գերհամակարգչի բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսները, ինչը հնարավորություն է տվել կատարել երկարատև և մեծ հաշվարկային բարդություն ունեցող հաշվարկներ:

Բժշկական գենետիկա: Իրականացվել են բաց հասանելի տվյալների, մոդելների և հրապարակումների հավաքագրման, հետագա մշակման, որակի և համապատասխանության ստուգման ու ArmLifeBank հարթակ ներմուծման աշխատանքներ կառուցվածքային, մատչելի և որոնելի տվյալների շտեմարան ապահովելու համար:

Ենթակառուցվածքի օպտիմալ տրամադրման և նոր ծառայությունների մշակման համար իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ամպային և HPC միջավայրերի համար մշակվել են ժամանակակից թեթև վիրտուալացման գործիքներ, որոնք հիմնված են Apptainer/Singularity գործիքների վրա: «Ազնավուր» գերհամակարգչի վրա կատարվել է թեթևաքաշ վիրտուալացման տեխնոլոգիաների համեմատական վերլուծություն՝ ապացուցելով դրանց բարձր արդյունավետությունը, անվտանգությունն ու դյուրատարությունը:
- Ներդրվել են մասնագիտացված հաշվողական միջավայրեր մեքենայական ուսուցման առաջադրանքների (Transformer, LSTM, Mamba), Python-ի և Julia-ի զուգահեռ հաշվարկների, Dask-ի միջոցով հեռակառավարման տվյալների մշակման համար:
- Հետազոտվել է RDMA տեխնոլոգիայի վրա հիմնված հիշողության պուլինգի ազդեցությունը հաշվարկային միջավայրի աշխատանքի վրա, մասնավորապես գնահատվել է դրա դերը զուգահեռ հաշվարկների արագացման և հաշվարկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման համատեքստում:
- Մշակվել է ամպային և բարձր արտադրողականությամբ պահեստարանների ինտեգրման մեխանիզմ՝ մասշտաբային, արդյունավետ և անվտանգ ինտեգրված ամպ-HPC հարթակ մեծ տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման ձևավորման համար:

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքները հրապարակվել են 15 հոդվածում, ներկայացվել աշխատանքային գիտաժողովում, որին մասնակցել է համապատասխան ոլորտների ավելի քան 40 մասնագետ:

ՀՀ-ում միկրոսննդանյութերի ընդունման գնահատում և հանրային իրազեկման համար անհրաժեշտ գիտամեթոդական ապահովում

Համակարգող՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն

Ծրագրի նպատակն է գնահատել միկրոսննդանյութերի ընդունման ներկա վիճակը Հայաստանում և ապահովել գիտամեթոդական հենք՝ բնակչության սնուցումը բարելավելու ուղղությամբ արդյունավետ ռազմավարությունների մշակման համար: Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները համաձայնեցված են Էկոնոմիկայի նախարարության հետ, ուղղված են պետության կարիքների սպասարկմանը, իրականացված աշխատանքները՝ միկրոսննդանյութերի գնահատման միջազգային առաջավոր փորձի և սննդակարգային ռեֆերենս արժեքների ուսումնասիրմանը, սննդի սպառման արդյունքում բնակչության կողմից երկաթի ընդունման գնահատմանը: Ընդհանուր սննդակարգային ուսումնասիրության մեթոդի կիրառմամբ ՀՀ-ում սպառվող մթերքի ավելի քան 374 ենթանմուշ ենթարկվել է նախնական մշակման (բնակչության սննդային սովորույթների համաձայն), 138 մթերքի մեջ հետազոտվել է երկաթի պարունակությունը Thermo Scientific iCAP 7400 ICP-OES սարքի միջոցով: Ստացված արդյունքների և Էկոկենտրոնում ստեղծված սննդամթերքի անհատական սպառման տվյալների հենքերի գործածությամբ գնահատվել են երկաթի ընդունման մակարդակները: Ծրագրի արդյունքները նպաստում են «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության 2022-2026թթ. գործողությունների ծրագրում» ներառված «Սննդամթերքում միկրոտարրերի պարունակության գնահատում» միջոցառման իրականացմանը:

Ռադիացիոն-կայուն և լազերային լոկացիայից պաշտպանող ապակեկերպ ու կոմպոզիտային նյութերի մշակում

Համակարգող՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան
Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ

Թեման կատարվել է ԸԱՔԻ-ում Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) բնապահպանական մոնիթորինգի լաբորատորիայի հետ, նպատակն է ուսումնասիրել և մշակել բարելավված հատկություններով ռադիացիոն-կայուն և լազերային լոկացիայից պաշտպանող ապակեկերպ ու կոմպոզիտային նոր նյութեր:

Շարունակվել են հիմնական ապակեգոյացնող օքսիդների՝ B_2O_3 և SiO_2 հիմքով $ZnO/CdO/PbO-B_2O_3/Bi_2O_3-Al_2O_3-SiO_2$, $CaO/SrO/BaO/-B_2O_3/Bi_2O_3-Al_2O_3-SiO_2$ համակարգերի ապակեգոյացման տիրույթների, բյուրեղացման նկատմամբ կայուն ապակիների միջակայքերի, բյուրեղային ֆազերի բաղադրության և դրանց բյուրեղացման դաշտերի բացահայտման ուսումնասիրությունները, սինթեզված ապակիների կայունության հետազոտությունների արդյունքները (γ) գամմա և արագընթաց նեյտրոնների ճառագայթների ազդեցության նկատմամբ: Մշակվել են բարելավված հատկություններով ռադիացիոն-կայուն և ճառագայթապաշտպանիչ ապակեկերպ, ապակեբյուրեղային ու կոմպոզիտային նոր նյութեր խտության բարձր արժեքներով՝ 4.8- 6,2 գ/սմ^3 : Կատարվել են մշակված նյութերի γ-0,5-1,25 ՄէՎ և արագընթաց նետրոնների 15-50 ՄէՎ ճառագայթման և կլանման հետազոտություններ ԱԷԿ բնապահպանական մոնիթորինգի լաբորատորիայում: Ճառագայթման ինտենսիվության գծային նվազման գործակցի տվյալներով սինթեզված նյութերն առանձնանում են գամմա ճառագայթների թուլացման մեծ ունակությամբ (որպես ճառագայթման աղբյուրներ կիրառվել են ^{137}Cs, էներգիան 661,7 ԿէՎ և ^{60}Co - էներգիան 661,7 1173 и 1333 ԿէՎ): Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 661.7, 1173 և 1333 կՎ էներգիաների դեպքում նմուշներն ունեն բարձր μ գործակից: Նկատվել է նաև μ գործակցի նվազում ֆոտոնների էներգիայի ավելացման հետ մեկտեղ:

Իրականացվել են մշակված նյութերի կողմից արագընթաց նեյտրոնների ճառագայթների կլանման հետազոտություններ: Ներկայացված նմուշների վրա ճառագայթման ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով դրանք տեղադրվել են արագ նեյտրոնային աղբյուրներով տարաներում և 32 օր ճառագայթվել: Պարզվել է, որ մշակված նյութերը կայուն են արագընթաց նեյտրոնների ճառագայթման նկատմամբ նշված ժամանակահատվածում: Նեյտրոնների ճառագայթման հոսքի ինտենսիվության նվազումը հաշվարկվել է տարրերի միջուկների էֆեկտիվ կտրվածքի գումարային արժեքով:

Հայաստանի տարածքի 1:200000 մասշտաբի նոր երկրաբանական քարտեզի կազմում

Համակարգող՝ ե.գ.դ. Խ. Մելիքսեթյան
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

1:200000 մասշտաբի նոր երկրաբանական քարտեզի կազմման նպատակով ստեղծվել է հրաբխային և ինտրուզիվ ապարների հասակային տվյալների միասնական տվյալների բազա՝ մշակված համապատասխան ձևաչափով: Տվյալների բազան ներառում է ինչպես գրական աղբյուրներից հավաքագրված, այնպես էլ վերջին տարիներին իրականացված ռադիոմետրիկ թվագրման նոր տվյալներ, որոնք ստացվել են Ar-Ar, K-Ar, U-Pb իզոտոպային

մեթոդների կիրառմամբ: Նշված տվյալների համակարգումն ու փոխադարձ համադրումը հնարավորություն են տվել ճշգրտել մագմատիկ կոմպլեքսների տարիքային հարաբերությունները, վերանայել առանձին հրաբխային և ինտրուզիվ միավորների ստրատիգրաֆիական դիրքը և դրանց տարածական կապերը: Ստացված տվյալների բազայի հիման վրա կազմվել է նորացված երկրաժամանակագրական սանդղակ, որը 1:200000 մասշտաբի երկրաբանական քարտեզագրման ժամանակագրական հիմքն է, ապահովում է տարածաշրջանի մագմատիզմի զարգացման փուլերի առավել հստակ և գիտականորեն հիմնավորված ներկայացումը:

ԱՏՀ համակարգում իրականացվել են երկրաբանական տարբեր մասշտաբների 173 քարտեզների (մասնավորապես 1:200000, 1:100000, 1:50000) գեոկապակցման աշխատանքներ (Georeferencing) և բերվել միասնական կոորդինատային համակարգի: Միաժամանակ ԱՏՀ-ում ստեղծվել են ՀՀ վարչական սահմանների, բնակավայրերի, ճանապարհների, ջրային օբյեկտների, լեռնագագաթների շերտեր, որոնք հիմք են հանդիսանալու նոր քարտեզի կազմման աշխատանքների համար:

Ծրագրի շրջանակում իրականացվել են դաշտային աշխատանքներ լավային հոսքերի սահմանների, հրաբխային և ինտրուզիվ մարմինների տեղադրվածության ճշգրտման և նմուշարկման համար: Կատարվել են պետրոգրաֆիական և քիմիական անալիտիկ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հստակեցվել են ապարների կազմերն ու անվանակոչումները:

Միաժամանակ Տավուշի մարզում ուսումնասիրվել են միջին Յուրայի նստվածքային հաջորդականությունները և դրանցում պահպանված բրածոների ղեկավարող խմբերը, որոնք էական նշանակություն ունեն հասակագրման ճշգրտումների համար:

Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները

Համակարգող՝ պ.գ.դ. Ռ.Կարապետյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի հետազոտական խումբն իրականացրել է բազմուղղված աշխատանքներ՝ հայագիտական կենտրոնների և սփյուռքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների հետ կապերի հաստատում, սեմինար-քննարկումների կազմակերպում հայաստանյան բուհերի և արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ, դաշտային հետազոտությունների իրականացում, համագործակցություն ՀՀ տարբեր գերատեսչությունների հետ, ինչպես նաև վերլուծական աշխատանքներ և հրապարակումներ: Թիմը կազմակերպել է սեմինարներ՝ նվիրված հայկական սփյուռքի հիմնախնդիրներին՝ «Սփյուռքի ներուժի գնահատման խնդիրներն ու ներառման ուղիները», «Հայագիտության արդի հիմնահարցերը», «Նոր հայկական համայնքների ուսումնասիրության մեթոդաբանություն», «Սփյուռքի ուսումնասիրության մեթոդաբանական խնդիրները»: Կազմակերպվել է նաև 5 միջազգային առցանց սեմինար: Տարվա ընթացքում թարմացվել են նախկինում հավաքագրված դաշտային տվյալների շտեմարանները, իրականացվել է փորձագիտական և խորքային հարցազրույցների նյութերի համակարգում, համայնքային կազմակերպությունների գործունեությանը վերաբերող տվյալների քանակական և որակական մշակում: Ստեղծվել են առանձին համայնքների և ընդհանուր սփյուռքի վերաբերյալ տվյալների բազաներ, հստակեցվել են հետազոտական հարցադրումները:

Իրականացվել են Արգենտինայի հայերի ուսումնասիրության նախապատրաստական և դաշտային աշխատանքներ, ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ ՀՀ դեսպանության, տեղական գիտական կենտրոնների, Արգենտինայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ավանդական մշակութային ժառանգության դրսևորումների կիրառումը քաղաքականության մեջ. հնարավորություններ և առաջարկներ

Համակարգող՝ պ.գ.թ. Հ.Խառատյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Աշխատանքները տարվել են 2 ուղղությամբ՝ դաշտային հետազոտական և առաջիկա տարում ընտրված տոների մասին հրատարակվելիք ուղեցույցների բովանդակության մշակման:

Վերլուծվել են վերջին 5 տարիների՝ բոլոր մարզերի և 12 խոշորացված համայնքների մշակութային ծրագրերը, ավարտվում է Խորհրդային շրջանի Հայաստանի տոնահանդեսների մասին տեղեկատվական տվյալների վերլուծությունը: Դաշտային նյութերի և տեղեկատվական աղբյուրների հիման վրա վերլուծվել են վերջին 35 տարիներին տոնահանդեսների հետ կատարված փոփոխությունների շուրջ հավաքված նոր նյութերը, փոփոխությունների պատճառների օրինաչափությունները, ՀՀ-ում տոնահանդեսների կազմակերպման փորձերի վերլուծությունը, այդ թվում՝ տոնահանդեսների կազմակերպիչների խզվածությունը տոնահանդեսներին փաստացի բացակայող կամ հանդիսատեսի կարգավիճակով առկա բնակչության հետ, կազմակերպիչների միջև միմյանց հետ կապերի փաստացի բացակայությունը, որի հետևանքով առաջացել է տոնահանդեսների բովանդակային և կատարողական տրոհվածությունը, տոնահանդեսների ավանդական տարածքների կորուստը, որի հետևանքով նոր տարածքին հարմարվելու պատճառով տեղի ունեցող դիպվածային մշտական փոփոխությունները (այդ թվում՝ ուտեստի, զվարճանքի ձևերի), տոնահանդեսի նոր տարածքների առաջացումներն ու կազմակերպման դերակատարները, կայացած տոնահանդեսի նկատմամբ խիստ վարչական վերահսկողության պարագայում (խորհրդային տոների և ընթացիկ «Վերջին զանգ» տոնի օրինակով) տոնահանդեսի կաղապարումը, արարչագործական բաղադրիչի կորուստը, հասարակության կողմից տոների և հիշատակի օրերի մասին ՀՀ օրենքի տոնացանկի իմացությունը, իր մշակութային և բովանդակային «դեմքը փնտրող» տոնահանդեսի վրա շուկայի «թելադրանքը», շուկայի վրա տոնահանդեսի բովանդակային ազդեցության բացակայությունը, տարածքային կառավարման պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների «տոնահանդեսային մշակույթի» և դրա հետ կապված իրենց անելիքների չիմացությունը, համընդհանուր, ամբողջ հասարակության համար հուզականություն ունեցող տոնահանդեսների նվազումը և աղքատիկացումը, նորամուտ տոների տոնահանդեսների մի շարք բաղադրիչների չկայացումը (ուտեստ, հագուստ, խաղ): Արդյունքում շարադրվել են՝ «Տոնը և տոնահանդեսը որպես հասարակական կյանքը կարգավորելու և ինքնության/ների/ի ձևավորման միջոց օգտագործելու քաղաքական ծրագիր» (վերլուծվում է ԽՍՀՄ-ի օրինակով), «Տոնը որպես անկախացած Հայաստանի հասարակության և հայ ժողովրդի ինքնության արտահայտման միջոց» (Նոր տարվա օրինակով), «Տոնը օրենքում» (ԽՍՀՄ և անկախացած ՀՀ օրինակով), «Անկախության տոնը և տոնահանդեսը ՀՀ-ում», «Գրքի տոնը» ՀՀ-ում:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Աղալովյան
Ակադեմիկոս-քարտուղարի օգնական՝ Լ.Մարտիրոսյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 8 ակադեմիկոս, 6 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ, 5 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել Լ.Աղալովյանի «Բաժանմունքի 2024թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Լսվել են ֆ.-մ.գ.դ. Ա.Ջրբաշյանի (Մաթեմատիկայի ինստիտուտ), ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյանի (Մեխանիկայի ինստիտուտ), ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյանի (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ) գիտական զեկուցումները:

Բաժանմունքն անցկացրել է բյուրոյի 24 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2025թ. աշխատանքային պլանը, 2025-26 ուստարվա ասպիրանտական տեղերի քանակն ու ըստ ինստիտուտների բաշխվածությունը, ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ասպիրանտների գիտական ղեկավարները և գիտական թեմաները, 2026-27 ուստարվա ասպիրանտուրայի հայտերը, 2025թ. համար ինստիտուտներին տրված բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային ծրագրերի, ինստիտուտներին անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման համար ֆինանսավորում հատկացնելու և գիտական գործուղումների հայտերը և հաշվետվությունները, Մեխանիկայի ինստիտուտի փոխտնօրենի և գիտական քարտուղարի թեկնածությունները, Մաթեմատիկայի ինստիտուտում տարվող գիտական և գիտակազմակերպական գործունեության հաշվետվությունը, գիտական խորհրդի նոր կազմը:

Քննարկվել և հավանություն է տրվել Մաթեմատիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյանի թեկնածությունը: Նա ընտրվել է ինստիտուտի տնօրեն:

Քննարկվել են 2025թ. ինստիտուտների կարևորագույն արդյունքները, գիտակազմակերպական բնույթի այլ հարցեր:

Ըստ բաժանմունքի մասնագիտությունների՝ հրատարակվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» (6 համար), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար), «ՀՀ ԳԱԱ և ՀԱՃՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա 4 համար), «Համակարգչային գիտության մաթեմատիկական խնդիրները» (2 համար) հանդեսները, «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողները հրատարակել են 2 մենագրություն (արտասահմանում), հրապարակել են 230 հոդված՝ 158-ը գրախոսվող ամսագրերում (117-ը Scopus/Wos), 72 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (15-ն արտասահմանյան), 47 թեզիս (31-ն արտասահմանում):

Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են 5 միջազգային և 2 հանրապետական գիտաժողովներ:

Միջազգային ֆինանսավորմամբ իրականացվել է 3 դրամաշնորհային ծրագիր (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ):

Բաժանմունքի ինստիտուտների գիտական մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 5 թեկնածուական ատենախոսություն:

2025թ. դեկտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել և հաստատվել են 2025թ. գործունեության մասին հաշվետվությունները: Ժողովներին մասնակցել է և ելույթ ունեցել բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Դ.Դավիդովա
Էլեկտրոնային փոստ՝ office@instmath.sci.am
Կայքէջ՝ http://math.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Լայն դասի մաքսիմալ կորիզային օպերատորների համար ստացվել է սահմանափակություն BMO և BLO տարածություններում: Ընդհանրացվել է Բենետ-Դե Վոր-Շարփլիի հայտնի թեորեմը Հարդի-Լիթլվուդի մաքսիմալ ֆունկցիայի BMO սահմանափակության մասին: Ապացուցվել է նաև BMO և BMOα տարածությունների համարժեքությունը, երբ $1/2 < \alpha < 1$: Բոլոր խնդիրները դիտարկվել են ընդհանուր գնդային բազիսներով օժտված չափելի տարածություններում: Այլ արդյունք ստացվել է BMO տարածություններում սահմանափակության խնդրի վերաբերյալ նաև սահմանափակ տատանումով օպերատորների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյան):

Օգտագործելով կոմպլեքս-արժեք ֆունկցիայի ինդեքսը դետերմինացված թվաբանական գործողությունների միջոցով հաշվելու մեթոդը՝ նկարագրվել է միապատիկ զրոներով բազմանդամների արմատների լոկալիզացիայի ալգորիթմը: Գտնվել է նաև նոր մոտեցում, որը թույլ է տալիս մատրիցային Ռիկատիի հավասարման համար ստանալ գլոբալ լուծելիության չափանիշ: Դրանով ընդհանրացվել է Ֆրիլինգի արդյունքը: Ուսումնասիրվել են այն պայմանները, որոնց դեպքում քվատերնիոնային Ռիկատիի հավասարումն ունի պարբերական լուծումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Գրիգորյան):

Ապացուցվել են թեորեմներ Միտտագ-Լեֆֆլերի ֆունկցիաներով կազմված բիօրթոգոնալ համակարգերով բազիսների ու ինտերպոլյացիայի մասին Մ.Ջրբաշյանի ներմուծած ամբողջ ֆունկցիաների A^2_ω տարածություններում: Նոր արդյունք է ստացվել կիսահարթության A^p_ω -ից Հարդիի H^p տարածություն պրոեկտման մասին (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ջրբաշյան):

Ստացվել են արգումենտի սկզբունքի որոշ համանմաններ իրական անալիզում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Բարսեղյան):

Մեկ կոմպլեքս փոփոխականի աստիճանային շարքի անալիտիկ շարունակության մասին դեպի սեկտորն ապացուցվել է Լը Ռուա-Լինդելյոֆի թեորեմի ընդհանրացումը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մկրտչյան):

Փորձ է արվել ստանալ Կոշիի տիպի ինտեգրալի տարբեր կարգի ածանցյալների բանաձևային կապերը որոշ անսահմանափակ բազմաչափ կոմպլեքս տիրույթներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Դիտարկվել է $\bar{\partial} f = u$ հավասարումը, երբ f -ը որոնվում է C^1 դասում, իսկ u-ն պատկանում է կշռային L^p $(1 \leq p < \infty)$ տարածություններին C^n կոմպլեքս տարածության որոշ Զիգելյան տիրույթում: Ապացուցվել է, որ հավասարման լուծումների համար կառուցված օպերատորների ընտանիքը նույնն է, ինչ ավելի պարզ դեպքում, երբ u-ի կրիչը կոմպակտ է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Կարապետյան):

Հրապարակվել է պատմական ակնարկ, որտեղ համառոտ ներկայացվում է Մարկովի անհավասարությունը բազմանդամների ածանցյալների համար, կատարվել են որոշ ուղղումներ առկա գրականության մեջ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վաղարշակյան):

Հետազոտելով անկյան մեջ անալիտիկ, եզրին անընդհատ ֆունկցիայի լավագույն շոշափումային մոտավորության հարցն ամբողջ ֆունկցիաներով՝ ապացուցվել է, որ վերջիններիս աճը լավագույնն է՝ կախված շոշափումային մոտարկման արագությունից: Անցնելով անկյան մեջ հարմոնիկ, եզրին անընդհատ ֆունկցիայի լավագույն հավասարաչափ և շոշափումային մոտավորություններին ամբողջ հարմոնիկ ֆունկցիաներով՝ ապացուցվել է, որ վերջիններիս աճը կախված է մոտարկվող ֆունկցիայի անկյան վրա ունեցած աճից և անկյան եզրի վրա նրա դիֆերենցիալ հատկություններից: Ստացված արդյունքները հնարավոր է կիրառել անկյան համար Դիրիխլեի խնդրի լուծման ասիմպտոտիկան որոշելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս. Ալեքսանյան):

Դիրակի դելտա-բաշխմամբ պոտենցիալով Շտուրմ-Լիուվիլլի հավասարման Յոստի լուծումներով կառուցվել է մասնակի իզոմետրիա: Փաթույթի օպերատորի սահմանման մեջ, Ֆուրիեի ձևափոխության փոխարեն վերցնելով այդ օպերատորը, սահմանվել է այսպես կոչված m-փաթեթի օպերատորը: Սահմանվել է նաև կիսաառանցքի վրա գործող m-Վիներ-Հոպֆի օպերատորը: Հետազոտվել են այդ օպերատորների հակադարձելիության և ֆրեդհոլմության հատկությունները:

Ուսումնասիրվել են մատրիցային սինգուլյար օպերատորներ՝ իրական առանցքի վրա Մյուկենհոպտի կշիռներով Լեբեգի տարածությունների վրա արտացոլմամբ: Ապացուցվել է, որ այս օպերատորները մատրիցային զուգորդված են Տյոպլից-մատրիցային օպերատորների հետ: Որպես հետևանք, ստացվել են նման օպերատորների Ֆրեդհոլմության չափանիշները կտոր առ կտոր անընդհատ գործակիցների պարագայում: Նմանատիպ արդյունքներ ստացվել են նաև շրջմամբ և Տյոպլից գումարած Հանկելի նկարագրությամբ տրվող օպերատորների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Քամալյան):

Ֆուրիեի շարքի զուգամիտության արագացումն ապահովելու նոր մոտեցումներից է որոշակի պարամետրային բիօրթոգոնալ համակարգի օգտագործումը: Ամենապարզ դեպքում դիտարկվել են «ավանդական», պարզ, սակայն բավական արդյունավետ գումարային ալգորիթմներ, որոնք չեն պահանջում մեծ հաշվարկներ: Կառուցվել, փորձարկվել և ուսումնասիրվել են 2 ալգորիթմներ: Ցուցադրվել է, որ Գիբսի երևույթի հաջող հաղթահարումը պայմանավորված է համապատասխան Դիրիխլեի տիպի միջուկների նոր հատկություններով (ղեկ.՝ ակ. Ա.Ներսիսյան):

Մի որոշակի դասի հաստատուն գործակիցներով բազմանդամների համար ստացվել են խիստ և համարյա հիպոէլիպտականության չափանիշներ գծային ձևափոխությունների և կենտրոնական գծերի տերմիններով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Ղազարյան):

Ուսումնասիրվել են մաթեմատիկական ֆիզիկայում եզրային խնդիրների թվային լուծումների կտոր առ կտոր գծային մոտարկման հատկությունները: Այս մոտեցումը եռանկյունների ցանցերից կախված հավասարումների համակարգերի լուծման հիմքն է:

Գտնվել է պայման խնդրի կորիզի վրա, որի կատարումը բավարար է, որպեսզի օպտիմալ ցանցը լինի Դելոնեի եռանկյունապատում: Արդյունքները պատկերազարդված են MR հեղուկներով էլեկտրամագնիսական համակարգերի դաշտային խնդիրների թվային լուծումների օրինակներով (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Դիտարկվել է R^d տարածությունում սահմանային Գիբսյան անվերջ պատահական կետային պրոցես: Օգտագործելով կումուլանտների մեթոդը և նախկինում ստացած արդյունքը սահմանային Գիբսի պրոցեսի կլաստերային ներկայացման մասին՝ ապացուցվել է ինտեգրալ կենտրոնական սահմանային թեորեմ այս դասի կետային պրոցեսների մասնիկների թվի համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Տվյալների գիտության ու մեքենայական ուսուցման խնդիրներում մշակվել են նոր մոտեցումներ ու կիրառական լուծումներ: Մասնավորապես կառուցվել է խմբավորման (clustering) բացատրելի նոր ալգորիթմ, որը հենվում է Դեմփսթերի-Շեֆերի տեսության վրա, առաջարկվել է այդ տեսության հիման վրա կառուցված դասակարգման ալգորիթմի (DSGD) բարելավում արագ ուսուցանման և արդյունքների անորոշության կրճատման առումներով, մշակվել է կանոններ սովորող դասական ալգորիթմների DSGD-ի հետ համադրման մոտեցում, քննության են ենթարկվել արհեստական բանականության մեջ ալգորիթմական

արդարության (fairness) գնահատման կարևորությունն ու մեթոդները, դրա անբավարարության պատճառները՝ կենտրոնանալով հատկապես բժշկագիտական կիրառությունների վրա, առաջարկվել է նեյրոնային ցանցերի նոր ճարտարապետություն բժշկական պատկերների սեգմենտացման որակի բարելավման նպատակով, այն փորձարկվել է ուղեղի ուռուցքների MRI պատկերների վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հարությունյան):

Անընդհատ պատահական մեծության նկատմամբ ուսումնասիրվել է լոգարիթմորեն ասիմպտոտորեն օպտիմալ վարկածների ստուգման խնդիրը: Դիսկրետավորման մեթոդի կիրառմամբ որոշ հայտնի արդյունքներ ընդհանրացվել և վերաձևակերպվել են: Ստացվել են սխալի հավանականությունների ցուցիչների օպտիմալ փոխկախվածությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Ստեղծվել է պատկերների մշակման նոր մեթոդաբանություն Ռայսի բաշխման օգտագործմամբ: Կատարվել է բաշխման պարամետրերի գնահատման տարբեր ալգորիթմների ճշտությունների համեմատական վերլուծություն: Մշակվել է Ռայսի բաշխման պարամետրերի գնահատման նոր՝ էմպիրիկ բանաձև: Մշակվել է Ռայսի բաշխման մոդելով աղավաղված պատկերի որակի լավարկման գործընթաց (ղեկ.՝ տեխ.գ.դ. Դ.Ասատրյան):

Փոխակերպման տիրույթում իրականացվող աղմուկազերծումը, հիմնված դիսկրետ կոսինուսային փոխակերպման (DCT) վրա, Գաուսյան աղմուկի հեռացման ամենահաշվարկային արդյունավետ և վերլուծականորեն մեկնաբանելի մեթոդներից մեկն է: Դասական սահող բլոկային DCT կոշտ շեմայնացումն ու էմպիրիկ Վիների ֆիլտրումը լայնորեն ուսումնասիրվել են դեռևս 1990-ականներից, սակայն մինչ այսօր շարունակում են մնալ մրցունակ հիմք հիբրիդային և plug-and-play մեթոդների համար: Ուսումնասիրվել է DCT-տիրույթի աղմուկազերծիչների դասակարգում (միամասշտաբ, բազմամասշտաբ, ոչ տեղային և հաճախականական տիրույթում աշխատող խորքային մոդելներ)՝ հատկապես վերանայելով Egiazarian–Yaroslavsky փոխակերպման մեթոդները, բազմամասշտաբ DCT-ն (MS-DCT) և վերջին տարիների DCT-հիմք ունեցող ցանցերը, ինչպիսիք են DCT2Net-ը: Դասական թեստային պատկերների վրա կատարվել են համապարփակ փորձարկումներ՝ հիբրիդային մեթոդը համեմատելու համար դասական սահող DCT աղմուկազերծիչների և ժամանակակից բազմամասշտաբ DCT ալգորիթմների հետ (ֆ.-մ.գ.դ. Հ.Սարուխանյան):

Ուսումնասիրվել է բազմաչափ գծային կրիպտովերլուծության կիրառությունը SAFER+ բլոկային ծածկագրման համակարգի վրա: Առաջարկվել է բազմաչափ գծային կրիպտովերլուծության տարբերակ SAFER+ համակարգի համար, որը և կիրառվել է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Աբրահամյան):

Ընդլայված զանգվածային սպասարկման մոդելի միջոցով նկարագրվել է բազմապրոցեսորային համակարգի զբաղվածության պարբերությունը, բերվել է նրա ներկայացումը պատահական մեծությունների բանաձևի միջոցով: Զանգվածային սպասարկման մոդելի զբաղվածության պարբերություն միջինի հաշվման համար ստացվել է հավասարումների համակարգ, որի լուծման համար մշակվել և ծրագրային իրականացվել է ալգորիթմը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան):

Շարունակելով իմացության ադեկվատ կառուցողական տեսության զարգացումը՝ հիմնավորվել են իմացության ընդունելի մոդելավորումը կոմբինատոր խաղերի միջոցով և իմացիչների կառուցողական մոդելների բավարար լինելը Պիաժեի իմացիչների նկարագրին (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Պողոսյան):

Շախմատային դասակարգիչների համար հետազոտվել են ճանաչման և բացատրման միջոցով բարձր (3-րդ+) մակարդակի ադեկվատությունը, օնթոլոգիաների փոխակերպման եղանակները, սահմանափակ արտահայտությունների միջոցով սովորելը և բացատրելը:

Մշակվել է ծրագրային իրականացում Solver փաթեթում ընդգրկման նպատակով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Գրիգորյան):

Ուսումնասիրվել և փորձարկվել են OpenAI մոդելներ (GPT-4, GPT-o, 4o-mini և այլն)՝ հայերենի տվյալների հետ աշխատանքի համար: Շարունակվել են BERT ճարտարապետությամբ հայալեզու մոդելի ստեղծման հետազոտությունները: Կազմակերպվել են TensorFlow և PyTorch միջավայրերում տարբեր բարդության ուսուցման պրոցեսներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Գյուրջյան):

Հետազոտվել և մշակվել է համակարգ, որն ուղղված է էլեկտրոնային փոստի ծառայության ոլորտում կոտրված հաշվեհամարների բացահայտման և վերահսկման խնդիրներին: Ուսումնասիրվել և մշակվել է SSL հավաստագրերի տարաբաշխման ավտոմատացված համակարգը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Բացահայտվել են երկրաշարժերի ամենակարևոր երկրաքիմիական նախորդ արդյունքները և որոշվել է տարածաժամանակային կապը տարածաշրջանում սեյսմիկ իրադարձությունների տեղակայման հետ: Սահմանվել են երկրաքիմիական ժամանակային շարքերի մշակման հիմնական ալգորիթմները և իրականացվել է դրանց նախնական զննում: Որոշվել են Հայաստանում հիդրոերկրաքիմիական դիտարկումների ցանցի բարելավման հիմնական պահանջները (ղեկ.՝ երկ.գ.թ. Ա.Ղազարյան):

Ներկայացվել են նոր ալգորիթմներ՝ Bant, AutoBant և SimBant, որոնք նախատեսված են պաշտպանել բաշխված և ֆեդերատիվ ուսուցման համակարգերը բյուզանդական հարձակումներից: Մշակվել է հայերենի համար խոսքի ավտոմատ ճանաչման գործիք, որի սխալանքը կազմում է 5.8%: Տվյալ գործիքը կիրառելի է նաև Լոռվա և Արցախի բարբառների համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ց.Ղազարյան):

Հետևյալ գիտական խնդիրների լուծման համար իրականացվել են տվյալների մշակման և օպտիմալացման մեթոդներ, հարթակներ, ծառայություններ և ալգորիթմներ՝ օգտագործելով բարձր արտադրողականությամբ հաշվողական և ամպային ենթակառուցվածքներ.

- Ամպային և բարձր արտադրողականութան ամպային պահոցներ: Գնահատվել է MinIO և LustreFS համակարգերի համադրումն ամպային և HPC միջավայրերի միաձուլման համատեքստում: Արդյունքները ցույց են տվել, որ մեծածավալ տվյալների մշակման համար S3-համատեղելի օբյեկտային պահոցների ինտեգրումը HPC ֆայլային համակարգերի հետ կարող է ապահովել մասշտաբելի, բարձր արտադրողականությամբ և ծախսարդյունավետ լուծումներ:
- Քվանտային համակարգերի մոդելավորում և օպտիմալացում: Իրականացվել է քվանտային 3 և 5-բազմամակարդակ համակարգերի մոդելավորում՝ հիմնվելով մեքենայական ուսուցման PINN, Runge–Kutta և Monte Carlo մեթոդների վրա: Կիրառվել է ածանցյալներ չպահանջող BOBYQA ալգորիթմը ODE պարամետրերի օպտիմալացման նպատակով, որը հաջողությամբ կիրառվել է իրական փորձերում՝ ապահովելով կայուն և ճշգրիտ արդյունքներ:
- Երկրի տվյալների վերլուծություն: Իրականացվել է Հայաստանի, մասնավորապես Արարատյան դաշտի, 2021թ. հունիս ամսվա երաշտային պայմանների համակողմանի գնահատում՝ SPI ցուցիչի, արբանյակային տեղումների տվյալների (CMORPH, IMERG) և Sentinel-2 ու Landsat-8 արբանյակների սպեկտրալ ինդեքսների համադրմամբ, որի արդյունքում ստացվել են գիտականորեն հիմնավորված եզրակացություններ երաշտի դինամիկայի վերաբերյալ:
- Տվյալների որակի գնահատում: Մշակվել է ABAQOS համակարգի (Adaptive Bias-Aware Query Optimization System) նախատիպը, որը նման է «խելացի խորհրդատուի», որն օգնում

է վերլուծաբանին ոչ միայն տեսնել տվյալների որակի խնդիրները, այլև դրանց հիման վրա ավտոմատ օպտիմալացնել SQL հարցումները:

- Գիտական հաշվարկներ: Կատարվել է սիմետրիկ և Հերմիտյան k- և 2k-ռանգ թարմացումների հետազոտություն և արտադրողականության գնահատում տարբեր GPU ճարտարապետությունների համար՝ օգտագործելով cuBLASXt և MAGMA գրադարանները (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան):

Ուսումնասիրվել են մակերևութային ակտիվ նյութեր CTAB/NAOL (նատրիումի օլեատ) խառնուրդի ինքնակազմավորման առաձնահատկությունները՝ համեմատության համար կատարելով նաև իրական փորձեր Հնդկաստանի գործընկերների հետ համատեղ: Մոդելավորման փորձերը վերահաստատել են կառուցվածքային փոխակերպումները (էլիպսոիդ/գալարային միկելներ, վեզիկուլներ): Հետազոտվել են նաև անիոնային SDS և կատիոնային CTAB մակերևութային ակտիվ նյութերի միցելների առանձնահատկությունները՝ ներկայացնելով այն որպես դեղանյութերի տրանսպորտ: Որպես դեղանյութ օգտագործվել է լևոֆլոքսացին հակաբիոտիկը: Այս ուսումնասիրության կարևորությունն այն է, որ հնարավորություն է տալիս ռացիոնալ ձևակերպել հակաբակտերիալ դեղանյութերի նանոփոխադրիչներ, ինչպես նաև նվազեցնել դրանց կողմնակի ազդեցությունները SDS-ի նանոմասնիկներով: Մյուս ուղղությունը վերաբերում է համակարգչային մոդելավորման խնդիրների մեջ ինքնակազմավորվող համակարգերի նկարագրությանը: Մոլեկուլային դինամիկայի մեթոդով փորձերը ցույց են տվել, որ ինքնակազմավորման խնդիրներում, նախքան մոդելավորման մեկնարկը, համակարգը ներկայացնել նախակազմավորված (pre-assembly) եղանակով: Համակարգչային փորձերը կատարվել են GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ, բարձր արտադրողականության մեքենաների վրա, իսկ որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է մոլեկուլային դինամիկայի մեթոդը: Որպես համակարգչային ռեսուրս օգտագործվել են գերհզոր գրաֆիկական քարտերով զինված մեքենաները, «Ազնավուր» գերհզոր հաշվողական ռեսուրսը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պողոսյան):

Իրականացվել են նախորդ տարիներին սկսված և շարունակական բնույթ կրող հետևյալ աշխատանքները՝ գիտության գնահատման, գիտության մեջ կանանց մասնակցության ու դերի, պետական դրամաշնորհների արդյունավետության թեմաներով, արտասահմանյան պարբերականներում հայաստանյան գիտնականների և հետազոտողների հրապարակումների գիտաչափական վերլուծություն Web of Science Core Collection շտեմարանի միջոցով, հայաստանյան գիտական ամսագրերի մատենաչափական նկարագրություն և հեղինակների ու կազմակերպությունների նույնականացում (ստացված շտեմարանները հիմք են ծառայում Գիտական հղման հայկական ցուցիչի համար), Российский индекс научного цитирования գիտական շտեմարանում զետեղվել են Mathematical Problems of Computer Science ամսագրի վերջին տարիների համարները, ArmJIF հաշվարկում հայաստանյան գիտական պարբերականների համար, աշխատանքներ են իրականացվել Հայաստանում բաց գիտության զարգացման ուղղությամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Շ.Սարգսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Ինքնակազմակերպվող ԱԹՍ-երի երամի խելացի ամպային հիմնահարթակ՝ բազմաագենտային ալգորիթմների և համակարգերի ներգրավմամբ» ծրագրի շրջանակում զգալիորեն ընդլայնվել և կատարելագործվել է ԱԹՍ-ների երամի կառավարման ծրագրային հարթակը: Համակարգը վերափոխվել է նախնական առաքելությունների պլանավորման նախատիպից՝ դառնալով ամբողջությամբ ընդարձակվող, բազմահարթակ (Windows, macOS, Linux) միջավայր՝ համալրված իրական ժամանակում տեսապատկերավորման և

մոդելավորման հնարավորություններով: Ընթացիկ տարվա առանցքային նորամուծությունը ինտերակտիվ մոդելավորման ենթահամակարգի ներդրումն է, որը թույլ է տալիս օգտատերերին վերահսկվող միջավայրում դիտարկել, փորձարկել և վավերացնել ԱԹՍ-ների վարքագիծը: Մոդելավորման միջավայրը ներկայումս ապահովում է ԱԹՍ-ների շարժման, հաղորդակցման փոխանակման և առաքելության ընթացքի իրական ժամանակում վիզուալացում: Այս բաղադրիչը նախատեսված է որպես հիմք ապագա մոդուլների համար՝ ներառյալ դինամիկ շեղումների ուղղումը:

Կարևոր բարելավում է առցանց քարտեզի ինտերակտիվ ինտերֆեյսի ինտեգրումը: Օգտատերերը կարող են խոշորացնել, տեղափոխել և անմիջականորեն աշխատել իրական աշխարհից ստացված աշխարհագրական շերտերի հետ: Այս քարտեզների վրա օպերատորն ունի հնարավորություն առաքելության հանգույցներ նշելու, ԱԹՍ-ների դերերը (օրինակ՝ հետախույզ, փրկարար, հարձակվող) նշանակելու և առաջադրանքներ սահմանելու: Սա զգալիորեն բարձրացնում է կիրառման արդյունավետությունը՝ հնարավորինս մոտեցնելով պլանավորումն իրական տեղակայման սցենարներին:

Հարթակը վերափոխվել է դեպի լիարժեք բազմահարթակ ճարտարապետություն՝ ապահովվելով աշխատանք Windows, macOS և Linux օպերացիոն համակարգերում: Ծրագրային գործիքների ամբողջ շղթան՝ միկրոսերվիսային մոդուլները, ցանցային գրադարանը և միջերեսային բաղադրիչները, վերամշակվել են՝ ապահովելու համահունչ կոմպիլյացիա և կատարողականություն բոլոր հիմնական օպերացիոն համակարգերում: Ընդհանուր առմամբ, կատարված աշխատանքը զգալիորեն ամրապնդել է նախագծի ծրագրային հիմքը: Հարթակը ներկայում ապահովում է միավորված միջավայր առաքելության պլանավորման, մոդելավորման և իրական տեղակայման աջակցության համար՝ ստեղծելով ամուր մեկնակետ հետագա հետազոտական փուլերի համար, որոնք կենտրոնացած են ադապտիվ առաքելության իրականացման և ինքնավար երամային վարքագծի վրա (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ. Ասցատրյան):

«Արբանյակային նավիգացիոն համակարգի բացակայության պայմաններում ինքնակազմակերպվող անօդաչու թռչող սարքերի երամի առաջադրանքների իրականացման ապարատա-ծրագրային համակարգի մշակում» ծրագրի շրջանակում իրականացվել են աշխատանքներ օպտիկական կամ տեսողական մեթոդների վրա հիմնված նավիգացիոն համակարգի մշակման շուրջ: Մասնավորապես նախագծվել և իրականացվել է առաջնային կարևորություն ներկայացնող ծրագրային կոմպոնենտ նախատիպ, որը թույլ է տալիս դեմքի ճանաչման մոդելների և պատկերում օբյեկտների հայտնաբերման մոդելների համադրության արդյունքում արբանյակային նավիգացիոն համակարգի ազդանշանի բացակայության պայմաններում ԱԹՍ-ն պահել օդում ճիշտ այն տեղում, որտեղ ընդհատվել է արբանյակային նավիգացիոն համակարգի ազդանշանը: Այս քայլը խիստ կարևոր է ծրագրային միջոցի հետագա առաջընթացի և ամբողջական նավիգացիոն համակարգի մշակման համար: Կոմպոնենտ նախատիպը փորձարկվել է թիմի կողմից նախորդիվ իրականացված դրամաշնորհների արդյունքում ձեռք բերված ԱԹՍ-ի վրա, տեղային լոկալ պայմաններում՝ գնահատելու բարձրությունից կախված նախատիպ ծրագրային մոդուլ աշխատանքի արդյունավետությունը: Կայացել է նախագծի համար հատուկ դետալների և ծրագրաապարատային միջոցների առկայությամբ մեր կողմից նախագծված նոր 4 ԱԹՍ-երի լրակազմերի ձեռքբերման մրցույթ:

Հետազոտվել է gossip–գրաֆների տոլերանտությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Կնյոդել (Knödel) գրաֆերի կառուցվածքին: Ապացուցվել է, որ 2^k գագաթ ունեցող Կնյոդել գրաֆները k տոլերանտ են և ապահովում են կայուն հաղորդակցություն նույնիսկ հանգույցների խափանումների դեպքում: Բացի այդ, ցույց է տրվել, որ այդ գրաֆներն

իզոմորֆ են: Ավելին, ապացուցվել է, որ գրաֆի կապող հաղորդուղիները կարելի է ներկայացնել բինոմական ձևով, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն պարզեցնել դրանց վերլուծությունը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Պողոսյան):

«Մեքենայական ուսուցման տեսություն և զուգամիտող կիրառություններ» ծրագրի գիտական նպատակը Հայաստանում և Վրաստանում AI և ML տիրույթներում լրացուցիչ հետազոտական բացը լրացնելն է որպես սիմվոլիկ ML համակարգերի բարելավում և կիրառում՝ դիսկրետ մաթեմատիայի նորագույն արդյունքների ու լուծումների օգտագործմամբ, ոչ սիմվոլիկ ML համակարգերի արագության մեծացում՝ օգտագործելով թվային գծային հանրահաշվի ձեռքբերումները: Նախագծի առաջին տարվա աշխատանքները հիմնականում վերլուծական բնույթի են՝ պլանավորում, հետազոտական նպատակների ճշգրտում, աշխատանքային հանդիպումների անցկացում, նախնական արդյունքների ստացում: Ծրագրի շրջանակում կազմակերպվել են սեմինարներ մեքենայական ուսուցման (ML) մոդելների շուրջ, համատեղ աշխատաժողովներ, հանդիպումներ և քննարկումներ վրացական կողմի հետ, ստացված արդյունքների ներկայացում գիտաժողովներում, հրապարակումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան):

«Ռադիոպատկերների միջոցով վերգետնյա շարժվող նշանակետերի դասակարգում» ծրագրի շրջանակում ռադիոպատկերների միջոցով ռադիոլոկացիոն կայանների կողմից հայտնաբերված թիրախների տիպորոշման համար մշակվել են տվյալների պիտակավորման գործիքակազմեր: Փորձարկվել են մի շարք «համակարգչային տեսողության» ճարտարապետություններ և մոդելներ: Հետազոտությունների արդյունքում դիտարկվել են դասական ճարտարապետություններ, կոնվոլուցիոն ցանցեր: Առանձնակի ուշադրության է արժանացել դեֆորմացվող կոնվոլուցիոն նեյրոնային ճարտարապետությունը՝ համադրված ինքնակոդավորվող ճարտարապետության հետ: Իրականացվել են աշխատանքներն ըստ (2+1)D կոնվոլուցիոն նեյրոնային ցանցերի և ժամանակային դեֆորմացվող կոնվոլուցիոն ճարտարապետությունների: Մշակվել են հաջորդականությունների վերլուծության ճարտարապետություններ, որոնք կիրառվել են թիրախի շարժման դինամիկա պարունակող ռադիոպատկերների մշակման համար: Առկա տվյալների վրա մշակված մոդելները ցուցադրել են բարձր արդյունքներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սարգսյան):

«Բնական լեզվի ու խոսքի մշակման լաբորատորիա» ծրագրի շրջանակում մշակվել է հայերենի համար տեքստից խոսք գեներացման մեթոդ, որը ցույց է տալիս 4.2 միավոր՝ ըստ MOS (Mean Opinion Score) մետրիկայի: Մշակվել է հայերենի համար խոսքի կլոնավորման մեթոդ, որը ցույց է տալիս 0.81 միավոր՝ ըստ SICS (Subjective Evaluation of Complex Systems) մետրիկայի: Մշակվել է խոսակիցների տարբերակման համակարգ, որի սխալանքի ցուցանիշը հասնում է մինչև 8.03%-ի VoxConverse հավաքածուի վրա: Ներկայացվել է նեյրոնային ցանցի վրա հիմնված երկմոդալ մոտեցում խոսքի էմոցիաների ճանաչման համար, որն օգտագործում է աուդիո և տեքստային տվյալները, ինչպես նաև համապատասխանեցված ակուստիկ ազդանշանների և բառային միավորների զույգերը: Կատարված փորձերը ցույց են տվել, որ առաջարկվող մոտեցումը գերազանցում է նախորդ՝ միայն աուդիոյի վրա հիմնված և բազմամոդալ մոտեցումները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ց.Ղազարյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Abramo, G., D'Angelo, C.A., Gzoyan, E. and Sargsyan Sh., Benchmarking research performance in a post-Soviet science system: the case of Armenia. *Scientometrics* 130, 2213–2235 (2025).

https://doi.org/10.1007/s11192-025-05312-3 (WOS, Scopus Q1)
2. Adamyan A., Hovhannisyan H., Radrigan D., Baloian N., Harutyunyan A., “Interpretable clustering using Dempster-Shafer theory”, Journal of Universal Computer Science, Vol. 31(9), pp. 980-1003. 2025. https://doi.org/10.3897/jucs.164694 (Scopus Q3)
3. Aleksanyan A., Manukyan N., Mkrtchyan N., Rebilas R., Vardanyan N., Extracurricular Activities in Higher Education: Challenges, Economic Implications, and Practices in Armenia and the EU, Forum Scientiae Oeconomia, Volume 13(2025), N 2 (Scopus Q1)
4. Asatryan D.G. Renewed empirical formulas of Weibull distribution parameters estimates. Computer Optics 2025; 49(1): 121-124. DOI: 10.18287/2412-6179-CO-1475. (SCOPUS, Q3)
5. Asatryan David G., Andreasyan Liana K. and Sazhumyan Grigor S. Full-Reference Image Quality Assessment Procedure Based on Rice Distribution Model, Mathematical Problems of Computer Science 63, 7–13, 2025. doi:10.51408/1963-0127
6. Arzumanyan Karen, Sahakyan Roman, Sargsian Romik, Astsatryan Martin, Gazazyan Emil, Astsatryan Hrachya, Optimizing Quantum Simulation of Multilevel Systems via Function-as-a-Service Platforms, Springer Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. 965–972, 2025, doi: S1054661825700774 (Scopus Q3)
7. Aslanyan Levon, Astsatryan Hrachya, Sahakyan Hasmik, Shoukourian Yuri. Selected Papers of the 15th International Conference Computer Science and Information Technologies, Workshop “Large Digital Models and Specific Pattern Analyses (CSIT WS3 2025), Yerevan, Republic of Armenia. Special Issue of journal “Pattern Recognition and Image Analysis: Advances in Mathematical Theory and Applications”v.35, 4, pp. 845–853, 2025. DOI: 10.1134/S1054661825700634 (Scopus Q3)
8. Aslanyan Minas, Comparative Evaluation of Inertial Measurement Unit Versus Vision Based Motion Capture, Pattern Recognition and Image Analysis: Advances in Mathematical Theory and Applications”v.35, 4.
9. Astsatryan Hrachya, Baghdasaryan Hovhannes, Abagyan Ruben, Grabski Hovakim, Grabska Siranuysh, Performance-Driven and Cost-Efficient Convergence of Cloud and HPC: Evaluating MinIO and LustreFS, Baltic J. Modern Computing 13(1), pp.177-199, 2025, https://doi.org/10.22364/bjmc.2025.13.1.10 (Scopus Q3)
10. Astsatryan Hrachya, Lalayan Arthur, and Giuliani Gregory, AI for Earth Observation, in Data Science in Applications, G. Dzemyda et al. (eds.), Springer Studies in Computational Intelligence 1206, pp. 241-261, 2025, https://doi.org/10.1007/978-3-031-88486-3_10 (Scopus Q3)
11. Atashyan Agit F., Lazyan Artyom A., Hayrapetyan Davit V., Poghosyan Vahagn S., Implementation of an Automata Mechanism for a Self-Organizing Swarm of Drones Platform. Mathematical Problems of Computer Science, 2025, 63, 71–80.
12. Atashyan Agit, Lazyan Artyom, Hayrapetyan Davit, Poghosyan Vahagn, Poghosyan Suren, Algorithm-Driven Multi Multi-User Platform for Decentralized Coordination in Self-Organizing UAV Swarms. International Journal of Electrical and Computer Engineering Research, 2025, 5(2), 7–1
13. Atashyan Agit, Aslanyan Norayr, Poghosyan Suren, Poghosyan Vahagn, Vision-Based Hover Stabilization of Copter Unmanned Aerial Vehicles Using Raspberry Pi in the Absence of Global Navigation Satellite Systems, Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. (Scopus Q3)
14. Darbinyan Samvel Kh., On Three Conjectures of Thomassen and the Extremal Digraphs for Two Conjectures of Nash-Williams, Journal of Graph Theory: Volume 109, Issue 4 (2025), pp. 412-425. https://doi.org/10.1002/jgt.23233. Scopus/WoS (Scopus Q1)
15. Darbinyan Samvel Kh., On Hamiltonian bypasses in orgraphs with large semi-degrees, Discrete Applied Mathematics 377 (2025) pp. 510-517. Scopus/WoS https://doi.org/10.1016/j.dam.2025.08.010. (Scopus Q2)
16. Darbinyan Samvel, On Hamiltonian bypasses in digraphs, Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. 876-883, DOI: 10.1134/S1054661825700671 (Scopus Q3)
17. Gasparyan Hayk, Multispectral Decomposition and Harmonic Networks for Efficient Solar Panel Inspection via UAV imaging, Pattern Recognit. Image Anal. 35(4), *pp. 991-1002, DOI: 10.1134/S1054661825700816*
18. Gevorkyan, A.S., Bogdanov, A.V. and Mareev V.V., Three-Body Problem in Conformal-Euclidean Space: Complexity of a Low-Dimensional System, *Physics of Particles and Nuclei*, 2025, Vol. 56, N 6, pp. 1444–1448; https://doi.org/10.1134/S1063779625700650: CiteScore -Q3, IF=0.6, Scopus. (Scopus Q2)
19. Gevorkyan A. S., Irreversibility of a Classical Three-Body Problem: Complexity of a Low-Dimensional System, Analysis, PDEs, and Applications, Ed. Zh. Avetisyan, M. Ruzhansky and A. Vagharshakyan, pp. 117-125, *Birkhäuser Cham*, (2025); https://doi.org/10.1007/978-3-031-89463-3

20. Gevorgyan Artur, Panyan Hasmik, Khalatyan Yelena, Piliposyan Narine, Azizyan Haykanush, Sahakyan Vladimir, Azizyan Levon, Abrahamyan Rita, Astsatryan Hrachya, Analzyes of Climate Anomialies in Armenia in 2024, Springer Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. 907–916, 2025, doi: 10.1134/S1054661825700725 (Scopus Q3)
21. Gharagyozyan G. A., A PDE-Based Convolutional Neural Network with Variational Information Bottleneck: Experimental Evaluation and Generalization Analysis, Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 64, pp. 37-46. https://doi.org/10.51408/1963-0138
22. Girase M., Poghosyan A. H., Ishkhanyan H. A., Kumar S., Aswal V. K., & Kuperkar K. (2025). Self-assembly and micellar transition in a CTAB-sodium oleate mixed system: experimental and molecular dynamics validations. New J. Chem., 49, 13914–13928. DOI: https://doi.org/10.1039/D5NJ02156A (Scopus Q2)
23. Gishyan Karen, Concise Theoretical and Algorithmic Notes on Reachability Queries in Multilayer Graphs, Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. (Scopus Q3)
24. Grigoryan S., Petrosyana N., Kolotyan G., Kozmanyan A., Avetisyan V., Zakaryan H., Schöning M. J., Asatryan A., Khachatryan H., Accelerated composition optimization of hybrid perovskites via data-driven materials design, DFT calculations and synthesis, Materials & Design 260, 2025, 114902, Elsevier, https://doi.org/10.1016/j.matdes.2025.114902, (Scopus Q1)
25. Grigoryan Sedrak, Shahinyan Tigran From Natural Language to Ontology Graphs in Learning Expert Meaning Processing, Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. (Scopus Q3)
26. Gyulgyulyan Eliza, Astsatryan Hrachya, Quality Alerting System for Data Analysis in Data Lakes, Springer Pattern Recognit. Image Anal. 35(4), pp. 862–871, 2025. doi: 10.1134/S1054661825700658 (Scopus Q3)
27. Gzoyan E., Mirzoyan A., Kesoyan G., Yeghikyan M., Hunanyan S. and Sargsyan Sh. Scientific Landscape in the South Caucasus: A Comparative Analysis of Armenia, Azerbaijan, and Georgia (2012–2024). *Proceedings of the 20th International Conference on Scientometrics & Informetrics*. https://doi.org/10.51408/issi2025_164
28. Hovhannes A. Harutyunyan; Narek Hovhannisyan, Recursive Broadcasting Approach, 2025 33rd Euromicro International Conference on Parallel, Distributed, and Network-Based Processing (PDP), 10.1109/PDP66500.2025.00031 (Scopus)
29. Haroutunian M. E., Santrosyan J. S., Hakobyan P. M., Reliability Criteria in Source Coding Problem with Secret Component, Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 63, pp. 14-24. doi:10.51408/1963-0128
30. Haroutunian M.E., Gharagyozyan G. A., Information theory tools and techniques to overcome machine learning challenges, Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 63, pp. 25-41. doi:10.51408/1963-0129
31. Hovhannisyan Sargis, Robust Perception in Degraded Visual Environments: A Multimodal Enhancement Framework, Pattern Recognition and Image Analysis, 2025, Vol. 35, N 4, pp.
32. Ishkhanyan H., Santana-Bonilla A., Lorenz Ch. D., PUCHIK: A Python Package To Analyze Molecular Dynamics Simulations of Aspherical Nanoparticles, Journal of Chemical Information and Modeling, Vol 65/Issue 4, pp. 1694-1701.
33. Karapetyan Iskandar and Karapetyan Karen, "On Some Large Cap Sets", Pattern Recognition and Image Analysis, 2025, v. 35, N4, ISSN 1054-6618, pp. 884–888, DOI: 10.1134/S1054661825700683 (Scopus Q3)
34. Kazarian A.E., Kazarian A.A., Magakian T.Yu., Minasyan G.A., Mkrtchyan A.O., Sahakyan V.G., Earthquakes Pattern Recognition in Seismology Research, Pattern Recognition and Image Analysis, 2025, Vol. 35, No. 4, ISSN 1054-6618, pp. 973-979, DOI: 10.1134/S1054661825700786 (Scopus Q3)
35. Kesoyan G., Mirzoyan A., Hunanyan S., and Kesoyan M. Science-Policy Tendencies in Armenia Towards the International Collaboration. *Proceedings of the 20th International Conference on Scientometrics & Informetrics*. https://doi.org/10.51408/issi2025_031
36. Kesoyan G., Shushanyan R., Ohanyan M., Shahkhatuni A., Yeghikyan M., and Blaginin V. Boosting science through state support: Armenian state grants as a driver of scientific and international advancement. *Journal of Informetrics*, 2025 19(3), https://doi.org/10.1016/j.joi.2025.101704 (WOS, Scopus Q1)
37. Lazyan Artyom, Hayrapetyan David, Poghosyan Suren, Shoukourian Yuri, Poghosyan Vahagn. Algorithmic Foundations for Distributed Task Coordination in Unmanned Aerial Vehicle Swarms via a Client-Server

System. Special Issue of journal “Pattern Recognition and Image Analysis: Advances in Mathematical Theory and Applications” v.35, 4, pp. 901–906, 2025. DOI 10.1134/S1054661825700713 (Scopus Q3)

38. Luther W. and Harutyunyan A., “Fainess in healthcare and beyond – a survey”, Journal of Universal Computer Science, vol. 31, No. 14, 1636-1664, 2025. doi: 10.3897/jucs.137699. (Scopus Q3)
39. Mickaelian A. M., Mikayelyan G. A., Abrahamyan H. V., Astsatryan H. V., Knyazyan A. V., Recent activities of the Armenian Virtual Observatory (ArVO), Communications of BAO, Vol. 72, Issue 1, 2025, pp. 3-11. https://doi.org/10.52526/25792776-25.72.1-3
40. Mirzoyan A., Sahakyan V., Shoukourian Yu., and Astsatryan H. V., Armenian National Supercomputing Center: Bridging Science and Technology through High-Performance Computing ISSN 1063-7796, Physics of Particles and Nuclei, 2025, Vol. 56, No. 6, pp. 1291–1298. © Pleiades Publishing, Ltd., 2025. https://doi.org/10.1134/S1063779625700388 (Scopus Q3)
41. Oghlukyan, A. Adaptive Communication for Scalable Distributed AdaBoost Framework. *Pattern Recognit. Image Anal.* **35**, 119–128 (2025). https://doi.org/10.1134/S105466182570004X, (Scopus Q3)
42. Oghlukyan A. and de Mingo López Luis Fernando, Infrequent Synchronization in Distributed AdaBoost, Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 64, pp.66 -75. https://doi.org/10.51408/1963-0141
43. Petrosyan A., Petrosyan G., and Tadevosyan R., Development of the Automated Alert System for Detection and Handling of Compromised Email Accounts, Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 64, pp. 56 -65. https://doi.org/10.51408/1963-0140
44. Poghosyan, A.H., Mamasakhlisov, Y.S., Parsadanyan, M.A. Shahinyan M.A., Movsisyan Z.H., Vardevanyan P.O. Molecular simulation study of RNA/dopamine complex dynamics at varying concentrations. Sci Rep 15, 21379 (2025). https://doi.org/10.1038/s41598-025-06690-7 (Scopus Q1)
45. Poghosyan V., On Exactly Solvable Lattice Models and Their Mathematical Properties, Mathematical Problems of Computer Science, 2025, Vol. 64, pp. 9-16. https://doi.org/10.51408/1963-0135
46. Poghosyan V., A Visualization and Modeling Tool for Fault-Tolerant Gossip Graphs, Mathematical Problems of Computer Science, 2025, Vol. 64, pp. 29-36. https://doi.org/10.51408/1963-0137
47. Poghosyan V.S., Lattice models of self-organized criticality and full information dissemination schemes: applications in UAVv swarm systems, «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկագիր. տեխնիկական գիտությունների սերիա», 2025, էջ 203-213:
48. Poghosyan S., Poghosyan V., Astsatryan H., Alaverdyan Ye., Decentralized Privacy Provision in Dynamically Reconfigurable and Self-Organizing Aero-Physical Cyber Systems. Phys. Part. Nuclei 56, 1309–1317 (2025). https://doi.org/10.1134/S1063779625700406 (Scopus Q3)
49. Sahakyan, Hasmik, Katona Gyula, and Aslanyan Levon. Study on Using Reinforcement Learning for the Monotone Boolean Reconstruction. *Informatica* 48, no. 4 (2025) (WOS, Scopus Q3)
50. Sahakyan, Hasmik, Aslanyan Levon, Recognition of K-Distance Monotone Boolean Functions, Pattern Recognition and Image Analysis, vol.35, N4, pp. 854-861, DOI: 10.1134/S1054661825700646 (Scopus Q3)
51. Sahakyan Hovhannes, Astsatryan Hrachya, Dynamic Load Balancing for Direct Server Return Networks Using eBPF for In-Band Metric Feedback, Cybernetics and Information Technologies 25(3), 2025, pp. 142-155, https://doi.org/10.2478/cait-2025-0027 (Scopus Q2)
52. Sahakyan Vladimir, Vardanyan Artur, Probabilistic Pattern and Steady-State Analysis of Multi-server Queueing Model with Simultaneous Service, Pattern Recognition and Image Analysis, v.35, N4, (Scopus Q3)
53. Sargsyan, R., Sahakyan, R., Gazazyan, E., Sargsyan Sh., Sargsyan S. and Astsatryan H. Erratum to: Evaluation of Differential Equation Solutions through Traditional Techniques and Neural Networks in Quantum Simulations. Program Comput Soft 51, 357 (2025) (WOS, Scopus Q4)
54. Sargsyan Shushanik, Baghdasaryan Hovhannes, and Astsatryan Hrachya, Supercomputing Centers and Their Impact on Research Output: Multinational Comparison, Physics of Particles and Nuclei 56(6), pp. 1609–1614, 2025. https://doi.org/10.1134/S1063779625700959 (Scopus Q3)
55. Sargsyan, Sh., Gzoyan, E., Abramo, G., and D’Angelo, C. A. Gender disparities in academic research: A comparative study of Armenia and Italy. Proceedings of the 20th International Conference on Scientometrics & Informetrics (2025). https://doi.org/10.51408/issi2025_012
56. Sargsyan Sh., Maisano D., Shakhatuni A., Sargsyan H., Mirzoyan A., Ohanyan M., and Gzoyan E. Armenian Women in Science: An Analytical and Bibliometric Study of Current Trends. Journal of Scientometric Research 2025;14(1). https://doi.org/10.5530/jscires.20251566 (Scopus Q3)

57. Sargsyan Vahe, Mkrtchyan Garik, Saroyan Erik, Aslanyan Levon, Analysis of deformable and classic convolution in the classification of radio-frequency images, Proc. SPIE, 2025, 13808, 18, 10.1117/12.3077021. (Scopus)
58. Sargsyan Vahe, Mkrtchyan Garik, Saroyan Erik, Aslanyan Levon, Analysis of Convolutional Networks in The Classification of Radio-Frequency Images, Pattern Recognition and Image Analysis, vol.35, N4, pp. 917-928, DOI: 10.1134/S1054661825700737 (Scopus Q3)
59. Sargsyan Vahe, Mkrtchyan Garik, Saroyan Erik, Aslanyan Levon, Analysis of Deformable Convolutional Networks in the Classification of Radio-Frequency Images, Pattern Recognition and Image Analysis, vol.35, N4, pp. 929-939, DOI: 10.1134/S1054661825700749
60. Shushanyan R., Ohanyan M., Sargsyan A. and Sargsyan Sh. The current state and long-term development forecasts of doctoral education: a case study of Armenia. International Journal of Education Economics and Development, 2025 16(1-2). https://doi.org/10.1504/IJEED.2025.143602 (Scopus, Q4)
61. Tarkhanyan A. and Harutyunyan A., "DSGD++: Reducing uncertainty and training time in the DSGD classifier through a mass assignment function initialization technique", Journal of Universal Computer Science, Vol. 31(9), pp. 1004-1014. 2025. https://doi.org/10.3897/jucs.164745 (Scopus, Q4)
62. Vaez Allaei, S. M., Amininasab M., Ishkhanyan H., Poghosyan A. H. (2025). Potential functional changes in native lysozyme induced by carbon nanotubes studied by molecular dynamics simulations. Scientific Reports, 15:11593. DOI: https://doi.org/10.1038/s41598-025-96435-3 (Scopus, Q1)
63. Veziryan R. M., "PDE-UNet: A Modified UNet Architecture Applied to Medical Image Segmentation", Mathematical Problems of Computer Science 2025, Vol. 64, pp.47-55. https://doi.org/10.51408/1963-0139

Հոդվածները հրատարակվել են "Computer Science and Information Technologies" 15-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, CSIT 2025, Ե., 2025, 325 էջ:

64. Alaverdyan Yeghisabet, Poghosyan Suren, Poghosyan Vahagn, Multi-Party Computation for Resilient Coordination in Self-Organizing Swarms, pp. 13-16
65. Asatryan David G., Andreasyan Liana K. and Sazhumyan Grigor S., Local Restoration of Images Distorted by Rician Noise, pp. 201-204.
66. Atashyan Agit, Hayrapetyan Davit, Poghosyan Vahagn, Poghosyan Suren, Mobility-Aware Graph Restructuring and Conflict Minimizing Modeling for Autonomous Continuous Monitoring by Self-Organizing UAV Swarms, pp. 239-243.
67. Darbinyan Samvel Kh., On Hamiltonian Bypasses in Digraphs, pp. 97-98.
68. Gharagyozyan G. A., Improving CNN Generalization with PDE Preprocessing and the Variational Information Bottleneck, pp. 145-147.
69. Gichunts E. E., Performance of Linear Algebra Symmetric and Hermitian k and 2k Rank Update in Multi-Accelerator Architectures, pp. 89-92.
70. Grigoryan Sedrak, Shahinyan Tigran, From Natural Language to Ontology Graphs in LEMP, pp.20-23.
71. Grigoryan Y., Hunanyan G., and Abrahamyan S., Linear Cryptanalysis of the SAFER Block Cipher Family, pp. 152-154.
72. Gyurjyan Mikayel, Checkpointing and Adaptive Scheduling in HPC: A Case Study on the Aznavour Cluster, pp. 71-72.
73. Lazyan Artyom, Poghosyan Suren, Poghosyan Vahagn, Real-Time Swarm Behavior Simulation and Dynamic Role Assignment in Decentralized UAV Coordination Platforms, pp. 77-80.
74. Haroutunian M. E., Santrosyan J. S., Hakobyan P. M., Rate-Reliability-Distortion Function for Source with Side Information Known to Encoder and Decoder, pp. 155–158.
75. Kazarian Armen, Mkrtchyan Asatur, Minasyan Gayane, Kazarian Aik, Implementation of a New Histogram Technique Based on Solar Time for Local Seismicity Analysis, pp. 217-220.
76. Karakhanyan Vilik, Method for Counting the Number of Interior Points of the Standard Arrangement of the Discrete Torus, pp.106-108.
77. Karapetyan Boris, Instrumental Environment for Supporting Sensorimotor Development, pp. 32-34.
78. Karapetyan Iskandar, Karapetyan Karen, About Some Large Cap Sets, pp. 99-102.
79. Manasyan Arusyak, Tadevosyan Robert, Astsatryan Hrachya, Sahakyan Vladimir, Petrosyan Arthur, Machine Learning for Network Management: Techniques for Traffic Management and Anomaly Detection, ISBN 978-9939-1-2149-9, pp. 307-309.

80. Mokatsian Arsen, Barseghyan Khachatur, Elements of an Analysis of the Category with Computable Functions as Arrows, pp. 115-118.
81. Pogossian Edward, Towards an Adequate Theory of Cognizing, pp. 38-43.
82. Sahakyan, Hasmik, Aslanyan Levon, Study of nearly KK-MBF-type functions, pp. 119-121.
83. Vardanyan Artur, Babayan Lyusya, Sahakyan Vladimir, Atoyan Naira, Application of Approximation Methods to Identify Sinusoidal Chronostructures in Healthy Individuals and Patients with Cardiovascular Pathology, pp. 234-236.
84. Vartanov Sergey, Data Servers in Parallel Processes and Caper Language Paradigms, pp.93-94.
85. Vartanov Sergey, Minasyan Veronika, Simulation and Control of Computational Cluster Components Based on Parallel Mechanisms of the Caper Language, pp. 81-82.
86. Yesayan A., Martirosyan A., On Reliability Hypothesis Testing for Continuous Object with Quantization, pp. 182–184.

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

«ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան
Էլեկտրոնային փոստ՝ energopower@mail.ru

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվող ալիքային ու տատանողական պրոցեսների կառավարումը խողովակաշար համակարգերում հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են նաև պինդ մարմինների շրջհոսելիության խնդիրներն ու նրանց վրա ազդող ուժերը՝ կախված հեղուկի ու գազի արագությունից, ուղղությունից: Կատարված հետազոտությունների արդյունքը սկզբունքորեն նոր ուղղաձիգ առանցքով դանդաղաշարժ (4պտ/րոպ) հողմաէլեկտրակայանի մշակումն է իր բոլոր էտապներով, որի հողմաշարժիչը պտտվում է ուղղաձիգ առանցքի շուրջը (ՀՀ արտոնագիր):

Էներգիայի վերականգնվող աղբյուրների (արևային, քամու) օգտագործումը որպես ածխածնային էներգիայի ալտերնատիվ՝ հրատապ արդիական թեմա է: Քամու էներգիան պետք է դիտել որպես էներգետիկ հսկայական պաշար: Անհրաժեշտություն կա (և համարվում է արդիական) զարգացնել քամու էներգիան էլեկտրական էներգիայի փոխակերպելու տեխնոլոգիաները: Մշակված սխեմայի համաձայն՝ քամու հոսքը P ուժով ճնշում է փեռիկի վրա, որը շարժվում է քամու ուղղությամբ, իսկ P_1 ուժով ազդում է նաև քամուն հակառակ շարժվող փեռիկի վրա, որը բացատրվում է նրանով, որ (a) փեռիկի հետնամասում առաջանում է նոսրացում, որն անմիջապես լցվում է (b) փեռիկից անդրադարձող օդի հոսքով: Այսպիսով, ստացված P_1 լրացուցիչ ուժն օգնում է P հիմնական պտտող ուժին: Բացի դրանից, հողմաշարժիչի ռոտորի աշխատանքի արդյունավետությունը մեծանում է նաև հոսանքի ուղղությամբ շարժվող փեռիկի հետնամասում օդի նոսրացման հետևանքով, որը հայտնի է «Մագնուսի էֆեկտ» անունով:

Հողմաշարժիչի աշտարակի ուղղաձիգ առանցքով կտրվածքի արտաքին պատերն ունեն երկրորդ կարգի կամ դրան մոտ կորի (շրջան, էլիպս, պարաբոլոիդ և այլն) տեսք, նրանք հանդիսանում են աշտարակի արտաքին մակերևույթի ծնիչը՝ տալով նրան շրջհոսելի մակերևույթի ձև, ընդ որում նրա նեղ մասն աշտարակի վերևում է և աստիճանաբար լայնանում է դեպի ներքև: Հողմաշարժիչի ռոտորը պտտվում է մետաղական կարկասի մեջ, իսկ հողմաշարժիչի կարկասը մետաղյա ճոպաններով ամրացվում է ֆունդամենտին:

Մշակված հողմաշարժիչի ռոտորն իր պտտման ուղղությունը չի փոխում քամու ուղղության փոփոխման դեպքում, անհրաժեշտություն չկա նրան ուղղորդել դեպի քամու ուղղությունը: Նրա օ.գ.գ-ն մեծանում է աշտարակի կլոր լինելու, ինչպես նաև նրա կողմնային մակերևույթի շրջհոսելի լինելու շնորհիվ, որը ստացվում է նրա որպես ծնիչ երկրորդ կարգի կամ դրան մոտ կորի կիրառմամբ:

Հողմաշարժիչի կոնստրուկտիվ պարամետրերի որոշման նպատակով կատարվել են տեսական ու փորձարարական հետազոտություններ, որոնք հիմնված են տեսական ու փորձնական աէրոդինամիկայի սկզբունքների վրա: Ստեղծվել է փորձնական կայանք հողմաշարժիչի բնութագրերը ստանալու համար: Մշակված հողմաէլեկտրակայանի քամու օգտագործման գործակիցը հասնում է - 0,26%-ի:

Ուղղաձիգ առանցքով հողմաէլեկտրակայանները, ունենալով պարզ կառուցվածք ու հուսալի շահագործում, կարող են ունենալ լայն կիրառություն ինչպես հանրապետությունում, այնպես էլ դրսում: Առավել ևս, այս աշխատանքի արդյունքում մեծացնելով նրա օ.գ.գ.-ն՝ կարելի է կազմակերպել նրանց տարբեր մոդուլների սերիական արտադրություն (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Ռ.Կոստանյան
Ակադեմիկոս-քարտուղարի օգնական՝ Ն.Դավիդյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանը (ԲԱ), Ֆիզիկական հետազոտությունների (ՖՀԻ), Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների (ՖԿՊԻ), Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի (ՌՖԷԻ) ինստիտուտները, ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 3 ակադեմիկոս, 10 թղթակից և 22 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 3 ընդհանուր ժողով, բյուրոյի 17 նիստ, բազմաթիվ ընթացիկ հարցերի քննարկման և լուծման համար կազմակերպությունների հետ պահպանվել է մշտական կապ:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել ակադեմիկոս-քարտուղար ակ. Ռ.Կոստանյանի «2024թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Ժողովը որոշել է՝ կարևորելով ՀՀ-ում գիտական և գիտակրթական բնագավառներում նախատեսվող ծրագրերը՝ դրանք իրականացնելիս անհրաժեշտ է չխաթարել գիտական կազմակերպություններում կատարվող աշխատանքների բնականոն ընթացքը և շարունակականությունը: Քննարկվել է կազմակերպությունների՝ տարիներ առաջ հաստատված թեմատիկայի վերանայման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով արդիականությունը, հանրապետության համար կարևորությունը և կադրերով ապահովվածությունը: Համարվել է կարևոր հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա հանրապետության հատկապես անվտանգության և առողջապահության բնագավառներում կիրառման նպատակով հեռանկարային նորարական աշխատանքների իրականացումը: Գիտական զեկուցումներով ելույթ են ունեցել թղթ. անդ. Ա.Պապոյանը (ՖՀԻ)՝ «Խիստ ցրող օբյեկտների օպտիկական թափանցող պատկերագրում», ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյանը (ԲԱ) «Ակտիվ գալակտիկաների բազմալիքային որոնումներ և ուսումնասիրություններ», ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյանը (ՌՖԷԻ)՝ «Նանո-անհարթությունների առաջացրած հակաանդրադարձում և մշուշային երևույթներ անթափանցիկ միջավայրերում», ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյանը (Իկրանետ ՄԿ)՝ «Բլազարների ճառագայթման ուսումնասիրությունը մեքենայական ուսուցման ալգորիթմների միջոցով», ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյանը (ՖԿՊԻ)՝ «Ակուստիկ ալիքների ազդեցությամբ նոր բյուրեղների ստացում և աճեցում»:

Հրավիրվել են «Աստղաֆիզիկա» և «Տեղեկագիր ֆիզիկա» ամսագրերի խմբագրական կոլեգիաների հաշվետու նիստեր, քննարկվել են կազմակերպական և վարկանիշների բարձրացման հնարավորությունները: ԳԱԱ նախագահության հաստատմանն է ներկայացվել «Աստղաֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագրի թեկնածությունը, ընտրվել է խմբագրական կոլեգիայի նոր կազմ՝ արտասահմանյան հեղինակավոր գիտնականների ներգրավմամբ: Ամսագրի անվան պահպանմամբ տպագրման պայմանագիր է կնքվել անմիջապես Springer Narure Switzerland և ԳԱԱ միջև: Հաստատվել է ՖՀԻ գիտական խորհրդի նոր կազմը:

Բաժանմունքի ինստիտուտների, ԲՏԱՆ «Գեոկոսմոս» ՓԲԸ, «Բազումք» ՓԲԸ և ԳԱԱ Ներդրումային հիմնահարցերի մասնագիտական խորհրդի համատեղ նիստում քննարկվել են «Հայկական արբանյակ» ծրագրի անցյալը, ներկան և ապագան, կարևորվել է

բնագավառի աշխատանքների համակարգման, տարբեր գերատեսչությունների, կազմակերպությունների միջև փոխշահավետ համագործակցության և համատեղ աշխատանքների անհրաժեշտությունը:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը, ասպիրանտուրայի և գործուղումների հայտերը (5 հայտ), փորձագիտական եզրակացություն է տրվել Կառավարության կառույցներից ստացված նամակներին, դիմումատուներին տրվել են պատասխաններ: Քննարկվել և բավարարվել են «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» բյուջետային ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման ՖՀԻ-ի և ՖԿՊԻ-ի ներկայացված հայտերը:

Մշտապես քննարկվել են գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների ընդլայնման, գիտական կազմակերպությունների աշխատանքի գնահատման հարցերը:

Կազմակերպվել ու պարբերաբար անցկացվել են սեմինարներ, հանրապետական և միջազգային գիտաժողովներ:

Կնքվել են նոր պայմանագրեր, շարունակվել է համագործակցությունը գիտական և կրթական ոլորտների այլ ստորաբաժանումների հետ: Քննարկվել են 2025թ. բազային հայտերը, ծրագրերն ու բաժանմունքի կազմակերպությունների ռազմավարությունը:

Բաժանմունքի կազմակերպությունների միջև և արտասահմանյան երկրների հետ համագործակցությունը խթանելու ակնկալիքով ինստիտուտների հետազոտական ուղղությունների վերաբերյալ կազմակերպված սեմինարներին զեկույցներով հանդես են եկել տնօրենները (4 սեմինար), իսկ արտասահմանյան երկրների հետ գիտական համագործակցության շրջանակում ելույթ են ունեցել համատեղ իրականացվող աշխատանքների արտասահմանյան ղեկավարները (5 սեմինար):

Դեկտեմբերին բաժանմունքի գիտական կազմակերպություններում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել են ստացված կարևորագույն հիմնարար և կիրառական արդյունքները, հաստատվել են գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները, այնուհետև բաժանմունքի բյուրոյի նիստում:

Բաժանմունքի ինստիտուտների 5 աշխատակից պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքի ինստիտուտները ստացել են 3 արտոնագիր (1-ը միջազգային), գիտաշխատողները հրատարակել են 7 մենագրություն (2-ն արտասահմանում), հրապարակվել է 233 հոդված գրախոսվող ամսագրերում (175-ը SCOPUS/WoS-ում), 33 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (13-ն արտասահմանյան), 214 թեզիս (48-ն արտասահմանում):

Բաժանմունքը հրատարակում է «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» (imp. fac. 0.4, 4 համար), «Աստղաֆիզիկա» (imp. fac. 0.7, 4 համար), «Armenian journal of physics» («Ֆիզիկայի հայկական հանդես», էլեկտրոնային, 4 համար) ամսագրերը:

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Աբրահամյան
Էլեկտրոնային փոստ՝ observ@bao.sci.am
Կայքէջ՝ www.bao.am/index.php

Մասնագիտական խորհուրդ 048՝ «Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն»
Նախագահ՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Աբրահամյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ռենտգենյան ԱԳՄ-ների ակտիվության դասերը SDSS-ի սպեկտրների հիման վրա. Հիմք ընդունելով Համբուրգյան շրջահայության թիթեղներից ընտրված ԱԳՄ-ների բազմաալիքային ուսումնասիրությունների կատալոգը՝ փորձ է արվել կատարել դրանում առկա օբյեկտների ակտիվության դասերի որոշում: Առանձնացվել են այն օբյեկտները, որոնք ունեն սպեկտրալ դիտումներ SDSS-ի կողմից: Ստացվել է 2908 օբյեկտ, կատարվել է դրանց ակտիվության դասերի որոշում ինչպես դիագնոստիկ դիագրամների օգնությամբ, այնպես էլ սպեկտրների մանրակրկիտ հետազոտությունների միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

3C 279 քվազարի շիթում ստացիոնար բաղադրիչի ուսումնասիրություն: Բազմաթիվ բլազարների շիթերում՝ ռադիո միջուկի մոտ, VLBA (Very Long Baseline Interferometry) մոնիթորինգի միջոցով (15 ԳՀց և 43 ԳՀց հաճախություններով) հայտնաբերվել են քվազիստացիոնար բաղադրիչներ (ՔՍԲ), որոնց դերը բավականին մեծ է շիթի կազմության, կինեմատիկայի և դինամիկայի վերաբերյալ պատկերացումներ կազմելու հարցում: 3C 279 հարթ սպեկտրով ռադիոքվազարի շիթում ՔՍԲ-ների հետագծի և կինեմատիկայի վերաբերյալ կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ՔՍԲ-ի և ռադիոմիջուկի ներքին տեղաշարժերը կարելի է գնահատել վիճակագրական եղանակով: ՔՍԲ-ի հետագծի վերլուծությամբ պարզվել է, որ նրա ուղղորդված բնույթի շարժումը բաղկացած է հետադարձային մասերից: Հետագծի հետադարձային շարժումների պարամետրերի ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է ՔՍԲ-ի մոդելը: Ըստ այդ մոդելի՝ ռելյատիվիստիկ լայնակի ալիքների առկայությունը կարող է բացատրել ՔՍԲ-ի հետադարձային շարժումը և չափված, մինչ այդ անհասկանալի, գերլուսային արագությունները: Հաջորդական ուսումնասիրություններում ՔՍԲ-ի մոդելը նաև հաստատվել է 2 տիպի՝ BL Lacertae և 3C 279 բլազարների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Շարունակելով աստղառաջացման տիրույթներում իոնացված և մոլեկուլային հոսքերով կապված երիտասարդ աստղերի սպեկտրային ուսումնասիրությունները՝ հայտնաբերվել է 2 աստղ բացառիկ հատկություններով՝ IRAS 06297+1021 (W) և V963 Mon: Նրանց սպեկտրերում դիտվել են շատ լայն արգելված էմիսիոն գծեր (ընդհանուր լայնությունը մինչև 1000 կմ/վրկ), որոնք սպեկտրի լուծաչափի բարձրացման դեպքում բաժանվում են մի քանի բաղադրիչների: Այդպիսով, դրանք ստացել են նմանություն «սուպեր-էքսորի»՝ PV Cep-ի հետ, որի դեպքում նույնպես բացահայտվել են արգելված գծերի նման բարդ պրոֆիլներ: Ենթադրվում է, որ այս աստղերը կարող են ներկայացնել ֆուորի տիպի օբյեկտների առանձին ենթադաս (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Ուսումնասիրվել է Օկամոտոյի և այլոց (2021) կատալոգից ամենաակտիվ արեգակնային տիպի 9 աստղ: Դրանց առանցքային պտույտի պարբերությունները

հաշվարկվել են գրանցված բռնկումների ժամանակագրության միջոցով, հաշվարկվել են բռնկման բաշխման կոնցենտրացիայի գործակիցները, ստացվել են բծայնության անկյունային բաշխումները: Գնահատված բծայնության բծայնության աստիճանի արժեքը տատանվում է 1-4%-ից նվազագույն բծայնությամբ կիսագնդերի համար, մինչև 10%՝ առավելագույն բծայնությամբ կիսագնդերի համար՝ զգալիորեն գերազանցելով Արեգակի արժեքները: Օկամոտոյի և այլոց (2021) արդյունքների հետ համեմատությունը ցույց է տվել բարձրաստիճանի համաձայնություն կոռելյացիայի գործակիցը r=0.896՝ p=0.0011 նշանակալիության մակարդակում, որը հաստատում է առաջարկվող մեթոդի հուսալիությունը և ներուժը: Մշակված մոտեցումը ցույց է տալիս աստղային բծայնությունը որոշելու հնարավորությունը բռնկման ակտիվության ժամանակային շարքերի հիման վրա՝ առանց ֆոտոմետրիկ կամ սպեկտրոսկոպիկ տվյալների վրա հենվելու, ինչն այն դարձնում է արժեքավոր գործիք գերհզոր բռնկումներ ցուցաբերող արեգակնային տիպի աստղերի մագնիսական ակտիվության վիճակագրական ուսումնասիրությունների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Վերջերս առաջարկված նոր՝ «Արդյունարար դաշտի տրոհման» (ԱԴՏ) եղանակով կառուցվել է կլանող-ցրող կիսանվերջ միջավայրից ճառագայթման դիֆուզ անդրադարձման խնդրի բացահայտ լուծումն իզոտրոպ ցրման տարրական գործողությունում ըստ հաճախությունների վերաբաշխման կամայական օրենքի դեպքում: Ընդգծվել է նոր մոտեցման առավելությունն «ավանդական» մոտեցման նկատմամբ: Այս խնդրի 4 անկախ փոփոխականից կախված լուծումը հաջողվել է արտահայտել մի փոփոխականից կախված 2 օժանդակ ֆունկցիաների միջոցով: Վերջիններս որոշվում են ոչ գծային 2 ինտեգրալ հավասարում և մի հանրահաշվական հավասարում պարունակող միասնական համակարգից: Բացահայտ տեսքով ստացվել են նաև նոր և ավանդական եղանակներում առկա օժանդակ ֆունկցիաների միջև երկկողմանի կապերը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Ցույց է տրվել, որ ակտիվ գալակտիկաների սպեկտրներում դիտվող [CII] 158 մկմ առաքման գծի լայնության համար (կմ/վ) ճառագայթող միջավայրում հավանաբար արդարացված է տուրբուլենտ արագության խորանարդի և շառավղի հարաբերության օրենքն այսպես կոչված Կոլմոգորովի կասկադային պրոցեսում փոխանցվող տուրբուլենտ էներգիայի չափաբաժնի համար: Տուրբուլենտ արագության համար ընտրվել են մինչև 600 կմ/վ ցույց տվող գալակտիկաները (որոշված գծի լայնությամբ): Քննարկվել են ճառագայթող միջավայրի տուրբուլենտ շարժման հնարավոր պատճառները: Կասկադային պրոցեսով տուրբուլենտ էներգիան փոխանցվում է ավելի փոքր չափեր ունեցող մրրիկներին, ի վերջո գրգռելով [CII] 158 մկմ առաքման գիծը, ճառագայթվում է, և առաքված էներգիայի հզորությունը նույն կարգի է, ինչ-որ հաշվարկված տուրբուլենտ էներգիայի հզորությունը, նաև դիտվող, որը պարզ երևում է բերված գրաֆիկներից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Եղիկյան):

Ուսումնասիրվել է բաբախիչների տարբեր դասերի եռաչափ բաշխումը Գալակտիկայում՝ օգտագործելով ավելի քան 3800 օբեկտի տվյալներ: Առանձին ուշադրության են արժանացել միլիվայրկյանանոց և սովորական ռադիոբաբախիչների բաշխումները, ինչպես նաև այն բաբախիչների բաշխումները, որոնք միաժամանակ GRS (gamma ray sources) և ռենտգենյան աղբյուրներ են: Առանձնացվել և մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկվել բաբախիչների 2 խումբ, որոնց բաշխումները Գալակտիկայի հարթության նկատմամբ խիստ տարբերվում են նույն դասի բաբախիչների մեծամասնության բաշխումից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Անդրեասյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ciclotron 18/18 ցիկլատրոնի պրոտոնային փնջով ճառագայթվել են 118 Sn-ի և 124Sn-ի հարստացված թիրախները: Հաշվարկվել են 124Sn(p,n)124Sb, 124Sn(p,pn)123mSn, 124Sn(p,3n)122Sb, 118Sn(p,2n)117Sb, 118Sn(p,n)118mSb, 118Sn(p,α)115mIn և 118Sn(p,pn)117mSn ռեակցիաների կտրվածքները: Այս փորձարարական արժեքները համեմատվել են TENDL-2021, TENDL-2023, JENDL-5 տեսական հաշվարկների և գրականության մեջ առկա այլ հեղինակների փորձարարական արդյունքների հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Բախշիյան):

Ուսումնասիրվել են ընդհանուր սկայլար-թենզորային տեսությունները (D+1) չափանի տարածաժամանակում: Դիտարկվել են ֆիզիկական տարբեր բնութագրիչների միջև առնչությունները Յորդանի և Այնշտայնի ներկայացումներում: Քննարկել են սկայլար դաշտի էֆեկտիվ պոտենցիալների հատկություններն ըստ Այնշտայնի ներկայացման (ղեկ.՝ թղթ. անդ. Ռ.Ավագյան):

Տեսականորեն հետազոտվել է «դիսպերսիվ» դիէլեկտրիկ նյութից պատրաստված գնդի առանցքով շարժվող լիցքավորված մասնիկի ճառագայթման սպեկտրալ-անկյունային բաշխումը: Ցույց է տրվել, որ գնդի նյութի դիէլեկտրիկ թափանցելիության հաճախությունից որոշակի կախվածությունների դեպքում սահմանների «ռեզոնանսային» ազդեցությունը մասնիկի ճառագայթման վրա կարող է դիտվել ոչ թե սպեկտրի նեղ տիրույթներում (ինչպես դիտվում է, երբ հաշվի չի առնվում դիսպերսիան), այլ հաճախությունների բավական լայն տիրույթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Խաչատրյան):

Հետազոտվել է 0851+20 քվազարի շրջակա տարածքը տարբեր հաճախային տիրույթներում: Այդ տարածքում քվազարների բաշխման վերլուծությունը հաստատել է, որ քվազարների բաշխումը լավ ցուցանիշ է տիեզերքի անհամասեռություններն ուսումնասիրելու համար: Այս դեպքում z=2.2–3.2 կարմիր շեղումներին համապատասխանող հեռավորությունների վրա դիտվել է քվազարների զգալի պակաս, ինչն անուղղակիորեն հաստատում է տիեզերքի անհամասեռությունը մեծ մասշտաբներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Հովհաննիսյան):

Տեսականորեն հետազոտվել է լույսի ոչ գծային կլանման երևույթը տիտանիումի կարբիդի ($Ti_3C_2T_x$) կողմից հիմնված նյութի գոտիային կառուցվածքի վրա: Անհրաժեշտ ֆիզիկական պարամետրերի արժեքները վերցվել են փորձարարական աշխատանքներից: Թվային հաշվարկների արդյունքները բավականաչափ լավ համընկնում են ստացված փորձնական տվյալների հետ (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մելիքյան):

Ուսումնասիրվել են ակուստիկ ալիքների հաճախությունների 20–50 կՀց տիրույթում ակուստոպլազմային պարպման պարամետրերի որոշ առանձնահատկություններ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Չիլինգարյան):

Փորձնականորեն ուսումնասիրվել են տարբեր կերամիկական նյութերի դիէլեկտրիկ հատկությունները: Մասնավորապես ցույց է տրվել, որ CaCu3Ti4O12-ում Ca2+ իոնի փոխարինումը Na+, Bi3+ և Na+ ու Bi3+ իոնների համադրությամբ առաջացնում է ուսումնասիրվող նյութերի դիէլեկտրիկ հատկությունների էական փոփոխություն: Հատկանշական է, որ Bi պարունակող նյութերի դիէլեկտրիկ հաստատունի արժեքների զգալի փոփոխությունները 100 մՎ-ից մինչև 1 Վ լարման տիրույթում ենթադրում են դրանց հնարավոր օգտագործումը որպես զգայուն վարիկապներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ արտաքին ջերմային աղբյուրները կարող են առաջացնել դիպոլ-դոմենային բջիջներ (ԴԴԲ), որոնք որոշակի ջերմաստիճանային միջակայքում ունեն անոմալ վիճակ (դիէլեկտրիկ հաստատունի բացասական արժեքներով): Բացի այդ, պարզվել է, որ ռեզոնանսային երևույթները մեծ դեր ունեն ուսումնասիրված նյութերում կայուն անոմալ վիճակների հայտնաբերման գործում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Արամյան):

Ուսումնասիրվել են շերտավոր և ամինոթթուների խառնուկների առկայությամբ, ինչպես նաև փուլային սինխրոնիզմի ուղղությամբ աճեցված լիթիումի յոդատի միաբյուրեղների ֆիզիկաքիմիական հատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Հետազոտվել են տարբեր ամինոթթուների մասնակցությամբ զանազան թթուների հետ նոր աղեր ստանալու հնարավորությունները: Միակողմանի աճեցվել է մեր կողմից ստացված դիմեթիլգլիցինիում մալեատ մալեինաթթու բյուրեղը, իրականացվել են դիէլեկտրական չափումներ՝ հայտնաբերելով նրանում սեգնետոէլեկտրականություն (ղեկ.՝ ք.գ.թ. Վ.Ղազարյան):

Ստացվել են լիզինի, տրիպտոֆանի և ցիտուլինի նոր աղեր, ուսումնասիրվել են նրանց ֆիզիկաքիմիական հատկությունները և հայտնաբերվել է, որ նրանք ունեն ոչ գծային դիէլեկտրիկ հատկություններ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյան):

Ցույց է տրվել, որ մոլեկուլների բարձր շարժունակությունը, որը տարածվում է LC→Crystal անցման կետից շատ ավելի հեռու, պայմանավորված է բաղադրիչների մոլեկուլների կառուցվածքային առանձնահատկություններով, որոնք մեծացնում են համակարգի բևեռականությունը և փոխում մոլեկուլների պտտական շարժման ակտիվացման էներգիան (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Բեժանովա):

Եռաչափ տպագրված տարբեր նմուշների համակարգչային տոմոգրաֆիկ պատկերների մոդելավորման համար առաջարկվել է ալգորիթմ, որը թույլ է տալիս համեմատել մոդելավորված և իրական համակարգչային տոմոգրաֆիկ փորձերի արդյունքները: Առաջարկված ալգորիթմը կարող է օգտակար լինել համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտությունների ընթացքում իրական 3D տպագրված նմուշների անճշտությունների վերլուծության համար և տարբերակել նմուշի անճշտությունները նմուշների թվային մոդելից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

ԳՀց-ՏՀց ճառագայթման տիրույթում մշակված և հավաքված Մախ-Զենդերի սխեմայով աշխատող ինտերֆերոմետրով առաջարկվել է նյութերի բեկման ցուցիչների սուբտերահերցային տիրույթում որոշման մեթոդ, որը հիմնված է ֆազային տեղաշարժի վրա: Մասնավորապես որոշվել են սեպաձև և տարբեր հաստությամբ հարթ զուգահեռ տեֆլոնե թիթեղների բեկման ցուցիչները 300 ԳՀց ալիքի երկարության համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Մարգարյան):

Բոլցմանի և Ֆերմի-Դիրակի վիճակագրությունների շրջանակում հետազոտվել են CdSe նանոթիթեղում և գլանային նանոշերտում տեղայնացված, թույլ փոխազդող էլեկտրոնային գազի ջերմադինամիկական հատկությունները: Մասնավորապես ցույց է տրվել, որ բարձր ջերմաստիճանային տիրույթում նման գազերի ջերմունակությունը նվազում է նանոթիթեղի երկրաչափական չափերը մեծացնելուն զուգընթաց:

Ասիմետրիկ, ուժեղ սեղմված էլիպսարդային քվանտային կետում հետազոտվել են զույգ-փոխազդող էլեկտրոնային գազի ներգոտիական անցումները երկարալիքային ազդեցության տակ: Ցույց է տրվել, որ շնորհիվ յուրօրինակ երկրաչափության նման համակարգերում կարող են իրագործվել մեկ-մասնիկային անցումներ: Մոշինսկու մոդելի շրջանակում հետազոտվել է այդ անցումների բնույթը, որոշվել են կլանման ռեզոնանսային հաճախությունները:

Բրգաձև քվանտային կետում հետազոտվել են ներգոտիական և միջգոտիական օպտիկական անցումները: Ադիաբատական մոտավորության շրջանակում անալիտիկորեն հաշվարկվել են համակարգի էներգիական սպեկտրն ու ալիքային ֆունկցիաները: Ուսումնասիրվել են երկրորդ (եռամակարդակ համակարգի համար) և երրորդ (քառամակարդակ համակարգի համար) հարմոնիկաների գեներացման ջերմաստիճանային և երկրաչափական կախվածությունները դիտարկվող համակարգում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սարգսյան):

Հետազոտվել է էքսիտոնային դիսոցացման հավանականությունը՝ պայմանավորված արտաքին էլեկտրական դաշտի մեծությամբ, որոշվել են դիսոցացման հիմնական մեխանիզմներն ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ էլեկտրական դաշտերի տիրույթներում: Դաշտի՝ սահմանայինից փոքր արժեքների համար, դիտարկվել են էքսիտոնի ճառագայթային դիսոցացման ժամանակները և բերվել են էքսիտոնի թունելավորման արդյունքում ստացված իոնիզացիայի ժամանակի հաշվարկները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հարությունյան):

Մոլեկուլային-դինամիկ ab-initio մոդելավորման միջոցով հետազոտվել է դոֆամինի կապումը poly(A)/poly(U) կոմպլեքսի հետ, որը կախված է նրա կոնցենտրացիայից: Հաստատվել է, որ դոֆամինի կոնցենտրացիայի աճը հանգեցնում է poly(A)/poly(U) կոմպլեքսի ավելի խիտ դասավորման, որտեղ դոֆամինի մոլեկուլների կեսից ավելին ուժեղ կապվում են միմյանց հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ե.Մամասախլիսով):

Տիտանի, բարիումի, սեզիումի և ցերիումի տարրերի միացություններ պարունակող խառնուրդներից սինթեզվել են նոր միջավայրեր: Ուսումնասիրվել են սինթեզված միջավայրերի ֆիզիկական ու քիմիական բնութագրերը, մասնավորապես հիդրոսկոպությունը և դելտա էլեկտրոնների ծնման կտրվածքը տարբեր ալիքի երկարության իոնացնող ճառագայթների դեպքում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Կատարվել են ՀՀ կարևորագույն օբյեկտների հակասեյսմիկ նախնական պաշպանության և հանրային ահազանգման ինտեգրված տարածքային համակարգի ստեղծման հնարավորության և անհրաժեշտության ուսումնասիրման հետազոտություններ: Հիմնավորվել է նման համակարգի մշակման և ներդրման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: ՀՀ տարածքի առանձնահատկությունների, սեյսմիկ աղբյուրների ու սեյսմակայանների բաշխվածության և առկա համակարգերի վերլուծությամբ փաստվել է, որ անհրաժեշտ է մշակել համակցված հիբրիդային տեղայնացված սկզբունքներով ու ալգորիթմով գործող արդյունավետ համակարգ:

Հիմնավորվել է, որ ավտոմատ էլեկտրագրաֆիկ լուսաճառագայթային օսցիլոգրաֆները զերծ են անալոգային գրիչագրանցիչների, լուսաճառագայթային օսցիլոգրաֆների և էլեկտրագրաֆիկ ուղղակի գրանցիչների թերություններից և համատեղում են նրանց

առավելությունները: Մշակվել են նոր անալոգային տեսանելի էլեկտրոգրաֆիկ լուսաճառագայթային գրանցիչների հիմնական սկզբունքները և կառուցվածքը, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել սեյսմաակուստիկ ազդանշանների պտուտակային փոմամբ անընդհատ անալոգային գրանցում և սովորական թղթի վրա տեսանելի կադրերի թողարկում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Մխիթարյան):

Հետազոտվել է համասեռ միջավայրում գտնվող գլանաձև ալիքատարի առանցքին զուգահեռ շարժվող օղակաձև փնջի ճառագայթումը: Հաշվարկվել են էլեկտրամագնիսական դաշտը բնութագրող մեծությունները գլանի ներսում և դրսում՝ օգտագործելով Գրինի ֆունկցիաների մեթոդը: Ցույց է տրվել, որ որոշակի պայմաններում հնարավոր է մակերևութային պոլարիտոնների ճառագայթում, նաև սպեկտրալ բաշխման մեջ բարձր պիկերի առկայություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սահարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտվել են տեֆլոնից պատրաստված, սնամեջ գլանաձև թիրախի առանցքով շարժվող, 3.6 ՄէՎ էներգիայով էլեկտրոնային թանձրուկների և թանձրուկների զույգի կոհերենտ ճառագայթման սպեկտրալ և անկյունային բաշխումները: Փորձերը կատարվել են CANDLE գիտական կենտրոնի AREAL լաբորատորիայի գծային արագացուցիչի վրա: Ստացված արդյունքները հաստատում են տեսական գնահատականները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ. Գրիգորյան):

Սինթեզվել են զանազան ամինոթթուների մետաղիալոգենիդներ և պոլիյոդիդներ՝ նախնական նույնականացնելով դրանք ինֆրակարմիր և ռամանյան սպեկտրների միջոցով: Իրականացվել է դրանց բյուրեղային կառուցվածքի որոշում ռենտգեն կառուցվածքային անալիզի միջոցով: Գրանցվել են դրանց դիֆուզ անդրադարձման սպեկտրները ՈւՄ-տեսանելի տիրույթում և անուղղակիորեն գնահատվել են արգելված գոտու արժեքները՝ համեմատելով նաև հաշվարկային մեթոդով ստացված արժեքների հետ: Ստացվել են հալոգենաբիսմութատների պարզ աղեր և հալոգենաբիսմութատներ միաժամանակ 2 ամինոթթուների մասնակցությամբ: Սինթեզվել են հալոգենաբիսմութատների տարանիոն խառը աղեր, որոնք ներառում են նաև քլորիդ կամ յոդիդ անիոն, ստացվել են նաև գլիցինի, սարկոզինի, դիմեթիլգլիցինի, բետաինի, բետա-ալանինի մի շարք հալոգենանագատներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Հետազոտվել է համասեռ միջավայրում գտնվող դիէլեկտրիկ գնդի շուրջը կոաքսիալ շարժվող օղակաձև փնջի ճառագայթումը: Գրինի ֆունկցիաների մեթոդի կիրառմամբ արտածվել են էլեկտրամագնիսական դաշտը բնութագրող մեծությունները, ինչպես նաև ճառագայթման ինտենսիվությունը որոշող բանաձևերը, որոնք կիրառվել են գնդի ներսում և դրսում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պարազյան):

Աճեցվել են α-LiIO3-ի միաբյուրեղներ L-լիզին, L-ցիտրուլին, L-պրոլին, L-վալին և L-ցիստեին ամինոթթուների խառնուկներով: Հաշվի առնելով տեխնոլոգիական ոլորտում շերտավոր բյուրեղների լայն կիրառությունը՝ աճեցվել են նաև α-LiIO3-ի շերտավոր միաբյուրեղներ՝ մեր կողմից արտոնագրված մեթոդի կիրառմամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Աճեցվել են լիզինի, տրիպտոֆանի, ցիտրուլինի, արգինինի, նիտրոարգինինի և այլ ամինոթթուների ու մի շարք թթուների փոխազդեցության արդյունքում առաջացած աղեր, գրանցվել են դրանց ԻԿ սպեկտրները, որոնցից L-NNA.HClO4, L-NNA.HBF4, L-Arg.H2SO4 L-Arg.H2SO4.H2O, L-Lys. 2SSA.3H2O, L-Arg.2SSA.H2O և L-NNA.SSA միաբյուրեղների

բյուրեղային կառուցվածքը որոշվել է ռենտգենակառուցվածքային անալիզի մեթոդով: Բյուրեղների համար կատարվել են DFT հաշվարկներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյան):

Կատարվել են «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»-ի՝ Հայաստանի Ներքին Նավեր և Թեյշեբաինիի դամբարանադաշտերից պեղված 2 զարդանմուշի ռենտգենյան միկրոտոմոգրաֆիական և սպեկտրասկոպիական հետազոտություններ՝ նմուշների քիմիական բաղադրությունը և ներքին կառուցվածքը որոշելու նպատակով: Հետազոտությունները թույլ են տվել պատկերացում կազմել արտեֆակտների պատրաստման եղանակների մասին: Մասնավորապես բրոնզե զարդանմուշից ստացված տոմոգրաֆիական հատույթներում դիտվել է շերտավոր կառուցվածք, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ զարդանմուշը պատրաստվել է կոման եղանակով: Այս մեթոդը սովորաբար կիրառվել է հին Հայաստանի մասնագիտացված արհեստանոցներում մետաղագործության բարձրորակ օրինակներ ստանալու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Մարգարյան):

Սթիրլինգի սառնարանի պրոտոտիպի պատրաստման նպատակով պատրաստվել են սառնարանի գծային կոմպրեսորի և սառեցնող գլխիկի բոլոր աշխատանքային գծագրերը, 3D տպիչով՝ կոմպրեսորին անհրաժեշտ ոչ մետաղական դետալները, հավաքվել են կոմպրեսորի և սառեցնող գլխիկի պրոտոտիպի նմուշները, պատրաստվել է սառնարանի նախնական օրինակ և իրականացվում են փորձարկման աշխատանքներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Արամյան):

Ստանդարտ և մոդիֆիկացված (խառնուրդներով) պլաստիկների միջոցով պատրաստվել և ուսումնասիրվել են ոսկրային հյուսվածքների մոդելներ, չափվել են 3D տպագրված նմուշների Հաունսֆիլդի (HU) միավորները: Ցույց է տրվել, որ մարմարով լցոնված պոլիմերային նյութերն ունեն մեծ ներուժ ոսկրային հյուսվածքների մոդելավորման համար: Առաջարկվել է տպագրված առարկաներում տարբեր խառնուրդների իրական լցոնումը չափելու նոր եղանակ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Յու.Չերեպեննիկով):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Նահապետյան Ա.Ա., Մանվելյան Մ.Կ., Սարգսյան Հ.Ա., Ներխուժելով արհեստական ատոմների աշխարհ, «Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում», Ե., «Գիտություն» հրատ., 2025, 245 էջ:
2. Atanesyan A.K., Vasilyan M.V., IV International Scientific School for Radiation Physics and Related Applications named after Academician Alpic Mkrtchyan, June 16 – 21, 2025 Yerevan – Gyumri, Armenia, Y., Book of Abstracts, Publisher “IAPP NAS RA”, 2025, 118p., ISBN 978-9939-1-2052-2.
3. Atanesyan A.K., Vasilyan M.V., IX International Conference on Electron, Positron, Neutron and X–ray Scattering under the External Influences, 19 – 26 October 2025, Yerevan – Meghri, Armenia, Book of Abstracts, Publisher “IAPP NAS RA”, 2025, 72p., ISBN 978-9939-1-2167-3.
4. Gevorkyan A.S., Irreversibility of a Classical Three-Body Problem: Complexity of a LowDimensional System, “Analysis, PDEs, and Applications, Trends in Mathematics”, 13, 2025, 29 pp.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

5. Քոչարյան Վ.Ռ., Ռենտգենյան միկրոշերտագրություն և նրա կիրառությունները, Ե., «Գիտության աշխարհում», N 1, 2025, էջ 40-49:
6. Abrahamyan A.S., Chilingaryan R.Y., Sahakyan K.G., Sargsyan M.H., Dispersion of acoustic waves in xenon acoustoplasma in the region of non-axial acoustic modes. “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.60, 2025, pp.274-279.

7. Avetisyan A., Mkrtchyan L., Khosrovyan S., Aloyan L., Investigating the impact of metalloporphyrins on DNA damage during electron beam irradiation, “NIM A”, v.1074, 2025, 170328. https://doi.org/10.1016/j.nima.2025.170328
8. Aramyan K., Savvidy G., Massless high-spin representations of extended Poincare algebra, “Armenian Journal of Mathematics”, v.17, 2025, p.1-16. https://orcid.org/0000-0003-0699-570X (unauthenticated)
9. Baghdasaryan D.A., Harutyunyan V.A., Sarkisyan H.A., Petrosyan L.S., Shahbazyan T.V., Influence of an in-plane uniform electric field on 2D exciton states in CdSe nanoplatelets, "Nanoscale Advances", v.7, 2025, pp.5238-5249. https://doi.org/10.1039/d5na00378
10. Baghdasaryan I., Prospects for using waste glass in concrete, “German International Journal of Modern Science”, v.109, 2025, pp. 4-7.
11. Bezhanova L.S., Vasilyan M.S., Atanesyan A.K., EPR study of new dynamic processes in liquid and frozen states of the oriented liquid crystal systems, "NIM A", v.1075, 170436.
https://doi.org/10.1016/j.nima.2025.170436
12. Bushmina E., Alexeev S., Baldin A., Bleko V., Bulavskaya A., Karataev P., Kidanova E., Kishin I., Klenin A., Kocharyan V., Observation of Cherenkov diffraction radiation from 3D printed plastic targets, “JINST”, v.20(07), 2025, P07026. 10.1088/1748-0221/20/07/P07026
13. Cherepennikov Yu., Margaryan V., Shahverdyan A., Kocharyan V., Trouni K., Mkrtchyan L., Simonyan H., X-ray tomography and spectroscopy applications for revealing ancient metalworking techniques, “NIM A”, v.1075, 2025, 170359. https://doi.org/10.1016/j.nima.2025.170359
14. Cherepennikov Yu.M., Darwish E.M., Fix A.I., Gauzshtein V.V., Levchuk M.I., Loginov A.Yu., Nikolenko D.M., Rachek I.A., Shestakov Yu.V., Shevelev M.V., Toporkov D.K., Yurchenko A.V., Zevakov S.A., Pion photoproduction on a deuteron at the VEPP-3 electron beam, “NIM A”, v.1074, 2025, 170316. https://doi.org/10.1016/j.nima.2025.170316
15. Drmeyan H.R., Mkhitaryan S.A., Mnatsakanyan A.R., Mkrtchyan A.H., A new method for increasing the resolution of diffraction patterns formed in X-ray single-crystal systems, “NIM A”, v.1073, 2025, 170256. https://doi.org/10.1016/j.nima.2025.170256
16. Drmeyan H.R., Mkhitaryan S.A., Mkrtchyan A.H., A new technical solution to the problem of increasing the resolution of X-ray diffraction methods, “Journal of Applied Crystallography”, v.58(1), 2025, pp.71-75. https://doi.org/10.1107/S1600576724011130
17. Drmeyan H.R., Mkhitaryan S.A., Aghabekyan V.N., Margaryan H.G., Minasyan A.M., Noreyan S.N., On one method of increasing the resolution of X-ray diffraction patterns, “Journal of Surface Investigation”, v.19(5), 2025, pp.1326-1333.
18. Grigoryan L.Sh., Khachatryan H.F., Mkrtchyan A.H., Dabagov S.B., Saharian A.A., Harutyunyan H.P., Mnatsakanyan A.R., Margaryan G.V., Kotanjyan V.Kh., Radiation from a charged particle rotating around a ball of a dispersive matter, “NIM A”, v.1076, 2025, 170462. https://doi.org/10.1016/j.nima.2025.170462
19. Grigoryan L.Sh., Potylitsyn A.P., Karataev P.V., Dabagov S.B., Kubankin A.S., Kidanova E.Yu., Antonov V.N., Vukolov A.V., Kishin I.A., Cherepennikov Yu.M., Shevelev M.V., Grigoryan B.A., Vardanyan A.S., Davtyan H.D., Kocharyan V.R., Saharian A.A., Khachatryan H.F., Margaryan V.V., Baghdasaryan D.E., Mkrtchyan A.H., Observation of coherent Cherenkov diffraction radiation modes in a long cylindrical Teflon radiator, “Radiation Physics and Chemistry”, 2025, 113435.
https://doi.org/10.1016/j.radphyschem.2025.113435
20. Grigoryan L.N., Petrosyan P.G., Muradyan A.A., Temperature–frequency dependence of dielectric properties of perlite-based nanocrystalline glass-ceramics, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.60(3), 2025, pp.361-366. DOI:10.54503/0002-3035-2025-60.3-430
21. Hakobyan N., Sotnyk I., Chortok Y., Khachatryan A., Mkrtchyan Z., Firyan, A., Anomic Trends in Business Ethics and Leadership Research in Changing Society, “Business Ethics and Leadership”, v.9(4), 2025, pp.163-179. https://doi.org/10.61093/bel.9(4).163-179.2025
22. Harutyunyan V.A., Exciton Stark shift in CdSe nanoplatelet, “Proceedings of the 10th World Congress on Recent Advances in Nanotechnology (RAN 2025)”, id ICNNFC 103 2025, (8 pages). DOI: 10.11159/icnnfc25.103
23. Hovhannisyan M.A., Hovhannisyan V.A., Mkhitaryan S.A., Mahtesyan L.A., Mahtessian A.P., Studies of the characteristics of the extended galaxy 4C 39.04 and the distribution of extragalactic sources around it, “Communications of BAO”, v.72, 2025, pp. 84-89. doi: https://doi.org/10.52526/25792776-25.72.1-84

24. Hovhannisyan M.A., Mkhitaryan S.A., Mahtesyan L.A., Karapetyan R.A., Mahtessian A.P., Completeness of the number of quasars surrounding quasar 0851+20 as a sample for detecting cosmic voids, “NIM A”, v.1073, 2025, 170264. https://doi.org/10.1016/j.nima.2025.170264
25. Hovhannisyan G.H., Bakhshiyan T.M., Tukharyan G., Gharibyan N., Martirosyan G.V., Proton-induced reactions on enriched 120-Sn: comprehensive analyses via stacked-foil target technique, "The European Physical Journal Special Topics", 2025, https://doi.org/10.1140/epjs/s11734-025-01740-7
26. Karapetian G.S., Mahtessian A.P., Byzalov L.E., Hovhannisyan M.A., Mahtessian L.A., Evidence of Galaxy Expansion from Globular Clusters, “International Journal of Astronomy and Astrophysics”, v.15, 2025, pp.121-138. DOI: 10.4236/ijaa.2025.152009
27. Karataev P., Ali M., Fedorov K., Kubankin A., Margaryan V., Oleinik A., Shchagin A., Quasi-continuous X-ray generation in LiTaO3-based pyroelectric accelerator driven by periodically varying temperature, “Scientific Reports”, v.15(1), 2025, 31209. DOI: 10.1038/s41598-025-15436-4
28. Khachatrian A.Zh., Harutyunyan S.H., Khachikyan L.E., Muradyan T.R., Harutyunyan G.A., Aghabekyan V.N., The plane wave diffraction on a flat area from randomly orientated rectangular apertures, "Results in Physics", v.75, 2025, 108348. DOI: 10.2139/ssrn.5172789
29. Khachatryan K., Mkrtchyan M., Hayrapetyan D., Baskoutas D.S., Garoufalis C., Duque C., Sarkisyan H., Temperature influence on interband and intraband optical transitions in pyramidal quantum dot, "The European Physical Journal Plus", v.140, 2025, 909. https://doi.org/10.1140/epjp/s13360-025-06835-7
30. Khachvankyan D.K., Meliksetyan A.A., Nalbandyan V.V., Response Latencies of Visually Sensitive Neurons in Area 21a of the Cortex, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.59(4), 2025. https://doi.org/10.1134/S1068337225700173
31. Kidanova E., Kishin I., Karataev P., Alekseev S., Baldin A., Bleko V., Bushmina E., Klenin A., Kocharyan V., Kubankin A., Margaryan V., Mitrofanov S., Nozdrin M., Semin V., Stuchebrov S., The Technique of Measuring Coherent Radiation on the MT-25 Microtron, “Physics of Particles and Nuclei Letters”, v.22(5), 2025, pp.1086-1089. https://doi.org/10.1134/S154747712570117
32. Kocharyan V.R., Kube G., Strokov S., Noreyan S.N., Khachatryan H.F., Margaryan V.V., Cherepennikov Y.M., Potylitsyn A.P., Observation of X-ray transition radiation from a relativistic electron passing a stack of plates, “NIM A”, v.1076, 2025, 170418. https://doi.org/10.1016/j.nima.2025.170418
33. Kostanyan A.K., Sargsyan K.A., Karakhanyan G.S., Muradyan A.A., Avagyan A.N., Harutyunyan V.S., Solid-Phase Synthesis And Dielectric Properties Of Bazr(Bo3)2 Ceramics, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.60(3), 2025, pp.326-333. DOI:10.1134/S1068337225700665
34. Kostanyan A.K., Manukyan H.G., Sargsyan K.A., Karakhanyan G.S., Alexanyan H.A., Knyazyan N.B., Composite Material Based On Oxyfluoride Bariumboron-Aluminosilicate Glass And Al2o3for LTCC Technology, “Glass and Ceramics”, v. 82, 2025, pp.88-92. DOI:10.1007/s10717-025-00753-x
35. Li S.H., Pavlov S., Cherepennikov Yu., Glumac P., Zhuravlev M., Kurapov G., Bukharkin A., Remnev G., Estimation of the neutron yield generated by neutron source based on pulsed power proton accelerator in 7Li(p, n)7Be reaction, “NIM A”, v.1075, 2025, 170442. https://doi.org/10.1016/j.nima.2025.170442
36. Manvelyan M.K., Mkrtchyan M.A., Khachatryan, Sarkisyan H.A., Influence of dielectric confinement and size effect on nonlinear absorption in CdSe nanoplatelets, “Optics Communications”, v.589, 2025, 131882. https://doi.org/10.1016/j.optcom.2025.131882
37. Manvelyan M.K., Gharibyan B.K., Mkrtchyan M.A., Sarkisyan H.A., Diamagnetic susceptibility and binding energy of hydrogenic impurity in CdSe nanoplatelets: Effect of dielectric mismatch and size-quantization, "Journal of Physics and Chemistry of Solids", v.208, 2025, 113211. https://doi.org/10.1016/j.jpcs.2025.113211
38. Margaryan H., Mnatsakanyan A., Babayan I., Mirzoyan R., Drmeyan H., Study of X-ray multibeam diffraction moiré patterns, “Radiation Physics and Chemistry”, v.241, 2025, 113529. 10.1016/j.radphyschem.2025.113529
39. Margaryan V.V., Noreyan S.N., Kocharyan V.R., Cherepennikov Yu.M., Mesropyan M.H., Movsisyan A.E., Aghabekyan V.N., Mamyan A.M., Trouni K.G., Diffraction Absorption in a Quartz Single Crystal in the Presence of a Temperature Gradient, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.59(3), 2025, pp.332-336. DOI:10.1134/S1068337224700452
40. Margaryan N., Badalyan H., Ohanyan T., Sedrakyan S., Aleksanyan E., Badayan A., Manukyan A., Hovhannisyan A., Shahinyan A.T., Harutyunyan V., Marukyan H., Enhancement of infrared absorption of liquid-

phase exfoliated graphene by 15.5 MeV proton irradiation in ambient conditions, “Materials Letters”, v.399, 2025, 139035. https://doi.org/10.1016/j.matlet.2025.139035
41. Margaryan N., Aleksanyan E., Harutyunyan V., Hovhannisyan A., Margaryan N., Thermal Reduction and Fractal Analysis of Liquid Phase Exfoliated Graphene, “NIM A”, v.1075, 2025, 170407. https://doi.org/10.1016/j.nima.2025.170407
42. Minassian H., Melikyan A., Gonçalves M.R., Petrosyan P., Nonlinear light absorption in Ti3C2Tx MXene: a theoretical study, "RSC Advances", v.15(29), 2025, 23934. https://doi.org/10.1039/d5ra01751
43. Mkhitaryan S.A., Mkrtchyan A.H., Baiocchi V., Khachatryan H.F., Hovhannisyan M.A., Mnatsakanyan A.R., Antonyan A.P., Mkhitaryan K.S., Minasyan A.M., Drmeyan H.R., On the suitability of modernization and application of electrographic oscillographs for the continuous analog recording of seismic signals with their electronic scanning and periodic or triggered issuing of visible seismograms on ordinary paper, “NIM A”, v.1073, 2025, 170255. https://doi.org/10.1016/j.nima.2025.170255
44. Mkhitaryan S.A., Hovhannisyan M.A., Mnatsakanyan A.R., Mkhitaryan K.S., Sissakian V.K., Baiocchi V., Minasyan A.M., Mkrtchyan A.H., Drmeyan H.R., On the development and introduction of a territorial anti-seismic early warning and protection system in Armenia, “NIM A”, v.1074, 2025, 170317. DOI:10.1016/j.nima.2025.170317
45. Mkrtchyan Z.H., Musayelyan T., Mkrtchyan A.H., Panyan S., The Impact of International Scientific Conferences on Scientific Communities and Their Environment, “Katchar, Collection of Scientific Articles International Scientific-Educational Center NAS RA”, v.1, 2025, pp. 97-115.
46. Muradyan A.A., Aramyan A.R., Alexanyan H.A., Sargsyan N.H., Mkrtchyan L.S., Harutyunyan V.G., Towards the Emergence of a Special State with Negative Dielectric Constant in Dielectric Materials, “IEEE Transactions on Dielectrics and Electrical Insulation”, Early Access, 2025, 1-1, DOI:10.1109/TDEI.2025.3590690
47. Muradyan A.A., Aramyan A.R., Alexanyan H.A., Sargsyan N.H., Amiraghyan L.A., Mkrtchyan L.S., Harutyunyan V.G., Investigation of the dielectric properties of materials obtained by substituting the Ca2+ ion in the compound CaCu3Ti4O12 with Na+ and Bi3+ ions, “NIM A”, v.1075, 2025, 170452. https://doi.org/10.1016/j.nima.2025.170452
48. Nahapetyan A.A., Non-interacting electron gas thermodynamics in the strongly oblate asymmetric ellipsoidal InAs quantum dot, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.60, 2025, pp.56-61. https://doi.org/10.1134/S1068337225700367
49. Nahapetyan A.A., Electron energy states in a strongly oblate asymmetric ellipsoidal InAs quantum dot in the presence of an axial magnetic field, “Armenian Journal of Physics”, v.18, 2025, pp. 7-13.
50. Nahapetyan A.A., Tadevosyan L.A., Baghdasaryan D.A., Harutyunyan V.A., Exciton absorption and luminescence in CdSe nanoplatelets: the influence of uniform electric field, “Journal of Contemporary Physics”, v. 60, 2025, pp.187-194. 10.1134/S1068337225700537
51. Nahapetyan A.A., Mkrtchyan M.A., Mamasakhlisov Y.Sh., Vinnichenko M.Ya., Firsov D.A., Sarkisyan H.A., Few-particle gas in strongly oblate asymmetric ellipsoidal quantum dot, “NIM A”, v.1073, 2025, 170251. https://doi.org/10.1016/j.nima.2025.170251
52. Parazian V.V., Solution of the Klein-Gordon equation in external Yang-Mills gauge field, “International Journal of Modern Physics A”, v.40, 2025, 2550126. https://doi.org/10.48550/arXiv.2504.14953
53. Petrosyan A.M., Giester G., Tonoyan G.S., Ghazaryan V.V., Zatikyan A.L., Chilingaryan R.Yu., Margaryan A.A., Mkrtchyan A.H., Iodides and polyiodides of l-arginine, “J. Mol. Struct.”, v.1321, 2025, 139688. https://doi.org/10.1016/j.molstruc.2024.139688
54. Petrosyan A.M., Thamotharan S., Srinivasan B.R., Comments on “influence of procion red dye doping on the structural, dielectric and optical properties of diglycine phthalic acid single crystals for nonlinear optical applications”, “J. Mater. Sci.: Mater. Electron”, v.36, 2025, p.53. https://doi.org/10.1007/s10854-024-14134-7 .
55. Petrosyan A.M., Srinivasan B.R., On the Existence of Triglycine Acetate, Triglycine Phosphate, Triglycine Oxalate and Triglycine Formate, “Cryst. Res. Technol.”, v.60(6), 2025, 2400210. https://doi.org/10.1002/crat.202400210.
56. Petrosyan A.M., Giester G., Petrosyan M.S., Ghazaryan V.V., Zatikyan A.L., Preparation and characterization of l-cystinium(2+) bis-iodide monohydrate and l-cystinium(2+) bis-triiodide, “Struct. Chem.”, 2025, https://doi.org/10.1007/s11224-025-02495-6.

57. Petrosyan A.M., Giester G., Zatikyan A.L., Ghazaryan V.V., Bromo- and iodobismuthates of l-proline with a (A+···A+) type dimeric and a new type of tetrameric cations, “Struct. Chem.”, 2025. https://doi.org/10.1007/s11224-025-02570-y.
58. Poghosyan A.H., Mamasakhlisov Y.Sh., Parsadanyan M.A., Shahinyan M.A., Movsisyan Z.H., Vardevanyan P.O., Molecular simulation study of RNA/Dopamine complex dynamics at varying concentrations, “Scientific Reports”, v.15, 2025, 21379. DOI: 10.1038/s41598-025-06690-7
59. Saharian A.A., Chalyan G.V., Grigoryan L.S., Khachatryan H.F., KotanjyanV.K., Radiation of surface polaritons by an annular beam coaxially enclosing a cylindrical waveguide, “NIM A”, v.1076, 2025, 170408. https://doi.org/10.1016/j.nima.2025.170408
60. Saharian A.A., Harutyunyan G.H., Teryan H.K., Avagyan R.M., Effective potentials in general scalar-tensor theories of gravity, “Astrophysics”, v.68, 2025, p. 212–227. DOI: 10.1007/s10511-025-09870-5
61. Shchagin A., Kube G., Potylitsyn A., Strokov S., Doppler effect in vacuum, homogeneous, and periodical media in X-ray range, “NIM A”, v.1072, 2025, 170235. https://doi.org/10.1016/j.nima.2025.170235
62. Simonyan H., Margaryan V., Cherepennikov Yu, Shahverdyan A., Filatov N., Kocharyan V., Identification of technological methods of manufacturing bronze jewellery from the Teishebaini burial site (Armenia) by means of X-ray analysis, “The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences”, v. XLVIII-2/W9-2025, 2025, pp.257-262. https://doi.org/10.5194/isprs-archives-XLVIII-2-W9-2025-257-2025
63. Shahverdyan V., Margaryan V.V., Cherepennikov Yu.M., Trouni K.G., Noreyan S.N., Mamyan A.M., Mirzoyan R.K., Samsonyan H.H., Kocharyan V.R., An Approach to Applying CT Reconstruction Algorithms to Numerically Synthesized Objects for the Analysis of 3D-Printed Samples, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v.60(2), 2025, pp.232-237. 10.1134/S1068337225700562
64. Sissakian V.K., Ibrahim R., Ahmed S.A., Mkhitaryan S.A., The activity of the Khanaqin Fault, east of Iraq and west of Iran, as deduced from Neotectonic evidence and seismicity, “Journal of Asian Earth Sciences”, v.290, 2025, 106653. https://doi.org/10.1016/j.jseaes.2025.106653
65. Stuchebrov S., Kishin I., Alexeev S., Baldin A., Bleko V., Bulavskaya A., Bushmina E., Karataev P., Kidanova E., Klenin A., Kocharyan V., Kubankin A., Margaryan V., Miloichikova I., Mitrofanov S., Potylitsyn A., Semin V., Coherent Cherenkov diffraction radiation in super-radiant regime as a tool for longitudinal diagnostics, “Radiation Physics and Chemistry”, v.240, 2025, 113415. https://doi.org/10.1016/j.radphyschem.2025.113415
66. Szafrański M., Tylczyński Z., Ghazaryan V.V., Petrosyan A.M., Dimethylglycinium hydrogen maleate-maleic acid, a new all-organic ferroelectric with an incommensurate phase, “Scientific Reports”, v.15, 2025, 20607. https://doi.org/10.1038/s41598-025-07051-0.
67. Tadevosyan L.A., Ghaltaghchyan H.Ts., Harutyunyan V.A., Mamasakhlisov Y.Sh., Sarkisyan H.A., Thermodynamic parameters of the electron gas in CdSe nanoplatelets, “NIM A”, v.1073, 2025, 170274. https://doi.org/10.1016/j.nima.2025.170274
68. Tadevosyan L.A., Interband electroabsorption in CdSe nanoplatelets, "Armenian Journal of Physics", v.18, 2025, pp.1-6. DOI:10.54503/18291171-2025.18.1-1
69. Tadevosyan L.A., Ghaltaghchyan H.Ts., Mamasakhlisov Y.Sh., Sarkisyan H.A., Thermodynamic and magnetic properties of weakly interacting elec-tron gas localized in a CdSe cylindrical core-shell quantum dot, “Quantum Reports”, v.7, 2025, 13. https://doi.org/10.3390/quantum7010013
70. Tonoyan G.S. Vibrational Spectroscopic Analysis of Six New Hexafluorosilicate Salts Containing Different Amino Acids, “Spectroscopy”, 2025, https://doi.org/10.56530/spectroscopy.by7769z7.
71. Vukolov A., Uglov S., Gogolev A., Potylitsyn A., Naumenko G., Shkitov D., Cherepennikov Yu., Shevelev M., Microtron experimental facility at Tomsk Polytechnic University, “NIM A”, v.1077, 2025, 170532. https://doi.org/10.1016/j.nima.2025.170532

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

Ա.Պետրոսյանը, Վ.Ղազարյանը, Գ.Տոնոյանը արժանացել են ԳԱԱ մրցանակի Քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների հիմնարար հետազոտությունների բնագավառում:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Ներսեսյան
Էլեկտրոնային փոստ՝office@irphe.am
Կայքէջ՝ www.irphe.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Դիտարկվել է սալիկների շարքը հատող լիցքավորված մասնիկի ճառագայթումն օպտիկական տիրույթում: Ուսումնասիրվել են ինչպես անկարգ, այնպես էլ պարբերական շարքերը:Պարբերական ֆոտոնային բյուրեղի որոշակի տեսակի դեպքում Բրյուստերի անկյան տակ ճառագայթման ինտենսիվության դիտարկումը հայտնաբերում է ռելյատիվիստական մասնիկների անցումային ճառագայթման ուժեղ էներգետիկ կախվածություն:Առաջարկվում է այս հատուկ տիպի ֆոտոնային բյուրեղը կիրառել ռելյատիվիստական մասնիկների դետեկտորներում:Առաջարկվել է նոր տեսական մոտեցում հակաանդրադարձման երևույթի ուսումնասիրման համար, ինչը կարող է էական նշանակություն ունենալ արևային տարրերի էֆեկտիվության բարձրացման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Ցերնիկեի համակարգի դասական/քվանտային մեխանիկական մեկնաբանությունը հաստատել է դրա համարժեքությունը սֆերայի կամ պսևդոսֆերայի վրա գտնվող Հիգսի օսցիլատորի հետ: Ցույց է տրվել, որ դասական Ցերնիկեի համիլտոնյանի կեղծ մասը կարող է վերացվել կանոնիկ քվանտային նմանության ձևափոխության միջոցով, որը նույնացնում է համակարգը քվանտային Հիգսի օսցիլատորին:

Առաջակվել է երկչափ, N=2 գերկոնֆորմ մեխանիկայի պարզ մոդել «սպին-ուղեծիր» փոխազդեցության անդամով: Ցույց է տրվել, որ այն անդամի բացակայության դեպքում մոդելի սիմետրիան վերածվում է սկզբնական ազատ մասնիկի Գալիլեյան սիմետրիայի: Նաև առաջարկվել է այս համակարգի քվատերնիոնային համարժեքը, որը նկարագրում է քառաչափ, N=4 գերկոնֆորմ մեխանիկան: Մշակվել են գերկոնֆորմ մեխանիկաներ G 3 սիմետրիայով N=7 և N=8 դեպքերի համար, կառուցվել են գերլիցքեր և համիլտոնիաններ գերկոնֆորմ մեխանիկայի բոլոր տարբերակների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ներսեսյան):

Շարունակվել է էկրանավորված կուլոնյան փոխազդեցությունը նկարագրող կրկնակի Ֆուրիե-ինտեգրալի առանձնահատկությունների հետազոտումը կիսահաղորդչային բարակ թաղանթներում, չկարգավորված քվանտային փոսերում և էքսիտոնային հետերոկառուցվածքներում: Կոմպլեքս փոփոխականի հարթությունում բնութագրվել է ինտեգրալի ասիմպտոտիկ վարքը թույլ և չափավոր ուժգնության էկրանավորման տիրույթներում: Անալիտիկ հաշվարկների արդյունքները համեմատվել են համակարգչային մոդելավորման միջոցով ստացված տվյալների հետ: Ուսումնասիրվել է α–Ga_2O_3:Si/Al_2O_3 էպիտաքսիալ համակարգում եզրային դիսլոկացիաների խտության ազդեցությունն էլեկտրոնների շարժունակության վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Պատրաստվել են L և S հաճախականային տիրույթների ցածր աղմկային հզոր ուժեղարարների, ֆիլտրերի և գեներատորների լաբորատոր նմուշները: Դրանց օգտագործմամբ կատարվել են փորձեր հեղուկների (հիմնականում ջրի և գլիցերինի) ԳԲՀ ալիքների փոխազդեցությամբ գոլորշիացման ժամանակի նվազեցման նպատակով (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Ուսումնասիրվել են ազդանշանների հաճախականության բազմապատկիչների, մասնավորապես վարիկապների և ԳԲՀ դիոդների օգտագործմամբ հաճախականության հինգանգամյա կրկնապատկման (մինչև 3 ԳՀց) սխեմաները, մշակվել և իրականացվել են դրանց համալրման աշխատանքները (ղեկ.՝ Կ.Դադալյան):

Ուսումնասիրվել է Cd S բարակ թաղանթների ստեխիոմետրիկ կազմը սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի միջոցով: Ցույց է տրվել, որ կախված աճի ռեժիմներից՝ թաղանթներում Cd/S հարաբերությունը կարող է փոփոխվել 0.39 -ից մինև 0.7, և որ այդ թաղանթները բաղկացած են նանոմետրական չափերի սֆերիկ հատիկներից, որոնց տրամագիծն ընկած է 124 -132 նմ տիրույթում:Թաղանթների օպտիկական հատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք հեռանկարային են տարբեր օպտոէլեկտրոնային սարքերում, մասնավորապես, արեգակնային փոխակերպիչներում օգտագործելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսաելյան):

Ապակե և պոլիիմիդային ճկուն տակդիրների վրա լազերային փոշեցմամբ նստեցվել են մեկ կամ մի քանի ատոմական շերտեր պարունակող 2D-WS2 բյուրեղներ, հետազոտվել են դրանց օպտիկական սպեկտրերը: Ցույց է տրվել, որ նյութի 1 ատոմական շերտի նստեցման համար ընտրված տեխնոլոգիական պայմաններում բավարար է 5 իմպուլս: Կախված թաղանթի ատոմական շերտերի թվից՝ 2D-WS2-ի արգելված գոտու լայնությունը կարող է փոփոխվել 1.4 էՎ մինչև 2.1 էՎ տիրույթում, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել ճկուն, լայնաշերտ ֆոտոընդունիչներ սպեկտրի տեսանելի և ուլտրամանուշակագույն տիրույթներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Սկանավորող էլեկտրոնային և ատոմային ուժային մանրադիտակների կիրառմամբ ուսումնասիրվել է լազերի հզորության, ալիքի երկարության, տակդիրի ջերմաստիճանի և թիրախ-ենթաշերտ հեռավորության ազդեցությունը լազերային նստեցման մեթոդով ստացված CdTe բարակ թաղանթների ձևավորման վրա: Այս թաղանթները նախատեսված են որպես պատուհանային շերտեր InSb/CdTe հետերաանցումային ինֆրակարմիր ֆոտոդետեկտորների համար: Ռենտգենյան դիֆրակցիոն վերլուծությունը ցույց է տվել, որ 600 և 1200 նմ լազերային ճառագայթման ալիքի երկարությունների,ինչպես նաև 100–300 C^0 տակդիրի ջերմաստիճանների պայմաններում նստեցված CdTe բարակ թաղանթներն ունեն խորանարդային բյուրեղային կառուցվածք՝ տեսական արժեքին մոտ տարրական բջջի պարամետրերով: Պարզվել է, որ բազմաբյուրեղային CdTe թաղանթների հաստությունը տատանվում է 248–421 նմ միջակայքում՝ կախված լազերի հզորությունից և թիրախ-տակդիր հեռավորությանից (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Մշակվել և հետազոտվել է ինչպես ներքին այրման, այնպես էլ էլեկտրական շարժիչների աշխատանքի վերահսկման էլեկտրոնային համակարգը: Վերահսկումն իրականացվել է շարժիչը սնող հաղորդալարին հպված, բայց նրանից մեկուսացված, լարի կամ ֆոլգայի տեսք ունեցող ունակային տվիչում մակածված ինֆորմացիոն ազդանշանի մշակմամբ (օպերացիոն ուժեղարարի և վերծանող սարքի միջոցով) և կարող է ցուցադրվել մոնիտորի կամ այլ ցուցիչ սարքի վրա, այդ թվում՝ նաև հեռադիտման տարբերակով (ռադիոկապի միջոցով):

Մշակվել է փոքր հեռավորությունների վրա աշխատող (0.2 մ-4.0 մ) արագագործ հեռաչափ, որն աշխատում է հետևյալ սկզբունքով. հեռաչափից դեպի թիրախ արձակվում է ամպլիտուդամոդուլված ինֆրակարմիր ճառագայթման նեղ փունջ, որի միջոցով թիրախը հայտնաբերվում է գործնականում ակնթարթորեն, երբ այն հայտնվում է հեռաչափի ընդունիչի տեսադաշտում: Հեռաչափը նախատեսվում է որոշակի արագությունից մեծ արագությամբ շարժվող սարքերի վրա տեղադրման համար (ղեկ.՝ Կ.Միրզոյան):

Մշակվել և հետազոտվել է ԳԲՀ տիրույթի ռադիալ բևեռացմամբ էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման գերլայնաշերտ (2-40) ԳՀց անտենա: Այն կրկնակի կոնաձև ռուպոր է, որի չափերն ու ձևն ընտրված են այնպես, որ ապահովվի էլեկտրամագնիսական ալիքի սահուն անցումը 50 օհմանոց կոաքսիալ մալուխով դեպի եթեր (ազատ տարածություն): Չափվել են անտենայի անդրադարձման գործակիցը (1–40) ԳՀց հաճախությունների տիրույթում, ինչպես նաև բևեռացման բաշխումը ճառագայթվող փնջում և անտենայի ուղղվածության դիագրամը (9–11) ԳՀց հաճախությունների տիրույթում: Անդրադարձման գործակցի առավելագույն արժեքը հաճախությունների (2-40) ԳՀց տիրույթում չի գերազանցում 0.1 արժեքը, իսկ ուղղվածության դիագրամի լայնությունը 10 ԳՀց շրջակայքում կազմում է մոտ 15 % (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Շարունակվել են ուժեղ բիքրոմատիկ լազերային դաշտերի և էներգետիկ ճեղքով օժտված երկշերտ գրաֆենային նանոկառուցվածքի ոչգծային փոխազդեցության ընթացքում ալիքների բազմաֆոտոնային կոհերենտ միախառնման և տոպոլոգիական էֆեկտների տեսական հետազոտությունները: Ուսումնասիրվել է նաև բարձր հարմոնիկների գեներացիայի (ԲՀԳ) երևույթը Բերրի կորության և շեղման վեկտորի էֆեկտներով: Ցույց է տրվել, որ վերջիններս 2 կարգով մեծ են, քան միաշերտ կառուցվածքների արժեքները:

Ուսումնասիրվել է ԲՀԳ-ն հեքսագոնալ քվանտային գրաֆենային կետերի վրա՝ էլիպտիկ բևեռացված լազերային իմպուլսի դաշտում: Ստացված տեսական արդյունքները հաստատել են, որ ԲՀԳ ինտենսիվությունները և բևեռացումներն էապես կախված են լազերային դաշտի էլիպտիկության աստիճանից և քվանտային գրաֆենային կետերի սիմետրիայից: Ցույց է տրվել, որ վերջիններիս համապատասխան ընտրությամբ կարելի է կառավարել ԲՀԳ-ի կոհերենտ պրոցեսը, ինչպես նաև ցածրչափանի բյուրեղական նանոկառուցվածքների ոչ-գծային օպտիկական հատկությունները (ղեկ.՝ թղթ. անդ. Հ.Մաթևոսյան):

Հետազոտվել են անկայունությունները ռելյատիվիստիկ պլազմային համակարգերում: Դիտարկվել է հոսքային անկայունությունների մասնավոր դեպքը: Ցույց է տրվել,որ ցանկացած հոսքային անկայունություն ձևափոխվում է դիսիպատիվ անկայունության: Հայտնաբերվել է նախկինում անհայտ 2 դիսիպատիվ անկայունություն, որոնք պետք է հաշվի առնվեն պլազմային էլեկտրոնիկայի նոր սարքերի ստեղծման ժամանակ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Ռոստոմյան):

Մշակվել է թորած ջրում 20–70 նանոմետր չափերի արծաթի նանոմասնիկների ստացման մեթոդ: Լազերային աբլյացիան կատարվել է YAG:Nd լազերի ալիքի երկարության հիմնական հարմոնիկի (λ=1,06 μ) և երկրորդ հարմոնիկի (λ=0,53 μ) կիրառմամբ: Լազերի հիմնական հարմոնիկի օգնությամբ արծաթե թիրախից պոկվում են 200-1000 նմ չափերի մասնիկներ, որոնք հետագայում լազերի երկրորդ հարմոնիկի ազդեցության տակ տրոհվել են մինչև 20-70 նմ: Նաև մշակվել է ջրային լուծույթներում օրգանական նյութերի նանոմասնիկների ստացման մեթոդ կենսաբանական հետազոտությունների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել են փորձնական հետազոտություններ $CH_3NH_3PbCl_{3-x}I_x$ մետաղ-օրգանական պերովսկիտային թաղանթում էքսիտոնների կապի էներգիան որոշելու համար T= (300 – 77)K ջերմաստիճանային տիրույթում: Ցույց է տրվել, որ այն կազմում է ≈ 14 meV: Ուսումնասիրվել են նյութի բյուրեղային կառուցվածքի փոփոխությունները նշված ջերմաստիճանային տիրույթում և դիտվել է T= (160-140) K տիրույթում տետրագոնալ

կառուցվածքից անցում օրթոռոմբայինի: Ենթադրվում է ,որ փոքր էքսիտոնային կապի էներգիայով թաղանթների օգտագործումն արևային տարրերում կբերի նրանց էֆեկտիվության բարձրացման (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Կատարվել են լրիվ անօրգանական $CsPbBr_3$ բազմաբյուրեղական պերովսկիտային բարակ թաղանթների ռենտգենակառուցվածքային և մանրադիտակային հետազոտություններ: Ուսումնասիրվել է ջերմային թրծման ազդեցությունը նրանց փուլային կազմի, միկրոկառուցվածքի և մորֆոլոգիայի վրա: Վերլուծվել է թաղանթներում միջին հատիկների և բյուրեղիկների (ենթահատիկների) չափերի և բյուրեղային հյուսվածքավորման աստիճանի միջև կապի բնույթը տարբեր թրծման պայմաններում (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Асмарян Э.А., О Последней теореме Ферма. В книге “Итоги науки”, М., вып. 55, 2025, М.РАН, с. 3-10.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Ղուլյան Ա.Գ., Եզակյան Ն.Դ. Աղմկային ջերմաստիճանի չափման սխալների նվազեցման ռադիոաստղագիտական եղանակ, Ե., ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, N 1, 2025, էջ 22-29:
3. Шевчик П.В., Станчик А.В., Гременок В.Ф., Овсепян Б.Л., Хачатрян А.М., Петросян С.Г., Особенности морфологии поверхности тонких пленок CdTe, полученных методом импульсно-лазерного осаждения, мат. III межд. конф. «Фундаментальные и прикладные проблемы физики полупроводников, микро - и наноэлектроники»,Ташкент, 2025, с. 23–25.
4. Шевчик П.В., Станчик А.В., Гременок В.Ф., Овсепян Б.Л., Хачатрян А.М., Петросян С.Г., Жигулин Д.В., Исследование тонких пленок CdTe с помощью сканирующей электронной и атомно-силовой микроскопии, сб. докл. межд. научн. конф. «Актуальные проблемы физики твердого тела», Минск, 2025, с. 274–277.
5. Шевчик П.В., Станчик А.В., Гременок В.Ф., Овсепян Б.Л., Хачатрян А.М., Петросян С.Г., Влияние технологических условий на кристаллическую структуру тонких пленок CdTe, полученных методом импульсного лазерного осаждения, сб. докл. межд. научн. конф. “Актуальные проблемы физики твердого тела”, Минск, 2025, с. 278–281.
6. Шевчик П.В., Станчик А.В., Гременок В.Ф., Овсепян Б.Л., Хачатрян А.М., Петросян С.Г., Морфология и оптические свойства тонких пленок CdTe, полученных методом импульсного лазерного осаждения, Изв. Гомельского ГУ им. Ф.Скорины, Гомель, 2025, N 6 (153). с. 116-122.
7. V.Abgaryan, A.Nersessian and V.Yeghikyan, “Zernike system revisited: imaginary gauge and Higgs oscillator”, Modern Physics Letters A, Singapore, (2025), 2550222 DOI:10.1142/S0217 7323 255 02220
8. Gagik Ayvazyan, Harutiun Dashtoyan, Surik Khudaverdyan, Lenrik Matevosyan, Ashok Vaseashita. Temperature-Dependent Optical Absorption Study of Exciton Binding Energy in Organolead Halide Perovskites, IEEE Access, 2025, Vol.13, pp. 127142-127149, https://doi.org/:10.1109/ACCESS.2025.3589255
9. H.K. Avetissian, H.H. Matevosyan, and G.F. Mkrtchian, Berry curvature and shift vector effects at high-order wave mixing in biased bilayer graphene, Phys. Rev. B, 111 (4), 045415/12 (2025).
10. V. Gareyan, N. Margaryan and Zh. Gevorkian, Modern Theoretical Approach for Description of Antireflectivity, Physics of Particles and Nuclei, 2025, Vol. 56, N 6, pp. 1439–1443. DOI:10.1134/S1063779625700649
11. V.Gareyan and Zh.Gevorkian, Strong Energy Dependent Transition Radiation in a Photonic Crystal, ArXiv 2511.18863, 2025, 6 pages.
12. E.Ivanov, A.Nersessian and H.Shmavonyan.Complex counterpart of Smorodinsky – Winternitz and Rosochatius systems, Bulgarian Jornal of Physecs, 2025, N 1, pp. 146-152.
13. S.Krivonos and A.Nersessian, *"Note on supersymmetric mechanics with spin-orbit interaction,"* Physics of Particles and Nuclei Letters 22 (2025), N 6, pp. 1322-1327.

14. S.Krivonos and A.Nersessia. "*Two faces of N=7, 8 superconformal mechanics,"* Physical Review D 111 (2025) N 12, 125025.
15. S.Krivonos and A.Nersessian, "N=8 superconformal mechanics: Direct construction", Physics Letters B, 863 (2025), 139373.
16. L.A. Matevosyan, S.A. Petrosyan, V.P. Mkrtchyan, A.P. Ayvazyan, V.S. Arutyunyan. Investigation of the Structure and Morphology of CsPbBr3 films Deposited by Vacuum Thermal Evaporation.
17. Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), Vol. 60, 2025, pp. 202-209, https://doi.org/:10.2234/S1068337225700525
18. Thin Films of CdS Formed on a Polyimide Substrate by Chemical Bath Deposition Method / S. G. Petrosyan, A. S. Musayelyan, A. S. Tokmajyan, V. F. Gremenok, A. V. Stanchik, K. P. Buskis, O.V. Korolik // Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), 2025, V.60, N 2, pp. 210–221, https://doi.org/10.1134/S1068337225700549.
19. S.G. Petrosyan, A.M. Khachatryan, P.G. Petrosyan, Bilayer MoS2 phototransistor deposited on a flexible substrate, Semiconductor Physics, Quantum Electronics & Optoelectronics, 2025, Vol. 28, N 3, pp. 315-321, https://doi.org/10.15407/spqeo28.03.315 PACS 85.60.Dw
20. Eduard V. Rostomyan. Development of initial perturbation in plasma systems subject to flow instabilities. New types of dissipative flow instabilities. The European Physical Journal D 79(7), 2025, article number 86, DOI: 10.1140/epjd/s10053-025-01018-6

Հոդվածները հրապարակվել են «International Conference on Mickrowave & TH_2 Technologies,Wireless Communication and Optoelectronics» միջազգային գիտաժողովի զեկույցների ժողովածուում՝ « The Institution of Engineering and Technology (IET) Conference Proceedings» 2025, Ե., V.2024, Issue 36, 89 էջ:

21. Vigen R.Gareyan, Narek B.Margaryan, Zhyrair S.Gevorkian, Antireflectivity and diffuse scattering from rough surfaces, IET Conference Proceedings 2025, vol.2024(36),p.1-5. DOI:10.1049/icp.2025.0980.
22. Stepan G. Petrosyan, Ashot M. Khachatryan and Petik G. Petrosyan, "2D MoS2 phototransistor deposited on a flexible substrate, IET Conference Proceedings, 2025, Vol. 2024, Issue 36, pp. 30-33, https://doi.org/10.1049/icp.2025.0988.
23. Stepan G. Petrosyan, Ashot S. Musayelyan, Anna S.Tokmajyan,Valerii F. Gremenok, Olga V. Korolik, AlenaV. Stanchik, Konstantin P. Buskis, CdS thin films grown on polyimide plastic substrate by chemical bath deposition, IET Conference Proceedings, 2025, V. 2024, Issue 36, pp. 26-29, https://doi.org/10.1049/icp.2025.0986
24. H.Vardanyan, A. Hakhoumian, V. Mkhitaryan, "Application of Bessel beams for radio communication", pp. 6-10, https://doi.org/10.1049/icp.2025.0981
25. Gagik Ayvazyan, Harutyun Dashtoyan, Ferdinant Gasparyan, Surik Khudaverdyan, Lenrik Matevosyan, Experimental determination of the binding energy of excitons in organometallic $CH_3NH_3PbCl_3$ - xIx perovskite films obtained by dual source vacuum thermal evaporation, pp. 34-37, https://doi.org/10.1049/icp.2025.0989
26. Eduard Sivolenko, Arsen Hakhoumian, Naira Gasparyan, Mane Barseghyan, Hakob Babayan, "More accurate and effective monitoring of moving targets in complex environments using "spectral mask" for harmonic signatures using higher-ordered statistics". pp. 49-52, https://doi.org/10.1049/icp.0993
27. H.Haroyan, A.Stepanyan, A.Hakhoumian, "Beam scanning realization by a single electrically small antenna covered by magnetodielectric resonator", pp 53-56, https://doi.org/icp.2025.0994
28. Levon B.Hovakimian, "The "untakeable" integral in electronic thin film science: calculated?", pp. 61-62, https://doi.org/10.1049/icp.2025.0996
29. S.Martirosyan, J.E.Torikyan, "Some peculiarities of the Schmitt trigger, inverse problem", pp. 63-66, https://doi.org/10.1049/icp.2025.0997
30. Naira Gasparyan, Arsen Hakhoumian, Eduard Sivolenko, Mane Barseghyan, "SC-DSB signal as a probe signal for testing nonlinearity in electronic circuits", pp.75-78, https://doi.org/10.1049/icp.2025.1000
31. Hakop L. Babayan, Nubar G. Poghosya, Sargis T. Sargsyan, Tigran V. Zakaryan, "Moving target indication as a radar cross section rapid estimate", pp. 86-89, https://DOI.ORG/10.1049/ICP.2025.1003

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան
Էլեկտրոնային փոստ՝ icranet-armenia@icranet.org,
yerevan.secretariat@gmail.com

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

OT 081-ը պայծառ բլազար է, որը 2016թ. գտնվել է ակտիվության վիճակում: Այդ բռնկման ընթացքում աղբյուրն ուսումնասիրվել է ամբողջ էլեկտրամագնիսական սպեկտրում՝ ռադիոալիքներից մինչև գերբարձր էներգիայի գամմա ճառագայթներ, ներառյալ MAGIC և H.E.S.S. աստղադիտակների դիտումները: Վերջիններիս շնորհիվ այս աղբյուրից առաջին անգամ գրանցվել է 100 ԳէՎ-ից բարձր էներգիայի գամմա ճառագայթում: Գրանցված տվյալների մոդելավորումն իրականացվել է տարբեր տեսական մոդելների շրջանակում: Ցույց է տրվել, որ ճառագայթումը չի կարող բացատրվել ամենապարզ սցենարով, որի դեպքում ամբողջ ճառագայթումն առաջանում է մեկ տիրույթում, միայն էլեկտրոնների փոխազդեցությունների արդյունքում: Դրա համար անհրաժեշտ է նաև լրացուցիչ ճառագայթման բաղադրիչ, որը պայմանավորված է արտաքին ճառագայթային դաշտերի ֆոտոնների հետ փոխազդեցություններով: Ուսումնասիրվել են նաև ավելի բարդ սցենարներ, որոնց շրջանակում ճառագայթումը բացատրվում է էլեկտրոնների և պրոտոնների փոխազդեցություններով: Սակայն միայն պրոտոնների վրա հիմնված մոդելի դեպքում կպահանջվեր շիթի անհիրատեսորեն մեծ լուսատվություն:

B2 1811+31 բլազարը 2020թ. գտնվել է բարձր ակտիվության վիճակում և դիտարկվել է ամբողջ էլեկտրամագնիսական սպեկտրում՝ ռադիոալիքներից մինչև գերբարձր էներգիայի գամմա ճառագայթներ, ներառյալ MAGIC դիտակների դիտումները, որոնց արդյունքում այս աղբյուրից գրանցվել են գերբարձր էներգիայի ֆոտոններ: 2020թ. դիտարկումների ընթացքում ստացված տվյալների համադրումը վերջին 18 տարիների ընթացքում կուտակված տվյալների հետ հնարավորություն է տվել ուսումնասիրել աղբյուրի երկարաժամկետ ճառագայթման բնութագրերը և դրանք համեմատել նրա ցածր ակտիվության փուլերում գրանցված ճառագայթման հետ: Ցույց է տրվել, որ 2020թ. բռնկման ընթացքում սինքրոտրոնային ճառագայթման բաղադրիչի գագաթը տեղափոխվել է դեպի ավելի բարձր հաճախականություններ՝ հասնելով տվյալ դասի աղբյուրների համար բնորոշ միջակայքի վերին սահմանին: Դիտումները ցույց են տվել, որ գամմա տիրույթում ճառագայթումը փոփոխվում է ընդամենը մի քանի ժամվա ընթացքում, ինչը վկայում է, որ բռնկումն առաջացել է չափազանց կոմպակտ՝ մոտավորապես $6 \times 10^{14} \delta_D$սմ-ից փոքր չափերով տիրույթից:

2020թ. փետրվարին VER J0521+211 բլազարը գտնվել է հզոր բռնկման վիճակում, որն ուսումնասիրվել է MAGIC, ինչպես նաև այլ էներգետիկ տիրույթներում գործող դիտակներով: Բոլոր ալիքային տիրույթներում գրանցված տվյալների համադրումը հնարավորություն է տվել ուսումնասիրել աղբյուրի ճառագայթման մեխանիզմները և քննարկել տարբեր սցենարներ: Առաջին սցենարի դեպքում ճառագայթումն առաջացել է էլեկտրոնների փոխազդեցությունների արդյունքում՝ երկու առանձին տիրույթներում, իսկ երկրորդի դեպքում՝ մեկ միասնական շրջանում, որտեղ ներգրավված են ինչպես էլեկտրոնները, այնպես էլ պրոտոնները: Երկու մոտեցումների շրջանակում էլ հաջողվել է բավարար բացատրել գրանցված տվյալները: Երկրորդ մոդելը նաև կանխատեսում է նեյտրինոների ճառագայթում, որը սկզբունքորեն կարող է գրանցվել IceCube դիտակով:

Բլազարների ճառագայթումն ամբողջ էլեկտրամագնիսական սպեկտրում խիստ փոփոխական է, սակայն այդ բռնկումներն առաջացնող ֆիզիկական պրոցեսները դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն: 2023թ. դեկտեմբերին մոտակա և պայծառ Mrk 421 բլազարը գտնվել է բարձր ակտիվության վիճակում և ուսումնասիրվել է տարբեր էներգետիկ տիրույթներում գործող դիտակներով: Բացի այդ, առաջին անգամ բլազարի գամմա տիրույթում բռնկման ընթացքում IXPE արբանյակի միջոցով իրականացվել են ռենտգենյան ճառագայթման բևեռացման միաժամանակյա չափումներ՝ օպտիկական և ռադիո տիրույթների բևեռացման տվյալների հետ միասին: IXPE-ով չափված ռենտգենյան բևեռացման աստիճանը զգալիորեն ավելի բարձր է, քան ռադիո և օպտիկական տիրույթներում գրանցվածը, ինչը համընկնում է այս և նմանատիպ աղբյուրների վերաբերյալ նախորդ ուսումնասիրությունների արդյունքներին: Սակայն, ի տարբերություն նախորդ դիտարկումների, այս անգամ ռենտգենյան բևեռացման անկյունն օրերի ընթացքում փոխվել է մոտ 100 աստիճանով, իսկ բևեռացման աստիճանը փոփոխվել է ավելի քան 4 անգամ: Այս արդյունքները ցույց են տվել, որ ճառագայթող մասնիկներն ունեն անսովոր բարձր նվազագույն էներգիա, իսկ ճառագայթման առաջացման տիրույթի չափը բռնկման ընթացքում կարող է փոփոխվել մինչև 3 անգամ: Տարբեր տիրույթներում գրանցված ճառագայթումը մոդելավորվել է՝ օգտագործելով շերտավորված շիթի մոդելը:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Վերջին տարիներին բլազարների ամբողջ էլեկտրամագնիսական սպեկտրում ճառագայթման առաջացման մեխանիզմների մոդելավորումը զգալիորեն ավելի բարդ է դարձել: Մշակվել է արհեստական բանականության վրա հիմնված արդյունավետ մեթոդ, որը հնարավորություն է տալիս իրականացնել բլազարների ճառագայթման մոդելավորում՝ միաժամանակ օգտագործելով ֆոտոնային և նեյտրինոային տվյալները: Մեթոդն օգտագործում է կոնվոլյուցիոն նեյրոնային ցանց (CNN), որն ուսուցանվել է SOPRANO կոդով ստացված մանրամասն թվային սիմուլյացիաների մեծածավալ հավաքածուի վրա: Այդ սիմուլյացիաներն ընդգրկում են ֆիզիկական պայմանների լայն շրջանակ և ներառում են այն բոլոր հիմնական պրոցեսները, որոնց միջոցով էլեկտրոններն ու պրոտոնները փոխազդում են բլազարների շիթերում: Ուսուցումից հետո նեյրոնային ցանցը կարողանում է բարձր ճշգրտությամբ վերարտադրել ինչպես էլեկտրամագնիսական, այնպես էլ նեյտրինային ճառագայթումը և թույլ է տալիս մոդելի ֆիզիկական պարամետրերի տարածությունն ուսումնասիրել անհամեմատ ավելի արագ, քան դասական մեթոդներով: Այս մեթոդի արդյունավետությունը ցուցադրվել է 2 հայտնի բլազարների՝ TXS 0506+059 և PKS 0735+178 դիտված ճառագայթման մոդելավորման միջոցով: Ուսուցանված նեյրոնային ցանցն ինտեգրվել է Markarian Multiwavelength Data Center (MMDC) համակարգի մեջ:

Ուսումնասիրվել է 279 բլազարի ճառագայթումը՝ վերլուծելով 14 տարվա ընթացքում էլեկտրամագնիսական սպեկտրի ամբողջ տիրույթում գրանցված տվյալները: Առանձնացվել են աղբյուրի ակտիվության տարբեր մակարդակներ, ինչը հնարավորություն է տվել կառուցել աղբյուրների 168 էներգիայի սպեկտրալ բաշխումներ գրեթե միաժամանակյա տվյալներով: Այս տվյալները մոդելավորվել են ստանդարտ ֆիզիկական մոդելի շրջանակում, որի դեպքում ամբողջ ճառագայթումն առաջանում է շիթի մեկ միասնական տիրույթում էլեկտրոնների սինքրոտրոնային ճառագայթմամբ և սինքրոտրոնային ու արտաքին դաշտերի ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրմամբ: Այս համակարգված մոդելավորումը հնարավորություն է տալիս գնահատել շիթը նկարագրող հիմնական ֆիզիկական պարամետրերը և հետևել դրանց ժամանակային էվոլյուցիային: Արդյունքները

ցույց են տվել, որ ամենահզոր բռնկումները հիմնականում պայմանավորված են Դոպլերի գործակցի աճով՝ զուգակցված ճառագայթող մասնիկների էներգետիկ բաշխման փոփոխություններով:

Ուսումնասիրվել է OJ 287 բլազարի ճառագայթումը՝ վերլուծելով 2008թ. մինչև 2023թ. ընթացքում գրանցված տվյալները: Այս ժամանակահատվածում գրանցվել են մի քանի բռնկումներ բարձր էներգիաների գամմա տիրույթում, ինչպես նաև օպտիկական և ռենտգենյան տիրույթներում: Ճառագայթման մեխանիզմները հասկանալու նպատակով մոդելավորվել են աղբյուրի ընդհանուր թվով 739 բարձրորակ, գրեթե միաժամանակյա տվյալների հիման վրա կառուցված սպեկտրալ էներգետիկ բաշխումները՝ մեկտիրույթ (one-zone) մոդելի շրջանակում, որտեղ ճառագայթումն առաջանում է էլեկտրոնների սինքրոտրոնային ճառագայթմամբ և հակադարձ Կոմպտոնյան ցրմամբ: Այս մեծածավալ տվյալների մոդելավորումը հնարավոր է դարձել վերջերս մշակված, նեյրոնային ցանցի վրա հիմնված մոդելի շնորհիվ: Այս մոդելավորումը թույլ է տալիս նաև ժամանակի ընթացքում հետևել շիթի հիմնական ֆիզիկական պարամետրերի էվոլյուցիային: Մասնավորապես հնարավոր է դարձել ուսումնասիրել մագնիսական դաշտի և Դոպլերի գործակցի փոփոխությունները, ինչպես նաև ճառագայթող մասնիկների էներգիական բաշխման էվոլյուցիան տարբեր ակտիվության վիճակներում:

Firmamento՝ բազմալիք աղբյուրների նույնականացման և վերլուծության համար նախատեսված վեբ հարթակի միջոցով իրականացվել է Fermi-LAT-ի վերջին կատալոգում ընդգրկված 5662 գամմա-աղբյուրների նույնականացման համակարգված վերավերլուծություն: Արդյունքները հաստատել են նախկինում հրապարակված նույնականացումները 4493 աղբյուրների դեպքում, ինչը համապատասխանում է ամբողջ նմուշի 88.8%-ին և ցույց է տալիս, որ երկու մոտեցումները հիմնականում համահունչ են: Այս ընդհանուր համապատասխանությունից զատ, նախկինում չնույնականացված աղբյուրների շարքում հայտնաբերվել է 421 նոր բլազար, ինչի արդյունքում չնույնականացված արտագալակտիկական գամմա-աղբյուրների բաժինը նվազել է 25%-ից մինչև 17%: Բացի այդ, 64 աղբյուրի համար պարզվել է, որ դրանց համապատասխանող բլազարը տարբերվում է նախկինում առաջարկվածից, իսկ 49 դեպքում նախկին նույնականացումը չի հաստատվել:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Sahakyan N., AI in the cosmos, International Journal of Modern Physics D, 2025, id.2540009, 2025.
2. Sahakyan N., Bégué D., Casotto A., Dereli-Bégué H., Vardanyan V., Khachatryan M., Giommi P., Pe'er A., Modeling Blazar Broadband Emission with Convolutional Neural Networks. III. Proton Synchrotron and Hybrid Models, The Astrophysical Journal, Volume 990, Issue 2, id.222, 2025.
3. Harutyunyan G., Sahakyan N., Bégué D., Modelling of the time-resolved spectral energy distribution of blazar OJ 287 from 2008 to 2023: a comprehensive multi-epoch study, Monthly Notices of the Royal Astronomical Society, Volume 540, Issue 1, pp.582–593, 2025.
4. Mohana A. K., Gupta A. C., Fan J., Sahakyan N., Raiteri C. M., Cui L., Lähteenmäki A., Gurwell M., Tornikoski M., Villata M., Modeling the Multiwavelength Emission of 3C 279 during the 14 yr Fermi-LAT Era, The Astrophysical Journal, Volume 989, Issue 1, id.125, 2025.
5. Giommi P., Doro M., Gouvêa M., Fronte L., Metruccio F., Arneodo F., Barres de Almeida U., Di Pippo S., Kerscher T., Macciò A., Mazzon B., Morrone M., Prandini E., Rodríguez A., Ruina A., Sahakyan N., Silveri L., Tripathi D., 1FLAT: A Firmamento-based Catalog of Active Galactic Nuclei in Fermi-LAT High-Galactic-latitude γ-Ray Sources, The Astrophysical Journal Supplement Series, Volume 281, Issue 2, id.53, 2025.

6. MAGIC Collaboration, Abe K., Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Very high energy observations of the Seyfert galaxy NGC 4151 with MAGIC: Indication of another gamma-ray obscured candidate neutrino source, Astronomy & Astrophysics, Volume 702, id.A38, 2025.
7. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Testing the ubiquitous presence of very high energy emission in gamma-ray bursts with the MAGIC telescopes, Astronomy & Astrophysics, Volume 700, id.A96, 2025.
8. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Multiwavelength study of OT 081: broadband modelling of a transitional blazar, Monthly Notices of the Royal Astronomical Society, Volume 540, Issue 1, pp.364–384, 2025.
9. MAGIC Collaboration, Abe K., Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Very high-energy gamma-ray detection and long-term multiwavelength view of the flaring blazar B2 1811+31, Astronomy & Astrophysics, Volume 697, id.A172, 2025.
10. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Combined search in dwarf spheroidal galaxies for branon dark matter annihilation signatures with the MAGIC telescopes, Journal of Cosmology and Astroparticle Physics, Volume 2025, Issue 3, id.020, 2025.
11. MAGIC Collaboration, Abe K., Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Insights from the first flaring activity of a high synchrotron peaked blazar with X-ray polarization and VHE gamma rays, Astronomy & Astrophysics, Volume 695, id.A217, 2025.
12. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Time-dependent modelling of short-term variability in the TeV-blazar VER J0521+211 during the major flare in 2020, Astronomy & Astrophysics, Volume 694, id.A308, 2025.
13. MAGIC Collaboration, Abe K., Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Characterization of Markarian 421 during its most violent year: Multiwavelength variability and correlations, Astronomy & Astrophysics, Volume 694, id.A195, 2025.
14. MAGIC Collaboration,Abe S., Abhir J., Abhishek A., Acciari V. A., ... Sahakyan N., ... , Cosmic-ray acceleration and escape from supernova remnant W44 as probed by Fermi-LAT and MAGIC, Astronomy & Astrophysics, Volume 693, id.A255, 2025.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան

Ակադեմիկոս-քարտուղարի օգնական՝ Ա.Մինասյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մոլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 6 ակադեմիկոս, 7 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 22 նիստ և աշխատանքային խորհրդակցություն, գիտական կազմակերպությունների 8 հաշվետու ժողով:

Բաժանմունքի տարեկան ժողովում քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Բյուրոյի 22 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2025թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2024թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2025-26 ուստարվա ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը, ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների ֆինանսավորման դիմումները: Բյուրոյի նիստում քննարկվել է նաև Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված թեկնածությունը, որը ներկայացվել է ԳԱԱ նախագահության հաստատմանը: Ինստիտուտի տնօրեն է ընտրվել կ.գ.թ. Ա.Անտոնյանը:

Բաժանմունքն անցկացրել է «Կենսաբազմազանության և կենսանվտանգության պրոբլեմային խորհրդ»-ի 1 նիստ, քննարկվել են կենսաբազմազանության պահպանման խնդիրները շինարարության և հանքարդյունաբերության մարտահրավերների պայմաններում:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովի նիստերում քննարկումների արդյունքում բաժանմունքի ինստիտուտներին ու կենտրոններին տրամադրվել է ֆինանսավորում անհրաժեշտ սարքերի ձեռքբերման համար:

Բաժանմունքի բյուրոն հաստատել է 16 աշխատակցի գիտական գործուղումների ֆինանսավորման հայտերը:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական ու միջազգային 36 միջոցառում, այդ թվում՝ գործնական դասընթացներ, խաղ-մրցույթներ, ամառային ու գարնանային դպրոցներ, սիմպոզիում, ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 2049 մարդ (405-ն արտերկրից):

Բաժանմունքի կազմակերպություններն իրենց արդյունքները ներկայացրել են «Գիտության շաբաթ» գիտական փառատոնի տաղավարներում:

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 352 հոդված գրախոսվող ամսագրերում (316-ը Scopus/WoS), 24 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (21-ն արտասահ-

մանյան), 179 թեզիս (120-ն արտասահմանում), 7 մենագրություն (արտասահմանում), 4 ուսումնական ձեռնարկ և ստացել 2 արտոնագիր:

Բաժանմունքի ԳՀԿ-ներում պաշտպանվել են 1 դոկտորական և 10 թեկնածուական ատենախոսություններ, միջազգային ֆինանսավորմամբ իրականացվել է 32 դրամաշնորհային ծրագիր:

ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան
Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան
Գիտքարտուղար տեխ.գ.թ. Ք.Սարգսյան
Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am
Կայքէջ՝ www.cens.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Վանաձորի տարածքի հողերի քիմիական կազմի բազմաչափ վիճակագրական վերլուծությունը վեր է հանել նմուշների 3 խումբ՝ V, Ti, Mn, Fe, Ba. Ca, K, Zr, Sr, Rb, և Cr, Zn, Cu, Pb: I և II խմբերում տեղ գտած տարրերը նույնականացվել են որպես բնական ծագում ունեցողներ, III խմբում ընդգրկվածները դրսևորել են բարձր և գերբարձր աղտոտման մակարդակներ՝ մատնանշելով այս տարրերի պարունակությունների գերակա անթրոպոգեն ծագման մասին: Հրազդան գետի Երևանի տարածքով հոսող հատվածի հատակային նստվածքներում As և P-ի պարունակությունների 6-ամյա (2019-24թթ.) ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ այս տարրերը գետի տարբեր հատվածներում հանդես են եկել տարրերի (Si, K, Al, Ti, Mn, Fe, Ca, Zn, Cu, Pb) տարբեր երկրաքիմիական ասոցիացիաներով: Հատակային նստվածքներում As պարունակությունները համեմատաբար ավելի բարձր են եղել Երևանյան լիճից դեպի վար ընկած հատվածում: Երևանյան լիճը ջրի դանդաղ հոսքի, նստվածքառաջացման, համեմատաբար բարձր pH-ի և Ca-ի շնորհիվ կարող է մոբիլիզացնել նստվածքներում առկա As պարունակությունները և տեղափոխել ջրային միջավայր: Գետի ողջ երկայնքով հատակային նստվածքներում գրանցվել է As-ի ցածր մակարդակի էկոլոգիական ռիսկ: ՀՀ որոշ մարզերի հողերի միներալոգիական կազմության ուսումնասիրությունը (XRD) ցույց է տվել, որ բոլոր ուսումնասիրված նմուշներում գրանցվել է SiO_2 (26,7-95,5%), իսկ $CaCO_3$ (22,6-73,3%) գրանցվել է հիմնականում կարբոնատային հողերում: Գրանցվել է դրական նշանակալի կոռելյացիա այս միներալների և հողում Si ու Ca պարունակությունների հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական հողերում գումարային բետա ակտիվության և բնական ^{226}Ra, ^{232}Th ու ^{40}K–ի ու տեխնածին ^{137}Cs–ի տեսակարար ակտիվությունների գնահատման արդյունքները վկայում են, որ լճային նստվածքների վրա զարգացած հողերում դիտվում է գումարային բետա և բնական ռադիոնուկլիդների ցածր ակտիվություն: Մարզի հարավ-արևմուտքը բնութագրվում է ^{226}Ra և ^{232}Th համեմատաբար բարձր ակտիվությամբ, իսկ հյուսիս-արևմուտքը՝ ^{40}K-ի առավելագույն ակտիվությամբ, ինչը, հավանաբար, պայմանավորված է կալիումական հանքային պարարտանյութերի ներմուծմամբ: Տեխնածին ^{137}Cs-ի ակտիվությունը կախված է հողօգտագործման ձևից. այն առավելապես կուտակվում է բարձրադիր արոտավայրերի հողերում, վարելահողում դրա ակտիվությունը նշանակալիորեն ցածր է: Ռադիոլոգիական ռիսկի մակարդակը մարզում միջին գլոբալ

ցուցանիշներից ցածր է, սակայն մարզի հարավում և արևմուտքում առկա են առանձին գոտիներ, որտեղ գերազանցվել են տարեկան արդյունարար դոզայի և քաղցկեղածին ռիսկի միջին գլոբալ արժեքներ: Բնական ռադիոնուկլիդների ակտիվությունը Սևանա լիճ թափվող գետերի հատակային նստվածքներում հիմնականում ավելի ցածր է, քան հողում, Th/Ra հարաբերությունը մոտ է վերին քարոլորտի նմանատիպ ցուցանիշին: Բնական ռադիոնուկլիդների ֆոնային ակտիվությամբ բնութագրվող հողի՝ *Tradescantia (կլոն 02)–ի* կիրառմամբ գենոտոքսիկության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Արագածի լեռնազանգվածից նմուշառված հողերի վրա աճեցված բույսերում քրոմոսոմային աբերացիաների և սոմատիկ մուտացիաների հաճախականությունը վիճակագրորեն հավաստի ավելի մեծ է, քան էտալոնային հողի վրա աճեցված բույսերում (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյաևա):

Շարունակվել են ՀՀ բնակչության կողմից սննդամթերքի սպառման, քիմիական վտանգների (թունավոր տարրեր, հակաբիոտիկներ), աղի, շաքարի օրական ընդունման չափաքանակների բացահայտման աշխատանքները: Վերջինիս շրջանակում բնակչության շրջանում իրականացվել են տարբեր թիրախային հարցումներ, համապատասխան տվյալների հենքերի թարմացում և դրանց հիման վրա սննդի անվտանգության ռիսկի և սնման կարգավիճակի գնահատում: Արդյունքում գնահատվել են ՀՀ-ում արտադրված կենդանական ծագում ունեցող մթերքներում հակաբիոտիկների, հայկական բազմաճաղկային մեղրում պոտենցիալ թունավոր տարրերի առողջական ռիսկը, նաև աղի և շաքարի բարձր պարունակությամբ մթերքների սպառման արդյունքում աղի և շաքարի ընդունման մակարդակները (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Իրականացվել է ՀՀ գյուղատնտեսական հողերի 30 նմուշներում մի շարք քիմիական (P, Ti, Mn, Cu, Zn, As, Br, Rb, Sr, Y, Zr, Pb, Ga, Nb, SiO_2, Al_2O_3, Fe_2O_3, CaO, K_2O, pH) և կենսաբանական ցուցանիշների (հողում օրգանական նյութ (ՀՕՆ)) պարունակությունների և դրանց VIS, NIR և SWIR սպեկտրալ տիրույթներում (350-2500 նմ) սպեկտրաչափությամբ որոշված անդրադարձման արժեքների կոռելյացիոն վերլուծություն, PLSR մոդելի կիրառմամբ հողում այդ ցուցանիշների պարունակությունների կանխատեսում: PLSR մոդելի կիրառմամբ կանխատեսման արդյունքները դեռևս բավարար են միայն հողի հիմնայնության՝ pH (R^2=0.62, RMSE=0.646) և ՀՕՆ (R^2=0.52, RMSE=2.445) պարունակության կանխատեսման համար: Երևանի տարածքում 2014-24թթ. կանաչ տարածքների հաշվին կառուցապատվող տարածքների ընդարձակման և քաղաքի ջերմային հարմարավետության գնահատման նպատակով LANDSAT արբանյակային պատկերների հիման վրա, MLP մոդելի կիրառմամբ իրականացվել է մակերևութային ծածկի դասակարգում (OA=0.91, Kappa=0.87) և ջերմային դաշտերի փոփոխականության (UTFVI) ինդեքսի հաշվարկ: Արդյունքում Mann Kendall թեստը հաստատել է քաղաքի տարածքում հիշյալ ժամանակահատվածում ջերմային բարենպաստ պայմաններով տարածքների նվազող թրենդը (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջի մարգագետնատափաստանային գոտու բնական խոտհարքների 4 տեղամասերից հավաքագրված 7 ցեղի պատկանող 10 տեսակի՝ Ագրխոտուկ (Agrostis capillaris L., Agrostis marschalliana Seredin.), Աշորա (Secale vavilovii Grossh), Դաշտավլուկ (Poa bulbosa L.), Ոզնախոտ (Dactylis glomerata L.), Սեզ (Agropyron repens L.), Սիզախոտ (Phleum pratense L.), Ցորնուկ (Bromus tectorium L., B. squarrosus L., Bromus pseudodanthoniae (Drobow)) վերգետնյա զանգվածը ենթարկվել է նախնական մշակման (հերբարիումների պատրաստում, չորացում, տարրալուծում): Ուսումնասիրված բուսատեսակների բարձրությունը տատանվել է 40-140 սմ, չոր զանգվածը՝ 2,5-20,5 գ, տերևային մակերեսը՝ 1,7-2,9 դմ^2, իսկ տերև/ցողուն հարաբերակցությունը՝ 0,1-0,51 սահմաններում, ընդ որում՝ նշված ցուցանիշների բարձր արժեք նկատվել է Bromus

squarrosus, Phleum pratense և Secale vavilovii տեսակների մոտ: Համեմատաբար ցածր կենսազանգված ունեցող տեսակների (Poa bulbosa, Agrostis marschalliana) մոտ դիտվել է տերև/ցողուն հարաբերակցության բարձր արժեք: Պրոտեինի և Ca պարունակությամբ աչքի են ընկել Agropyron repens և Dactylis glomerata, հում թաղանթանյութի պարունակությամբ՝ Phleum pratense և Poa bulbosa տեսակները, իսկ ընդհանուր օրգանական նյութերի և P պարունակությամբ հացազգի տեսակներն էականորեն չեն տարբերվել (ղեկ.՝ պ/կ աշխ. գ.թ. Լ.Սահակյան):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման (ԿԿԶ)» ամբիոնը շարունակել է աջակցել ԿԿԶ միջազգային գործընթացին՝ իրականացնելով ոչ ֆորմալ կրթություն ՀՀ-ում. առցանց և դեմ առ դեմ վերապատրաստումներ է անցել 141 ուսուցիչ, տարբեր ծրագրերով սեմինարների և վերապատրաստումների է մասնակցել 94 աշակերտ: Բացի այդ, 8 ուսուցիչ (5-ը մարզերից, 3-ը Երևանից) ստացել է Էկոկենտրոնի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի հավաստագրեր՝ «Օզոնային շերտի պահպանության միջազգային օրվան» նվիրված սեմինարի շրջանակում տրամադրված նյութերի հիման վրա օզոնային շերտի պահպանությանը նվիրված հատուկ դաս անցկացնելու համար: Վերապատրաստումների ժամանակ ամբիոնը լայնորեն շրջանառել և իրազեկել է նաև GLOBE ցանցի տրամադրած հնարավորությունների մասին (ղեկ.՝ պ/կ բ.գ.թ. Ն.Վարդանյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Գեոէկոլոգիական հետազոտություններում ակտիվ հեռազննման համակարգերի ներդրման ուղղությամբ կարողությունների հզորացում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան) Սևանա լճի հարավային առափնյա Ծովինար գյուղական բնակավայրի անտառային տարածքի լազերային սքանավորման արդյունքում իրականացվել է տարածքում ծառաթփային բուսականության դասակարգում և առկա բուսական կենդանի կենսազանգվածի քանակական գնահատում: Վայոց Ձորի Աղավնաձոր համայնքի Տրինիտի խաղողի այգիներում Sentinel 1 SAR ռադարային պատկերների վերծանման DpRVI վեգետացիոն ինդեքսի կիրառմամբ դիտարկվել է այգիների կենսազանգվածի սեզոնային դինամիկան: Նախատեսվում է կենսազանգվածի ծավալների հաշվարկների ստուգաչափում առանձին ծառա- և թփատեսակների համար հաշվարկված ալորմետրիկ ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ:

«Լոռու մարզի հողերում հազվագյուտ հողային տարրերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում՝ կոմպոզիցիոն տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան) ստեղծվել է նախկինում որոշված քիմիական տարրերի և հողի pH արժեքների տվյալների հենք: Կատարվել է քիմիական տարրերի, ներառյալ հազվագյուտ հողային տարրերի պարունակությունների, հողում օրգանական նյութի քանակությունների որոշում, հողի միներալոգիական կազմի ուսումնասիրություն, մագնիսական ընկալունակության և էլեկտրահաղորդականության չափում: Ստեղծվել է Լոռու մարզի հողերի տվյալների միասնական հենք: Ուսումնասիրվել են մարզի հողերում As-ի պարունակությունները, տարածաբաշխման առանձնահատկությունները, աղտոտման հնարավոր աղբյուրները:

«Ռադիոէկոլոգիական հետազոտությունների ամրապնդում՝ Հայաստանում ճառագայթման ռիսկի գնահատման և կառավարման համար» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյաևա) մեկնարկել են ՀՀ խոշոր քաղաքներում (Երևան, Գյումրի) ռադոնի երկրածին պոտենցիալի և խմելու ջրում լուծված ռադոնով պայմանավորված ռիսկի գնահատման աշխատանքները: Երևանում երկրածին ռադոնի բարձր պոտենցիալ գրացվել

է Մալաթիա–Սեբաստիա համայնքում, որտեղ հողի գազային ֆազայում ռադոնի համեմատաբար բարձր ակտիվությունը զուգակցվել է հողի բարձր գազաթափանցելիության հետ: Գյումրիում համեմատաբար բարձր երկրածին ռադոնի պոտենցիալ է գրանցվել քաղաքի հյուսիս-արևելքում ու արևմուտքում:

«Սննդամթերքի ռիսկի և օգուտի գնահատման կարողությունների զարգացում Հայաստանում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան) իրականացվել է սննդամթերքի ռիսկի և օգուտի գնահատման (ՌՕԳ) վերլուծություն, միջազգային լավագույն փորձի և մեթոդաբանության ուսումնասիրություն, կարողությունների զարգացում և գիտամեթոդական հիմունքների մշակում: Մեկնարկել են ՀՀ բնակչության համար սննդամթերքի կարևոր խմբերից մեկի՝ պտուղ-բանջարեղենի պիլոտային ուսում-նասիրությունները, որը գնահատելու է մրգերի և բանջարեղենի ՌՕԳ շրջանակը սպառման տվյալների հավաքագրման, մթերքի նմուշներում թաղանթանյութի (բջջանք), վիտամին C-ի, ֆոլատի, պեստիցիդի (քլորպիրիֆոս) և մետաղների (K, Mg) պարունակությունների որոշման, տվյալների համադրման և քանակական հաշվարկների միջոցով:

«Բնական և մարդածին օբյեկտների սպեկտրալ հայտանիշների ստացման և վեր-լուծության մեթոդների մշակում՝ գերբարձր լուծաչափի հեռազննման տվյալների հիման վրա» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Ա.Մեդվեդև) ԱԹՍ (օպտիկական, բազմասպեկտրալ, ջերմային) հանույթի հիման վրա վեր են հանվել ՀՀ տարածքում հրաբխային կոների ձևաբանական և ձևաչափական քարտեզագրման առանձնահատկությունները: Դիլիջանի անտառային գոտում ջերմային ԱԹՍ հանույթի հիման վրա առանձնացվել են որոշ ծառատեսակների (կաղնու, թեղու, կեչու) նույնականացման սպեկտրալ հայտանիշները:

«Արարատյան դաշտի հողերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում. հազ-վագյուտ հողային տարրերի ներուժի բացահայտում խաղողի հետագծելիության համար» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան) կատարվել է հողի նմուշներում քիմիական տարրերի, ներառյալ հազվագյուտ հողային տարրերի պարունակությունների, հողում օրգանական նյութի որոշում: Ստեղծվել է Արարատյան դաշտի հողերի տվյալների միասնական հենք: Արարատյան դաշտի հողի վերին շերտում (20 սմ) ուսումնասիրվել են ֆոսֆորի (P) պարունակությունների տարածաբաշխման առանձնահատկությունները, կապը մակրոտարրերի, հողում օրգանական նյութի և pH-ի հետ, ուսումնասիրվել են համեմատաբար խոշոր գյուղատնտեսական հողահանդակների հողերում պղնձի (Cu), ցինկի (Zn) և մոլիբդենի (Mo) պարունակություններն ու որոշ մակրոտարրերի (Fe, Mn, Ti, Ca, K) ազդեցությունը Cu, Zn և Mo տարրերի՝ հողից-բույս փոխանցման գործընթացների վրա:

«ՀՀ որոշ լանդշաֆտային գոտիներում բնական կերահանդակների էկոլոգիական վիճակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատման մեթոդի մշակում հեռազննման տեխնոլոգիաների և ՄՈւ մոդելների կիրառմամբ» նախագծի (ղեկ.՝ Գ.Այվազյան) աշխատանքների ամփոփմամբ մշակվել է լեռնային բնական կերահանդակ-ների դեգրադացիայի գնահատման բազմաղբյուր հեռազննման մեթոդական մոտեցում՝ հիմնված վերծանման սպեկտրալ ինդեքսների վրա: Վերջինիս կիրառմամբ իրականացվել է ՀՀ մի շարք գյուղական բնակավայրերի կերահանդակների բուսազանգվածի էկոլոգիական վիճակի տարածաժամանակային փոփոխության գնահատում:

«Երևան քաղաքի հողերում և փողոցային փոշում արսենի (As) կենսամատչելի պարունակություններով պայմանավորված մարդու առողջությանն ուղղված ռիսկի գնահատում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Ժ.Պողոսյան) իրականացվում է հետազոտության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում, քարտեզագրական

հենքերի ստեղծում, Երևանի 1989-2002-2012թթ. հողային հանույթներից As-ի պարունակությունների վերաբերյալ տվյալների մեկտեղում և վիճակագրական մշակում:

«Պոտենցիալ տոքսիկ տարրերի հողից-կարտոֆիլ փոխանցման գործոնների վերհանում՝ երկրաքիմիական կոմպոզիցիոն տվյալների վերլուծության կիրառմամբ» հայ-իտալական նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան) իրականացվել է Շիրակի մարզի տարածքի վերաբերյալ տվյալների հավաքագրում, քարտեզագրական հենքերի ստեղծում, կարտոֆիլի թիրախավորված նմուշառման պլանի կազմում, հողի և կարտոֆիլի նմուշների նմուշառում (10-ական նմուշ): Դրանցում որոշվել են մի շարք քիմիական տարրեր: Շիրակի մարզի կարտոֆիլի և Իտալիայի Կալաբրիայի շրջանի Սիլա Մասիվ տեղամասի հողի և կարտոֆիլի նմուշներում As, Cd, Co, Cu, Mn, Mo, Ni, Pb, and Zn տարրերի վիճակագրական վերլուծությունը ցույց է տվել, որ ուսումնասիրված բոլոր մատրիցաներում՝ հող, կարտոֆիլի կեղև, միջուկ, Cu-ը նշանակալի դրական կոռելյացիա է դրսևորում Mo-ի հետ:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Ալեքսանյան Վ.Ա., Միրզոյան Մ.Ս., Գալստյան Մ.Հ., Սարգսյան Տ.Ա., Օրգանահանքային պարարտանյութերի և աճի խթանիչի կիրառման ազդեցությունը կարտոֆիլի բերքատվության վրա նախալեռնային գոտու պայմաններում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N 91(3), 2025, էջ 189-196:
2. Պիպոյան Դ.Ա., Տեփանոսյան Գ.Հ., Բեգլարյան Մ.Ռ., Հազվագյուտ հողային տարրեր. Խաղողի աշխարհագրական ծագումը և հետագծելիությունը, Ե., «Գիտության աշխարհում», N 2, 2025, էջ 54-59:
3. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Արշակյան Ե.Հ., Սահակյան Լ.Վ., Երկաթը (Fe) սննդակարգում: Դերն ու նշանակությունը մարդու առողջության համար, Ե., «Գիտության աշխարհում», N 4, 2025, էջ 54-59:
4. Պետրոսյան Հ.Ս., Վարդանյան Մ.Ռ., Ախոյան Ֆ.Ֆ., Ալեքսանյան Վ.Ա., Տիեզերանկարների ճանաչման կետերի հիմքի ստեղծման համար մշակված մեթոդի ներդրումն արտադրությունում, Ե., «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական աշխատություններ», N 91, 2025, էջ 97-105: https://doi.org/10.54338/18294200-2025.1-12
5. Վարդանյան Ն.Հ., Հովհաննիսյան Ա.Ա., Թովմասյան Գ.Հ., Կայուն զարգացման հայեցակարգը և ցկյանս կրթությունը՝ ՀՀ ԳԱԱ Էկոկենտրոնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի օրինակով, Ե., «Գիտության աշխարհում», N 4, 2025, էջ 36-39:
6. Овсепян А.А., Медведев А.В., Асмарян Ш.Г., Данные дистанционного зондирования земли в изучении становления ледяного покрова и анализе его режима на оз. Севан, Ер., “Ученые записки ЕГУ. Геология и география”, N59(2), 2025, с.452–459. https://doi.org/10.46991/PYSUC.2025.59.2.452
7. Петросян О.С., Эфендян П.С., Ахоян Ф.Ф., Манукян В.М., Алексанян В.А., Ежегодное обновление топографических карт государственного масштабного ряда РА по космическим снимкам высокого разрешениям, Ер., “Ученые записки ЕГУ. Геология и география”, N1(265), 2025, с.1-7. https://doi.org/10.46991/PYSUC.2025.59.1.001
8. Саргсян А.В., Межунц Б.Х., Гарибян И.Э., Саргсян Т.А., Продуктивность и структура травостоя как параметры оценки срока косьбы естественных сенокосов, Ер., “Агронаука и технология”, N 1, 2025, с. 49-57. https://doi.org/10.52276/25792822-2025.1-49
9. Ayvazyan G., Medvedev A., Hovsepyan A., Khlghatyan A., Asmaryan Sh., Space remote sensing for monitoring seasonal dynamics of grasslands in high-altitude zones in Armenia, D., “The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences”, v. XLVIII-G-2025, pp.171–176. https://doi.org/10.5194/isprs-archives-XLVIII-G-2025-171-2025

10. Beglaryan M., Kareyan T., Khachatryan M., Harutyunyan B., Pipoyan D., Deterministic and probabilistic risk assessment of chlorpyrifos residues via consumption of tomato and cucumber in Armenia, "Foods", v.14, N16, 2025, 2871. https://doi.org/10.3390/foods14162871
11. Belyaeva, O., Avalyan R., Sargsyan, A., Atoyants, A., Agadjanyan, E., Aroutiounian R., Application of Tradescantia-based test systems for the assessment of genotoxic effects of environmental radioactivity of undisturbed mountain soils (Aragats Massif, Armenia), "Isotopes in Environmental and Health Studies", v.61, N2, 2025, pp.198-213. https://doi.org/10.1080/10256016.2025.2451842
12. Karamyan H., Avagyan M., Shainova R., Sahakyan A., Baghdagyulyan A., Tepanosyan G., Poghosyan Zh., Aperyan A., Melikyan Y., Badalyan M., Combined effect of basalt fibers and bentonite clay on complex mortar properties, Civil Engineering Journal, 2025, Vol. 11, nub. 12,pp 5006-5018. https://doi.org/10.28991/CEJ-2025-011-12-05
13. Khlghatyan A., Medvedev A., Muradyan V., Hovsepyan A., Avetisyan R., Ayvazyan G., Parseghyan A., Asmaryan Sh., Exploring multisource remote sensing capacities for spatiotemporal analysis and quantification of chlorophyll of vineyards in Armenia, "Agricultural research", 2025 https://doi.org/10.1007/s40003-025-00845-8
14. Khlghatyan A.; Medvedev A.; Sereda I.; Hovsepyan A.; Ayvazyan G.; Avetisyan R., Asmaryan Sh., Feasibility of VHR Remote Sensing for Estimation of Leaf Chlorophyll Content in Armenian Vineyards, Dubai, "2025 8th International Conference on Signal Processing and Information Security (ICSPIS)", 18-20th November, 2025, pp.1-6
15. Magriplis E., Smiliotopoulos T., Myrintzou N., Burton-Pimentel K. J., Adamberg S., Adamberg K., Agagunduz D., Atanasova-Pancebska N., Beglaryan M., ... & Syrpas M., Validation of the Fermented Food Frequency Questionnaire (3FQ) to assess consumption across four European regions: a study within the Promoting Innovation of fermented foods cost action, "Frontiers in Nutrition", v.12, 2025, 1667653. https://doi.org/10.3389/fnut.2025.1667653
16. McClatchie M., Matterne V., Rovira Buendia N., Andonova M., Lohwasse U., Waalen W., Bantis F., Knez M., Milešević J., Orahovac A., Prosperi P., Banerjee A., Radić I., Mueller-Bieniek A., Beglaryan M., Murphy-Bokern, D., Gil D., Balázs B., Negrão, S., Underutilised crops in Europe: An interdisciplinary approach towards sustainable practices, "Archaeometry", 2025, pp.1-16. https://doi.org/10.1111/arcm.13073
17. Medvedev A., Tepanosyan G., Asmaryan Sh., Avetisyan R., Muradyan V., Sereda I., Gevorgyan A., Davtyan K., Sahakyan L., Exploring the spectral patterns of chemical elements in soils through proximal VIS-NIR spectroscopy and ML (a pilot study: Armenia), "The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences", v.XLVIII-G-2025, 2025, pp. 1049–1053. https://doi.org/10.5194/isprs-archives-XLVIII-G-2025-1049-2025
18. Medvedev A., Tepanosyan G., Ayvazyan G. and Asmaryan Sh., Highly Detailed Landfill Mapping and Zoning Based on Multi-sensor Data and Its Analysis, "The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences", v. XLVIII-G-2025, 2025, pp. 1043–1048.
https://doi.org/10.5194/isprs-archives-XLVIII-G-2025-1043-2025
19. Movsisyan N., Hovhannisyan S., Pyuskyulyan K., Belyaeva O., Radionuclide distribution across soil layers and in river sediments: insights from the Aragats Massif, Armenia, "Environmental Monitoring and Assessment", v.197, N 8, 2025, pp. 937. https://doi.org/10.1007/s10661-025-14406-7
20. Navasardyan M., Sargsyan T., Daveyan H., Abraham E., Effects of grazing intensity and topography on steppe vegetation and soil properties of Mt. Aragats, Armenia, "Notulae Botanicae Horti Agrobotanici Cluj-Napoca", v. 53, N 2, 2025, 14582. https://doi.org/10.15835/nbha53214582
21. Pipoyan D., Beglaryan M., Arakelyan H., Arshakyan Y., Harutyunyan B., Mantovani A., Risk assessment of chloramphenicol residues in raw bovine milk: a regulatory and public health perspective, "International Journal of Environmental Health Research", 2025, pp. 1-10. https://doi.org/10.1080/09603123.2025.2519750
22. Pipoyan D., Beglaryan M., Chirkova V., Mantovani A., Probabilistic and deterministic risk assessment of chloramphenicol residues in broiler chicken meat, "Journal of Consumer Protection and Food Safety", v. 20, 2025, pp. 155-164. https://doi.org/10.1007/s00003-025-01549-5.
23. Pipoyan D., Beglaryan M., Dietary exposure assessment of potentially toxic elements in Armenian honey, "Agriscience and Technology", N2(90), 2025, pp. 154-159.

24. Pipoyan D., Kareyan T., Urutyan V., Beglaryan M., Assessment of dietary fiber intake from fruit and vegetable consumption: Case study of Yerevan, Armenia, “Agriscience and Technology”, N2(90), 2025, pp. 160-165.
25. Pipoyan D., Tepanosyan G., Gevorgyan A., Davtyan K., Poghosyan Zh., Sahakyan L., Beglaryan M., Baldacchini Ch., First geochemical insight into phosphorus (P) concentration, origin, and spatial distribution in the soils of the Ararat Valley (Armenia), “Environmental Monitoring and Assessment”, v.197, 2025, 1224. https://doi.org/10.1007/s10661-025-14675-2
26. Poghosyan Zh., Bigalke M., Gevorgyan A., Sahakyan L., Tepanosyan G., Geochemical characterization and human health risk assessment of arsenic in soils of a high background area (Lori region, Armenia), “Environmental Research”, v. 285, p. 2, 2025, 122356. https://doi.org/10.1016/j.envres.2025.122356
27. Pogosyan G., Gasparyan A., Grigoryan M., Priority Directions for Facilitating Lifelong Learning in Armenia, “Envigogika”, v.20, N1, 2025, pp.1-16. https://doi.org/10.14712/18023061.681
28. Ponomareva A., Medvedev A., Large-scale Thematic Mapping of Volcanic Domes in Armenia Based on Ultra-highResolution Data, “The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences”, v. XLVIII-G-2025, 2025, pp. 1203-1208. https://doi.org/10.5194/isprs-archives-XLVIII-G-2025-1203-2025
29. Tepanosyan G., Yenokyan T., Poghosyan Zh., Gevorgyan A., Sahakyan L., Distribution patterns and origin of potentially toxic elements in soils of the Vanadzor urban area (Armenia), “Environmental Geochemistry and Health”, v. 47, N 512, 2025, 512 https://doi.org/10.1007/s10653-025-02827-9

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

Ա.ԹԱԽՏԱՋՅԱՆԻ ԱՆՎ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան
փոխտնօրեն՝ կ.գ.թ. Ա.Ղուկասյան
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Ա.Աչոյան
Էլեկտրոնային փոստ՝ science@botany.am
Կայքէջ՝ www.botany.sci.am

Մասնագիտական խորհուրդ 035՝ «Բուսաբանություն»
Նախագահ՝ թղթ. անդ. Ժ.Վարդանյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել է 8 ընտանիքի՝ *Amarantaceae*, *Asteraceae*, *Crassulaceae*, *Lamiaceae, Poaceae, Rosaceae, Polygalaceae, Scrophulariaceae* հերբարիումային ավելի քան 600 նմուշի որոշում և վերաորոշում: Հերբարիումի տեղական հավաքածուն հարստացվել է 616 նմուշով, որոնցից 3-ը հերբարիումի համար նոր տեսակներ են (*Carpinus* x *schuschaensis* H. J.Winkl, *Ferula huber-morathii* Pesmen, *Catabrosa longissima* Tzvelv): Հերբարիումի ընդհանուր հավաքածուն հարստացել է 60-ից ավել ընտանիքի պատկանող շուրջ 645 նմուշով, ներառյալ 7 նոր ցեղ, 86 նոր տեսակ և 14 նոր ենթատեսակ (ղեկ.՝ կ.գ.դ. Մ.Հովհաննեսյան):

Հայաստանի ֆլորայի Հիրիկազգիների (*Iridaceae*) ծաղկափոշու ապերտուրային տիպերի հնարավոր էվոլյուցիոն զարգացման ուղիների վերլուծությունը ցույց է տվել, որ ամենապարզունակ 1-դիստալ ակոսավոր տիպը բնորոշ է *Iris* L. ցեղի *Iris* և *Limniris* ենթացեղերին, ինչպես նաև *Gladiolus* L. ցեղի ներկայացուցիչներին: *Iris* ցեղի *Hermodactyloides* ենթացեղի ծաղկափոշու օղակաձև, *Crocus* L. ցեղի պարուրաձև ապերտուրային տիպերը կարող են դիտվել որպես զարգացման հաջորդ փուլ, իսկ

առավելագույն զարգացած՝ ծաղկափոշու ցանցաձև ապերտուրաները բնորոշ են միայն *Iris* ցեղի *Scorpiris* ենթացեղի ներկայացուցիչներին: Հաստատվել է Հայաստանի ֆլորայի *Rosaceae* ընտանիքի ներկայացուցիչների ծաղկափոշու ապերտուրային տիպերի պոլիմորֆիզմը: Մասնավորապես ցեղերի գերակշռող մասի մոտ հաճախակի հանդիպող ծաղկափոշու 3/4/-ակոսա-ծլանցքային ապերտուրային տիպի հետ մեկտեղ գրանցվել են նաև 3/4/-ակոսա-շրթնային /*Rosa* L. և *Rubus* L./ և 3-ակոսա-ծլանցքա-շրթնային /*Spiraea* L./ տիպեր: *Rubus*, *Sorbus* L. ցեղերի ներսում հայտնաբերվել են ծաղկափոշու մեկից ավել ապերտուրային տիպեր, ինչը սովորաբար բնորոշ է հիբրիդային ծագում ունեցող տեսակներին (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Հայրապետյան):

Շարունակվել են *Lappula* ցեղի (*Boraginaceae*) և *Linaceae* ընտանիքի նմուշների որոշումներն ու վերաորոշումները: Ուսումնասիրվել է *Alcea* (*Malvaceae)* ցեղի հերբարիումային նմուշների մորֆոլոգիան և կարգաբանությունը: *Alcea* և *Malva* ցեղերի որոշիչների մեջ կատարվել է համալրում (ղեկ.՝ կ.գ.դ. Գ. Օգանեզովա):

Շարունակվել են Հայաստանի ֆլորայի տեսակների կարիոլոգիական ուսումնասիրությունները: *Salvia (Lamiaceae)* ցեղի *S. verticillata* L. տեսակի համար բացահայտվել է դիպլոիդ 2n=2x=16 և տետրապլոդ ցիտորասա 2n=4x=32, x=8 հիմնական թվով: *S. hydrangea* DC. ex Benth. տեսակի համար բացահայտվել է դիպլոիդ ցիտորասա 2n=2x=14, x=7 հիմնական թվով, *S. limbata* C. A. Mey. և *S. verbascifolia* M. Bieb տեսակների համար՝ դիպլոիդ ցիտորասա 2n=2x=22, x=11 հիմնական թվով: Քրոմոսոմների թվերի ցուցանիշները ծառայել են որպես հստակ բնութագրեր ուսումնասիրված *Salvia* ցեղի տեսակների տարբեր սեկցիաների համար: Բացահայտվել են *Asteraceae, Brassicaceae, Caprifoliaceae, Dipsacaceae, Euphorbiaceae, Iridaceae, Linaceae, Liliaceae, Poaceae,* ընտանիքներին պատկանող 45 տեսակի քրոմոսոմային թվերը, որոնք ընդգրկվել են Բուսաբանական տաքսոնոմիայի միջազգային ասոցիացիայի՝ IAPT-ի քրոմոսոմային տվյալների բազայում (IAPT chromosome data) (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ղուկասյան):

Շարունակվել են Հայաստանի բուսական համակեցությունների ուսումնասիրություն-ները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով դրանցում ընթացող փոփոխություններին: Շարունակվել են հանրապետության էկոհամակարգերի և բնակմիջավայրերի դասա-կարգման աշխատանքները: Առանձնակի ուշադրություն է դարձվել այն էկոհամակարգերին, որտեղ գերակշռում է միջերկրածովյան աշխարհագրական տարրը: Ցույց է տրվել, որ ֆլորիստիկ կազմով միջերկրածովային էկոհամակարգերին ամենամոտը խոտաբուսային էկոհամակարգերն են, մասնավորապես տափաստանները և կիսաանապատները, ավելի քիչ խոտհարքներ ծառայող մարգագետինները (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Շարունակվել են հյուսիսային Հայաստանի, մասնավորապես Փամբակի լեռնաշղթայի ենթալպյան գոտու ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունները, բնապահպա-նական կարևորություն ունեցող բուսաբանական տարածքների հետազոտությունները դրանց պահպանման, կառավարման և մշտադիտարկման մեթոդների մշակման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ասատրյան):

Իրականացվել են Հայաստանի կենսաբազմազանության կարևորագույն տարածք-ներում աճող վտանգված, խոցելի և կրիտիկական վիճակում գտնվող *Gladiolus dzhavakheticus* Eristavi, *Gladiolus hajastanicus* Gabrielian, *Iris elegantissima* Sosn., *Iris sibirica* L., *Nuphar lutea* (L.) Smith, *Nymphaea alba* L., *Rhododendron caucasicum* Pall. բուսատեսակների էկոֆիզիոլոգիական հետազոտություններ, որոնք թույլ են տվել գնահատել դրանց հարմարվողականության պոտենցիալը և բացահայտել խոցելիության հնարավոր պատճառները փոփոխվող կլիմայի պայմաններում (ղեկ.՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան):

Բրածո տաքսոնների տվյալների Excel բազան ավելացել է ևս 100 տաքսոնով՝ ընդգրկելով մոտ 1300 անվանում: Շարունակվել է նախկինում չհաշվառված բրածո նմուշների գրանցումը: Մասնավորապես շարունակվել է ինստիտուտին անհատների նվիրաբերած նմուշների գրանցումը, որոնց թիվը հասել է 25 բրածո բույսերի և կենդանիների, որոնք հավաքվել են մոտ 7 տեղավայրից: Ավարտվել են Մուշականի (3100 նմուշ), Այրիվանքի (մոտ 2000 նմուշ) տեղավայրերի նմուշների գրանցումները: Հնէաբանական նմուշների քանակն ընթացիկ տարում ավելացել է 500-ով (ղեկ.՝ կ.գ.դ. Ի.Գաբրիելյան):

Շարունակվել են բարձր գեղազարդ ծառաբույսերի, ծաղկաբույսերի, արևադարձային և մերձարևադարձային, ինչպես նաև Հայաստանի աբորիգեն ֆլորայի արժեքավոր և հազվագյուտ ներկայացուցիչների ներմուծման և էկոլոգիական հարմարվողականության ուսումնասիրությունները: Դենդրոհավաքածուների կազմը համալրվել է ավելի քան 20 տեսակով, որոնց ճնշող մեծամասնությունը նորություն է այգու համար՝ *Aralia mandshurica, Fontanesia phillyraeoides, Laburnum alpinum* և այլն: Կատարվել է հավաքածուների տաքսոնոմիական կազմի վերջին 40 տարվա համեմատական վերլուծություն, բացահայտվել են կլիմայավարժեցված ներկայացուցիչների (*Rosaceae, Oleaceae, Caprifoliacea*e և այլ ընտանիքներից) նախորդ տասնամյակների ընթացքում տեղի ունեցած զգալի կորուստներ: Բացահայտվել է առաջատար ընտանիքների և ցեղերի տեսակարար կշիռը և այն համեմատվել է հանրապետության աբորիգեն դենդրոֆլորայի հետ (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Վարդանյան):

«Հայաստանի ֆլորա և բուսականություն» էքսպոզիցիոն հավաքածուն համալրվել է 32 բուսատեսակով՝ *Alliaceae, Asteraceae, Brassicaceae, Fabaceae* և այլ ընտանիքներից (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Արևադարձային և մերձարևադարձային բույսերի հավաքածուն համալրվել է *Arecaceae* ընտանիքի 3 ցեղի 4 տաքսոնով (*Chamaerops humilis var. argentea, Syagrus cearensis, Syagrus sp., Nannorrhops ritchieana*) և 1 պարտիզային ձևով (*Trachycarpus fortunei* Wagnerianus) (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Ալեքսանյան):

Շարունակվել են Հայաստանի ֆլորայի ներկայացուցիչների ներգրավմամբ բուսաբանական այգու ծաղկային գեղազարդ բույսերի հավաքածուի հարստացման հետազոտական աշխատանքները: Ուսումնասիրվել են դրանց կենսաբանական առանձնահատկությունները, հարմարվողական պոտենցիալը, բազմացման եղանակները: Ստացված տվյալները թույլ են տվել ներառել հետևյալ բույսերը գեղազարդ մշակաբույսերի հավաքածուի մեջ՝ *Primula amoena, P. ruprechtii, P. cardifolia, Lysimachia vulgaris (Primulaceae ընտանիք), Scabiosa caucasica, S. georgica, S. rotate (Caprifoliaceae), Salvia virgata, S. limbata, S. verticillata (Lamiacea), Allium cardiostemon, A. rubellum (Alliaceae), Lilium armenum (Liliaceae): Salvia* L. ցեղի կենդանի հավաքածուն համալրվել է *S. nemorosa, S. sclarea, S. verticillata, S. virgata, S. limbata, S. verbascifolia* տեսակներով: Ավարտվել են վարդանոցի վերականգնման աշխատանքները, վարդերի թփերի ընդհանուր քանակը 1350 է, իսկ սորտերի ընդհանուր թիվը՝ 43 (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մարտիրոսյան):

Ուսումնասիրման և պահպանման նպատակով հավաքվել է մոտ 52 նմուշ 10 ընտանիքից, 20 ցեղից և 28 բուսատեսակից, այդ թվում՝ վայրի պտղատուների և վտանգված տեսակների սերմեր՝ *Pyrus daralaghezi, Sorbus tamamschjanae, Allium egorovae:* Ստուգվել է 32 ընտանիքի պատկանող մոտ 220 տեսակի սերմերի ծլունակությունը հատուկ մեթոդների կիրառմամբ: Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկում (SBAF) պահպանվում են 120 ընտանիք, 635 ցեղ, ավելի քան 1000 տեսակ՝ մոտ 2960 նմուշ, որոնցից 92-ը վտանգված տեսակներ են: Նախապատրաստվել են 10 տեսակի մասին տաքսոնոմիական և

նոմենկլատուրային տվյալներ միջազգային CARYOPHYLLACEAE CHECKLIST համացանցային կայքի համար: Հավաքվել է նյութ *Eremogone* (*Caryophyllaceae*) ցեղի մոլեկուլային ուսումնասիրությունների իրականացման նպատակով: Մեխակազգիների ուսումնասիրությունները կատարվել են Բեռլինի բուսաբանական այգի-թանգարանի հետ համագործակցության շրջանակում: Իրականացվել է *Tamarix* և *Myricaria* ցեղերի 5 տեսակի հավաք, հետազոտվել են դրանց պահպանման առավել արդյունավետ մեթոդները տարբեր ջերմաստիճանային և հարաբերական խոնավության պայմաններում:

Էկոէպիկենտրոնի «Անտառ», «Նոսրանտառ», «Ալպիական անկյուն», «Դարեղեգիս» բիոտոպերի հավաքածուները համալրվել են 11 տեսակով: Էկոէպիկենտրոնն ընդունել է 9797 այցելու՝ 7833 մեծահասակ, 1964 երեխա, իրականացվել է 43 էքսկուրսիա, 10 միջոցառում, այդ թվում՝ «CYFEST 17» միջազգային ցուցահանդեսը, աշխատարաններ, բազմաթիվ ֆոտո և տեսանկարահանումներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Ինվազիվ բուսատեսակները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ) շարունակվել են տեսական և դաշտային ուսումնասիրությունները: Ընտրվել է 114 բուսատեսակ (58-ը փայտային, 56-ը խոտային), որոնք առավել հաճախ են կիրառվում քաղաքների կանաչապատման և անտառապաշտպան գոտիների ստեղծման համար, տեսակներ, որոնք «փախել» են արհեստական էկոհամակարգերից և ներթափանցել բնական էկոհամակարգեր, ինչպես նաև տեսակներ, որոնք ներթափանցել են բնական էկոհամակարգեր ինքնուրույն, ամենատարբեր ճանապարհներով: Իրականացվել է ընտրված տեսակների ամբողջական վերլուծություն, որի արդյունքում 25 տեսակ դասակարգվել է որպես ինվազիվ, 25-ը որպես նատուրալիզացված, 64-ը պատահական հայտնված: Այս տեսակները պատկանում են 47 ընտանիքի, որոնցից առավել հարուստ են *Asteraceae, Rosaceae, Fabaceae, Poaceae* և *Caprifoliaceae* ընտանիքները: Նատուրալիզացված և ինվազիվ տեսակների մեծամասնությունը ներմուծվել են որպես գեղազարդ, անտառապատման մեջ օգտագործման համար կամ ներթափանցել են ինքնուրույն: Ըստ ծագման՝ օտարածին տեսակների ամենամեծ թիվը Հյուսիսային Ամերիկայից և Արևելյան Ասիայից է: Պատահական տեսակներն առավել հաճախ հանդիպել են քաղաքային բնակավայրերում, իսկ ինվազիվները՝ անտառներում, նոսրանտառներում և գերխոնավ կենսամիջավայրերում: Ընդհանուր վերլուծությունից բացի, կիրառելով լայնորեն օգտագործվող մեթոդներից մեկը (Gordon et al., 2010), իրականացվել է ինվազիայի վտանգի գնահատում ընտրված 114 տեսակի համար: 58 բնափայտային բույսերից 24-ը ստացել են առավելագույն միավորներ և կարող են լուրջ սպառնալիք ներկայացնել Հայաստանի բնական էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար: Գնահատված խոտաբույսերի ճնշող մեծամասնությունը ստացել է առավելագույն միավորներ, ինչը հատուկ ուշադրություն է պահանջում հանրապետության էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանման միջոցառումների մշակման ժամանակ:

«Հայաստանի կենսաբազմազանության «թեժ կետեր»-ում աճող հազվագյուտ և վտանգված բուսատեսակների մոնիթորինգը և հարմարվողականության գնահատումը բուսաբանական այգիներում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան) իրականացվել են կենսաբազմազանության թեժ կետերում աճող բուսատեսակների վերաբերյալ գրականության տվյալների մշակում, վերլուծություն, մոնիթորիգ, գույքագրում և քարտեզագրում, էկոֆիզիոլոգիական և կարիոլոգիական դաշտային և լաբորատոր

հետազոտություններ, հերբարիումային հավաքածուի համալրում, սերմերի, տնկանյութի հավաք ex-situ պահպանության նպատակով: Դաշտային հետազոտություններ են իրականացվել Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի և Արարատի մարզերի կենսաբազմազանության «թեժ կետեր»-ում: Ծրագրի խորհրդատու կ.գ.դ. Ալ.Ռոդիոնովը այցելել է Հայաստան համատեղ քննարկումներ, մոլեկուլային ֆիլոգենետիկ և ԴՆԹ շտրիխ կոդավորման հետազոտություններ և դաշտային աշխատանքներ կատարելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր գրքում գրանցված *Iridaceae* ընտանիքի հազվագյուտ տեսակների կենսաինդիկացիա» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Հայրապետյան) իրականացվել է ՀՀ տարածքում *Iris* L. և *Gladiolus* L. (*Iridaceae*) ցեղերի 9 հազվագյուտ տեսակների լոկալիտետների, ինչպես նաև այդ տեսակների ծաղկման և պտղաբերման ժամանակահատվածների հստակեցում: ՀՀ բոլոր մարզերում կատարվել է ծաղկափոշու նյութի, որոշ դեպքերում նաև բուսատեսակների առանձնյակների և սերմերի հավաք: Հավաքված որոշ տեսակների նմուշները համալրել են ERE հերբարիումը, իսկ մի շարք առանձնյակներ՝ ինստիտուտի կենդանի հավաքածուն: Կատարվել է առանձին լոկալիտետներում աճող ուսումնասիրվող տեսակների թվի և վիճակի մշտադիտարկում: Պատրաստվել են ծաղկափոշու պրեպարատներ ֆերտիլությունը ստուգելու նպատակով, *Iris* ցեղի 4 հազվագյուտ տեսակի համար (*Iris elegantissima* Sosn., *Iris lycotis* Woronow, *Iris sibirica* L., *Iris musulmanica* Fomin) կատարվել են սերմերի ծլեցում և կարիոլոգիական ուսում-նասիրություններ, սկսվել են գրականության տվյալների հավաքագրման աշխատանքները:

«Արագած լեռան տերևացողունային մամուռների տեսակային բազմազանությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Աչոյան) իրականացվել է տեղական հերբարիումային նմուշների հաշվառում և տեղաբաշխում ըստ ընտանիքների: Իրականացվել է Հայաստանի տարբեր շրջաններից հավաքված անորոշ հերբարիումային նմուշների տեսակավորում ըստ ֆլորիստիկ շրջանների: Իրականացվել է գրականության տվյալների հավաքագրում և վերլուծություն: Սոցիալական հարթակներում ստեղծվել են խմբի գործունեությունը լուսաբանող էջեր թեմայի հանրայնացման նպատակով: Կազմակերպվել են գիտարշավներ դեպի Արագած լեռնազանգված, հավաքվել են մամուռների նմուշներ, իրականացվել է նմուշների որոշում մակրո- և միկրոմորֆոլոգիական մեթոդների կիրառմամբ: Արդյունքում հայտնաբերվել է Արագածի ֆլորիստիկ շրջանի համար թվով 13 նոր տեսակ: Նմուշների իդենտիֆիկացման աշխատանքները ընթացիկ փուլում են:

52. Hosseini S.A., Basirpour B., Emadi Jamali S.K., Sadeghi M., Rahimi Esboei B., Sarvi S., Zamaniyan M., Daryani A., Aghayan S.A. Latent toxoplasmosis and preeclampsia: evidence for the role of chronic infection in pregnancy complications. BMC Pregnancy and Childbirth, v. 25, 2025, 1130, https://doi.org/10.1186/s12884-025-08052-7, Q1.
53. Hovhannisyan R.L., Rukhkyan M.Ya., Gabrielyan B.K. Features of the formation of the fish helminth fauna in the lower reaches of the Hrazdan River (Armenia) under anthropogenic pressure. Ecosystem Transformation, v. 8, 2025, pp. 199-211, https://doi.org/10.23859/estr-2309233.
54. Hovhannisyan R., Shcherbakov O., Hakobyan S., Mkrtchyan J., Rukhkyan M. Fauna of fish parasites in water bodies of the north-east of Armenia. Siberian Journal of Life Sciences and Agriculture, v. 17, 2025, pp. 543-576, https://doi.org/10.12731/2658-6649-2025-17-4-1497.
55. Japaridze L.-G., Haverinen R., Junnilainen J., Kalashian M., Pototskin A. First records of two genera *Phragmacossia* Schawerda, 1924 and *Stygia* Latreille, [1802] in the South Caucasus (Lepidoptera, Cossidae). Caucasiana, v. 4, 2025, pp. 59-64, https://doi.org/10.3897/caucasiana.4.e158970.
56. Kalashian M. Two new species of *Endelus* Deyrolle, 1864 (Coleoptera, Buprestidae) from China with notes on *Endelus acutiplicis* Obenberger, 1944. Zootaxa, v. 5715, 2025, pp. 188-193 https://doi.org/10.11646/zootaxa.5715.1.15.
57. Kalashian M.Yu., Kubáň V. A new species of the subgenus *Deudora* of the genus *Sphenoptera* (Coleoptera: Buprestidae) from the Eastern Mediterranean. Zoosystematica Rossica, v. 34, 2025, pp. 54-58 https://doi.org/10.31610/zsr/2025.34.1.54.
58. Kobelyan H., Hambaryan L., Stepanyan L., Sargsyan S., Yepremyan H., Mkrtchyan Zh., Gabrielyan B., Melkonyan H., Andreji J. Assessment of water quality of reservoirs by a comprehensive study of hydrobiological and hydrochemical indicators using the example of the Hrazdan Reservoir (Armenia). Acta fytotechnica et zootechnica, v. 28, 2025, pp. 221-234. https://doi.org/10.15414/afz.2025.28.03.221-234.
59. Kolnegari M., Schwarz C.J., Ghrejyan T., Borer M. *Sinaiella azadi* sp. nov. (Mantodea: Toxoderidae); a new praying mantis species from Western Asia (Iran and Armenia). Zootaxa, v. 5594, 2025, pp. 98-110, https://doi.org/10.11646/zootaxa.5594.1.4.
60. Kornienko S.A., Stakheev V., Aghayan S.A., Kirillov A.A., Kirillova N.Y., Kornienko D.S., Dokuchaev N. E. Molecular phylogeny, morphological diversity, and species' distribution of cestodes of the genus *Neoskrjabinolepis* Spassky, 1947 (Cestoda: Hymenolepididae) in the Palaearctic. Zoological Journal of the Linnean Society, v. 205, 2025, zlaf081, https://doi.org/10.1093/zoolinnean/zlaf081.

61. Mamadashvili G., Jarzabek-Müller A., Akinci H.A., Brin A., Bässler C., Chumak V., Chumak M., Diedus V., Drössler L., Eslamdoust J., Georgiev K.B., Ghrejyan T., Gossner M.M., Hleb R., Rafieijahed R., Kalashian M., Kamburov I., Karagyan G., Kevlishvili J. Khutsishvili Z., Lachat Th., Mazmanyan M., Petrov P.I., Roth N., Tabunidze L., Varyvoda M., Müller J. Click beetles (Elateridae) identify conservation units in Oriental and European beech forests. Journal of Insect Conservation, v. 29, 2025, 52, https://doi.org/10.1007/s10841-025-00678-4.
62. Mikaeili Galeh T., Nayeri T., Dodangeh S., Hosseininejad Z., Tanzifi A., Khalilian A., Daryani A. Possible association between *Toxoplasma gondii* infection and autism spectrum disorder. Parasites, Hosts and Diseases, v. 63, 2025, pp. 201-214, https://doi.org/10.3347/PHD.24066.
63. Murali R., Adabaeva A., Angulo S., Arispe R., Baumann M., Ghoddousi A., Hamidi A.K., Jansen M., Khalatbari L., Khorozyan I., Maillard O., Müller D., Romero-Munoz A., Rosen T., Rumiz D., Soshin A., Yusefi G.H., Kümmerle T. Understanding multiple pathways of the impacts of socio-economic shocks on large carnivores. People and Nature, v. 7, 2025, pp. 3104-3125, https://doi.org/10.1002/pan3.70162.
64. Opaev A.S., Babykina M.S., Antonov A.I., Dombrovskaya Y.V., Platonova E.V. Prevalence of haemosporidian infection in resident and migratory bird species in the Khingan Nature Reserve, Amur Region. Zoologicheskii Zhurnal, v. 104, 2025, 28-43, https://doi.org/10.31857/S0044513425100038.
65. Opaev A.S., Kolesnikova Y.A., Platonova E.V., Van Linh N., Dombrovskaya Y.V. Haemosporidian blood parasites diversity and prevalence in the Vietnamese Greenfinch (*Chloris monguilloti*), with special reference to the cyt b lineage hCARCHL01 (H147). Biology Bulletin, v. 52, 2025, 268, https://doi.org/10.1134/S1062359025609577.
66. Pipoyan S., Stepanyan I., Srapionyan L., Poghosyan J., Arakelyan M. Present-day ichthyofauna of small mountain rivers in the Araks River drainage basin. Zoology in the Middle East, v. 71, pp. 163-172, https://doi.org/10.1080/09397140.2025.2495220.
67. Poniewozik M., Yesayan T., Zięba E., Hambaryan L. First record of euglenophytes of the genus Trachelomonas in mountain lakes of Lori Province in the Republic of Armenia. Scientific Reports, v. 15, 2025, 37496, https://doi.org/10.1038/s41598-025-21570-w.
68. Rafat A., Asl K.D., Mazloumi Z., Talebi M., Charoudeh H.N. Natural killer cells in combination with the inhibition of telomerase induced apoptosis in Acute Myeloid Leukemia cells. Biochemistry and Biophysics Reports, v. 42, 2025, 102027, https://doi.org/10.1016/j.bbrep.2025.102027.
69. Redekop I., Spangenberg V. Chromosomal puzzle in snakes: adjacent interstitial telomeric sites on chromosome 5 in three species of genus *Vipera*. Protoplasma, 2025, https://doi.org/10.1007/s00709-025-02109-2.
70. Sahakyan L., Colombié C., Sukiasyan A., Hambaryan L., Grigoryan T., Haberzettl T., Kasper T., Stepanyan Z., Mkrtchyan S., Hovakimyan H., Joannin S., Avagyan A. Holocene freshwater microbialites of Lake Sevan (Armenia). Journal of Great Lakes Research, v. 51, 2025, 102647, https://doi.org/10.1016/j.jglr.2025.102647.
71. Saldaitis A., Yakovlev R.V., Dobrzański X., Kalashian M., Müller G.C., Prozorov A.M., *Dyspessa sudoli* sp. nov.–another new Armenian species (Lepidoptera, Cossidae, Cossinae, Endagriini). Zootaxa, v. 5659, 2025, 426-438, https://doi.org/10.11646/zootaxa.5659.3.7.
72. Saldaitis A., Yakovlev R.V., Kalashian M., Müller G.C., Dûda J., Prozorov A.M. *Phragmataecia druska* – a new species from the Ararat valley in Armenia (Lepidoptera, Cossidae). Ecologica Montenegrina, v. 88, 2025, pp. 89-103, https://dx.doi.org/10.37828/em.2025.88.9.
73. Sargsyan L., Zarikian N. Diversity of butterflies (Lepidoptera: Papilionoidea and Hesperioidea) of the South-Eastern corner of Tsaghkunyats Mountain Ridge, Republic of Armenia. Journal of Entomological Society of Iran, v. 45, 2025, pp. 373-379, https://doi.org/10.22034/jesi.45.3.3.
74. Seropian A., Zamani A., Bulbulashvili N., Arsenashvili E., Zarikian N., Szűts T. Velvet Revolution: integrative taxonomy of South Caucasian *Eresus* Walckenaer, 1805 (Araneae, Eresidae), with five new species. Zoological Journal of the Linnean Society, v. 205, 2025, zlaf169, https://doi.org/10.1093/zoolinnean/zlaf169.
75. Spangenberg V., Arakelyan M., Simanovsky S.A., Dombrovskaya Y., Khachatrian E.R., Kolomiets O. Tendency towards clonality: Deviations of meiosis in parthenogenetic Caucasian rock lizards. Biology of Reproduction, v. 113, 2025, 387-396, https://doi.org/10.1093/biolre/ioaf091.
76. Stüben P., Japarashvili Sh., Dallakyan M., Astrin J. Three new species of flightless Cryptorhynchinae from

the Caucasus (Coleoptera: Curculionidae). Zootaxa, v. 5601, 2025, pp. 305-321, https://doi.org/10.11646/zootaxa.5601.2.5.
77. Terlemezyan H., Harutyunyan H., Sargsyan S., Karapetyan G., Mkrtchyan H., Zarikian N., Hovsepyan A., Sargsyan M. Analyzing the counteractive impact of *Bacillus thuringiensis* on oriental fruit moth, *Grapholita molesta* in peach orchards of Armavir, Armenia. Indian Journal of Agricultural Research, v. 59, 2025, pp. 1-6, https://doi.org/10.18805/IJARe.AF-963.
78. Terlemezyan H., Sargsyan S., Harutyunyan H., Zarikian N., Mkrtchyan H., Sargsyan M. Efficacy of native strains of Bacillus thuringiensis against apple ermine moth and their impact on soil biological activity in the Republic of Armenia. Journal of Biological Control, v. 39, 2025, pp. 267-273, https://doi.org/10.18311/jbc/2025/49296.
79. Tigranyan M. Annotated checklist of thrips (Thysanoptera) of Armenia. Caucasian Entomological Bulletin, v. 21, 2025, 93-96, https://doi.org/10.5281/zenodo.15113232.
80. Tigranyan M.A., Wahlberg E., Kalashian M.Yu. On the distribution of the western flower thrips *Frankliniella occidentalis* (Pergande, 1895) (Thysanoptera: Thripidae) in Armenia. Euroasian Entomological Journal, v. 24, 2025, 226-228, https://doi.org/10.15298/euroasentj.24.04.13.
81. Tork M., Sadeghi M., Asgarian-Omran H., Basirpour B., Ahmadi S., Ghasemzadeh F., Sarvi S., Gholami S., Hosseini S.A., Daryani A., Aghayan S.A. Assessment of simultaneous IgM, IgG avidity, and IgA testing in diagnosis of acute toxoplasmosis in pregnant women: a systematic review and meta-analysis study. BMC Pregnancy and Childbirth, v. 25, 2025, 537, https://doi.org/10.1186/s12884-025-07580-6.
82. Tork M., Sadeghi M., Basirpour B., Fattahian A., Ahmadi S., Sarvi S., Davoodi L., Hataminejad M., Gholami S., Daryani A., Aghayan S.A., Hosseini S.A. The global status of toxoplasmic myocarditis: A case series and systematic literature review. IDCases, v. 42, 2025, e02354, https://doi.org/10.1016/j.idcr.2025.e02354.
83. Tork M., Sadeghi M., Sarvi S., Khazaei F., Basirpour B., Ahmadi S., Shariatzadeh S.A., Hosseini S.A., Zamaniyan M., Daryani A., Aghayan S.A. Vitamin D3 status and seroprevalence of *Toxoplasma gondii* in reproductive-aged women in Northern Iran. BMC Women's Health, v. 25, 2025, 544, https://doi.org/10.1186/s12905-025-04114-2.
84. Tork M., Sarvi S., Asgarian-Omran H., Sadeghi M., Basirpour B., Hatami Nejad M., Gholami S., Hosseini S.A., Daryani A., Aghayan S.A. Design and optimization of IgG avidity test for differentiating acute from chronic human toxoplasmosis: A systematic review and meta-analysis. Experimental Parasitology, v. 268, 2025, 108883, https://doi.org/10.1016/j.exppara.2024.108883.
85. Treves A., Khorozyan I. Robust inference and errors in studies of wildlife control. Scientific Reports, v. 15, 2025, 33131, https://doi.org/10.1038/s41598-025-18497-7.
86. Vardanyan T.V., Barseghyan N.E., Barseghyan R.E., Gabrielyan B.K. Features of the distribution of fish species composition of the mountain Akhuryan River (Armenia) under the influence of small hydroelectric power plants. Ecosystem Transformation, v. 8, 2025, pp. 213-227, https://doi.org/10.23859/estr-230420.
87. Virabyan L., Petrosyan R., Ayvazyan I., Khachatrian E.R., Dombrovskaya Y., Solovyeva V., Spangenberg V. Polyploidy in germ cell of brown bear *Ursus arctos* (Ursidae, Mammalia): A case report. Reproductive Biology, v. 25, 2025, 101024, https://doi.org/10.1016/j.repbio.2025.101024.
88. Weesner R.M., Drovetski S.V., Aghayan S.A., Voelker G. Haemosporidian infections in three sympatric *Phylloscopus* species: does host or environment determine parasite prevalence? Journal of Ornithology, 2025, pp.1-11, https://doi.org/10.1007/s10336-025-02345-6.
89. Yakovlev R.V., Dûda J., Kalashian M., Prozorov A.M., Japaridze L.-G., Hulsbosch R., Müller G.C., Saldaitis A. Description of *Dyspessa gayane* sp. n. collected in southern Armenia with comparison to other relatives from the *D. tristis* species group (Lepidoptera, Cossidae, Cossinae). Ecologica Montenegrina, v. 82, 2025, 169-176, https://dx.doi.org/10.37828/em.2025.82.12.
90. Yepremyan H., Asatryan V., Dallakyan M., Shahnazaryan G., Pusch M. Testing macrophyte-based assessment tools developed under the EU Water Framework Directive for application in a Caucasus region country (Armenia). Water, v. 17, 2025, 1352, https://doi.org/10.3390/w17091352.
91. Zamani A., Seropian A., Zarikian N., Bulbulashvili N., Szűts T. Different, but still the same: integrative taxonomy confirms a new species of *Eresus* Walckenaer, 1805 (Araneae, Eresidae) from the South Caucasus. Zookeys, v. 1249, 2025, pp. 1-13, https://doi.org/10.3897/zookeys.1249.159081.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան
Փոխտնօրեն՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան
Էլեկտրոնային փոստ՝ armbiotech@gmail.com
Կայքէջ՝ www.armbiotech.am

Մասնագիտական խորհուրդ 018՝ «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա»
Նախագահ՝ ակ. Ա.Սաղյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են Կենտրոնի հավաքածուի ֆոնդի պահպանման աշխատանքները: ԿԹԲ-ների ավելի քան 700 շտամ 4 ամիսը մեկ պարբերությամբ վերացանքսով պահպանվել է MRS ագարի միջավայրում, որոնցից գիտական և արդյունաբերական նշանակություն ունեցող 130 շտամ պահպանվել է նաև յուղազերծ կաթի վրա (ամիսը մեկ անգամ պարբերականությամբ վերացանքսով): Խմորասնկերի հավաքածուի 570 շտամ պահպանվել է GIN կարծր ագարային սննդամիջավայրի վրա՝ 6 ամիսը մեկ անգամ պարբերությամբ վերացանքսի միջոցով: Ապահովվել է միտոսպորիկ սնկերի շուրջ 1000 և բազիդիոմիցետների 34 շտամների պահպանումը: Վազելինի յուղի տակ 4 տարի պահելուց հետո ստուգվել է տարբեր ցեղերի 45 շտամի կենսունակությունը: *Penicillium* և *Aspergillus* ցեղերի շտամները պահպանել են իրենց վերարտադրողական ակտիվությունը: Իրականացվել են սննդամիջավայրերի համեմատական փորձարկումներ՝ հաշվի առնելով *Bacillus thuringiensis*-ի սպորառաջացման և տոքսինների սինթեզի ունակությունը: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա 80 շտամից ընտրվել է սպորներ և էնդոտոքսին առաջացնող բարձր ակտիվությամբ 5 շտամ: Ճառագայթասնկերի աճի պայմաններն օպտիմալացնելու համար փորձարկվել են տարբեր սննդամիջավայրեր: Հաստատվել է, որ 30˚C ինկուբացիայի դեպքում կարտոֆիլի ագարը մեզոֆիլ ձևերի համար ապահովել է աճի լավագույն ցուցանիշները, մինչդեռ թերմոֆիլ ճառագայթասնկերի համար օպտիմալ են համարվում պեպտոն-օսլայի ագարը և 56°C ջերմաստիճանում ինկուբացիան (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բագիյան):

B.amyloliquefaciens MDC 1974 շտամի α-ամիլազի գենը amy1974_pBE-S_NdeI_sig_F և amy1974_pBE-S_XbaI_R փրայմերների կիրառմամբ, ՊՇՌ մեթոդով ամպլիֆիկացվել է գենոմային ԴՆԹ-ից, որից հետո Գիբսոնի հավաքման մեթոդով կլոնավորվել է pBE-S մաքոքային վեկտորի կազմում: Կառուցված pBE-S_*amy*1974 նպատակային վեկտորի ընտրության և բազմացման համար օգտագործվել են *E.coli* Top 10 բջիջները: α-ամիլազ արտազատող շտամ-արտադրիչի ստացման նպատակով ռեկոմբինանտ վեկտորով տրանսֆորմացվել են *B.subtilis* RIK 1285 շտամի բջիջները: Սեփական ազդանշանային պեպտիդի գենից զուրկ ակտիվ տրանսֆորմանտներն օգտագործվել են ֆերմենտման սննդամիջավայրի օպտիմալացման համար: Ֆերմենտումն ընթացել է կոլբաներում՝ հինգ նույն սինթետիկ կազմն ունեցող միջավայրերերով (1% գլյուկոզ, 1% օսլա, 0.3% $(NH_4)_2SO_4$ 0.2% NH_4Cl, 0.5% KH_2PO_4, 0.025% $MgSO_4$) և օրգանական ազոտի տարբեր աղբյուրներով (40-ական մգ/լ) ու կանամիցինի (10 մգ/լ) ավելացմամբ: Օպտիմալացման արդյունքերը ցույց են տվել, որ T7 և T8 միջավայրերն ապահովում են ֆերմենտի զգալիորեն ավելի բարձր ակտիվություն, T8 միջավայրում 48-րդ ժ հետո ֆերմենտի ակտիվությունը հասնում է 740 միավոր/մլ: Ծավալային ֆերմենտման դեպքում շտամն արտադրում է մոտ 2000 միավոր/մլ

ակտիվությամբ α-ամիլազ: Ֆերմենտի ակտիվության կախվածությունը ջերմաստիճանից ցույց է տվել լայն միջակայք 45-70°C՝ 65°C գագաթնակետով: Ֆերմենտի ակտիվությունը կախված pH-ից՝ բարձր է 4.7-7.9 միջակայքում՝ մաքսիմումը pH 6.5-ում: Ֆերմենտի ջերմակայունությունը 35°C-65°C դեպքում նվազել է 25%-ով, 68°C-ում 20 րոպե ինկուբացիայից հետո պահպանվել է ֆերմենտի ակտիվության 50%-ը: Ֆերմենտի ջերմակայունության կախվածությունը pH-ից ցույց է տվել առավել մեծ կայունություն՝ pH 6,5–8,2, գագաթնակետը pH 7.6-ի դեպքում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

P.rhodozyma խմորասնկի քիմիական մուտագենեզի արդյունքում ստացվել են աստաքսանտին սինթեզող շտամներ, որոնք դիմակայուն են բարձր ջերմաստիճաններին (25–28°C), որոնցից հետագա հետազոտությունների համար ընտրվել է MAS8 շտամը: Կենսառեակտորներում օպտիմալացվել են աստաքսանտին արտադրող *P.rhodozyma* MAS8-ի ֆերմենտման միջավայրերն ու պայմանները, մշակվել են աստաքսանտինի անջատման, իդենտիֆիկացման և վերլուծության մեթոդները: Սննդամիջավայրի ընտրության նպատակով փորձարկվել են գինեգործության (բագաս 1 վարդագույն, բագաս 2 դեղնագույն) և գարեջրի արտադրության (մնացորդային խմորասնկեր) թափոնները: Աստաքսանտինի առավել բարձր ելքն ապահովել են գարեջրի արտադրության ֆիլտրված թափոնները, ինչը թույլ է տվել 40-50%-ով նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը: Ֆերմենտման օպտիմալ պայմանները որոշվել են 7 լ կենսառեակտորում՝ ջերմաստիճանը - 28°C, pH - 4.5, մանրէազերծված օդը 1 ծավալ միջավայրին 0.8 ծավալ օդ րոպեում: Աստաքսանտինի ելքը 120 ժ հետո կազմել է 4.5 գ/լ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Իրականացվել է հավաքածուի *P. aeruginosa* MDC5249 շտամի և կլինիկական *P.aeruginosa* 80 շտամի վիրուլենտության գեների վերլուծություն: Ուսումնասիրությունը ներառել է վիրուլենտության գործոնները կոդավորող 4 հիմնական գեներ՝ lasB (էլաստազ), lasI (ացիլ հոմոսերին սինթազ), lasR (տրանսկրիպցիայի ակտիվատոր) և aprA (ալկալային պրոտեազ): ՊՇՌ արդյունքները կլինիկական *P. aeruginosa* 80 շտամի գենոմում բացահայտել են ԴՆԹ-ի հատվածներ, որոնք համապատասխանում են բոլոր ուսումնասիրված վիրուլենտության գործոնի գեներին, ինչը վկայում է այս շտամի արտահայտված պաթոգեն ներուժի մասին: MDC5249 շտամի գենոմում համապատասխան հատվածներ չեն հայտնաբերվել, ինչը կարող է վկայել կա՛մ այդ գեների բացակայության, կա՛մ դրանց կառուցվածքի փոփոխությունների մասին, որոնք խանգարում են օգտագործված պրայմերների կոմպլեմենտարությանը: Հաշվի առնելով *P.aeruginosa* 80-ի կայունությունը հակաբիոտիկների տարբեր դասերի նկատմամբ՝ այս շտամը կարող է դասակարգվել որպես պոտենցիալ խիստ վտանգավոր:

Ուսումնասիրվել է ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների ազդեցությունը *P.aeruginosa*-ի արտաբջջային պրոտեազների ընդհանուր ակտիվության, *C.histolyticum*-ի կոլագենազի և սերինային պրոտեազների (տրիպսին և պրոտեինազ K) ակտիվության վրա: Ցույց է տրվել, որ Fmoc-լեյցիլ-ալիլգլիցինը, Fmoc-իզոլեյցիլ-ալիլգլիցինը և (S)-ալիլգլիցինը չեն արգելակում *P.aeruginosa*-ի արտաբջջային պրոտեազների ընդհանուր ակտիվությունը և չեն ազդում տրիպսինի և պրոտեինազ K-ի ակտիվության վրա: Սակայն դրանք ցուցաբերել են յուրահատուկ արգելակող ազդեցություն *C.histolyticum*-ի կոլագենազի վրա: Որոշվել են Fmoc-լեյցիլ-ալիլգլիցինի, Fmoc-իզոլեյցիլ-ալիլգլիցինի IC_{50} արժեքները, որոնք հավասար են համապատասխանաբար 2.38 մՄ և 2.68 մՄ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Գենետիկասելեկցիոն եղանակով ստացված L-տրիպտոֆան սինթեզող շտամներից ընտրվել է *Br. flavum* C18 շտամը, որը տարբերվում է կուլտուրալ հեղուկում ուղեկցող ամինաթթուների բացակայությամբ: L-տրիպտոֆանի առավելագույն ելքն ապահովելու

համար օպտիմալացվել են ֆերմենտման տեխնոլոգիական պարամետրերը՝ ներառյալ ածխածնի և ազոտի աղբյուրները, աէրացիան և գործընթացի տևողությունը: Ուսումնասիրվել է տարբեր միաշաքարների և երկշաքարների, ինչպես նաև շաքարավազի, մելասայի և մալտոզի ազդեցությունը: Շտամի առավելագույն աճը և L-տրիպտոֆանի ամենաբարձր ելքը (100%) դիտվել են 15% սախարոզի դեպքում, որն ամբողջությամբ յուրացվել է 96 ժ ընթացքում: Պարզվել է, որ տրիպտոֆանի սինթեզի համար արդյունավետ ազոտի աղբյուր է ամոնիումի սուլֆատը: Առավելագույն կենսասինթետիկ ակտիվությունն ապահովվում է $(NH_4)_2SO_4$-ի 5% կոնցենտրացիայի դեպքում: L-տրիպտոֆանի սինթեզն ուսումնասիրվել է ճոճանակի տարբեր արագությունների (100–250 պտ/րոպե) դեպքում: Լավագույն արդյունքը՝ մինչև 8.0 գ/լ L-տրիպտոֆան, ստացվել է 220 պտ/րոպե արագության և ֆերմենտման 96 ժամ տևողության դեպքում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Ցույց է տրվել, որ ազոտֆիքսող *Rhizobium/Agrobacterium* շտամները ցուցաբերել են ազոտֆիքսելու և ֆիտոհորմոն ինդոլ-3-քացախաթթու (ԻՔԹ) սինթեզելու ունակություն: Ազոտի ֆիքսման ամենաբարձր ակտիվությունը դիտվել է M-1, MR-1, X26 և H20 շտամների մոտ, ԻՔԹ-ի սինթեզի համար՝ M-1 և X26 շտամների մոտ: Հողում մանրէների կենսունակությունը մնում է բարձր 4 ամսվա ընթացքում: Հաստատվել է, որ ԿԹԲ-ների 20 փորձարկված շտամներից *L. plantarum* NCDO 820-ը և *L. lactis* MDC 10881-ն ունեն ամենամեծ հականկային ակտիվությունը, որոնք արդյունավետ արգելակում են *Penicillium, Aspergillus, Alternaria* և *Fusarium* ցեղերի ֆիտոպաթոգեն սնկերի աճը: Գյուղատնտեսական մշակաբույսերի 20 տեսակից մեկուսացվել է 39 ԿԹԲ շտամ: Ընտրվել է հաստատված տեսակային պատկանելությամբ 18 շտամ, որոնք բնութագրվում են բարձր կենսաբանական ակտիվությամբ և կարող են օգտագործվել որպես մերանային կուլտուրաներ և կենսախթանիչներ գյուղատնտեսության մեջ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Մշակվել և վալիդացվել է գազային քրոմատոգրաֆիայի (ԳՔ) մեթոդ տարբեր մատրիցաներում շրջակա միջավայրի կայուն օրգանական աղտոտիչների որակաքանակական նույնականացման համար: Մասնավորապես ընտրվել է քլորօրգանական պեստիցիդների խումբը՝ հաշվի առնելով դրանց լայն կիրառությունը գյուղատնտեսությունում, կայունության ու բարձր կումուլյատիվ հատկությունները, կիրառման արգելքը եվրոպական որոշ երկներում: Առաջադրանքը կատարելու համար, համաձայն մշակված գծապատկերի, կառուցվել է թերմոգրաֆիական գրադիենտ, ստացվել է քլորօրգանական պեստիցիդների մոդելային լուծույթի ԳՔ քրոմատոգրամ: Իրականացվել է մեթոդի կիրառելիության գնահատում վերարտադրելիության, ճշտության, ճշգրտության, գծայնության, քանակական և որակական նույնականացման ստորին սահմանների չափանիշներին համապատասխան: Ստացված ցուցանիշները համապատասխանել են վալիդացված մեթոդների նկատմամբ գործող միջազգային պահանջներին, իսկ մշակված նոր մեթոդն առանձնանում է իր ընտրողականությամբ, զգայունությամբ և ճշտությամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Մշակվել է հոնի պտուղների համապարփակ օգտագործման անթափոն տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս ստանալ բնական մածուցիկ հանուկ, ինչպես նաև անտոցիանինների ու ճարպաթթուների խառնուրդների անջատում կորիզներից, կեղևից և պտղամսից: Ճարպաթթուների խառնուրդի հիման վրա պատրաստվել են պոտենցիալ հակաթութքային ակտիվությամբ օժտված ռեկտալ մոմիկների լաբորատոր նմուշներ: Հոնի կորիզի, կեղևի և պտղամսի էքստրակտների ճարպաթթվային կազմը վերլուծվել է գազային քրոմատոգրաֆիայի միջոցով: Քրոմատոգրամները ցուցադրել են հագեցած և չհագեցած ճարպաթթուների լայն տեսականի, որոնք ձևավորում են բուսական հումքի բարդ լիպիդային պրոֆիլը: 8-10 և 25-33 րոպեների միջակայքում հիմնական գագաթները համապատասխանում են պալմիտինային (C16:0), օլեինային (C18:1) և լինոլեային (C18:2) թթուներին,

որոնք համարվում են հոնի լիպիդային ֆրակցիայի գերիշխող բաղադրիչները (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Ուսումնասիրվել է *Lactobacillus* և *Enterococcus* ցեղերի պրոբիոտիկ շտամների համատեղ կուլտիվացման դեպքում մետաբիոտիկների, էկզոբազմաշաքարների (ԷԲՇ) և բակտերիոցինների (ԲՑՆ) փոխազդեցությունը: Պրոբիոտիկ հատկությունների հիման վրա ընտրված շտամները սինթեզել են արգինին, ԷԲՇ և օժտված են լեղու աղերի հիդրոլազի ֆերմենտատիվ ակտիվությամբ:

Enterococcus ցեղի շտամները, ի համեմատ *Lactobacillus* ցեղի, ցուցաբերում են ԲՑՆ-ների և ԷԲՇ-ների ավելի արդյունավետ սինթեզ: Գելֆիլտրացիայի մեթոդով կուլտուրալ հեղուկից անջատված մաքուր մետաբիոտիկները ցուցաբերում են տարբեր հակամանրէային ակտիվություն՝ կախված շտամի տեսակից, միացությունների մոլեկուլային կշռից և օգտագործված թեստ կուլտուրաների տեսակից: ԲՑՆ-ները և ԷԲՇ-ները *in vitro* խառնելու դեպքում նկատվում է հակամանրէային ակտիվության 30-90% նվազում, ինչը կախված է ԷԲՇ-ների կոնցենտրացիայից և բնույթից, ինչպես նաև շտամների տեսակային պատկանելիությունից: Շտամների համատեղ աճեցման դեպքում նկատվում է ամինաթթուների (իզոլեյցին, պրոլին, գլուտամատ և գլիցին) սինթեզի աճ, ինչը բարձրացնում է կենսապատրաստուկի սննդային արժեքը: Այնուամենայնիվ, արգինինի պարունակությունը կարող է նվազել առանձին շտամների աուքսոտրոֆության պատճառով (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

Ֆերմենտացված տարբեր մթերքներից մեկուսացվել են 47 Գրամ-դրական, կատալազ- և օքսիդազ-բացասական ԿԹԲ-ների շտամներ: Մորֆոլոգիական վերլուծությունը ցույց է տվել, որ 31 շտամ ներկայացված է ցուպիկաձև բջիջներով, իսկ մնացածը կոկեր են: Բոլոր շտամները տարբեր արագությամբ են ֆերմենտացնում կաթը, ինչը վկայում է նրանց պրոտեազային ակտիվության փոփոխականության մասին: Հետագա հետազոտությունների համար էյկմանի միջավայրում ընտրվել է առավել բարձր պրոտեոլիտիկ ակտիվությամբ օժտված 6 շտամ:

Կազեինային ագարի վրա շտամների վերնստվածքային և կուլտուրալ հեղուկների պրոտեոլիտիկ ակտիվության համեմատական գնահատումը ցույց է տվել, որ կուլտուրալ հեղուկները ձևավորում են ավելի մեծ պրոտեոլիզի գոտիներ (28-37 մմ), քան վերնստվածքայինը (22-25 մմ), ինչը կապված է կենդանի բջիջների առկայության և դրանց նյութափոխանակության ակտիվության հետ: Պրոտեոլիտիկ ակտիվությունն ուսումնասիրվել է տարբեր ջերմաստիճաններում՝ 37°C, 45°C, 50°C, 48 ժ ընթացքում, 5°C 14 օր տևողությամբ: Առավելագույն ակտիվությունը (33–37 մմ պրոտեոլիտիկ գոտի) դիտվել է 45°C-ում: 5°C-ում 5-րդ օրվանից սկսած նույնպես գրանցվել են պրոտեոլիտիկ գոտիներ՝ 14-րդ օրը հասնելով 8-19 մմ-ի, ինչը վկայում է ֆերմենտների ակտիվության պահպանման մասին (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ուսումնասիրվել է մոդելային լուծույթներից ծանր Me^{+} իոնների (Cu^{2+}; Ni^{2+}) սորբցիայի և դեսորբցիայի *Nostoc* PCC 7413 և 8109 ցիանոբակտերիաների ունակությունը: Cu^{2+}-ի սորբցիան (*Nostoc* PCC 7413). Cu^{2+} բարձր կոնցենտրացիայի դեպքում (22 մգ/մլ) առաջին 48 ժ ընթացքում դիտվել է կարճաժամկետ դրական սորբցիա, որը կապված է բջիջների մակերեսը կարբօքսիլային, ամինային և ֆոսֆատային խմբերի ակտիվ կապման հետ: 96-րդ ժամից հետո ցուցանիշը նվազել է համարյա մինչև զրո՝ բերելով բջիջների թունավոր քայքայման և հետագա դեսորբցիայի: Պղնձի միջին և ցածր կոնցենտրացիաների դեպքում սորբցիան բոլոր փուլերում եղել է բացասական, ինչը վկայում է դեսորբցիայի գերակշռման մասին, որն ուժեղանում է կենսազանգվածի թթվային ակտիվացման և Cu^{2+}-ի բարձր, թունավոր ազդեցության դեպքում: Ni^{2+}-ի սորբցիան (*Nostoc* PCC 7413). ի տարբերություն

պղնձի, նիկելը ցուցաբերել է կայուն դրական սորբցիա նույնիսկ բարձր կոնցենտրացիաների դեպքում (22 մգ/մլ), որը պահպանվել է մինչև 96 ժ՝ չնայած հետո աստիճանաբար նվազել է: Սա ցույց է տալիս Ni^{2+}-ի նկատմամբ շտամների ավելի բարձր հանդուրժողականությունը, և նիկելը երկարատև պահելու բջջային մակերեսի և ԷՊՍ-ի ունակությունը: *Nostoc* PCC 8109-ի մոտ Ni^{2}-ի դրական սորբցիա գրանցվել է միայն մետաղի ցածր և միջին կոնցենտրացիաների դեպքում (2.75–5.5 մգ/մլ) և միայն սկզբնական փուլերում (մինչև 24 ժ): Հետագայում ցուցանիշները տեղաշարժվել են դեպի դեսորբցիա, ինչը կապված է բջիջների ֆոտոսինթետիկ ապարատի վրա Ni^{2+}-ի արագ, թունավոր ազդեցության հետ (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Գենետիկորեն հաստատվել է լոբազգի չամանից մեկուսացված *Sinorhizobium* sp.-ի սիմբիոտիկ բակտերիաների տեսակային պատկանելիությունը: Դրանց մեծ մասն ունակ է պալարներ առաջացնել ոչ միայն չամանի, այլև ոլոռի, ոսպի, լոբու, վիկի և սիսեռի արմատների վրա, որոնք ավանդաբար վարակվում են *Rhizobium leguminosarum*-ի (ներառյալ ենթատեսակները) և *Mesorhizobium ciceri*-ի շտամներով: Համաձայն ստացված տվյալների՝ չամանի մոտ առավել ակտիվ պալարագոյացում դիտվել է *Sinorhizobium* sp.-ի FS-s, FD-i, FSt-t, FAm-s և FY-n շտամներով ինոկուլացիայի դեպքում, ինչն ապահովել է 0.10–0.13 գ չոր կշռով 48–62 հատ պալարի առաջացում և ստուգիչի հետ համեմատած՝ կանաչ զանգվածի 42.8–78.5% աճ: Միաժամանակ ոլոռի մոտ 8 շտամ՝ FD-i, FSt-t, FH-q, FM-n, FAm-s, FY-n, FCh-i, FG-r, ձևավորել է բնորոշ վարդագույն պալարներ՝ 0.08–0.17 գ չոր կշռով 142–475 հատ, կանաչ զանգվածի 53.7–118.7% աճով: Լոբու արմատների վրա 9 շտամ (FD-i, FH-q, FN-t, FL-n, FQ-t, FV-n, FD-k, FSh-i) առաջացրել է 25-50 պալար՝ ապահովելով կենսազանգվածի 25.7-48.5% աճ: Ոսպի մոտ FD-k, FD-i և FG-r շտամներն առաջացրել են 78-140 պալարներ (0.10-0.13 գ), որն ուղեկցվել է կանաչ զանգվածի 25.0-50.0% աճով: Սիսեռի մոտ 4 շտամ (FH-q, FH-ut, FCh-i, FG-r) ձևավորել է կլոր վարդագույն պալարներ, որոնցից FH-q-ը և FCh-i-ն ցուցաբերել են առավելագույն սիմբիոտիկ ակտիվություն՝ ապահովելով ստուգիչի հետ համեմատած վերգետնյա զանգվածի 18.3-83.6% աճ (ղեկ.՝ Ս.Հարությունյան):

Ուսումնասիրվել է բակտերիաների տարբեր շտամների NaCl-ի նկատմամբ հանդուրժողականությունը և հարմարվողականությունը, որոշվել են NaCl-ի արգելակող նվազագույն կոնցենտրացիաները (ՆԱԿ): NaCl-ը *A.ferrooxidans* Dr-ի համար կազմել է 0.005Մ (41.2% Fe^{2+}-ի օքսիդացման արգելակում), *L.ferriphilum* CC-ի համար՝ 0.05Մ. միաժամանակ էական արգելակում չի դիտվել 0.01-0.02Մ NaCl-ի դեպքում: *S.thermosulfidooxidans* 41 բնական կուլտուրան նույնպես ունի 0.05Մ ՆԱԿ, սակայն արգելակումը կազմել է միայն 35.3%: Ըստ NaCl-ի նկատմամբ դիմադրողականության՝ շտամները դասակարգվել են հետևյալ հերթականությամբ՝ *S.thermosulfidooxidans*, *L. Ferriphilum* և *A. ferrooxidans*: Ադապտացումը NaCl-ի աստիճանաբար ավելացվող կոնցենտրացիաների նկատմամբ էականորեն բարձրացրել է բակտերիաների դիմադրողականությունը: Fe^{2+}-ի օքսիդացման արգելակման ընդամենը 7.2%-ի դեպքում *A. ferrooxidans* կուլտուրայի ՆԱԿ-ը բարձրացել է 10 անգամ (միչև 0.05Մ), իսկ *S. thermosulfidooxidans*-ինը՝ 2 անգամ (մինչև 0.1Մ): *S. thermosulfidooxidans* կուլտուրայով պիրիտի կենսատարրալվացման դեպքում 0.1Մ NaCl-ը ցուցաբերել է նվազագույն ազդեցություն, իսկ ադապտացումը 0.3Մ NaCl-ի նկատմամբ նվազեցրել է արգելակումը 0.2 - 0.4Մ NaCl-ի դեպքում: Ավելին, 0.1Մ NaCl-ի դեպքում դիտվել է պիրիտի կենսատարրալվացման մոտ 7,1% խթանում: NaCl-ի նկատմամբ *S.thermosulfidooxidans*-ի ադապտացումը թույլ է տվել 0.2 և 0.4Մ NaCl-ի դեպքում ավելացնել Cu-ի կորզումը խալկոպիրիտից 5-8 անգամ: 0.4Մ NaCl-ի դեպքում ձեռք է բերվել պղնձի գրեթե ամբողջական կորզումը ծովի ջրի աղայնության մոտ մակարդակի վրա, ինչը կայուն

կենսատարրալվացման հեռանկարներ է բացում տարածաշրշանի ջրի պակաս ունեցող շրջաններում (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Վարդանյան):

Իրականացվել են հումքի (կարմիր երեքնուկի ծաղկաբույլեր, քամերեոն նեղատերևի տերևներ) քիմիական և ֆիզիկաքիմիական վերլուծություններ, այդ թվում՝ որոշվել է կենսաբանորեն ակտիվ միացությունների (ԿԱՄ) պարունակությունը: Ուսումնասիրվել է ԿԱՄ-երի ուլտրաձայնային էքստրակցիայի արդյունավետությունը՝ ալիքի հաճախականությունը, հզորությունը, ամպլիտուդան, լուծիչի բաղադրությունը, ջերմաստիճանը, հումք-լուծիչ հարաբերակցությունը, էքստրակցիայի տևողությունը փոփոխելիս: ԿԱՄ-երի առավելագույն կոնցենտրացիայով նպատակային բույսերի ջրասպիրտային ոգեթուրմերի կայուն արտադրությունն ապահովելու համար որոշվել են օպտիմալ պայմաններ: Մշակվել են մեթոդներ ցածր ջերմաստիճաններում վակուում-թորման եղանակով երեքնուկի և քամերեոնի 35-45% ջրային խտանյութեր, ինչպես նաև լիոֆիլիզացման եղանակով չոր էքստրակտներ ստանալու համար: Իրականացվել է ջրային և չոր էքստրակտների քանակական վերլուծություն (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Իրականացվել է (S)-2-N-(N՝-բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտի և α-տեղակալված պրոպարգիլգլիցինի Շիֆի հիմքի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսի սինթեզ [Ni^{II}-(*S*)-BPB-(*S*)-Bn-PGly: Նշված միացությունը կիրառվել է որպես ելային ամինաթթվային սինտոն Մաննիխի ռեակցիայի հետազոտման համար: Մշակվել են α-տեղակալված պրոպարգիլգլիցինային կոմպլեքսի Մաննիխի ռեակցիայի օպտիմալ պայմանները: Սինթեզված կոմպլեքսներից նպատակային ամինաթթուների անջատումն իրականացվել է համաձայն նկարագրված մեթոդների: Ակտիվացված էսթերների մեթոդով սինթեզվել են ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող 4 նոր դիպեպտիդներ՝ 9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-β-[4-ալլիլ-3-(պիրիդինիլ-4′-իլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանիլգլիցին, (9-ֆլուորենիլմե-տօքսիկարբոնիլ-(S)-β-[4-ալիլ-3-(պիրիդինիլ-3′-իլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանիլգլիցին, N-տերտ-բուտօքսիկարբոնիլ-(S)-ալանիլ-(S)-α-պրոպարգիլգլիցին, N-տերտբուտիլօքսիկարբոնիլգլիցիլ-(S)-α-պրոպարգիլգլիցին (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Իրականացվել են (*S*)-BPB քիրալային օժանդակ ռեագենտի և ամինաթթվի Շիֆի հիմքի հետ Ni^{II}-իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսների ամինաթթվային մնացորդի (ֆենիլալանինի արոմատիկ օղակի 4-րդ դիրքում) հալոգենիդի հենքի վրա Սուզուկիի քրոս համակցման ռեակցիաներ տարբեր ֆենիլ բորաթթուների հետ: Արդյունքում սինթեզվել են բենզոյական օղակի տարբեր տեսակի և տարբեր դիրքերում տեղակալիչներով էնանտիոմերապես մաքուր ֆենիլալանինի ածանցյալներ, որոնցից մի քանիսն օգտագործվել են ակտիվացված էսթերների մեթոդով դիպեպտիդների ստացման համար: Սինթեզված պեպտիդների կենսաբանական ակտիվությունն ուսումնասիրվել է *in silico*՝ AutoDock 4 և PASS-Online ծրագրերի կիրառմամբ: Ստացված բոլոր միացությունները (կոմպլեքսներ, ամինաթթուներ, պեպտիդներ) բնութագրվել են ժամանակակից սպեկտրալ անալիզի եղանակներով (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Տարբեր խմորված սննդամթերքներից և մեկոնիումից համապատասխանորեն մեկուսացվել են ԿԹԲ-ների 47 և բիֆիդոբակտերիաների 8 շտամներ: Սթրեսային տարբեր պայմաններում ուսումնասիրվել են դրանց աճի բնութագրերը, այդ թվում՝ կայունությունը NaCl-ի (6%), լեղային աղերի (մինչև 1%) բարձր կոնցենտրացիաների և թթվայնության (pH 2) նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բագիյան):

Մշակվել է առանց օրգանական լուծիչների կիրառման, մատչելի քիմիական նյութերի օգտագործմամբ գինու արտադրության ընթացքում ստացվող խաղողի մզվածքից բարձր ելքով ջրալույծ մելանինի լուծամզվածքի ստացման ունիվերսալ արդյունաբերական մեթոդ: Աշնանացան գարու օրինակով ուսումնասիրվել է ստացված էքստրակտը, որպես կենսախթանիչ նյութի օգտագործման հնարավորությունը, բույսերի հզոր արմատային համակարգի ձևավորման համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Հակաուռուցքային, հակաբակտերիալ, հակաօքսիդանտային և հակահիպերտենզիվ ակտիվությամբ օժտված միացությունների ստացման նպատակով իրականացվել է սպիտակուցային և ոչ սպիտակուցային ամինաթթուների վրա հիմնված նոր պեպտիդների նախագծում, սինթեզ և ակտիվության ուսումնասիրություն: *In silico* սկրինինգը հնարավորություն է տվել բացահայտել առավել խոստումնալից դիպեպտիդները, որոնց մի մասը սինթեզվել են՝ ներառյալ բորտեզոմիբի, էնալապրիլի և լիզինոպրիլի նմանակները: Միացությունների կառուցվածքները հաստատվել են միջուկային-մագնիսական ռեզոնանսի, ինֆրակարմիր ռեզոնանսի և մասս-սպեկտրոմետրիայի միջոցով (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան):

Թերմոֆիլ մանրէների համակեցությունից (հավի գոմաղբ և ծղոտի կոմպոստ *Agaricus bisporus*-ի աճեցման համար) ստացված M2 մետագենոմը վերլուծվել է թիրոզին ֆենոլ լիազի (TPL) գեների առկայության համար: Հետագա կլոնավորման համար առանձնացվել են 2 TPL-ների նուկլեոտիդային և ամինաթթվային հաջորդականությունները: InterPro ծրագրային փաթեթը և BLAST վերլուծությունը ցույց են տվել, որ TPL ֆերմենտները՝ NGGEFEI 08691 և NGGEFEI 40502, պատկանում են *Bacilli bacterium*-ին և *Bacillota bacterium*-ին: Ընտրված TPL գեների հիման վրա նախագծվել են *E. coli*-ում և *B. subtilis*-ում էքսպրեսման համար նախատեսված 8 զույգ պրայմերներ, այդ թվում՝ 6-ը հիստիդինի ներկայությամբ (His-tagged) և առանց դրա տարբերակներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Քոլոյան):

Ուսումնասիրվել է մոդելային լուծույթներից Cu^{2+} և Ni^{2+} իոնների հեռացման դինամիկան՝ օգտագործելով ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիաների (*Rhodobacter capsulatus* MDC 6508, *Rba. sphaeroides* MDC 6509 և *Rhodopseudomonas palustris* MDC 6506) կուլտուրաները: Ստացված տվյալները վկայում են բակտերիաների՝ ծանր մետաղների իոնների հետ փոխազդեցության բարդ բազմագործոն բնույթի մասին (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Զաքոյան):

Իրականացվել է ելային նախանյութերի սինթեզ, մշակվել են դեհիդրոամինաթթվային մնացորդ պարունակող կոմպլեքսին պրոպարգիլամինի միացման ռեակցիայի օպտիմալ պայմաններ, անջատվել և բնութագրվել է կոմպլեքս Գլայզերի հոմո- և հետերոհամակցման ռեակցիաներում ուսումնասիրության համար (ղեկ.՝ ք.գ.թ. Լ.Հայրիյան):

Ցույց է տրվել, որ էպիթելային բջիջների համար ադհեզիան, պրոտեոլիտիկ ակտիվությունը, լեղու աղերի հիդրոլազային ակտիվությունը, ինչպես նաև մետաբիոտիկների սինթեզը կախված չեն շտամների տեսակային պատկանելիությունից: Ընտրված ԿԹԲ-երի հիման վրա ստեղծվել են տարբեր կոնսորցիումներ: Հաստատվել է, որ համատեղ աճեցման դեպքում պահպանվում է հակամանրէային ակտիվությամբ միացություններ սինթեզելու շտամների ունակությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Կարապետյան):

Իրականացվել է կենսապլաստիկը քայքայող մանրէների սկրինինգ և նույնականացում: Կլոնավորվել են տվյալ գործընթացի համար պատասխանատու համապատասխան ֆերմենտները կոդավորող գեները: Քայքայման ակտիվության գնահատման համար օգտագործվել են *Pseudomonas* և *Bacillus* ցեղերի շտամները: Կենսաինֆորմատիկ վերլուծությունը թույլ է տվել բացահայտել PHA դեպոլիմերազի գեները *Priestia megaterium* L8 և *P. aryabhattai* A13 բացիլային շտամներում, որոնք կլոնավորվել են *E. coli* էքսպրեսիոն համակարգում: Ֆերմենտները մաքրվել են, հաստատվել է դրանց ակտիվությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Պալոյան):

Ուղղորդված մուտագենեզի համար *In silico* իրականացվել է β-գլյուկոզիդազ ֆերմենտի

հետազոտություն նպատակային ամինաթթվային մնացորդների նույնականացման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Պալոյան):

Ամինաթթուների կատալիտիկ և ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի տարաբնույթ ռեակցիաներում հետազոտվել են նախկինում սինթեզված սալենային կոմպլեքսները, աքիրալային ամինաթթվային սուբստրատները և Ni(II) իոնի հարթ–քառակուսային քիրալային կոմպլեքսները (ղեկ.՝ ակ. Ա.Սաղյան):

M2 թերմոֆիլ մետագենոմից առանձնացվել են հիդրոլազների (1,3-1,4-β-գլյուկանազ, 2 էնդո-1,4-β-քսիլանազ) և պերօքսիդազների (գունանյութի գունաթափող և հեմ-կախյալ) գեները, որոնք Գիբսոնի մեթոդով կլոնավորվել են *Bacillus subtilis*/*E.coli* մաքոքային pBE-S վեկտորի կազմում: Նանոպորային տեխնոլոգիայի կիրառմամբ կատարվել է 7 ամբողջական բակտերիալ գենոմի սեքվենավորում: Լրացուցիչ շտրիխ-կոդավորման եղանակով սեքվենավորվել են 3 պլազմիդ, 16S ռԴՆԹ-ի 18 գեն: 16S ռԴՆԹ գենի ամպլիկոնների հիման վրա վերլուծվել է 2 մետագենոմի կենսաբազմազանությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

Ուսումնասիրվել է քեմոլիթոտրոֆ բակտերիաների կենսաբազմազանությունը Կապանի գործող, Կավարտի լքված հանքավայրի ԹՀԴ-ի և Արծվանիկի պոչամբարի նմուշներում: Մետագենոմային հետազոտության տվյալները ցույց են տվել բակտերիաների և արխեաների գերակշռում *Proteobacteria* (68–72%) դոմինանտող ֆիլումով, որոնց հաջորդել են *Actinobacteria* և *Bacteroidetes* ֆիլումները: Ցեղային կազմը տարբերվում է նմուշների քիմիական պրոֆիլով: Նույնականացվել են մետաղների նկատմամբ կայուն գեները՝ Cu (cop-unnamed, copA, copF, copR, copC, copG, ruvB), Fe (acn), As (arsC, arsT, pstB), Ag (silA), Hg (merA, merR1) (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Վարդանյան):

Գրականության տվյալների և դոկինգ վերլուծությունների հիման վրա ընտրվել է 4 պոտենցիալ կենսաակտիվ ամինաթթու, որոնցից 2-ը սինթեզվել են: Դրանց հիման վրա մշակվել է ավելի քան 100 պեպտիդային կառուցվածք, որոնց կենսաբանական ակտիվությունը (հակաբակտերիալ, հակասնկային, հակաօքսիդանտային) գնահատվել է համակարգչային սկրինինգի միջոցով: Նույնականացվել են առավել արդյունավետ դիպեպտիդները, որոնց մի մասը սինթեզվել և բնութագրվել են: Հաստատվել է, որ տրիազոլային օղակով միացությունները ցուցաբերում են արտահայտված հակասնկային ակտիվություն: Քինազոլինային օղակով մի շարք միացություններ ցուցաբերել են C վիտամինի հետ համեմատելի բարձր հակառադիկալային ներուժ (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան):

Իրականացվել է ելային նախանյութերի սինթեզ, մշակվել են դեհիդրոամինաթթվային մնացորդ պարունակող կոմպլեքսին պրոպարգիլամինի միացման ռեակցիայի օպտիմալ պայմաններ, Մաննիխի ռեակցիայում ուսումնասիրության համար անջատվել և բնութագրվել է կոմպլեքս (ղեկ.՝ ք.գ.թ. Լ.Հայրիյան):

Synechocystis sp., *Chlorella vulgaris* և *Neochloris oleoabundans* ջրիմուռների մոտ ուսումնասիրվել է ֆոսֆորի միացությունների տարբեր կոնցենտրացիաների և կուլտիվացման տևողության ազդեցությունը լիպիդների կենսասինթեզի վրա: Ցույց է տրվել, որ ֆոսֆորի չափավոր դեֆիցիտը, կուլտիվացման օպտիմալ տևողության հետ համադրված, խթանում է լիպիդների կուտակումը՝ ներառյալ չեզոք լիպիդները և գլիկոգլիցերոլիպիդները (ղեկ.՝ կ.գ.թ. Բ.Հարությունյան):

Իրականացվել է նոր կենսաակտիվ պեպտիդային միացությունների նախագծում, սինթեզ և in silico/in vitro գնահատում: AutoGrid, AutoDock և AutoDock Vina ծրագրերի միջոցով կատարվել է ոչ սպիտակուցային ամինաթթուների, դրանց 9-Fmoc- պաշտպանված ածանցյալների և կարճ պեպտիդների *in silico* սկրինինգ՝ ըստ հակաբակտերիալ, հակասնկային և հակակոլագենազային ակտիվության: Դոկինգ վերլուծությունը (ΔG մինչև –9.7 կկալ/մոլ) թույլ է տվել առանձնացնել կառուցվածքները, որոնք ձևավորում են կայուն

ջրածնային և π–π փոխազդեցություններ *C. histolyticum*-ի սերինային պրոտեազի ակտիվ կենտրոնում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Սարգսյան):

Սինթեզվել է գրականության մեջ չնկարագրված 3 պաշտպանված ոչ սպիտակուցային ամինաթթու և 2 պաշտպանված սպիտակուցային ամինաթթու: Նշված ամինաթթուների հիման վրա սինթեզվել է 5 նոր պոտենցիալ կենսաակտիվ տրիպեպտիդ (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան):

Սինթեզվել է իմիդոզոլիլալանինի 2 իզոմեր հետագայում համապատասխան օլիգոպեպտիդներ ստանալու նպատակով (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ուսումնասիրվել է մասնիկների չափի ազդեցությունը PCB-ներից մետաղների կենսատարրալուծման վրա՝ օգտագործելով երկփուլ գործընթաց և *Acidithiobacillus ferrooxidans* 61-ով արտադրված կենսածին Fe^{2+}: PCB-ները մանրացվել են մինչև ≤125 մկմ, 125–630 մկմ, ≥800 մկմ և 1000–1500 մկմ ֆրակցիաների: Պղնձի օպտիմալ վերականգնումը դիտվել է 125--630 մկմ չափերի դեպքում, ինչը պայմանավորված է մակերեսի ավելացման և մասնիկների բախումների հավասարակշռությամբ: Ցինկը լավ տարրալուծվում է մեծ մասնիկներից (>800 մկմ), իսկ ալյումինը՝ փոքրերից (<125 մկմ) (ղեկ.՝ Ն.Աբրահամյան):

Կավարտի լքված հանքավայրերից առանձնացվել են Cu^{2+} և Zn^{2+} սորբցիայի պոտենցիալով շտամներ: Պղնձի կենսասորբցիան pH 6-ի և կենսազանգվածի 3 գ/լ-ի դեպքում հասել է մոտ 71.5%-ի: Հետազոտություններն ուղղված են պայմանների օպտիմալացմանը և մետաղների կապման մեխանիզմների ուսումնասիրմանը (ղեկ.՝ Ս.Բարսեղյան):

Ուսումնասիրվել են մետալուրգիական շլակներից գունավոր մետաղների կորզման և տարրալուծող լուծույթների ռեգեներացիայի պայմանները: Կենսառեգեներացիայի համար օգտագործվել են բարձրակտիվ միկրոօրգանիզմներ, դրանց կոնսորցիումներ և իմոբիլիզացված ձևեր բնական կրիչների (ցեոլիտ և շունգիտ) վրա: Մշակվել է մետալուրգիական շլակների վերամշակման երկփուլ կենսահիդրոմետալուրգիական տեխնոլոգիա (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Խաչատրյան):

Ուսումնասիրվել է ծանր մետաղների պարունակությունը և մանրէային կազմը Հայաստանի բազմամետաղային հանքավայրի թթու հանքային դրենաժում: Հաստատվել է, որ ուսումնասիրված նմուշներում գերակշռել են բակտերիաները, հանդիպել են սնկեր, խմորասնկեր և ջրիմուռներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Խաչատրյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Tkhruni F., Israyelyan A., Karapetyan K., Antimicrobial activity of metabiotics of lactic acid bacteria, Moldova, LAP LAMBERT Academic Publishing, 2025, 56p.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Թերլեմեզյան Հ.Լ., Սարգսյան Մ.Ա., Հարությունյան Հ.Ռ., Սարգսյան Ս.Մ., Հովսեփյան Ա.Ս, Մկրտչյան Հ.Ն., Այվազյան Ա.Մ., *Bacillus thuringiensis* տեսակի տեղական բակտերիական միջատասպանների փորձարկում օղակավոր մետաքսագործի թրթուրների դեմ, Ե., «Զեկույցներ», հտ.125, N 2, 2025, էջ 44-53:
3. Հովհաննիսյան Հ., Բարսեղյան Ա., Մելքումյան Ի., Մնացականյան Ն., Խաչյան Մ., Հարությունյան Մ., Դանիելյան Լ., Արժեքավոր դեղաբույսերի էքստրակտների ազդեցության ուսումնասիրությունը պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների աճի վրա, Ե., «Գիտության և կրթության հիմնախնդիրները թվային փոխակերպումների դարաշրջանում» գիտ. հոդված. ժող., 2025, էջ 365-378:
4. Мелкумян М.А., Паносян Г.А., Кочаров С.Л., Синтез и антибактериальная активность некоторых новых полифункциональных производных циклогексанолов, М., “Химико-фармацевтический журнал”, 2025, т. 59, N 8, 2025, с. 17-25.

5. Aghajanyan A., Avagyan G., Tsaturyan A., Hovhannisyan G., Yeghiyan K., Gasparyan N., Tadevosyan A., Martirosyan H., Valorization of grape pomace through melanin extraction and its biostimulant effects on yield and development of winter barley, Chilean Journal of Agricultural Research, v. 85, N 5, 2025, pp. 635–649. https://doi.org/10.4067/S0718-58392025000500635
6. Aghajanyan A., Minasyan E., Soghomonyan T., Melyan G., Hovhannisyan G., Yeghiyan K., Karapetyan K., Tsaturyan A., Isolation, purification, identification of melanin from grape pomace extracts, and its application areas, Bioactive Compounds in Health and Disease, v. 8, N 5, 2025, pp. 204-216. https://www.doi.org/10.31989/bchd.8i5.1609
7. Arshakyan N., Hovhannisyan V., Ghazaryan A., Grigoryan A., Danielyan K., Poghosyan G., Danielyan L., Hovhannisyan H., Feschyan S., Hovsepyan M., Sulashvili N., Kislichenko V., Chichoyan N., Chemical composition and biological capacity of essential oils and ethanol extracts from endemic *Nepeta* species in the Armenian flora, Natural Product Research, v. 18, 2025, pp. 1-14. https://doi.org/10.1080/14786419.2025.2526756
8. Avetisyan S., Paronyan M., Hovsepyan A., Tsaturyan A., Hovhannisyan S., Toplaghaltsyan A., Abrahamyan M., Koloyan H., Functionalization of bacterial cellulose with antibiotics for use as a wound dressing, D., Bioactive Compounds in Health and Disease, v. 8, N 9, 2025, pp. 375-385. https://doi.org/10.31989/bchd.v8i9.1735
9. Babayan B., Yesayan T., Melkumyan M., Mikaelyan G. Bagdasaryan S., Elbakyan S., Avanesyan A., Yesayan A., Sevoyan G., Artificial fragrances and semisynthetic perfumes: The hidden health risks, Functional Food Science, v. 5, N 11, 2025, pp. 621-632. https://doi.org/10.31989/ffs.v5i11.1829
10. Badalyan A., Hovhannisyan N., Aperyan G., Abrahamyan V., Grigoryan V., Grigoryan L., Arstamyan L, Petrosyan A., Solomonyan A., Petrosyan G., The use of grape seeds in the production of truffle-type candies, Functional Food Science, v. 5, N 7, 2025, pp. 315–327. https://doi.org/10.31989/ffs.v5i7.1688
11. Bagiyan V., Zakoyan A., Samvelyan A., Samvelyan G., Verdyan A., Ghazanchyan N., Kinosyan M., Davidyan T., Harutyunyan B., Goginyan V., Chitchyan K., Influence of indigenous strains of *Saccharomyces* on the biochemical composition of wine from Voskehat (Kharji) autochthonous grape variety of the Vayots Dzor region, Armenia, Bioactive Compounds in Health and Disease, 2025, v 8, N 8, pp. 334-349. https://doi.org/10.31989/bchd.v8i8.1645
12. Bagiyan V., Zakoyan A., Verdyan A., Ghazanchyan N., Kinosyan M., Davidyan T., Harutyunyan B., Hovhannisyan S., Soghomonyan T., Goginyan V., Tsaturyan A., Chitchyan K., Yeast whey-enriched bread: nutritional profile and potential functional relevance, Functional Foods in Health and Disease, v. 15, N 11, 2025, pp.854-866. https://doi.org/10.31989/ffhd.v15i11.1745
13. Chitchyan K., Verdyan A., Hovhannisyan S., Soghomonyan T., Khoyetsyan L., Mkhitaryan A., Gochyan M., Hambardzumyan A., Reva O., Hovhannisyan H., Bagiyan V., Armenian fermented dairy product “Narine”: characterization of the whole-genome sequence of starter bacteria *Lactobacillus helveticus* and potential probiotic marker genes, Functional Food Science, v. 5, N 12, 2025, pp. 703-716. https://doi.org/10.31989/ffs.v5i12.1792
14. Dadayan S., Arstamyan L., Martirosyan D., Badalyan A., Mkhitaryan H., Abrahamyan S., Khanamiryan K., Petrosyan G., Grigoryan L., Grigoryan V., Solomonyan A., Dadayan A., Hovhannisyan N., Novel functional confectionery: incorporating blueberry extract for nutritional enhancement and quality improvement, Functional Foods in Health and Disease, v.15, N9, 2025, pp.551–560. https://doi.org/10.31989/ffhd.v15i8.1746
15. Dadayan S., Poghosyan A., Arstamyan L., Chakhoyan A., Mkrtchyan G., Hovhannisyan A., Hovhannisyan N., Dadayan A., Development of a waste-free technology for comprehensive processing of *Cornus mas* (dogwood) fruits: Production of natural viscous extract and medical suppositories with potential anti-hemorrhoidal activity, Functional Foods in Health and Disease, v. 15, N 9, 2025, pp. 610–624. https://doi.org/10.31989/ffhd.v15i9.1726
16. Danielyan L.V., Barseghyan A.H., Melkumyan I.E., Mnatsakanyan N.G.,. Khachanyan M.G, Harutyunyan M.H., Hovhannisyan H.G., Transforming ordinary yogurt into functional yogurt using low doses of ethanolic extract of *Origanum vulgare* L., Functional Food Science, v. 5, N 8, 2025, pp. 378–392. https://doi.org/10.31989/ffs.v5i8.1725
17. Dyukova K., Paloyan A., Khoyetsyan L., Mkhitaryan A., Antranikian G., Hambardzumyan A., Characterization of thermostable β-glucosidase immobilized on linen fabric, Journal of Dairy Science, 2025, pp. 1-13. https://doi.org/10.3168/jds.2025-27014

18. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzyan L.V., Khachatryan T.T., Gasparyan L.R., Mardiyan Z.Z., Muradyan R.E., Arakelyan H.H., Poghosyan A.S., Synthesis and evaluation of antibacterial activity of cyclopropylphosphonates, Russian Journal of General Chemistry, v. 95, N 7-8, 2025, pp. 298-304. https://doi.org/10.7868/S3034559625070062
19. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzyan L.V., Mardiyan Z.Z., Khachatryan T.T., Karapetyan H.A., Gasparyan L.R., Poghosyan A.S., Synthesis of phosphoryl-substituted cyclopropanes based on cyano-activated CH acids. 1 : 2 adduct-product of *O*- and *C*-alkylation of dimedone, Russian Journal of General Chemistry, v. 95, 2025, pp.1086-1092. https://doi.org/10.1134/S1070363225600390
20. Ghazaryan M.S., Sargsyan T.H., Mkrtchyan G.F., Apoyan S.H., Dadayan A.S., Geolchanyan A.V., Vardapetyan S.M., Hakobyan K.S., Hovhannisyan A.M., Investigation of biologically active substances and antimicrobial activity in *Stevia rebaudiana* extracts, Proceedings of Yerevan State University B: Chemistry and Biology Sciences, v. 59, N 1–2, pp. 12–18. https://doi.org/10.46991/PYSUB.2025.59.1-2.012
21. Ghochikyan V., Avetisova G., Soghomonyan T., Manukyan L., Keleshyan S., Melkonyan L., Characterization of important new industrial enzymes CGTase and their application in the transglycosylation of Stevia glycosides, Functional Food Science, v. 5, N 12, 2025, pp. 717–732. https://doi.org/10.31989/ffs.v5i12.1773
22. Goginyan V., Harutyunyan S., Stepanyan T., Khachatryan G., Bagiyan V., Hovhannisyan R., Harutyunyan B., Kinosyan M., Ghazanchyan N., Davidyan T., Verdyan A., Chitchyan K., Effect of complex microbial preparation of free-living and symbiotic nitrogen-fixing bacteria for agricultural crops. Brazilian Journal of Biology, v. 85, 2025, pp. 1-11. http://doi.org/10.1590/1519-6984.292171
23. Gouveia L., Ferreira A., Bastos C.R.V., Avetisova G., Karapetyan Zh., Toplaghaltsyan A., Melkonyan L., Consortium of microalgae/nitrogen-fixing bacteria as a next-generation biofertilizer, biostimulant and biopesticide, Journal of Applied Phycology, v. 37, 2025, pp. 3703–3713. https://doi.org/10.1007/s10811-025-03587-w
24. Grabmaier I., Bittner S., Kainz S., Barrado C., Bagiyan V., Bakunc S., Zamora D., Enhancing community participation in disaster risk management: Recommendations for an inclusive approach, Open Research Europe, v. 50, N 5, 2025, pp. 1-23. https://doi.org/10.12688/openreseurope.18230.1
25. Grigoryan A., Karayan H., Bagdasaryan S., Evadzhyan T., Ghukasyan P., Melkumyan M., Babayan B., Therapeutic utilization of tetrodotoxin for treating carcinomas: a comparative molecular docking and dosage adjustment study, Bioactive Compounds in Health and Disease, v. 8, N 10, 2025, pp. 2769-2426. https://doi.org/10.31989/bchd.v8i10.1788
26. Grigoryan H., Marmaryan G., Dashtoyan A., Karapetyan K., Kasarda R., Paloyan A., Fik M., Marmaryan Y., Effects of lactic acid bacteria on pork meat maturation, Acta fytotechnica et zootechnica, v. 28, N 2, 2025, pp.122–132. https://doi.org/10.15414/afz.2025.28.02.122-132
27. Grigoryan H., Marmaryan G., Soghomonyan T., Khoyetsyan L., Paloyan A., Tkhruni F., Karapetyan K., Hambardzumyan A., Genetic and biochemical characterization of *Lacticaseibacillus rhamnosus* MDC 2012 and its potential in processing of raw pork meat. Bioactive Compounds in Health and Disease, v. 8, N 11, 2025, pp. 462–473. https://doi.org/10.31989/bchd.8i11.1757
26. Zaqaryan N., Khallouf R., Manukyan A., Atoyan V., Tsokolakyan A., Yeranosyan M., Chailyan S., Danielyan K., PEGylated Albumin-Based Drug Carriers for the Treatment of Experimental Stroke. Open Biotechnol J., 19, 2025, p. e18740707379038. http://dx.doi.org/10.2174/0118740707379038250617195726.

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղարի ժ/պ՝ թղթակից անդամ Ա.Իշխանյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Լ.Գասպարյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի, Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի, Երկրաբանական գիտությունների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 4 ակադեմիկոս, 5 թղթակից և 16 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում բաժանմունքն անցկացրել է 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 16 նիստ:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովում լսվել են 2024թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության վերաբերյալ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի և ինստիտուտների տնօրենների տարեկան հաշվետվությունները, բաժանմունքի առաջատար գիտնականների զեկուցումները գիտական գործունեության ոլորտի, գիտական նվաճումների վերաբերյալ:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2026թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերը, բաժանմունքի և ինստիտուտների 2025թ. աշխատանքային պլանը, 2026-27թթ. ուստարվա ԳԱԱ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերը և «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» ծրագրի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման՝ բաժանմունքի գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը: Քննարկվել և երաշխավորվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, Ասիական սեյսմաբանական հանձնաժողովի գլխավոր քարտուղար դոկ., պրոֆ. Լի Լիին և Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարանի դեղագիտության ֆակուլտետի պրոֆ. Աթինա Գերոնիկակիին պատվավոր դոկտորի կոչմանն արժանացնելու հարցերը:

Քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» և պետական նպատակային ծրագրերի հաշվետվությունները:

Բաժանմունքի ինստիտուտների գիտնականները համատեղ գիտական աշխատանքներ իրականացնելու և գիտաժողովներին մասնակցելու նպատակով գործուղվել են (80 գործուղում, որոնցից 10-ը ֆինանսավորվել է ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների համար նախատեսված միջոցներից) ՌԴ, Գերմանիա, Էստոնիա, Հունգարիա, Կոտայքի մարզ և այլն:

Բաժանմունքի ինստիտուտները հրապարակել են 249 հոդված գրախոսվող ամսագրերում (190-ը Scopus/WoS), 20 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում

(13-ն արտասահմանյան), 192 թեզիս (150-ն արտասահմանում), ստացել 2 արտոնագիր: Պաշտպանվել է 5 թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքը մասնակցել է ինստիտուտների տարեկան ժողովներին և ստացված արդյունքների քննարկմանը:

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ս.Մինասյան
Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան
Գիտքարտուղարի ժ/պ՝ Լ.Սեդրակյան
Էլեկտրոնային փոստ՝ ichph@ichph.sci.am
Կայքէջ՝ www.chph.sci.am

Մասնագիտական խորհուրդ 017՝ «Քիմիա»
Նախագահ՝ թղթ. անդ. Ս.Խառատյան, գիտքարտուղար՝ ք.գ.թ. Մ.Զաքարյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Տարրական ռեակցիաների մակարդակում էլեկտրաքիմիական և սպեկտրաչափական եղանակներով կինետիկորեն որոշվել են ֆոլատների (ֆոլաթթու, դիհիդրոֆոլաթթու, տետրահիդրոֆոլաթթու, 5-ֆորմիլ տետրահիդրոֆոլաթթու) հակառադիկալային տարողությունները ջրային միջավայրում պերօքսիլային (ROO·) և կայուն դիֆենիլ պիկրիլհիդրազիլային (DPPH·) ռադիկալների նկատմամբ:

Թթվածնի կլանման որոշման ամպերաչափական եղանակով բացահայտվել են ֆոլատների (ֆոլաթթու, դիհիդրոֆոլաթթու, տետրահիդրոֆոլաթթու, 5-ֆորմիլ տետրահիդրոֆոլաթթու) հակաօքսիդիչային հատկությունները միցելային համակարգում, մոլեկուլային թթվածնով մեթիլլինոլեատի պերօքսիդացման շղթայական ազատ-ռադիկալային ռեակցիայում: Որոշվել են համապատասխան քանակական կինետիկական բնութագրերը:

Ելանյութերի իմպուլսային ներմուծմամբ կինետիկական էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի (ԷՊՌ) եղանակով հետազոտվել և քանակապես որոշվել են էբսելենի և որոշ էբսելենածանցյալ միացությունների հակապերօքսիռադիկալային տարողությունները երրորդային բութիլ պերօքսիլային ռադիկալների հետ ռեակցիայում: Առաջարկվել է հակառադիկալային ազդեցության քիմիական մեխանիզմ էբսելենածանցյալ միացությունների համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան):

Օգտագործելով CHEMKIN համակարգչային ծրագիրը՝ թվային մոդելավորման միջոցով ուսումնասիրվել է ծծմբի երկօքսիդի հավելանյութի ազդեցությունը մեթանի օքսիդացման վրա: Ստացվել է բավարար համապատասխանություն փորձնական տվյալների հետ: Հաշվարկները ցույց են տվել, որ ծծմբի երկօքսիդի հավելանյութն արագացնում է գործընթացը և մեծացնում մեթանի փոխակերպումը:

Ամոնիակի և ակտիվ մասնիկների փոխազդեցության պոտենցիալ էներգիայի մակերևույթի (ՊԷՄ) քվանտաքիմիական ուսումնասիրություններով NH3+H, NH3+O և NH3+OH համակարգերի համար ստացվել են ջերմաքիմիական տվյալներ, կառուցվել են էներգետիկ դիագրամներ, բացահայտվել ռեակցիայի ուղիները:

Քվանտային քիմիայի տարբեր հաշվողական եղանակներով (հիբրիդային DFT-B3LYP, DFT-M06-2X, կոմպոզիտային CBS-QB3 և ab initio MP2) իրականացվել է C2H4+HO2 և C2H4+CH3O2 ռեակցիոն համակարգերի ՊԷՄ-ի հետազոտություն: Պարզվել է, որ այս

համակարգերում էթիլենից H ատոմի հեռացումը պահանջում է նույն ակտիվացման էներգիան (27.6 կկալ/մոլ), իսկ էնթալպիաները համապատասխանաբար կազմում են 23.8 և 24.7 կկալ/մոլ: Ցույց է տրվել, որ առաջանում են նախա- և հետռեակցիոն Վան դեր Վաալսի կոմպլեքսներ: Որոշվել են դրանց կառուցվածքները: HO2 և CH3O2 ռադիկալներից H ատոմի էթիլենով անջատման ռեակցիաների էնթալպիաները որոշվել են համապատասխանաբար 6.7 և 36.1 կկալ/մոլ:

Էթօքսիլ ռադիկալի և դրա կոնֆորմերների հնարավոր ռեակցիաների էներգետիկ ուղիներն ուսումնասիրելով՝ որոշվել են C2H5O ընդհանուր բանաձևով ռադիկալի իզոմերների երկրաչափական և ջերմաքիմիական պարամետրերը: Համակարգի ՊԷՄ-ի վրա գլոբալ մինիմումը anti-CH3CHOH ռադիկալն է: Հայտնաբերվել են վինիլային սպիրտի, էթիլենի օքսիդի և քացախալդեհիդի առաջացմանը հանգեցնող ռեակցիաների անցումային վիճակները, որոշվել են դրանց ջերմաքիմիական պարամետրերը: CH3OCH2 մետօքսիմեթիլ ռադիկալը, որն ավելի կայուն է, քան C2H5O-ն, նույնպես տեղայնացվել է ուսումնասիրվող համակարգի ՊԷՄ-ի վրա (ղեկ.՝ ք.գ.դ. Ս. Արսենտև):

Միկրոալիքային ճառագայթմամբ սինթեզված խառը կարբիդային Fe–Mo–W–C կատալիզատորները ցուցաբերել են զգալիորեն բարձր ակտիվություն՝ համեմատած միաֆազ կարբիդների և անցումային մետաղների օքսիդների հետ: Օպտիմալ պայմաններում դիբենզոթիոֆենի (նավթամթերքներում ծծմբի հիմնական «աղբյուրը») ամբողջական օքսիդացումն ընթացել է մոտ 10 անգամ ավելի արագ, քան կիրառվող այլ կատալիզատորների դեպքում, իսկ կատալիզատորի բարձր ակտիվությունը հաստատում է մշակված մոտեցման հեռանկարայնությունը ծծումբ չպարունակող շարժիչային վառելիքների արտադրության ոլորտում:

Մշակվել է լանթանային շարքի մետաղների հեքսաբորիդների միկրոալիքային էներգախնայող և արագ սինթեզի եղանակ, որը թույլ է տվել պարզ ելանյութերից (լանթանիդների օքսիդներ և բոր) ընդամենը 10 րոպեում ստանալ LaB6 և PrB6: Կառուցվածքային և մորֆոլոգիական հետազոտությունները հաստատել են 1–5 մկմ մասնիկների չափերով, բարձր բյուրեղայնությամբ խորանարդային ֆազերի ձևավորումը, մինչդեռ ծանր լանթանիդների դեպքում դիտվել են խառը՝ բորիդային և բորատային ֆազեր, ինչը ցույց է տալիս մեթոդի լայն հնարավորություններն էներգիական սահմանափակումները հաղթահարելու համար (ղեկ.՝ ք.գ.դ. Դ.Դավթյան):

Ջերմակշռաչափական եղանակով կոբալտի (II) օքսիդի ածխածնով վերականգնման կինետիկայի ուսումնասիրությամբ ցույց է տրվել, որ վերականգնման արդյունքում, միաժամանակ հեքսագոնալ խիտ ծրարված բյուրեղային կառուցվածքի հետ, ձևավորվում է նաև նիստակենտրոն խորանարդային ֆազը: Բացահայտվել է տաքացման արագության (10–200°C/րոպե) ազդեցությունը կոբալտի ֆազային բաղադրության և վերականգնման արագության վրա:

ԲԻՍ եղանակով սինթեզվել է տիտանի կարբիդ – բարձրէնտրոպիական համաձուլվածք (TiC-ԲԷՀ) կոմպոզիտային փոշի, որը ցուցաբերում է օդում օքսիդացման նկատմամբ կայունություն մինչև 600°C, իսկ դրա եռակալված կոմպակտ նմուշները՝ մինչև 1000°C: Ստացված կոմպակտ նմուշները ցուցաբերել են բարձր միկրոկարծրություն ըստ Վիկերսի (1270±35 HV10), որը զգալիորեն գերազանցում է այլ եղանակներով ստացված TiC-ի հիմքով ծածկույթների միկրոկարծրությանը:

Լուծույթների այրման սինթեզի (ԼԱՍ) եղանակով ստացվել է մաքուր մանգանի ֆերրիտ (խառնուկների քանակը չի գերազանցում 0.06 զանգ.%), որը, շնորհիվ իր նանոկառուցվածքի, բնութագրվում է համեմատաբար ցածր կոերցիտիվությամբ և մնացորդային մագնիսացմամբ: Մնացորդային և առավելագույն մագնիսացման արժեքների հարաբերության

0.17 արժեքը ցույց է տվել, որ նյութը բնութագրվում է ֆերիմագնիսական վարքով, պիտանի է սենսորային տեխնոլոգիաներում կիրառման համար:

Կալիումի-նատրիումի նիոբիատի (ԿՆՆ) հիմքի վրա նոր կոմպոզիտային կապար չպարունակող պիեզոէլեկտրական նյութերի ստացումն իրականացվել է՝ զուգակցելով ԼԱՍ պրոցեսը և ջերմային մշակումը վառարանում: Այս մոտեցումը թույլ է տվել ստանալ միաֆազ ԿՆՆ, որը ցուցաբերել է այդ նյութին բնութագրական ֆազային անցումներ համապատասխան ջերմաստիճանային տիրույթներում՝ օրթոռոմբական կառուցվածքի անցումը տետրագոնալի 200 °C-ում և Կյուրիի կետի առկայությունը 400 oC-ում (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Հիդրիդային ցիկլի (ՀՑ) և բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակների կիրառմամբ ω–ֆազ պարունակող Ti_2Zr և Ti_2Hf համաձուլվածքներից սինթեզվել են ազոտ պարունակող $(Ti_2Zr)_2AlN$ և $(Ti_2Hf)_2AlN$ MAX ֆազեր: Սինթեզված նմուշների ռենտգենաֆազային (ՌՖ) վերլուծությունը ցույց է տվել, որ առաջացել են երկֆազ, հեքսագոնալ բյուրեղացանցով համաձուլվածքներ: ՌՖ վերլուծության արդյունքներով հաստատվել է ω ֆազ → MAX ֆազ անցումը (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան):

Հետազոտելով մետաղակերամիկական նյութերի ռեակցիոն եռաչափ տպագրության հնարավորությունը Mo-Si, Si-C, Nb-C հեռանկարային համակարգերում՝ ցույց է տրվել, որ դրանցում հնարավոր է միաժամանակ համատեղել 2 պրոցես՝ նպատակային նյութերի սինթեզը և եռակալումը:

Արհեստական մկանների եռաչափ տպագրությամբ իրականացվել է 3 տարբեր օլիգոմերների տպագրություն, ուսումնասիրվել են դրանց էլեկտրական և մեխանիկական հատկությունները դիէլեկտրիկ էլաստոմերների պատրաստման նպատակով: Կատարվել են հաշվարկներ էլեկտրոդային շերտի հաստության և պահանջվող հատկությունների որոշման համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Ուսումնասիրվել են հետերոկառուցվածքներում GaAs/AlGaAs միջուկ/թաղանթ տիպի տարբեր երկրաչափական պատկերներով ոչ գծային օպտիկական ճշտության և դրա հետ կապված օպտոէլեկտրոնային երևույթները, մասնավորապես դիտարկվել են տետրապոդ, կոնաձև և գանտելանման քվանտային կետերում: Մշակվել են բարձր ճշգրտությամբ և արդյունավետությամբ մեքենայական ուսուցման հիբրիդային մոդելավորման մեթոդներ, որոնք համատեղում են վերջավոր տարրերի մեթոդը և մեքենայական ուսուցման տարբեր ալգորիթմներ: Դրանց միջոցով ստացվել են ջերմաստիճանի և ճնշման ազդեցությամբ պայմանավորված ոչ գծային օպտիկական հատկությունները:

Մոդելավորվել են քվանտային կետ–հեղուկ բյուրեղ կոմպոզիտային համակարգերը, մասնավորապես իրականացվել է GaAs քվանտային կետի և 5CB հեղուկ բյուրեղի մոլեկուլի փոխազդեցության տեսական վերլուծություն, որը հիմնված է խտության ֆունկցիոնալ տեսության (ԽՖՏ) հաշվարկների վրա: Ստացվել են դիտարկված համակարգի օպտիմալացված մակերեսները մոլեկուլային օրբիտալների և մասնակի ազատ ուղեծրերի զբաղվածության բաշխվածությամբ: 5CB մոլեկուլի էներգետիկ արգելման գոտու համար ստացվել է 4.75 էՎ արժեքը, ինչը վկայում է ուլտրամանուշակագույն տիրույթում դրա թափանցելիության մասին:

Արտաքին մագնիսական դաշտի ազդեցությամբ GaAs–ի խիստ ձգված էլիպսոիդային քվանտային կետերում բիէքսիտոնների մագնիսական և օպտիկական հատկությունների հաշվարկները ցույց են տվել, որ մագնիսական դաշտի ուժեղացման հետ բիէքսիտոնի էներգիան աճում է, մինչդեռ կապի էներգիան դրսևորում է ոչ մոնոտոն կախվածություն. սկզբնական շրջանում այն մեծանում է էլեկտրոն-խոռոչ ձգողական փոխազդեցությունների գերակշռմամբ, սակայն որոշ շեմից հետո նվազում է էլեկտրոն-էլեկտրոն և խոռոչ-խոռոչ վանողական ուժերի ազդեցությամբ: Բացի այդ, բիէքսիտոնի մագնիսացումը նվազում է

մագնիսական դաշտի լարվածության և փոքր կիսաառանցքի մեծացման դեպքում: Հաշվարկվել է նաև ռեկոմբինացիայի ճառագայթային կյանքի տևողությունը, որը գտնվում է նանովայրկյանային միջակայքում, ընդ որում, այն կրճատվում է մագնիսական դաշտի ուժեղացման դեպքում, միաժամանակ մեծանում է կառուցվածքի փոքր կիսաառանցքի մեծացման ժամանակը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Հայրապետյան):

Իմպուլսային լազերային փոշենստեցման (PLD) եղանակով մշակվել է Al-ով լեգիրացված ZnO, TiO_2, SiO_2 նյութերի գերբարակ (<10 նմ) նանոկառուցվածքային թաղանթների և դրանց բազմաշերտ հետերոկառուցվածքների ստացման տեխնոլոգիա: Համակարգչային մոդելավորմամբ ստացվել են դրանց հենքով բազմաշերտ օպտիկական ֆիլտրերի օպտիմալ պարամետրերը: Պատրաստվել և հետազոտվել են դրանց կառուցվածքային և օպտիկական հատկությունները՝ օպտիկական անցման տիրույթում ապահովելով 99%-ը գերազանցող թափանցելիություն:

Սինթեզվել են ոսկու, արծաթի և ցինկի օքսիդային (AZO) պլազմոնային նանոմասնիկներ, ստացվել է տարբեր կոնցենտրացիաներով սպիտակուցային (BSA) լուծույթներում դրանց մշակմամբ սպիտակուցային ծածկույթով միջուկ-կեղև համակարգ: Իրականացվել է ստացված համակարգերի բնութագրում միջուկ-կեղև համակարգի ձևավորման, դրանց կապի բնույթի, չափերի և մակերևութային լիցքի որոշման նպատակով: AZO-BSA միջուկ-կեղև համակարգի համար առաջին անգամ արձանագրվել են մակերևույթի վրա ուժեղացող Ռաման սպեկտրի ցրման և մակերևույթի վրա ուժեղացված ինֆրակարմիր կլանման երևույթները: Ցույց է տրվել, որ համեմատած ոչ պլազմոնային նանոմասնիկների հիմքով միջուկ-կեղև համակարգերի պլազմոնային նանոմասնիկների առկայությամբ սպիտակուցների SERS/SEIRA ազդանշանը 13-14 անգամ ուժեղ է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Ուսումնասիրվել է 13,14-դիֆենիլդիբենզո[b,j][4,7]ֆենանտրոլինի (DBP3) բարակ թաղանթի գերարագ ռելաքսացիայի դինամիկան տարբեր ժամանակային լուծմամբ սպեկտրոսկոպիական եղանակներով, այդ թվում՝ TCSPC-ն, ֆլուորեսցենցիայի վերափոխումը, ֆեմտովայրկյանային անցումային կլանման սպեկտրոսկոպիան: Դիտարկվել են ֆենանտրոլինի S1 վիճակից և ներմոլեկուլային բենզոլային էքսիմերից առաջացող 2 ֆլուորեսցենցիայի ճառագայթման գոտիներ: Ներմոլեկուլային բենզոլային էքսիմերի ֆլուորեսցենցիայի կյանքի տևողությունը բարակ թաղանթում 10 անգամ կրճատվում է նոսր լուծույթի համեմատ, մինչդեռ հակառակը, DBP3-ի S1 ֆլուորեսցենցիայի կյանքի տևողությունը թաղանթում մեծանում է:

Նախագծվել և սինթեզվել է բարձր արդյունավետությամբ, ծանր ատոմներ չպարունակող, երկար ալիքային I տիպի ֆոտոհարուցիչ Me-FuBDP-ն, որը Bodipy ածանցյալն է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Գուրզադյան):

Ուսումնասիրվել են անօդաչու թռչող սարքերի միջոցով օդում թունավոր գազերի և գոլորշիների հայտնաբերման եղանակներն ու միջոցները: Դրական արդյունքներ գրանցվել են աղտոտման աղբյուրների մոտ, այդ սարքերի վրա տեղադրված օպտիկական սենսորների փորձարկումների ժամանակ:

Անօդաչու թռչող սարքերի հիմքի վրա մշակվել է փոքր օպտիկական սենսոր օդում CO, CO_2 և CH_4 վնասակար նյութերի գրանցման և քանակների չափման համար: Մշակվել է համացանցի միջոցով ազդանշանների առցանց ընթերցման համակարգ:

Մշակվել է նոր օպտիկապիրոմետրական գազային անալիզատորի մաթեմատիկական մոդելավորման եղանակ (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան):

Պատրաստվել են խիտոզանով ֆունկցիոնալացված հեղուկ բյուրեղային գրաֆենի օքսիդի (ՀԲԳՕ) թաղանթներ, որոնք համատեղում են ՀԲԳՕ-ի կառուցվածքային կարգավորվածությունն ու խիտոզանի կենսահամատեղելիությունը՝ ապահովելով լավարկված ու

բազմաֆունկցիոնալ հատկություններ՝ կիրառելի տվիչներում, կենսատեխնոլոգիաներում, ճկուն էլեկտրոնիկայում և առաջատար ֆունկցիոնալ ծածկույթներում:

Պատրաստվել են ՀԲԳՕ-ալգինատային միկրոգնդիկներ՝ բարելավված մեխանիկական ամրությամբ, կլանման ունակությամբ և ֆունկցիոնալ բնութագրերով, որոնք կարող են ծառայել որպես հարթակներ շրջակա միջավայրի մոնիթորինգի, դեղերի մատակարարման և հյուսվածքային ճարտարագիտության համար:

Ստացվել է հեղուկ բյուրեղային գրաֆենի օքսիդի հիմքով թանաք, որը կիրառելի է տպագրական էլեկտրոնիկայում, էներգետիկայում և սենսորային տեխնոլոգիաներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Ղարագուլյան):

Սինթեզվել են $Cs_{0.375}FA_{0.625}PbBr_{0.75}I_{2.25}$ և $Cs_{0.25}FA_{0.75}PbBr_{1.125}I_{1.875}$ պերովսկիտներ արևային բջիջներում կիրառելու նպատակով: Հետազոտվել է դրանց թաղանթների ձևավորման ընթացքը՝ կախված տարբեր գործոններից: Օգտագործվել են տարբեր մշակումներով ապակե տակդիրներ, կիրառվել է մեքենայական ուսուցում՝ համադրելով տարբեր փորձարարական եղանակներ (ՌՖԱ, մանրազննություն և այլն), գնահատվել է թաղանթների որակը: Խտության ֆունկցիոնալ տեսության (ԽՖՏ, DFT) հաշվարկներով որոշվել է նյութերի կայունությունը և կատարվել դրանց նույնականացում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Ասատրյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Գազ-քրոմատոգրաֆիական մասս-սպեկտրաչափական եղանակով ուսումնասիրվել են մոդելային լիպիդային հիդրոպերօքսիդի՝ կումոլի հիդրոպերօքսիդի հետ սելենօրգանական միացություններ դիֆենիլսելենիդի, դիֆենիլսելենօքսիդի և դիֆենիլդիսելենիդի փոխազդեցության, ինչպես նաև արգասիքների առաջացման կինետիկական օրինաչափությունները: Բացահայտվել են համապատասխան քանակական բնութագրերը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Սահակյան):

Թթվածնային ռադիկալների կլանման տարողության որոշման եղանակով, համակցված ֆլուորեսցենտային սպեկտրաչափության հետ, կինետիկորեն հետազոտվել և որոշվել են էբսելենի և դրա ածանցյալների հակապերօքսիռադիկալային տարողությունները (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Սահակյան):

Էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի (ԷՊՌ) սպեկտրաչափական կինետիկական եղանակով, ելանյութերի իմպուլսային ներարկմամբ, հետազոտվել և որոշվել են ֆլավանոիդների հակառադիկալային ակտիվության ու հակապերօքսիռադիկալային ունակության բնութագրերը երրորդային բութիլ պերօքսիլային ռադիկալների հետ ռեակցիայում (ղեկ.՝ ք.գ.թ. Մ.Մուսայելյան):

Քվանտային քիմիայի հաշվողական եղանակներով իրականացվել է $CH_3O+C_2H_4$ ռեակցիոն համակարգի ՊԷՄ հետազոտությունը: Հաշվարկվել են $CH_2O+C_2H_5$, $CH_3OH+C_2H_3$ և $CH_3OCH_2CH_2$ ադդուկտի առաջացման նվազագույն էներգիայի ուղիները, հետագա փոխակերպման ռեակցիաները: Ցույց է տրվել, որ ջրածնի ատոմի միջմոլեկուլային փոխանցման ռեակցիաներն էներգետիկորեն պակաս բարենպաստ են, քան CH_3O-ի փուլային միացումն էթիլենին, որին հաջորդում են ադդուկտի իզոմերումը և քայքայումը էթիլային ռադիկալի և ֆորմալդեհիդի առաջացմամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Դավթյան):

Սինթեզվել են ավելի քան մեկ տասնյակ նոր կառուցվածքով անցումային մետաղների կարբիդներ: Փորձարկվել են այլ անցումային մետաղներով դոպացված նոր կառուցվածքային ակտիվ կրիչներ, իրականացվել է կատալիզատորների ակտիվության և ընտրողականության ուսումնասիրում բջջանյութի կոնվերսիայի պրոցեսում: Ներդրվել է

բարձր ճնշումային ավտոմատացված անընդհատ հոսքային կատալիտիկ համակարգ և վերարտադրելի եղանակ՝ կատալիզատորների կիրառման տևողության ստուգման համար: Փորձարկվել է կատալիզատորների ակտիվության և ընտրողականության վերականգման ինչպես դասական, այնպես էլ միկրոալիքային ռեգեներացման մեթոդիկա: Սինթեզվել են կատալիզային մոդիֆիկացված համակարգեր իրական պրոցեսում կենսադիզելի վերամշակման փորձարկման համար: Նախագծվել և պլանավորվել է կենսազանգվածի պիրոլիզը մեղմ պայմաններում իրականացնելու գործընթացը (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

Մշակվել է արդյունավետ նիտրացնող խառնուրդի բաղադրություն, ընտրվել է թաղանթանյութի տեսակն ու ձևը, փորձարարական ճանապարհով համարժեքացվել է դրա մաքրությունն ու խոնավության աստիճանը: Նախագծվել և փորձարկվել են նիտրացնող թթուների մաքրման և խտացման համար թորման, ինչպես նաև նիտրացման հեռակառավարելի համակարգեր: Արդյունքում սինթեզվել և կայունացվել է 1 կգ բարձրորակ նիտրոթաղանթանյութ:

Որոշվել են թթվածնի և իներտ գազի օպտիմալ հարաբերակցությունները, որոնք ապահովել են ոչ ադամանդային ածխածնի արդյունավետ օքսիդացումը նվազագույն ջերմաստիճաններում՝ կեղծ «եռման շերտի» մշակման ընթացքում: Հաշվարկված պարամետրերը փորձարկվել և օպտիմալացվել են քվարցային հոսքային ռեակտորում, որից հետո վառարանային տաքացումը փոխարինվել է բարձր էներգախնայող միկրոալիքային ճառագայթմամբ հավասարաչափ տաքացման և ոչ ադամանդային ածխածնի արդյունավետ հեռացման համար (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

ԲԻՍ և էլեկտրակայծային եռակալման եղանակների համադրմամբ նմանակվել է մարգարտախեցու միկրոկառուցվածքը (Ti0.2Ta0.2V0.2Nb0.2Cr0.2)2AlC MAX ֆազ - ZrO2 կոմպոզիտում: Վերջինս բնութագրվել է բարձր հարաբերական խտությամբ (>99%), ցածր ջերմահաղորդականությամբ (≈6 Վտ·մ$^{-1}$·K^{-1}), բարձր կարծրությամբ (≈1400 HV5): Շնորհիվ թվարկված բնութագրերի՝ ստացված կոմպոզիտը կարող է կիրառվել որպես հակակոռոզիոն, ջերմամեկուսիչ բաղադրիչ այրման խցիկներում, ինդուկցիոն կոճերում և վառարաններում (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Բարձր էնտրոպիական գերբարձր ջերմաստիճանային (Ta0,2Hf0,2Ti0,2Nb0,2Mo0,2)B2 բորիդի սինթեզն իրականացվել է միափուլ փոխազդեցության արդյունքում, աննախադեպ ցածր ջերմաստիճանում (1070 °C), 1200 °C/րոպե տաքացման արագությամբ: Ցույց է տրվել, որ 0.2Ta–0.2Hf–0.2Ti–0.2Nb–0.2Mo–2B խառնուրդի փոխակերպումը զգայուն է տաքացման արագության նկատմամբ. 150 °C/րոպե արագության դեպքում ձևավորվում են առանձին դիբորիդներ, իսկ մեծ արագությունների (մինչև 4800 °C/րոպե) դեպքում ստացվում է միայն նպատակային բարձր էնտրոպիական բորիդ (ղեկ.՝ ք.գ.թ. Մ.Զաքարյան):

ԲԻՍ եղանակով առաջին անգամ սինթեզվել են Fe–Ni (մասամբ Al-ով փոխարինված) հիմքով մագնիսական նյութեր: Ցույց է տրվել, որ մագնիսական հատկությունները խիստ կախված են բորի պարունակությունից: Ստացված փորձնական արդյունքները համադրելի են տեսական կանխատեսումների հետ:

Իրականացվել է մանգանով դոպացված 211 տիպի (Cr2-xMnx)AlC MAX ֆազի սինթեզ: Բացահայտվել է մանգանի քանակական ազդեցությունը նշված ֆազի կառուցվածքային կայունության և մագնիսական վարքի վրա: Ընտրվել է մանգանով դոպացման օպտիմալ քանակությունը (x≈0.2), որն ապահովում է ֆազային կայունություն և ֆերոմագնիսական հատկություններ (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Եռացող լուծույթից համատեղ բյուրեղացման եղանակով իզոթերմ պայմաններում ստացվել են հավելանյութերով մոդիֆիկացված ամոնիումի նիտրատի (ԱՆ) նմուշներ: ՌՖ անալիզի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ԱՆ-ին որոշակի աղերի կամ դրանց

խառնուրդների հավելումը փոփոխում է ԱՆ-ի բյուրեղային կառուցվածքի նանոմակարդակը ֆազակայունացված ԱՆ-ի (ՖԿԱՆ) առաջացմամբ: Վերջինիս ստացումը փորձնականորեն հիմնավորվել է ուսումնասիրված ջերմաստիճանային տիրույթում ԱՆ-ին բնորոշ IV-III էնանտիոտրոպ ֆազային անցման բացակայությամբ, ինչպես նաև, ի տարբերություն ԱՆ-ի, նմուշների գործնականում անփոփոխ չափսերով՝ մինչև 200 տաքացման-սառեցման ցիկլերից հետո: ՖԿԱՆ-ի մոդիֆիկացված չորս բաղադրություններից լաբորատոր պայմաններում ստացվել են մեծ խմբաքանակներ ԱԹՍ-ների ռեակտիվ արագացուցիչներում կիրառելու նպատակով (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան):

ՀՑ և ԲԻՍ եղանակների համադրությամբ Cu-Nb, Cu-V, Ti-Cu, Ti-Zr-Cu-Ni, Ti-Nb-Cu-Ni, Ti-Al-Nb-Cr/Mn համակարգերում ստացվել են համապատասխան նպատակային համաձուլվածքներ: Ստացված արգասիքները բնութագրվել են ռենտգենաֆազային, էլեկտրոնային մանրազննության, դիֆերենցիալ-ջերմային, քիմիական և խտաչափական վերլուծությունների միջոցով (ղեկ.՝ տեխն.գ.դ. Ս.Դոլուխանյան):

Ընտրողական լազերային հալեցման եղանակով պատրաստվել են պղնձի, մոլիբդենի և նիոբիումի տարբեր համաձուլվածքներ, լավարկվել և մշակվել են դրանց եռակալման պարամետրերը, հետազոտվել են ստացված նմուշների ֆիզիկաքիմիական բնութագրերը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Մշակվել են մինչև ծավալային 50% հիդրօքսիապատիտ պարունակող կերամիկական խառնուրդներ եռաչափ տպագրության համար: Ուսումնասիրվել է խառնուրդների ռեոլոգիան, մշակվել են տպման պարամետրերը: Իրականացվել է տպագրված նմուշների կառուցվածքային, մեխանիկական և կենսաբանական բնութագրում (ղեկ.՝ ք.գ.թ. Վ.Ռստակյան):

Ստերեոլիտոգրաֆիայի և պտտվող ծածկույթի տեխնոլոգիաների կիրառմամբ պատրաստվել են դիէլեկտրական հատկություններով օժտված էլաստոմերներ: Ուսում-նասիրվել են ստացված նմուշների էլեկտրական և մեխանիկական հատկությունները, դրանց ջերմաստիճանային կախվածությունները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Կոնաձև GaAs/AlGaAs քվանտային կետերի կառուցվածքների ոչ գծային օպտիկական ուղղորդման վրա ճնշման ազդեցության հաշվարկային եղանակներով ցույց է տրվել, որ Decision Tree և Gradient Boosting մեքենայական ուսուցման մոդելներն ապահովել են լավագույն արդյունքները, ընդ որում՝ Decision Tree-ն հասել է $R^2 = 0.9984$, $MSE = 10^{-3}$ և $MAE = 9.1\times10^{-3}$ արժեքների 20 կբար ճնշման դեպքում: Այս արդյունքները ցույց են տվել, որ արտաքին մեխանիկական դաշտը զգալիորեն ազդում է էլեկտրոնային վիճակների էներգետիկական սպեկտրի և ալիքային ֆունկցիաների վրա՝ հնարավորություն տալով կառավարել ոչ գծային օպտիկական ուղղումը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Հայրապետյան):

Ստացվել են CdSe/CdS միջուկ/թաղանթ տեսակի քվանտային կետում 2 էլեկտրոնից բաղկացած համակարգի էներգետիկական սպեկտրը և ներգոտիական օպտիկական անցումները: Համակարգի սահմանափակող պոտենցիալը նկարագրվել է Վուդ–Սաքսոնի մոդելով, իսկ տեսական վերլուծությունն իրականացվել է արդյունավետ զանգվածի մոտարկման և խոտորման տեսության շրջանակում: Ցույց է տրվել, որ այսպիսի համակարգը բաղկացած է սինգլետ և տրիպլետ վիճակներից, որոնց միջև կարող են տեղի ունենալ Ռաբբի տատանումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Պ.Մանթաշյան):

Արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությամբ հանտելանման քվանտային կետերի էլեկտրոնային և օպտիկական հատկությունների հաշվարկներով ցույց է տրվել, որ դաշտի ուժեղացման դեպքում էլեկտրոնի էներգիան նվազում է Շտարկի շեղման պատճառով. խախտվում է ալիքային ֆունկցիայի սիմետրիան, վերանում են քվազի-այլասերումները և տեղի է ունենում էլեկտրոնի լոկալիզացիայի տեղափոխում կառուցվածքի տարբեր

հատվածների միջև: Բացահայտվել է, որ լիցքերի կոհերենտ տատանումների հաճախությունն ու ամպլիտուդը զգայուն են ինչպես թունելային կապի, այնպես էլ էլեկտրական դաշտի նկատմամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Սարգսյան):

Քիմիական գոլորշենստեցման եղանակով մշակվել և ստացվել են միապատ և բազմապատ ածխածնային նանոխողովակների (ԱՆԽ) սինթեզման օպտիմալ պայման-ները՝ ԱՆԽ արդյունավետ միջուկագոյացման և դրա աճի համար օգտագործելով FeMo/MgO կատալիզատոր: Տեսածրող էլեկտրոնային և ատոմաուժային մանրազննությամբ (SEM, AFM) և Ռաման-սպեկտրակոպիայի եղանակով հաստատվել է միապատ և ԱՆԽ-ների հաջող աճը կատալիզատորի նվազագույն ապակտիվացման պայմաններում: Բացահայտվել են կատալիզատորի բաղադրության և սինթեզի տեխնոլոգիական պարամետրերի ազդեցությունն ԱՆԽ-ների արդյունավետ ձևավորման և որակի լավարկման գործում: FeMo/MgO կատալիզատորը ցուցաբերել է բարձր կայունություն՝ նպաստելով նանոխողովակների աճին՝ կիրառելի արդյունաբերության մեջ:

Հետազոտվել են քիմիական շերտազատման եղանակով սինթեզված և 2 տարի սենյակային ջերմաստիճանում պահված գրաֆենի օքսիդի (ԳՕ) ֆիզիկաքիմիական-հատկությունների վերականգնման առանձնահատկությունները ջերմային մշակման միջոցով: Ցույց է տրվել, որ 2 տարի պահված ԳՕ-ն ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների՝ ընդունելով գլանաձև փաթույթի տեսք, սակայն ջերմային մշակման (20-70°C) արդյունքում վերականգվել են դրա սկզբնական ատոմաշերտային մորֆոլոգիան, մակերևութային լիցքի կայունությունը և ցիստեինի նկատմամբ ակտիվությունը:

Մշակվել են քիմիական (CVD) և պլազմաքիմիական (PECVD) գոլորշենստեցման եղանակներով MoS2-ի ստացման օպտիմալ տեխնոլոգիական պայմանները: Ցույց է տրվել, որ MoS_2-ի թաղանթների ձևավորումը SiO_2 տակդիրի մակերևույթին կախված է սինթեզի եղանակից, ջերմաստիճանային պայմաններից, գոլորշենստեցվող նյութի և տակդիրի միջև հեռավորությունից: Ձևավորվել են եռանկյունաձև և վեցանկյունաձև մեկ և մի քանի ատոմաշերտային կառուցվածքներ տակդիրի մակերևույթին՝ դասավորվելով զուգահեռ (CVD պրոցես) կամ ուղղահայաց (PECVD պրոցես), ազատ տեղակայված պատերի ձևով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Մշակվել են $Ta_2O_5/SiO_2/p$-Si/Al կառուցվածքով ունակային նանո-բիոսենսորների՝ պոլիմեր/ֆերմենտային ծածկույթների (պենիլցիլինազա, ուրեազա և կրեատինին դեիմինազ) մոդիֆիկացման և զգայուն մակերևույթների ստացման օպտիմալ պայմանները: Մշակվել է 4-բջջային չափիչ տակդիր, միաժամանակ 4 բիոսենսորների մուլտիպլեքսված չափում ապահովելու համար: Մուլտիպլեքսավորման եղանակով իրականացվել են միզանյութի և կրեատինինի միաժամանակյա հայտնաբերման փորձեր՝ ապահովելով բարձր զգայունութ-յուն և կայունություն: Ստեղծվել է միզանյութի հայտնաբերման չափումների ազդանշանների մշակման և դասակարգման ավտոմատացված համակարգ՝ բաղկացած տվյալների նախա-մշակման, սինթետիկ տվյալների գեներացման և մեքենայական ուսուցման փուլերից: Մեքե-նայական ուսուցման մոդելը 76% ճշտությամբ դասակարգել է միզանյութի կոնցենտրացիա-ների 0.1-50 մՄ միջակայքին համապատասխանող ազդանշանները (ղեկ.՝ Ա.Ցոկոլակյան):

Համակարգչային մոդելավորմամբ ուսումնասիրելով ալյումինով դոպացված ցինկի օքսիդի (AZO) պլազմոնային նանոմասնիկների կլանման առանձնահատկությունները՝ ցույց է տրվել, որ դրանց ռեզոնանսային կլանման վարքը, որոնց առավելագույն արժեքը գտնվում է միջին ինֆրակարմիր սպեկտրի տիրույթում, և ալյումինի կոնցենտրացիայի աճին զուգընթաց, կարող է աճել ավելի քան 10 անգամ: Քիմիական սինթեզի լուծույթային հետադարձ թորման եղանակով ստացվել են տարբեր կոնցենտրացիայով ալյումինի լեգիրմամբ նախընտրելի բնութագրերով բարձրորակ գնդային նանոմասնիկներ 16-33 նմ

բնութագրական չափերով: Փորձնականորեն ուսումնասիրվել և հաստատվել է նանոմասնիկ–սպիտակուց կոմպլեքսի ձևավորումը տարբեր սպիտակուցային կոնցենտրացիաների դեպքում բնորոշ չափերի և լիցքերի փոփոխությամբ: Լուսացրման տվյալների վերլուծությամբ ցույց է տրվել, որ նանոմասնիկ–սպիտակուց համակարգում վերջինի փոքր կոնցենտրացիաների դեպքում (0.1 մգ/մլ BSA) ձևավորվում է հիմնականում միաշերտ, իսկ ավելի մեծ կոնցենտրացիաների դեպքում՝ բազմաշերտ սպիտակուցային ծածկույթով միջուկ-կղզյակ համակարգ (ղեկ.՝ Ա.Ցոկոլակյան):

Իրականացվել է ամինաթթուներով ֆունկցիոնալացված ԱՇԹ-ի ֆիզիկաքիմական հատկությունների հետազոտում, այդ համակարգի ՀԲ փուլի ձևավորում տարբեր pH-ի արժեքների դեպքում: Արտաքին մագնիսական դաշտի ազդեցությամբ գնահատվել է ԳՕՀԲ/Fe3O4 համակարգի վարքը և ցիստեինով ֆունկցիոնալացված ԳՕ-ի վրա էլեկտրոնային փնջի ճառագայթման ունեցած ազդեցությունը: Ջերմային մշակման միջոցով իրականացվել է սինթեզված և 2 տարի սենյակային ջերմաստիճանում պահված ԳՕ-ի-վերականգնում և ֆիզիկաքիմիական հատկությունների հետազոտում: Ցույց է տրվել, որ ԳՕՀԲ/Fe3O4 համակարգի վրա ցիստեինն ունի երկակի ազդեցություն մագնիսական դաշտում. վերակողմնորոշման ժամանակը կրճատվում է ≈1 ժամից մինչև ≈10 վրկ, մինչդեռ դաշտի բացակայության դեպքում ռելաքսացիայի ժամանակը 1.6 անգամ մեծանում է (ղեկ.՝ Ե.Մելիքյան):

Իրականացվել է օպտիմալ պարամետրերով բազմաշերտ միջանկյալ հաճախային տերահերցային մետամակերևութային ֆիլտրի (բաղկացած սիլիցիումային տակդիրի վրա հաջորդաբար դասավորված շրջանաձև անցքերով ոսկու բարակ թաղանթից, բարձր թափանցելիությամբ մեկուսիչ միջնաշերտից (PTFE կամ HDPE) և դրա մակերևույթին ոսկու օղակներից՝ շրջանաձև անցքերից) համակարգչային մոդելավորում: Հաստատվել է, որ օղակաձև անցքերով ոսկյա շերտի և վերին ոսկյա օղակների համակցված համակարգը գործում է որպես բազմաշերտ ռեզոնատորային ֆիլտր, որը ցուցաբերում է գերազանց ընտրողականություն և բարձր փոխանցելիություն: Ցույց է տրվել, որ PTFE և HDPE միջշերտային կառուցվածքները կարող են ապահովել լայն (0.5–1.5 ՏՀց) և միջանկյալ հաճախային տիրույթներում բարձր ինտենսիվությամբ փոխանցում (≥98%): Հաղորդականության նման բարձրացումը բացատրվում է բազմաշերտ կառուցվածքի միջերեսներից անդրադարձված ալիքների այնպիսի ինտերֆերենցիայով, որը հանգեցնում է էլեկտրամագնիսական դաշտի տեղային ուժեղացմանը (ղեկ.՝ Կ.Սիմոնյան):

Իրականացվել է WS2-ի, WSe2-ի և դրանց WS2/WSe2 հիբրիդային կառուցվածքների, ինչպես նաև WS2/վերականգնվածԳՕ (ածխածնային նանոխողովակներ՝ ԱՆԽ) ու WSe2/վԳՕ(ԱՆԽ) համակարգերի սոլվոթերմալ սինթեզ և ստացված նյութերի բնութագրում: 1T WS2-ի, WS2-վԳՕ-ի (WS2/վԳՕ) և վԳՕ-ի հեղուկբյուրեղային ֆազը (ՀԲ) ստացվել է թեփուկների չափերի ու կոնցենտրացիայի ճշգրիտ ընտրությամբ, ինչպես նաև կատիոնային, անիոնային և ոչ իոնային մակերևութային ակտիվ նյութերով կայունացմամբ: Կոլոիդային լուծույթից նստեցման եղանակով պատրաստվել են 2D մետաղական քալկոգենիդ/ածխածնային ՀԲ նանոկառուցվածքների համասեռ թաղանթներ: Հեղուկ բյուրեղային WS2/վԳՕ համակարգի հիման վրա պատրաստվել է խոնավության տվիչի լաբորատոր նախատիպ: Խտության ֆունկցիոնալ տեսության (ԽՖՏ, DFT) վրա հիմնված մոդելավորումների միջոցով բացահայտվել են խոնավության զգայունության ատոմիստական մեխանիզմները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Ղարագուլյան):

Սինթեզվել են անցումային մետաղների քալկոգենիդների MeX2 տարբեր նանոկառուցվածքներ (որտեղ Me = Mo, W; X = S, Se, Te)՝ օգտագործելով «փափուկ քիմիա», սոլվոթերմալ/հիդրոթերմալ սինթեզի, քիմիական գոլորշենստեցման (CVD), քիմիական

գոլորշափոխադրման (CVT) և զանգվածային նյութի շերտազատման եղանակները: ԳՕ-ով MeX2-ի հիբրիդային հետերոկառուցվածքներ ստանալու համար օգտագործվել են էլեկտրաքիմիական և քիմիական եղանակներ, իսկ ԳՕ-ն ծառայել է որպես հարթակ: Վոլֆրամի և մոլիբդենի քալկոգենիդների հիմքի վրա սինթեզված ենթաշերտերը հանդես են եկել որպես էպիտաքսիալ հետերոկառուցվածքների համար գերազանց աճի հարթակներ, իսկ բիսմութի սելենիդի էպիտաքսիալ աճը հաջողությամբ իրականացվել է MoS2 բյուրեղային հիմքի վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վասիլև):

Սինթեզվել են Ge-Sb-Te (GST) միաբյուրեղներ և պոլիբյուրեղներ, չլեգիրված և Pb- և Sn-լեգիրված GST թաղանթներ՝ օգտագործելով քիմիական գոլորշենստեցման (CVD) և մագնետրոնային փոշենստեցման եղանակները: Մշակվել և օպտիմալացվել են շերտազատման եղանակները, որոնք հնարավորություն են տվել ստանալ մինչև մոտ 40 նմ հաստությամբ և մեծ կողմնային չափսերով GST շերտեր: Ուսումնասիրվել են լեգիրված և չլեգիրված GST թաղանթների կառուցվածքային փոփոխությունները ջերմային և լազերային տաքացման ժամանակ՝ բացահայտելով տարբեր բյուրեղացման ուղիները, որոնք պայմանավորված են $SbTe_3$ և $GeTe_4$ կառուցվածքային միավորների ներդրմամբ: Ջերմաստիճանից կախված կառուցվածքային և էլեկտրական չափումները ցույց են տվել, որ Pb-ի և Sn-ի լեգիրումը բերում է ցանցի պարամետրերի փոփոխության, նվազեցնում հատիկի չափը և իջեցնում բյուրեղացման ջերմաստիճանները խորանարդային և հեքսագոնալ փուլերում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Ժեժու):

Հավաքագրվել են նոր տվյալներ՝ պերովսկիտների բազան 110-ից ընդլայնելով մինչև 320, իսկ դրանցում տարրերի քանակը 7-ից հասցնելով 35-ի: Գեներացվել է 3 մլն պերովսկիտ, կիրառվել և գնահատվել են 11 մեքենայական ուսուցման պարզ մոդելներ և 1 նեյրոնային ցանց: Վերջինը ցուցադրել է լավագույն կատարողականություն և բարձր ճշգրտություն: Կատարվել է արգելված գոտու էներգիայի կանխատեսում գեներացված պերովսկիտների համար, որոնցից ֆիլտրվել են 2-2.6 էՎ էներգիաներով մի քանի տասնյակ պերովսկիտներ ներքին օգտագործման արևային բջիջների համար:

Մշակվել, փորձարկվել և թեստավորվել են մեքենայական ուսուցման ալգորիթմ և ծրագիր (Peroclust), որոնցով հետազոտվում է թաղանթների ծածկողականությունն օպտիկական և էլեկտրոնային մանրադիտակների նկարների հիման վրա: Ստացվել է լայն ջերմաստիճանային (10-150 ^{0}C) և խոնավության (≤ 54%) տիրույթներում կայուն էլեկտրոն-անցումային/պերովսկիտ/խոռոչ- անցումային եռաշերտ համակարգ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Ասատրյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Гарелина С.А., Рыбаков А.В., Захарян Р.А., Анализ методов и выбор средств измерений для мониторинга вредных веществ с использованием беспилотных воздушных судов, “Проблемы Управления Рисками в Техносфере”, СПб., т. 74, N.2, 2025, с. 35-46, DOI: 10.61260/1998-8990-2025-2-35-46.
2. Гарелина С.А., Рыбаков А.В., Захарян Р.А., Воздушный комплекс на базе беспилотного воздушного судна для измерения концентраций вредных веществ: разработка, реализация и испытания, “Проблемы управления рисками в техносфере”, СПб., т. 74, N. 2, 2025, с. 76-88., DOI: 10.61260/1998-8990-2025-2-76-88.
3. Гарелина С.А., Захарян Р.А., Латышенко К.П., Математическое моделирование оптико-пирометрического газоанализатора, Железногорск, “Сибирский пожарно-спасательный вестник”, т.36, N 1, 2025, с.150-156. DOI: 10.34987/vestnik.sibpsa.2025.81.26.014.

4. Левченко Д.С., Никогосян М.Г., Асатрян. А.В., Дифференциальные кривые плавления для сгенерированных случайных и реальных последовательностей в ДНК, Ер., “Вестник РАУ”, 2025, с. 148-155. https://science.rau.am/uploads/documents/1751527835.pdf.
5. Макарян Э.М., Арсентьев С.Д., Погосян М.Дж., Экспериментальное и теоретическое исследование механизма развития цепей в процессе термического газофазного окисления метана, “Физика горения и взрыва”, 2025. https://doi.org/10.15372/FGV2024.9512.
6. Макарян Э.М., Арутюнян А.А., Исследование колебательного процесса окисления водорода в присутствии сернистого газа, Новосибирск,“Физика горения и взрыва”, 2025, т. 61, N 6, с. 3-12, DOI: 10.15372/FGV2024.9482.
7. Саргсян А.А., Азатян Т.С., Алексанян Е.М., Князян Н.Б., Григорян Т.В., Казарян А.А., Петросян А.А., Арутюнян В.В., Бадалян А.О., Пирумов С.С., Баграмян В.В., Фотокаталитические и радиационно-оптические свойства металсиликата кадмия, полученного микроволновым методом, Ер., “Известия НАН Армении. Физика”, vol. 60, iss. 4, 2025.
8. Aghayan M., Ghaltaghchyan T., Selective Laser Melting of Molybdenum Alloy on Silicon Carbide Substrate, “Materials”, vol. 18, iss. 9, article number 2121, 2025. https://doi.org/10.3390/ma18092121.
9. Aghoyan A., Akopyan A. V., Aleksanyan G., & Davtyan D., Microwave-assisted synthesis and catalytic activity of nano-sized molybdenum carbide in naphthalene hydrogenation. Heliyon, v.11, 2025, article number e42431. https://doi.org/10.1016/j.heliyon.2025.e42431.
10. Aghajanyan A., Timotina M., Manutsyan T., Harutyunyan A., Ginovyan M., Schubert R., Aydinyan S., Trchounian K., Gabrielyan L., Gabrielyan L., A novel approach for synthesizing silver nanoparticles with antibacterial and cytotoxic activities using the leaf extract of hydroponically grown Moringa oleifera. “Scientific Reports”, vol. 15, 2025, article number 16637. https://doi.org/10.1038/s41598-025-01023-0.
11. Aghoyan A. M., Microwave-assisted synthesis of lanthanide hexaborides: formation of LaB_6, PrB_6 and challenges with heavier lanthanides, Proceedings of the YSU, Chemistry and Biology, v.59, 2025, N 3(267), pp.84–94. https://doi.org/10.46991/PYSUB.2025.59.3.084.
12. Akopyan A. V., Aghoyan A., Eseva E. A., Lukashov M. O., Belov M. M., & Davtyan D., Synergistic mixed carbide catalysts for accelerated aerobic oxidative desulfurization of fuels. “Energy & Fuels”, vol.39, 2025, pp.6487–6504. https://doi.org/10.1021/acs.energyfuels.4c06380.
13. Aleksanyan A., Sisakyan N., Mayilyan D., Hydride Cycle Synthesis of Ti0.5V2Cr0.5 Alloy and Its Composites with ZrNi/Zr7Ni10 Additives by a Novel Technological Approach, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis, vol. 34, N 3, 2025, pp. 192-208. https://doi.org/10.3103/S1061386225700177.
14. Amirkhanyan N., Zakaryan M., Preparation of NiCo by Solution Combustion Synthesis Method, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis”, vol. 34, N 3, 2025, pp. 172-179. https://doi.org/10.3103/S1061386225700153.
15. Amirkhanyan N., Zakaryan M., Preparation of NiCo by Solution Combustion Synthesis Method, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis”, vol. 34, N 3, 2025, pp. 172-179. https://doi.org/10.3103/S1061386225700153.
16. Antonyan A.P., Vardevanyan P.O., Mikaelyan M.S., Poghosyan G.H., Kocharyan G.H., Parsadanyan M.A., Fluorescence characteristics of Hoechst 33258 complexes with single-stranded and double-stranded polyribonucleotides in solution at various solution ionic strengths, “Journal of Applied Spectroscopy”, v. 91, iss.6, 2025, pp.1280-1285. https://doi.org/10.1007/s10812-025-01850-z.
17. Avetisyan A.H., Vinnichenko M.Ya., Hakobyan E.S., Impact of geometry on semiconductor quantum dots optical properties, “St. Petersburg State Polytechnical University Journal: Physics and Mathematics”, vol. 18, iss. 1.1, 2025, pp.88–94. https://doi.org/10.18721/JPM.181.115.
18. Cherni A., Zeiri N., Hayrapetyan D.B., Ed-Dahmouny A., El Sayed M.E., Samir A., Duque C.A., Machine learning models for predicting the hydrogenic impurity nonlinear optical rectification in GaAs/AlGaAs Tetrapod core/shell quantum dots under the effect of temperature, “Materials Today Physics”, vol. 58, 2025, article number 101833. https://doi.org/10.1016/j.mtphys.2025.101833.
19. Danielyan K., Zaqaryan N., Khallouf R., Kojoyan M., Tspnetsyan K., Manukyan A., Tsokolakyan A., Yeranosyan M., Chailyan S., Proline Rich Peptide-Linked Albumin Particles in Experimental Oxidative Brain Damage Model, “Bioactive Compounds in Health and Disease”, vol. 8, N 12, 2025, pp. 527-544. https://doi.org/10.31989/bchd.v8i12.1835.

20. Davtyan A.H., Arsentev S.D., Harutyunyan H.A., Study of the effect of ultrasonic radiation on aqueous solutions of potassium iodide, “Journal of Contemporary Physics”, vol. 60, N 2, 2025, pp. 181–186. https://doi.org/10.1134/S106833722570046X.
21. Danielyan T., Asatryan A., Sahakyan A., Khachatryan H., Enhancing perovskite solar cell efficiency and stability through architectural modifications and additives. “Journal of Power Sources”, vol. 630, 2025, article number 235995, https://doi.org/10.1016/j.jpowsour.2024.235995.
22. Elbakyan L.S., Hayrapetyan D.B., Mantashyan P.A., DFT study of GaAs quantum dot and 5CB liquid crystal molecule interaction., “Journal of Molecular Graphics and Modelling”, vol.136, 2025, article number 108953. https://doi.org/10.1016/j.jmgm.2025.108953.
23. Elbakyan L., Zaporotskova I., Experimental and DFT study of the conductive properties of PMMA composite material by doping with carbon nanotubes, “Nano-Structures & Nano-Objects”, vol. 44, 2025, article number 101568. https://doi.org/10.1016/j.nanoso.2025.101568.
24. Evinyan M.A., Harutyunyan H.A., Davtyan A.H., and Arsentev S.D., Quantum-Chemical Study of the Potential Energy Surface of the Ethoxyl Radical and its Conformers, “Journal of Contemporary Physics”, vol. 60, N 4, 2025, pp.
25. Gevorkyan, A.S., Bogdanov, A.V., Mareev, V.V. Three-Body Problem in Conformal-Euclidean Space: Complexity of a Low-Dimensional System, “Physics of Particles and Nuclei”, vol. 56, 2025, pp.1444-1448. https://doi.org/10.1134/S1063779625700650.
26. Gevorkyan, A.S. Irreversibility of a Classical Three-Body Problem: Complexity of a Low-Dimensional System. In: Avetisyan, Z., Ruzhansky, M., Vagharshakyan, A. (eds) Analysis, PDEs, and Applications. GMG 2024. Trends in Mathematics (RPGAPC), vol 13, 2025, Springer, Birkhäuser, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-89463-3_16.
27. Gevorgyan K. P., Anisimov A. V., Aghoyan A., Davtyan D., & Akopyan A. V., High-performance VC-based catalysts with core–shell-like architecture for room temperature oxidative desulfurization of fuels with sodium hypochlorite, “Industrial & Engineering Chemistry Research”, v.64, Issue 50, 2025, pp. 24044-24060. https://doi.org/10.1021/acs.iecr.5c02799.
28. Ghaltaghchyan T., Nazaretyan Kh., Khachikyan A., Aghayan M., Reactive selective laser melting of silicon carbide, “Materials Science in Additive Manufacturing”, vol. 5, iss. 1, article number 025340079, 2025.https://doi.org/10.36922/MSAM025340079.
29. Ghaltaghchyan T., Nazaretyan Kh., Rstakyan V., Aghayan M., Fast carbidization of silicon in additive manufactured Si-C-SiC composite, “Results in Materials”, vol. 25, article number 100653,. 2025, https://doi.org/10.1016/j.rinma.2024.100653.
30. Ghevondyan M., Davtyan M., Aghayan M., Dielectric elastomer actuators: medical applications review, “Discover Materials”, vol. 5, 2025, article number 43. https://doi.org/10.1007/s43939-025-00225-7.
31. Grigoryan S., Petrosyan N., Kolotyan G., Kozmanyan A., Avetisyan A., Zakaryan H., Schöning M.J., Asatryan A., Khachatryan H., Accelerated composition optimization of hybrid perovskites via data-driven materials design, DFT calculations and synthesis. “Materials and Design”, vol. 260, 2025, article number 114902. https://doi.org/10.1016/j.matdes.2025.114902.
32. Hakobyan E.S., Mantashian G.A., Hayrapetyan D.B., Mantashyan P.A., Singlet-Triplet splitting and Mollow triplet dynamics in impurity-doped core/shell quantum dots, “Physica E: Low-dimensional Systems and Nanostructures”, vol. 172, 2025, article number 116292. https://doi.org/10.1016/j.physe.2025.116292.
33. Harutyunyan H.A., Davtyan A.H., Arsentev S.D., Strekova L.N., Arutyunov V.S., Reaction of Ethylene with Methoxyl Radicals: A Quantum-Chemical Study, “Petroleum Chemistry”, vol. 65, N 7, 2025, pp. 788-797. https://doi.org/10.1134/S0965544125600705.
34. Harutyunyan H.A., Arsentev S.D., Davtyan A.H., Quantum-Chemical Study of the Surface of Potential Energy of Interaction of Ammonia with Hydrogen and Oxygen Atoms and Hydroxyl Radical, “Journal of Contemporary Physics”, vol. 60, N 3, 2025, pp. 290–296. https://doi.org/10.1134/S1068337225700641.
35. Harutyunyan A., Hambardzumyan A., Gabrielyan L., Aghajanyan A., Kocharyan M., Avtandilyan N., Zurnachyan A., Bazukyan I., Kujawski W., Gabrielyan L., Silver nanoparticles fabricated using phycocyanin from Arthrospira platensis: green synthesis, physicochemical characterization, and biological activities, “Microbial Cell Factories”, vol. 24, 2025, article number 249. https://doi.org/10.1186/s12934-025-02871-1.

36. Jiafen Lin, Saran Long, Animesh Ghosh, Andrew C. Grimsdale, Xiaojun Peng, Licheng Sun, Gagik G. Gurzadyan. Benzene excimer fluorescence in Dibenzophenanthroline thin film. “Chemical Physics Letters”, vol. 880, 2025, article number 142437. https://doi.org/10.1016/j.cplett.2025.142437.
37. Kalantaryan M., Muradyan N., Arzumanyan A., Melikyan Y., Laroze D., Barseghyan M., Vardanyan Y., Effect of Metakaolin and Biosilica on the Mechanical Properties of Cementitious Mortars, “Buildings”, 2025, vol. 15, iss. 21, article number 3882, https://doi.org/10.3390/buildings15213882.
38. Kaviani Sadegh, Molecular dynamics and machine learning framework for predicting ion transport and mechanical properties of ionic liquid@polyvinylidene fluoride gel polymer electrolyte, “Journal of Industrial and Engineering Chemistry”, https://doi.org/10.1016/j.jiec.2025.11.034.
39. Kaviani Sadegh, Covalent organic framework-based solid polymer electrolytes for metal-ion batteries: pioneering the future of DFT, MD, and ML techniques, “Energy Storage Materials”, vol. 82, article number 104671, 2025. https://doi.org/10.1016/j.ensm.2025.104671.
40. Khachatryan K.S., Mkrtchyan M.A., Hayrapetyan D.B., Baskoutas S., Garoufalis C.S., Duque C.A., Sarkisyan H.A., Temperature influence on interband and intraband optical transitions in pyramidal quantum dot, “European Physical Journal Plus”, vol. 140, iss. 9, article number 909. https://doi.org/10.1140/epjp/s13360-025-06835-7.
41. Khutsishvili S.S., Gagelidze N., Tsokolakyan A.S., Yeranosyan M.A., Tkesheliadze E., Sargsyan V.A., Dughashvili D., Dzebisashvili N., Aronia K., Benashvili A., Dzanashvili D., Gurgenidze I., Tatishvili G., Fraga-García P., ι-Carrageenan Manganese Oxide Bionanocomposites as a Promising Solution to Agricultural Challenges, “Materials”, 2025, vol. 18, iss. 3, article number 495. https://doi.org/10.3390/ma18030495.
42. Kirakosyan H., Sargsyan A., Grigoryan Y., Sheardy A.T., Manukyan Kh., Zakaryan M., Gyulasaryan H., Quesada A., Granados-Miralles C., Aydinyan S., Kharatyan S., Thermally Driven Rock-salt to Spinel Transition in High-entropy (CoFeMnNiZn)xOy Oxides: Effects on Magnetic and Mechanical Properties, “Chemical Engineering Journal”, vol. 524, 2025, article number 168976,. https://doi.org/10.1016/j.cej.2025.168976.
43. Kirakosyan H., Nazaretyan Kh., Beglaryan H., Ivanov R., Hussainova I., Aydinyan S., Combustion synthesis of silicon carbide by magnesiocarbothermic reduction of amorphous and crystalline silica. “Proceedings of the Estonian Academy of Sciences”, vol. 74, iss. 2, 2025, pp. 260–265. https://doi.org/10.3176/proc.2025.2.31.
44. Kocharyan G., Musaelyan M., Singh V.P., Sahakyan A., Antihydroperoxide/antioxidant action of selected organoselenium compounds: a mechanistic and analytical insight, “Journal of Physical Organic Chemistry”, vol. 38, iss. 9, 2025, article number e70034, https://doi.org/10.1002/poc.70034.
45. Kocharyan G.H., Sahakyan A.D., Manukyan Z.H., Stepanyan S.Kh., Pomogailo D.A., Musayelyan M.V., The kinetic EPR method with pulse reagent injection as an efficient approach for direct determination of antiradical capacities of polyphenolic compounds, “Applied Magnetic Resonance”, vol. 56, iss. 7, 2025, pp. 985-993. https://doi.org/10.1007/s00723-025-01769-w.
46. Lukashov M. O., Eseva E. A., Elsesser V. D., Davtyan D., Aghoyan A. M., Cherednichenko K. A., Timchenko Y. V., Rodin I. A., & Akopyan A. V., Facilitated aerobic oxidation of lignin model alcohols over microwave-synthesized vanadium carbide core–shell catalysts with oxovanadium active shell. Molecular Catalysis, v.590, 2025, art. 115633. https://doi.org/10.1016/j.mcat.2025.115633.
47. Manukyan Z.H., Stepanyan S.Kh., Musayelyan M.V., Kocharyan G.G., Kinetic determination of antiradical ability of folic acid and its structural derivatives, “Reaction Kinetics, Mechanisms and Catalysis”, vol. 138, iss. 4, 2025, pp. 1955-1975. https://doi.org/10.1007/s11144-025-02891-3.
48. Manukyan Z.H., The effect of folates on the oxidation reaction of methyl linoleate in micellar solutions. Chemija, 36(3):132-138, 2025. https://doi.org/10.6001/chemija.2025.36.3.3.
49. Mayilyan D., Cinti G., Aleksanyan A., Energy-Efficient Hydride Cycle Synthesis of Ti–23Zr–25Nb Alloy, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis”, vol. 34, No. 4, 2025, pp. 251-260. https://doi.org/10.3103/S1061386225700244.
50. Melkonyan S., Zakaryan M., Grigoryan Y., Kharatyan S., Hussainova I., Chabanais F., Shamshirgar A.S., Persson P.O.Å., Rosen J., Aydinyan S., Phase and Microstructure Evolution Patterns at Combustion Synthesis of High-Entropy M2AlC (M=Ti/Ta/V/Nb/Cr) MAX Phase, “Journal of Materials Research and Technology”, vol. 39, 2025, pp. 5800-5807. https://doi.org/10.1016/j.jmrt.2025.10.186.

51. Mkhitaryan L., Baghdasaryan L., Khachatryan Zh., Aghayan M., Rodríguez M.A., Rstakyan V., Optimization of hydroxyapatite-PEGDA slurry for vat polymerization: Microstructure and mechanical properties of 3D printed bioscaffolds, "Boletín de la Sociedad Española de Cerámica y Vidrio", vol. 64, iss. 5, 2025, article number 100459. https://doi.org/10.1016/j.bsecv.2025.100459.
52. Mkhitaryan L., Baghdasaryan L., Karabekian Z., Gasparyan S., Aghayan M., Rodríguez M.A., Rstakyan V., 3D Printed PEGDA-hydroxyapatite composite scaffolds for bone regeneration, "Polymers and Polymer Composites", publ. July 3, 2025. https://doi:10.1177/09673911251341536.
53. Muradyan G., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Khasanov S., Asatryan K., Mardanyan S., Hovhannisyan A., The role of hydrogen in the synthesis of High-entropy alloys and their hydrides. "Journal of Alloys and Compounds", vol. 1010, 2025, article number 177327.. https://doi.org/10.1016/j.jallcom.2024.177327.
54. Parsadanyan M., Avanesyan H., Lokyan A., Hovhannisyan S., Shahinyan M., Mikaelyan M., Kocharyan G., Antonyan A., Vardevanyan P., Interaction of dopamine with DNA, depending on the ionic strength of the solution: potential application in sensor technology, "Georgian Medical News", vol. 366, 2025, pp. 69-75DOI: 10.1109/25.9.9675.
55. Piyanzina I.I., Burganova R.M., Kaviani S., Nedopekin O.V., Zakaryan H., A DFT study on an 18-crown-6-like-N8 structure as a material for metal ion storage: stability and performance. "Sustainable Energy Fuels", vol. 9, 2025, pp. 5075-5084. https://doi.org/10.1039/D5SE00333D.
56. Poghosyan M.J., Poghosyan N.M., Arsentev S.D., Strekova L.N., Arutyunov V.S., Temperature dependence of the yield of products of cool-flame oxidation of propane in the region of negative temperature coefficient, "Advances in Chemical Physics" 2025, Vol. 44, N 2, pp. 62–67DOI: 10.31857/S0207401X250207e6.
57. Poghosyan M.Dj., Poghosyan N.M., Arsentev S.D., Strekova L.N., Arutyunov V.S., The Effect of Temperature on the Cool-Flame Oxidation of Rich Propane-Oxygen Mixtures, "Russian Journal of Physical Chemistry B", Vol. 19, N 2, 2025, pp. 362–367. https://doi.org/10.1134/S1990793125700083.
58. Sargsyan G., Baghdasaryan N., Sargsyan H., Klimko Y., Formation of excited molecules from fragments formed in heterogeneous-homogeneous processes in the near-surface layer and their impact on oxidation processes, "Chemistry and Chemical Technology", vol. 19, N 3, 2025, pp. 463-472, 2025. https://doi.org/10.23939/chcht19.03.463.
59. Sargsian T.A., Mantashyan P.A., Hayrapetyan D.B., Theoretical analysis of non-resonant structured laser beam effects on electronic properties of semiconductor quantum dot, "Journal of Luminescence", vol. 286, 2025, article number 121331. https://doi.org/10.1016/j.jlumin.2025.121331.
60. Sargsyan G.N., Weak Shock Waves in Spherically Symmetric Reactors during Propane Oxidation: Experimental Evidence of the Presence of a Saddle-Type Special Point at the Center of the Reactor, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", vol. 60, 2025, pp. 89-93. https://doi.org/10.1134/S1068337225700392.
61. Shamshirgar A.S., Ivanov R., Aydinyan S., Ghosh S., Chabanais F., Ronchi R.M., Halim J., Elsukova A., Qin Leiqiang, Nazaretyan Kh., Zakaryan M., Kharatyan S., Persson P.O.Å., Hussainova I., Rosen J., Rapid and Scalable Combustion Synthesis of (Mo2/3Y1/3)2AlC i-MAX as the Precursor for Vacancy-ordered MXene, "Journal of Materials Science & Technology", vol. 225, 2025, pp. 157-169, https://doi.org/10.1016/j.jmst.2025.09.014.
62. Shainova R., Muradyan N., Arzumanyan A., Kalantaryan M., Sukiasyan R., Yeranosyan M., Melikyan Y., Simonyan A., Laroze D., Zendri E., Effect of Pyrolysis Temperature on the Performance of Malt Biochar in Cement Mortars, "Materials, vol. 18, iss. 22, article number 5105. https://doi.org/10.3390/ma18225105.
63. Shamsieva A., Evseev A., Kaviani S., Nedopekin O.V., Zakaryan H., Piyanzina I.I., DFT analysis of furan-based covalent organic framework as electrode materials for lithium and calcium ion batteries. "Computational and Theoretical Chemistry", vol. 1253, article number 115445, 2025. https://doi.org/10.1016/j.comptc.2025.115445.
64. Shvetsov S.A., Darmoroz D.D., Vasil'ev A., Orlova T., Lobanov I.S., Rafayelyan M., Light-induced isotropic pen for generation of topological solitons and hopfion–toron transition in frustrated chiral nematic films, "Chaos, Solitons & Fractals", vol. 199, part 3, 2025, article number 116905. https://doi.org/10.1016/j.chaos.2025.116905.
65. Simonyan K., Tsokolakyan A., Buniatyan V., Badasyan A., Yeranosyan M., Urea Detection in Phosphate Buffer and Artificial Urine: A Simplified Kinetic Model of a pH-Sensitive EISCAP Urea Biosensor, "Sensors",

vol. 25, iss. 21, 2025, article number 6596. https://doi.org/10.3390/s25216596.
66. Tsokolakyan A.S., Hayrapetyan V.A., Petrosyan D.K., Welden M., Iken H., Schöning M.J., Yeranosyan M.A., Poghossian A., Urea Biosensor Based on a Field-Effect Capacitor Modified with a Stacked Weak Polyelectrolyte/Enzyme Bilayer, "Electrochemical Science Advances", 2025, vol. 0, article number e70013, pp. 1-13. https://doi.org/10.1002/elsa.70013.
67. Vardevanyan P.O., Kocharyan G.H., Parsadanyan M.A., Vardanyan A.V., Shahinyan M.A., Antonyan A.P., Study of neurotransmitter dopamine interaction with DNA by electrochemical and spectroscopic methods, "Biophysical Chemistry", vol. 329, 2025, article number 107552https://doi.org/10.1016/j.bpc.2025.107552.
68. Vasil'ev A., Zhezhu M., Parsamyan H., Baghdasaryan G., Sargsyan M., Ghazaryan D.A., Gharagulyan H., Revisiting THz absorption in GO and rGO liquid crystalline films,"Optics and Laser Technology", 192, 113628, https://doi.org/10.1016/j.mssp.2025.109863.
69. Xiaoting Zhang, Wenbo Yang, Geliang Tang, Runzhe Liu, Yun Zou, Yelin Yan, Gagik G. Gurzadyan, Jianzhang Zhao, Lijing Zhang, Shengyang Tao. Design and photophysical investigation of a heavy atom-free long-wavelength Type I photoinitiator with efficient photolysis. Dyes and Pigments, vol. 240, 2025, article number 112854, https://doi.org/10.1016/j.dyepig.2025.112854.
70. Yadav M., Sodhi N., Sethi P., Mundlia P., Singh S., Barnwal R., Khajuria A., Singh G., Baschieri A., Amorati R., Sahakyan A., Singh V.P., Radical-trapping and hydroperoxide-decomposing benzoselenazole antioxidants with potential biological applications against oxidative stress, "ChemBioChem", vol. 26, iss. 6, 2025, article number e202400954. https://doi.org/10.1002/cbic.202400954.
71. Yengibaryan N.Y., Mantashian G.A., Sargsian T.A., Garoufalis C., Baskoutas S., Hayrapetyan D.B., Tuning the electronic and optical properties of dumbbell quantum dot via electric field, "Heliyon", vol. 11, iss. 10, 2025, article number e43395. https://doi.org/10.1016/j.heliyon.2025.e43395.
72. Yichen Zhou, Junxiang Huang, Animesh Ghosh, Andrew Grimsdale, Saran Long, Qi Tao, Gagik G. Gurzadyan, Competitive Relaxation Pathways of Dibenzophenanthroline Isomer Emission: Charge-Transfer, Excimer Formation. "Chemistry - An Asian Journal", vol. 20, iss. 17, 2025, article number e00658. https://doi.org/10.1002/asia.202500658.
73. Zakaryan M.K., Amirkhanyan N.H., Kharatyan S.L., Aprahamian A., Manukyan Kh., Formation Mechanism and Kinetics of Ni3CuN Complex Nitride in Solution Combustion Synthesis, "Combustion and Flame", vol. 277, 2025, article number 114195, https://doi.org/10.1016/j.combustflame.2025.114195.
74. Zaqaryan N., Khallouf R., Manukyan A., Atoyan V., Tsokolakyan A., Yeranosyan M.A., Chailyan S.G., Danielyan K.E., PEGylated Albumin-Based Drug Carriers for the Treatment of Experimental Stroke, "Open Biotechnology Journal", vol.19, iss. 1, 2025, article number 1-1. https://doi.org/10.2174/0118740707379038250617195726l.
75. Zeiri N., Ed-Dahmouny A., Hayrapetyan D.B., Başer P., Sali A., El Sayed M.E., Samir A., Duque C.A., Machine learning-based prediction of nonlinear optical rectification in GaAs/AlGaAs tetrapod core/shell quantum dots under pressure and central hydrogenic impurity effects, "Materials Science in Semiconductor Processing", vol. 200, 2025, article number 110010. https://doi.org/10.1016/j.mssp.2025.110010.
76. Zhezhu M., Melikyan Y., Hayrapetyan V., Vasil'ev A., Gharagulyan H., Dual Effect of L-Cysteine on the Reorientation and Relaxation of Fe3O4-Decorated Graphene Oxide Liquid Crystals, "Heliyon", vol. 11, iss. 7, 2025, article number e43010, https://doi.org/10.1016/j.heliyon.2025.e43010.
77. Zhezhu M., Vasil'ev A., Parsamyan H., Abrahamyan T., Baghdasaryan G., Gyozalyan S., Ghazaryan D.A., Gharagulyan H., L-cysteine polymorph coatings for THz sensing metasurfaces, "Results in Physics", vol. 75, 2025, article number 108351, https://doi.org/10.1016/j.rinp.2025.108351.
78. Zhezhu M., Vasil'ev A., Yapryntsev M., Ghalumyan E., Ghazaryan D.A., Gharagulyan H., Chemical vapor deposition synthesis of (GeTe)n(Sb2Te3) gradient crystalline films as promising planar heterostructures, "Materials Science in Semiconductor Processing", vol. 199, 2025, article number 109863, https://doi.org/10.1016/j.mssp.2025.109863.
79. Zurnachyan A., Ginosyan A., Ivanov R., Hussainova I., Aydinyan S., Self-Propagating High-Temperature Synthesis of High-Entropy Composite in a Ti–Cr–Mn–Co–Ni–Al–C System, "Ceramics", vol. 8, iss. 4, 2025, article number 137. https://doi.org/10.3390/ceramics8040137.

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան
Փոխտնօրեն՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Գ.Մանուկյան
Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Նոսր ջրային լուծույթներում առաջին անգամ սինթեզվել է վանադագալիումական թթվի (ՎԳԹ) նոր միջուկային ձև, որն ուլտրամանուշակագույն տիրույթում ունի բարձր լուսակլանման ինտենսիվություն (λmax = 250 nm) և կայուն է թթվային միջավայրում (pH 3,3÷5,1): Ստացվել է ՎԳԹ-ի ասոցիատը բյուրեղային մանուշակագույնի հետ: Որոշվել է նրա հիմնայնությունը, քիմիական անալիզի մեթոդներով հաստատվել է բաղադրությունը՝ $(HO)_6[H_3GaV_6O_{18}]$ քիմիական բանաձևը (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Հայրիյան):

Օքսիֆտորիդային բարիում-բորաալյումասիլիկատային ապակու և Al_2O_3 լցանյութի հիման վրա սինթեզվել է նոր կոմպոզիտային նյութ, ուսումնասիրվել են նրա հատկությունները՝ կիրառելի LTCC (ցածր ջերմաստիճանային համամշակվող կերամիկա) տեխնոլոգիայում: Իրականացվել է $BaZr(BO_3)_2$ կերամիկական նյութի սինթեզ և ուսումնասիրվել են նրա դիէլեկտրիկ հատկությունները 1-10 ՄՀց տիրույթում: Մշակվել և առաջարկվել է ալմաստի սաղմերի առաջացման մոդել բարձր ճնշման խցիկում՝ որպես գրաֆիտ - ալմաստ ուղիղ փոխակերպման արդյունք (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Կոստանյան**):**

Վերամշակվել են ալյումասիլիկատային լեռնային ապարների՝ տուֆի, պեռլիտի, ցեոլիտի, բազալտի և խարամի թափոններ: Ուսումնասիրվել են ինչպես հումքի, այնպես էլ նմուշների ֆիզիկաքիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները: Նմուշները սինթեզվել են միկրոալիքային եղանակով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Գուրգենյան):

Ուսումնասիրվել են B_2O_3 – Al_2O_3 – $0.8Me_2O/0.2MeF$ (Me - Li, Na, K) համակարգերի ապակեգոյացման տիրույթները, ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները՝ կախված ալկալիական մետաղների օքսիդների և ֆտորիդների հարաբերակցությունից: Մշակվել են օպտիկական ապակիներ ցածր բեկման ցուցիչով և բարձր դիսպերսիայի (nD = 1,468–1,531; νD = 60,1–64,7) արժեքներով, որոնք տեղակայված են Աբբեի դիագրամի «թեթև-կրոններ» տիրույթում: SiO_2-B_2O_3-MeO/MeF_2 (Me - Zn, Cd) համակարգի հիման վրա սինթեզվել են դյուրահալ, բարելավված օպտիկական հատկություններով ապակիներ միկրո-էլեկտրոնիկայի համար: Ուսումնասիրվել են BaO/BaF_2-SiO_2-B_2O_3-Al_2O_3 համակարգի օքսիֆտորիդային ապակիներում Eu^{3+}, Er^{3+} և Nd^{3+} - իոնների կլանման և լյումինեսցենցիայի հատկությունները: Ապակիների IR-ATR սպեկտրների միջոցով նույնականացվել են 600–2000 սմ$^{-1}$ հաճախականության տիրույթում տատանողական գոտիները: Պարզվել է, որ ուսումնասիրված ապակիները կարող են կիրառվել որպես մատրիցներ հազվագյուտ հողային իոններով ակտիվացման համար, լյումինաֆորների ստածման նպատակով (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Երկաթ-մագնեզիումային դունիտային սերպենտիններից $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$ ստացված հիդրոսիլիկաժելի առանձնահատկությունների և ամորֆ ZnO-ի բարձր ակտիվության հիման վրա ուսումնասիրվել է $SiO_{2(ժել)}$–NaOH–ZnO–$CoCl_2$–H_2O համակարգը, մեղմ պայմաններում սինթեզվել է դոպացված կոբալտով տարբեր գունային երանգներով վիլեմիտ: Ցույց է տրվել, որ ցինկի աղերի փոխարինումը դրա օքսիդով զգալիորեն նվազեցնում է NaOH-ի ծախսը (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Առաջին անգամ մշակվել է α-Sr_2SiO_4 : Eu^{3+}-ի՝ կարմիր լյումինեսցենտային նյութի ստացման երկփուլ նոր մոտեցում՝ նստեցում եռացող լուծույթի խառնման պայմաններում և հետագա ջերմամշակում: Հիմնական նորարարությունն այն է, որ ջերմամշակմանը նախորդող փուլում ֆիլտրացիա չի իրականացվում, ինչը հնարավորություն է տալիս պահպանել միջանկյալ միացությունում *in situ* առաջացող NaCl-ը: Պարզվել է, որ NaCl-ի առկայությունը սինթեզի փուլում բարձրացնում է վերջնական α-Sr_2SiO_4:Eu^{3+}-ի ֆազի մաքրությունը և բարելավում դրա միկրոկառուցվածքը, ինչը նպաստում է լյումինեսցենտային հատկությունների ուժեղացմանը և հանգեցնում հազվադեպ սպեկտրալ երևույթի՝ $^5D_0 \rightarrow {}^7F_4$ անցման գերակայությանը գերզգայուն $^5D_0 \rightarrow {}^7F_2$ նկատմամբ: Դա անսովոր է Eu^{3+}-ով ակտիվացված սիլիկատային մատրիցաների համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Հ.Բեգլարյան):

Մշակվել է իտրիում ալյումասիլիկատային ապակու կոմպլեքս հումքի ստացման միկրոալիքային (ՄԱ) եղանակ $Y(NO_3)_3$ - $Al_2(SO_4)_3$ - $Na_2O{\cdot}nSiO_2$ աղերի լուծույթներից: Իրականացվել է YAS հատուկ ապակիների բովախառնուրդի ավանդական և ՄԱ տաքացման պայմաններում ապակեեփման պրոցեսների և ապակիների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություն: Ավանդական և ՄԱ սինթեզների և ապակեեփման պրոցեսի համեմատությունը հաստատել է ՄԱ եղանակի առավելությունը՝ սինթեզի տևողության կրճատում 2-3 անգամ, եփման ջերմաստիճանի իջեցում 100-150°C աստիճանով, ապակու եփման տևողության կրճատում 5-6 անգամ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Բաղրամյան):

Ուսումնասիրվել են պղնձի անջուր քլորիդների ($CuCl_2$, CuCl) հետերաֆազ քիմիական փոխարկման կինետիկ օրինաչափությունները և օպտիմալ պայմանները գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցության ռեժիմում: ՇՌԱ-փոխարկման կարծրաֆազ միջանկյալ արգասիքները և ամբողջովին վերականգնված մետաղական պղինձը (Cu) օժտված են նոր ֆիզիկաքիմիական հատկություններով: Փորձնական տվյալները ցույց են տվել, որ էքսպոզիցիայի ժամանակի ավելացումով Cu-ի ելքը աճել է գծային օրենքով, իսկ CuCl-ի ելքը գծային ձևով նվազել (ղեկ.՝ ք.գ.թ. Կ.Մանթաշյան):

Ուսումնասիրվել են մոլիբդենի խտանյութի վերամշակման գործընթացները հիդրոմետալուրգիական եղանակով: Արդյունքում խտանյութի և NaOH-ի համատեղ եռակալումով 320 °C ջերմաստիճանում, վառարանում, առանց օդի ներթափանցմամբ կորզվել են հիմնական բաղադրիչները (Mo, S) բարձր ելքերով, Na_2MoO_4 և Na_2S ձևերով: Մշակվել է շինանյութի ստացման եղանակ պղնձամոլիբդենային կոմբինատի թափոններից՝ հիմնական բաղադրիչների լուծահանումից հետո օգտագործելով արտադրական թափոններ և ավելացնելով կաուստիկ սոդա համապատասխան մնացորդային SiO_2 քանակի՝ հեղուկ ապակի ստանալու նպատակով: Մշակվել է ավտոկլավային շինարարական նյութերի արտադրության եղանակ թափոններից՝ օգտագործելով ապակու ջարդոն և ցեմենտի փոշի (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Նազարյան):

Մշակվել է տեղական, ոչ ավանդական հումքերից՝ Սիսիանի դիատոմիտային հանքերից և ՀՀ սերպենտինիտներից պարարտանյութերի ստացման անթափոն եղանակ: Ուսումնասիրվել են ստացված պարարտանյութերի ֆիզիկաքիմիական հատկությունները և ստուգվել է դրանց արդյունավետությունը: Ուսումնասիրվել են ցեմենտի խառնման եղանակները, նպատակային հավելանյութերի և տարբեր տեսակի լցանյութերի ազդեցությունը ցեմենտի ամրության և կառուցվածքի վրա (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Հետազոտվել են մանրացման ժամանակ օքսիդացած հանքանյութերի հատիկների մակերևութային սուլֆիդացման մեխանիզմը և կինետիկան՝ որպես սուլֆիդարար օգտագործելով նատրիումի սուլֆիդ (Na_2S), նատրիումի պոլիսուլֆիդ (Na_2S_5): Նատրիումի սուլֆիդների հիդրոլիզի ժամանակ առաջացած հիդրօքսիդ իոնները մեծացնում են

կախույթի հիմնայնությունը և դժվարացնում սուլֆիդացման գործընթացը: Ամուր սուլֆիդային թաղանթ ստանալու համար սուլֆիդացման գործընթացում ներմուծվել է ամոնիումի աղ: Իրականացվել է պղնձի, կապարի և ցինկի օքսիդացած միներալներից ստացված սուլֆիդների փրփրաֆլոտացման ռեժիմների մշակում: Որոշվել է ֆլոտացիոն հարստացման գործընթացում պահանջվող ռեագենտների ծախսը: Մշակված տեխնոլոգիայով ստացված Cu, Pb, Mo, Zn տարրերի սուլֆիդային խտանյութերի քանակությունները բավարարում են գործող պետական ստանդարտների պահանջները (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Հ.Դավիթյան**):**

Ուսումնասիրվել են կորիզային հումքի (սալորի, կեռասի, հոնի կորիզները) ֆիզիկաքիմիական, սորբցիոն-ծակոտկենային հատկությունները, կարբոնիզացման (ածխացման) պրոցեսները: Հետազոտվել են տվյալ կորիզային հումքի ածխացման պրոցեսի օպտիմալ պայմանները 300-700°C ջերմաստիճանային տիրույթում, 1-ից 3 ժամ տևողությամբ, ազոտի միջավայրում: Ուսումնասիրվել են սինթեզված ածխային ադսորբենտների տեսակարար մակերեսները, յոդի և մեթիլեն կապույտի կլանման ունակությունները, ծակոտիների ընդհանուր ծավալը և ծակոտիներն ըստ չափերի բաշխվածության: Պարզվել է, որ ստացված ադսորբենտներն օժտված են բարձր սորբցիոն-ծակոտկենային հատկություններով հոն–սալոր– կեռաս շարքում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

Սյունիքի մարզի Փխրուտի (Նաստուրան-մոլիբդենային) ֆորմացիոն տիպի հանքային դաշտում կատարված երկրաքիմիական աշխատանքների արդյունքում փխրուն հողային շերտից նմուշարկվել է 73 երկրաքիմիական նմուշ: Նմուշների քիմիական անալիզի արդյունքում պարզվել է, որ 37 նմուշում առկա են ուրանի, իսկ 31 նմուշում՝ սամարիումի օքսիդներ: Կազմվել են ուրանի և սամարիումի օքսիդների երկրորդային ցրման պսակների երկրաքիմիական անոմալիաների քարտեզներ: Համեմատելով կազմված քարտեզները՝ տվյալ հանքային դաշտում բացահայտվել է հստակ դրական կորելացիա հազվագյուտ հողային տարրերի օքսիդների հիպերգենային և ռադիոակտիվ տարրերի երկրորդական ցրման պսակների անոմալիաների միջև: Կարևոր է նշել, որ սամարիումի օքսիդը (Sm_2O_3**)** ունի բարձր նեյտրոնային կլանման ունակություն, կիրառվում է ապակու, լյումինաֆորների, լազերների և ջերմաէլեկտրական սարքերի մեջ (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Մշակվել է մետաղական, հիմնականում պողպատե մակերեսների ծածկույթապատման տեխնոլոգիա միկրոկարծրության բարձրացման և շփման գործակցի նվազեցման նպատակով: Ըստ ստացված տվյալների՝ պողպատ–պողպատ զույգի շփման գործակիցը (0,15–0,18) նվազել է մոտ 3 անգամ և կազմել 0,05 կերամիկական ծածկույթների դեպքում, իսկ 0,1՝ գրաֆիտի դեպքում: Արդյունքում մաշակայունությունն աճել է մինչև 3 անգամ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Թաթարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել են պղնձի սիլիկատների, մասնավորապես $CaCuSi_4O_{10}$, $SrCuSi_4O_{10}$, $BaCuSi_4O_{10}$ հիման վրա պիգմենտների ստացման արդյունավետ պայմանները, ուսումնասիրվել են դրանց օպտիկական հատկությունները: Մշակվել է նշված նյութերի ստացման երկփուլ նոր մոտեցում՝ նստեցում եռացող լուծույթի խառնման պայմաններում և հետագա ջերմամշակում: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ եգիպտական կապույտի՝ $CaCuSi_4O_{10}$-ի ստացման գրեթե միաֆազ արդյունքը 99% է, ստացվում է SiO_2:NaOH:$CaCl_2$:$CuCl_2$=4:4:1:1 հարաբերության, եռման պայմաններում՝ 10 րոպե խառնման և 900°C ջերմաստիճանում, 30 րոպե ջերմամշակելուց հետո: $BaCuSi4O_{10}$ -ի համար գրեթե

միաֆազ արդյունքը 96% է, ստացվում է SiO_2:NaOH:$BaCl_2$:$CuCl_2$=4:4:1:1 հարաբերության դեպքում, սենյակային ջերմաստիճանում, 5–10 րոպե խառնման և 800°C ջերմաստիճաններում, 30 րոպե ջերմամշակելուց հետո: $SrCuSi_4O_{10}$ - պիգմենտի դեպքում միաֆազ արդյունքը 100% է, ստացվում է SiO_2:NaOH:$SrCl_2$:$CuCl_2$=4:4:1:1,1 հարաբերության, եռման պայմաններում, 60 րոպե խառնման և 800-960°C ջերմաստիճաններում, 60 րոպե ջերմամշակելուց հետո: Ուսումնասիրվել են ստացված պիգմենտների օպտիկական հատկությունները (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Բեգլարյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Авагян А.Н., Арутюнян Г.Г., Овсепян А.В., Саканян М.С., Костанян А.К., Образование зародышей алмаза в области термодинамической стабильности как результат прямого фазового перехода графит – алмаз мартенситного типа, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 60, N 1, 2025, с. 90–105. DOI: 10.54503/0002-3035-2025-60.1-90
2. Авагян А.Н., Григорян К.Г., Саргсян К.А., Караханян Г.С., Костанян А.К., Теория и практика синтеза поликристалического алмазного образования типа природного карбонадо, Ер., "Изв. НАН Армении. Физика", т.60, N 3, 2025, с. 355–37. DOI: 10.54503/0002-3035-2025-60.3-355-371
3. Авагян А.Н., Яйлоян С.М., Саргсян К А., Караханян Г.С., Азатян Т.С., Саканян М.С., Костанян А.К., Акустостимуляция образования и роста синтетических алмазов в области их термодинамической стабильности, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 60, N 4, 2025, с. 528–540.
4. Айрапетян С.С., Айрапетян Л.С., Хачатрян А.Г., Хачатрян А.С., Полимерное модифицирование силикагеля для хроматографических колонок, М., "Журнал прикладной химии", т. 98, вып. 1, 2025, с. 29-34.
5. Баграмян В.В., Азатян Т.С., Князян Н.Б., Григорян Т.В., Казарян А.А, Арутюнян В.Р., Асланян А.М., Кочарян Л.К., Петросян А.А., Саргсян А.А., Получение ортосиликата висмута микроволновым методом. Апатиты, "Труды Кольского научного центра РАН, сер. техн. науки", т. 16, N 2, 2025, с. 179–184.
6. Григорян К.Г., Хачатрян А.А., Багинова Л.Г., Айрапетян С.М., Эдилян К.Н., Яйлоян С.М., Твердофазный синтез керамических пигментов со структурой волластонита, М., "Химическая технология", N 6, 2025, с 211-214, г. DOI: 10.31044/1684-5811-2025-26-6-211-214
7. Григорян К.Г., Хачатрян А.А., Багинова Л.Г., Эдилян К.Н., Абгарян Т.Р., Яйлоян С.М., Айрапетян С.М., Влияние прокаленного диатомита на процессы гидратации и прочность цемента, М., "Химическая технология", 2025, N 12, с. 463-467.
8. Григорян Т.В., Еганян Дж.Р, Оганесян М.Р., Гаспарян Л.А., Тороян. В.П., Ященко Н.В., Манукян Г.Г., Князян Н.Б., Зависимость свойств алюмоборатных стекол систем B_2O_3-Al_2O_3-Me_2O/MeF (Me-Li,Na,K) от содержания оксифторидов щелочных металлов, мат. IV росс. конф. с межд. участием "Стекло: наука и практика" GlasSP2025, СПб., 2025, с. 67-68. https://elibrary.ru/item.asp?id=86116947
9. Гургенян Н.В., Хачанова И.Б., Мартиросян А.В., Григорян А.Е., Костандян М.Ф., Варданян Н.К., Выбор оптимального вспученного перлита для изоляции изотермических резервуаров, М., "Химическая технология", т. 26, N 1, 2025, с. 11-17.
10. Гургенян Н.В., Хачанова И.Б., Мартиросян А.В., Григорян А.Е., Костандян М.Ф., Варданян Н.К., Использование отходов горных пород в качестве сырья для получения строительных материалов различного назначения, М., "Химическая технология", N 12, 2025, с. 456-462.
11. Еганян Дж. Р., Оганесян М. Р., Ященко Н.В., Григорян Т. В., Тороян В. П., Кумкумаджян Е.В., Гаспарян Л.А., Галоян К.К., Манукян Г.Г., Князян Н.Б., Теплофизические свойства боросиликатных стекол, содержащих оксиды двухвалентных металлов, Апатиты, "Труды Кольского научного центра РАН. сер. Технические науки", т. 16, N 2, 2025, с. 15–22.
12. Еганян Дж.Р, Оганесян М.Р., Григорян Т.В., Гаспарян Л.А., Ященко Н.В., Манукян Г.Г., Князян Н.Б., Исследование стеклообразования, особенности кристаллизации и свойств стекол систем SiO2-B2O3-

MeO/MeF2 (Me = Zn, Cd), мат. IV Росс. конф. с межд. участием "Стекло: наука и практика" GlasSP2025, СПб., 2025, с. 79-81.
13. Костанян А.К., Манукян А.Г., Саргсян К.А., Алексанян О.А., Князян Н.Б., Композиционный материал на основе оксифторидного барийбороалюмосиликатного стекла и Al_2O_3 для технологии LTCC, М., "Стекло и керамика", т. 89, N 2, 2025, с. 55-61. DOI: 10.14489/glc.2025.02 pp.055-061
14. Костанян А.К., Саргсян К.А., Караханян, Г.С., Мурадян, А.А., Авагян А.Н., Арутюнян В.Т., Твердофазный синтез и диэлектрические свойства $BaZr(BO_3)_2$, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 60, N 3, 2025, с. 384-394. DOI: 10.54503/0002-3035-2025-60.3 384.
15. Манукян А.Г., Арутюнян В.Р. Состав и физико-химические свойства природных диатомитов, М., "Неорганические материалы", т.61, N 5-6, 2025, с. 379-384. DOI: 10.31857/S0002337X2503014
16. Назарян Э.М., Арустамян А.Г., Акопян А.А., Агамян Э.С., Аракелян А.М., Мазманян Д.С., Князян Н.Б., Исследование процессов переработки молибденового концентрата гидрометаллургическим методом, М., "Химическая технология", т. 26, N 6, 2025, с. 236-240.
17. Оганесян М.Р., Еганян Дж.Р., Ященко Н.В., Григорян Т.В., Тороян В.П., Кумкумаджян Е.В., Галоян К.К., Гаспарян Л.А., Манукян Г.Г., Князян Н.Б., Синтез и исследование биологически активных стекол на основе систем, содержащих P_2O_5 и MeO/MeF_2, Апатиты, "Труды Кольского научного центра РАН, сер. Технические науки", т. 16, N 1, 2025, с. 31-37, http://dx.doi.org/10.37614/2949-1215.2025.16.1.005
18. Пашаян Р.А., Карапетян Д.К., Арутюнян Л.В., Товмасян К.Г., Современные движения и деформация земной коры территории Армении по данным МГГН, "The scientific heritage" N 173 (2025), с. 34-46. DOI: 10.5281/zenodo.17731489.
19. Саргсян А.А., Азатян Т.С., Князян Н.Б., Григорян Т.В., Казарян А.А, Арутюнян В.Р., Асланян А.М., Петросян А.А., Кочарян Л.К., Эдилян К.Н., Баграмян В.В., Фотокаталитические и радиационно-оптические свойства силикат висмута, полученного микроволновым методом, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 60, т. 3, 2025, с. 395-404.
20. Саргсян А.А., Азатян Т.С., Алексанян Э.М., Князян Н.Б., Григорян Т.В., Казарян А.А., Петросян А.А., Арутюнян В.В., Бадалян А.О., Пирумов С.С., Баграмян В.В., Фотокаталитические и радиационно-оптические свойства метасиликата кадмия, полученного микроволновым методом, Ер., "Изв. НАН Армении. Физика", N 4., 2025, с. 549-558.
21. Evstropiev S.K., Stolyarova V.L., Bulyga D.V., Saratovskii A.S., Knyazyan N.B., Manukyan G.G., Intensification of sol-gel synthesis of Mn-containing $MgO-Al_2O_3-ZrO_2-SiO_2$ system materials, "Scientific and Technical Journal of Information Technologies, Mechanics and Optics" v. 25, N 3, 2025, pp.387-394 DOI: 10.17586/2226-1494-2025-25-3-387-395.
22. Beglaryan H, Isahakyan A, Stepanyan V, Sarkeziyan V, Zulumyan N, Terzyan A (2025) Synthesis and luminescent properties of a novel compound: Sodium europium hexabarium tetrakissilicate NaBa6Eu(SiO4)4, "Inorg. Chem. Commun", 173 (113865), https://doi.org/10.1016/j.inoche.2024.113865
23. Gurgenyan N.V., Khachanova I.B., Martirosyan A.V., Grigoryan A.E., Kostandyan M.F., and Vardanyan N.K. Selection of the optimal expanded perlite for Insulation of Isothermal tanks.,"Theoretical Foundations of Chemical Engineering", ж. 59, N 2, 2025, pp.246-250.
24. Kirakosyan H., Nazaretyan K., Beglaryan H., Ivanov R., Hussainova I., Aydinyan S., Combustion synthesis of silicon carbide by magnesio-carbothermic reduction of amorphous and crystalline silica, "Proceedings of the Estonian Academy of Sciences" 74 (2), 2025, pp. 260-265. https://doi.org/10.3176/proc.2025.2.31
25. Mantashyan K.A., Application and adaptation of certian chemical analysis methods for the research of heterophase processes of CuSO4 and natural quartzites CRE-conversion, XVIII International Scientific and Practical Conference «Theoretical and practical perspectives of modern science», Proceedings of the XVIII International Scientific and Practical Conference, Stockholm, Sweden, 2025, pp. 14-17. ISBN 978-91-65424-44-9. DOI: https://doi.org/10.5281/zenodo.17513357
26. Mantashyan K.A., Experimental Application of Certain Modified Methods of Chemical Analysis for the Research the Processes of Copper Sulfate and Natural Quartzites CRE-Conversion, Satteldorf, "German International Journal of Modern Science", N 116, 2025, pp. 5-8. ISSN (Print) 2701-8369, ISSN (Online) 2701-8377. DOI: https://doi.org/10.5281/zenodo.17661420
27. Mantashyan K.A., Mantashyan S.G., Abrahamyan M.M., Zaprosyan A.V., Certain Aspects of an Efficient Heterophase Chemical Process for the Reduction of PbO_2 under CRE-Mode, Satteldorf, "German International

Journal of Modern Science", 2025, N 116, pp. 9-12. ISSN (Print) 2701-8369, ISSN (Online) 2701-8377. DOI: https://doi.org/10.5281/zenodo.17661464
28. Mantashyan K.A., Mantashyan S.G., Abrahamyan M.M., Zaprosyan A.V., The new efficient heterophase chemical process for the reduction of lead dioxide under the effect of chain gas-phase reactions, XXI International Scientific and Practical Conference «New problems of science and ways of their solution», Proceedings of the XXI International Scientific and Practical Conference, Paris, France. 2025, pp. 13-16. ISBN 978-91-65424-45-6. DOI: https://doi.org/10.5281/zenodo.17574617
29. Mantashyan K.A., Mantashyan S.G., Abrahamyan M.M., Zaprosyan A.V., The Processes of Conjugated Heterophase Chemical Conversion of Sulfide Compounds of Cu, Zn and Fe under CRE Conditions with the Formation of Elemental Sulfur, Satteldorf, "German International Journal of Modern Science", N 117, 2025, pp. 10-14. ISSN (Print) 2701-8369, ISSN (Online) 2701-8377. DOI: https://doi.org/10.5281/zenodo.17864974
30. Pashayan R.A., Karapetyan D.K., Harutyunyan L.V., Margaryan S.S., Karamyan R.A., Tovmasyan K.G., Modern methods of monitoring the movements of the Earth's crust in Armenia. "Oeil research journal" (ISSN:0029-862X) v.23 (8), 2025, 10.5281/zenodo.17018171
31. Pashayan R.A. Earth sciences. Monitoring of seismic geodynamics of the earth's cruston the territory of Armenia. Polish journal of science, 2025, N 90, p.3-12, 10.5281/zenodo.17170446.
32. Pashayan R.A. Monitoring of seismic geodynamics of the earths crust of central Arnemia, "Danish Scientific Journal", N 94, 2025, pp.17-25. 10.5281/zenodo.15115100.
33. Sargsyan A.A., Azatyan T.S., Knyazyan N.B, Grigoryan T.V., Ghazaryan A. B., Harutyunyan V.R., Aslanyan A.M., Petrosyan A.A., Qocharyan L.K., Edilyan K.N., Photocatalytic and Radiation-Optical Properties of Bismuth Silicate Synthesized by the Microwave Method. Y., "Journal of Contemporary Physics", 60 (3), 2026, pp.334-341 DOI: 10.1134/S1068337225700719

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրենի ժ/պ՝ ք.գ.դ. Ս.Գասպարյան
Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ռ.Հակոբյան
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Լ.Ներսեսյան
Էլեկտրոնային փոստ՝ nanraifok54@mail.ru, stcopc@sci.am
Կայքէջ՝ www.stcopc.sci.am

Մասնագիտական խորհուրդ 010՝ «Քիմիա»
Նախագահ՝ թղթ. անդ. Վ.Թոփուզյան, գիտքարտուղար՝ ք.գ.դ. Ն.Հոբոսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Սպիրոցիկլոպենտան- և սպիրոտետրահիդրոպիրան տեղակալված 6,7-դիմեթօքսի-դիհիդրոիզոքինոլին-1-կարբօքսիլաթթուների էթիլային էսթերների վերականգնման միջոցով սինթեզվել են համապատասխան 1-հիդրօքսիմեթիլտետրահիդրոիզոքինոլիններ, որոնք ֆորմալինի ազդեցությամբ վերածվել են կոնդենսացված օքսազոլոտետրահիդրոիզոքինոլինների: Վերջինները փոխազդելով հիդրոբրոմաթթվի, ինչպես նաև խիտ աղաթթվի հետ՝ ռեցիկլացման արդյունքում առաջացրել են համապատասխան տետրահիդրոպիրանոիզոքինոլիններ: Տետրահիդրոիզոքինոլինների դիմեթօքսի ածանցյալների հիդրոբրոմաթթվով դեմեթիլացման ռեակցիայի միջոցով ստացվել են սպիրոտեղակալված 1-հիդրօքսիմեթիլ-6,7-դիհիդրօքսիիզոքինոլիններ, որոնք փոխազդելով դիբրոմէթանի հետ՝ առաջացրել են համապատասխան դիօքսինոիզոքինոլիններ:

1,4-բենզոդիօքսան-2-կարբոհիդրազիդի և արիլցիկլոալկանկարբոնաթթուների քլորանհիդրիդների փոխազդեցությամբ սինթեզվել են դիացիլհիդրազիններ, որոնք ֆոսֆորի օքսիքլորիդի ազդեցությամբ վերածվել են համապատասխան 2, 5-երկտեղակալված 1, 3, 4-օքսադիազոլների: Իրականացվել է 2-(1,4-բենզոդիօքսան-6-իլ)ացետոնիտրիլի ալկիլացումն ալլիլ բրոմիդով: Արդյունքում ստացված դիալլիլ տեղակալված նիտրիլը վերականգնվել է մինչև համապատասխան ամինի: Վերջինի և դիէթիլօքսալատի փոխազդեցությունից ստացվել է թրթնջկաթթվի մոնոէթիլ էսթերի ամիդ, որը տարբեր ամինների ազդեցությամբ վերածվել է թիրախային դիամիդների: Արիլամինների դիամիդային ածանցյալները սինթեզվել են վերոնշված ամինի և թրթնջկաթթվի համապատասխան արիլամիդոէսթերների փոխազդեցությամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Աղեկյան):

Կատարվել են 2,4,6-եռատեղակալված պիրիմիդինների, քինազոլինների բենզո[b]թիոֆենների, բենզո[4',5']իմիդազո[1',2':1,6]պիրիդո[2,3-d]պիրիմիդին-4(3*H*)-ոնների, բենզո[4,5]իմիդազո[1,2-a][1,3,5]տրիազինների սինթեզի ուսումնասիրություններ:

Սինթեզվել են 6-քլոր-2-(4-ալկիլբենզիլ)-N-արիլպիրիմիդին-4-ամիններ, 2-(4-ալկիլբենզիլ)-N-արիլպիրիմիդին-4,6-դիամիններ, էթիլ(*E*)-4-(4-օքսո-2-((2-արիլ)վինիլ)քինազոլին-3(4*H*)-իլ)բենզոատներ:

6-ամինա-2-(պրոպիլ-, բութիլ-, բենզիլթիո)պիրիմիդին-4(3*H*)ոններ, 5,5-դիմեթիլցիկլոհեքսան-1,3-դիոնի և արոմատիկ ալդեհիդների մեկ ռեակտորային եռաբաղադրիչ կոնդենսացմամբ սինթեզվել են նոր 5-արիլ-8,8-դիմեթիլ-2-(ալկիլ-, արիլմեթիլ)թիո-5,8,9,10-տետրահիդրոպիրիմիդո[4,5-b]քինոլին-4,6-(3*H*,7*H*)դիոններ: 2-ֆենիլ- և 2-ֆենիլ-6-մեթիլ-5,6-դիհիդրոբենզո[4',5']իմիդազո[1',2':1,6]պիրիդո[2,3-d]պիրիմիդին-4(3*H*)-ոնների ալկիլացմամբ ալկիլ և բենզիլհալոգենիդներով սինթեզվել են համապատասխան 3-ալլիլ(բենզիլ) ածանցյալներ:

1-(1*H*-բենզո[d]իմիդազոլ-2-իլ)գուանիդինի և արոմատիկ ալդեհիդների փոխազդեցությամբ սինթեզվել են 4-(արիլ)-1,4-դիհիդրոբենզո[4,5]իմիդազո[1,2-a][1,3,5]տրիազին-2-ամիններ և հետագա ացիլացմամբ՝ 2-արիլամիդ:

Սինթեզվել են նախկինում չնկարագրված 2-ամինո-3a,4,5,6,7,7a-հեքսահիդրոբենզո[b]թիոֆեն-3-կարբոնիտրիլի և 3-էթիլկարբօքսիլատի Շիֆֆի հիմքեր:

Իրականացվել են սինթեզված միացությունների դոկինգ-հետազոտություններ, ուսումնասիրվել են կենսաբանական հատկությունները՝ հակամանրէային, հակասնկային, հակաուռուցքային հակամոնոամինօքսիդազային (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան):

Պարզվել է, որ հեքսամեթիլդիսիլազանի մասնակցությամբ N-տեղակալված α,β–դեհիդրոդիպեպտիդների ամիդների դեհիդրատացման ռեակցիան, անկախ N- և C-ծայրային ամինաթթվային մնացորդի և ամիդային հատվածի կառուցվածքից, միանշանակ ընթանում է N-ծայրային ամինաթթվային մնացորդի հաշվին:

Դեղի տրանսդերմալ ներարկման համար մշակվել է 5-ֆտորուրացիլի նոր երկարատև արտազատմամբ դեղաձև կոմպոզիտային սիլիկոնային թաղանթների տեսքով: *In vitro* պայմաններում սիլիկոնային կոմպոզիտներից 5-ֆտորուրացիլի արտազատման կինետիկան և թաղանթների կենսաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սպեղանիների տեսքով սինթեզված կոմպոզիտները կարող են հետաքրքրություն ներկայացնել ուռուցքաբանության մեջ որպես երկարատև ազդեցության ցիտոստատիկ միջոց (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Թոփուզյան):

Մշակվել է ֆուրանի օղակ պարունակող համակցված թիենո[3,2-*d*]պիրիմիդինի N–տեղակալված ածանցյալների ստացման եղանակ: Որպես ելանյութ օգտագործվել է 4-(ֆուրան-2-իլ)-2-սուլֆանիլպիրանո[4,3-b]պիրիդին-3-կարբոնիտրիլը: One pot եղանակով, 2-քլորացետամիդի ածանցյալների հետ փոխազդեցությամբ, ենթարկվել է ներմոլեկուլային

ցիկլացման՝ առաջացնելով 3-ամինոթիենո[2,3-b]պիրիդին-2-կարբոքսամիդի ածանցյալներ: Օրթոմրջնաթթվի տրիէթիլէսթերի հետ կոնդենսացմամբ սինթեզվել են համակցված N–տեղակալված թիենո[3,2-d]պիրիմիդիններ:

Ուսումնասիրվել է համակցված թիենո[3,2-*d*][1,3]թիազինի ներմոլեկուլային վերախմբավորման ռեակցիան, որի արդյունքում սինթեզվել է թիենո[3,2-d]պիրիմիդինի դիթիոածանցյալ: Նախ՝ ստացվել է 1-ամինոպիրանո[4,3-d]թիենո[2,3-b]պիրիդին-2-կարբոնիտրիլ, այնուհետև՝ one pot եղանակով ծծմբածխածնի հետ փոխազդելով՝ համակցված դիթիոպիրիմիդին: Վերջինիս և տարբեր ալկիլիալոգենիդների հետ փոխազդեցությամբ սինթեզվել են համապատասխան դիթիոալկիլ- ածանցյալներ և ուսումնասիրվել են դրանց կենսաբանական հատկությունները:

3(6)-քլորպիրիդինների հիման վրա իրականացվել է նոր հետերոցիկլիկ համակարգերի՝ իզօքսազոլո[5,4-*b*]պիրիդինների սինթեզը: Ռեակցիան ընթացել է միջանկյալ ամիդօքսիմների առաջացմամբ: Այս շարքի որոշ ածանցյալներ ցուցաբերել են թույլ հակացնցումային հատկություն:

Հետազոտությունների արդյունքում առաջարկվել է պիպերազինոպիրիդինների ալկիլացման ռեակցիայի ավելի մատչելի և անվտանգ մեթոդ՝ որպես լուծիչ բենզոլի փոխարեն օգտագործելով էթանոլ: Մեթոդի կիրառմամբ ստացվել է ալկիլացված պիպերազինոպիրիդինների նոր ածանցյալների շարք: Ուսումնասիրվել է դրանց ազդեցությունը միջերկրածովյան ընտանեկան տենդով հիվանդների աղիքային ցուպիկի աճի կինետիկայի վրա:

Մշակվել է բենզոթիենո[2,3-*d*]պիրիմիդինների ստացման եղանակ: Թիրախային միացությունները սինթեզվել են բազմափուլ ռեակցիայի արդյունքում: Տետրահիդրոբենզոթիոֆենից ստացված 2-[(քլորացետիլ)ամինո]-4,5,6,7-տետրահիդրո-1-բենզոթիոֆեն-3-կարբօքսամիդի ածանցյալները ռեակցվել են տարբեր ամինների հետ: Ստացված բենզոթիոֆեն-3-կարբօքսամիդի ամինոածանցյալներն օրթոմրջնաթթվի էթիլ էսթերի հետ փոխազդեցության արդյունքում ցիկլացվել են բենզոթիենո[2,3-*d*]պիրիմիդինների: Ուսումնասիրվել են սինթեզված միացությունների հակամանրէային և հակաքաղցկեղային հատկությունները (ղեկ.՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են մի շարք ալկիլ տեղակալիչներով 6-օքսոդիազաբիցիկլոնոնաններ, որոնք կոնդենսացվել են տարբեր տեղակալիչներ պարունակող արիլալդեհիդների և դիարիլդիալդեհիդների հետ՝ առաջացնելով համապատասխան դիազաադամանտաններ և դրանց բիսածանցյալներ: Ուսումնասիրվել են հակաօքսիդանտային հատկությունները:

Սինթեզված 6-օքսո-5,7-դիմեթիլդիազաադամանտանը նախ ռեակցիայի մեջ է դրվել բենզիլքլորիդի հետ, ապա ացիլացվել է քլորքացախաթթվի քլորանհիդրիդով: Ստացված դիազաբիցիկլոնոնանը փոխազդեցության մեջ է դրվել մորֆոլինի, պիպերազինի և անիլինի հետ՝ առաջացնելով ինչպես տեղակալված դիազաբիցիկլոնոնաններ, այնպես էլ բիսածանցյալներ: Ուսումնասիրվել են դրանց հակամանրէային հատկությունները: Նմանատիպ ռեակցիաները 7-նիտրո-1,3,5-տրիազաադամանտանի և բենզիլքլորիդի, քլորքացախաթթվի քլորանհիդրիդի, ապա մորֆոլինի և անիլինի հետ առաջացրել են տեղակալված տրիազաբիցիկլոնոնան և համապատասխան բիսածանցյալ (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Գասպարյան):

Ելնելով սպիրոհետերոցիկլիկ կառուցվածքով դիհիդրոնավթալինային շարքի համապատասխան β–ամինոէսթերից՝ առաջին անգամ մշակվել է 3-(3-մեթօքսիֆենիլ)-2-թիօքսո-2,3-դիհիդրո-1*H*-սպիրո[բենզո[*h*]քինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4-ոնի (թիօքսոբենզոքինազոլին) սինթեզի եղանակ: Թիօքսոբենզոքինազոլինի ալկիլացման ճանապարհով իրականացվել է 2-սուլֆանիլտեղակալված սպիրո[բենզո[*h*]քինազոլին-5,1'-ցիկլոհեպտանի]

ածանցյալների սինթեզ: Պարզվել է, որ սինթեզված միացությունների մեծ մասը ցուցաբերում է միջին հակաուռուցքային ակտիվություն ուռուցքի սարկոմա 180 մոդելի վրա և, միաժամանակ, միջին կամ բարձր հակաբակտերիալ ակտիվություն՝ գրամդրական ու գրամբացասական միկրոբների շտամների նկատմամբ (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Իրականացվել են Կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված, տարբեր քիմիական խմբերին պատկանող 302 միացության կենսաբանական ակտիվության առաջնային հետազոտություններ, այդ թվում՝ հակաբակտերիալ 218, հակաօքսիդանտային 27, հակաառիթմային 5, հակաուռուցքային 23 միացություններ, ինչպես նաև *in vitro* պայմաններում ուսումնասիրվել է 29 միացության ազդեցությունն ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացման մակարդակի վրա: Համեմատաբար ակտիվ 4 միացություն ընտրվել է մանրէաբանական խորը ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Պարբերաբար կատարվել են Կենտրոնում արտադրվող դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունականության, արդյունավետության և մանրէազերծության դեղագրքային փորձարկումներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ռ.Մուրադյան):

Ուսումնասիրվել են Կենտրոնում սինթեզված 201 քիմիական միացության բժշկա-կենսաբանական հատկությունները: Ուսումնասիրվել են պիրանոպիրիդո(թիենո)պիրիմիդինի 16, բենզո- և պիրանոպիրիդինի 8, թիոբարբիտուրաթթվի 23 ածանցյալների և 2,7-նավթիրիդինների հիմքի վրա սինթեզված տրիազոլային 16 հիբրիդների հակացնցումային և հոգեմետ հատկությունները: Որոշ միացություններ ցուցաբերել են բարձր ակտիվություն, մասնավորապես պիրանոպիրիդո(թիենո)պիրիմիդինի ածանցյալներից 10-ը և տրիազոլային հիբրիդներից 11-ը: Հաշվարկվել է ակտիվություն ցուցաբերած միացությունների ED_{50}-ը, թիոսեմիկարբազիդային ցնցումների լատենտ շրջանը, անքսիոլիտիկ, հակադեպրեսանտ հատկությունների էֆեկտիվությունը: Իրականացվել է նաև ակտիվ միացությունների խորը հետազոտություն «բաց դաշտ», «բարձրացված խաչաձև լաբիրինթոս», «պոչից կախելու», թիոսեմիկարբազիդային ցնցումների թեստերով:

Հիպօքսիկ–հիպօքսիայի մոդելի վրա որպես հակահիպօքսանտներ ուսումնասիրվել են բենզոդիօքսանի թիազոլային 17 ածանցյալներ: Ուսումնասիրվել է N-բենզիլ տեղակալված տետրահիզոքինոլինի 15 ածանցյալների ազդեցությունն արյան հեմոդինամիկայի վրա «Sistola» սարքով և 22 ածանցյալների ազդեցությունը «Sistola phlogiston» սարքով: Առանձնացվել են հակահիպօքսիկ ակտիվությամբ 4 միացություններ, որոնք սիմպատո-ադրենալային համակարգի և արյան հեմոդինամիկայի վրա ցուցաբերել են արտահայտված ակտիվություն:

Իրականացվել է բարոռեֆլեքսի մեխանիկաֆիզիոլոգիական մոդելի ուսումնասիրություն:

Հետազոտվել են 42 քիմիական միացությունների հակա-ՄԱՕ հատկությունները: Առավել ակտիվ 3 միացություն առանձնացվել է հետագա ուսումնասիրությունների համար:

Իրականացվել են Կենտրոնի տարբեր լաբորատորիաներում սինթեզված 40 նոր միացությունների հակաօքսիդիչ հատկությունների ուսումնասիրություններ: Առանձնացվել է 4 միացություն հետագա ուսումնասիրությունների համար:

Ուսումնասիրվել են Հայաստանում աճող 12 բուժական նշանակության բույսերից անջատված էքստրակտների հակաօքսիդիչ և նեյրոպրոտեկտոր հատկությունները: Մշակվել և իրականացվել են ակնամոմի և ծաղկափոշու տարբեր էքստրակտների հակա-սթրեսային ազդեցության ուսումնասիրություններ քրոնիկ հիպերկինեզիայի պայմաններում:

Շարունակվել են Կենտրոնում սինթեզված քիմիական միացությունների ցավազրկող հատկությունների ուսումնասիրությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Գասպարյան):

Սինթեզվել են հակամանրէային հատկություններ ունեցող ալկիլային կամ էսթերային տեղակալիչներ պարունակող նոր պրոպարգիլ-ֆունկցիոնալացված չորրորդային պիպերիդինիումային աղեր: Միջին երկարության ալկիլային շղթաներով (C_{10}–C_{12}) միացությունները ցուցաբերել են ամենաբարձր հակաբակտերիալ և հակասնկային ակտիվություն: Ստացված արդյունքներն ընդգծում են ռացիոնալ նախագծված հետերոցիկլիկ ՉԱՄ-երի կառուցվածքների կարևորությունը, որոնք իրենց մեջ ներառում են չհագեցած տեղակալիչներ և օպտիմալ լիպոֆիլություն, վերահաստատում են պիպերիդինիումի հիմքով մատրիցայի հեռանկարայնությունը նոր սերնդի հակամանրէային դեղանյութերի մշակման գործում:

Սինթեզվել և ուսումնասիրվել է 2-(ալկիլօքսի)-N-(2,5-դիմեթիլբենզիլ)-N,N-դիմեթիլ-2-օքսոէթանամոնիումի քլորիդների (C_6–C_{12}) նոր շարք դրանց հակաբակտերիալ ակտիվությունը գնահատելու համար: Միացությունները ստացվել են 1-(2,5-դիմեթիլֆենիլ)-N,N-դիմեթիլմեթիլամինի ալկիլացմամբ համապատասխան ալկիլ քլորացետատների հետ: Արդյունքները ցույց են տվել, որ 2,5-դիմեթիլբենզիլային ֆրագմենտի և ալկիլօքսիկարբոնիլմեթիլային շղթայի զուգորդումն ուժեղացնում է ՉԱՄ-երի ակտիվությունը և ապահովում հակաբակտերիալ ազդեցության լայն սպեկտր, ինչի շնորհիվ այդ միացությունները կարող են դիտարկվել որպես տեղային կիրառման դեղաբանական միջոցներ և մակերեսների, բժշկական գործիքների ախտահանման համար նախատեսված դեզինֆեկտանտներ:

Հայկական բենտոնիտը մոդիֆիկացվել է N-(2,5-դիմեթիլբենզիլ)-2-(ալկիլօքսի)-N,N-դիմեթիլ-2-օքսոէթան-1-ամինիումի քլորիդներով, որտեղ ալկիլային շղթան (C_9-C_{11}) գծային ալկիլօքսի խումբ է՝ կապված բարդ եթերային կապով:

Հայկական բենտոնիտի օրգանոմոդիֆիկացիան էսթերային խմբեր պարունակող ՉԱՄ-երով հանգեցրել է հիդրոֆոբ օրգանոբենտոնիտների ստացմանը ջերմակայուն ինտերկալացված կառուցվածքներով: Օրգանոֆիլացման աստիճանն ուղղակիորեն կախված է ինչպես ՉԱՄ շղթայի երկարությունից, այնպես էլ աղ-կավ հարաբերակցությունից:

4-(3-(4-մեթօքսիֆենիլ)պրոպ-2-ին-1-իլ)մորֆոլինի ալկիլացումը պրոպարգիլբրոմիդով և ֆենիլպրոպարգիլբրոմիդով առաջացրել է չորրորդային ամինիումային աղեր հետագա փոխարկումներ իրականացնելու նպատակով: Սինթեզվել են β,γ-չհագեցած խմբի հետ զուգակցված ենինային բաղադրիչ պարունակող չորրորդային ամինիումային աղեր և ենթարկվել ցիկլացման (ղեկ.՝ ք.գ.թ. Վ.Հովսեփյան):

Շարունակվել են էլեկտրոնադոնորային խմբեր պարունակող պիրազոլային օղակի C-4 դիրքի էլեկտրաֆիլ յոդացման հետազոտությունները կադմիում (II) ացետատի առկայությամբ: Առաջարկվել են պիրազոլային օղակի յոդացման հնարավոր ուղիներ: Որպես ռեակցիայի մեխանիզմի ապացույց ներկայացվել է C-4 դիրքով դիմերացված պիրազոլների յոդացման անհնարինությունը:

Ուսումնասիրվել է պրոպարգիլային եթերների մերկուրացման–յոդդեմերկուրացման ռեակցիան: Ներկայացվող եթերների ացետօքսիմերկուրացումը հավանաբար տեղի է ունենում անկայուն սնդիկօրգանական ածանցյալների, ապա համեմատաբար կայուն դիմերային կառուցվածքով միջանկյալ միացության մասնակցությամբ: Սնդիկի դիացետիլենիդների յոդդեմերկուրացումը մեղմ պայմաններում հանգեցրել է յոդալկինների առաջացմանը: Նպատակային դիյոդոացետատները սինթեզվել են ստացված յոդոալկինների ացետօքսիմերկուրացման–յոդոդեմերկուրացման եղանակով (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Պիրիմիդինների և 1,2,4-տրիազոլների ածանցյալների նոր քիմիական և կենսաբանական հատկությունների բացահայտման նպատակով ուսումնասիրվել է տեղակալված

1-էթիլ-1,2,4-տրիազոլների ալկիլումը, որոնք ավելի վաղ սինթեզվել են պիրիմիդինային աղերի ռեցիկլմամբ: Սինթեզվել են նոր տեղակալված տրիազոլային աղեր, որոնք տրիազոլային օղակում պարունակում են ալկիլային, էսթերային և հիդրազիդային խմբեր:

Ապացուցվել է, որ 5–մեթիլ–1-էթիլ-3-էթօքսիկարբոնիլմեթիլ-1,2,4-տրիազոլի փոխազդեցությունը բենզիլքլորիդի հետ հանգեցրել է ոչ միայն ալկիլմանը N-4 դիրքում, այլև էսթերային՝ էթօքսիկարբոնիլ խմբի պոկմանը, որի արդյունքում անջատվել է 1-էթիլ-3,5-դիմեթիլ-4-բենզիլ-1,2,4-տրիազոլիումի քլորիդ:

1,4,6-տրիմեթիլ-2-(էթօքսիկարբոնիլ)մեթիլպիրիմիդինիումի յոդիդի և նույն խմբեր պարունակող տեղակալված պիրիմիդինի հիդրազիդի փոխազդեցության արդյունքում առաջացել է սինթեզի այլ եղանակներով դժվարամատչելի պիրազոլո[1,5-*a*]պիրիմիդինի 2-պիրիմիդինիլմեթիլ–ածանցյալ, որը ներառում է վերախմբավորման մեջ ներգրավված միացությունների հատվածները:

Իրականացվել են միացությունների հակաուռուցքային, հակավիրուսային, հակամանրէային հատկությունների ուսումնասիրություններ: Պարզվել է, որ ազոլոպիրիմիդինների շարքի բոլոր 10 նմուշները շատ ակտիվ են կոլորեկտալ քաղցկեղի և գրեթե բոլորը՝ կրծքագեղձի ուռուցքի նկատմամբ: Լավագույն արդյունքները գրանցվել են պիրազոլո-պիրիմիդինի շարքի 3՝ DGV-44, DGV-41 և DGV-49 նմուշների դեպքում, որոնք ճնշում են ուռուցքը մինչև 60–84%:

Բարձր հակավիրուսային ակտիվություն են ցուցաբերել 1,2,4-տրիազոլո[1,5-*a*]պիրիմիդինի շարքի DGV-15, ինչպես նաև պիրազոլո[1,5-*a*]պիրիմիդինի շարքի DGV-33 և DGV-39 ածանցյալները: Գրիպի A/Guangdong-Moaonan/SWL1536/2019/H1N1 pdm09 վիրուսի նկատմամբ հակավիրուսային ակտիվություն են ցուցաբերել նույն շարքերից DGV-262 և DGV-265 նմուշները:

Պարզվել է, որ ազոլոազինների 25 և 50 մկգ/լ կոնցենտրացիայի դեպքում, *E. Coli* բակտերիաների աճի արագությունը նվազում է 2,5 անգամ: Լավագույն արդյունքները գրանցվել են ազոլոազինների N-ալկիլ տեղակալված աղերի դեպքում (ղեկ.՝ թղթ. անդ. Գ.Դանագուլյան):

Շարունակվել են հետազոտությունները դոնոր-ակցեպտորային ցիկլոպրոպանների սինթեզի բնագավառում: Ցույց է տրվել, որ դիֆենիլֆոսֆինօքսիդի նմանատիպ կառուցվածք ունեցող (O,O-դիէթիլ)(1,2-դիբրոմ)ֆոսֆոնատը հեշտությամբ փոխազդում է ակտիվացված CH-թթուների, մասնավորապես ացետիլացետոնի, ացետոքացախաթթվի էսթերի, էթիլ էսթերի և ամիդների՝ ցիանքացախաթթվի, բենզիլցիանիդի, ինչպես նաև մալոնաթթվի դիէսթերի և դինիտրիլի հետ, սենյակային ջերմաստիճանում, հիմքի առկայությամբ ացետոնիտրիլում, առաջացնում է բարձր ելքերով ֆոսֆոնիլ-տեղակալված ցիկլոպրոպաններ: Ելային ֆոսֆոնատի և դրանից ստացված ցիկլոպրոպանների հակամանրէային ակտիվության գնահատմամբ պարզվել է, որ բոլոր նյութերը ցուցաբերում են արտահայտված ակտիվություն Shigella flexneri-ի և չափավոր ակտիվություն՝ փորձարկված մյուս միկրոօրգանիզմների վրա (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Գասպարյան):

1-պրոպարգիլ-3-մեթիլ- և 1-պրոպարգիլ-5-մեթիլպիրազոլներից մշակվել է համեմատաբար մատչելի եղանակ 1-ալլենիլ-3-մեթիլ- և 1-ալլենիլ-5-մեթիլպիրազոլների սինթեզի համար:

Պրոպարգիլպիրազոլներն իզոմերիզացվել են իզոպրոպիլ սպիրտում՝ հիմքի կատալիտիկ քանակության առկայության դեպքում: Լուծիչի հեռացումից հետո ստացված եղանակով համապատասխան ալլենիլպիրազոլները նույնականացվել են ԻԿ, ՄՄՌ սպեկտրներով, 50–55% ելքով: Հաջորդ փուլում ուսումնասիրվել է սինթեզված ալլենիլպիրազոլների ռադիկալ պոլիմերացումը AIBN-ի (ազոբիսիզոբուտիրոնիտրիլ)

առկայությամբ: Պարզվել է, որ 3-դիրքում մեթիլ խումբ պարունակող իզոմերն ավելի արագ է պոլիմերացվում, քան 5-դիրքում պարունակողը: Հետագայում միացությունների պոլիմերացումը դիտարկվել է որպես սոպոլիմերացման գործընթաց, և հաշվարկվել են սոպոլիմերացման հաստատունները:

Սինթեզվել են սերպեժինի մի շարք γ-լակտոնային և 2-պիրիդոնային օղակներ պարունակող ածանցյալներ, որոնք դրսևորել են դեղաբանական ակտիվության լայն սպեկտր: Հետազոտության շրջանակում իրականացվել է սերպեժինի 37 նոր ածանցյալների հակաբակտերիալ ակտիվության գնահատում ագարի դիֆուզիոն մեթոդով՝ 20 մլն միկրոբային բջիջ/մլ բակտերիալ բեռնվածությամբ: Գիտափորձերն իրականացվել են ասեպտիկ պայմաններում՝ օգտագործելով ինչպես գրամդրական, այնպես էլ գրամբացասական բակտերիաների ստանդարտ շտամներ: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ առաջին խմբի միացությունները դրսևորել են արտահայտված հակաբակտերիալ ակտիվություն, հատկապես *Shigella flexneri*-ի նկատմամբ, միաժամանակ մի շարք միացություններ ցուցաբերել են միջին արդյունավետություն (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

Իրականացվել է պոլիստիրոլի լատեքսային մասնիկների սինթեզ մոնոմեր-ջուր ստատիկ համակարգում ցեթիլ սպիրտի առկայությամբ: Մեթիլմետակրիլատի պոլիմերացումն իրականացվել է ստատիկ պայմաններում՝ հիդրոքինոն-կալիումի պերսուլֆատ օքսիդավերականգման համակարգի ջրային լուծույթում:

Տարվել է պենտաէրիտրիտոլի օքսիդացում կալիումի պերսուլֆատով ջրային և օրգանական միջավայրերում, տարբեր ջերմաստիճաններում: Մասս սպեկտրոսկոպիայի եղանակով ցույց է տրվել, որ ստացվում են 2-6 միավոր պարունակող պենտաէրիտրիտոլի ալդեհիդային օլիգոմերներ, որոնք միմյանց կապված են C-O-C կապերով (ղեկ.՝ ք.գ.թ. Ն.Միրաքյան):

Շարունակվել են էլեկտրակցեպտոր խմբերով ակտիվացված էլեկտրաֆիլ ալկենների (Միքայելի ակցեպտոր) և ակտիվ մեթիլենային միացությունների՝ նուկլեոֆիլների (C=H թթու) փոխազդեցության աշխատանքները:

Ուսումնասիրվել են արիլմեթիլիդենցիանքացախաթթվի էսթերի և ացետոքացախաթթվի *N*-արիլամիդների փոխազդեցության առանձնահատկությունները հիմնային կատալիզատորների առկայությամբ: Ցույց է տրվել, որ էթանոլում (ացետոնիտրիլում), տրիէթիլամինի առկայությամբ 50–55°C-ում, ինչպես նաև տրիէթիլամինի և պիպերիդինի առկայությամբ եռացման պայմաններում, տեղի է ունենում կարբոցիկլացում: Միքայելի ռետրո- ռեակցիայի արդյունքում առաջանում են N^1,N^3,-2-տրիարիլ-4-հիդրօքսի-4-մեթիլ-6-օքսոցիկլոհեքսան-1,3-դիկարբօքսամիդների նոր ածանցյալներ 25–64% ելքով:

Հաստատվել է, որ կարբոցիկլացման հետ մեկտեղ նիտրիլային խմբի հաշվին ընթանում է նաև Միքայելի արգասիքի ներմոլեկուլային հետերոցիկլացում՝ առաջացնելով նախկինում անհայտ էթիլ 5-ացետիլ-2-իմինո-1,4-դիարիլ-6-օքսո-պիպերիդին-3-կարբօքսիլատներ 32–86% ելքով և էթիլ 5-ացետիլ-2-ամինո-1,4-դիարիլ-6-օքսո-1,4,5,6-տետրահիդրոպիրիդին-3-կարբօքսիլատներ 38–72% ելքով:

Միացությունների կառուցվածքները հաստատվել են ԻԿ, ՄՄՌ (^{1}H, ^{13}C) և մասս սպեկտրոսկոպիայի տվյալներով: Սինթեզված միացությունները ցուցաբերել են չափավոր հակաբակտերիալ ակտիվություն (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Խաչատրյան):

Enraf Nonius CAD-4 և Rigaku XtaLAB Synergy-S դիֆրակտոմետրերով իրականացվել է շուրջ 40 բյուրեղական փորձանմուշի ուսումնասիրություն: Ստացված արդյունքների հիման վրա կատարվել է կառուցվածքի վերծանում, ճշգրտում և վերլուծություն: Արդյունքները հիմնականում հաստատել են ենթադրյալ կառուցվածքները:

Waters XEVO G3 QTOF հեղուկ քրոմատոգրաֆ-մասս սպեկտրոմետրով և Waters GC Agilent-TQ-GC XEVO գազ քրոմատոգրաֆ-մասս սպեկտրոմետրով իրականացվել է շուրջ 750 փորձանմուշի ուսումնասիրություն: Ստուգվել են նմուշների մաքրության աստիճանը և կառուցվածքային համապատասխանությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Այվազյան):

Կոորդինացված նիտրո խմբի ակտիվության վրա առանցքային լիգանդի ազդեցությունը պարզաբանելու նպատակով հետազոտվում է կոբալտի մոնոպիրիդիլտրիֆենիլ պորֆիրինների և դրանց նիտրո կոմպլեքսների փոխազդեցությունը թիոլների հետ:

Գրանցվել են ՀՀ քիմիկոսների կողմից սինթեզված միացությունների մոտավորապես 1500 ԻԿ և էլեկտրոնային կլանման սպեկտրներ (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մամյան):

Շարունակվել են Հայաստանի Հանրապետության տարբեր գիտական և արտադրական կազմակերպություններում սինթեզված նոր միացությունների կառուցվածքային ուսումնասիրությունները միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՌ) սպեկտրոսկոպիայի մեթոդով: Լաբորատորիայում առկա Bruker AvanceNeo 400 սպեկտրոմետրերի շահագործման արդյունքում, օգտագործելով ^{1}H, ^{13}C, ^{31}P, ^{15}N ՄՄՌ միաչափ, ինչպես նաև մի շարք կորելյացիոն երկչափ մեթոդներ՝ COSY, NOESY, HMQC, HMBC, DEPT, իրականացվել են ավելի քան 4000 նոր միացությունների կառուցվածքների և դրանց մաքրության ուսումնասիրություններ:

Հաստատվել և պարզվել են բազմաթիվ սինթեզված միացությունների կառուցվածքային առանձնահատկությունները, տարածական իզոմերների առկայությունը և կատարվել են ^{1}H և ^{13}C ՄՄՌ սպեկտրերի վերլուծությունները:

Իրականացվել են ֆոտոքիմիական հետազոտություններ, մասնավորապես Կենտրոնում սինթեզվող տարբեր դասերի միացությունների վրա, որոնք ճառագայթման արդյունքում ենթարկվել են ցիս – տրանս փոխակերպումների (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Շահխաթունի):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հիդրազինոտեղակալված պիրիդինթիոնների հիման վրա մշակվել է 3,5-դիմեթիլ- և 3,5- կամ 5,3-մեթիլֆենիլ-պիրազոլոտեղակալված պիրանո[3,4-*c*]պիրիդինի և իզոքինոլինի ստացման օպտիմալ եղանակ: Ռենտգեն կառուցվածքային անալիզի եղանակով հաստատվել են պիրազոլային օղակի տեղակալիչների դիրքերը: Ֆիզիկաքիմիական տարբեր մեթոդների միջոցով ուսումնասիրվել է այդ համակարգում թիոն-թիոլային տաուտոմերիայի հնարավորությունը: Մշակվել է պիրազոլոտեղակալված պիրանո[3,4-*c*]պիրիդինի և իզոքինոլինի *S*-ալկիլ ածանցյալների սինթեզի օպտիմալ եղանակ: Սնդիկի ացետատի առկայությամբ իրականացվել են զուգորդման և միացման ռեակցիաները: *In silico* եղանակով կանխատեսվել է սինթեզված նոր միացությունների կենսաբանական ակտիվությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Շ.Դաշյան):

Ֆուրո(թիենո)[3,2-*d*]պիրիմիդին-7(8)-ոններն ալկիլվել են՝ առաջացնելով *N*-տեղակալված միացություններ, այնուհետև վերածվել են համապատասխան քլորածանցյալների, որոնց հիման վրա սինթեզվել է ամինոածանցյալների նոր շարք: *S*-տեղակալված պիրիմիդիններ ստանալու նպատակով քլորածանցյալները փոխազդեցության մեջ են մտել թիոմիզանյութի հետ: Արդյունքում սինթեզված ֆուրո(թիենո)[3,2-*d*]պիրիմիդին-7(8)-թիոններն ալկիլվել են տարբեր հալոգենիդներով՝ առաջացնելով համապատասխան *S*-տեղակալված ածանցյալներ: Հակամանրէային ակտիվության ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ սինթեզված թիենո[3,2-*d*]պիրիմիդին-7(8)-ոնների ամինոածանցյալները ցուցաբերել են միջին արգելակող ազդեցություն ուսումնասիրված MDR շտամների աճի վրա (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Հակոբյան):

Շարունակվել է CO_2-ի կլանման, աբսորբման և ֆիքսման եղանակների մշակումն իոնական հեղուկներով, ամիններով և ամինաթթուներով: Կարբամատների և բիկարբամատների ստացման նպատակով ընդլայնվել է ամինների շարքը, ուսումնասիրություններ են կատարվել հիդրոֆիլ և հիդրոֆոբ ամինաթթուների կլանողականության մակարդակը միևնույն պայմաններում պարզելու համար: ՄՄՌ սպեկտրոսկոպիայի հետ մեկտեղ ավելացվել են սպեկտրոսկոպիկ այլ եղանակներ կլանման մակարդակների վերահսկման և ստացված միացությունների հայտնաբերման համար: Մասնավորապես ԻԿ, Ռաման սպեկտրոսկոպիայի և մասս սպեկտրոմետրիայի միջոցով հսկվել է CO_2-ի ֆիքսումը, իսկ ռենտգեն կառուցվածքային անալիզի եղանակով վերահաստատվել են առաջացող նանոկառուցվածքների՝ նանոծաղիկների և նանոթելիկների կառուցվածքները (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան):

Իրականացվել են հայտնաբերված նոր վերախմբավորման կինետիկական հետազոտություններ՝ կիրառելով տարբեր եռման ջերմաստիճան ունեցող ամինների շարք: Վերախմբավորման ռեակցիան տարվել է փակ մետաղական տարայում ճնշման տակ, որը հնարավորություն է տվել իրականացնել այն որոշ ցածրաեռ ամինների դեպքում: Ելնելով ֆուրո(թիենո)[2,3-*c*]-2,7-նավթիրիդիններից՝ սինթեզվել են հնգացիկլ նոր հետերոցիկլիկ համակարգեր՝ համակցված պիրրոլո[1,2-*a*]պիրիմիդիններ, պիրիդո[1,2-*a*]պիրիմիդիններ և պիրիմիդո[1,2-*a*]ազեպիններ: Սինթեզվել է 1-ազիդո-3-քլոր-7-իզոբութիլ-2,7-նավթիրիդինը և ուսումնասիրվել է ազիդ-տետրազոլային տաուտոմերիան: Ուսումնասիրվել են սինթեզված որոշ միացությունների հակաբակտերիալ և նեյրոտրոպ հատկությունները (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Սիրականյան):

Շարունակվել է մեղվի ակնամոմի և մեղվի ծաղկափոշու տարբեր էքստրակտների հակասթրեսային ազդեցության ուսումնասիրությունը քրոնիկ հիպերկինեզիայի պայմաններում (ղեկ.՝ Հ. Հունանյան):

Օպտիմալացվել են Հեքի քրոսս համակցման ռեակցիայի պայմանները գլիցինի և ալանինի 4-բրոմբենզիլ ածանցյալների Ni(II)–ի կոմպլեքսների քանակական սինթեզի նպատակով՝ տարբեր չհագեցած ֆոսֆոր պարունակող միացություններով: Սինթեզված միջանկյալ կոմպլեքսներից աղաթթվային քայքայումով առանձնացվել են (S)- և (R)-ամինաթթուներ, որոնց կառուցվածքը հաստատվել է ժամանակակից սպեկտրալ անալիզի եղանակներով (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Իրականացվել է 4-նիտրոիմիդազոլի և 4,5-դինիտրոիմիդազոլի մոդիֆիկացիան 1,2-դիքլորէթանով և ալկիլացման արգասիքների դեհիդրոքլորացումով, ստացվել են նիտրացված 1-վինիլիմիդազոլներ: Սինթեզված 1-վինիլ-4-նիտրոիմիդազոլը փորձարկվել է որպես հավելանյութ ՏԷՆ-ի (տետրանիտրոպենտաէրիտրիտ) համար: Ցույց է տրվել, որ 1-վինիլ-4-նիտրոիմիդազոլ-ՏԷՆ խառնուրդի ջերմանջատումը 5 անգամ ավելի մեծ է, քան մաքուր ՏԷՆ-ինը (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

Ջրածնի ատոմի փոխանցմամբ ակտիվացումն (HAT) ընձեռում է այլընտրանքային հնարավորություն՝ ընտրողաբար ակտիվացնելու կապի դիսոցման ամենացածր էներգիայով (BDE) օժտված ալիֆատիկ C–H կապերը: Ֆոտոկատալիզի՝ «տեսանելի լույսով հարուցված անցումային մետաղներով (ԱՄ) կատալիզ» ենթադասը, որպես եզակի սինթետիկ գործիք, հնարավորություն է տալիս ԱՄ-ներին կատարել երկակի դեր՝ կլանել լույսի էներգիան և իրականացնել կատալիտիկ փոխարկումներ (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Հակոբյան):

Ուսումնասիրվել են երկաթի, մանգանի և կոբալտի պորֆիրինների {Fe (TTP)NO3, Fe (TTP)NO2, Co (TTP)NO2 և Mn (TTP)NO2) նիտրատային և նիտրիտային կոմպլեքսների ռեակցիաները մի շարք ալիֆատիկ թիոլների (RSH) հետ: Ինֆրակարմիր, ուլտրամանուշակագույն սպեկտրոսկոպիայի և մաս-սպեկտրոմետրիայի միջոցով ցուցադրվել է

թիոլների՝ նշված կոմպլեքսները մինչև համապատասխան նիտրոզիլներ {Fe (TTP)NO, Co (TTP)NO և Mn (TTP)NO} վերականգնելու ունակությունը: Ռեակցիայի արգասիքները պարունակում են նաև համապատասխան դիսուլֆիդներ (RSSR) և ջուր: Ուսումնասիրություններ են իրականացվել նաև ֆոսֆինի հետ քրոմի, մանգանի և կոբալտի պորֆիրինների՝ Cr (TTP)NO և Mn (TTP)NO)Co (TTP)NO նիտրոզիլային կոմպլեքսների կոորդինացիոն ունակության վերաբերյալ: Առաջին անգամ ցույց է տրվել Cr(TTP)(NO)(PMe3), Mn(TTP)(NO)(PMe3) և Co(TTP)(NO)(PMe3) վեց-կոորդինացված կոմպլեքսներ ձևավորելու ունակությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Մարտիրոսյան):

Ակտիվ համագործակցություն է սկսվել Մ.Սարյանի տուն-թանգարանի հետ. Ռաման սպեկտրասկոպիայի եղանակով առաջին անգամ ուսումնասիրվել են գեղանկարչի նկարների պիգմենտները, 1909-48թթ. տարբեր ստեղծագործություններ՝ «Առավոտը Ստավրինոյում», «Արաբ պարուհի», «Քարավան», «Զանգվի ափերը Երևանի մոտ», «Կիրովականը»: Ստացված արդյունքների հիման վրա պարզվել է, որ Սարյանի ներկապնակը բավականին հարուստ է տարբեր գունանյութերով՝ ուլտրամարին կապույտ, կոբալտ կապույտ, զմրուխտ կանաչ, կոբալտ կանաչ, ցելադոնիտ կանաչ, կադմիում դեղին, քրոմ դեղին, վենետիկյան կարմիր, դեղին օխրա, կարմիր օխրա, կապարի սպիտակ, ցինկ սպիտակ, կալցիումի կարբոնատ, նաև մետաղական կարբոքսիլատներ և օքսալատներ, որոնք ներկանյութերի շերտերի քայքայման արդյունք են: Նմանատիպ հետազոտությունները նպաստում են Սարյանի նկարչական տեխնիկայի խորքային ընկալմանը և արժեքավոր են նրա ստեղծագործությունների պահպանման և վերականգնման գործում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

ԼԱԴ–ՄՄՌ սպեկտրոսկոպիայի մեթոդով ուսումնասիրվել է ֆոտոիզոմերիզացիայի կառավարման հնարավորությունը և գրանցումը: Փորձարկվել են տարբեր դասերի հայտնի և անհայտ միացություններ: Սկզբում հետազոտվել են լաբորատորիայում առկա մի շարք ստիլբեններ և ազոմիացություններ, այնուհետև սինթեզված նոր միացություններ: Առանձնացվել են մի քանի դասի միացություններ, որոնք տեսանելի լույսի ազդեցության տակ հեշտ և համեմատաբար արագ կարող են անցնել ցիս իզոմերին: Հաջորդիվ ուսումնասիրվել է թիոլ–ին ռեակցիան, որն ընթանում է օրգանական կատալիզատորի և 520 նմ ալիքի երկարությամբ, կանաչ լույսի տիրույթում: Իրականացվել է իրական ժամանակում ռեակցիայի *in situ* ՄՄՌ մոնիթորինգ՝ ռեակցիոն խառնուրդն անմիջապես սպեկտրոմետրում ճառագայթելով և պարբերաբար գրանցելով ՄՄՌ սպեկտրեր (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Շահխաթունի):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Бурова А., Араджян Г., Унанян О., Горлова А., Свирин Е., Стрекалова Т., Токсические модели болезни Паркинсона in vivo как тест-системы для первичного скрининга антиоксидантных соединений, М., “Патогенез”, 25(2), 2025, с. 14-21. https://doi.org/10.48612/path/2310-0435.2025.02.14-21
2. Варданян Л.Р., Арутюнян С.А., Торосян Г.О., Исследование антиоксидантной активности растительного сырья как натурального стабилизатора пищевых продуктов, Кемерово, “Техника и технология пищевых производств”, т.55, N3, 2025, с.485–495. https://doi.org/10.21603/2074-9414-2025-3-2586
3. Гасанов Э.Э., Ширинян М.Э., О сходимости автоматной модели барорецепторного комплекса, М., “Вестник МГУ”. Серия 1. Математика. Механика, N 6, 2025, с.3-8. https://doi.org/10.55959/MSU0579-9368-1-66-6-1
4. Гаспарян Г.Ц., Бичахчян А.С., Дердзян Л.В., Хачатрян Т.Т., Гаспарян Л.Р., Мардиян З.З., Мурадян Р.Е., Аракелян А.Г., Погосян А.С., Синтез и оценка антибактериальной активности циклопропилфосфонатов, СПб., “Журнал общей химии”, 95, N 7-8, 2025, с. 298-304.

https://doi.org/10.31857/S0044460X25070062
5. Григорян А.С., Аветисян Э.А., Петросян А.А., Арутюнян А.А., Пароникян Р.Г., Влияние 2-гидрокси-3-(2-(циклопентилтио)этил)-4Н-пиридо[1,2-а]пиримидин-4-она на моноаминоксидазы в регуляции активности миндалевидниго тела и эмоциональны состояний, Ер., “ДНАН Армении”, т.125, N 2, 2025, с.99-108. https://doi.org/10.54503/0321-1339-2024.125.2-99
6. Григорян С.Г., Акопян Э.А., Акобян Р.М., Атабекян М.Л., Топузян В.О., Фармазян З.М., Синтез и свойства силиконовых композитов, содержащих никотин, СПб, “Журнал прикладной химии”, Композиционные материалы, т.98, N 1, 2025, с.50-65. https://doi.org/10.31857/S0044461825010063
7. Исаханян А.У., Овасян З.А., Мадоян Р.А, Сукиасян А.Г., Чаилян С.Г, Григорян А.С, Гаспарян Г.В., Арутюнян А.А., Синтез, изучение антимикробной, противогрибковой и антимоноаминоксидазной активности новых пиразолиновых и пиримидиновых производных на основе (е)-1-(4-амилоксифенил)-3-арилпроп-2-ен-1-онов, М., “Биоорганическая химия”, т. 51, N 1, 2025, с.137–143. https://doi.org/10.31857/S0132342325010126
8. Исаханян А.У., Акопян Н.З., Овасян З.А., Диланян С.В., Нерсесян Л.Э., Агаронян А.С., Даниелян И.С., Паносян Г.А., Арутюнян А.А., Синтез, изучение противоопухолевой активности и воздействия (4-алкоксифенил)(3-арилоксиран-2-ил)-метанонов на опухолевую ДНК в условиях in vitro, М., “Биоорганическая химия”, т.51, N 3, 2025, с.516-522. https://doi.org/10.31857/S0132342325030139
9. Кочаров С.Л., Паносян Г.А., Мелкумян М.А., Синтез и антибактериальная активность некоторых новых полифункциональных производных циклогексанолов, М., “Хим.-фарм. журн.”, т.59, N 8, 2025, с.17-25. https://doi.org/10.30906/0023-1134-2025-59-8-17-25
10. Aghekyan A.A., Panosyan H.A. & Avagyan A.S., Synthesis of Novel Fused Systems Derived from 4-Spiro-Fused 6,7-Dimethoxy-1-(ethoxycarbonyl)dihydroisoquinolines, M., “Russ.J.Org.Chem.”, 61(8), 2025, pp. 1473–1478. https://doi.org/10.1134/S1070428025601797
11. Avagyan A.S., Vardanyan S.O., Sargsyan A.B., Panosyan H.A., Mkrtchyan G.S., Tumajyan H.E., Muradyan R.E., Aghekyan A.A., Synthesis and Antiarrhythmic Activity of New 1,3,4-Oxadiazole Derivatives Containing a 1,4-Benzodioxane Fragment”, M., “Russ.J.Org.Chem.”, 61(1), 2025, pp. 73-79. https://doi.org/10.1134/S1070428024602966
12. Arajyan G, Sargsyan S, Melyan G, Shahinyan M, Martirosyan Y, Gabrielyan I., Phytochemical Insights and Therapeutic Benefits of Aloysia citrodora (Lemon Verbena): Implications for Chronic Disease Prevention and Functional Food Development, “Functional Food Science”, 5(9), 2025, pp. 402–414. https://doi.org/10.31989/ffs.v5i9.1708
13. Badalyan K., Babayan N., Kalita E., Grigoryan N., Sarkisyan N., Grigoryan R., Arakelov G., Shahkhatuni A., Attaryan H., Mkrtchyan D., Khachatryan H., Khondkaryan L., Synthesis, in silico, and in vitro pharmacological evaluation of norbornenylpiperazine derivatives as potential ligands for nuclear hormone receptors, “Journal of Applied Pharmaceutical Science”, 15(6), 2025, pp. 115-127, https://doi.org/10.7324/JAPS.2025.230239
14. Bichakhchyan L.A., Sukoyan A.H., Movsisyan T.G., Attaryan H.S., Transvinylation of 4- and 5-Nitropyrazoles with Vinyl Acetate in the Presence of Mercury Acetate Immobilized on Poly(vinylazole) Substrates, Spb, “Russian Journal of Applied Chemistry”, 97(10), 2025, pp. 772-777. https://doi.org/10.1134/S107042722410001X
15. Buloyan S., Poghosyan A., Harutyunyan H., Yeritsyan H., Sargsyan M., Hovhannisyan A., Topuzyan V., Gasparyan H., Targeting Amyloid Toxicity: Novel Cholinesterase Inhibitors Protect Hippocampal Cells from Amyloid Peptide-Derived Death, “Neurochemical Research”, 50:338, 2025. https://doi.org/10.1007/s11064-025-04592-8
16. Buloyan S., Harutyunyan A., Gasparyan H., Sakeyan A., Shahkhatuni A., Zakirova N.F., Yusubalieva G., Kirillov I., Fedyakina I., Solyev P., Lipatova A., Bogomolov M., Prassolov V., Lebedev T. and Ivanov A., Piperazine-Substituted Pyranopyridines Exhibit Antiproliferative Activity and Act as Inhibitors of HBV Virion Production, “International Journal of Molecular Sciences”, 26(9), 2025, 3991. https://doi.org/10.3390/ijms26093991
17. Costa-Nunes JP, Sitdikova K, Svirin E, de Munter J, Somlyai G, Gorlova A, Litavrin A, Arajyan GM, et al., Transcriptomic Insights into Late-Life Depression and the Role of Environmental Drinking Water Composition: A Study on 18-Month-Old Mice, “International Journal of Molecular Sciences”, 26(21), 2025, 10626. https://doi.org/10.3390/ijms262110626

18. Dabaeva V.V., Paronikyan E.G., Barkhudaryants I.M., Dashyan Sh.Sh., Baghdasaryan, M.R, Synthesis of new fused thieno[3,2-d] pyrimidine derivatives based on 4-(furan-2-yl)-7,7-dimethyl-2-sulfanyl-7,8-dihidro-5H-pyrano[4,3-b]pyridine-3-carbonitrile, M., "Russ.J.Org.Chem.", 61(1), 2025, pp. 54-59. https://doi.org/10.1134/S1070428025601025
19. Danagulyan G.G., Georgyan T.E., Boyakhchyan A.P., Danagulyan A.G., Heterocyclization of 2-Acetylcyclopentanone, M., "Russ.J.Org.Chem.", 61(4), 2025, 571–579. https://doi.org/10.1134/S1070428025600056.
20. Danagulyan G.G., Khachatryan L.S., Danagulyan A.G., Dangyan M.Yu., Panogyan H.A., Recyclization of a Pyrimidinium Salt as a Synthetic Approach to Novel Nitrogenous Heterocycles, M., "Russ.J.Org.Chem.", 61(5), 2025, pp. 974-980. https://doi.org/10.1134/S1234567825601469
21. Dashyan Sh.Sh., Ayvazyan A.S., Paronikyan R.G., Synthesis, neurotropic stady and SAR of new derivatives of triazolopyridine, "Pharmaceutical Chemistry Journal", 59(1), 2025, pp. 41-48. https://doi.org/10.1007/s11094-25-03362-8
22. Dotsenko V.V., Rudenko S.V., Lukina D.Yu., Smirnova A.K., Krivolkolysko S.G., Temerdachev A.Z, Harutyunyan A.S., Paronikyan, E. G., Aksenov N.A., Aksenova I.V., Synthesis of 2,2-dimethyl-2,3-dihydropyrido[3,2:4,5]thieno[3,2-d]pyrimidin-4(1H)–ones by reaction of 3-aminothieno[2,3-b]pyridine-2-carboxamides with acetone, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(5), pp. 1236-1247. https://doi.org/10.1134/S107363225601954
23. Galstyan M.V., Harutyunyan A.D., Gevorkyan K.A., Aleksanyan M.V., Nazaryan I.M., Paronikyan R.G., Gasparyan S.P., Synthesis and neurotropic activity of cyclic and spirocyclic derivatives of 1,3-diazadamantane, M., "Russ.J.Org.Chem.", 61(5), 2025, 864-871. https://doi.org/10.1134/S1234567825601330
24. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzyan L.V., Mardiyan Z.Z., Khachatryan T.T., Karapetyan H.A., Gasparyan L.R., Poghosyan A.S., Synthesis of phosphoryl-substituted cyclopropanes based on cyano-activated CH acids. 1 : 2 Adduct-product of O- and C-alkylation of Dimedone, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95 (5), 2025, pp. 1086–1092. https://doi.org/10.1134/S107036322560039
25. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzyan L.V., Khachatryan T.T., Gasparyan L.R., Mardiyan Z.Z., Muradyan R.E., Arakelyan H.H., Poghosyan A.S., Synthesis and evaluation of antibacterial activity of cyclopropylphosphonates, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(7-8), 2025, pp. 298-304. https://doi.org/10.7868/S3034559625070062
26. Gevorkyan K.A., Galstyan M.V., Aleksanyan M.V., Avakimyan J.A., Stepanyan H.M., Muradyan R.Y., Harutyunyan A.D., Synthesis of novel amino derivatives of 1,3-diaza- and 1,3,5-triazadamantanes, M., "Russ.J.Org.Chem.", 61(5), 2025, pp. 847-854. https://doi.org/10.1134/S1234567824601311
27. Grigoryan K.R., Igityan A.V., Vardanyan H.H., Khachatryan Zh.G., Harutyunyan A.S., Zatikyan A.L., Shilajyan H.A., Antioxidant properties and binding interactions of 1-morpholin-4-yl-3-{[2-(3-nitrophenyl)-2-oxoethyl]thio}-5,6,7,8-tetrahydroisoquinoline-4-carbonitrile with bovine serum albumin, Yer., "Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences", 59(3), 2025, pp. 57-66. https://journals.ysu.am/index.php/proceedings-chem-biol/article/view/vol59_no3_2025_pp057-066
28. Hakobyan N.Z., Safaryan M.S., Grigoryan A.S., Alaverdyan Zh.R., Paronikyan R.G., Mirzoyan L.S., Gasparyan H.V., Panosyan H.A., and Harutyunyan A.A., Search for Monoamine Oxidase Inhibitors among 4-Aryl-6-(4-alkoxyphenyl)-2-arylpyrimidines. Study of Anticonvulsant and Psychotropic Activities, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(4), 2025, 927-934. https://doi.org/10.1134/S107036322560021
29. Hakobyan R.M., Adunts H.V., Attaryan H.S., Muradyan R.E., Arakelyan H.G., Mirakyan N.A., Davinyan A.M., Mamyan S.S., Melikyan G.S., New C1 and N5 Derivatives of Cerpegine. Synthesis and Antibacterial Activity Study, "ChemChemTech", 68(7), 2025, 35-47. https://doi.org/10.6060/ivkkt.20256807.7224
30. Hakobyan H.I., Khachaturyan N., Gevoryan S., Sargsyan T.H., Danghyan Y.M., Saghyan A.S., Zakarian A., Mardiyan Z.Z. Synthesis of nonnatural amino acid derivatives with ni complexes and investigation of the antifungal activity of their dipeptide derivatives, "Synlett", 36(14), 2025, pp. 2039-2043. https://doi.org/10.1055/a-2536-9046
31. Hakobyan R.M., Shahkhatuni A.G., Polynski M.V., Ayvazyan A.G., Aleksanyan A.G., Bichakhchyan L.A., Shahkhatuni A.A., Attaryan H.S., The role of the nitro group on the formation of intramolecular hydrogen bond in the methyl esters of 1-vinyl-nitro-pyrazolecarboxylic acids, "Journal of Molecular Structure", 1322, Part 2, 2025, 140350, https://doi.org/10.1016/j.molstruc.2024.140350
32. Harutyunyan A.A., Sumbatyan A.S., Israelyan S.G., Hambardzumyan A.A., Panosyan H.A., Synthesis and Docking Study of 6-Substituted Indolo[2,3-b]quinoxalines, M., "Russ.J.Org.Chem.", 61(8), 2025,

pp. 1465–1472, https://doi.org/10.1134/S1070428025601591
33. Harutyunyan A.A., Hakobyan M.R., Sargsyan A.S., Hambardzumyan A.A., Stepanyan H.M., Grigoryan A.S., Panosyan H.A., Synthesis of Triazoles with Natural Amino Acid Fragments, M., "Russ.J.Org.Chem.", 61(1), 2025, 1–15. https://doi.org/10.1134/S1070428024601894
34. Harutyunyan K., Nersesova L., Ayvazyan V., Avagyan E., Melkumyan M., Sargsyan M., Tatikyan S., Karalyan Z., Avagyan H., Harutyunyan A., Tsakanova G., Babayan N., In silico and in vitro evaluation of drug-like properties and anticancer potential of novel 5-fluorouracil derivatives, "Scientific Reports",15, 2025, 39689. https://doi.org//10.1038/s41598-025-23237-y
35. Harutyunyan M., Melyan G., Martirosyan Y., Hovhannisyan M., Dangyan K., Terteryan K., Arajyan G., Khazaryan K., Sahakyan A., Optimization of In Vitro Cultivation for Enhanced Biochemical Properties of Geranium (Pelargonium graveolens) for Functional Use, "Functional Food Science", 5(8), 2025, pp. 364–377. https://doi.org/10.31989/ffs.v5i7.1697
36. Hobosyan N.G., Balyan K.V., Movsisyan L.A., Hovsepyan V.S., Ayvazyan A.G., Panosyan H.A., Attaryan H.S., Sargsyan H.B., Pogosyan H.R., Efficient Regioselective Iodination of Pyrazole Derivatives Mediated by Cadmium(II) Acetate, "ChemistryOpen", 14(7), 2025, e202400443. https://doi.org/10.1002/open.202400443
37. Hovhannisyan A.A., Agababyan A.G., Makichyan A.T., Shahkhatuni A.A., Davinyan A.M., Hakobyan E.A., Topuzyan V.O., and Galstyan L.Kh., Synthesis and Some Properties of (Z)-4-Arylidenehexahydropyrido[1,2-a]pyrazin-3(4H)-ones, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(11), 2025, pp. 3269–3279. https://doi.org/10.1134/S1070363225603722
38. Hovhannisyan A.A., Grigoryan G.K., Nadaryan A.G., Grigoryan N.H., Generation of Latex Particles and Phase Formation in a Heterogeneous Static Monomer–Water System, "Colloid J.", 87, 2025, 49–53. https://doi.org/10.1134/S1061933X24601215
39. Hovhannisyan A.A., Grigoryan G.K., Nadaryan A.G., Grigoryan N.H., Transformation of Aqueous Methyl Methacrylate Solution into Stable Monodisperse Latex via Polymerization Initiated by Hydroquinone–Potassium Persulfate System, "Colloid J.", 87, 2025, pp.379–383. https://doi.org/10.1134/S1061933X25600332
40. Hovhannisyan A.A., Aghekyan H.A., Iretskii A.V., Martirosyan G.G., Spectroscopic characterization of phosphine ligation on manganese and chromium porphyrin nitrosyls, "Journal of Porphyrins and Phthalocyanines", 29(09), 2025, pp. 966-973.
41. Hovsepyan V.S., Gevorgyan N.A., Safaryan G.G., Babakhanyan A.V., Stepanyan H.M., Arajyan G.M., Synthesis and antibacterial evaluation of 2-(alkyloxy)-n-(2,5-dimethylbenzyl)-n,n-dimethyl-2-oxoethanammonium chlorides, "Georgian Medical News", 368(11), 2025, 315.
42. Ichikawa K., Johnson H.M., Curtis M.A., Biswas N., Singh S., Khachatryan H.N., & Sperry J., Targeting glioma with heteroaromatic alkaloids: A review of potential therapeutics, "Bioorganic & Medicinal Chemistry", 121, 2025, 118051
43. Isakhanyan A.U., Hakobyan N.Z., Muradyan R.E., Tumadzhyan A.Y., , Panosyan H.A., Harutyunyan A.A., Synthesis, anti-inflammatory, analgesic and antyregifying properties of azomethine derivatives of the tetrahydropyrane series, "Žurnal organičeskoj himii", 61, 2025, pp. 636-640. https://doi.org/10.31857/S0514749225050164
44. Jilikyan A.A., Harutyunyan M.A., Yeganyan T.H., Davinyan A.M., Galstyan A.S., "Click" and "Click by Click". Synthesis of Enantiomerically Pure New Derivatives of (S)-Proline Containing 1,2,3-Triazole Ring, "ChemistrySelect", 10, 2025, e02362. https://doi.org/10.1002/slct.202502362
45. Karapetyan T., Hovhannisyan A., Sakeyan A., Harutyunyan A., Carbon dioxide absorption and fixation by aqueous solutions of threonine-amines, Gav., "Collection of scientific articles of Gavar state university", 19, 2025, 42-53. https://doi.org/10.56246/18294480-2025.19-03
46. Kindop V.K.,Bespalov A.V., Dotsenko V.V., Strelkov V.D., Lukina D.Yu., Baichutin R.I., Paronikyan, E.G., Harutyunyan A.S., Ovcharov S.N., Aksenov N.A., Aksenova I.V., Synthesis and structural characterization 2-iminothiaoline/quinoline and 2-iminothiazoline/thieno[2,3-b]quinolone molecular hibrids with herbicide safening properties, "Tetrahedron", 186, 2025, 134889. https://doi.org/10.1016/j.tet.2025. 134889
47. Khachatryan A.Kh., Sargsyan A.A., Avagyan K.A., Simonyan A.G., Zograbyan A.N., Badasyan A.E., Gevorgyan A.V., Stepanyan H.M., Bespalov A.V., Dotsenko V.V., Reaction of ethyl 3-aryl-2-cyanoacrylates with *N*,*N*-disubstituted malonamides: Synthesis and properties of stable Michael adducts, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(11), 2025, pp. 3645-3662. https://doi.org/10.1134/S1070363225606933
48. Khachatryan E.A., Sahakyan L.Yu., Tovmasyan A.S., Melikyan G.S., Panosyan H.A., Mkrtchyan A.F., Shibata

N., Malkov A.V., Saghyan A.S., Sequential Michael addition, cross-coupling and [3 + 2] cycloaddition reactions within the coordination sphere of chiral Ni(II) Schiff base complexes derived from dehydroamino acids: pathways to the asymmetric synthesis of structurally diverse O-substituted serine and threonine analogs, "RSC Adv.", 15, 2025, 10558-10564. https://doi.org/10.1039/D5RA00910C

49. Khachatryan E.A., Stepanyan L.A., Gevorgyan H.R., Sargsyan A.S., Hovhannisyan A.M., Mkrtchyan A.F., Malkov A.V. and Saghyan A.S., Synthesis of enantiomerically enriched β-*N*-amino (*S*)-α-alanine analogs *via* sequential reactions on a chiral Ni(ii) complex, "Organic & Biomolecular Chemistry", 2025. https://doi.org/10.1039/D5OB01593F
50. Khachatryan H., Harutyunyan A., Grigoryan M., Diabetes among the Population of Ararat sety, Gav., "Collection of scientific articles of Gavar State University", 18, 2025, pp. 44-51. https://gsu.am/wp-content/uploads/2025/08/ilovepdf_merged.pdf
51. Khachikyan R.J., Harutyunyan K.K., Ayvazyan A.G., Hovakimyan Z.G., Reaction of [(E)-3-Aryl-3-oxoprop-1-en-1-yl]triphenylphosphonium Bromides with 2-Aminopyridine, M., "Russ.J.Org.Chem.", 61(2), 2025, 258–262. https://doi.org/10.1134/S1070428024603522
52. Kudryavtseva E.N., Medved′ko A.V., Arutyunyan A.D., Gevorkyan K.A., Galstyan M.V., Gasparyan S.P., Vatsadze S.Z., Romanenko G.V., Korlyukov A.A., Tretyakov E.V., Synthesis, molecular and crystal structures of polyfluoroaryl-substituted aminodiaza- and aminotriazadamantanes, "J.Struc.Chem.", 66(2), 2025, pp. 338-345. https://doi.org/10.1134/S0022476625020118
53. Makichyan A.T., Hovhannisyan A.A., Shahkhatuni A.A., Hakobyan E.A., Topuzyan V.O., Galstyan L.Kh., Synthesis, Antiradical and Anticholinesterase Properties of N-Substituted α,β-Dehydrodipeptides and Corresponding 4-Arylidene-5-oxo-4,5-dihydro-1H-imidazol-1-ylcarboxylic Acids, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(6), 2025, 1393–1405. https://doi.org/10.1134/S1070363225601267
54. Malmir M., Mata E.G., Delpiccolo C.M.L., Singh S., Khachatryan H.N., Wang C., Sperry J., Synthesis and bioactivity of dipyrrolobenzoquinones, "Tetrahedron", 186, 2025, 134866. https://doi.org/10.1016/j.tet.2025.134866
55. Mangasaryan S.H., Agababyan A.G., Shahkhatuni A.A., Ayvazyan A.G., and Topuzyan V.O., Reaction of (Z)-N-Substituted α,β-Dehydroamino Acids Hydrazides with Oxazolones. Antiradical Activity of Bishydrazides and Bisimidazole-4-ones, SPb, "Russ.J.Gen.Chem.", 95(7), 2025, 1791-1803. https://doi.org/10.1134/S1070363225602480
56. Manukyan A.L., Khachatryan A.S., Harutyunyan S.H., Simonyan R.M., Tumasyan N.V., Sukiasyan L.M., Sahakyan I.K., Babayan M.A., Hunanyan L.S., Babayan H.N., α2-adrenoblockers modulatory effect on the noise-mediated several biochemical and morpho-immuno-histochemical changes in the rat's blood plasma and tissues, "Immunologic Research", 73(1), 2025, 42. https://doi.org/10.1007/s12026-025-09594-w.
57. Margaryan R.E., Stepanyan G.V., Aghekyan A.A., Panosyan H.A., Arutyunyan S.A., Tsatinyan A.S., Grigoryan M.S., Mkryan G.G., Synthesis and Sympatholytic and Adrenomimetic Activities of Amino Amides and Amino Esters Based on 1-(1,3-Benzodioxol-5-yl)cyclopentane- and 4-(1,3-Benzodioxol-5-yl)tetrahydro-2H-pyran-4-carboxylic Acids, M., "Russ.J.Org.Chem.", 61(3), 2025, 403–411. https://doi.org/10.1134/S107042802560010X
58. Markosyan A.I., Vardapetyan S.M., Hovhannisyan A.M., Bekjanyan R.A., Hakopyan Kh.S., Gabrielyan S.H., Dangyan M.Yu., Arakelyan H.H., Arsenyan F.H., Sagyan A.S., Synthesis and Antitumor and Antibacterial Activity of Sulfanyl-Substituted 3-(m-tolyl)-3H-spiro[benzo[h]quinazoline-5,1′-Cycloheptane]-4(6H)-ones, "Pharm.Chem.J.", 59, 2025, pp. 529–533. https://doi.org/10.1007/s11094-025-03423-y
59. Martirosyan G.G., Hovhannisyan A.A., Harutyunyan L.S., Alexanyan A.G., Iretskii A.V. and Ford P.C., Nitrite Reduction with H2S/Thiol Mediated by Cobalt and Manganese Porphyrins in the Solid State., "Inorganic Chemistry", 64(1), 2025, pp. 741-750. https://doi.org/10.1021/acs.inorgchem.4c02733
60. Martirosyan G., Hovhannisyan A., Iretskii A., Ford P., Reduction of Iron Porphyrin Nitrate to the Iron Nitrosyl by H2S/Thiol. Studies in Sublimed Layers, "Chemical Communications", 61(7), 2025, 1419-1422. https://doi.org/10.1039/D4CC06229A
61. Martirosyan G., Hovhannisyan A., Harutyunyan L., Aghekyan H., Reactions of cobalt porphyrin nitrosyl with trimethylphosphine. Low temperature spectroscopic studies in the sublimed solids, "Polyhedron", 282, 2025, 117801. https://doi.org/10.1016/j.poly.2025.117801
62. Miraqyan N., Sukoyan A., Movsisyan T., Bichakhchyan L., Shahkhatuni A., Hakobyan R., Attaryan H., Heterogeneous Catalysis of Aza-Markovnikov Addition Reactions by Transition Metal Acetates Immobilized on

Poly(1-vinylazoles), “ChemistrySelect”, 10(41), 2025, e04021, https://doi.org/10.1002/slct.202504021
63. Mukherjee K., David Ayala B., Nikoghosyan H., Hakobyan R., Gevorgyan V., Light-induced transition-metal-catalysed hydrogen atom transfer in organic transformations, “Nature Catalysis”, 8(11), 2025, pp. 1146-1158. https://www.nature.com/articles/s41929-025-01431-5
64. Nersesyan A., Kundi M., Muradyan R., Wultsch G., Mišík M., Ferk F., Knasmueller S., Impact of cigarette smoking on genetic stability, cell division, and cytotoxicity in buccal cells of old and young women, “Mutagenesis”, XX, 2025, 1-8. https://doi.org/10.1093/mutage/geaf003
65. Pahutyan N., Gasparyan H., Sargsyan S., Melyan G., Shahinyan M., Navoyan Q., Gabrielyan I., Arajyan G., 1,4,6,7 - Convallaria majalis (Lily of the Valley): A review of its cardiac glycosides, medicinal applications, and safety profile, “Bioactive Compounds in Health and Disease”, 8(8), 2025, pp. 402–416. https://doi.org/10.31989/bchd.8i8.1737
66. Paronikyan R.G., Sargsyan R.Sh., Sarkissyan J.S., Avakyan G.G., Avakyan V.M., Sargsyan V.R., Margaryan A.V., Comparative efficacy evaluation various anticonvulsant drugs to restraint epileptiform states in rats, “Epilepsy and paroxysmal conditions”, 17(2), 2025, pp. 153-160. https://doi.org/10.17749/2077-8333/epi.par.con.2025.214
67. Petrosyan A.V., Shahkhatuni A.A., Davinyan A.M., Avetisyan K.S., Ghochikyan T.V., Samvelyan M.A., Nenajdenko V.G., Galstyan A.S., Thiol-Epoxy Click Chemistry: The Synthesis of Vicinal Amino Alcohols Containing a 1,2,4-Triazole Ring, “Chemistry”, 7(2), 2025, 53. https://doi.org/10.3390/chemistry7020053
68. Sakeyan A., Safaryan E., Harutyunyan A., CO_2 Absorption by Diamines and Alkanolamines, “Problems of Science and Education in The era of Digital Transformation”, 2025, pp. 379-390.
69. Sargsyan T., Stepanyan L., Panosyan H., Hakobyan H., Israyelyan M., Tsaturyan A., Hovhannisyan N., Vicidomini C., Mkrtchyan A., Saghyan A., Synthesis and Antifungal Activity of Fmoc-Protected 1,2,4-Triazolyl-α-Amino Acids and Their Dipeptides Against Aspergillus Species, “Biomolecules”, 15(1), 2025, 61. https://doi.org/10.3390/biom15010061
70. Sirakanyan S.N., Spinelli D., Geronikaki A., Kartsev V.G., Hakobyan E.K., Jughetsyan H.V., Yegoryan H.A., Hovakimyan A.A., A universal method for the synthesis of new unique pentacycle heterocyclic systems: pyrimido[2,1-f][1,2,4]triazines, “ChemistryOpen”, 14, 2025, e202400379. https://doi.org/10.1002/open.202400379
71. Sirakanyan S.N., Hakobyan E.K., Geronikaki A., Spinelli D., Petrou A., Kartsev V.G., Yegoryan H.A., Jughetsyan H.V., Manukyan M.E., Paronikyan R.G., Araqelyan T.A., Hovakimyan A.A., Synthesis and neurotropic activity of new 5-piperazino-pyrazolo[3,4-c]-2,7-naphthyridines and isoxazolo[5,4-c]-2,7-naphthyridines, “Pharmaceuticals”, 18, 2025, 597. https://doi.org/10.3390/ph18040597
72. Sukoyan A.H., Bichakhchyan L.A., Movsisyan T.G., Shakhatuni A.G., Hakobyan R.M., Attaryan O.S., Alkylation of 3(5)-methylpyrazole with propargyl bromide and study of thermal and catalytic polymerization of the products obtained, “ChemChemTech [Izv. Vyssh. Uchebn. Zaved. Khim. Khim. Tekhnol.]”, 68(4), 2025, pp. 91-99.
73. Strekalova T, Burova A, Gorlova A, Chaprov K, Khizeva A, Coelho JE, Svirin E, Novikova P, Ohanyan L, de Munter JJMP, Svirin, E., Novikova, P., Ohanyan L., de Munter J.J.M.P., Ayvazyan N., Lopes L.V., Umriukhin, A., Arajyan G., Steinbusch H.W., Bolus MPTP Injection in Aged Mice to Mimic Parkinson Disease: Effects of Low-Dose Antioxidant Treatment with Fullerene (C60) and Fullerenol (C60(OH)24), “Biomedicines”, 2025; 13:2425. https://doi.org/10.3390/biomedicines13102425
74. Topuzyan V.O., Agababyan A.G., Makichyan A.T., Hakobyan E.H., Galstyan L.Kh., Shahkhatuni A.A., Khachatryan G.A.,Khachatryan K.P., Shourelian S.R., Hovhannisyan A.A., One-pot synthesis of 5-arylidene-1-alkyl-4-imidazolones and study of their anticholinesterase and antiradical activity, SPb, “Russ.J.Gen.Chem.”, 95(1), 2025, 9-22. https://doi.org/10.1134/S1070363224612973
75. Yeganyan T.H., Shahkhatuni A.A., Davinyan A.M., Karapetyan H.A., Galstyan A.S., Synthesis of chiral pyrrolidine derivatives with promising pharmacological activity, “Chemistry of Heterocyclic Compounds”, 61(3-4), 2025, 136-154, https://doi.org/10.1007/s10593-025-03405-8

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան
Փոխտնօրեն՝ ե.գ.թ. Լ.Սահակյան
Գիտքարտուղար՝ ե.գ.թ. Հ.Շահինյան
Էլեկտրոնային փոստ՝ igs@sci.am
Կայքէջ՝ www.geology.am

Մասնագիտական խորհուրդ 054՝ «Երկրաբանություն»
Նախագահ՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան, գիտքարտուղար՝ ե.գ.թ. Լ.Սահակյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Սյունիքի հրաբխային բարձրավանդակի ուշ պլեյստոցեն-հոլոցենի հասակի մոնոգեն հրաբխականության ժայթքումների մագմատիկ օջախը, ըստ նոր ուսումնասիրությունների արդյունքների, գտնվում է երկրակեղևի միջին հատվածում՝ 30-33 կմ խորության վրա: Այս հասակի ժայթքումները կրել են պուլսացիոն բնույթ. մագմատիկ միջանկյալ օջախը բնութագրվել է մագմայի համեմատաբար փոքր ծավալներով, և յուրաքանչյուր նոր ժայթքման էպիզոդը կապված է խորքային օջախից դեպի միջանկյալ օջախ, ապա դեպի մակերես մագմայի նոր մասնաբաժնի թափանցմամբ (ղեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Աբովյանի մագնետիտ-ապատիտային հանքավայրի օրինակով ներկայացվել է հետկոլիզիոն հրաբխականության մետաղածնական դերը: Ցույց է տրվել, թե ինչպես է ուշ միոցենի հետկոլիզիոն հրաբխականությունը փոխազդել միջին միոցենի էվապորիտային ֆորմացիայի ապարների հետ՝ առաջացնելով մագնետիտ-ապատիտային երկաթի և հազվագյուտ հողային տարրերով հարստացված արդյունաբերական նշանակության հանքավայր (ղեկ.՝ ե.գ.թ. Ն.Նեկրիլով):

Պարամետրիկ հիդրոլոկատորի (էխոլոտ) միջոցով Սևանա լճի նստվածքներում՝ 27-28 մ խորություններում, երկու պրոֆիլներում հայտնաբերվել են 2-5 մ լայնությամբ, 0.4-1 մ հզորությամբ գմբեթաձև/սյունաձև մակրո-միկրոբիալիթներ, որոնք ձևավորվել են խզվածքի մոտ:

«Արևիք» ազգային պարկի տարածքում՝ մոտ 40 մ հզորությամբ կտրվածքի միջանկյալ հատվածում, հարուստ բրածո մնացորդներով շերտերը հերթափոխվում են հրաբխային շերտերով՝ հասակագրված 18.1–18.2 մլն տ.: Վերլուծությունները ցույց են տվել, որ նստվածքային շերտերը ձևավորվել են գետային, ափամերձ և ճահճային միջավայրերում: Լիգնիտի շերտերում հայտնաբերվել են 300-ից ավել բրածո մնացորդներ՝ ներառյալ ձկների (Cyprinidae) և երկկենցաղների (Latonia, Lissotriton) տեսակներ՝ վկայելով խոնավ և տաք կլիմայական պայմանների մասին (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սահակյան):

Կիրառելով ուղղակի եռաչափ սկանավորման անտենան՝ ստացվել է Ազատի ջրամբար մտնող հովիտներից մեկի եռաչափ մոդելը:

Իրականացվել են պալեոսեյսմաբանական հետազոտություններ Ոսկե Բլուր տեղամասում: Նախնական տվյալներով բացահայտվել է երկրաշարժի ազդեցությունը շինությունների, ինչպես նաև գրունտների վրա:

Սևանա լճի ավազանում առաջին անգամ իրականացվել են ստորջրյա գեոհնագիտական աշխատանքներ: Սոնարային ուսումնասիրությունով բացահայտվել է տիղմային նստվածքների տակ տարածվող մակերեսային խզվածքը (ղեկ.՝ ե.գ.դ. Ա.Ավագյան):

Տավուշի մարզի Ցլաջրի կտրվածքից հայտնաբերվել են ամոնիտներ, կորալներ, երկփեղկանիներ, բելեմնիտներ և խեցգետնի մնացորդներ: Բելեմնիտների վրա կատարված

իզոտոպային չափումները ($^{87}Sr/^{86}Sr$) ցույց են տվել, որ կտրվածքը կազմող նստվածքները ձևավորվել են ~165 մլն տարի առաջ, ինչը համընկնում է ամոնիտների հիման վրա ստացված կենսաշերտագրական տվյալների հետ: Առանձնահատուկ կարևորություն ունի բացառիկ լավ պահպանվածությամբ աչքի ընկնող խեցգետնի մնացորդների հայտնաբերումը, որոնք նույնականացվել են որպես *Eryma ventrosum* (Meyer, 1835): Սա Հայաստանի տարածքում յուրայի հասակի խեցգետնի առաջին հայտնաբերումն է, այն զգալիորեն ընդլայնում է այս տեսակի հնակենսաաշխարհագրական տարածումը (ղեկ.՝ ե.գ.թ. Վ.Սերոբյան):

Երախ լեռան Քաղցրաշենի վերին կավիճ-պալեոգեն հասակի կտրվածքում առաջին անգամ, ըստ ռադիոլարիաների (հայտնաբերվել է ավելի քան 60 տեսակ) նոր տվյալների, չի հաստատվում դրանց անընդհատությունը, իսկ վերին կավճի սիլիցիում կարբոնատային նստվածքներն ունեն կամպանյան հասակ (ղեկ.՝ ե.-հ.գ.թ. Ա.Գրիգորյան):

Ստացվել են նոր տվյալներ հյուսիսային Հայաստանի (Դեբեդ, Մարցիգետ գետերի հովիտներ) պալեոգենի մագմատիկ առաջացումների վերաբերյալ: Իզոտոպային U-Pb և Ar-Ar մեթոդներով հասակագրումները (47-41 մլն տարի) փաստում են մագմատիզմի դրսևորումները միջին էոցենում, որոնք բնորոշվում են գերակշռող կրաալկալային քիմիական կազմով, ինչը բացատրվում է այդ ժամանակահատվածում սուբդուկցիոն երկրադինամիկ իրավիճակով: Հայաստանի ծայր հյուսիսում՝ Ալավերդի-Ջիլիզա բնակավայրերի շրջանում, գրանիտոիդային ինտրուզիվ ապարներում առաջին անգամ (հայ-ֆրանս-բելգիական համագործակցությամբ) ստացվել են U-Pb՝ 157-152 մլն տարի հասակներ, որոնք փաստում են ընդարձակ ինտրուզիվ մագմատիզմի դերակատարումը Սոմխեթի սեգմենտում ուշ յուրայում (օքսֆորդ-քիմերիջ):

Արմավիրի (Հոկտեմբերյան) նստվածքային ավազանի կառուցվածքի ուսումնասիրության համատեքստում թվայնացվել և մշակվել են 3 հորատանցքի (Հոկտեմբերյան-1Պ, Բաղրավան-1Պ, Կարմիր-1Ո) տվյալները, կազմվել է լիթո-երկրաֆիզիկական մոդել: Սա թույլ է տվել վերականգնել ալիքների արագության բնութագրերը հորատանցքերում ըստ լիթոլոգիայի, և ձևափոխել տարածաշրջանի սեյսմիկ պրոֆիլները ժամանակային տիրույթից դեպի խորքային:

Շարունակվել են տարահասակ նստվածքային համալիրների կառուցվածքային-շերտագրական հետազոտությունները կենտրոնական Հայաստանում: Մասնավորապես Արարատի մարզի Արմաշի կտրվածքի պալեոզոյան համալիրում կոնկրետացվել է վերին դևոնի՝ վերին ֆամենի հարկի դիրքը ծանծաղ ջրային տերիգեն-կարբոնատային նստվածքներում տրիլոբիտների նոր հասակագրման հիման վրա (ղեկ.՝ ե.գ.թ. Ղ.Գալոյան):

Ամփոփվել են «թարթող» հաստատուն հոսանքի իմպուլսով հարուցված բևեռացման երկրաէլեկտրահետախուզման եղանակի կիրառման մեթոդական և տեխնիկական առավելությունները: Մեթոդը հիմնված է գրգռող երկարատև հաստատուն հոսանքի ուղղանկյուն իմպուլսի կարճատև ընդհատումների ընթացքում երկրորդական էլեկտրական դաշտի չափման վրա, ինչը թույլ է տալիս օպտիմալացնել ՀԲ չափումները և հուսալիորեն որոշել երկրաէլեկտրական միջավայրի բևեռացման բնութագրերը՝ բարձրացնելով հետախուզական աշխատանքների արդյունավետությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Մաթևոսյան):

Ըստ Ալավերդու, Սոթքի, Մեղրաձորի հանքային դաշտերի և Մարմարիկի խզվածքային գոտու սահմաններում հիդրոքիմիական մոնիթորինգային հետազոտությունների՝ հանքավայրային ջրերը հիմնականում բնութագրվել են սուլֆատ-իոնի գերակայությամբ և բարձր հանքայնացմամբ: Խմելու քաղցրահամ ջրերում չեն գրանցվել կազմի շեղումներ՝ պայմանավորված հանքային դաշտի ազդեցությամբ: Դուրս են բերվել նմուշարկված բոլոր ջրերի հիդրոքիմիական կազմերի բանաձևերը, ըստ որոնց նրանք դասակարգվել են ըստ

հիդրոքիմիական տիպերի: Խմելու քաղցրահամ և մակերևութային հոսքի ջրերը դասակարգվել են ըստ ՀՀ-ում ընդունված համապատասխան նորմերի և որոշվել է օգտագործման համար նրանց պիտանելիության աստիճանը (ղեկ.՝ ե.գ.թ. Հ.Շահինյան):

Պղինձ և այլ մետաղներ պարունակող էլեկտրոնային թափոնների համար իրականացվել է կենսատարալվացում պղինձ, ցինկ և ալյումինում օքսիդացնող բակտերիաների կուլտուրաների և դրանց հիման վրա ստացած խառնուրդների միջոցով (հիմքում ունենալով պղնձի խտանյութերի տարալվացման նախկինում մեր հաջողված փորձը):

Երկրաքիմիական և պետրոգրաֆիական հետազոտությունները, իրականացված Արարատյան դաշտի և Սևանի ավազանի հնավայրերի խեցեղենի համար, ցույց են տվել, որ ուրարտական կերամիկան արտադրվել է տարբեր երկրաբանական միջավայրերում ձևավորված կավային հումքի օգտագործմամբ, որոնք իրենց երկրաքիմիական հատկանիշներով իրարից խիստ տարբերվում են: Որոշ նմուշներում առկա են մետաղների, մասնավորապես պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, սելենի և թելուրի անոմալ բարձր պարունակություններ, ինչը հուշում է խեցեղենում հիդրոթերմալ ծագման կավերի կիրառության մասին (ղեկ.՝ ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Քաջարանի հանքային դաշտի երկրաբանակառուցվածքային և դայկաների նախկինում կազմված քարտեզների (Քարամյան և ուր., 1982, Տայան, 1984, Տայան և ուր., 2002) համադրմամբ, ինչպես նաև նոր դաշտային քարտեզագրման տվյալներով կազմվել է թարմացված երկրաբանակառուցվածքային քարտեզ, որը ներառում է նաև ինտրուզիաների և դայկաների նոր (U-Pb մեթոդով թվագրված) հասակային տվյալներ (Moritz et al., 2016, Rezeau et al., 2016, 2019): Նոր երկրաբանակառուցվածքային քարտեզն արտացոլում է հանքային դաշտի տեկտոնական գոտիների (Բաղաջուրի, Լեռնաձորի, Մեդվեժիայի, Հյուսիսային Ողջիի, Հարավային Ողջիի և Տաշտունի) և տարբեր հասակի ու կազմության դայկաների տարածական և ժամանակային փոխհարաբերությունները (ղեկ.՝ ե.գ.թ. Ս.Հովակիմյան):

Դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ ցեմենտի կլինկերին ցեոլիթային տուֆերի 5–20% հավելումը 28 օրերի ընթացքում ցեմենտաքարի ամրությունը բարձրացնում է 21–24%-ով, ինչը պայմանավորված է ցեոլիթի պոզոլանային հատկություններով: Կլինկերի հիդրատացման ժամանակ ցեոլիթը վերափոխում է կալցիումի հիդրոքսիդը կալցիումի հիդրոսիլիկատի: Արդյունքում մոտ 40%-ով կանխվում է կալցիումի հիդրոքսիդի լվացումը ցեմենտաքարից՝ ապահովելով ցեմենտաքարի ամրության մեծացումը: Պարզվել է նաև, որ ցեոլիթային տուֆերի հավելումը մեծացնում է ցեմենտի խտությունն ու կրճատում կապակցման տևողությունը (ղեկ.՝ ե.գ.թ. Շ.Խաչատրյան):

Երկրաֆիզիկական, սեյսմոլոգիական և գեոմոնիթորինգային աշխատանքների արդյունքում ստացվել են նոր տվյալներ ՀՀ տարածքի սեյսմիկ և ինժեներաերկրաբանական կառուցվածքի, վտանգավոր գործընթացների տարածական դրսևորումների վերաբերյալ: Տվյալների վերլուծությունը հնարավորություն է տվել բարձրացնել սեյսմիկ դիտարկումների օպերատիվությունն ու ճշգրտությունը, կատարել տարածաշրջանային սեյսմիկ գործընթացների ավելի հուսալի բնութագրում և ապահովել ՀՀ սեյսմիկ մոնիթորինգի համակարգի ինտեգրումը միջազգային տվյալների փոխանակման հարթակներին: Գործող 29 սեյսմիկ կայաններից 8-ի տվյալների ուղիղ փոխանցումը IRIS միջազգային սեյսմոլոգիական կենտրոն ապահովել է միջազգային տվյալների փոխանակման գործընթացում ՀՀ սեյսմիկ ցանցի լիարժեք ինտեգրումը: SeisComP համակարգի կիրառմամբ իրականացվել է ՀՀ և հարակից տարածքներում գրանցված երկրաշարժերի ավտոմատ օպերատիվ տեղորոշում (ղեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Ուսումնասիրվել են 2022-24թթ. տեղի ունեցած մի խումբ երկրաշարժերի օջախի մեխանիզմները՝ կիրառելով Հայկական սեյսմիկ ցանցերի սեյսմիկ կայաններում գրանցված

թվային ալիքային պատկերները: Գրանցված սեյսմիկ պարսերի մանրամասն վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք հիմնականում հրաբխատեկտոնական (VT) իրադարձություններ են, որոնք բնորոշվում են կայուն սպեկտրալ հատկանիշներով և ալիքաձևերի նմանությամբ (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սարգսյան):

Երկրաշարժերի P և S ալիքների առաջին մուտքերի տվյալների լոկալ տոմոգրաֆիկ վերլուծության արդյունքում ստացվել է Հայաստանի և հարակից տարածքների երկրակեղևի և վերին մանթիայի (մինչև ~40 կմ) սեյսմիկ արագությունների տարածական մոդել, որը թույլ է տվել բացահայտել հրաբխային և տեկտոնական կառույցների խորքային կառուցվածքային անհամասեռությունները և դրանց կապը տարածաշրջանի սեյսմոտեկտոնիկ զարգացման հետ (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սարգսյան):

Սեյսմիկ ալիքների ազիմուտային անիզոտրոպիայի (shear-wave splitting) վերլուծության արդյունքում որոշվել են Հայկական և Արևելյան Անատոլիական բարձրավանդակների վերին մանթիայի դեֆորմացիոն դաշտի հիմնական ուղղվածությունները, որոնք վկայում են աստենոսֆերային հոսքերի և լիթոսֆերային դելամինացիայի գործընթացների համակցված ազդեցության մասին տարածաշրջանի խորքային գեոդինամիկ զարգացման վրա (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սարգսյան):

Ուժեղ շարժման կայանների տվյալների հիման վրա առաջին անգամ իրականացվել և վերլուծվել են Վանաձորում 2025թ. մարտի 8-ին գրանցված Mw 4.8 երկրաշարժի գրունտի առավելագույն արագացումները (PGA), որոնց տարածական անհամասեռ բաշխումը պայմանավորված է տեղային գրունտային պայմանների և Փամբակ–Սևան–Սյունիք խզվածքային համակարգի (PSSF) կառուցվածքային ազդեցության համակցված ազդեցությամբ (ղեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Վայոց Ձորի Կարմիր քարանձավի 12 սմ ստալագմիտի տարբեր շերտերից վերցված 18 նմուշների $\delta^{13}C$ և $\delta^{18}O$ իզոտոպային տվյալները ցույց են տվել տատանումներ՝ մատնանշելով ջերմաստիճանի, տեղումների և հողի CO_2-ի դինամիկայի փոփոխություններ ռադիոածխածնային մեթոդով թվագրված >47,000 BP և 36,300 ± 700 BP (մինչ այժմ) միջակայքում: Ստալագմիտի շեղված առանցքը, ինչպես նաև միկրոսկոպիկ և Ռաման սպեկտրոսկոպիկ ուսումնասիրություններով արձանագրված արգոնիտի և կալցիտի հերթագայվող շերտերը նույնպես վկայում են միջավայրային պայմանների փոփոխության մասին (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սահակյան):

Իրականացված պալեոսեյսմաբանական հետազոտությունների արդյունքում Գուգարք գյուղից մոտ 3կմ հարավ-արևելք 2 խրամուղիներում հայտնաբերվել են վերջին ուժեղ երկրաշարժի շերտագրական խախտումներ: Հետազոտությունների ընթացքում կատարվել է պոտենցիալ վտանգավոր սողանքային տեղամասերի քարտեզագրում: Վանաձորից հյուսիս հայտնաբերվել է նոր խոշոր սողանքային մարմին, որի զանգվածները տեղաշարժվել են հովտով, որի ստորին հատվածում գտնվում է Վանաձորի հանգստյան համալիրը (ղեկ.՝ ե.գ.դ. Ա.Ավագյան):

Ուսումնասիրվել են ուշ դևոնի 2 հարկերի՝ ֆրանի և ֆամենի նստվածքային հաջորդականությունները և դրանցից գտնված բրածոները Հայաստանում, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանում, առաջին անգամ հայտնաբերվել են միոսպորների, ֆիտոպլանկտոնների և խիտինոզոաների համալիրներ: Այս նյութի հիման վրա իրականաց-վել է ուսումնասիրված կտրվածքների կենսաշերտագրական առանձնահատկությունների վերլուծություն և հասակագրում: Ստացված տվյալները համեմատվել են նույնատիպ

համալիրների հետ, որոնք հայտնի են Գոնդվանայի և Լավրասիայի տարբեր շրջաններում, ինչը հնարավորություն է տվել վերականգնել ուսումնասիրվող նստվածքակուտակման ավազանի պալեոմիջավայրը (ղեկ.՝ ե.գ.թ. Վ.Սերոբյան):

Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հիդրոթերմալ փոփոխված ապարների միներալոգիական անալիզների հիման վրա կազմվել է այդ փոփոխությունների քարտեզը, որտեղ հստակ տարանջատվում է հանքայնացման 2 տիպ՝ պորֆիրային և էպիթերմալ: Ուշ օլիգոցենի պորֆիրային հանքայնացումը (27.3-26.4 մլն. տ.) բնութագրվում է կալիումական մերձհանքային փոփոխություններով (հիմնականում բիոտիտիզացիայով), որոնք ընդգրկում են հանքավայրի կենտրոնական, հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածները: Վաղ միոցենի էպիթերմալ հանքայնացումը (22.2–20.5 մլն տ.) տարածված է հանքավայրի հյուսիս-արևելյան մասում՝ 6-րդ հանքային գոտու երկայնքով, ինչպես նաև արևելյան և հարավ-արևելյան հատվածներում (Շլորկուտի տեղամասում)՝ ներկայացված բարձր-սուլֆիդային հանքայնացմանը բնորոշ ալունիտ, դիկիտ և պիրոֆիլիտ միներալներով:

Աբովյանի Կապուտանի երկաթ-ապատիտային հանքավայրի ապատիտների և մոնացիտների երկրաժամանակագրական հետազոտությունները ցույց են տվել, որ հանքավայրը ձևավորվել է երկարատև և բազմափուլ մագմատիկ–հիդրոթերմալ պրոցեսների արդյունքում, որոնք տևել են ~600 հազար տարի: Այդ ընթացքում առաջնային մագնետիտ–ապատիտ հանքանյութերը ձևավորվել են 5.5–5.2 մլն տ., իսկ հիդրոթերմալ ակտիվությունը շարունակվել է մինչև ~4.9 մլն տ.: Ստացված արդյունքները կարևոր են Հարավ Հայկական Բլոկի ուշ միոցենի հետ-կոլիզիոն մետաղածնության ժամանա-կագրության և բնույթի պարզաբանման համար:

Հայաստանի էպիթերմալ Au-բազմամետաղային հանքավայրերում թելուրի բաշխվածության հետազոտությունները ցույց են տվել, որ մեզոզոյան կղզաղեղային գոտու հանքավայրերում թելուրի հարստացումը կապված է բարձր-կալիումային կալկ-ալկալային մագմատիկ փուլերի հետ, իսկ Հարավային Հայկական Բլոկի կայնոզոյան հանքավայրերում՝ մետասոմատիզացված վերին մանթիայի մասնակի հալումից առաջացած ալկալային և շոշոնիտային մագմատիզմով (ղեկ.՝ ե.գ.թ. Ս.Հովակիմյան):

Հայաստանի VMS (կոլչեդանային) հանքավայրերում կրիտիկական մետաղների (Se, Te, Ge, Ga, Cd, In, Bi, Tl) բաշխվածության վերլուծությունը ցույց է տվել, որ միջին յուրայի հիմնայինից միջին կազմի բազալտ–անդեզիտային լավաների և տուֆոբրեկչաների փուլում ձևավորված պիրիտային (կոլչեդանային) հանքայնացումները համեմատաբար աղքատ են նշված տարրերով, մինչդեռ միջին–վերին յուրայի միջինից թթվային կազմի բարձր դիֆերենցված մագմատիզմը (քվարց-պլագիոպորֆիրներ, ալբիտոֆիրներ) և դրանց սուբվուլկանիկ մարմինները ձևավորել են բազմափուլային հիդրոթերմալ համակարգեր (օր.՝ Ախթալայի և Կապանի), որոնց բազմամետաղային փուլերի հետ կապված է նշված տարրերի հիմնական հարստացումը՝ ներկայացված Te–Se–Bi–Ag թելուրիդներով և Cd–Ga–Ge-In պարունակող սֆալերիտներով (ղեկ.՝ ե.գ.թ. Ս.Հովակիմյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Тадевосян А.В., Даниелян Н.С., Аперян А.Ж., Джалоян Л.А., Разработка веб платформы для бронирования и управления химическими веществами. Ер., “Вестник НПУА”, Природоохранные технологии, N 1, 2025, с.35-45. https://doi.org/10.53297/18293379-2025.1-35
2. Матевосян А.К., К вопросу систематизации данных химического состава минеральных вод Армении. Ер., “ДНАН Армении”, в.125, N 1 2025, с.30-43. Doi:10.54503/0321-1339-2025.125.1-30.

3. Мкртчян С.В., Сааков А.С., Арустамян Ж.М., Экстракционно- абсорбциометрическое определение меди родамином в природных и сточных водах, Ер., “Вестник НПУА”. Металлургия, материало-ведение, недропользование, N 1, 2025, с.17-25.
4. Хачатрян Ш., Кегеян Е., Мкртчян Г., Роль цеолитового туфа Армении в повышении качества портланд цемента, Ер., Ученые записки ЕГУ, 59 (2), 2025, с.100-108. DOI:10.46991/PYSUC.2025.59.2.100
5. Хачиян Э.Е., Левонян Л.А., Эгнатосян Н.М., Прогнозирование синтетических сейсмограмм и акселерограмм для неоднородных оснований, “Вопросы инженерной сейсмологии”, т. 52, N 3, 2025, с.101–122.
6. Avagyan A, Ritz J-F, Avagyan S., Alaverdyan G., Arzhannikova A., Arzhannikov S. Sahakyan L., Armenyan T., Hakimov F., Badalyan R. Age, kinematics, and magnitude of the last surface rupturing event along the central Pambak-Sevan-Syunik fault (Armenia): Probable implications for landslides and lake tsunamis. Journal of Asian Earth Sciences 288(76), 2025, 106603 https://doi.org/10.1016/j.jseaes.2025.106603
7. Berezhnev Y., Belovezhets N.. Shapiro N.M., Abramenkov S., Koulakov I. Tracking changes in the tremor sources associated with a Gorely Volcano degassing episode in 2013. Journal of Volcanology and Geothermal Research, v.468, 2025, 108452. https://doi.org/10.1016/j.jvolgeores.2025.108452.
8. Carrasco R.M., Fernandez-Lozano J., Karampaglidis T., Soteres R.L., Braucher R., Gairoard S., Petrosyan A., Nahapetyan S., Arakelyan D., Pedraza J., Gasparyan B., Aumaître G., Keddadouche K., Zaidi F. Geomorphology, first 36Cl datings and chrono-evolutionary model of Mount Aragats paleoglaciers (Armenia). Quaternary Science Reviews 361, 2025, 109404. https://doi.org/10.1016/j.quascirev.2025.109404
9. Cromartie A., Jonge De C., Ménot G, Robles M., Dugerdil L., Peyron O., Rodrigo-Gámiz M., Jon Camuera J., Ramos-Roman M.J, Jiménez-Moreno G., Colombié C., Sahakyan L., Joannin S. Utilizing Probability Estimates from Machine Learning and Pollen to Understand the Depositional Influences on Branched GDGT in Wetlands, Peatlands, and Lakes. Biogeosciences, 22, 2025, pp.7687–7708, https://doi.org/10.5194/bg-22-7687-2025
10. Crônier C., Serobyan V., Tsatryan M., Hambardzumyan T., Harutyunyan L., Danelian T., Witt C., Grigoryan A., Galoyan G. A new species of Omegops (phacopid trilobite) from the Famennian of Armenia and its implications for biostratigraphy and phylogeny. Earth and Environmental Science Transactions of the Royal Society of Edinburgh 2025, 105498, doi.org/10.1016/j.revpalbo.2025.105498
11. Danelian T., Serobyan V., Hairapetian V., Tsatryan M., Khachatryan S., Yeghiazaryan M., Avagyan N., Hambardzumyan T., Kirakosyan G., Harutyunyan L., Lokteva V., Gasparyan A., Grigoryan A. Recent progress in the bio- and chronostratigraphic understanding of the upper Frasnian (Upper Devonian) sedimentary sequences in Armenia. Reports of the National Academy of Sciences of Armenia, 125(2), 2025, pp.109–119. https://doi.org/10.54503/0321-1339-2024.125.2-109
12. Guillam E., Hambardzumyan T. Replacement names for homonym species of two Palaeozoic ostracods. Zootaxa, 5692 (3), 2025, pp.594-596, https://doi.org/10.11646/zootaxa.5692.3.11
13. Horacek M., Zakharov Y., Krystyn L., Baud A., Grigoryan A. Comment on “Uppermost Permian to Lower Triassic conodont biostratigraphy and carbon isotope records from Southern Armenia” by Chen Han et al. Palaeogeography, Palaeoclimatology, Palaeoecology, 668, 2025, 112912. https://doi.org/10.1016/j.palaeo.2025.112912
14. Iskra M., Sobczak M., Krueger M., Simonyan H., Karapetyan I., Pahlevamyan K., Poghosyan S., Okrajek P., Hovhannisyan A. A pilot archaeometric analysis of the Middle Iron age pottery from Argištiḫinili. Polish Archaeology in the Mediterranean v.34, N 1, 123-150.
15. Karamyan Hasmik, Avagyan Mariam, Shainova Roza, Sahakyan Anush, Baghdagyulyan Armine, Tepanosyan Gevorg, Poghosyan Zhenyaa, Aperyan Araksya, Melikyan Yeghvard, Badalyan Maria. Combined Effwct of Basalt Fibers and Bentonite Clay on Complex Mortar Properties. Civil Engineering Journal, v.11, N 12, December, 2025, pp.5006-5018, E-ISSN: 2476-3055; ISSN: 2676-6957. http://dx.doi.org/10.28991/CEJ-2025-011-12-05
16. Melik-Adamyan H., Babayan T., Arakelyan Y., Gharibjanyan S., Khachanov Ch. Classification of natural monuments of Armenia. Journal of Law and Sustainable Development, 13(6), 2025, e04487. https://doi.org/10.55908/sdgs.v13i6.4487
17. Melik-Adamyan H., Babayan T., Tamazyan E., Arakelyan Y., Khachanov Ch. Natural biodiversity of Armenia and tourism development prospects. International journal of professional business review, 10(10), 2025, e05692. https://doi.org/10.26668/businessreview/2025.v10i10.5692

18. Hovakimyan S., Nekrylov N., Meliksetian Kh., Navasardyan G., Hambaryan K., Bergemann Ch., Gerdes A., Veress E., Vardanyan A., Korneeva A., Kamenetsky V., Chiaradia M., Moritz R. Geochemistry, Isotopic Constraints, and REE Enrichment of the Late Miocene Abovyan Iron Oxide- Apatite Deposit, Armenia. In: Proceedings of the 18th SGA Biennial Meeting: Mineral Resources for Our Ever-Changing World, v. 3, 2025, pp.888-891.
19. Karamyan H ., Avagyan M ., Shainova R ., Sahakyan A ., Baghdagyulyan A ., Tepanosyan G ., Poghosyan Zh., Aperyan A., Melikyan Y., Badalyan M. Combined effect of basaltt fibers and bentonite clay on complex mortar properties. Civil Engineering Journal, v.11, N 12, 2025, www.CivileJournal.org E-ISSN: 2476-3055; ISSN: 2676-6957
20. Khachatryan S., Cascales-Miñana B., Danelian T., Breuer P., Steemans P., Grigoryan A., Gabrielyan I., Hairapetian V., Regnier S., Kroeck D.M., Serobyan V. First palynological evidence from the Upper Devonian of Armenia (northern Gondwanan margin): biostratigraphic implications. Palaeoworld. 34(3), 2025, 100879. https://doi.org/10.1016/j.palwor.2024.09.003
21. Khachiyan E.Y. On the relationships between the main parameters of an earthquake and its actual consequences on the Earth's surface the magnitude and seismic moment of earthquake, SPG, USA, Earth Sciences v. 14, N 1, 2025, pp.33-48. https://doi.org/10.11648/j.earth.20251401.13
22. Koulakov I., Sargsyan L., Levonyan A., Sahakyan E., Gevorgyan M., Meliksetian K. Magmatic and Tectonic Structures in the Crust Beneath Armenia and Surrounding Regions of Lesser Caucasus Inferred From Body-Wave Earthquake Tomography. Geochem Geophys Geosyst 27, 2025, e2025GC012592., https://doi.org/10.1029/2025GC012592
23. Lokteva V., Kirakosyan G., Camina S.C., De Backer T., Grigoryan A., Danelian T., Serobyan V. Chitinozoans from the upper Frasnian (Upper Devonian) of Armenia: biostratigraphical and palaeobiogeographical implications. Palynology, 2025, https://doi.org/10.1080/01916122.2025.2537704
24. Navasardyan G., Meliksetian Kh., Savov I.P., Gevorgyan H., Bangoyan M., Galstyan A., Grigoryan E. Volcanic Geoheritage and Geotouristic Potential of the Gegham Monogenetic Volcanic Upland (Armenia). Geoheritage, 17, 146, 2025. https://doi.org/10.1007/s12371-025-01170-w
25. Nekrylov N., Hovakimyan S., Meliksetian K.B., Veress E., Bergemann C.A., Hambaryan K., Chiaradia M., Vardanyan A., Navasardyan G., Korneeva A., Kamenetsky V.S., Moritz R. The role of evaporite in iron oxide–apatite ore deposit formation: Constraints of the late Miocene Abovyan deposit, Armenia. Lithos 508–509, 2025, 108078. https://doi.org/10.1016/j.lithos.2025.108078
26. Sahakyan L., Aymon B. Further comments on “Uppermost Permian to Lower Triassic conodont biostratigraphy and carbon isotope records from Southern Armenia,” by Han et al. (Palaeogeography, Palaeoclimatology Palaeoecology, 667 (2025) 112,870). Permophiles 79, 2025, pp. 35-36.
27. Sahakyan L., Colombié C., Sukiasyan A., Hambaryan L., Grigoryan T., Haberzettl T., Kasper T., Stepanyan Z., Mkrtchyan S., Hovakimyan H., Joannin S., Avagyan A. Holocene freshwater microbialites of Lake Sevan (Armenia). Journal of Great Lakes Research, 51(5), 2025, 102647. DOI: 10.1016/j.jglr.2025.102647
28. Serobyan V., Danelian T., Grigoryan A. The Upper Devonian sequence of the Noravank and Ertych geosites in Armenia: stratigraphy and geotouristic potential. 17th International Congress of the Geological Society of Greece, Mytilene (Greece), Bulletin of the Geological Society of Greece, Special Publication, 2025, pp.1337–1341.
29. Serobyan V., Metodiev L., Galoyan Gh., Kirakosyan G., Savov I. New record of Eryma (Crustacea, Decapoda) from the Middle Jurassic (Bathonian) of NE Armenia. Rev. Bulg. Geol. Soc., 86, 3, 2025 pp. 25–29, https://doi.org/10.52215/rev.bgs.2025.86.3.25
30. Shahinyan H.V., Meliksetian Kh.B., Zakaryan Sh.S., Gyulnazaryan Sh.A., Grigoryan E.S., Sahakyan N.A. Hydrochemistry of the waters circulating in the crater, eastern and southern slope of Aragats volcano. Proceedings of the YSU C: Geological and geographical sciences. V. 59, N3 (267), 2025, pp.611-619. https//doi.org/10.46991/PYSUC.2025.59.3.611
31. Vainer Sh., Brittingham A., Karampaglidis Th., Gasparyan B., Petrosyan A., Haydosyan H., Arakelyan D., Kiro Y., Goldsmith Y., Malinsky-Buller A. The genesis and environmental context of hypogene-sourced terrestrial carbonates of the middle Pleistocene in Vedi, Ararat Depression. Quaternary Science Reviews 369, 2025, 109596. https://doi.org/10.1016/j.quascirev.2025.109596
32. Tong J.-H., Tseng T.-L., Lin P.-Y. P., Meliksetian K., Chang S.-F., Huang B.-S., Sahakyan E., Gevorgyan M., Sargsyan L. Interaction between layered mantle flow and progressively thinned lithosphere beneath the

Armenia Volcanic Highland: Evidence from seismic azimuthal anisotropy. Earth and Planetary Science Letters, 671, 2025, 119641. https://doi.org/10.1016/j.epsl.2025.119641
33. Tsatryan M., Serobyan V., Grigoryan A., Avagyan N., Danelian T., Hairapetian V. Upper Frasnian conodont biostratigraphy of the Noravank section (Central Armenia). Revue de Micropaléontologie, 88, 2025, 100845. https://doi.org/10.1016/j.revmic.2025.100845
34. Vinn O., Hambardzumyan T., Temereva E., Grigoryan A., Tsatryan M., Harutyunyan L., Asatryan K., Serobyan V. . Fossilized soft tissues in tentaculitids from the Upper Devonian of Armenia: Towards solving the mystery of phylogenetic affinities. Palaeoworld 34, 2025, 100888 https://doi.org/10.1016/j.palwor.2024.10.004
35. Vinn O., Hambardzumyan T., Wilson M., Serobyan V. Palaeobiological and phylogenetic implications of preserved muscle scars in Devonian tentaculitids from Armenia. Historical Biology, 37(12), 2025, pp.2612–2620. https://doi.org/10.1080/08912963.2025.2458115
36. Yeghiazaryan M., Kroeck D., Danelian T., Grigoryan A., Regnier S., Serobyan V. Discovery of acritarchs and prasinophytes from the Upper Devonian of Armenia: biostratigraphic and palaeobiogeographic implications. Palynology, 49, 2025, pp.1–14 https://doi.org/10.1080/01916122.2024.2445040

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Կարապետյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Գրիգորյան
Էլեկտրոնային փոստ՝ iges@sci.am
Կայքէջ՝ www.iges.am

Մասնագիտական խորհուրդ 040՝ «Երկրաֆիզիկա»
Նախագահ՝ թղթ. անդ. Ս.Հովհաննիսյան, գիտքարտուղար՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել է Հայաստանի տարածքում և հարակից շրջաններում 2005-2024թթ. տեղի ունեցած M≥5.5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերի օջախների կինեմատիկ և դինամիկ պարամետրերի քանակական գնահատում: Երկրաշարժերի օջախների մեխանիզմների լուծումների և սեյսմիկ մոմենտի (M_0) թենզորային բաղադրիչների արժեքների հիման վրա որոշվել են տվյալ օջախում գործող սեյսմատեկտոնական տեղաշարժերի տիպերը և նրանց կապը սեյսմասկտիվ խորքային բեկվածքների կառուցվածքների հետ: Սեյսմաբանական և երկրաբանատեկտոնական պայմանների համալիր վերլուծությունների հիման վրա մշակվել են այդ երկրաշարժների օջախների եռաչափ երկրադինամիկ մոդելները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Է.Գյոդակյան):

Բացահայտվել է, որ Հյուսիսային Հայաստանի և Ջավախքի հրաբխային լեռնաշխարհի տարածքը Կովկասյան տարածաշրջանի տարածաէներգետիկ դասակարգման երրորդ միավորն է: Սեյսմիկ ռեժիմի քանակական պարամետրերի ընթացիկ արժեքների տարածաժամանակային շարքերի համադրական վերլուծության արդյունքում մերձմիջօրեական ուղղությամբ ձգվող Կեչուտի բեկվածքի դինամիկ ազդեցության գոտում տարանջատվել են լոկալ լարումների կուտակման և լիցքաթափման անցումային տիրույթներ (ղեկ.՝ Բ.Սահակյան):

Բացահայտվել են Կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի (M≥5.5) հետցնցումների տարածաժամանակային բաշխման հիմական օրինաչափությունները և բնութագրական առանձնահատկություններն օջախային գոտու երկրաբանական միջավայրի տրոհման կինետիկ տեսության տեսանկյունից: Իրականացվել է այդ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների տարածա-ժամանակային չափորոշիչների, օջախի մեխանիզմների և երկրաբանա-տեկտոնական պայմանների համադրական վերլուծություն, որի հիման վրա տարանջատվել են նմանատիպ հետցնցումային պրոցեսներով դրսևորվող օջախային գոտիներ (ղեկ.՝ Մ.Մկրտչյան):

Սեյսմիկ ալիքային պատկերների մանրամասն վերլուծության արդյունքում բացահայտվել է հրաբխատեկտոնական և տեկտոնական երկրաշարժերի ալիքային պատկերների բնույթը (ղեկ.՝ Ռ. Կարապետյան):

Մշակվել է սեյսմիկ վտանգի գնահատման նոր մոտեցում, որը թույլ է տալիս գնահատել տատանումների հակազդման սպեկտորի /SR/ արժեքները հաճախությունների տրված արժեքների դեպքում (Հայաստանի Հանրապետության տարածքի օրինակով) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Գրիգորյան):

Շենքում իրականացվել են միկրոսեյսմերի չափումներ, որոնք վերլուծվել են Նակամուրայի (HVSR) մեթոդով: Ստացված դինամիկ պարամետրերի հիման վրա հաշվարկվել են խոցելիության գործակիցները: Հայտնաբերվել են կոշտության զգալի տարբերություններ հարկերում և առանձին լոկալ գոտիներում, որոշ հատվածներում դիտվել է կոշտության նվազում: Խոցելիության ինդեքսները մատնանշել են շենքի առավել սեյսմավտանգ գոտիները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Հ.Հայրապետյան):

Ըստ ուժեղ երկրաշարժերի հետցնցումների գրանցումների հետահայաց վերլուծությունների՝ որոշ կոդաներում նկատվել են մեծ պարբերությամբ բաբախումներ որոշակի հաճախությամբ և ամպլիտուդով: Պարզվել է, որ տարբեր ինժեներաերկրաբանական պայմաններում տեղակայված ժամանակավոր դիտակայանների կողմից միևնույն սեյսմիկ գրանցումների միջև որևէ օրինաչափություն չի դիտվել: Գրանցված գերակշռող պարբերությունների արժեքները գերազանցել են գրունտների համար ընդունված պարբերությունների արժեքները մեկ- երկու կարգով (ղեկ.՝ ե.գ.թ. Գ.Մկրտչյան):

Մագնիսական դիտակայանների համաշխարհային ցանցի ամփոփ տվյալների վերլուծության հիման վրա հետազոտվել են Երկրի մագնիսական դաշտում «ջերք» կոչվող կարճատև ու կտրուկ փոփոխությունների համալիր տարածաժամանակային դրսևորման առանձնահատկությունները՝ օգտագործելով գծային ռեգրեսիայի, վիճակագրական վերլուծության և տարածական սֆերիկ-հարմոնիկ մոդելավորման գործիքակազմերը: Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ գեոդինամոյի հիմնական ցիկլի բարձր-հաճախային տիրույթի դարային վարիացիաները ձևավորվում են տարածա-ժամանակային երևակման առումով ստոքաստիկ բնույթ ցուցաբերող ջերքերի վերադրմամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սիմոնյան):

Երկրամագնիսական դաշտի դարային վարիացիաների հետազոտումն այլընտրանքային՝ Ֆուրյե վերլուծության մեթոդով, ենթադրելով դարային վարիացիաների պարբերական բնույթը, ցույց է տվել հավանականային մեթոդի հնարավորությունները և իրավացիությունը նկարագրելու համար վարիացիաների դիտվող արժեքները (ղեկ.՝ Տ.Մեծոյան):

Ամփոփվել են Հայաստանի հյուսիսային տարածքում գրանցված երկրամագնիսական դաշտի դարային քայլի լոկալ անոմալիաների ուսումնասիրություններն ըստ մագնիսական գրանցումների կայանների տվյալների: Տարածքին բնորոշ անոմալ մագնիսական դաշտի, տեղակայված ապարների էլեկտրական ու մագնիսական հատկությունների բնութագրական

արժեքների համալիր և տարածքի երկրաբանատեկտոնական կառուցվածքի և սեյսմիկ ակտիվության հետազոտման արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ առանձնացված անոմալիաները պայմանավորված են երկրակեղևում տեկտոնական լարումների դաշտի փոփոխություններով, որոնք երկրարմագնիսական դաշտի վարիացիաներում իրենց արտացոլումն են գտնում շնորհիվ պիեզոմագնիսական երևույթի (ղեկ՝ Մ.Օհանյան):

Պտտական շարժման հաշվառմամբ հոդակապորեն ամրակցված առաձգական ձողի հարկադրական լայնական տատանումների հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել են բաբախման բնույթի նոր առաձգական տատանումներ և նոր ռեզոնանսային հաճախականություններ: Ձողի պտտական շարժման վրա եզրային պայմանների ազդեցության գնահատման միջոցով հայտնաբերվել է ձողի լայնական հատույթ, որտեղ առաձգական տատանումներն ընթացել են առանց բաբախումների (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Մկրտչյան):

Ուսումնասիրվել են բազմամետաղային հանքանյութում պղնձի, ցինկի և կապարի երկրորդային գործիքային սպեկտրները որպես առաջնային աղբյուր՝ օգտագործելով Am-241 իզոտոպն արծաթե անդրադարձիչի կիրառմամբ: Մշակվել է բարդ սպեկտրում դիֆերենցիալ զտիչների կիրառմամբ այդ էլեմենտների անալիտիկ գծերի անջատման նոր եղանակ (ղեկ.՝ ե.գ.դ. Ա.Թամրազյան):

Գնահատվել են երկչափ վիճակագրական մոդելների հնարավորությունները Հայաստանի Հանրապետության հանքավայրերում որոնողահետախուզական հետազոտությունների ժամանակ երկրաֆիզիկական մեթոդների համալիրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Կարապետյան):

Մշակվել են Հայաստանի Հանրապետության տիպային մետաղական հանաքավայրերի պետրոֆիզիկական մոդելները՝ երկրաֆիզիկական մեթոդների որոնողահետախուզական հնարավորությունները գնահատելու նպատակով (ղեկ.՝ Ա.Չիլինգարյան):

Առաջարկվել է տեկտոնական բեկվածքների նույնականացման և քարտեզագրման եղանակ՝ հիմնված արհեստականորեն առաջացրած տատանումների ազդեցության տակ լեռնային ապարների էմանացիայի գազաերկրաքիմիական առանձնահատկությունների վրա (ղեկ.՝ Ռ.Գասպարյան):

Հետազոտությունները ցույց են տվել, որ α=0.25 կողմերի հարաբերակցությունն ունիվերսալ բնութագիր է իզոտրոպ ուղղանկյուն թիթեղների համար, որոնք բեռնված են $q=q_0 \sin \pi y/b$ լայնական բեռնվածքով, ազատ հենված են y=0, y=b եզրերին: Նշենք նաև, որ թիթեղի b երկարության նվազման հետ (a լայնության հարաբերական աճ) օպտիմալացման ազդեցությունը զգալիորեն մեծանում է (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Էլոյան):

Սեյսմիկ ազդեցությունների տակ շենքերի տարածական հաշվարկի դեպքում դինամիկական հաշվարկային մոդելում ծածկերի սկավառակները դիտարկվել են որպես իրենց հարթության մեջ դեֆորմացվող խոշորացված վերջավոր էլեմենտներ: Վերջավոր էլեմենտի դեֆորմացիայի դաշտը ներկայացնելով որպես բացարձակ կոշտ ամբողջություն նկարագրող տեղափոխությունների գումար, որոնք հաշվի են առնում ծածկի սկավառակի միջին հարթության մեջ առաջացող դեֆորմացիաները՝ կազմավորվել է դրա կոշտության մատրիցան (ղեկ.՝ Ա.Հովսեփյան):

Արագածի հրաբխային ամբողջ լեռնաշղթայի՝ Կարկաչուն, Սելավ-Մաստարա և Քասախ գետավազանների տարածքներում համալիր երկրաֆիզիկական մեթոդներով որոշվել են լեռնազանգվածի ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածությունները: Դիտարկված տարածքի բազմամյա համալիր աշխատանքներում (Կարկաչուն, Սելավ-Մաստարա և Քասախ գետավազաններ) առաջին անգամ քարտեզագրվել են դրանց ռեգիոնալ խորքային (մինչև 300-500մ) ջրամերժ ապարների տեսակները և կառուցվածքը:

Որոշվել են ուսումնասիրված գետավազանների ժամանակակից և հնաջրբաժանների տարածական կապերը, որոնց հիման վրա, բալանսային հաշվարկների օգտագործմամբ, որոշվել են ուսումնասիրված ստորերկրյա ջրերի բաղադրիչների քանակական մեծությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Մինասյան):

Հայտնաբերվել են երկրակեղևի ժամանակակից շարժումների վարիացիաներ, որոնք նախորդում են երկրաշարժերին, ընդ որում՝ փոփոխվում է երկրակեղևի դեֆորմացիան, իսկ հիդրոերկրադինամիկ հորատանցքերում ջրի մակարդակների վերելքի միտման ֆոնին դիտվում է մակարդակի բազմաստիճան փոփոխություն: Սա վկայում է միջավայրի լարված վիճակի մասին, ինչը համապատասխանում է Գյումրու, Սևանի և Երևանի տեկտոնական բլոկների երկրակեղևի սեղմման դեֆորմացիային (ղեկ.՝ ե.գ.թ. Ռ.Փաշայան):

Կառուցվել է Երկրի մակերևույթի թեքման ընթացքի վեկտորային դիագրամ անընդհատ թեքամետր-դեֆորմոգրաֆիկ չափումների համալիր տվյալների հիման վրա, որն արտացոլում է երկրակեղևի դեֆորմացիոն պրոցեսների ցիկլիկ բնույթը, ինչպես նաև ուղղության և արագության փոփոխությունները տարածաշրջանային երկրաշարժերի ժամանակ (ղեկ.՝ Ք.Թովմասյան):

Հետազոտությունները ցույց են տվել, որ սեյսմիկ երևույթների ուսումնասիրման և սեյսմիկ ռիսկի գնահատման գործընթացում չի կարելի օգտագործել բոլոր կատալոգային տվյալներն առանց դրանց ճշգրտման, համապատասխանեցման և վստահելիության նախնական ստուգման: Տվյալների որակի նկատմամբ այս մոտեցումը կարևոր նախապայման է գիտական վերլուծությունների օբյեկտիվության և կանխատեսումների արժանահավատության համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ավետիսյան):

Ճշգրտվել են Հայաստանի տարածքի սեյսմաակտիվ շերտի կառուցվածքադինամիկ և երկրակեղևի հզորության գրավիտացիոն մոդելները (մինչև Մոհոյի մակերևույթ): Վերագնահատված մոդելների վերլուծությամբ պարզաբանվել է, որ տարածքի երկրակեղևի բյուրեղային հիմքի մակերևույթն ունի բավական բարդ կառուցվածք, որն արտահայտվում է հիմքի մակերևույթի՝ ծովի մակարդակի նկատմամբ ունեցած տեղադիրքի կտրուկ փոփոխություններով, որոնք առանձին տեկտոնական բեկորներ են և իրարից սահմանազատվում են տարբեր կարգի և ուղղվածության տեկտոնական խախտումներով (ղեկ.՝ Ա.Ավդալյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Թամրազյան Ա.Ա., Անագի ռենտգենառադիոչափական նմուշարկումը խանգարիչ էլեմենտների առկայությամբ, Ե., ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», պրակ Ա, N 2, 2025, էջ 34-43, http://shsu.am/scientific-proceedings/
2. Авдалян А.Г., Оганян М.В., Плотностная модель земной коры Армении по результатам сейсмоплотностного моделирования, Екатеринбург, мат. всерос. конф., Тринадцатые научные чтения памяти Ю.П. Булашевича «Глубинное строение, геодинамика, тепловое поле Земли, интерпретация геофизических полей», 2025, с. 4–8.
3. Авдалян А.Г., Оганесян А.О., сб. ст. “Разломно-блоковая структура и сейсмичность Армении”, Пермь, XXVI Уральской молод. науч. школы по геофизике, 2025, с. 3-7.
4. Аветисян А.М., Бурмин В.Ю., Петросян Г.Р., К вопросу социально-экономических последствий Спитакского землетрясения, М., «Цифровая трансформация экономики: вызовы и проблемы», сб. ст. VI межд. науч. конф., “РУСАЙНС”, 2025, с. 8-20.
5. Аветисян А.М., Бурмин В.Ю., Петросян Г.Р., Авдалян А.Г., Асатрян Л.К., Анализ сейсмологической информации РА и прилегающих территорий по данным каталогов NEIS и ISC (1991–2024 гг.), М., мат.

VII межд. науч. конф. «Развитие современной экономической науки: проблемы, тенденции, перспективы», МГИМО, 2025, с. 95-99.
6. Гаспарян Р.К., Использование эффекта выделения радиоактивной эманации под действием взрыва для целей выявления и картирования зон тектонических нарушений, М., «Интернаука», N 44, (408), 2025, с. 46-50. DOI 10.32743/26870142, https://internauka.org/journal/science/internauka.
7. Геодакян Э.Г., Карапетян Дж.К., Ли Ли, Заалишвили В.Б., Саакян Б.В., Мкртчян Г.А., Карапетян Р.К., Мкртчян М.А., О сейсмической активизации центральной части Эгейской вулканической дуги. Владикавказ, «Геология и геофизика Юга России», т. 15, N4, 2025, с. 42-59, DOI: 10.46698/w5501-6423-2815-n.
8. Кафтан В.И., Маневич А. И., Габсатаров Ю. В., Карапетян Дж.К., Шевчук Р.В., Лосев И.В., Саяпина А.А., Влияние серии катастрофических землетрясений Караманмараш (06.02.2023 г.) на режим современных движений земной коры Кавказа, М., «Физика Земли», N 5, 2025, с. 126–138.
9. Лещинская А.Ф., Петросян К.П., Аветисян А.М., Арутюнян Г.О., Перспективы развития альтернативной энергетики в РА с учетом финансовых факторов и социальных результатов, М., «Ученые записки Международного банковского института», N 1 (51), 2025, с. 102-123.
10. Мкртчян Г.А., Результаты оценки сейсмических свойств грунтов Ельпинского водохранилища (Армения) по инженерно-геологическим и инструментальным исследованиям, М., сб, ст. XIII всерос. конф., «Перо», 2025, с. 91-94. ISBN 978-5-00270-158-2.
11. Пашаян Р.А., Карапетян Д.К., Арутюнян Л.В., Товмасян К.Г., Вариации современных движений и деформации земной коры территории Армении по данным МГГН, Budapest, «The scientific heritage, Geological and mineralogical sciences», N 173, 2025, pp. 34-46
12. Симонян А.О., Мецоян Т.А., Джерки в спектре высокочастотных вековых вариаций главного магнитного поля земли, М., «Геомагнетизм и аэрономия», т. 65. N 6, 2025, с. 989-1028.
13. Симонян А.О., Оганян М.В., Природа локальных аномалий векового хода, обнаруженных на территории Армении, М., «Геофизические исследования», т. 26, 2025, с. 44-66. DOI: 10.21455/gr2025.2-4.
14. Элоян А.В., Карапетян Дж.К., Анализ зависимости оптимального расположения опор по длине пластинки от отношения сторон. М., «Сейсмостойкое строительство, безопосность сооружений», N 6, 2025, с. 73-81.
15. Элоян А.В., Карапетян Дж. К. Оптимальное проектирование по жесткости упругой балки в задаче изгиба под действием переменной нагрузки. Ե., ՀԱՊՀ «Լրաբեր. գիտական հոդվածների ժողովածու», մ. 1, 2025, Էջ 277-282:
16. Abrehdari, S. H., Karapetyan J. K., Rahimi H., and Geodakyan E. 2D Tomographic Maps of Rayleigh and Love Waves for Armenia and Its Surrounding Areas, M., «Russian Journal of Earth Sciences», 25, 2025, ES3014, EDN: SBYWRB, https://doi.org/10.2205/2025es001019.
17. Andrey M. Avetisyan, Goharik R. Petrosyan, On the Issues of Modeling the Elimination of Deadlock Situations and Synchronization Problems Using Petri Nets, Ghent (Belgium), Trends in Mathematics Research Perspectives, Ghent Analysis and PDE Center, v. 13, 2025, pp. 165-173
18. Andrey M. Avetisyan, Karen Petrosyan, Gharib H.Harutyunyan, Goharik R. Petrosyan, Lusine K. Asatryan, Evaluation of the management efficiency of the seismic monitoring system of the republic of armenia using artificial intelligence methods (1991–2024), Kragujevac, Serbia, «Proceedings on Engineering Sciences», v.07, N3, 2025, pp. 1721-1728, doi:10.24874/PES07.03.030, https://pesjournal.net/paper.php?id=873.
19. Karapetyan J.K., Hovhannisyan L.Kh., Karapetyan R.K. Simulated of earthquake wave compatible with design spectrum. Vladikavkaz, «Geologiya I Geofizika Yuga Rossii», 15(3), 2025, 110-127. DOI:10.46698/VNC.2025.25.83.001.
20. Hayrapetyan H.G., Chilingarian A.A., Babayan L.A. et al. Combined influence of fluctuations in the environmental conditions and space weather on the chrono-periodic system in cardiovascular pathology. Germany, «Int. J. Biometeorol», 69, 2025, 1507–1516. https://doi.org/10.1007/s00484-025-02918-3.
21. Kaftan, V.I., Manevich, A.I., Gabsatarov, Y.V. et al. Impact of a Series of Destructive Kahramanmaraş Earthquakes (February 6, 2023) on the Regime of Modern Crustal Movements of the Caucasian Region. M., «Izv., Phys. Solid Earth», 61, 2025, 831–841. https://doi.org/10.1134/S1069351325700648.
22. Pashayan R.A. Monitoring of seismic geodynamics of the Earth's crust of central Arnemia. Genève, «Danish Scientific Journal», N 94, 2025, p.17-25. 10.5281/zenodo.15115100, https://zenodo.org/

23. Pashayan R.A. Graphic Representation of the Parameters of Hydrogeochedmical Composition of Mineral Water in Central Armenia. N.Y., «Scienceset, Annals of Marine Science Research», N 2 (2), 2025, pp.1-5. https://mkscienceset.com/articles_file/187-_article1745821636.pdf
24. Pashayan R.A., Karapetyan D.K., Harutyunyan L.V., Margaryan S.S., Karamyan R. A, Tovmasyan K.G. Modern methods of monitoring the movements of the Earth's crust in Armenia, India, «Oeil Research Journal», v. 23 (8), 2025, p.746-759, 10.5281/zenodo.17018171
25. Pashayan R. Earth sciences. Monitoring of seismic geodynamics of the earth's crust on the territory of Armenia. Lodz, «Polish journal of science», N 90, 2025, p.3-12, 10.5281/zenodo.17170446
26. Petrosyan Goharik, Avetisyan Andrey, Burmin Valery, Simulation of Biometric Identification System by Colored Petri Nets, Westchester, USA, «Biomed J. Sci& Tech Res.», 60(3), 2025, BJSTR.MS.ID.009449., DOI: 10.26717/BJSTR.2025.60.009449, ISSN: 2574 -1241.
27. Simonyan A.O., Metsoyan T.A., The Role of Jerks in the Formation of the Spectrum of High-Frequency Variations in the Main Geomagnetic Field, USA, «Geomagnetism and Aeronomy», v. 65, N 6, 2025.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Յու.Սուվարյան
Ակադեմիկոս-քարտուղարի օգնական՝ Ա.Մելքումյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Պատմության, Արևելագիտության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Հ.Աճառյանի անվ. լեզվի, Մ.Աբեղյանի անվ. գրականության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս և 13 թղթակից անդամ:

2025թ. անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովում քննարկվել և հաստատվել է բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յու.Սուվարյանի «Հայագիտութան և հասարակական գիտությունների բաժանմունքի 2025թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցումը: Լսվել են ակ. Ա.Մելքոնյանի և պ.գ.դ. Ա.Բոբոխյանի «Հայ ժողովրդի կազմավորման և առաջին հայկական պետականության ստեղծման հիմնախնդիրների լուսաբանումը «Հայոց պատմության առաջին հատորում», թղթ. անդ. Պ.Ավետիսյանի «Հնագիտական հետազոտությունների վերջին գիտական արդյունքները», բ.գ.դ. Ավ.Իսահակյանի «Ավետիք Իսահակյանի պոեզիան. մեթոդաբանությունը և արդիականությունը», քաղ.գ.թ. Է.Օրդուխանյանի «Հայ քաղաքագիտական միտքը. պատմություն և արդիականություն» գիտական զեկուցումները:

Բաժանմունքի ակտիվ մասնակցությամբ գիտական կազմակերպությունների հետ կազմակերպվել են հետևյալ միջոցառումները՝ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական, Վանաձորի Հ.Թումանյանի անվ. պետական համալսարանների հետ «Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով», Մ.Աբեղյանի անվ. գրականության, ՌԳԱ Մ.Գորկու անվ. համաշխարհային գրականության ինստիտուտների, Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ «Արևելք-Արևմուտք. մշակութային միջնորդներ (գրականություն, երաժշտություն, պար, թատրոն, գեղանկարչություն, գրաֆիկա, ճարտարապետություն, քանդակ, կինո)» միջազգային գիտական համաժողով, Մ.Աբեղյանի անվ. գրականության, ՌԳԱ Մ.Գորկու անվ. համաշխարհային գրականության ինստիտուտների, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, Մխիթարյան միաբանության, Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի, ԳԱԱ հիմնարար գրադարանի հետ համատեղ «Ավետիք Իսահակյան-150» միջազգային գիտաժողով:

Հաշվետու տարում կայացել է բաժանմունքի բյուրոյի 13 նիստ:

Բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2025թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական հիմնարկների՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային ծրագրերի հայտերը, քննարկվել են բաժանմունքի հիմնարկների՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի կատարման 2025թ. ընթացիկ հաշվետվությունները, ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հայտերը, «Հայոց պատմության» առաջին հատորի առաջին գրքի շարադրման ընթացքը, բաժան-

մունքի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման և գիտական հանդեսները միջազգայնացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները, գիտակազմակերպական այլ հարցեր: Բաժանմունքի բյուրոյի դեկտեմբերի 11-ի նիստում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի բյուրոյի, գիտական հաստատությունների 2025թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և դրական որոշումներ են կայացվել Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտական կազմի ժողովների առաջադրած տնօրենի թեկնածուների՝ քաղ.գ.թ. Է.Օրդուխանյանի և պ.գ.դ. Ա.Բոբոխյանի վերաբերյալ:

ԳԱԱ տերմինաբանական հիմնահարցերի մասնագիտական պրոբլեմային խորհուրդը քննարկել և որոշումներ է կայացրել «Հայերենի գործնական տառադարձության կանոնների», «Տեխնիկական տերմինների հայերենացման սկզբունքների և որոշ տերմինների գործածության» ու «Հանրային ոլորտում շատ գործածվող հինգ տերմինների հայերեն համարժեքների վերաբերյալ» նախագծերի մասին, որոնք ներկայացվել են ԿԳՄՍ նախարարություն գրավոր և բանավոր խոսքում դրանց գործածությունը երաշխավորելու համար:

2025թ. հրատարակվել են «Պատմաբանասիրական հանդեսի», «Բանբեր հայագիտության» և «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականների 3-ական համարներ, թողարկվել է «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային անգլերեն հանդեսի 2 համար: Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը հրատարակել է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի 1, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդեսի 1, Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը՝ «Գրականագիտական հանդես», Արվեստի ինստիտուտը՝ «Արվեստագիտական հանդես» պարբերականների 2-ական համարներ:

Բաժանմունքի գիտական կազմակերպությունների աշխատակիցները հրատարակել են 118 գիրք (11-ն արտասահմանում), 22 դասագիրք և ձեռնարկ, հրապարակվել են 1027 հոդված՝ գրախոսվող հանդեսներում 707 (200-ը Scopus/WoS), գիտաժողովներ նյութերի ժողովածուներում 320 (101-ն արտասահմանյան), 214 թեզիս (99-ն արտասահմանում):

Անցկացվել են 21 միջազգային և 18 հանրապետական գիտաժողովներ:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ակ. Ա.Մելքոնյան
Փոխտնօրեն՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան
Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Հ.Մուրադյան
Էլեկտրոնային փոստ՝ history@sci.am, patminst@sci.am
Կայքէջ՝ www.academhistory.am

Մասնագիտական խորհուրդ 004՝ «Հայոց պատմություն»
Նախագահ՝ ակ. Ա.Մելքոնյան, գիտքարտուղար՝ պ.գ.թ. Հ.Մուրադյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918թ.» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ակ. Ա.Մելքոնյան) հրատարակվել են.

- «Արցախի մելիքությունները XVII-XIX դդ.» մենագրությունը, որը նվիրված է հայոց պատմության կարևորագույն շրջափուլերից մեկի՝ Արցախի մելիքությունների պատմությանը: Աշխատության մեջ արխիվային նորահայտ նյութերի, վիմագրերի և պատմագիտական գրականության հիման վրա քննարկվել են Արցախի մելիքների իրավասությունների և պարտականությունների հետ կապված հարցերը, ներկայացվել է մելիքությունների պատմությունը, ցույց է տրվել հայոց իշխանության շարունակականությունն Արցախում՝ ընդհուպ մինչև այդ երկրամասի միավորումը Ռուսաստանին:

- «Армянский торговый и промышленный капитал в экономике Российского государства во второй половине XVII - начале XX веков» գիրքը, որը նվիրված է հայ-ռուսական կապերի և համագործակցության դարավոր պատմությանը, որում առանձնահատուկ դեր է խաղացել հայկական գործարար շրջանակների գործունեությունը: Սա առավել ցայտուն դրսևորվել է 17-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին, երբ հայ առևտրականները սկզբում դարձել են Ռուսաստանի և Արևելքի առևտրի կարևոր օղակ, իսկ ավելի ուշ հայկական առևտրային կապիտալն ակտիվ և նշանակալի դեր է խաղացել Ռուսաստանում կապիտալիզմի և ձեռներեցության զարգացման գործում:

- «Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ» աշխատությունը, որում փորձ է արվել հայ պատմագիտության մեջ առաջին անգամ պատմության պարբերացման եվրոպական պատմափիլիսոփայական մտքի ու փորձի, պատմության տեսության ու մեթոդաբանական սկզբունքների ու հատկանիշների հաշվառմամբ, հիմքում ունենալով նաև հայ պատմագիտության ձեռքբերումները, հաշվի առնելով հայոց պատմության առանձնահատկությունները՝ ներկայացնել Հայաստանի ավելի քան երեքհազարամյա պատմության պարբերացման հակիրճ ուրվապատկերը:

«Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) հրատարակվել են.

- «Արևմտահայ գաղթականությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1919թթ.)» աշխատությունը, որում արխիվային նյութերի ու պատմական փաստերի հիման վրա հանգամանորեն քննարկվել են նորահռչակ Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ գաղթականության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղղությամբ իշխանության մարմինների վարած քաղաքականությունը: Զուգահեռներ են անցկացվել Հայաստանի առաջին Հանրապետության երկուսուկես և ներկայիս Հայաստանի Հանրապետության շուրջ 25 տարիների սոցիալ-տնտեսական ու ներքաղաքական զարգացումների միջև՝ վեր հանելով պատմական որոշ երևույթների և գործընթացների ակներև նմանությունները:

- “Участие сыновей армянского народа в освобождении Маньчжурии (9 августа-2 сентября 1945г.)” գիրքը, որում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում և ՌԴ ՊՆ կենտրոնական ռազմածովային արխիվում հայտնաբերված նոր արխիվային փաստաթղթերի, համապատասխան գրականության և տպագիր նյութերի հիման վրա առաջին անգամ ռուսերենով լուսաբանվել է Կարմիր բանակի և ռազմական նավատորմի շարքերում կռված հայ ժողովրդի զավակների մասնակցության խնդիրը ճապոնացի զավթիչներից Մանջուրիայի ազատագրմանը:

- «Կանանց մասնակցությունը Արցախի ազգային-ազատագրական պայքարին (1988-1994թթ.)» մենագրությունը, որը հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի ուսումնասիրության գործում որոշակի ավանդ ներդնելու փորձ է: Այն հնարավորություն է տալիս ըմբռնել կանանց դերի առանձնահատկություններն Արցախի ազգային-ազատագրական պայքարում:

«Աղբյուրագիտություն և պատմագրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Շահնազարյան) հրատարակվել են.

- «Հայաստանի ժայռապատկերները» աշխատությունը: Հայկական լեռնաշխարհի պատկերագրական ժառանգության ինագույն կոթողները՝ ժայռապատկերները, պատմամշակութային իրականության բացահայտման հավաստի սկզբնաղբյուր են: Մարդկային մտքի և գործունեության այս արգասիքներն ունեն գիտաճանաչողական մեծ նշանակություն: Աշխատությունը ներկայացնում է Հայաստանի ժայռապատկերների հայտնաբերման ու հետազոտման ընդարձակ պատմությունը, դրանց բովանդակությունը, գործառույթն ու տեսակները, սահմանվել են «ժայռապատկերաբանություն» գիտաճյուղի հիմունքները: Համեմատական նյութի ներառմամբ ցույց են տրվել ժայռապատկերների և հայ մշակույթի հարակից ոլորտների իմաստաբանական աղերսները, որոնք վկայում են դրանց արարողների էթնոմշակութային միասնականությունը և հայ ժողովրդի՝ իր բնօրրանում հարակայությունը: Տիեզերաբանական բովանդակության ժայռապատկերների և հնաստղագիտական կառուցվածքների վերլուծությամբ լուսաբանվել են կոթողների թվագրման և օրացույցի սկզբնավորման հիմնահարցեր: Ժայռապատկերները դիտարկվել են հնադարյան պաշտամունքի, արվեստի և գիտության ձևավորման խնդիրների ծիրում՝ ներառյալ միջնադարյան հայ իմաստասիրական մտքի նվաճումները:

- “Отчет о состоянии Карсской области начальника Карсской области генерал-лейтенанта Ивана Попко 1878 г.” գիրքը, որում տրվել են Կարսի մարզի սահմանների մանրամասն նկարագրությունը, տեղագրական ակնարկը, տվյալներ կլիմայի և ազգաբնակչության, բոլոր անհրաժեշտ տեղեկությունները երկրամասի տնտեսական կյանքի, հաղորդակցության, փոստի և հեռագրի, հանրային կրթության, բնակչության կրոնական և քաղաքական աշխարհայացքի, հարկերի և տուրքերի մասին: Պատմական տեսանկյունից կարևոր է, որ տեղեկագիր-հաշվետվությունում տրվել է տարածաշրջանի՝ օսմանյան տիրապետության տարիների ներքին կառուցվածքի վարչադատական հարաբերությունների մանրամասն նկարագիրը, նշված են քրդական աշիրեթների (համայնք) կառավարման առանձնահատկությունները, համադրվել են տարածաշրջանի՝ օսմանյան տիրապետության կառավարման առանձնահատկությունները ռուսականի հետ Տեղեկագիր հաշվետվությունն ունի հավելված, այն, անկասկած, Կարսի մարզի պատմության հավաստի և քիչ ուսումնասիրված սկզբնաղբյուրներից է:

- «Հայաստանի Առաջին Հանրապետությունը «Ճակատամարտ» օրաթերթի էջերում (1918-1920թթ.)» աշխատությունը, որում հեղինակը, օգտագործելով Կոստանդնուպոլսի «Ճակատամարտ» և պոլսահայ մի շարք այլ օրաթերթերի հրապարակումները, անդրադարձել է Հայաստանի Առաջին Հանրապետության առջև ծառացած հիմնախնդիրներին, վերլուծվել են յուրաքանչյուր պարբերականի շուրջ համախմբված հանրային շերտի կարծիքն ու մոտեցումները հայոց պետական այրերի վարած ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ:

Հրատարակվել է նաև «Արցախի պատմության հիմնահարցերը ըստ սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության» հոդվածների ժողովածուն, որում արխիվային նյութերի, տարբեր ժամանակահատվածներում պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումների, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական աշխատությունների հիման վրա ներկայացվել է հնադարից մինչև մեր օրերն Արցախի պատմության հիմնահարցերին առնչվող 16 ուսումնասիրություն: Բացահայտվել են նաև Արցախի պատմությանն առնչվող ադրբեջանական կեղծ, հակագիտական թեզերը:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Սոցիալական և մտավոր ցանցերը վաղմիջնադարյան Հայաստանում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Շ.Ազատյան) ուսումնասիրվել են Մաշտոցյան Մատենադարանում պահվող, ինչպես նաև համացանցում առկա թվայնացված ձեռագրերը, գիտական ու գեղարվեստական գրականությունը, մանրանկարները: Նոյեմբերին թեմայի շրջանակում հրավիրվել է հատուկ աշխատաժողով:

«Գարեջրագործությունը Հայաստանում. պատմական անցյալը և ներկան» գիտահետազոտական թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Սուքիասյան) ուսումնասիրվել են Հայաստանի ազգային արխիվում, արխիվի Կոտայքի մարզային մասնաճյուղում և Վարդենիսի տարածքային ներկայացուցչությունում պահվող փաստաթղթերը, պարբերական մամուլը, գիտական գրականությունը: Մասնավորապես հետազոտվել են պատմագիտական, ազգագրական աշխատություններ խորհրդային ալկոհոլային քաղաքականության, սննդի արդյունաբերության և գարեջրի սոցիալ-մշակութային ընկալումների վերաբերյալ: Հետազոտության առարկա են դարձել հետևյալ խնդիրները՝ Ուրարտուի շրջանից հնագիտորեն վկայված գարեջրի արտադրության արհեստանոցները և կիրառված տեխնոլոգիան՝ համադրելով Հին Մերձավոր Արևելքում վկայված զուգահեռների հետ, Խորհրդային Հայաստանում նոր տնտեսական քաղաքականության շրջանում գարեջրային արտադրության վերականգնման ընթացքը՝ ցույց տալով, որ Լենինականի գարեջրի գործարանն ունեցել է տարածաշրջանային պահանջարկ, իսկ Երևանի գործարանը՝ տեխնոլոգիական առավելություններ: Ուսումնասիրության առանձին նյութ են դարձել Վարդենիսում գարեջրի գործարանի հիմնադրումն ու գործունեության հանգամանքները, արտադրության կազմակերպման խնդիրները: Կատարվել են նաև փորձնական գարեջուր պատրաստելու նախնական աշխատանքներ:

«Այսրկովկասի XVIII–XX դարերի հայկական տպագրությունը Արևելք-Արևմուտք միջմշակութային խաչմերուկում (հրատարակչական աշխատանքներ, գրաքննություն, վաճառք–տարածում)» գիտահետազոտական թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Սուքիասյան) ուսումնասիրվել են Հայաստանի ազգային արխիվում, Մաշտոցի անվ. Մատենադարանում, Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում պահվող փաստաթղթերը, տպագրված գրքերը, պարբերական մամուլը, գիտական գրականությունը: Փաստաթղթեր և մամուլ է ուսումնասիրվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանի գործունեության, Ավ.Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի տպագրության, Բաքվի հայկական տպարանների գործունեության, Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության վերաբերյալ: Ուսումնասիրվել են նաև մասնավոր հավաքածուներում պահվող, թեմայի համար կարևոր գրքեր, արդյունքում հնարավոր է եղել գտնել 1914թ. Երևանում հրատարակված նորահայտ գիրք, որից հայաստանյան գրադարաններում որևէ օրինակ առկա չէ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Ավանեսյան Ի.Ն., Կանանց մասնակցությունը Արցախի ազգային-ազատագրական պայքարին (1988-1994 թթ.), Ե., ՊԻ, 2025, 274 էջ:
2. Արցախի պատմության հիմնահարցերը ըստ սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության (հոդված. ժող.), Ե., «Լուսակն» հրատ., 2025, 428 էջ:
3. Բալայան Վ.Ռ., Բալայան Մ.Գ., Հովհաննիսյան Լ.Լ., Արցախ. վտանգված ժառանգություն, Ե., «Էդիտ Պրինտ» հրատ., 2025, 128 էջ:

4. Բալայան Վ.Ռ., Հովհաննիսյան Լ.Լ., Քարտեզ (հայերեն, ռուսերեն, անգլերեն) Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պատմամշակութային ժառանգության, Ե., «Էդիտ պրինտ», 2025:
5. Գասպարյան Դ.Վ., Պարույր Սևակ. կյանքը և ստեղծագործությունը, Ե., «Անտարես» հրատ., 2025, 710 էջ:
6. Թոխաթյան Կ.Ս., Հայաստանի ժայռապատկերները, Ե., «Գիտություն» հրատ., 2025, 515 էջ:
7. Հակոբյան Ա.Մ., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, Ե., «INFOCOPY» տպ., 2025, 303 էջ:
8. Հայրապետյան Կ.Պ., Արևմտահայ գաղթականությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1919թթ.), Ե., ՊԻ, 2025, 359 էջ:
9. Մաղալյան Ա.Վ., Արցախի մելիքությունները XVII–XIX դդ., Ե., «Մատենադարանի հրատ.», 2025, 400 էջ + 32 էջ ներդիր:
10. Սայիյան Ա.Ս., Քրդական պրոբլեմի փոխակերպումները Մուսթաֆա Քեմալի կառավարման ժամանակաշրջանում 1919–1938թթ., ՀՀ ՊՆ ՊԱՀՀ «Հայկական բանակ» հանդեսի «Աշխատանքային տետրեր», հավելված N 2 (97), Ե., «Հայկ Չիվթչյան» տպ., 2025, 120 էջ:
11. Սարգսյան Ս.Թ., Միհրան Տամատյան, Ե., «Անտարես» հրատ., 2025, 415 էջ:
12. Арутюнян К.А., Участие сыновей армянского народа в освобождении Маньчжурии (9 августа-2 сентября 1945 г.), Ер., СПб., 2025, 144 с.
13. Бадалян М.С., Тейшебаини: Урартское наследие Еревана, М., изд. «Де՝ Либри», 2025, 92 с.
14. Меликян В.Г., Процесс отпадения Закавказья от России. Возникновение независимых государств (январь-май 1918 г.), Ер., «Зангак-97», 2025, 400+16 с.
15. Отчет о состоянии Карсской области начальника Карсской области генерал-лейтенанта Ивана Попко 1878 г. / публикация текста, предисловие и примечания Акопа Мурадяна, Ер., изд. «Гитутюн», 2025, 206 с. + 2 с. табл.
16. Тунян В.Г., Армянский вопрос в информационном пространстве и межгосударственных отношениях, Ер., изд. «Чартарагет», 2025, 136 с.
17. Шагиданова К.И., Армянский торговый и промышленный капитал в экономике Российского государства во второй половине XVII - начале XX вв., М., изд. «Весь Мир», 2025, 198 с., ил.

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

18. Ասլիբեկյան Ա., Բախչինյան Ա.Հ., Գյուլմիսարյան Ե., Շախկուլյան Տ., Արվեստ, դասագիրք հանրակրթական դպրոցի 12-րդ դասարանի համար, Ե., «Զանգակ-97» հրատ., 2025, 176 էջ:
19. Գասպարյան Դ.Վ., Գրականություն, 9-րդ դասարանի դասագիրք, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 176 էջ:
20. Գասպարյան Դ.Վ., Հայ գրականություն, 11-րդ դասարանի դասագիրք, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 176 էջ:
21. Գասպարյան Դ.Վ., Հայ գրականություն, 12-րդ դասարանի դասագիրք, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 176 էջ:
22. Գասպարյան Դ.Վ., Աղաջանյան Ա.Ա., Գրականություն, 9-րդ դասարանի ուսուցչի ձեռնարկ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 406 էջ (առցանց):
23. Գասպարյան Դ.Վ., Աղաջանյան Ա.Ա., Հայ գրականություն, 11-րդ դասարանի ուսուցչի ձեռնարկ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 280 էջ (առցանց):
24. Գասպարյան Դ.Վ., Աղաջանյան Ա.Ա., Հայ գրականություն, 12-րդ դասարանի ուսուցչի ձեռնարկ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2025, 274 էջ (առցանց):
25. Գասպարյան Դ.Վ., «Անուշավան Զաքարյան. կենսամատենագիտություն», Ե., «Գիտություն» հրատ., 2025, էջ 5-23, (առաջաբան):

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

26. Ազատյան Շ.Խ., Սահակ և Հովսեփ եղբայրների վկայաբանության պատմագիտական արժեքը, Ե., «Բանբեր Մատենադարանի», N 39, 2025, էջ 139-160:
27. Ազիզբեկյան Ռ.Լ., եկեղեցու Միջպետական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2001-2008թթ., Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (674), 2025, էջ 28-42:

28. Ազիզբեկյան Ռ.Լ., Հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացը (1988-1991թթ.), Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 1(30), 2025, էջ 127-152:
29. Ամիրջանյան Հ.Հ., Գևորգ Սուրենյանցի կանոնները (1895թ.)՝ գրված Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի համար, Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 2(30), 2025, N 2(31), 2025, էջ 130-143:
30. Ամիրջանյան Հ.Հ., Գևորգ Սուրենյանցի կոնդակը (1894թ.)՝ ուղղված հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի հոգևորականներին, «Գավառի ԳՊՀ գիտական պարբերական», N 19, 2025, էջ 97-105:
31. Ամիրջանյան Հ.Հ., Հայ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը որպես հայագիտության ուղղություն (Գևորգ Ե Սուրենյանցի օրինակով), Ե., «Պատմություն և մշակույթ», հատուկ համար, 2025, էջ 65-79:
32. Ամիրջանյան Հ.Հ., Մարգարյան Դ., Ազգային դպրոցը՝ որպես կրթության և ագային անվտանգության կայացման հիմնասյուն, Ե.,«Հայագիտական հարցեր» գիտ. պարբերական, N 4 (71), 2025, էջ 275-291:
33. Ավագյան Ք.Ռ., Աջակցություն սիրիահայ հայրենադարձների կացարանով և բնակարանով ապահովման խնդիրներին (2012–2018թթ.), Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3 (675), 2025, էջ 98-113:
34. Ավագյան Ք.Ռ., Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը և հայրենադարձությունը (2012-2018թթ.), Ե., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, հ.թ. N 1, 2025, էջ 133-142:
35. Ավանեսյան Ի.Ն., Ատելության, թշնամական քարոզչությունը ադրբեջանական ԶԼՄ-ներում և համացանցում 2020թ. պարերազմի ընթացքում, Ե., «Հայագիտական հանդես», N 2(69), 2025, էջ 261-278:
36. Ավետիսյան Ս.Ռ., Հայաստանի Հանրապետության հանրակրթության վիճակը և հիմնախնդիրները 2000-ականների սկզբին, Վանաձոր, «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր (հումանիտար և հասարարկական գիտություններ)», N 1, 2025, էջ 116-123:
37. Բաբլումյան Ա.Ռ., Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ներքին տեղաշարժերին ու արտագաղթին նպաստող գործոնները (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 2 (31), 2025, էջ 81-106:
38. Բադալյան Ա.Ռ., Խորհրդային իշխանության պայքարի առաջին քայլերը Հայ առաքելական եկեղեցու դեմ, Ե., «Հայագիտական հանդես», N 3 (70), 2025, էջ 81-97:
39. Բադալյան Ա.Ռ., Կառավարման խորհրդային համակարգի ձևավորման հարցը Խորհրդային Ռուսաստանում և Հայաստանում (1920-ական թվականների առաջին կես), Վանաձոր, «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր (հումանիտար և հասարակական գիտություններ)», N 1, 2025, էջ 124-133:
40. Բադալյան Ա.Ռ., Ասրյան Գ.Գ., Արցախում ռազմական շինարարության պատմության հիմունքները (Հարությունյան Ա., «Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006թթ.»), Ե., N 1(89), 2025, էջ 263-278 (գրախոսություն):
41. Բադալյան Մ.Ս., «Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքի շնորհանդեսը», Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3 (228), 2025, էջ 331-332:
42. Բախչինյան Ա.Հ., Գիւտ Մխիթարեանի «Դրուագներ հայոց Գողգոթայէն (1912–1937)» յուշագրութիւնը, Անթիլիաս-Լիբանան, «Հասկ» հայագիտական տարեգիրք, ԺԳ տարի, 2025, էջ 131-180:
43. Բախչինյան Ա.Հ., Ոչ միայն Ֆրանց Վերֆելը. Հայոց Եղեռնապատումն օտարազգի գրողների քիչ ծանոթ երկերում, Ե., «Ցեղասպանագիտական հանդես», N 13 (1), 2025, էջ 67-94:
44. Բախչինյան Ա.Հ., Մերձավոր Արևելքի հայերի հիշատակումները Ջոզեֆ Վոլֆի 1827-1828թթ. ուղեգրության մեջ, Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 1 (30), 2025, էջ 70-88:
45. Բախչինեան Ա.Հ., Անուշ Ասլիբէկեան, Վիլեամ Սարոյեանի դրամատուրգիայի բնոյթը եւ հայ բեմը, Պէյրութ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հտ. 45/2, 2025, էջ 479-484 (գրախոսություն):
46. Գասպարյան Դ.Վ., Անառակ որդու վերադարձը կամ Եղիշե Չարենցը Աստծու հայացքի ներքո, Ե., «Բանբեր հայագիտության», N 2, 2025, էջ 158-179:
47. Գասպարյան Դ.Վ., Եղիշե Չարենց-Երվանդ Քոչար, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2025, էջ 130-147:
48. Գասպարյան Դ.Վ., Զաքարյան Ա.Հ., Եղիշե Չարենցը Արշակ Չոպանյանի գնահատմամբ, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2025, էջ 124-136:

49. Գրիգորյան Մ.Գ., Ընծաների քաղաքական նշանակությունը հայ-արաբական հարաբերություններում (IX-XI դդ.), Ե., «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծ. հանդես, N 5 (60), 2025, էջ 37-45:
50. Դանիելյան Մ.Դ., Նյութեր Դոնի Ռոստովի նարոդնիկական կազմակերպություններում հայերի մասնակցության մասին, Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 2 (31), 2025, էջ 213-228:
51. Զաքարյան Լ.Ս., Հայաստանի Անկախության հռչակագրի գաղափարական հիմքերը. ազատական և ազգայնական խոսույթներ, Ե., «Регион и мир», N 3, 2025, էջ 76-85:
52. Զաքարյան Լ.Ս., Սահմանադրության մշակման գործընթացը և պետության կառավարման համակարգի շուրջ քննարկումները ՀՀ Գերագույն խորհրդում (1990–1995թթ.), Ե., «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», N 2 (16), 2025, էջ 192-206:
53. Թամարյան Ջ.Լ., Վրաստանի արտաքին գործերի նախարար Ակակի Չխենկելիի նամակը և հայտարարությունը՝ սահմանային հարցերի շուրջ (1918 թվական, սեպտեմբեր), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2025, էջ 221-229:
54. Թաջիրյան Է.Խ., Մի դրվագ Մոզդոկի հայության պատմությունից, Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբեր., N 2 (31), 2025, էջ 54-67:
55. Թոխաթյան Կ.Ս., Ժայռապատկերների առաջին հայտնաբերումների անդրադարձները «Արարատ» ամսագրում, «Էջմիածին», N 2, 2025, էջ 96-110:
56. Թորոսյան Վ.Հ., Դիտարկումներ Սսի Հայր Մաշտոցի «Թագադրութեան կանոնի» շուրջ, Անթիլիաս-Լիբանան, «Հասկ» հայագիտ. տարեգիրք, նոր շրջան, ԺԴ տարի, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հրատ., 2024-25, էջ 357-368:
57. Թորոսյան Վ.Հ., Թագադրության հայկական ծեսի բյուզանդական արմատները, Ե., «Բանբեր Մատենադարանի», N 40, 2025, էջ 13-24:
58. Խաչատրյան Հ.Ա., Մարզպանական Հայաստանի եկեղեցական թեմական բաժանումը (428-630-ական թվականներ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2025, էջ 34-50:
59. Խառատյան Ա.Ա., Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյան (ծննդյան 115-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2025, էջ 249-253:
60. Խառատյան Ա.Ա., Ակադեմիական գիտական հանդեսների առաջնեկը («ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 85–ամյակի առթիվ»), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2025, էջ 272-275:
61. Խառատյան Ա.Ա., Հայագիտության և հասարակագիտության կենտրոնատեղին, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2025, էջ 14-17:
62. Խառատյան Ա.Ա., Միջդաւանական խնդիրները Կոստանդնուպոլսի հայ համայնքում (XVIII դ. 60-70-ական թթ.), Երուսաղէմ, «Սիոն», N 4-7, 2025, էջ 119-220:
63. Խառատյան Ա.Ա., Պատմութիւն Տէր Յովհաննիսի Թովմաճանեան, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2025, էջ 320-328 (գրախոսություն):
64. Խուդինյան Գ.Ս., Հայագիտության գործառույթները գլոբալիզացիայի դարաշրջանում, Ե., «Պատմություն և մշակույթ» հայագիտ. հանդես, հ.թ., 2025, էջ 123-132:
հնարավորությունները): Համակարգչային հափշտակությունների լատենտայնությունը պայմանավորում են հետևյալ գործոնները՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, ինչը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը, տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի, հետագա վարույթային քաշքշուկից, դատավարական կարգավիճակ ստանալուց խուսափելը: Համակարգչային հափշտակություններ կատարողներին ընդհանրացված ձևով բնութագրական է երիտասարդ տարիքը՝ 24-40 տարեկան, գերազանցապես արական սեռին պատկանելիությունը, մեծ մասամբ ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի լինելը, ցածր կրթական մակարդակը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, մշտական օրինական եկամտի աղբյուրի բացակայությունը, հանցանքը շահադիտական դրդապատճառով կատարելը, նախկինում դատվածություն չունենալը, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու լավ հմտությունները: Հաշվի առնելով ստացված արդյունքները՝ համակարգչային հափշտակությունների կանխարգելման ուղղությամբ արվել են առաջարկներ:

«Մարդու կենսաբանական նմուշներով ԴՆԹ նույնականացման առանձնահատկությունների վերլուծությունը և մեթոդական մոտեցումների մշակումը» թեմայի շրջանակում գնահատվել են մարդու կենսաբանական նմուշներից (արյուն, թուք, քրտինք) ԴՆԹ-ի անջատման և պահպանման առանձնահատկությունները տարբեր դակտիլոսկոպիկ մեթոդների կիրառմամբ: Հետազոտության նպատակը կենսաբանական հետքերի վիճակի գնահատումն է, ինչպես նաև ժամանակի ընթացքում փոփոխությունների մոնիթորինգը, որոշել այն օպտիմալ ժամանակային միջակայքը, որի ընթացքում ԴՆԹ-ն պահպանվում է հետագա STR-վերլուծության համար: Մատնահետքերի հայտնաբերման համար հարթ մակերեսների վրա կիրառվել է դակտիլոսկոպիկ փոշի և համակցված մեթոդ, իսկ ծակոտկեն մակերեսների համար՝ քիմիական միացություններ: Արձանագրվել է, որ դատահետքաբանական և դատագենետիկական համալիր փորձաքննությունների արդյունավետ իրականացման ընթացքում հետքաբանական մեթոդի ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն հետքի տեսանելի դարձման՝ հայտածման արդյունավետությունը, այլև ԴՆԹ-ի պոտենցիալ պահպանման հնարավորությունը: Օպտիմալ մոտեցումը պետք է հիմնվի օգտագործվող ռեագենտի առանձնահատկությունների, կենսաբանական հետքի տեսակի, ինչպես նաև մշակման ու ԴՆԹ անջատման միջև անցած ժամանակի համակողմանի վերլուծության վրա:

«Բարդ մատրիցային կենսաբանական ծագման նմուշներում, մասնավորապես մազի և եղունգի մատրիցաներում «Agilent LC-MS-MS 6475» եռակի քառաբևեռ մասսպեկտրաչափով համակցված հեղուկային քրոմատոգրաֆի կիրառմամբ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, թունավոր, խիստ ներգործող նյութերի և դրանց մետաբոլիտների հայտնաբերմանն ուղղված օպտիմալացված հետազոտական արդյունավետ մեթոդների մշակումն ու արդյունքների գնահատման գիտական հիմնավորումը» թեմայի շրջանակում կատարվել են փորձագիտական արդյունքների համալիր վերլուծական աշխատանքներ, որոնք ներառել են նաև կենսաբանական օբյեկտների նմուշների նախապատրաստման փուլին վերաբերող գործընթացները: Ժամանակակից տեխնոլոգիական լուծումների ներդրման շնորհիվ հետազոտություններում զգալիորեն ընդլայնվել են մազերի համար բարձր ճշգրտությամբ և հուսալի սեգմենտային վերլուծության հնարավորությունները մինչև 1 տարվա դիտարկման ժամանակահատվածում, որը հնարավորություն է տալիս հավաստի հայտնաբերել և քանակապես որոշել թմրամիջոցներն ու հոգեմետ նյութերը վերլուծվող անալիտների պարունակության նվազման պարագայում,

ինչը պայմանավորված է լվացող, կոսմետիկ և ֆիզիկական գործոնների ազդեցությամբ: Իրականացվել են նաև համալիր վերլուծական աշխատանքներ, որոնք ուղղված են մեզի նմուշների նախապատրաստման պայմանների օպտիմալացմանը, հետազոտվել է ավելի քան 300 մեզի նմուշ: Պետք է նշել, որ այս մոտեցումը լայնորեն կիրառվում է միջազգային քիմիական-տոքսիկոլոգիական պրակտիկայում:

«ՀՀ-ում առկա որոշ պոչամբարների հարակից տարածքների հողային ռեսուրսներում ծանր մետաղների կոնցենտրացիաների տվյալների բազայի ձևավորումն ու սահմանային թույլատրելի (ֆոնային) կոնցենտրացիաների հետ համադրված վերլուծության և տեխնածին աղտոտման կանխարգելման արդյունավետ ուղիների վերհանումը» թեմայի շրջանակում վերլուծվել և վերհանվել են հանքարդյունաբերության ոլորտում էկոլոգիական անվտանգության մի շարք կարևորագույն արդիական խնդիրներ, մասնավորապես Լոռու և Սյունիքի մարզերում գործող «Ախթալայի ԼՀԿ»-ի և «Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի պոչամբարների հարակից տարածքների հողային ռեսուրսներում առկա ծանր մետաղների չափաքանակների նվազեցմանն ուղղված արդյունավետ ուղիների որոշումը, պոչամբարների վթարների կանխարգելման ու անվտանգ շահագործման տեխնոլոգիական նախագծերի մշակումը: Վերջինս լուծակորզմամբ հարստացման ժամանակ պոլիակրիլամիդի հիմքով մեկուսիչների և ֆլոտացիոն ռեագենտների ուղղորդված կիրառմամբ լուծումներ է՝ զուգակցված պոչանքների չորացում հատուկ պրեսֆիլտրերի միջոցով: Տեխնոլոգիաների իրագործումը թույլ կտա հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի վրա պոչամբարների վնասակար ազդեցությունները և օգտակար հանածոների ռացիոնալ յուրացումը: Իրականացվել է նշված պոչամբարների հարակից տարածքներից վերցված նմուշներում առկա ծանր մետաղների չափաքանակների որոշում: Ըստ ստացված արդյունքների՝ վերցված նմուշներում հայտնաբերված 30 ծանր մետաղներից 23-ի քանակական պարունակությունը գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները, մասնավորապես առավել բարձր են ծծմբի (մոտ 50 անգամ), բարիումի (մոտ 10 անգամ), արսենի (մոտ 3 անգամ), կապարի (մոտ 2 անգամ) և ցինկի (մոտ 1.5 անգամ) քանակական պարունակությունները: Հարկ է նշել, որ արսենը, կապարը և ցինկը պատկանում են վտանգավորության առաջին դասին, որոնց հատկապես սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների գերազանցումը խախտում է բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը, իսկ մարդու օրգանիզմի համար առաջացնում է ծանր հետևանքներ: Հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ անհրաժեշտ է կատարելագործել օգտակար հանածոների հարստացման գործընթացները, կիրառել այնպիսի տեխնոլոգիական և ինժեներական լուծումներ պոչամբարների նախագծման և կառուցման ժամանակ, որոնք թույլ կտան ամբողջովին մեկուսացնել պոչանքները՝ բացառելով դրանց ներթափանցումը հարակից տարածքներ և մոտակա ջրավազաններ, դիտարկել պոչամբարները որպես տեխնոգեն հանքավայր և վերամշակել դրանցում կուտակված պոչանքները՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ:

«Հայրենական և արտասահմանյան արտադրության լայն սպառում ունեցող ալկոհոլային խմիչքների որակի և անվտանգության պահանջների համապատասխանության փորձագիտական հետազոտությունների արդյունավետ մեթոդների մշակման ու արդյունքների գնահատման հիմքերը» թեմայի շրջանակում փորձարկվել և ներդրվել է նոր գազ-քրոմատոգրաֆիկ մեթոդ, իրականացվել են ցորենի և մրգահատապտղային օղիներում էթիլ սպիրտի (էթանոլ), մեթիլ սպիրտի (մեթանոլ), ալդեհիդների, միջին և բարդ եթերների առկայության և նույնականացման հետազոտություններ, որոշվել են վերոնշյալ միացությունների զանգվածային խտությունները (կոնցենտրացիա): Ուսումնասիրություն-ների ընթացքում նմուշապատրաստման համար ընտրված 5 տեսակի ցորենի օղիների 350

հետազոտելի նմուշների զգալի մասը՝ 90%-ը, հետազոտված մի շարք ցուցանիշներով չեն համապատասխանել ՀՀ և ԵՏՄ տարածքում գործող տեխնիկական պայմաններին ներկայացվող նորմերին: Նմուշների 45%-ը չեն համապատասխանել հիմնայնությամբ և բարդ եթերների զանգվածային խտությամբ: Հետազոտվել է նաև 10 մրգահատապտղային օղիների 754 նմուշ, որոնց 95%-ը զգայորոշմամբ (առանց մրգահատապտղային բույրի), էթիլ սպիրտի ծավալային բաժնով չեն համապատասխանել ներկայացվող պահանջներին, ինչպես նաև պիտակի վրա մակնշված 40% թնդության աստիճանին, 96%-ը (754-ից 727 շիշ)՝ միջին եթերների զանգվածային խտությամբ՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվական էթիլ եթերի ներկայացվող պահանջներին:

Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնն իրականացրել է զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի և առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների քրեաբանական գործոնների հետազոտություն: Վիճակագրական, համեմատական, փաստաթղթերի ուսումնասիրության և այլ մեթոդների կիրառմամբ բացահայտվել են 2022-24թթ. նշված հանցատեսակների քանակական և որակական ցուցանիշները, հետևանքները, լատենտայնությունը, պատճառական համալիրը, անհատական հանցավոր վարքը պայմանավորող գործոնները, հանցագործի բնութագիրը, կառուցվածքը և տեսակները:

Գիտագործնական աշխատանքներ: Կազմակերպության աշխատակիցներն անցկացրել են 91 վերլուծական բնույթի սեմինար, մասնակցել են փորձագիտական բնագավառներին առնչվող տարբեր առցանց սեմինարների, մասնավորապես Ամերիկյան քրեագիտական լաբորատորիաների տնօրենների միության (ASCLD), Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL), Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, «Legal Academy»-ի, «ThermoFisher Scientific»-ի, «Sartorius»-ի, «Agilent Technologies»-ի, «TOPCOP Project»-ի, «Академия Роскачества»-ի և այլն, «Դատափորձաքննություն», «Քիմիա» և «Նյութեր և լաքաներկային ծածկույթներ» միջպետական տեխնիկական կոմիտեների աշխատանքներին, շարունակվել է համագործակցությունը նաև ԱՊՀ մի շարք երկրների, Վրաստանի Հանրապետության համանման դատափորձագիտական կառույցների հետ:

Վերլուծվել և ըստ անհրաժեշտության շարունակաբար արդիականացվել են Կազմակերպությունում գործող փորձագիտական ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգները և ընթացակարգերը, փորձաքննությունների (նաև փորձարկումների) կատարման շրջանակում իրականացվող հետազոտությունների ընթացքում կիրառվող մեթոդների և մեթոդիկաների, ընթացակարգերի, մասնագիտական գրականության, ստանդարտների, այլ իրավական ակտերի և վերաբերելի փաստաթղթերի հիմնական ցանկերը:

Կազմակերպության փորձագետները մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացման ու կատարելագործման նպատակով մասնակցել են ներպետական և միջազգային առցանց գիտաժողովների, սեմինարների, գործնական դասընթացների, գիտագործնական կլոր սեղանների և այլն:

Շարունակվել են փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների թափքի նույնականացման համարների տեղակայության, կեղծ մետաղադրամների բաղադրության, կեղծ թղթադրամների (ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո), գրելագործիքների, պայթուցիկ նյութերի արգասիքների, պարենային և ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները, իրականացվել են GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար SUDMED-MS_3016 (3116

անվանում նյութերի տեսականի), Cayman Spectral Library.new (CSL) (2000 անվանում նյութերի տեսականի) և SWGDRUG.3.9L գրադարանների (4000 անվանում նյութերի տեսականի) ներդրման աշխատանքները:

Շարունակվել են դատափորձագիտական բնագավառում նոր դենդրոխրոնոլոգիական գործիքային «LINTAB» LTM06-E մոդելի սարքի և TSAP-Win համակարգչային ծրագրի միջոցով ապօրինի ծառահատումների հիմնական օբյեկտ հանդիսացող ծառատեսակներից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերների բազայի, ծառերի աճի ինտենսիվության բազայի համալրման աշխատանքները, ծառերի որոշ տեսակների աճի ինտենսիվության տարբերությունների ուսումնասիրությունը՝ որպես հետազոտության օբյեկտ ընդունելով հատված և կանգուն ծառերից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերները:

Շարունակվել է «Genetic Analyzer 3500» գործիքային սարքի և «GeneMapper™ ID-X Software v1.6» համակարգչային ծրագրի միջոցով դատագենետիկական փորձագիտական հետազոտությունների ԴՆԹ տվյալների պահոցի ձևավորման գործընթացը, որում ներառված են ԴՆԹ սեկվենավորված և համեմատական հետազոտության համար պիտանի ԴՆԹ-բնութագրերը:

Ստորև ներկայացվում են 2025թ. իրականացված դատափորձաքննությունների տեսակների և քանակի ամփոփ տվյալները.

N	Տարեթիվ	Քրեադատավարական շրջանակներում կատարված դատական փորձաքննություններ	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2025	13254 (առ 17.12.2025թ.)	28

Գիտաուսումնական աշխատանքներ: ՀՀ դատախազության և Կազմակերպության միջև կնքված «Լրացուցիչ կրթության ուսուցման ծառայությունների գնման» պետական պայմանագրի շրջանակում իրավասու մարմինների 68 աշխատող անցել է կատարելագործման և վերապատրաստման ուսուցողական դասընթացներ:

Իրագործվել են փորձագետների և փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման գործընթացի որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման, փորձագիտության բնագավառի մասնագետի, հավակնորդի վերապատրաստման կամ կատարելագործման դասընթացների նոր ծրագիր-առաջարկների մշակման աշխատանքներ:

Իրականացվել են փորձագիտության բնագավառի տարբեր ուղղություններով համապատասխան մասնագետների (փորձագետի հավակնորդների) նախնական գիտելիքների ստուգման հարցաշարերի լրամշակման, համալրման, նորերի մշակման, հարցերի տեսակավորման (ընդհանուր, մասնագիտական) և վերապատրաստման (կատարելագործման) փուլերի վերանայման անհրաժեշտ աշխատանքներ:

Կազմակերպությունում ճանաչողական այցեր են կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի, Մ.Մաշտոցի անվ. համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Հյուսիսային համալսարանի, Եվրոպական համալսարանի, Երևանի դատական փորձաքննության և հոգեբանության ինստիտուտի և այլ բուհերի ուսանողների համար:

Գիտափորձնական-վերլուծական աշխատանքներ: «Agilent» ֆիրմայի MSD-5977C մոդելի մասս-սպեկտրոմետրով համակցված GC-8890 մոդելի գազային քրոմատագրման սարքով իրականացվել է սինթետիկ թմրամիջոցներին բնորոշ արդյունաբերական և տնայնագործական արտադրության տեխնոլոգիական տարբերությունների բացահայտման փորձագիտական հետազոտական արդյունքների համալիր վերլուծություն: Որպես

մոդելային օբյեկտներ փորձագիտական հետազոտությունների են ենթարկվել α-PVP-ն թմրանյութերը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են լաբորատոր սարքավորումները, ապակեղենը և օժանդակ նյութերը սինթետիկ թմրամիջոցների և դրանց միջանկյալ միացությունների հնարավոր հետքերը հայտնաբերելու նպատակով: Նախնական արդյունքներում ի հայտ են եկել մարկերային տեխնոլոգիական խառնուրդներ, հայտնաբերվել են նաև հարակից կողմնակի միացությունների կառուցվածքներ: Եթե փորձաքննության ներկայացված նմուշներում կամ տարաների մակերեսի հետքերում α-PVP-ի թմրամիջոցից բացի հայտնաբերվում են նրա սինթեզին բնորոշ միջանկյալ նյութեր կամ ելանյութեր, ապա դա հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ նյութն արտադրվել է ոչ թե արդյունաբերական, այլ տնայնագործական եղանակով:

Իրականացվել են 10-ից ավել ոսկրային մնացորդների համալիր ուսումնասիրություններ, որոնք տարբերվել են հնության և պահպանվածության աստիճաններով: Նմուշները, ելնելով արտաքին դեգրադացման հատկանիշներից և ոսկրային հյուսվածքի տեսակային առանձնահատկություններից, դասակարգվել են թարմ և հնացած ոսկրային խմբերի: Բոլոր նմուշներում գնահատվել է պիտանի ԴՆԹ-ի անջատման արդյունավետությունը՝ կիրառելով PrepFiler BTA ստանդարտ մեթոդաբանությունը: Մեթոդաբանական փոփոխությունների համակողմանի գնահատումը ցույց է տվել, որ առաջարկվող մոտեցումներն էապես բարձրացնում են ԴՆԹ-ի անջատման արդյունավետությունը հատկապես հնացած, դեգրադացված և/կամ քայքայված ոսկրային նմուշների դեպքում: Կուտակված գիտափորձարարական նյութը ձևավորում է անհրաժեշտ նախադրյալներ մարդկային ծագման հնացած ոսկրային մնացորդներից ԴՆԹ-ի անջատման համակարգային մեթոդական մոտեցումների մշակման փուլին անցնելու համար:

Իրականացվել են տարբեր տեսակի ոգելից խմիչքների՝ ցորենի (մասնավորապես «Vodka Ohanyan», «Ice», «Gradus», «Nemiroff premium», «Новинка», «Absolut®», «Stumbras», «Хортица», «Русский царь») և մրգահատապտղային (մասնավորապես «Lorvod», «Руса», «Высота», «Прозрачная», «Водка хвойный», «Старый город», «Белый Бриллиант», «Final», «ХОЛОДОК», «Сибирский мороз») օղիներում, կոնյակային արտադրանքներում («Ijevan, Վանուհի, 7 տարեկան», «Նազելի», «Hayasi, Renaissance, 20 year, brandy», «Манэ, 3 года», «Չարենց, 10 տարի», «Ной, 22 года», «Ереванский, 15 лет», «Армянский Коньяк, Золотой, X.O, выдержка 7 лет», «Ararat, տոնական, 15 years», «Ararat, Akhtamar, 10 years», «Ararat, Ani, 6 years», «Ararat, 5 years», «Հաղպատ, 5 տարեկան») համալիր գազ-քրոմատոգրաֆիկ մեթոդով փորձարկումներ: Ստացված արդյունքները հիմնավորում են մեթոդի կիրառելիության արդյունավետությունն էթիլային սպիրտի, մեթիլային սպիրտի, միջին և բարդ եթերների որակական և քանակական որոշման դեպքում: Գիտափորձնական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ փորձաքննության ներկայացված ալկոհոլային խմիչքների զգալի մասը վերոնշյալ ցուցանիշներով չի համապատասխանում ՀՀ տարածքում և ԵԱՏՄ տնտեսական գոտում գործող նորմատիվային փաստաթղթերին, գործարանային արտադրության համեմատական նմուշներին: Ըստ այդմ արձանագրվել է, որ մրգահատապտղային օղիներ ներկայացված մի շարք նմուշներում մեթիլային սպիրտի զանգվածային խտությունը գերազանցում է առավելագույն թույլատրելի նորմերը:

Շարունակվել է համապատասխան մասնագետների ներգրավվածությունը ՆԳՆ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ուղղված աշխատանքներին, ակտիվ մասնակցությունը ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկումներին:

Իրականացվել է փորձաքննության շրջանակում ներկայացված կանեփ բույսից ստացվող թմրամիջոցների (մարիխուանա, հաշիշ, տետրահիդրոկանաբինոլ պարունակող բուսական խառնուրդներ) և կանեփի բույսի համեմատական հետազոտությունների արդյունքների վերլուծություն՝ ըստ կանաբինոիդային շարքի ալկալոիդների բաղադրության: Շուրջ 20 փորձանմուշների հետազոտության արդյունքում ստացված տվյալների վերլուծությամբ հաստատվել է, որ տվյալ թմրամիջոցները նախկինում կազմել են մեկ ամբողջություն և/կամ պատրաստված են եղել միևնույն բույսից և/կամ ունեն նույն տարածաշրջանային ծագումը, թե ոչ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Իրականացվել է կենսաբանական նմուշներում, մասնավորապես մազի նմուշներում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների և խիստ ներգործող նյութերի հայտնաբերման փորձագիտական հետազոտության արդյունքների համալիր վերլուծություն: Արդյունավետ նմուշապատրաստման արդյունքում հնարավոր է դարձել մազային նմուշներում հայտնաբերել մեթամֆետամինի ամֆետամին, կոկաին, դելտա-9 տետրահիդրոկանաբինոիդ, ալֆա-ՊՎՊ, մեթադոն, դիազեպամ և այլ արգելված հսկվող նյութերի զգայուն քանակություն:

Իրականացվել են գիտափորձնական հետազոտություններ՝ նպատակ հետապնդելով փորձարկել և հետագայում դատանյութագիտության փորձագիտական պրակտիկայում ներդնել մետաղների և համաձուլվածքների վերլուծության, թանկարժեք մետաղներից և ոսկերչական իրերից պատրաստված առարկաների ուսումնասիրության համար նախատեսված մասնագիտացված ծրագրերին: Ուսումնասիրվել են տարբեր մետաղադրամների, թանկարժեք մետաղների, ինչպես նաև հողային ու լեռնային ապարների նմուշների տարրային բաղադրության փորձագիտական որոշման պարամետրերն ու առանձնահատկությունները: Ուսումնասիրվել է շուրջ 215 միավոր ոսկերչական արտադրանք, կիրառվել են նմուշապատրաստման տարբեր մեթոդներ և պարզվել է, որ հետազոտված օբյեկտներից 118 միավորը պատրաստված է եղել համաձուլվածքից, որի ոսկու քանակական պարունակությունը եղել է սահմանված հարգից ցածր, 64 միավորը՝ ոչ թանկարժեք մետաղական համաձուլվածքներից, որոնց մակերեսը պատված է եղել թանկարժեք մետաղի (ոսկու, ռոդիումի և այլն) բարակ շերտով, 32 միավորի բաղադրության մեջ թանկարժեք մետաղներ (ոսկի, արծաթ և այլն) չեն հայտնաբերվել:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ նաև այլ ուղղություններով:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես, N 13, Ե., «ՎԻԷՄ ՊՐԻՆՏ» հրատ., 2025, 174 էջ:
2. Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես, N 14, Ե., «ՎԻԷՄ ՊՐԻՆՏ» հրատ., 2025, 168 էջ:
3. Իսրայելյան Գ.Վ., Համակարգչային հափշտակությունները և դրանց կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., Հեղ. հրատ., 2025, 76 էջ:
4. Մամիկոնյան Կ.Հ., Ոչ նյութական ակտիվների գնահատումը ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում (մեթոդական ձեռնարկ), Ե., Հեղ. հրատ. 2025, 78 էջ:
5. Савчук С.А., Новиков А.П., Ризанова Л.Н., Айгумов М.Ш., Жуматаева Г.С., Восканян П.С. и др., Обнаружение психоактивных веществ в сточных водах, Сургут, АО «Издательский дом» «Новости Югры», 2025, 104 стр.
6. Хох А.Н., Занько Ю.С., Габриелян О.Б., Арутюнян А.А. и др., Справочно-методическое пособие по установлению степени снижения качества (износа) строительных лесоматериалов и изделий при

проведении судебных товороведческих экспертиз, Минск, НПЦ Гос. ком. судеб. экспертиз Респ. Беларусь, 2025, 156 стр.

7. Хох А.Н., Пугачевский А.В., Вершицкая И.Н., Восканян П.С., Методические рекомендации по установлению фактов уничтожения и/или повреждения живого напочвенного покрова, Минск, НПЦ Гос. ком. судеб. экспертиз Респ. Беларусь, 2025, 84 стр.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

8. Իսրաելյան Գ.Վ., Համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ հատկանիշների նկարագիրը և քրեաբանական նշանակությունը, Ե., «Դատական իշխանություն», N 7-9, 2025, էջ 86-93:
9. Իսրաելյան Գ.Վ., Համակարգչային հափշտակություն կատարող անձի քրեաբանական պատկերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Օրենքի պատվար», N 19, 2025, էջ 29-35:
10. Իսրայելյան Գ.Վ., Ձենքի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձի քրեաբանական նկարագիրը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Դատական իշխանություն», N 1-3, 2025, էջ 87-92:
11. Իսրայելյան Գ.Վ., Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի առանձին ինստիտուտների որոշ խնդրահարույց կարգավորումների մասին, Ե., «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», N 1, 2025, էջ 8-16:
12. Ծերեթյան Կ.Ո., ՀՀ Արմավիրի մարզի պատմամշակութային ժառանգությունը (միջին բրոնզի դարից մինչև Վանի թագավորության դարաշրջան), Ե., «Հուշարձան» գիտ. հանդես, հտ. ԻԳ, 2025, էջ 74-78:
13. Ծերեթյան Կ.Ո., ՀՀ Արմավիրի մարզի պատմամշակութային ժառանգությունը (Վանի թագավորության դարաշրջան), Ե., «Հուշարձան» գիտ. հանդես, հտ. ԻԴ, 2025, էջ 54-80:
14. Մամիկոնյան Կ.Հ., Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումներում հստակեցումների անհրաժեշտությունը, Գավառ, ԳՊՀ «Գիտական հոդվածների ժողովածու», N 19, 2025, էջ 232-243:
15. Акобян А.П., Методические особенности экспертного исследования наезда транспортного средства на пешехода, Ташкент, "O'zbekiston sud ekspertizasi", Reliable Print, 2025, N 1(16), с. 12-17.
16. Арутюнян А.А., Мовсисян Ш.А., Габриелян О.Б., Некоторые особенности практического применения в РА метода определения стоимости изношенных или поврежденных непродовольственных товаров, International conference “The judicial expert - a key element in ensuring trust in Justice”: Chisinau, Blitz Poligraf, 2025, pp.114-121.
17. Восканян П.С., Оганнисян В.И., Некоторые особенности установления механизма возникновения огнестрельных повреждений на теле и одежде пострадавшего в рамках комплекснего медико-криминалистического исследования, Саратов, мат. XII межд. конф. по криминалист. исслед. оружия, «Техно-Декор», 2025, с. 28-37.
18. Исраелян Г.В., Проблемы совершенствования института экспертизы в кодексе РА об административных правонарушениях, Ташкент, "O'zbekiston sud ekspertizasi", Reliable Print, 2025, N 2 (17), с. 31-36.
19. Исраелян Г.В., Правовые проблемы назначения в РА экспертизы по установлению факта потребления лицом наркотических и психотропных веществ, Нижний Новгород, сб. докл. межд. научно-практич. конф., Национальные и международные тенденции и перспективы развития судебной экспертизы, ННГУ, 2025 с. 152-156.
20. Исраелян Г.В., Половые преступления: новые регламентации и пути их совершенствования в РА, Минск, сб. науч. тр., Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции, ГУ Изд. центр БГУ, 2025, N 18, с. 100-109.
21. Исраелян Г.В., Некоторые вопросы совершенствования правовых основ предупредительной деятельности общинной полиции в РА, Минск, сб. науч. тр., “Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы“, НПЦ ГКСЭ, 2025. вып. 2(58), с. 11-16.
22. Мамиконян А.В., Чплахян Л.А., Оценка влияния дактилоскопических реагенов и времени их воздействия на сохранность ДНК в биологических следах, М., Судебно-медицинская экспертиза, т. 68, N 6, 2025, с. 31-37.

23. Мамиконян К.О., Проблемы правового регулирования бизнеса с позиции финансово-экономических исследований, М,, сб. ст., «Теоретические и прикладные аспекты использования специальных знаний в уголовном и гражданском судопроизводстве», вып. 7, РГУП им. В.М. Лебедева, 2025, с. 103-111.
24. Мамиконян К.О., Формирование расчетно-аналитических систем определения стоимости товарного знака в рамках финансово-экономических экспертиз, М., «Теория и практика судебной экспертизы», т. 20, N 2, 2025, с. 92-104.
25. Chernov Y.G, Aghuzumtsyan R.V., Hambardzumyan M.V., Integrated expertise in legal psychology with the use of handwritten document analysis, Wroclaw, Nowa Kodyfikacja Prawa Karnego, Tom LXXIV, 2025, pp.68-90.
26. Voskanyan P.S., Pastica R., Contemporary challenges in forensic expertise: methodological frameworks and innovations in forensic practice, Romanian, The Romanian Journal of Forensic Science, issue 4, 2025, pp.25-29.
27. Zhumatayeva G., Abenova A., Novikov A., Voskanyan P., Savchuk S., Chemico-toxicological study of wastewater samples for the presence of narcotics and psychoactive substances using the high performance liquid chromatography method, Prague, European Journal of Environmental Sciences, 2025, Vol. 15, N2, pp. 57-64.

Հոդվածները հրատարակվել են «Օրենքի պատվար»հանդեսում, N 20, Ե., 2025, 249 էջ:

28. Մամիկոնյան Կ.Հ., Փոքր և միջին ձեռնարկատիրության օրենսդրական միջավայրի կարգավորման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, էջ 77-87:
29. Մնացականյան Ա.Ս., Սահակյան Հ.Ա., Տեսանկարահանող սարքերի նշանակությունը հանցավորության կանխման և բացահայտման գործում, էջ 88-97:

Հոդվածները հրատարակվել են «Современные тенденции развития суденбно-химической экспертизы: теория и практика» միջազգային գիտագործնական համաժողովի հոդվածների ժողովածուում, Մ., "БИО-Пресс" հրատ., 2025, 200 с.

30. Савчук С.А., Сухова И.В., Восканян П.С., Абаджян Х.А., Кадочников О.П., Новиков А.П., Идентификация подлинности коньяков и виноградных водок хроматографическими методами, с. 17-27.
31. Савчук С.А., Новиков А.П., Восканян П.С., Новые единые подходы к непрерывному контролю надежности результатов, получаемых методами хроматографии и масс-спектрометрии в токсикологическом анализе и судебной экспертизе, с. 89-90.

Հոդվածները հրատարակվել են «Теорія та практикан судової експертизи і криміналістики, Збірник наукових праць» ժողովածուում, N 4 (41), Խարկով, 2025, 350 էջ:

32. Mamikonyan K.O., Safaryan A.G., Principle of tax rate equilibrium and its application in the tax system of the republic of armenia, pp. 52-68.
33. Браїлко, Ю., Єгорова, Т., Кисла, Н., Восканян, П. Методологійні аспекти комплексної судової психолого-лінгвістичної експертизи в реаліях збройної агресії РФ проти України, pp. 69-80.

Հոդվածները հրատարակվել են «Теория и практика судебной экспертизы в современных условиях» միջազգային գիտագործնական համաժողովի ժողովածուում, Մ., РГ-Пресс, 2025, 640 էջ:

34. Исраелян Г.В., Некоторые проблемы регламентирования правовых основ экспертной деятельности в РА, с. 105-107.
35. Савчук С.А., Восканян П.С., Новый подход к экспертным исследованиям методами хроматографии и масс-спектрометрии, с. 290-294.

Հոդվածները հրատարակվել են «The Current Issues in Theoretical and Applied Psychology», 10th International Conference, Yerevan, Yerevan State University, October, 2025, 330pp.

36. Aghuzumtsyan R.V., Chernov Y., Exploring implicit assessment in forensic psychology: insights from handwriting analysis, pp. 187-190.
37. Aghuzumtsyan R.V., Psychological characteristics of the modern leader, pp. 191-192.

Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննության և քրեագիտության» հայկական հանդեսում, N 13, Ե., «ՎԻԷՄ ՊՐԻՆՏ» հրատ., 2025, 174 էջ:

38. Կիրակոսյան Ն.Ա., Ժամանակակից քրոմատոմասսպեկտրաչափական գործիքների զգայունության ու արդյունավետության գնահատականը դատաքիմիական փորձաքննություններում, էջ 9-18:
39. Իսրաելյան Գ.Վ., Ղուկասյան Ա.Պ., Կիբեռհանցավորության դրսևորումները և դրանց հակազդման միջոցները Հայաստանի Հանրապետությունում, էջ 62-73:

40. Աղայան Ռ.Ս., Աղայան Ս. Ռ., Անվավոր տրանսպորտային միջոցների արգելակային հեղուկների որակի և արգելակային համակարգերի հետազոտության ժամանակակից կիրառական մեթոդների առանձնահատկությունները, էջ 118-128:
41. Բադեյան Ա.Վ., Վարդանյան Լ.Ա., Աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնների խախտման հետևանքով տեղի ունեցած դեպքերի կանխարգելման արդյունավետ առաջարկները, էջ 129-137:

Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննության և քրեագիտության» հայկական հանդեսում, N 14, Ե., «ՎԻԷՄ ՊՐԻՆՏ» հրատ., 2025, 168 էջ:

42. Մամիկոնյան Կ.Հ., Գալստյան Է.Լ., Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների՝ որպես ոչ նյութական ակտիվների իրական արժեքների որոշման կիրառական մեթոդաբանության հարցերը, էջ 58-69:
43. Մամիկոնյան Կ.Հ., Հարկերի անհավաքագրելիության խնդիրը և հարկման դրույքաչափերի հավասարակշռության 50% սկզբունքի կիրառումը ՀՀ հարկային համակարգում, էջ 70-78:
44. Մելքոնյան Թ.Վ., Մոսիկյան Ա.Թ., Դատական փորձաքննությունների բնագավառում տեղեկատվության ապահովման կարևորությունը. հանրային վստահության, թափանցիկության և գաղտնիության հավասարակշռման խնդիրը, էջ 79-88:
45. Միրաքյան Ա.Ռ., RTC 360 մակնիշի լազերային սկաների կիրառման հնարավորությունները շինարարատեխնիկական փորձաքննությունների շրջանակում, էջ 119-126:
46. Հակոբյան Ա.Ե., Մնացորդային մեթոդի կիրառմամբ էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի չափի պարզման խնդիրներն ապրանքագիտական փորձաքննությունների շրջանակում, էջ 52-58:
47. Թորոսյան Ռ.Լ., Նորակառույց շենքի համար հատկացված հողամասի շուկայական արժեքի պարզումը մնացորդային եղանակով՝ կառուցապատման իրավունքի առկայության պարագայում, էջ 45-51:
48. Исраелян Г.В., Криминологическая характеристика и меры предупреждения преступлений против законного оборота огнестрельного оружия в РА, с. 95-103.
49. Saraiva A., Fejes A., Devenson J., Qocharyan V., Impact of face masks on acoustic parameters for forensic speaker recognition in the Armenian language, pp. 132-140.

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անցկացվել է 1 ընդհանուր ժողով:

Ապրիլի 23-ի տարեկան ընդհանուր ժողովը բացել և ԳԱԱ 2024թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցմամբ հանդես է եկել ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Սաղյանը: Ակադեմիայի 2024թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Ա.Իշխանյանը: Ժողովը քննարկել և հավանություն է տվել ԳԱԱ 2024թ. գործունեությանը: Ժողովի մասնակիցներին առցանց ողջունել է ԳԱԱ արտասահմանյան անդամ, ակադեմիկոս, ՌԴ Պետական Էրմիտաժ կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի թանգարանի տնօրեն Մ.Պիոտրովսկին: Ժողովում լսվել են կ.գ.դ. Ա.Առաքելյանի, Գ.Գրոմերի (Ավստրիա), ԳԱԱ արտասահմանյան անդամներ Վ.Պետրոսյանի (ՌԴ), Տ.Դանելյանի (Ֆրանսիա), Ա.Սեդրակյանի (Գերմանիա, Լեհաստան), Ս.Կազարյանի (Մեծ Բրիտանիա), Հ.Շահգոլյանի (Շվեդիա), Վ.Հարությունովի (ՌԴ) գիտական զեկուցումները:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անցկացվել է նախագահության 11 նիստ, քննարկվել է շուրջ 21 հարց:

Նախագահության որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական պետական մրցանակի դրամական միջոցները ՀՀ-ում աստղաֆիզիկայի և հարակից բնագավառների հետագա զարգացման համար նախատեսված միջոցառումները համակարգող և վերահսկող հանձնաժողով, հաստատվել է դրա գործունեության կարգը:

Նախագահության որոշմամբ հաստատվել են ԳԱԱ նախագահության կառուցվածքը, աշխատակազմի հաստիքացուցակն ու աշխատողների թիվը, Արզականի գիտաժողովների (հյուրերի) տուն ստորաբաժանման հաստիքները, կազմակերպության աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատողների ու հաստիքների թիվը, Էթիկայի հանձնաժողովի նոր կազմը, «Գիտության զարգացման հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը, ԳԱԱ 2025թ. հեռակա և առկա ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ընտրվել են ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ» և «Աստղաֆիզիկա» հանդեսների գլխավոր խմբագիրներ, համալրվել է «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» հանդեսի խմբագրական կազմը:

Շնորհվել է երկու պատվավոր դոկտորի կոչում:

Նախագահության նիստում ընտրվել են Ֆիզիկական հետազոտությունների, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Հնագիտության և ազգագրության, Մաթեմատիկայի, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտների տնօրեններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցը (ASNET-AM) ներկայացված է համաեվրոպական գիտակրթական ցանցի GEANT միջա-

վայրում որպես ազգային գիտակրթական ցանց: 2025թ. ASNET-AM ցանցում տարվել են ցանցային ծառայությունների, ցանցային կապուղիների որակի բարելավման, առցանց ծառայությունների անվտանգության ապահովման և ամպային ռեսուրսների օգտագործման ընդլայնման աշխատանքներ:

Ցանցի կապուղիների սպասարկում ու զարգացում: Համաեվրոպական GEANT գիտակրթական ցանցին միանալու հիմնական կապուղուն զուգահեռ ստեղծվել է պահուստային կապուղի ԻԱՊԻ հանգույցում՝ ապահովելով 10 Գբիթ/վրկ արագություն: Ցանցին միացված Ինժեներական քաղաքում գտնվող գերհամակարգչային կենտրոնում, ներքին ենթակառուցվածքի բարելավման աշխատանքների շրջանակում, տեղադրվել են հավելյալ անխափան սնուցման սարքեր հեղուկային հովացման համակարգի անխափան աշխատանքը ապահովելու համար: Թարմացվել են ցանցի 2 հիմնական BGP երթուղավորիչները՝ ապահովելով ներքին տրաֆիկի փոխանցման բարձր արագություն: ԵՊՀ-ում տեղադրվել է նոր CCR2004 երթուղավորիչը, որը հնարավորություն է տվել մուտք գործել ASNET-AM ցանց, GEANT և ինտերնետ մինչև 10G/s արագությամբ:

Վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների զարգացում: Մշակվել և փորձարկվել է նոր կենտրոնացված էլփոստի և ինքնության տվյալների կառավարման համակարգ, որն ապահովում է էլփոստի ծառայության ավելի անվտանգ և միասնական կառավարում: Մշակվել է ASNET-AM SSL հավաստագրերի ավտոմատ տարաբաշխման համակարգի գլխավոր հանգույցի կրկնօրինակող փորձնական լուծում, որը հնարավորություն է տալիս ստանալ SSL հավաստագրեր տրամադրող տարբեր կենտրոններից:

Մեծածավալ հաշվարկների և ամպային ծառայությունների ներդրում: Շարունակվել են ենթակառուցվածքի՝ որպես ծառայություն (Infrastructure as a Service) ամպային ծառայության զարգացման աշխատանքները: Վիրտուալ հաշվողական ռեսուրսների ամպային միջավայրից օգտվել են ցանցի անդամ 12 կազմակերպություններ:

Առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնում: Թարմացվել է ցանցում գործող DNS համակարգը, որը ներկայումս սպասարկում է 90 դոմենային տիրույթ: Կատարվել են meet.asnet.am և edu.asnet.am հարթակի սպասարկման և արդիականացման աշխատանքներ: Նշված հարթակներում գրանցված են ավելի քան 100 կազմակերպության օգտագործողներ, որոնց տրամադրվել են տեսակոնֆերանսների և հեռավար կրթության կազմակերպման հնարավորթույթունները: Meet.asnet.am տեսակոնֆերանս տարա-բաշխված հարթակում փորձարկվել են տարբեր հանգույցների կարգավորումների սինխրոնիզացիայի մեխանիզմները: Վեբ հոստինգ համակարգի համար մշակվել և իրականացվել են վեբ սերվերների և հոսթինգային համակարգի լրացուցիչ ընդլայնված պաշտպանության մեթոդներ: Ցանցում գործող վեբ հոստինգ համակարգը ներկայումս սպասարկում է 150 վեբ կայքերի աշխատանքը:

Ցանցի ծառայություններից 2025թ. օգտվել են հանրապետության 4 քաղաքներում և բնակավայրերում տեղակայված հանգույցներից օգտվող ավելի քան 5000 գիտնականներ, գիտական և տեխնիկական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլ օգտագործողներ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովը հաշվետու տարում անցկացրել է 33 նիստ, քննարկվել են խնդիրներ՝ կապված Սևանա լճի և նրա ջրավազանի հետ առնչվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ընկերությունների ներկայացրած ծրագրերի, նախագծերի, հաշվետվությունների տեխնիկատնտեսական հիմնավորումների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների, կարծիքների ներկայացման հետ:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցությունը Շրջակա միջավայրի նախարարության և ենթակա կառույցների, այդ թվում՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն›› ՊՈԱԿ-ի, ՏԿԵՆ ջրային կոմիտեի, Գեղարքունիքի մարզպետարանի, միջազգային կազմակերպությունների հետ: EU4Sevan ծրագրի թիմի հետ իրականացվել են ծրագրի շրջանակում իրականացվող և պլանավորվող աշխատանքների վերաբերյալ պարբերական քննարկումներ:

Կազմակերպվել է հանձնաժողովի ընդլայնված նիստ Սևանա լճից ջրբացթողումների, ջրակորուստների, ջրային ռեսուրսների կառավարման հարցերով, մասնակցել են մասնագետներ Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի նախարարություններից, որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ, որը կգնահատի Սևանա լճից ոռոգման նպատակով օգտագործվող ջրի կորուստների հիմնական պատճառները և կառաջարկի լուծման ուղիներ: Հանձնաժողովը առաջարկություններ է ներկայացրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե լճի էկոհամարգի պահպանության հիմնախնդիրների գիտական ծրագրերում առավել արյունավետ համագործակցելու վերաբերյալ:

Հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացված 39 ծրագրերի, նախագծերի և առաջարկությունների վերաբերյալ տրվել են 24 բացասական, 15 դրական կարծիքներ: Բացասական կարծիք է ներկայացվել Սևանա լճի ջրավազանում տարբեր բնույթի հանքավայրերի բացման, հանգստի գոտիների կառուցման, դիահերձարանի հիմնման վերաբերյալ ներկայացված ծրագրերին ու նախագծերին, դրական կարծիք/առաջարկություն՝ լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման և օգտագործման, ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի, Գեղարքունիքի մարզում երկրաբանական հետախուզական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ:

Հանձնաժողովը փորձագիտական եզրակացությունով առաջարկություն է ներկայացրել Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքների մաքրման, նախատեսվող նոր ջրամբարների կառուցման, լճի բացասական հաշվեկշռի պատճառների ուսումնասիրման, լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների բնութագրման վերաբերյալ: Քննարկվել են Սևանա լճից ջրբացթողումների, ջրակորուստների նվազեցման, մշակաբույսերի ոռոգման ջրապահանջի նորմերի պահպանման, լճի ջրհավաք ավազանի բնակավայրերի կոյուղաջրերի մաքրման խնդիրները, տրվել են համապատասխան առաջարկություններ: Հանձնաժողովը քննարկել և հավանություն է տվել Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների սահմանման վերաբերյալ: Իրականացվել է գիտարշավ դեպի Գեղարքունիքի մարզ՝ Նորատուսի մանկապարտեզի կեղտաջրերի մաքրման փոքր կայան և Լիճք ձկնաբուծարան, Սևանա լճից ջրբացթողումների

հաշվառման Գեղամավանի դիտակետ, Սևան ՀԷԿ, Լճաշեն համայնքի բազալտի հանքեր տեղում երկրաբանական ուսումնասիրության հնարավոր ազդեցության գնահատման համար:

Քննարկվել են Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2025թ. տարեկան, 2024թ. կատարված աշխատանքների հաշվետվությունները, 2026թ. աշխատանքային ծրագիրը:

Ընթացիկ տարում «Սևան» ազգային պարկ ՓԲԸ մասնագետների մասնակցությամբ Սևանա լճի ջրավազանում կազմակերպվել է արտագնա նիստ, քննարկվել են մի շարք ընթացիկ և կազմակերպչական հարցեր, համատեղ քննարկումներ են կազմակերպվել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավարների և փորձագետների հետ:

Հանձնաժողովը տարբեր բնույթի խնդիրներ քննարկելիս սկզբունքորեն է առաջնորդվել, որ Սևանա լճից ոռոգման և այլ նպատակներով ջրթողումներն իրականացվեն միայն լճի դրական հաշվեկշիռի, կենսառեսուրսների (ձկներ, խեցգետին) պոպուլյացիաների պահպանման և կայուն զարգացման պայմանով, էկոլոգիական գոտիների՝ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող երևույթների ու միջոցառումների վերահսկման և կանխարգելման մղումով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Համաձայնագրեր և հուշագրեր: Մայիսի 23-ին Երևանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Երկրաշարժերի վարչության և ԳԱԱ միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ երկրաշարժերի հետազոտությունների ոլորտում համագործակցության ամրապնդման և զարգացման նպատակով:

ԳԱԱ և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի միջև 2024թ. ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում ստորագրվել է արձանագրություն, որով հայտարարվել է «ՀՀ ԳԱԱ – ԲԳԱ 2026–2027» համատեղ գիտական նախագծերի մրցույթ: 2026թ. ֆինանսավորում կստանա 3 համատեղ գիտական նախագիծ:

Սեպտեմբերի 11-ին ԳԱԱ և Գենտի համալսարանի (Բելգիա) միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ փոխադարձ այցերի զարգացման նպատակով: Համագործակցության արդյունքում Գենտի համալսարանում հետազոտական աշխատանք է կատարել 3 գիտաշխատող:

ԳԱԱ կազմակերպությունները կնքել են 40-ից ավել համագործակցության հուշագիր:

ԳԱԱ պատվիրակությունների միջազգային այցեր: Առկա համագործակցությունները զարգացնելու և նոր կապեր ձեռքբերելու նպատակով ԳԱԱ պատվիրակությունները մասնակցել են՝ Մասկատում (Օման) կայացած Գիտության միջազգային խորհրդի (ISC) 3-րդ գագաթնաժողովին, Դուշանբեում (Տաջիկստան) կայացած «ԱՊՀ երկրների ստեղծագործ և գիտական մտավորականության 18-րդ համաժողովին», Աշխաբադում (Թուրքմենստան) կայացած «Գիտությունը, տեխնիկան և նորարար տեխնոլոգիաները հզոր պետության նոր փուլի վերածննդի ժամանակահատվածում» միջազգային գիտաժողովին: Նախագահ ակ. Ա.Սաղյանի գլխավորությամբ մասնակցել են Շանդուն նահանգի Ցզինան քաղաքում (Չինաստան) կայացած Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ՄԱԱՀ) գիտական խորհուրդների 2-րդ համագումարին («Մեկ գոտի, մեկ ճանապարհ»

նախաձեռնության շրջանակում), Պեկինում (ՉԺՀ) կայացած Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ANSO) 4-րդ գագաթնաժողովին և Գիտության ու նորարարության գլխավոր գիտաժողովին:

ԳԱԱ նախագահության աջակցությամբ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական գործուղումների իրականացում» ծրագրով համակարգի 59 աշխատակից մեկնել է ԵՄ 10 երկիր, ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա և այլ երկրներ, մասնակցել միջազգային գիտական միջոցառումների: ԳԱԱ կազմակերպություններից արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել 581 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 276, համատեղ աշխատանքներ է կատարել 179, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 126 գիտնական:

Պատվիրակությունների այցելություններ ԳԱԱ: ԳԱԱ նախագահությունը հյուրընկալել է մի շարք պատվիրակություններ (Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան, COST եվրոպական նախաձեռնության պատվիրակություն, ՌԴ Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ռեկտոր և այլն): Այցելությունների շրջանակում ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել Արիստոտելի համալսարանի (Սալոնիկ) դեղագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, քիմիական գիտությունների դոկտոր Ա.Գերոնիկակիին՝ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտական գործունեության զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար, ՉԺՀ երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, Ասիական սեյսմաբանական հանձնաժողովի գլխավոր քարտուղար, դոկտոր, պրոֆեսոր Լ.Լիին՝ Հայաստանի տարածքում սեյսմակայանների տեղադրման, դրանց շահագործման և հետագա զարգացման գործում ներդրում ունենալու համար:

Արտասահմանյան գիտնականների դասախոսություններ, միջազգային միջոցառումներ: Գիտական զեկույցներով հանդես են եկել ԳԱԱ արտասահմանյան անդամներ Վալերի Պետրոսյանը (ՌԴ), Տանիել Դանելյանը (Ֆրանսիա), Արմեն Սեդրակյանը (Գերմանիա, Լեհաստան), Սերգեյ Կազարյանը (Մեծ Բրիտանիա), Հենրիկ Շահգոլյանը (Շվեդիա), Վլադիմիր Հարությունյանը (ՌԴ), Անահիտ Soնապետեանը (Ֆրանսիա):

Ապրիլի 26-ին ԳԱԱ-ում տեղի է ունեցել «Science in Space Analog Missions: AMADEE-24 Mars Simulation Results and the Future Prospects» աշխատաժողովը՝ Ավստրիական տիեզերական ֆորումի հիմնադիր, AMADEE-24 առաքելության ղեկավար Գերնոտ Գրոմերի մասնակցությամբ:

Նոյեմբերի 10-ին, Գիտության համաշխարհային օրվա առթիվ (հաստատվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից), անցկացվել է «ԳԱԱ մրցանակ-2025» և Վ.Համբարձումյանի անվ. միջազգային պետական մրցանակի շահառուների պարգևատրման արարողությունը: Գիտական սեմինարում հանդես են եկել գիտնականներ Վ.Տուչինը (ՌԴ), Լ.Եպիսկոպոսյանը և Ա. Բոբոխյանը:

ԳԱԱ համակարգի կազմակերպություններում անցկացվել է 50 միջազգային միջոցառում, արտասահմանից ժամանել է 1109 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 587, համատեղ աշխատանքներ է կատարել 304, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 218 գիտնական:

Երիտասարդական ծրագրեր: ԳԱԱ Լինդաուի նոբելյան մրցանակակիրների հիմնադրամի համագործակցության շնորհիվ տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակակիրների հետ հանդիպմանը (Լինդաու, Գերմանիա) մասնակցել է 2 երիտասարդ գիտնական:

Ավագ դպրոցի աշակերտների համար իրականացվել է «Ամառային գիտական դպրոց» ծրագիրը, որի շրջանակում 30 աշակերտ մասնակցել է պեղումների Կաքավաձորում և Եղեգնաձորում, դասախոսությունների և փորձերի՝ ԳԱԱ կազմակերպություններում, այցելել Երևանի բուսաբանական այգի, Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Երկրաբանության թանգարան:

Ռոսստրուդնիչեստվոյի «Նոր սերունդ» ծրագրի շրջանակում 10 երիտասարդ գիտնական մասնակցել է Միջազգային էկոլոգիական համաժողովին, Պետերբուրգի միջազգային տնտեսագիտական համաժողովին և այլ միջազգային միջոցառումների:

«Ռոսատոմ» ՈԱԿ-ի կողմից հայտարարված ծրագրի շրջանակում «Ամառային համալսարան» վերապատրաստման ծրագրին մասնակցել է 2 երիտասարդ գիտնական:

«Զարգացնել գիտությամբ» կարգախոսով սեպտեմբերի 30-ին մեկնարկել է «Գիտության շաբաթ. Հայաստան 2025» փառատոնը, որի համակազմակերպիչն էր ԳԱԱ-ն: Փառատոնին, ի թիվս Հայաստանի առաջատար գիտակրթական կառույցների, մասնակցել են ԳԱԱ կազմակերպությունները:

ԳԱԱ-ում տեղի է ունեցել «Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2025»-ի հաղթող նախագծերի պարգևատրման արարողությունը: Փառատոնի հաղթող են ճանաչվել 62 նախագծի հեղինակ շուրջ 130 աշակերտ:

ԳԱԱ կազմակերպություններում անցկացվել է մոտ 20 երիտասարդական միջոցառում:

ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ համագործակցություն: Ժորժ Ալեսյանը (Ֆրանսիա) Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողների հետ ընդլայնել է քիմիապես յուրահատուկ աստղերի շտեմարանը: Տպագրվել է 1 հոդված:

Սոս Աղայանը (ԱՄՆ) ձևավորել է «FAST ADVANCE Computer Vision» գիտահետազոտական խումբը, որում ներգրավվել են 3 գիտությունների թեկնածու, 1 ասպիրանտ, 3 մագիստրոս: Տպագրվել է 4 համատեղ հոդված Q1 ամսագրերում, պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն, 2 մագիստրոսական թեզ:

Դանիել Դանիելյանը (Ֆրանսիա) ԿԳՄՄՆ ԲԿԳ GREATPAL նախագծի փորձագետն է (համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ), ինչի արդյունքում տպագրվել է 6 համատեղ հոդված: Աջակցել է ինստիտուտի երիտասարդ գիտնականների վերապատրաստման գործընթացին, ERASMUS+ ծրագրի շրջանակում Լիլի համալսարանում 5 ամսով հյուրընկալել է 2 երիտասարդ գիտնականի: ՀՀ-ում հանդես է եկել մի շարք գիտական զեկույցներով:

Մկրտիչ Թումանյանն Իրանի Իսլամական Հանրապետության փոխնախագահի կողմից նշանակվել է գիտության և կրթության ոլորտում Հայաստանում Իրանի ներկայացուցիչ:

Պիտեր Լանգերը (Գերմանիա) «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ կատարել է հնարավոր ակտիվ հակաբակտերիալ և հակավիրուսային հետերոցիկլիկ միացությունների, ոչ սպիտակուցային ամինաթթուների և դրանց վրա հիմնված կարճ պեպտիդների սինթեզ, *in silico, in situ, in vivo* ուսումնասիրություններ: Տպագրվել է 2 համատեղ հոդված: Նրա ղեկավարությամբ Ռոստոկի համալսարանում կենտրոնի գիտաշխատողը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

Էդուարդ Կարախանովը (ՌԴ) շարունակել է համագործակցությունը Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ վառելիքների ծծմբազերծման կարբիդային կատալիզատոր-ների ուսումնասիրման գործում: Տպագրվել է 1 համատեղ հոդված:

Վլադիմիր Հարությունովը (ՌԴ) Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ իրականացրել է թեթև ածխաջրածինների սառը-տաք օքսիդացման հետազոտություններ: Տպագրվել է 4 համատեղ հոդված:

Յուրի Հովհաննիսյանը (ՌԴ) ՀՀ-ում մասնակցել է մի շարք միջոցառումների, անցկացրել աշխատանքային հանդիպումներ:

Սերգեյ Ղազարյանը (Մեծ Բրիտանիա) Օրգանական և դեղագործական քիմիայի ԳՏԿ-ի հետ տպագրել է 1 համատեղ հոդված, մասնակցել է հայաստանյան միջոցառումների: Արժանացել է ICAVS մրցանակի ինֆրակարմիր պատկերների ոլորտում նշանակալի ներդրման համար:

Ֆերդինանդ Մկրտչյանը (ՌԴ) Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հետ շարունակել է Սևանի ջրի որակի գնահատման նոր մեթոդների մշակման հետազոտությունները: Տպագրվել է 2 համատեղ հոդված:

Լեոն Պետրոսյանի (ՌԴ) նախաձեռնությամբ Հայաստանում անցկացվել է Դինամիկ խաղերի միջազգային ընկերակցության (ISDG) կազմակերպած 14-րդ աշխատաժողովը:

Արմեն Սեդրակյանը (Գերմանիա) Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի հետ համատեղ իրականացրել է ԿԳՄՄՆ ԲԿԳԿ հեռավար լաբորատորիաների մրցույթի նախագիծ: Տպագրվել է 2 հոդված, մասնակցել 3 բակալավրի թեզերի պատրաստմանը, կազմակերպել է 1 միջազգային գիտաժողով, հանդես է եկել զեկույցներով:

Արմեն Սերգեևը (ՌԴ) հանդես է եկել զեկույցով ՀՀ-ում կայացած գիտաժողովի ընթացքում:

Մեժլում Սումբատյանը (ՌԴ) դարձել է ԿԳՄՄՆ ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող գիտական արդյունավետության խթանման ծրագրի շահառու նախագծի արտասահմանյան գործընկեր (Մեխանիկայի ինստիտուտի նախագիծ):

Աբրահամ Տերյանը (ԱՄՆ) եղել է «Սուրբ Գրիգոր Նարեկացի» անգլալեզու ֆիլմաշարի խորհրդատու, հեղինակել է ԱՄՆ-ում տպագրված գրքի 2 գլուխ, շարունակել է «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամի գործունեությունը:

Անահիտ Տոնապետյանը (Ֆրանսիա) շարունակել է համատեղ աշխատանքները Հնագիտության և ազգաբանության ինստիտուտի հետ, ԳԱԱ-ում հանդես է եկել զեկույցով երիտասարդ գիտնականների և ուսանողների համար:

Արմեն Քոչարյանը (ԱՄՆ) Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ ուսումնասիրել է երկաթի վրա հիմնված նանոմասնիկների ներուժը կենսաբժշկական կիրառությունների համար: Տպագրվել է 2 համատեղ հոդված: Նշանակվել է «ԱՐՓԱ» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ, ներառվել մրցույթների փորձագիտական հանձնաժողովում:

Արտասահմանյան անդամները ՀՀ-ում մասնակցել են մի շարք միջոցառումների, հայագիտական ֆիլմերի, հաղորդումների ստեղծմանը, զբաղվել գիտահանրամատչելի գործունեությամբ. Գրիգորի Գաբրիելյանցը (ՌԴ) հրատարակել է «Ղարաբաղ» գիրքը, Զավեն Մսըրլյանը (Լիբանան)՝ ցեղասպանությանը նվիրված ալբոմ, Վահե Պետրոսյանը (ԱՄՆ) և Վալերի Պետրոսյանը (ՌԴ) գիտական զեկույցներով մասնակցել են մի շարք միջոցառումների, Վիկտոր Փամբուկչյանը (ԱՄՆ) և Սերգեյ Սերեդենինը (ՌԴ) աջակցել են երիտասարդ գիտնականների վերապատրաստմանը:

ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակն ըստ գիտության ուղղությունների և երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	8	5	9	8	6	36
2	ԱՄՆ	9	6	6	4	2	27
3	Ֆրանսիա	1	4	2	2	6	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					1	1
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			1			1
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Իրան	1					1
13	Հունաստան	1					1
14	Բելառուս				1		1
15	Հարավային Կորեա		1				1
16	Լիբանան					1	1
Ընդամենը՝		**24**	**23**	**23**	**17**	**16**	**103**

Գիտական պարգևներ, մրցանակներ և կոչումներ: Գրիգորի Գաբրիելյանցը (ՌԴ) պագևատրվել է «Երկրաբանի աստղ» ոսկե մեդալով: Լևոն Խաչիկյանը (Ավստրալիա) բջջային և մոլեկուլային կենսաբանության ոլորտում նշանակալի ներդրում ունենալու համար ընտրվել է Նոր Հարավային Ուելսի թագավորական հասարակության անդամ: Հենրիկ Շահողլյանը (Շվեդիա) ընտրվել է Գիտությունների Եվրոպական ակադեմիայի անդամ, նշանակվել է ԵՊՀ հեռավար լաբորատորիայի ղեկավար մինչև 2029 թ.: Արմեն Սեդրակյանը (Գերմանիա) Լեհաստանի նախագահի կողմից արժանացել է Բելվեդերի պրոֆեսորի կոչման: Աբրահամ Տերյանը (ԱՄՆ) արժանացել է Լա Սիեռա համալսարանի պատվավոր շրջանավարտի կոչման:

ԳԱԱ կազմակերպությունների և արտասահմանյան անդամների միջև գործող համագործակցությունների արդյունքում տպագրվել է 20-ից ավել հոդված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, վերապատրաստվել է 29 երիտասարդ կադր, որոնցից 5-ը՝ արտասահմանում: Արտասահմանյան անդամների ղեկավարությամբ պաշտպանվել է 9 թեզ, որոնցից 4-ը՝ թեկնածուական:

Միջազգային դրամաշնորհային ծրագրերի աջակցություն: Շարունակվել են ԳԱԱ կազմակերպությունների և անհատ գիտնականների՝ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցությունը խթանելու գործառույթները (հիմնականում ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին): Իրականացվել են միջազգային և Եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածման և իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման գործառույթներ, ցուցաբերվել է օժանդակություն արտասահմանյան գործընկերների փնտրման գործում:

Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 200 տեղեկատվություն Եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանալիք միջոցառումների մասին: Տրամադրվել է մոտ 30 անհատական

խորհրդատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայաստանյան ֆեյսբուքյան էջին տարվա ընթացքում գրանցվել է շուրջ 100 մասնակից՝ ընդհանուր հետևորդների թիվը հասցնելով 1900-ի (https://www.facebook.com/HorizonEurope Armenia): Տրամադրվող ծառայություններն ուղղված են եղել ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեությամբ զբաղվող ՓՄՁ-ին և հասարակական կազմակերպություններին:

Ապրիլին COST ասոցիացիայի հետ ԳԱԱ-ում անցկացվել է Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության (COST) ծրագրի տեղեկատվական օրը՝ COST ասոցիացիայի փոխնախագահ, պրոֆ. Զորան Պոպովսկու և COST քաղաքականության բաժնի ղեկավար Բարթ Վեյսի ներկայությամբ:

Մայիսին Եվրահանձնաժողովի հետ և ԵՄ փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել են մեկ շաբաթ տևողությամբ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայտադիմումների նախապատրաստման դասընթացներ, որոնք ներառել են նաև անհատական խորհրդատվություններ հնարավոր դիմորդների համար (այդ թվում՝ Իտալիայից և Հունաստանից ժամանած փորձագետների կողմից):

Հոկտեմբերին Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ անցկացվել է Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառում, որի նպատակն էր ներկայացնել Հայաստանի աճող ներգրավվածությունը Եվրոպական հետազոտական տարածքին (ERA) և նրա ակտիվ մասնակցությունը «Հորիզոն Եվրոպա» ծրագրին: Միջոցառումը միավորել է շուրջ 100 մասնակցի, այդ թվում՝ պետական կառույցների, գիտական հաստատությունների, համալսարանների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների: Ելույթ է ունեցել ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը: «Հորիզոն Եվրոպա» NCP_WIDERA.NET նախագծի շրջանակում ԳԱԱ ինստիտուտների 6 գիտնական ստացել է ճանապարհորդական դրամաշնորհներ և մասնակցել եվրոպական տարբեր երկրներում անցկացված ՀԵ բրոքերային միջոցառումներին: ԳԱԱ 1 ինստիտուտի ՀԵ նախագծի առաջարկն անցել է մասնագիտական վերստուգում ԵՄ փորձագետների կողմից:

Տարվա ընթացքում դրամաշնորհային աջակցության պատասխանատուները մասնակցել են բազմաթիվ առցանց և առկա միջազգային միջոցառումների և թրեյնինգների:

Շարունակվել է համագործակցությունը միջազգային հեղինակավոր գիտական կառույցների հետ, այդ թվում՝ ALLEA, ISC, ANSO, MAAH, Lindau Nobel Laureates Meetings հիմնադրամի: ԳԱԱ կազմակերպությունները շարունակել են իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր (միջազգային գիտական ծրագրերին ու հիմնադրամներին մասնակցության արդյունքները ներկայացվում են ստորև):

ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

N	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2025թ. համար	
1	Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն	Միջուկային դատափորձաքննության ոլորտում կարողությունների զարգացում Հայաստանի և Վրաստանի միջև	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2021- 2025		300 000 $	16 191.33 $	Օ. Բելյաևա

2		Մեղվաբուծական արտադրանքի արժեքավորում և կենսամոնիթորինգ՝ մեղուների և մեղրի անվտանգության համար	Եվրահանձնաժողով, Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցություն	2023-2027	1 668 €	1 668 €	Մ.Բեգլարյան
3		Սպառողների համար ակրիլամիդի ներգործության նվազեցումը հացահատիկի մատակարարման շղթայի մոտեցմամբ՝ թիրախավորելով ասպարագինը (ACRYRED)	Եվրահանձնաժողով, Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցություն	2022-2026	1 586 €	1 586 €	Մ.Բեգլարյան
4		Իտալիայի Տուշայի համալսարանի միջազգային շաբաթ	Եվրահանձնաժողով, Էրազմուս +	2022-2025	2 120 €	2 120 €	Դ. Պիպոյան
5		ՓՄՌ բլոկի կառուցման համար հարթակի տեղանքի բնութագրերի մասին տեղեկատվության վերլուծություն և ամփոփում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2025թ. ապրիլ-սեպտեմբեր	10 000 $	4 600 $	Օ. Բելյաևա
6	Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ	Կլիմայի փոփոխության պայմաններում գենետիկական կենսահսկողության կարողությունների հզորացում Հայաստանում (ArmBio Climate)	ԵՊՀ միջազգային համագործակցություն (APPEAR 278)	2023-2027	30 392 700 դրամ		Ա.Ալեքսանյան
7		Պտղատու ծառատեսակների վայրի բազմազանության թաքնված ներուժի օգտագործումը կայուն գյուղատնտեսության համար	Հորիզոն Եվրոպայի «Ֆրուտդիվ» հետազոտական ծրագիր	2024-2028	42 800 000 դրամ	8 648 000 դրամ	Ա. Ներսեսյան
8		Բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության մշտադիտարկում	Կովկասի բնության հիմնադրամ	2023-2027	134 370 000 դրամ	6 957 000 դրամ	Ա.Ալեքսանյան, Գ.Ֆայվուշ
9		Բուսաբանության ինստիտուտի ERE հերբարիումի տեղական և ընդհանուր բուսական նմուշների թվայնացում	Չինաստանի Սինձյան նահանգի գիտությունների ակադեմիայի էկոլոգիայի և երկրաբանության ինստիտուտ	2025-2026	11 639 000 դրամ	11 639 000 դրամ	Ա.Ալեքսանյան
10		Հայաստանում հողերի վերականգնում և էկոհամակարգային ծառայությունների բարելավում՝ պտղատու և ընկուզավոր ծառատեսակների կենսաբազմազանության օգտագործման միջոցով	Բնության համաշխարհային հիմնադրամ	2025-2026	7 830 000 դրամ	7 830 000 դրամ	Ա.Պետրոսյան, Մ.Սարգսյան
11	«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ	Ոչ սպիտակուցային ամինաթթուների հիման վրա պրոտեազների և կինազ-	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն	2022-2025	490 000$	40 000 $	Ա. Դադայան, Ա. Մկրտչյան

		ների նոր արգելակիչների նախագծում և սինթեզ	(ISTC)				
12		Եվրասիայից ծագող էքստրեմոֆիլները՝ նոր հակամիկրոբային միջոցների հնարավոր աղբյուր	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2024-2025	21 600 €	10 800 €	Ա. Պալոյան
13		Բակտերիալ ջրալույծ մելանինի նեյրոպաշտպանիչ ազդեցության ուսումնասիրություն. նեյրոդեգեներատիվ հիվանդությունների դեպքում թերապևտիկ կիրառման հեռանկարները	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025-2026	7 500 $	5 360 $	Ս.Ավետիսյան
14		Մարդու կրծքի կաթից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների խմորող ունակությունների համեմատական ուսումնասիրություն և բարելավում՝ բուսական ու կենդանական կաթային միջավայրերում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025-2026	7 500 $	5 360 $	Լ.Դանիելյան
15		E. faecium KE5 շտամի էքզոպոլի-սախարիդի որոշ կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրությունը նոր պատրաստուկ ստեղծելու նպատակով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025	7 500 $	7 500 $	Ք.Կարապետյան
16		Բակտերիալ ցելյուլոզի և դրա կենսակոմպոզիտների ստացումը, դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025-2026	7 500 $	5 360 $	Հ.Աղայանց
17		Հայաստանի անտառածածկ շրջանների միկորիզային և քսիլոտրոֆ սնկերի բազմազանության գնահատում և ԴՆԹ բար-կոդավորում	Ավստրիական գործընկերության ծրագիր բարձրագույն կրթության և հետազոտությունների զարգացման համար (APPEAR)	2025-2027	52 430 €	12 135 €	Վ.Բագիյան
18		Բարձր արդյունավետությամբ կենսատեխնոլոգիա էլեկտրոնային թափոններից արժեքավոր մետաղների վերականգնման համար	Չինաստանի գիտությունների ակադեմիա	2025-2026	100000 CNY	50000 CNY	Ա.Վարդանյան
19		Մետաղներով աղտոտված կեղտաջրերի մաքրման «կանաչ» տեխնոլոգիաներ	Չինաստանի գիտությունների ակադեմիա	2025-2026	45000 CNY	25000 CNY	Ա.Խաչատրյան

20		Մանրէների վրա հիմնված մոտեցումներ հանքափորերի պոչամբարների վերականգնման համար, մետաղների վերականգնում և շրջակա միջավայրի պաշտպանություն	Չինաստանի գիտությունների ակադեմիա	2025-2026	120000 CNY	25000 CNY	Ն.Վարդանյան
21	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	Մոլեկուլային և բջջային կենսաբանության գործնական ուսուցում Հայաստանի երկու ռազմավարական համալսարաններում	«Ֆոլքսվագեն» հիմնադրամ	2021-2026	142 100 €	9 000 €	Վ.Վարդանյան
22		Տվյալահեն կյանքի մասին գիտությունները գենոմային առողջապահության մեջ	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ, ԳԴՀ կրթության և հետազոտությունների նախարարության համատեղ ծրագիր	2024-2026	16 000 000 դրամ	4 532 130 դրամ	Ա.Առաքելյան
23		Խաղողի սելեկցիայի ազգային ծրագրի վերսկսում և հայկական Vitis sylvestris-ի կիրառումը ռեզիստենտ սելեկցիայում	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ, ԳԴՀ կրթության և հետազոտությունների նախարարության համատեղ ծրագիր	2024-2026	16 000 000 դրամ	9 403 274 դրամ	Ք.Մարգարյան
24	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Մարդու էմոցիաների ավտոմատ ճանաչման համակարգ՝ հիմնված ֆիզիոլոգիական ազդանշանների վերլուծության վրա	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	2025	7 200 000 դրամ	7 200 000 դրամ	Ա.Թումանյան
25		Կրելի բազմաչափ կենսաբժշկական տվյալների հավաքագրման համակարգ	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	2025	7 200 000 դրամ	7 200 000 դրամ	Ա. Սարգսյան
26		Գերազանցության տարածաշրջանային կենտրոն Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտում	Հորիզոն Եվրոպա (Horizon Europe)	2022-2026	2 415 000 €		Ն. Այվազյան
27	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	Մասնակցային մոտեցմամբ էկոհամակարգային ծառայությունների գնահատում Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով	Կրթության և միջազգայնացման Ավստրիայի գործակալություն	2023-2027	70 170 €	15 437 €	Վ.Ասատրյան
28		Կլիմայի փոփոխության պայմաններում գենետիկական կենսահսկողության կարողությունների հզորացում Հայաստանում	Կրթության և միջազգայնացման Ավստրիայի գործակալություն	2023-2027	170 170 €	31 938.5 €	Ս. Աղայան

29		Սևանա լճի վտանգված էնդեմիկ ձկնատեսակի՝ իշխանի վերականգնման ռազմավարության մշակում	«Ռաֆֆորդ» հիմնադրամ	2024-2025	9 300 GBP	9 300 GBP	Ն.Բարսեղյան
30		Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացում հանուն կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա	Եվրոպական Միություն	2022-2025	47 316 €	16 532 €	Բ.Գաբրիելյան
31		Սուզված և կիսասուզված բուսականության դերի ուսումնասիրություն Սևանա լճում վնասակար ջրիմուռների ծաղկման մեղմացման գործում	Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցություն (AESA)	2024-2025	10 600 $	7000 $	Լ.Համբարյան
32	Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ	Վայրի արժեքավոր դեղատու և սննդային բույսերի ներմուծում հիդրոպոնիկայի և հողային մշակույթ. պարենային անվտանգության համապարփակ ուսումնասիրություն	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ (Իրանի հետ համատեղ)	2022 -2027	152 500 000 դրամ	23 500 000 դրամ	Հ.Ռ. Ռուսթա, Մ.Դարյադար
33	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Հայաստանի Սյունիքի մարզի բանահյուսության համայնքահեն գույքագրում, փաստագրում և պահպանում	ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի հիմնադրամ	2021-2025	22 661 497 դր.	3 633 800 դր.	Թ.Հայրապետյան
34	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	Սեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2019-2025 (երկարաձգվել է առանց գումարի փոփոխության)	754 757 $ ինստիտուտի միջոցով՝ $75 900	5 000 $	Հ.Բաբայան
35	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Հազվագյուտ տարրերի փոխարինումը նոր մագնիսներում էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում կիրառման համար	Հորիզոն Եվրոպա հետազոտական ծրագիր (BEETHOVEN)	2024-2028	252 250 €	40 000 €	Ս.Այդինյան
36		Միկրոալիքային ճառագայթմամբ դետոնացիոննանոադամանդների մաքրում և մակերևույթի ֆունկցիոնալիզացիա ապահովող կանաչ ցիկլիկ տեխնոլոգիա	«Ozm» հետազոտական կազմակերպություն (Չեխիայի Հանրապետություն)	2025-2027		6 885 €	Դ.Դավթյան
37		Ծառայությունների մատուցում	Huawei Technologies Oy (Ֆինլանդիա)	2025		350 $	Մ. Երանոսյան

38		Ծառայությունների մատուցում	Huawei Technologies Oy (Ֆինլանդիա)	2025		12 400 €	Ա. Ասատրյան
39	Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ	Սեյսմաերկրադինամիկական ցանց և տվյալների հավաքագրման ու մշակման կենտրոնի հիմնադրում	ՉԺՀ երկրաֆիզիկայի ինստիտուտ	2024-2025	1 800 000 $	900 000 $	Ջ.Կարապետյան
40	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	«Հետազոտությունների հայկական թիմ» ծրագիր (ATORCH)	Եվրոպական Միության Միջազգային մուտք ԵՄ ծրագիր (EURO-LABS)	2025	7500 €	7500 €	Վ.Քոչարյան
41	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Կոբալտի հիման վրա օքսիդային նյութերի ջերմաէլեկտրական փոխակերպման արդյունավետության բարձրացումը լեգիրման և միկրոկառուցվածքի մոդուլացման միջոցով	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2022-2025	43 560 $	12 080 $	Ա.Կուզանյան
42	Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	ԱԳՆ-երի ռենտգենյան ուսումնասիրություն և որոնում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025-2026	7 500 $	5 000 $	Հ.Աբրահամյան
43		RCW38 գերաստղակույտի վաղ էվոլյուցիան և կինեմատիկ պատմությունը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2025-2026	7 500 $	5 000 $	Ն.Ազատյան
44	Գիտակրթական միջազգային կենտրոն	Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)	Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր	2022-2025	697 090 €		Հայաստանի ազգային ագրարային համալսարան
45		Բարձրագույն կրթության ամրապնդում Եվրոպական նախագծերի կառավարման համար Հայաստանում (EUBridge)	Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր	2026-2028	319 347 €		ԳԿՄԿ
	Ընդամենը՝			**448 593 197 դրամ 2 775 060 $ 4 200 347 € 265 000 CNY 9300 GBP**	**90 543 204 դրամ 1 018801, 33 $ 168 001,5 € 100 000 CNY 9300 GBP**		

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Համագործակցելով ԳԱԱ բաժանմունքների, գիտական կազմակերպությունների, ՀՀ բուհերի, քոլեջների և հանրակրթական ուսումնական հաստատությունների, հանրության ու ՀԿ-երի հետ՝ վարչությունն իրականացրել է աշխատանքներ՝ միտված գիտության հանրամատչելիացմանը, համաշխարհային ու հայրենի գիտության և գիտնականների աշխատանքները հասարակության տարբեր խավերին ներկայացմանը, նպատակային աշխատանքներ են կատարվել դպրոցականների, ուսանողության և ուսուցիչների հետ:

Գիտության հանրամատչելիացման և հանրայնացման ռազմավարության մշակումը, աշխատանքային ու հատուկ ծրագրերի կազմումը կարևոր է, և վարչությունը, համագործակցելով այլ շահագրգիռ կառույցների, միավորումների հետ, համակարգված աշխատանքներ է տարել այդ ուղղությամբ՝ տարվա ընթացքում հասարակության տարբեր խավերի շրջանում կազմակերպելով սոցհարցումներ և անկետավորում, գիտաժողովներ, սեմինարներ, մշակվել են համապատասխան մոտեցումներ ու մեթոդաբանություն, ներկայացվել են երաշխավորագրեր՝ միտված կոնկրետ ուղղություններով աշխատանքների կազմակերպմանը: «Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումը ուսումնական գործընթացում» համահայկական գիտական և գործնական համաժողովի ընթացքում կարևորվել է հայոց լեզվի էական դերը գիտությունը հանրամատչելիացնելու և հանրայնացնելու գործում: Առցանց «Բնագիտությունը, մաթեմատիկան, տեխնիկան, ինֆորմատիկան 21-րդ դարում. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական 8-րդ գիտաժողովում քննարկվել են գիտության կարևորագույն այդ ուղղությունների ինչպես հանրամատչելիացման միտումներն ու մոտեցումները, այնպես է դրանց ազդեցությունն ուսուցման արդյունավետության բարձրացման, սովորողների մոտ այդ գիտական ուղղությունների նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակման գործում:

Վարչությունը կարևորել ու հաճախակի կազմակերպել է գիտահանրամատչելի բնույթի միջոցառումներ սովորողների համար: Լույսի միջազգային օրվան նվիրված միջոցառում է կազմակերպվել Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում, մասնակիցները լսել են հետաքրքիր զեկուցումներ լույսի բնույթի մասին, շրջայց է կազմակերպվել ինստիտուտի լաբորատորիաներով, ցուցադրվել են փորձեր, զեկուցում և վիկտորինա է կազմակերպվել Բյուրականում պարբերաբար կազմակերպվող ամառային մաթեմատիկական ճամբարի մասնակիցների համար: Առցանց տարբերակով հետաքրքիր զեկուցումներ են ներկայացվել հանրակրթական դպրոցների աշակերտների ու բուհերի ուսանողների համար «Գլոբալ տաքացում: Ջերմոցային երևույթ» և «Էլեկտրոնային լամպից՝ ինտեգրալ սխեմա» թեմաներով:

Պատրաստվել է «Գիտություն, կրթություն, արվեստ, մշակույթ 2025» օրացույցը, ըստ որի կազմակերպվում են առկա և առցանց միջոցառումներ, ցերեկույթներ, երեկույթներ: Նշվել են ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի ծննդյան 120-ամյակը, «Հանուն խաղաղության և զարգացման գիտության համաշխարհային օրը», ԳԱԱ կազմավորման օրը:

Մշակվել է «Աշակերտական գիտական և տեխնիկական ընկերության» օրինակելի կանոնադրությունը, կազմակերպվել է սեմինար «Աշակերտական գիտական և տեխնիկական ընկերության դերը սովորողների մոտ գիտության նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակման գործում» թեմայով, որին մասնակցել են դպրոցների տնօրեններ, աշակերտներ, ուսանողներ, հանրության ներկայացուցիչներ:

«Գիտությունը՝ հանրությանը» խորագրով տեղական և արտասահմանյան էլեկտրոնային ու տպագիր մամուլում գիտահանրամատչելի թեմաներով հրապարակվել են 20-ից ավել հետաքրքիր հոդվածներ: Ամենօրյա ռեժիմով սոցիալական ցանցերով տարածվել են գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ հանրամատչելի նյութեր, փորձեր են արվում միջազգային համագործակցություն ծավալել գիտության հանրամատչելիացման ու հանրայնացման խնդիրներով: Կովկասի միջազգային մաթեմատիկական օլիմպիադայի կազմկոմիտեի հրավերով եղել ենք Մայկոպում (ՌԴ), որտեղ ֆիզիկայից հետաքրքիր զեկույցներ ու փորձեր են ներկայացվել, Յարոսլավլի մարզի (ՌԴ) հայկական կազմակերպությունների խնդրանքով կազմակերպվել է հայագետ գիտնականների այցելություն և ուսումնական պարապմունքներ տեղի հայ երեխաների համար:

Գիտական զարգացման ծրագրերի գործառույթների շրջանակում տարվա ընթացքում պարբերաբար ուսումնասիրվել և առաջարկություններ են ներկայացվել գիտության և կրթության բնագավառների տարբեր օրենսդրական նախագծերի վերաբերյալ: Շարունակվել են ԳԱԱ «Նախակլինիկական և տրանսլացիոն հետազոտությունների գիտափորձարարական կենտրոնի/կլաստերի ստեղծում» հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման աշխատանքները, մշակվել են «Արհեստական բանականություն», «Արհեստական բանականությունը կրթության և ուսուցման գործընթացներում, դրական և բացասական կողմերը», «Գիտության և տեխնոլոգիաների զարգացման հիմնական միտումները», «Գիտության կազմակերպման ակադեմիական ձևը. օբյեկտիվ զարգացման միտումները», «Գիտության դերը հասարակության մեջ», «Գիտությունը որպես սոցիալական ֆենոմեն և գիտության զարգացման միտումները ժամանակակից աշխարհում», «Գիտության և տեխնիկայի արդիականացման համեմատական ուսումնասիրություն տարբեր երկրներում», «Գիտության հանրամատչելիացում. հասարակության ինտելեկտուալացման ուղին», «Գիտության կառավարում», «Համաշխարհային գիտության ապագան. միտումներ և հեռանկարներ», «Համաշխարհային գիտության զարգացման միտումների վերլուծություն և կանխատեսում», «Պետական կառավարումը գիտական և տեխնոլոգիական զարգացման բնագավառում. արտասահմանյան փորձը» և այլ թեմաներով բազմաթիվ վերլուծություններ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. «Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում», Ե., «Գիտություն» հրատ., 2025, 245 էջ:
2. «Բնագիտությունը, մաթեմատիկան, տեխնիկան, ինֆորմատիկան 21-րդ դարում. հանրա-մատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» 7-րդ գիտաժող. նյութ. ժող., Ե., 2025, 282 էջ:
   https://1drv.ms/b/c/9b4db5b5eacb0d17/IQDe3kyIrf2bTo4Jf8HvGSNwAfphQUEdiLEhP0XBTH7IOBs?e=t2m7JQ:
3. «Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումը ուսումնական գործընթացում», Ե., 2025, 72 էջ:
4. Աթայան Կ.Ի., Գիտության հանրամատչելիացում և հանրայնացում. հիմնախնդիրներ և լուծումներ, Ե., «ՀՀ ԳԱԱ հոդվածների ժողովածու», 2025, էջ 5-17:
5. Աթայան Կ.Ի., Պետրոսյան Մ.Գ., Աշակերտական գիտական և տեխնիկական ընկերությունը՝ «դպրոցական գիտության» կարևոր օղակ, «Բնագիտությունը, մաթեմատիկան, տեխնիկան, ինֆորմատիկան 21-րդ դարում. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» 7-րդ գիտաժող. նյութ. ժող., Ե., 2025, էջ 81-104:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2025թ. գրահրատարակչական ցուցանիշները*

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Մենագրություններ, ժողովածուներ,հանդեսներ	38	862	275	14200
ԳԱԱ գիտական պարբե-րականներ (11 անուն)	44 համար	418	96	10100
Ընդամենը՝	**82**	**1280**	**371**	**24300**

* Տվյալները վերաբերում են «Գիտություն» հրատարակչության մակնիշով լույս ընծայված գրականությանը:

«Գիտություն» հրատարակչության 2025թ. հրատարակությունները
Մենագրություններ, ժողովածուներ, հանդեսներ

1. Ա. Արևշատյան – Տիգրան Մանսուրյան
2. «Բանբեր հայագիտության», 2024թ., N 3
3. Ա.Ճուղուրյան, Ա.Մխիթարյան – Գիտության կազմակերպում և կառավարում (ուսումնական ձեռնարկ)
4. «Отчет о состоянии Карсской области начальника Карсской области генерал-лейтенанта Ивана Попко – 1878г.»
5. Ս. Համբարձումյան – Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարը
6. «Լեզու և լեզվաբանություն», 2024թ., N 2
7. Л.Даниелян - Магавуз
8. Լ. Խաչատրյան – Լեզվաբանական ավանդույթներ, նոր և նորագույն ուղղություններ (մ.թ.ա. IV հազարամյակից մինչև XXIդ.)
9. « ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք - 2024»
10. Հեղ.խումբ - Գիտություն, հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում (հոդվածների ժողովածու)
11. «Անուշավան Զաքարյան. կենսամատենագիտություն»
12. Հեղ.խումբ- Հայկական բարենորոգումների և Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովաժու
13. Հ. Սահակյան – Զույգաղբյուր. հայրենի գյուղիս պատմությունը
14. «Բանբեր հայագիտության», 2025թ., N 1, 3
15. Կոմիտաս – Երկերի ժողովածու, հտ. 2
16. Հ. Հովհաննիսյան – Գեղարվեստական ձևերի բովանդակությունը. պատմատեսական զննումներ, էսսեներ, չափածո խոսքեր
17. Ա. Չարենց - ...Գիրս մնա հիշատակող. գրականագիտական ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու
18. Կ. Չալիկյան – Ջուր և քար. Անձրևաբերության հնամենի ավանդական երգեր:
19. «Գրականագիտական հանդես», 2025թ., N 1, 2
20. «Լեզու և լեզվաբանություն», 2025թ., N 1
21. Ա. Ասլիբեկյան – Վիլյամ Սարոյանի դրամատուրգիայի բնույթը և հայ բեմը
22. Ա. Պապյան – Տավուշի բառաշխարհի բառարան
23. Զ. Բալայան – Արցախը XIX դարի հայ գրականության մեջ
24. Հեղ.խումբ - «Ակադեմիկոս Սերգեյ Սարինյան -100» (գիտաժողովի նյութերի ժողովածու)
25. Авт.коллектив -Актуальные проблемы механики сплошной среды (сборник научных трудов)
26. Վ. Պետրոսյան- Հայոց ցեղասպանություն. հանցագործներ և հանցակիցներ

27. Հեղ.խումբ – Նոր բառեր, պր.Թ
28. Հեղ.խումբ – Ջահուկյանական ընթերցումներ, N 1(22)
29. Վ. Գրիչենց – Հայության հոգևոր-գաղափարական-բարոյական ներազգային հարաբերությունների դոկտրին
30. Ա. Հովհաննիսյան – Անմեղության կանխավարկածը որպես սահմանադրական սկզբունք (սահմանադրական և համեմատական իրավական հետազոտություն)
31. Ա. Աղասյան – Հայ կերպարվեստը «Արաքս» հանդեսի էջերում (Սանկտ Պետերբուրգ, 1887-1898)
32. Լ. Երնջակյան – Ռուբեն Սարգսյանի աշխարհը. կոմպոզիտորը և ժամանակը
33. Վ. Բայբուրդյան – Իրան (երկրագիտական տեղեկատու)
34. Հեղ.խումբ – «Ավետիք Իսահակյան – 150» (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու)
35. Գ. Իսկանդարյան – Իրանի Իսլամական Հանրապետության կառավարման համակարգի ինը սյուները
36. Վ. Համբարձումյան – Ակնարկներ գրական հայերենի պատմության

ԳԱԱ գիտական հանդեսներ

1. «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» - NN 1,2
2. «Աստղաֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
3. «Պատմաբանասիրական հանդես» - NN 1, 2, 3
4. «Լրաբեր հասարակական գիտությունների» - NN 1, 2, 3
5. «Հայաստանի բժշկագիտություն» - NN 1, 2, 3, 4
6. « ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
7. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» - NN 1, 2, 3, 4, 5, 6
8. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» - NN 1, 2, 3, 4
9. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտություններ» - NN 1, 2, 3, 4
10. «Նեյրոքիմիա» - NN 1, 2, 3, 4
14. «Գիտության աշխարհում» - NN 1, 2, 3, 4

Տպագրվող գիտական հանդեսներից բացի ԳԱԱ մակնիշով գիտական հանրությանն են ներկայացվել «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Բնական գիտություններ» էլեկտրոնային հանդեսները: Լույս է տեսել «Գիտություն» թերթի 12 համար՝ 5500 օրինակ ընդհանուր տպաքանակով:

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հավաքածուների հայերեն և օտարալեզու տպագիր արտադրանքի տեսականու ամբողջացման նպատակով համալրման բոլոր հնարավոր ուղիներով Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) ընթացիկ տարում ձեռք է բերել 5090 միավոր գրականություն՝ 4066 միավոր գիրք, 958 միավոր պարբերական հրատարակություններ, 57 միավոր այլ նյութեր, 8 լրակազմ թերթ: Ըստ լեզուների՝ գրադարանը համալրվել է 3400 հայերեն, 1690 միավոր օտար գրականությամբ: Հայաստանյան և միջազգային գրքափոխանակության ծրագրերի արդյունքում ստացվել է 339 գրադարանային միավոր: 2025թ. ստացված գրականությունից գրքափոխանակության ֆոնդ է հանձնվել 1219 միավոր գրականություն: Արդյունքում ՀԳԳ հավաքածուն առ 01.12.2025թ. կազմում է շուրջ 3089498 գրադարանային միավոր (1693080 միավոր գիրք, 1370666 միավոր պարբերական, 25752 այլ նյութեր): Գրադարանի հավաքածուի ֆիզիկական պահպանության նպատակով իրականացվել են վերահաշվառ-

ման, քարտարանների և գույքամատյանների, ֆոնդերի ստուգման աշխատանքներ: Հավաքածուների երկարաժամկետ պահպանության նպատակով լուսաձրվել, մշակվել և նիշաճանաչվել է 2074 գիրք (530366 էջ)՝ համալրելով Համահայկական թվանշային գրադարանը: Տարեվերջին թվանշային գրադարանը պարունակում է 309025 թվային նյութ՝ 196352 հոդված, 7570 պարբերական, 6743 գիրք:

Հայ գրքի 4 շտեմարաններում՝ «1512-1800թթ.», «1801-1850թթ.», «1851-1900թթ.», «1901-1920թթ.», տեղադրվել է մինչև 1920թ. տպագրված հայերեն 34 գրքի թվային տարբերակ իրենց մատենագիտական նկարագրություններով:

ՀԳԳ էլեկտրոնային քարտարան է մուտքագրվել 13967 միավոր գրականություն համապատասխան լուսաձրված կազմերով: Նշված գրականությունը մուտքագրվել է նաև Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակում: Զուգահեռ ստեղծվել են նաև թղթային քարտեր (4474 քարտ): ՀԳԳ էլեկտրոնային քարտարանում «Կարդալ առցանց» հղումով ընթերցողին հասանելի է դարձել ևս 564 գիրք: Խմբագրվել է էլեկտրոնային քարտարանի 5000 գրառում: Առ. 01.12.2025թ. ՀԳԳ մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրվել է 538301 գրառում /907900 գրադարանային միավոր:

Իրականացվել է 2129 էլեկտրոնային և 3573 թղթային պատվերի սպասարկում, սպասարկվել է 18996 գրադարանային միավոր: Սպասարկման բաժնի համակարգիչներից օգտվել է 2338 այցելու:

ԳԱԱ ամսագրերի 620 գիտական հոդված և 6 գիրք ստացել են DOI (թվային օբյեկտի նույնականացուցիչ), 95 հոդված՝ ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգում): Համահայկական թվանշային գրադարան են մուտքագրվել նաև ՀՀ տարբեր գիտակրթական կենտրոնների գիտական ամսագրերի նյութերը:

«Գիտական տպագիր նյութերի թվայնացման ծառայություններ» ծրագրի շրջանակում տեղադրվել է 796 գիրք (268054 էջ), 72 պարբերական (1080 հոդված, 12109 էջ), 12 թերթ (96 էջ):

2025թ. «Թարգմանչաց արվեստ» շտեմարանում մուտքագրվել է 282 նյութ, այժմ շտեմարանում առկա է 1684 նյութ:

2025թ. ավարտին են հասցվել «Բազմավեպ» հայագիտական հանդեսի հոդված առ հոդված մշակման և թվայնացման աշխատանքները Համահայկական թվանշային գրադարանում: Հանդեսի 1843-2024թթ. լույս տեսած համարների բոլոր հոդվածները (17742 հոդված) բաց մատչելիությամբ արդեն հասանելի են ընթերցողներին:

«ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» էլեկտրոնային շտեմարանում իրականացվել են խմբագրման աշխատանքներ. խմբագրվել է 7 ակադեմիկոսի կենսամատենագիտություն, գրառումներին կցվել են նաև նրանց աշխատությունների հղումները: Կազմվել է ակ. Ա.Թախտաջյանի կենսամատենագիտությունը:

Եվրոպական Միության աջակցությամբ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի շրջանակում շարունակվել են «Հայ գիրքը Թուրքիայում» մատենագիտության II հատորի պատրաստման աշխատանքները՝ ներկայացնելով Կ.Պոլսի Օրմանյան մատենադարանի հայերեն տպագիր ժառանգությունը: Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ գրադարաններում և Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանի Օրմանյան մատենադարանում: Գրադարանի 2 աշխատակից գործուղվել է Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարան՝ ուսումնասիրելու Օրմանյան մատենադարանի հայերեն և հայատառ թուրքերեն գրքերը մատենագիտական ցանկերում համեմատություններ և ճշտումներ անելու համար: Տեղում ուսումնասիրվել է շուրջ 1000 գիրք:

Տարվել են Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի մասին նյութերի հավաքագրման աշխատանքներ նրա կենսամատենագիտությունը և տարեգրությունը կազմելու համար: Արդյունքում հավաքագրվել է նրա կենսամատենագիտության 1-ին հատորի նյութը (700 էջ գտնվում է տպագրության փուլում): Գրադարանի 1 աշխատակից գործուղվել է Անթիլիասի «Կիլիկիա» մատենադարան՝ ուսումնասիրելու մամուլի այն համարները, որոնք բացակայում են հայաստանյան գրադարաններում:

Գրադարանը մեթոդական աջակցություն է ցուցաբերել ՀՀ քաղաքային, մարզային և համայնքային գրադարաններին, որի շրջանակում իրականացվել են վերապատրաստման ծրագրեր: Գրադարանի 2 աշխատակից, որպես վերապատրաստող, մասնակցել է մարզային և համայնքային գրադարանների գրադարանավարների ամենամյա վերապատրաստման դասընթացներին (Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան, Կոտայքի մարզային գրադարան):

Դպրոցականների մասնագիտական կողմնորոշման և գիտության տարբեր բնագավառների գիտնականների հետ շփման նպատակով կազմակերպվել են միջոցառումներ «Հանդիպում գիտնականի հետ» խորագրով: Միաժամանակ գրադարանի աշխատակիցներն այցելել են տարբեր հանրակրթական դպրոցներ, դպրոցականներին ներկայացրել ՀԳԳ թվանշային գրադարանը, օգտվելու եղանակները, գրականության առցանց պատվեր իրականացնելու հնարավորությունները:

Գրադարանի աշխատակիցները տարվա ընթացքում մասնակցել են ԿԳՄՍ նախարարության, հայկական և միջազգային գրադարանային ասոցիացիաների կազմակերպած տարբեր վերապատրաստման դասընթացների: Գրադարանը համաձայնություն է ձեռք բերել Միչիգանի համալսարանի (ԱՄՆ) գրադարանի, Մարտիկյան գրադարանի հայերեն տպագիր ժառանգությունն ուսումնասիրելու համար: Նախատեսվում է կազմել այդ գրականության մատենագիտությունը, թվայնացնել դրանք և տեղադրել Համահայկական թվանշային գրադարանում: 2025թ. գրադարանի աշխատակիցները մասնակցել են հայաստանյան և միջազգային գիտաժողովների: Համագործակցության հուշագրեր են կնքվել Հայաստանի Եվրոպական համալսարանի, Ռուսաստանի պետական հանրային գիտատեխնիկական գրադարանի հետ: Հայկական գրադարանային ասոցիացիայի հետ համատեղ հրատարակվել է «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» էլեկտրոնային գիտատեղեկատվական ամսագրի 2 համար:

Տարվա ամփոփիչ միջոցառումը Հիմնարար գիտական գրադարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունն էր: Ցուցադրվել են գրադարանում պահվող հայերեն և օտար հնատիպ հավաքածուի բացառիկ նմուշներ, տեսանյութերով ներկայացվել է գրադարանի պատմությունը, գործունեությունը, ԳԱԱ նախագահության պատվոգրերով պարգևատրվել են գրադարանի բազմամյա աշխատանքային գործունեություն ծավալած աշխատակիցները:

ՀԳԳ, որպես մեթոդական կենտրոն, աջակցել է ակադեմիական 28 ինստիտուտի գրադարաններին՝ յուրացնելու նորարարությունները և արդիականացման գործընթացը: 24 գրադարան արդեն ունի գրառումներ ԳԱԱ ինստիտուտների համահավաք էլեկտրոնային քարտարանում, որոնցից 8-ը շարունակել է մուտքագրման աշխատանքները: Հաշվետու տարում մուտքագրվել է 4270 գրադարանային միավոր: Ակադեմիական ինստիտուտների ֆոնդերում առկա է շուրջ 1079713 գրադարանային միավոր: Գրադարաններն այս տարի ձեռք են բերել 2574 գրադարանային միավոր, սպասարկել 4419 ընթերցողի: Տացքը կազմել է 36575 գրադարանային միավոր: Նշված տվյալների մեջ չեն ներառվել ԳԱԱ համակարգում գործող Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Քիմիական

ֆիզիկայի, Մոլեկուլային կենսաբանության, Ֆիզիոլոգիայի, Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտների գրադարանների տվյալները:

Հրապարակումներ

1. Զարգարյան Տ.Կ., Մանուկյան Մ.Է., Գրիգորյան Մ.Հ., Մատենագիտական հետախուզումներ. հայ գրքի նոր անունների ներկայացում, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2025, էջ 110-140, DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-110
2. Айрапетян Н.А., История армянского книгопечатания: Способы сохранения редких и старопечатных книг, мат. VIII межд. междисциплинарной научно-практич. конф., “Книжные памятники в аспекте сохранности”, М., 2025, с. 60-65.
3. Թումանյան Ռ.Ռ., Համահայկական թվանշային գրադարանը՝ գիտության զարգացման հարթակ, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2025, էջ 65-73, DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-65
4. Grigoryan M.H., The Bibles in the Digital Age, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2025, էջ 48-64, DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-48
5. Հովհաննիսյան Ա.Գ., Ժառանգություն և նորարարություն. ՀՀ ԳԱԱ 80-ամյա ուղին, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2025, էջ 74-83, DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-7
6. Գրիգորյան Մ.Հ., «Ավետիք Իսահակյան-150». Ավ.Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի տպագրության պատմությունից գիտաժող. նյութ. ժող., էջ 13-26, DOI: 10.54503/978-5-8080-1587-6-13

ԳԱԱ ԵՎ ԱՅԼ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ԱՄԲԻՈՆՆԵՐ

1. Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Հայ-Ռուսական համալսարանի հետ՝ Գիտակրթական կենտրոն, Խ.Աբովյանի անվ.ՀՊՄՀ հետ՝ «Ոչ գծային օպտիկական, լազերային և ֆոտոնիկական բյուրեղների» համատեղ լաբորատորիա:

2. Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի և Գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) հետ՝ «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրատուրայի ամբիոն, ՀԱԷԿ-ի ռադիացիոն անվտանգության լաբորատորիայի հիման վրա՝ լաբորատորիաների կոնսորցիում, ՅՈՒՆԵԿՕ-ի հետ՝ «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն:

3. Մոլեկուլային կենսաբանության և Հայ-Ռուսական համալսարանի հետ՝ կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության համատեղ բազային ամբիոն, ԳԿՄԿ-ի հետ՝ մոլեկուլային ու բջջային կենսաբանության համատեղ ամբիոն, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հետ՝ փորձարարական կենսաբանության համատեղ լաբորատորիա:

4. Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ԳԿՄԿ-ի հետ՝ «Նյարդաֆիզիոլոգիա և տոքսիկոլոգիա» մասնագիտությամբ մագիստրատուրա:

5. Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտի և ԳԿՄԿ-ի հետ՝ «Կենսաբազմազանության ուսումնասիրություն և պահպանություն» համատեղ մագիստրոսական ամբիոն:

6. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և արտերկրի տարբեր գիտական կենտրոնների հետ իրականացվող դաշտային հետազոտական ծրագրերի շրջանակում աշխատել է 21 համատեղ հնագիտական արշավախումբ (4 հայ-գերմանական, 4 հայ-

իտալական, 3 հայ-ֆրանսիական, 3 հայ-ամերիկյան, 2 հայ-լեհական, 2 հայ-չինական, 1 հայ-ճապոնական, 1 հայ-իսպանական, 1 հայ-չեխական):

Համատեղ հետազոտական աշխատանքներ են կատարվել արտերկրի բազմաթիվ գիտական հաստատությունների և համալսարանների գիտական խմբերի կամ անհատ գիտնականների հետ՝ Սմիթսոնյան ինստիտուտ, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի, Թաֆթսի, Կոլումբիայի, Քորնելի համալսարաններ (ԱՄՆ), Ինսբրուքի համալսարանի Երկրաբանության ինստիտուտ, Ավստրիայի գիտությունների ակադեմիա, Գրացի և Զալցբուրգի համալսարաններ (Ավստրիա), Մյունստերի Վիլհելմս համալսարանի դասական հնագիտության ինստիտուտ և հնագիտության թանգարան, Մաքս Պլանկի, Գերմանիայի հնագիտության ինստիտուտներ, Բեռլինի Բաց, Բեռլինի Տեխնիկական, Հալլեի, Թյուբինգենի, Մայնցի Յոհաննես Գուտենբերգի, Բամբերգի Օտտո Ֆրիդրիխ համալսարաններ (ԳՖՀ), Տառագոնայի, Կաստիլիայի Լա-Մանչա, Կոմպլուտենսեի համալսարաններ (Իսպանիա), Երուսաղեմի հրեական համալսարան, Հնագիտության ինստիտուտ (Իսրայել), ԻՍՄԵՕ-Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիա (Հռոմ), Հին Միջերկրածովյան ավազանի ուսումնասիրության ինստիտուտ (ISMA), Հռոմի Տոր Վերգետա, Վենետիկի Կա Ֆոսկարի, Ֆլորենցիայի և Բոլոնիայի համալսարաններ (Իտալիա), Պոզնանի համալսարան, Պոզնանի ռադիածխածնային լաբորատորիա, Վարշավայի համալսարանի Հնագիտության ինստիտուտ (Լեհաստան), Բեյրութի Հայկազեան համալսարան (Լիբանան), Բուսանի Կլիմայի Ֆիզիկայի կենտրոն (Կորեայի Հանրապետություն), Տոկայի համալսարան (Ճապոնիա), Օքսֆորդ. Archaeopress հրատարակչություն (Միացյալ Թագավորություն), Լոզանի մշակութային ժառանգության թվային-հումանիտար գիտությունների կենտրոն (Շվեյցարիա), Պարդուբիցեյի համալսարան (Չեխիայի Հանրապետություն), Հոնկոնգի համալսարան, Չինաստանի գիտությունների ակադեմիա (Չինաստան), Սանկտ-Պետերբուրգի եվրոպական համալսարան, Կուբանի պետական համալսարան, ՌԳԱ հարավային գիտական կենտրոն (ՌԴ), Թբիլիսիի պետական համալսարան, Ջավախիշվիլիի անվ. պատմության, ազգագրության և հնագիտության ինստիտուտ (Վրաստան), Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS)՝ Լիոն-2 համալսարանի Արքեօրինտ լաբորատորիա, Իվլինի Միջգերատեսչական հնագիտական ծառայություն, Փարիզի Արևելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտ (INALCO), Էքս-Մարսել համալսարան (Ֆրանսիա):

7. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի և ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և Հայկական բժշկական ինստիտուտի հետ՝ դատական բժշկության ամբիոններ:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

N	Համատեղության կազմակերպություններ	ՀՀ ԳԱԱ բաժանմունքներ														Ընդամենը	
		Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք		Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք		Քնական գիտությունների բաժանմունք		Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք		Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք		Միջազգային գիտակրթական կենտրոն		Փորձաքննությունների ազգային բյուրո			
		համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ	համատեղողների թվաքանակը	համատեղ հրապարակումներ
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**	**17**	**18**
1	ԵՊՀ	20	8	8	7	11	24	13	47	47	8	1				100	94
2	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ	2	1	5	2	4		5	5	11	7					27	15
3	Հայ-Ռուսական համալսարան	9	4		3	14	9	14	16	12	6					49	38
4	ՀՊՏՀ	1						1	1	3						5	1
5	ՀԱՊՀ	11	1		1	1		6	4							18	6
6	ՀՃՇԱՀ	7		1				3	2	8	2					19	4
7	Վ.Բրյուսովի անվ. ՊՀ									15	6					15	6
8	ՀԱԱՀ	1	3			5	7	1		5						12	10
9	Երևանի Կոմիտասի անվ. պետ. կոնսեր վատորիա									6						6	
10	Երևանի գեղարվեստի պետ. ակադե-միա									4						4	
11	Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ	1				9	15	3	2	2				1		16	17
12	Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինս-տ									5	7					5	7
13	Գավառի պետհամալսարան	2				1	1			3						6	1
14	Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինս-տ	2														2	
15	Բժշկական գենետիկայի և առողջութ-յան առաջնային պահպանման կենտրոն	2														2	
16	ՀԱՊՀ քոլեջ									2						2	
17	«Ինկուբատոր» հիմնադրամ	4														4	
18	Ա.Ալիխանյանի անվ. ազգային ԳԼ			3	5							1				4	5
19	«Հայաստանում ֆրանսիական համալ-սարան» հիմնադրամ	9								1						10	
20	Մատենադարան	2								6	3					8	3
21	ՀՀ ԿԳՄՍ ԲԿԳԿ									1						1	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
22	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ	2														2	
23	«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ							1								1	
24	ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգություն» ԳԿ									1	2			2		3	2
25	Կրթության տեսչական մարմին									1						1	
26	«Բանբեր հայագիտության» գիտական հանդես									2						2	
27	Երևանի քաղաքապետարան									1						1	
28	«ՔԵՆԴԼ» ՍՀԻ	1			1	2	1									3	2
29	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե													1		1	
30	ՀՀ ԷՆ					1	1									1	1
31	ՀՀ ԲՆ	4														4	
32	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինս-տ									1						1	
33	Անվտանգության ազգային խորհուրդ									1						1	
34	«Հայբուսակ» համալսարան					4		6	4							10	4
35	Էմիլ Արթին և Ալիխանյան եղբայրների հիմնադրամ	1														1	
36	Հայաստանի գինու պատմության թանգարան									1						1	
37	Հայ-չինական բարեկամության դպրոց									1						1	
38	«Էրեբունի» բժշկական ակադեմիա					2										2	
39	ՀՀ Ոստիկանության կրթահամալիր									1						1	
40	«Սոլյուտոն» ՍՊԸ					1										1	
41	Շիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետհամալսարան	2					1	1	1	5	3	1				9	2
42	Եվրասիա միջազգային համալսարան					1	2	3	3							4	5
43	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան									3						3	
44	ՀՀ կադաստրի կոմիտեի «Գեոմատիկա» կենտրոն					1	2									1	2
45	«Ադմոսֆեր Արմենիա» ՓԲԸ					1	2									1	2
46	«Մուրացան» ԲԿ						2										2
47	Շիրակի երկրագիտական թանգարան									2						2	
48	Հայկական բժշկական համալսարան							1	2							1	2
49	ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղ									1						1	
50	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ									4						4	
51	ՀՀ Ամերիկյան համալսարան	5				5	4	1		7						18	4
52	Երևանի հենակետայի բժշկական քոլեջ									1						1	
53	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ					1										1	
54	ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ					7	11									7	11
55	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հենակետային վարժարան									1						1	
56	Գորիսի պետհամալսարան									2						2	
57	Մարալիկի բժշկական կենտրոն						1										1
58	Վ.Սարգսյանի անվ.ռազմական ակադեմիա			2	1											2	1
59	Գ.Պլեխանովի անվ.Ռուսաստանի տնտեսագիտական համալսարան					1				4						5	
60	Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետ-համալսարանի Երևանի մասնաճյուղ					2				2						4	
61	«Հայռուսգազարդ» ՓԲԸ							1								1	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
62	«Տոքսոմետրիս» ընկերություն					3	1									3	1
63	«Դե նովո սայենսիս» ընկերություն					3	2									3	2
64	Հայկական ատոմային էլեկտրակայան					1	1									1	1
65	«ԱլտՄեդ» վերականգնողական, կանխարգելիչ և ավանդական ԲԿ							1	1							1	1
66	Հայաստանի կենսաինֆորմատիկայի ինս-տ					5	5									5	5
67	Ստանդարտացման և չափագրման ազգային մարմին							1								1	
68	ՀՀ պետական կառավարման ակադեմիա					1										1	
69	Հայաստանի հանրային ռադիո									1						1	
70	Շ.Շահամիրյանի անվ. կրթահամալիր									1						1	
71	Հայաստանի պատմության թանգարան										2						2
72	ՆԳՆ կրթահամալիր							1								1	
73	Շինարարության ազգային ինս-տ							1	1							1	1
74	Սևանի Վազգենյան հոգևոր դպրոց									2						2	
75	«Վեմ» համահայկական հանդես									1						1	
76	«Ռեգիոն ի միր» գիտական ամսագիր									1						1	
77	«Երկիր մեդիա»									1						1	
78	Մեհրաբյանի անվ. բժշկական քոլեջ							2								2	
79	Հայաստանի ավանդական բժշկության համալսարան					3		1	2							4	2
80	ՀԱՊՀ ավագ դպրոց							1								1	
81	ՀՀ կենտրոնական բանկ											1	4			1	4
82	«Գրիգորիս» բժշկահումանիտար քոլեջ							1								1	
83	«Հեռանկար» ուսումնական կենտրոն							1								1	
84	Ա.Շիրակացու անվ. ճեմարան	1														1	
85	«Քոբրեյն» ուղեղի հիմնարար հետազոտությունների ԳԿ							1	1							1	1
86	Պռոշյանի կոնյակի գործարան					1										1	
87	«Արմենիա» հանրապետական ԲԿ													1		1	
88	«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան					1		3								4	
89	ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի «Ռեֆերենս ԼԿ»-ի մասնաճյուղ							1	1					1		2	1
90	Հայաստանի Եվրոպական համալսարան	3				1				3						7	
91	ՀՊՏՀ Գյումրիի մասնաճյուղ							1	3	5						6	3
92	Հյուսիսային համալսարան									1						1	
93	ՀԲԸՄ հայկական համացանցային համալսարան									1						1	
94	«Գլաձոր» համալսարան					1				2						3	
95	ՀՀ ԱՆ «Ավան ՀԱԿ» ՓԲԸ													2		2	
96	«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ									2						2	
97	Մեսրոպ Մաշտոցի անվ. համալսարան									1						1	
98	IT Storm Company									1						1	
99	«Բիգ Մայնդ» ուսումնական կենտրոն									1						1	
100	ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջ									2						2	
101	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ									1						1	
102	Վ.Համբարձումյանի անվ. մանկավարժական քոլեջ (Վարդենիս)									3						3	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
103	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինս-տ						1			2						2	1
104	Վանաձորի Հովի.Թումանյանի անվ. ՊՀ									1						1	
105	ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն					1	1									1	1
106	«Կումայրի» արգելոց-թանգարան									1						1	
107	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ			1	1											1	1
108	Սիմենս			1	2											1	2
109	ՅԹԻ										1						1
110	Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության ԳԿ					1										1	
111	«ՌԱՄ ԱՐՄԵՆԻԱ» ռեսուրսների կայուն կառավարման առաջատար փորձի միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ																
112	«Հայաստան ծառատունկ ծրագիր» ԲՀ					1										1	
113	«Եվրոլաբ» ախտորոշիչ լաբորատորիա					2										2	
114	Մ.Սեբաստացի կրթահամալիր ՊՈԱԿ					1										1	
115	«ՏՐԻՆԻՏԻ» ՓԲԸ						1										1
116	«ՎԻՊԵԿՈ» ՍՊԸ					1										1	
117	FDA լաբորատորիա						1										1
118	Երևանի Պ.Չայկովսկու անվ. երաժշ. միջնակարգ դպրոց									1						1	
119	Երևանի N 112 ավագ դպրոց									1						1	
120	Երևանի Ստ.Զորյանի անվ.N 56 դպրոց							1								1	
121	Սպիտակի N 3 միջնակարգ դպրոց							1								1	
Ընդամենը՝		**78**	**17**	**21**	**23**	**102**	**98**	**78**	**96**	**209**	**47**	**4**	**4**	**8**		**514**	**280**

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԳԱԱ համակարգի բյուջետային մուտքեր (հազար դրամ)

	Կազմակերպության անվանումը	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում	Թեմա	Նպատակային ծրագրեր	Այլ դրամաշնորհներ	Այլ մուտքեր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մաթեմատիկայի ինս-տ ՊՈԱԿ	172,729.3		86,772.0		8,648.9	18,338.7	286,488.9
2	Մեխանիկայի ինս-տ ՊՈԱԿ	294,970.5		39,137.8		13,703.1	2,993.3	350,804.7
3	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինս-տ ՊՈԱԿ	389,743.7		117,650.0	25,560.0	6,918.9	82,690.4	622,563.0
4	Ֆիզիկական հետազոտությունների ինս-տ ՊՈԱԿ	384,662.3		233,370.6			95,359.1	713,392.0
5	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինս-տ ՊՈԱԿ	235,902.8		2,240.0		4,060.8	428.2	242,631.8

1	2	3	4	5	6	7	8	9
6	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինս-տ ՊՈԱԿ	473,145.2		146,121.0		58,973.4	3,000.0	681,239.6
7	Երկրաբանական գիտությունների ինս-տ ՊՈԱԿ	347,511.7		105,777.0	32,315.0	40,486.7	14,186.6	540,277.0
8	Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինս-տ ՊՈԱԿ	195,623.4				4,833.6	1,336.2	201,793.2
9	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինս-տ ՊՈԱԿ	356,676.1		680,724.3		105,070.0	33,831.3	1,176,301.7
